






Ա. Մ. ԳԱՐԱԳԱՇԵԱՆ

ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ ՆԱԽՆԵԱՑ

ՀԱՏԸՆՏԻՐ

ՔԱՂՈՒԱԾՔ

Ի ՍՈՒՐԲ ԳՐՈՑ, ՅԵԶՆԿԱՅ, ՅԱԳԱԹԱՆԳԵՂԵԱՅ,
Ի ԲՈՒԶԱՆԴԱՑ, ՅՈՍԿԵԲԵՐԱՆԷ, Ի ՍԵԲԵՐԻԱՆՈՍԷ,
Ի ՔՐՈՆԻԿՈՆԷՆ ԵՒՍԵԲԵԱՑ, Ի ՎԵՑՕՐԵԱՅ ԲԱՐՍՂԻ,
ՅԵՐԿՈՒՑ ԿԻՒՐՂԻՑ, Ի ԶԳՕՆԷ ԵՒ ՅԵՓՐԵՄԱՅ


ՈՒՂՂԵԱԼ ԵՒ ՅԱՒԵԼԵԱԼ

Հինգերորդ տպագրութիւն

معارف نظارت جليله‌سنك ٣٧٧ نومرولى رخصتنامه...در



Կ. ՊՈԼԻՍ
ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Մ. Յ. ՓԱՓԱԶԵԱՆ
Չամաշըրճըլար-եօքուշու, Զիւմպիւլլիւ խան, թիւ 12, 17, 21
1891



Ահա հինգերորդ տպագրութիւն մեր Հատընտիր Քաղուածոց։ Յայսմ տպագրութեան որ իբր քսան և չորս միջին ութածալ թերթէ կը բաղկանայ՝ կտանելոց են աշակերտք ոչ պատմական միայն, այլ և նկարագրական, բարոյական և փիլիսոփայական գեղեցիկ կտորներ յԵզնկայ, յԱգաթանգեղեայ, ի Բուզանդայ, յՈսկեբերանէ, ի Սեբերիանոսէ, ի Քրոնիկոնէն Եւսեբեայ, ի Վեցօրէից Բարսղի, յերկուց Կիւրղից, ի Զգօնէ և յԵփրեմայ. մատենագիրք՝ յորոց ոմանց հազիւ անուանք ծանօթ էին բազմաց, իսկ նիւթն և ոճ՝ բնաւ։

Որովհետեւ մեր ընտիր մատենագրութեանց մեծագոյն մասն եկեղեցական է, զգուշացանք որչափ հնար էր չառնուլ այնպիսի կտորներ որ կրօնական և աստուածաբանական էին։ Առնուած կտորք առհասարակ այնպիսի են որ կարեն յարմարել մտաց և …շակի աշակերտաց։ Ի քաղուածս յայսոսիկ, ամենայն ուրեք. պիտի գտանեն աշակերտք պատմական կտորներ և նկարագիրներ, որոց մեծագոյն մասն ընտիր է մինչեւ զարմացուցանել, պիտի գտանեն նաեւ բարոյական խորհրդածութիւններ, վիճաբանական հատուածներ, այլովք հանդերձ։

Որպէս զի մեր Հատընտիր Քաղուածոց լեզուն որչափ հնար էր ունենար, ըստ գրագիտական օրինաց, զլխաւոր հանգամանս ոճոյ և շարադրութեան, հարկ էր մեր քաղուածոյ բնագիրներուն մէջ առնել երբեմն փոփոխութիւն, և մանաւանդ զեղչումն։ Զայս արարաք արդարեւ։ Ուստի որք միանգամ զքաղուածս մեր բաղդատեն ընդ բնագրաց՝ պիտի տեսանեն ուրեք ուրեք աւելա-

բանութիւններ, կրկնութիւններ և նոյնանշան բառեր վերցուած, և քերականութեան դէմ անկանոնութիւններ ուղղուած, այնպէս զի աշակերտք ի քաղուածս յայսոսիկ պիտի չգտնեն խօսք մը որ քերականական օրինաց դէմ է, կամ քերականօրէն և տրամաբանօրէն չլուծուի: Այս մասնաւոր իրաց նայելով մեր Հատընտիր քաղուածներն այս ազգ. գրուածոց մէջ յարմարագոյն են աշակերտաց համար, որպէս փորձով պիտի տեսնեն այս դասագիրքը գործածողք:

Ա. Մ. ԳԱՐԱԳԱՇԵԱՆ

ՀԱՏԸՆՏԻՐ ՔԱՂՈՒԱԾՔ

Ի ՆԱԽՆԵԱՑ

ՊԱՏՄԱԿԱՆՔ

ԿԱՅԻՆ ԵՒ ՀԱԲԷԼ

Եւ եղեւ Հաբէլ հովիւ խաշանց, և Կային գործէր զերկիր։ Յետ աւուրց եբեր Կային ի պտղոյ երկրի պատարագ (ղըն, նուէր) Աստուծոյ, ած եւ (նաև) Հաբէլ յանդրանկաց խաշանց (հօտ, ոչխար) իւրոց և ի պարարտաց նոցա։ Եւ հայեցաւ Աստուած յԱբէլ և ի պատարագս նորա, և ի Կային և ի զոհս նորա ոչ հայեցաւ. և տրտմեցաւ Կային յոյժ, և խոնարհեցան (ցածնալ, ծռիլ) անկան երեսք նորա։ Եւ ասէ Կային ցՀաբէլ, եղբայր իւր։ Եկ, երթիցուք ի դաշտ։ Իբրեւ չոքան ի դաշտ անդր, յարեաւ (ելաւ) Կային ի վերայ Աբելի, եղբօր իւրոյ, և սպան զնա։ Եւ ասէ Աստուած ցԿային։ Ո՞ւր է Հաբէլ, եղբայր քո։ Եւ նա ասէ. Զգիտեմ. միթէ պահապա՞ն իցեմ եղբօր իմոյ։† Եւ ասէ Աստուած. Զի՞նչ գործեցեր զայդ. գոչումն (ձայն) արեան եղբօր քո բողոքէ (կանչէլ) առ իս յերկրէ†. և արդ անիծեալ լիջիր (ըլլաս) դու ի վերայ երկրի որ եբաց զբերան իւր ընդունել զարիւն եղբօր քո ի ձեռաց քոց, զի գործիցես զերկիր, և ոչ յաւելցէ տալ քեզ զզօրութիւն իւր, երերեալ և տատանեալ եղիցիս ի վերայ երկրի։ Ծննդ. Դ։

ՆՈՅ ԵՒ ՋՐՀԵՂԵՂՆ

Եւ ասէ տէր Աստուած ցՆոյ. Արա դու քեզ տապան ի չորեքկուսի (թաւանտան) փայտից. խորշս խորշս (խորշ, քէօշէ) գործեսցես զտապանն, և նաւթիւ ծեփեսցես զնա ներքոյ և արտաքոյ. քաղելով (փօրէն փէր եըլտըզլը նէշանլը) գործեսցես զտապանն, և ի մի կանգուն կատարեսցես (ըմըշնել) զնա ի վերուստ, և զդուրս տապանին ի կողմանէ (թօփէն) արասցես. Ներքնատունս և միջնատունս և վերնատունս (ալթ քաթ, օրթա քաթ, իւսթ քաթ) գործեսցես ի նմա։ Եւ յամենայն անասնոց և յամենայն գազանաց երկու երկու մուծցես ի տապանն բուծանել (պէսլէմէք, կէչինմէք) ընդ քեզ։ Եւ այլ եւս եւթն օր (եօթն օր ալ, եօթն օրէն) և ածից ես անձրեւ 'ի վերայ երկրի զքառասուն տիւ և զքառասուն գիշեր։ Նոյ էր ամաց վեցհարիւրոց, և ջրհեղեղ ջուրցն եղեւ ի վերայ երկրի։ Եւ սաստկանայր (աշնընալ) ջուրն յոյժ յոյժ ի վերայ երկրի, և ծածկէր զամենայն լերինս բարձունս. հնգետասան կանգուն բարձրացաւ ջուրն ի վեր։ Եւ մեռաւ ամենայն մարմին շարժուն (շարժող) և ամենայն սողուն զեռուն (սողացող կենդանի) ի վերայ երկրի, և ամենայն որ ունէր շունչ ի ռնգունս (քթի ծակեր) իւր, և ամենայն որ ինչ էր ի վերայ ցամաքի՝ մեռաւ, և մնաց միայն Նոյ և որ ընդ նմա էին ի տապանի անդ։

Եւ ած Աստուած հողմ ի վերայ երկրի և դադարեաց ջուրն։ Եւ խցան (գոցուէլ) աղբիւրք անդնդոց և սահանք երկնից, և արգելաւ (դադրեցաւ, կեցաւ) անձրեւ յերկնից, և զիջանէր (ցածնալ) տակաւ (եըլթըզլը) ջուրն և Թուլանայր և Նուազէր (դադրէլ)։ Յետ քառասուն աւուրց եբաց Նոյ զպատուհան տապանին (սնտուկ) և արձակեաց (թող տուաւ) զագռաւն որ ել և

անդրէն (նորէն) ոչ դարձաւ մինչեւ (ց) ցամաքել ջրոյն յերկրէ ։ Եւ արձակեաց զաղաւնին զհետ նորա տեսանել թէ ցածուցեալ (իջեր, նուազեր) իցէ ջուրն ․ և չըգտեալ աղաւնւոյն հանգիստ (կենալու տեղ, դադար) ոտից իւրոց՝ դարձաւ անդրէն առ նա ի տապան անդր, զի ջուր դեռ ունէր (կը բռնէր) զամենայն երեսս երկրի ․ և ձգեաց (երկնցուց) Նոյ զձեռն իւր և ընկալաւ (բռնեց) զնա, և առ զնա անդրէն առ իւր (իր քովը) ի տապան անդր ։ Դադարեաց եւս աւուրս եօթն և դարձեալ արձակեաց զաղաւնին ի տապանէ անտի, և դարձաւ առ նա աղաւնին ընդ երեկս (իրիկուան դէմ), և ունէր տերեւ ձիթենւոյ շիղ (բարակ ճիւղ) ի բերանի իւրում ։ Եւ եբաց Նոյ զձեղուն (ծածքը) տապանին, և ետես զի նուազեալ էր ջուրն յերեսաց երկրի ։ Ծնն. Ը. Է ։

ԱԲՐԱՀԱՄ ԵՒ ՂՈՎՏ

Եւ Աբրահամ էր մեծատուն (հարուստ) յոյժ անասնով և արծաթով և ոսկւով ։ Եւ Ղովտայ որ երթեալն էր ընդ Աբրահամու՝ էր (Ղովտն ալ ունէր) արջառ և ոչխար և անասուն, և ոչ բաւէր (բաւական չէր) նոցա երկիրն բնակելոյ ի միասին, զի էին ընչք նոցա (անոնք ունէին)ստացուածք բազումք ։ Եւ եղեւ մարտ (կռիւ) ի մէջ (մէջ տեղը, արանքը) հովուաց խաշանցն Աբրահամու, և ի մէջ հովուաց խաշանցն Ղովտայ ։ Ասէ Աբրահամ ցՂովտ. Մի լիցի կռիւ ընդ իս և ընդ քեզ (մեր մէջտեղը), և ընդ հովիւս իմ և ընդ հովիւս քո, զի եղբայր եմք մեք ․ ո՞չ աւասիկ երկիրդ ամենայն առաջի քո է, մեկնեաց (բաժնուէ, զատուէ) յինէն ։ Ամբարձ (վերցուց) Ղովտ զաչս իւր և ետես զամենայն կողմանս Յորդանանու, զի ամենայն յուռթի (բարեբեր) էր ․ մինչչեւ կործանեալ էր (դեռ չկործանած) Աստուծոյ զՍոդոմ և զԳոմոր, իբր ըզդրախտ Աստուծոյ էր ։ Եւ ընտրեաց իւր Ղովտ զամե-

նայն կողմանս Յորդանանու, և չուեաց (կէօչ էնէլ, ճամ-բայ նիւէլ) Ղովտ յարևելից, և մեկնեցան իւրաքանչիւր յեղբօրէ իւրմէ։ Ծննդ. ԺԳ։

ԱԲՐԱՀԱՄ ԸՆԴՈՒՆԻ ՀԻՒՐՍ

Մինչդեռ նստէր Աբրահամ առ դուրս խորանի իւրոյ ի միջօրէի (կէս օրը) ամբարձեալ զաչս իւր և ետես, և ահա արք երեք կային ի վերոյ քան զնա (անկէ վեր)։ Եւ ընթացաւ Աբրահամ ընդ առաջ նոցա (անոնց առջեւը) ի դրանէ խորանին իւրոյ, և ասէ. Տէր, եթէ գտի շնորհս առաջի քո, մի զանց առներ (անցնիլ երթալ) ի ծառայէ քումմէ, այլ առից (բերեմ) սակաւ մի ջուր, և լուասցեն զոտս ձեր, և զովասջիք (մէրէնլենէք) ընդ ծառովս. և առից հաց և կերիջիք, և ապա երթիջիք զճանապարհս ձեր։ Եւ պնդեցաւ (գնաց շուտով) Աբրահամ ի խորանն առ Սառա և ասէ ցնա, փութա, բրեա (շուտով շաղէ) գրիւս երիս ալեր նաշհոյ (նաշիհ, բարակ ալիւր) և արա նկանս (հաց, սօմուն)։ Եւ յանդեայ (եղերան հօտը) ընթացաւ Աբրահամ, և առ որթ մի մատաղ և բարի, և ետ ցպատանին (ծառայ տղայ), և փութացոյց վաղվաղակի հասուցանել (եփել, պատրաստել) և առ (բերաւ) կոգի (կարագ) և կաթն և զորթն զոր հասոյց, և եդ առաջի արանցն, և կերան նոքա, և Աբրահամ կայր առաջի նոցա ընդ ծառովն։ Ծնն. ԺԸ։

ԱՍՏՈՒԱԾ ՓՈՐՁԷ ԶԱԲՐԱՀԱՄ

Եւ փորձեաց Աստուած զԱբրահամ և ասէ ցնա, Առ դու զորդիդ քո սիրելի, զԻսահակ, և գնա դու յերկիր բարձր, և հանցես զնա անդ յողջակէզ (հանել ողջակէզ, զոհ մատուցանել) ի վերայ միոյ ի լերանց։ Եւ յարեաւ Աբրահամ ընդ առաւօտն (առտուան դէմ), հա-

մետեաց (համետը, փալանը դնել) զէշ իւր, և առ ընդ իւր երկուս ծառայս, և զԻսահակ զորդի իւր, և պատառեաց (ճեղքեց) փայտ յողջակէզ, և յարեաւ գնաց, և եկն ի տեղին զոր ասաց նմա Աստուած ։ Իբրև ետես Աբրահամ զտեղին ի հեռաստանէ, ասէ ցպատանիս իւր, Նստարուք դուք այդր (հոդ) հանդերձ իշովդ, և ես և պատանեակդ երթիցուք մինչև ցանդր, և երկիր պագցուք և դարձցուք առ ձեզ ։ Եւ առ Աբրահամ զփայտ ողջակիզին և եդ ի վերայ Իսահակայ որդւոյ իւրոյ, և առ ի ձեռն զսուրն և զհուրն, և գնացին երկոքեան ի միասին ։ Եւ ասէ Իսահակ ցԱբրահամ հայր իւր, Հայր, ահա հուր և ահա փայտ. ո՞ւր է ոչխար յողջակէզ (ողջակէզի) ։ Եւ նա ասէ, Աստուած տեսցէ (կը հոգայ) իւր ոչխար յողջակէզ, որդեակ ։ Գնացին երկոքեան ի միասին, և եկին ի տեղին զոր ասաց նմա Աստուած ։ Անդ շինեաց սեղան Աբրահամ և եդ ի վերայ զփայտն, և կապեաց զԻսահակ զորդի իւր, և եդ զնա ի սեղան ի վերայ փայտին, և ձգեաց Աբրահամ զձեռն առնուլ զսուրն և զենուլ զորդին իւր ։ Եւ կոչեաց զնա հրեշտակ տեառն յերկնից և ասէ. Աբրահամ, Աբրահամ, մի մխեր զձեռն քո ի պատանեակդ (տղուն մի դպչիր, մի ջարդեր), և մի ինչ առներ դմա. զի այժմ գիտացի թէ երկիւղած (աստուածավախ) ես դու յԱստուծոյ, և ոչ խնայեցեր յորդւոյդ քո սիրելւոյ վասն իմ ։ Համբարձ Աբրահամ զաչս իւր և ետես, և ահա խոյ մի կախեալ կայր զծառոյն Սաբեկայ զեղջերացն. և գնաց Աբրահամ, առ զխոյն, և եհան զնա յողջակէզ փոխանակ Իսահակայ որդւոյ իւրոյ ։ Ծննդ. ԻԲ ։

ԱՄՈՒՍՆՈՒԹԻՒՆ ԻՍԱՀԱԿԱՅ

Աբրահամ ծերացեալ էր և անցեալ զաւուրբք (տարէքն առած), և ասէ ցծառայն իւր, ցերէց (ամէնէն մեծ)

նայն կողմանս Յորդանանու, և չուեաց (չէօզընէլ, ճամ-բայ նվէլ) Ղովտ յարեւելից, և մեկնեցան իւրաքանչիւր յեղբօրէ իւրմէ։ Ծննդ. ԺԳ։

ԱԲՐԱՀԱՄ ԸՆԴՈՒՆԻ ՀԻՒՐՍ

Մինչդեռ նստէր Աբրահամ առ դուրս խորանի իւ-րոյ ի միջօրէի (կէօ օյլէ) ամբարձեալ զաչս իւր և ետես, և ահա արք երեք կային ի վերոյ քան զնա (անչէ մէր)։ Եւ ընթացաւ Աբրահամ ընդ առաջ նոցա (անանց ալընը) ի դրանէ խորանին իւրոյ, և ասէ. Տէր, եթէ գտի շնորհս առաջի քո, մի զանց առներ (անցմէք երիւալ) ի ծառայէ քումմէ, այլ առից (բերեմ) սակաւ մի ջուր. և լուասցեն զոտս ձեր, և զովասջիք (...) ընդ ծառովս. և առից հաց և կերիջիք, և ապա երթիջիք զճանապարհս ձեր։ Եւ պնդեցաւ (...) Աբրահամ ի խորանն առ Սառա և ասէ ցնա, փութա, թրեա (...) գրիւս երիս ալեր նաշհոյ (նաշիհ, ...) և արա նկանս (հաց, ...)։ Եւ յանդեալ (...) ընթացաւ Աբրահամ, և առ որթ մի մատաղ և բարի, և ետ ցպատանին (...), և փութացոյց վաղվաղակի հասուցանել (...) և առ (...) կոգի (...) և կաթն և զորթն զոր հասոյց, և եդ առաջի արանցն, և կերան նոքա, և Աբրահամ կայր առաջի նոցա ընդ ծառովն։ Ծնն. ԺԸ։

ԱՍՏՈՒԱԾ ՓՈՐՁԷ ԶԱԲՐԱՀԱՄ

Եւ փորձեաց Աստու[illegible] և ասէ ցնա
Առ դու զորդիդ քո սիր[illegible], և գնա ը
յերկիր բարձր, և [illegible] ողջակէզ (հան
ողջակէզ, ըն [illegible] ի լերանց. [illegible]
յարեաւ Աբրահա[illegible] դէմ), [illegible]

տան իւրոյ , ցիշխան ամենայն ընչից նորա . Մի առցես
կին որդւոյ իմում Իսահակայ ի դստերաց Քանանացւոց
յորոց միջի ես բնակիմ , այլ յերկիրն իմ ուստի ելեալ
եմ՝ երթիցես , և առցես դու անտի կին որդւոյ իմում
Իսահակայ ։ Եւ առ ծառայն Աբրահամու տասն ուղտ
յուղտուց տեառն իւրոյ , և յարեաւ գնաց ի Միջագետս
ի քաղաքն Նաքովրայ , և նստոյց զուղտսն արտաքոյ
քաղաքին առ ջրհորոյ ջրոցն ընդ երեկս , յորժամ ջըր-
ուորն (Ջուր տանողները) ելանէր ։ Եւ ասէ . Տէր Աստուած
տեառն իմոյ Աբրահամու , յաջողեա առաջի իմ այսօր ։
Ահաւասիկ ես կամ ի վերայ աղբեր ջրոյս , և դստերք
բնակչաց քաղաքին ելանեն հանել ջուր , և եղիցի կոյս
մի որում ես ասացից թէ խոնարհեցո (Կճճուր , Ճուէ)
զսափորդ քո զի արբից , և նա ասասցէ ցիս , Արբ , և
ուղտուցդ քոց եւս արբուցից մինչեւ դադարեսցին յըմ-
պելոյ , զայն պատրաստեցեր ծառային քում Իսահա-
կայ ։ Եւ եղեւ մինչչեւ կատարեալ էր նորա զխօսսն ի
մտի իւրում, և ահա Ռեբեկայ ելն ել , և ունէր սա-
փոր յուս իւր ։ Եւ էր կոյսն գեղեցիկ երեսօք յոյժ . էջ
յաղբիւրն , և ելից զսափորն իւր և ել ։ Ընթացաւ ծա-
ռայն Աբրահամու ընդ առաջ նորա և ասէ . Արբո ինձ
սակաւ մի ջուր ի սափորոյ այտի ։ Եւ նա ասէ . Արբ ,
տէր ։ Եւ փութացաւ իջոյց զսափորն ի վերայ բազկաց
իւրոց ։ Եւ արբոյց նմա մինչեւ դադարեաց յըմպելոյ ։
Ապա ասէ . Եւ ուղտուց քոց հանից ջուր մինչեւ ամե-
նեքեան արբցեն ։ Եւ փութացաւ թափեաց (դուրդեց)
զսափորն յաւազանն . և ընթացաւ դարձեալ ի ջրհորն
հանել , և եհան ջուր ամենայն ուղտուց նորա ։ Եւ այրն
միտ դնէր նմա . և լուռ կայր ի միտ առնուլ (Իմանալ ,
Հասկնալ) եթէ աջողեաց Տէր զճանապարհ նորա և թէ
ոչ ։ Եւ իբրեւ դադարեցին ամենայն ուղտքն յըմպելոյ ,
առ այրն գինդս (օղ) ոսկիս և երկուս ապարանջանս
(պիլէզիկ) , և եհարց ցաղջիկն . Ո՞յր դուստր ես դու .

պատմեա ինձ թէ իցէ՞ ի տան քում մեզ տեղի իջավանաց։ Եւ ասէ ցնա աղջիկն. Դուստր Բաթուելի եմ ես, և յարդ և խար (չոր խոտ) շատ է մեր, և տեղի իջավանաց։ Եւ ընթացաւ աղջիկն և պատմեաց ի տան մօր իւրոյ։ Եւ Ռեբեկայ էր (Ռեբեկայ ունէր) եղբայր որում անուն էր Ղաբան, որ իբրեւ ետես զգլինդսն յականջս և զապարանջանսն ի ձեռս քեռ իւրոյ, ընթացաւ արտաքս առ այրն որ կայր ի վերայ ուղտուց իւրոց առ աղբերն, և եմոյծ զայրն ի տուն անդր, և իջոյց ուղտուցն (ջրելու ձոր տաշտ)։ Ծննդ. ԻԴ։

ՅԱԿՈԲ ԵՒ ԵՍԱՒ

Իբրեւ ծերացաւ Իսահակ և վատեցին (տըրալաշան, տկարացան) աչք նորա, կոչեաց զԵսաւ զորդի իւր զերէց և ասէ ցնա. Որդեակ իմ, առ դու զգործի քո, զաղեղն և զկապարճս. և ել ի դաշտ որսալ ինձ որս, և արա ինձ խորտիկս (կերակուր) որպէս և ես սիրեմ, զի կերայց և օրհնեցից զքեզ մինչչեւ մեռեալ իցեմ (մեռնիմ)։ Լուեալ Ռեբեկայ զբանսն Իսահակայ չոքաւ առ Յակոբ որդի իւր և ասէ ցնա. Ահա լուայ ես ի հօրէ քումմէ զի խօսէր ընդ եղբօր քում և ասէր. Բեր ինձ որս և արա ինձ խորտիկս զի կերայց և օրհնեցից զքեզ մինչչեւ մեռեալ իցեմ։ Եւ արդ գնա դու ի դաշտն, և առ (բեր) ինձ անտի երկուս ուլս (այծի ձագ) փափուկս և ընտիրս, և արարից զնոսա խորտիկս հօր քում որպէս և սիրէ, և մատուսցես նմա զի օրհնեսցէ զքեզ մինչչեւ մեռեալ իցէ։ Եւ ասէ Յակոբ ցՌեբեկա մայր իւր, Եղբայր իմ Եսաւ այր թաւ (մազոտ) է, և ես՝ լերկ (անմազ). գուցէ (կըլլայ որ) շօշափիցէ զիս հայր իմ, և լինիցիմ առաջի նորա իբրեւ արհամարհոտ (անարգող), և ածիցեմ ի վերայ իմ անէծս և ոչ օրհնութիւն։ Եւ ասէ ցնա մայր նորա. յիմ վերայ անէծքն այն, որդեակ, բայց միայն

լուր (լսէ, մտիկ ըրէ) ձայնի իմում և երթ ած ինձ զուլսն։ Գնաց Յակոբ և առ ած մօր իւրում ուլս երկուս, և արար Ռեբեկայ խորտիկս որպէս և սիրէր Իսահակ․ և առեալ զպատմուճանն ազնիւ որդւոյ իւրոյ երիցու որ կայր առ նմա ի տան՝ զգեցոյց Յակոբայ որդւոյ իւրում կրտսերոյ, և զուլէճիսն (ուլին մորթը) ազոյց (անցուց) ի բազուկս նորա և ի վերայ մերկոյ պարանոցի նորա, և ետ զխորտիկն և զհացն զոր արար ի ձեռս Յակոբայ, և նա տարաւ զնոսա հօր իւրում և ասէ ցնա․ Հայր իմ, արի, նիստ և կեր յորսոյ իմմէ։ Եւ ասէ Իսահակ ցՅակոբ․ Մօտ եկ և շօշափեցից զքեզ, եթէ դո՞ւ իցես որդի իմ Եսաւ թէ ոչ։ Մատեաւ (մօտեցաւ) Յակոբ առ Իսահակ հայր իւր, և շօշափեաց զնա Իսահակ և ասէ․ Ձայնդ՝ ձայն Յակոբայ, և ձեռքդ՝ ձեռք Եսաւայ․ և ոչ ծանեաւ զնա զի էին ձեռք Յակոբայ իբրեւ զձեռսն Եսաւայ թաւ։ Կերաւ Իսահակ ի խորտիկէն զոր եբեր նմա Յակոբ և օրհնեաց զնա։ Ծննդ․ Իէ։

ՅԱԿՈԲ ԵՐԹԱՅ Ի ՄԻՋԱԳԵՏՍ

Կոչեաց առ ինքն Իսահակ զՅակոբ և ասէ ցնա․ Մի առնուցուս կին ի դստերաց աստի Քանանացւոց, այլ արի գնա ի Միջագետս, և առ անտի քեզ կին ի դստերաց Լաբանու եղբօր մօր քոյ։ Եւ ել անտի Յակոբ և գնաց ի Խառան, և հասեալ ի տեղի մի, առ քարինս եդ ընդ սնարս իւր (գլխուն տակը) և ննջեաց անդ, քանզի արեւն ի մուտս էր (արեւը մտնելու վրայ էր)։ Յարեաւ Յակոբ ընդ առաւօտն, և յուղի անկեալ (ճամբայ ելլէլ) եկն յերկիրն արեւելից առ Լաբան։ Եւ հայեցաւ և ահա ջրհոր մի (էր) ի դաշտի անդ, և էին անդ երեք հօտք խաշանց մակաղեալ (մակաղել, պառկիլ, հանգչիլ անասնոց) ի նմա, և ի ջրհորոյ անտի ըմպէին խաշինքն, և վէմ մի մեծ կայր ի վերայ բերանոյ ջրհորոյն, և անդր ժողովէին ամենայն հօտքն,

և հովիւքն տապալէին (գլօրէլ) զվէմն ի բերանոյ ջրհո-րոյն, և տային ջուր խաշանցն և կափուցանէին (ծածկէլ, դնէլ քանի մը քերանը) զվէմն ի բերան ջրհորոյն անդ-րէն ի տեղի իւր: Ասէ ցնոսա Յակոբ. Եղբարք, ուստի՞ էք դուք. և նոքա ասեն. Ի Խառանէ եմք: Ասէ ցնոսա, գիտէ՞ք (կը ճանչնա՞ք) դուք զԼաբան զորդի Նաքովրայ. և նոքա ասեն, Գիտեմք: Ասէ ցնոսա Յակոբ, Ո՞ղջ իցէ. և նոքա ասեն, Ողջ է, և ահա Ռաքէլ դուստր նորա գայ ընդ խաշինսն: Եւ ասէ Յակոբ ցհովիւսն. դեռ ա-ւուր շատ կայ (դեռ շատ կանուխ է, իրիկուան բաւական ա-րեւն կայ), չեւ եւս է ժամ խաշանցդ ժողովելոյ. ար-բուցէք (ջուր տուէ) խաշանցդ և երթայք արածեցէք. Եւ նոքա ասեն. Ոչ է հնար, մինչ ոչ ժողովեսցին ամենայն հովիւք և տապալեսցեն զվէմդ ի բերանոյ ջրհորոյդ, և արբուցանիցեմք խաշանցս: Մինչդեռ նա ընդ նոսա խօսէր, ահա Ռաքէլ դուստր Լաբանու գայր ընդ խա-շինս հօր իւրոյ, քանզի նա արածէր զխաշինսն: Իբրեւ ետես Յակոբ զՌաքէլ դուստր Լաբանայ եղբօր մօր իւ-րոյ և զխաշինս նորա, մատուցեալ տապալեցոյց զվէմն ի բերանոյ ջրհորոյն և արբոյց խաշանցն: Եւ պատմեաց Յակոբ Ռաքելայ թէ որդի քեռ հօր նորա էր, և Ռա-քէլ ընթացաւ պատմեաց հօր իւրում զբանսն Յակոբայ: Իբրեւ լուաւ Լաբան զանուն Յակոբայ որդւոյ քեռ իւ-րոյ, ընթացաւ ընդ առաջ նորա, գիրկս արկ (փըքէլ, ողջագուրել) նմա և համբուրեաց զնա, և տարաւ զնա ի տուն իւր: Եւ եղեւ Յակոբ ընդ նմա ամսօրեայ մի ժամանակ: Ծննդ. ԻԲ. ԻԹ:

ԴԱՐՁ ՅԱԿՈԲԱՅ Ի ՄԻՋԱԳԵՏԱՅ

Յարեաւ Յակոբ, առ զկանայս իւր և զմանկունս, և եհան զնոսա յուղտս, և խաղացոյց (ճամբայ հանեց) զա-մենայն ինչս իւր զոր արար ի Միջագետս, երթալ առ

Իսահակ հայր իւր և ոչ պատմեաց անկերոյ իւրում թէ գնայցէ ։ Եւ Ղաբան երթեալ էր ի կտուրս *խաշանց իւրոց (ոչխարներուն բուրդը կտրելու), և գողացաւ Ռաքէլ զկուռս հօր իւրոյ ։ Ազդ եղեւ Ղաբանու յաւուրն երրորդի եթէ գնաց Յակոբ ․ և առեալ Ղաբան զարս իւր* պնդեցաւ զկնի *Յակոբայ (ետեւէն ինկաւ) ճանապարհ զեւթն աւուր, և եհաս նմա ի լերինն Գաղաադու ։ Ասէ Ղաբան ցՅակոբ ․ Ընդէ՞ր* գաղտագնաց եղեր *(գաղտուկ փախար) յինէն, եթէ* ազդ արարեալ *(իմացնել) էր (քո) ինձ, առաքէի զքեզ ուրախութեամբ, և* արուեստակաւոր *(երաժիշտ, երաժշտութիւն) թմբկաց և քնարաց ․ և չէի՞ արդեօք արժանի համբուրել զորդեակս իմ և զդստերս իմ ։ Այժմ* ձեռնհաս էի *(կրնայի) առնել քեզ չար, այլ երթ, զի ցանկացեալ ես երթալ ի տուն հօր քո, բայց ընդէ՞ր գողացար զաստուածսն իմ ։ Ասէ ցնա Յակոբ, Գաղտ եղի, քանզի երկեայ թէ գուցէ* հանիցես *(բան մը մէկէն բանէ առնել) զդստերս քո յինէն, և զամենայն ինչ զիմ ։ Եւ ոչ գիտէր Յակոբ թէ Ռաքելայ կնոջ իւրոյ գողացեալ էր զաստուածս Ղաբանու ։ Եւ մտեալ Ղաբան* յուզեր *(փնտռել) ի տան Յակոբայ, իսկ Ռաքէլ առեալ զկուռսն եդ ընդ* ուղտու պատատաւ *(ուղտին համետը) և նստաւ ի վերայ նոցա, և յուզեաց Ղաբան զամենայն* տաղաւարն *(վրան) և ոչ եգիտ զկուռսն ։ Բարկացաւ Յակոբ և* կազեր *(կռիւ ընել) ընդ Ղաբանու, և ասէ ․ Զի՞նչ* վնաս *(վնասակարութիւն, յանցանք) է իմ կամ զի՞նչ յանցանք են իմ զի պնդեցար զհետ իմ և յուզեցեր զամենայն ինչս իմ, զի՞նչ գտեր յամենայն ընչից քոց ի տան իմում ։ Այս քսան ամ է զի էի ընդ քեզ ․ ոչխարք քո և այծիք ոչ* ստերջացան *(ծնանելէ դադրիլ) և* զխոյս *(արու ոչխար)* մաքեաց *(էգ ոչխար) քոց ոչ կերայ ․* զգազանաբեկն *(գազաններէն պատռուածը),* զգողունն *(գողցուած) տուընջեան և զգողունի գիշերոյ ոչ բերի առ քեզ, այլ ես յանձնէ* տուժէի *(փոխը քաշել)․*

զցերեկ այրեալ լինէի ի տօթոյ (տաքէն) և զգայգ (գիշերը(ի ցրտոյ․ հատեալ (կորած, հատած) էր քուն յաչաց իմոց․ և եթէ ոչ երկիւղն Իսահակայ էր ընդ իս, այժմ թերևս ունայն (պարապ) իսկ արձակէիր զիս։ Եւ ասէ Ղաբան ցՅակոբ․ Ահա մեկնինք ընկեր յընկերէ (էրարմէ նէ ղատուընք+)․ եթէ վշտացուսցես զդստերս իմ, եթէ առցես կանայս առ դստերօք իմովք (իմ աղջիկներուս վրայ ուրիշ կնիկներ առնես) զգոյշ լեր, զի ոչ ոք է ընդ մեզ որ տեսանէ, այլ Աստուած լիցի վկայ ընդ իս եւ ընդ քեզ (իմ ես ու քու մէջտեղ)։ Եւ երդուաւ Յակոբ և եղեն զենլիս (մորթնելու անասուն)․ կերան և արբին և ագան ի լերին անդ։ Եւ յարուցեալ Ղաբանու ի վաղիւ անդր համբուրեաց զդստերս իւր, և օրհնեաց զնոսա, և դարձ արարեալ (դառնալ) գնաց ի տեղի իւր։ Ծննդ․ ԼԱ․

ՅԱԿՈԲ ՀԱՇՏԻ ԸՆԴ ԵՍԱՒԱՅ

Եւ առաքեաց Յակոբ հրեշտակս (պատգամաւոր) յառաջ քան զինքն առ Եսաւ եղբայր իւր յերկիրն ի Սէիր, յաշխարհն Եդովմայ։ Եւ դարձեալ հրեշտակացն առ Յակոբ՝ ասեն․ Զոքաք առ Եսաւ եղբայր քո, և նա գայ ընդ առաջ քո, և չորեքհարիւր այր ընդ նմա։ Զահի հարաւ (վախցաւ) Յակոբ, և տարակուսեալ (շփոթած) էր։ Եւ առ յորոց ածէրն (բերածներէն) պատարագս (ընծայ, նուէր) և առաքեաց Եսաւայ եղբօր իւրում, այծս (էգ այծ) երկերիւր, քաղս (արու այծ) քսան, մաքիս երկերիւր, խոյս քսան, ուղտս կոզուամբք (կոզըն, ուղտի ձագ) հանդերձ՝ երեսուն, կովս քառասուն, ցուլս (պօղա) տասն, էշս քսան և մտրուկս (քուռակ) տասն։ Եւ ասէ ցծառայս իւր․ Երթայք դուք յառաջ քան զիս, և բացագոյնս ի միմեանց (էրարմէ հեռու) տանիցիք հօտս ի հօտից․ և եթէ պատահիցէ ձեզ Եսաւ եղբայր իմ և հարցանիցէ թէ Ո՞յր ես և յո՞ երթաս, և ո՞յր է այդ որ առաջի ձեր երթայ, ասասջիք, Ծառայի քո Յակո-

բայ պատարագք են զոր առաքեաց տեառն իւրում Ե-սաւայ, և ինքն զկնի մեր (Դէր Եսեւէն) գայ։ Եւ ինքն (Յակոբ) ննջեաց զայն գիշեր անդէն ի բանակին, և յա-րուցեալ ի նմին գիշերի անց ընդ հունն (ճերէքմէջ օտօռ անցնելու տեղ) Յակոբայ։ Զաչս իւր ի վեր եբարձ Յակոբ և ետես, և ահա Եսաւ եղբայր իւր գայր, և ընդ նմա արք չորեքհարիւր։ Եւ արար (ըրաւ) Յակոբ զերկուս աղախնայսն և զորդիս նոցա առաջի, և զԼիա և զոր-դիս նորա զկնի, և զՌաքէլ և զՅովսէփ հուսկ յետոյ (ամէնէն վերջը), և ինքն անց յառաջ քան զնոսա, և երկիր եպագ եւթն անգամ ի վերայ երկրի մինչև մեր-ձենալ առ եղբայր իւր։ Եւ ընթացաւ Եսաւ ընդ ա-ռաջ նորա, գիրկս արկ նմա և համբուրեաց զնա։ Ասէ Եսաւ ցՅակոբ․ Զի՞նչ էր այն ամենայն չու (ալայ, կեօչ) որ ինձ դիպեցաւ։ Եւ ասէ Յակոբ, Ընծայք իմ են զոր մատուցի քեզ, զի գտցէ ծառայ քո շնորհս առաջի քո։ Եւ ասէ Եսաւ, Կայ և իմ շատ, եղբայր, քեզ լիցի քոյդ։ Եւ բռնադատեաց (ստիպեց) զնա Յակոբ և առ (Եսաւ)։ Եւ ասէ Եսաւ ցՅակոբ․ Չուեսցուք գնասցուք, և երթիցուք զուղղորդն (չէօլէկէն, չէօլ ճամբէն երթանք)։ Ասէ ցնա Յակոբ․ Տէր իմ ինքնին գիտէ (տէրս ալ գիտէ) զի մանկունքս մատաղ են, և ոչխարի և արջառոյ ծնունդ արձակեալ է (հօտերուն ծնանելուն ժամանակն է), և թէ մի օր ստիպեմ (քաշով քշեմ) զդոսա, մեռանին ա-մենայն խաշինքդ․ այլ յառաջեսցէ (առաջ երթալ) տէր իմ քան զծառայ իւր, և ես ըստ կարի եւ ըստ պա-րապոյ ճանապարհիդ եւ ըստ կազդուրել մանկանց ի-մոց խաղացից (որչափ կարելի է, և ճամբան կենալով, տղայոց հանգիստ ընել տալով կը քալեմ)։ Եւ դարձաւ յաւուր յայնմիկ Եսաւ ընդ ճանապարհ իւր (էկած ճամբովը) ի Սէիր, և Յակոբ չուեաց ի Խորանս, և արար իւր անդ տունս, և խաշանց իւրոց արար դաղարս (փարախ, գօմ)։ Ծննդ․ ԼԲ․ ԼԳ։

ՅՈՎՍԷՓ

Յովսէփ եւթնուտասնամեայ էր, մինչ արածէր եղբարբքն հանդերձ խաշինս, և էր կրտսեր։ Եւ որդիքն Յակոբայ բերէին համբաւ չար (գէշ լուր) զՅովսեփայ առ հայրն իւրեանց․ բայց Յակոբ սիրէր զՅովսէփ առաւել քան զամենայն որդիս իւր, քանզի որդի ծերութեան նորա էր, և արար նմա հայր նորա պատմուճան ծաղկեայ (վրան ծաղիկ բանուած)։ Իբրեւ տեսին եղբարքն նորա թէ սիրէ զնա հայրն քան զամենայն որդիս իւր, ատեցին զնա։ Եւ ետես Յովսէփ երազ, և պատմեաց եղբարց իւրոց և ասէ․ Թուէր եթէ որայ (ցորենի կապոց) կապէաք ի դաշտի միում․ և կանգնեցաւ (կայնիլ) որայն իմ, եկաց ուղղորդ (շիտակ), և դարձան որայքն ձեր և պագին երկիր խմում որայոյն։ Ասեն ցնա եղբարքն նորա, Միթէ թագաւորեսցե՞ս ի վերայ մեր, կամ տիրեսցե՞ս մեզ։ Ետես Յովսէփ միւս եւս երազ, և պատմեաց հօր իւրում և եղբարց իւրոց և ասէ․ Ահա տեսանէի որպէս թէ արեգակն և լուսին և մետասան աստեղք երկիր պագանէին ինձ։ Սաստեաց (չեխել) նմա հայրն և ասէ․ Զի՞նչ է երազն զոր տեսեր, գայցե՞մք ես և մայր քո և եղբարք քո և երկիր պագանիցեմք քեզ։ Եւ եղեւ յետ աւուրց, գնացեալ էր եղբարցն Յովսեփայ արածել զխաշինս հօր իւրեանց ի Սիւքէմ։ Եւ ասէ Յակոբ ցՅովսէփ, Ո՞չ (ո՞չ ապաքէն) ահաւանիկ եղբարք քո արածեն զխաշինսն ի Սիւքէմ․ եկ, առաքեցից զքեզ առ նոսա․ երթ, տես եթէ (գինէ) ո՞ղջ իցեն եղբարքն քո և խաշինք, և բեր ինձ զրոյց (լուր)։ Իբրեւ եկն Յովսէփ ի Սիւքէմ, այր մի եգիտ զնա մոլորեալ (ճամբան կորսնցնել) ի դաշտին, եհարց ցնա և ասէ․ Զի՞նչ խնդրես․ և նա ասէ, Զեղբարսն իմ խնդրեմ, պատմեա (ըսել տեղեկացնել) ինձ ուր արածիցեն։ Ասէ ցնա այրն, բարձին աստի (այս տեղէն ելան)

և լուայ զի ասէին, Երթիցուք ի Դովթայիմ ։ Եւ գնաց Յովսէփ զհետ եղբարց իւրոց ։ Տեսին զնա եղբարքն յառաջագոյն ի հեռաստանէ, մինչչև մօտ եկեալ էր նորա առ նոսա, և խորհուրդ վատ ի մէջ առին (խորհուրդ ի մէջ առնուլ, որոշել) սպանանել զնա ։ Ասեն ցմիմեանս ․ Ահա երազատեսն գայ, եկայք սպանցուք զնա և ընկեցուք ի մի ի գբոց աստի, և ասասցուք եթէ գազան չար եկեր զնա, և տեսցուք զինչ լինիցին երազք նորա ։ Իբրև լուաւ Ռուբէն, կորզեաց ([illegible]) զնա ի ձեռաց նոցա և ասէ ․ Մի հեղցուք արիւն, այլ արկէք (գցել, նետել) զդա ի գուբ մի յանապատի աստ, և ձեռն մի արկանէք ի նա (ձեռն արկանել յոք ․ [illegible]) ։ Զայս ասէր Ռուբէն զի թափիցէ ([illegible]) զնա ի ձեռաց նոցա և հասուցանիցէ զնա առ հայր իւր ։ Իբրև եկն Յովսէփ առ եղբարս իւր, մերկացին (հանել) նոքա զպատմուճան նորա ծաղկեայ ի նմանէ, և առին ընկեցին զնա ի գուբն, և գուբն ունայն (դատարկ) էր և ջուր ոչ գոյր ի նմա, և նստան ուտել հաց ։ Յետ սակաւ միոյ զաչս ի վեր բարձեալ նորա տեսին, և ահա ճանապարհորդք Իսմայելացիք գային, և ուղտք նոցա լի էին խնկովք, ստաշխամբ ([illegible]) և ռետնիւ ([illegible]), և երթային յԵգիպտոս ։ Ասէ Յուդա ցեղբարս իւր ։ Զի՞նչ օգուտ է եթէ սպանանիցեմք զեղբայր մեր ․ եկայք վաճառեսցուք զնա Իսմայելացւոցն, և ձեռք մեր մի շաղախեսցին ([illegible]) ի նմա ։ Լուան ([illegible]) նմա եղբարքն և ձգեցին (քաշել) հանին զՅովսէփ ի գբոյ անտի, և վաճառեցին զնա Իսմայելացւոցն քսան դահեկանի ։ Եւ զենին ուլ այծեաց, և առեալ զպատմուճանն Յովսեփայ թաթաւեցին ([illegible]) յարեանն, և առաքեցին առ հայրն իւրեանց և ասեն ․ Զայդ գտաք ․ ծանիր եթէ որդւո՞յ քո իցէ պատմուճանդ եթէ ոչ ։ Եւ ծանեաւ զնա Յակոբ և ասէ ։ Պատ—

մուճանս որդւոյ իմոյ է. գազան չար եկեր զնա ։ Եւ պատառեաց Յակոբ զհանդերձս իւր և քուրձ զգեցաւ և սուգ ունէր (սուգ բռնել) ի վերայ որդւոյն իւրոյ աւուրս բազումս ։ Ծննդ. Լէ ։

ՅՈՎՍԷՓ ՄԵԿՆԷ ԶԵՐԱԶՆ ՓԱՐԱՒՈՆԻ

Յետ երկուց ամաց ետես Փարաւոն երազ ։ Թուէր նմա թէ կայցէ յեզր գետոյ, և ահա որպէս թէ ի գետոյ անտի ելանէին եւթն երինջք (կով) գեղեցիկք տեսլեամբ և ընտիրք մարմնով, և արածէին ի խաղի (չայրին ծանծաղ տեղը, քէնարը) անդ. և այլ եւս եւթն երինջք ելանէին յետ նոցա ի գետոյ անտի զազիրք (տգեղ) տեսլեամբ և վտիտք (նիհար) մարմնով, և արածէին առ այլ երնջովքն առ եզեր գետոյն ։ Եւ ուտէին եւթն երինջքն զազիրք տեսլեամբ և վտիտք մարմնով զեւթն երինջսն գեղեցիկս տեսլեամբ և զընտիրս ։ Զարթեաւ Փարաւոն և անդրէն ի քուն եմուտ (քունը տարաւ), և ետես երազ երկրորդ ։ Եւթն հասկք ելանէին ի միում փնջի ընտիրք և գեղեցիկք, և ահա եւթն այլ հասկք սմինք (դեղը չորցող) և խորշակահարք ելանէին յետ նոցա, և կլանէին եւթն հասկքն սինք և խորշակահարք զեւթն հասկսն զընտիրս և զատոքս (լեցուն) ։ Զարթեաւ Փարաւոն, և խռովեցաւ անձն նորա ։ Առաքեաց կոչեաց զամենայն երազահանսն Եգիպտոսի և զամենայն իմաստունսն նորա, և պատմեաց նոցա զերազն իւր, և ոչ ոք էր որ մեկնէր զերազն Փարաւոնի ։ Յայնժամ խօսեցաւ տակառապետն առաջի Փարաւոնի և ասէ. Իբրև եդ զմեզ Փարաւոն ի բանտի ի տան դահճապետին, զիս և զմատակարար իւր, տեսաք երկոքին երազ, և էր անդ ընդ մեզ պատանի մի մանուկ (կէնճ) Եբրայեցի, որ մեկնեաց մեզ զերազսն մեր, և որպէս մեկնեացն մեզ՝ նոյնպէս և պատահեաց (հաստատուեցաւ) ։

Առաքեաց Փարաւոն և կոչեաց զՅովսէփ, և հանին զնա ի բանտէ անտի, և փոքրեցին (մազը կտրել) զհերս նորա, և փոխեցին զպատմուճան նորա, և եկն նա առաջի Փարաւոնի։ Ասէ Փարաւոն ցՅովսէփ. Երազ տեսի և չիք ոք որ մեկնէ զնա։ Եւ պատմեաց Փարաւոն Յովսեփայ զերազն իւր։ Եւ ասէ Յովսէփ ցՓարաւոն, Երազն քո մի է. եւթն երինջքն գեղեցիկք և եւթն հասկքն գեղեցիկք եւթն ամք են. եւթն երինջքն տգեղք և վտիտք և եւթն հասկքն ոսինք (դատարկ հատիկ չունեցող) և խորշակահարք նոյնպէս եւթն ամք են։ Ահա ամք եւթն եկեսցեն բազում լիութեան (առատութեան), և յետ այնորիկ եկեսցեն եւթն ամք սովոյ յամենայն երկրի։ Եւ արդ տես խնդրեա (գտիր, ճարէ) այր մի իմաստուն և խորհրդական (խոհեմ, խելացի) և կացուսցես զնա ի վերայ երկրիս Եգիպտացւոց, և ժողովեսցէ նա զարմտիս (բերք) երկրիս Եգիպտացւոց զեւթն ամացն լիութեան ի քաղաքս, և եղիցի այն ի կերակուր յեւթն ամս սովոյն որ լինիցին, և մի սատակեսցի (կորսուի, փճանայ) երկիրս ի սովոյ։ Հաճոյ թուեցան բանքն առաջի Փարաւոնի, և հանեալ նորա զմատանին իւր ի ձեռանէ իւրմէ ետ ի ձեռին Յովսեփայ, զգեցոյց նմա պատմուճան բեհեզեայ (բարակ կտաւէ), և արկ մանեակ ոսկի ի պարանոց նորա, և կացոյց (իշխան, վերակացու դնել) զնա ի վերայ երկրին Եգիպտացւոց։ Ծննդ. ԽԱ։

ԳԱԲԱՒՈՆԱՑԻՔ ԵՒ ՅԵՍՈՒ

Բնակիչքն Գաբաւոնի լուան զոր ինչ արար Յեսու ընդ Երիքով, և արարին նոքա խորամանկութիւն (վարպետութիւն բանեցուցին), եկեալ պաշարովք և պատրաստութեամբ։ Առին քուրձս հնացեալս ի վերայ ուսոց իւրեանց, և տիկս գինւոյ հնացեալս և պատառատունս կարկատեալս, եւ անկանուրդք (ձոնձ) կօշկաց

նոցա և հողաքափք (ոտքի աման) իւրեանց հնացեալք և կարկատեալք յոտս իւրեանց, և հանդերձք իւրեանց հնացեալք զանձամբք իւրեանց, և հաց պաշարի իւրեանց չորացեալ և ճճեկեր, և եկին առ Յեսու ի բանակն Իսրայելի։ Ասէ ցնոսա Յեսու. Ուստի՞ էք դուք, և ուստի՞ եկեալ էք։ Եւ նոքա ասեն ցնա. Յերկրէ հեռաստանէ յոյժ եկին ծառայք քո, զի զհացս զայս մեր՝ ջերմ (տաք, եռալէ) առաք պաշար յաւուր յորում ելաք ի տանց մերոց, և արդ չորացաւ և եղեւ ճճեկեր. և տիկքս զոր լցաք գինւով՝ նորք էին և պատառեցան, և ձորձք մեր և կօշիկք մաշեցան ի բազում երկայն ճանապարհէն. և արդ դիք ընդ մեզ ուխտ (դաշինք)։ Եւ արար ընդ նոսա խաղաղութիւն Յեսու, և ուխտեաց նոցա ապրեցուցանել (ազատել, չմեռցնել) զնոսա, և երդուան նոցա իշխանք ժողովրդեանն։ Յետ երից աւուրց զհետ ուխտելոյ նոցա (ուխտը, դաշինքը ընելէն ետքը), լուան եթէ մօտաւորք էին, և անդէն առ նոսա (իրենց քով) բնակէին։ Եւ տրտնջեցին ամենայն ժողովուրդն զիշխանացն, և ասեն իշխանքն ցնոսա. Մեք երդուաք նոցա և ոչ կարեմք ստել. արդ զայս արասցուք նոցա. ապրեցուսցուք (ազատենք) զնոսա զի կեցցեն (ապրին) և լինիցին փայտաբերք և ջրկիրք ամենայն ժողովրդեանն։ Եւ եղեն Գաբաւոնացիքն փայտակոտորք և ջրաբերք որպէս և ասացին նոցա իշխանքն։ Յես. Թ։

ԱՒՈՎԴ ՍՊԱՆԱՆԷ ԶԵԳՂՈՄ

Յարեաւ Աւովդ, որդի առն Յիմենացւոյ, երկոցունց ձեռաց աջողակն (երկու ձեռքն ալ գործածող)։ Եւ առաքեցին որդիքն Իսրայելի ի ձեռն նորա պատարագս Եգղոմայ արքայի Մովաբու։ Եւ արար իւր Աւովդ սուր երկսայրի (երկու բերան ունեցող սուր) թզաւ յերկայ-

Ցուքիւն (խուրըշ մը երկայն) և եդ յաջոյ ազդեր իւրում ընդ տառատոկաւն (խալմաքըլըգ) և գնաց, և մատոյց զպատարագսն Եգղոմայ արքայի Մովաբու, և Եգղոմ էր այր յոյլ (ծանրաշարժ) յոյժ։ Իբրև փախճանեաց (ըմըցաց) Աւովդ մատուցանել զպատարագսն, և արձակեաց զպատարագաբարձսն (ընծան բերողները), ասէ ցԵգղոմ. Բանք ինչ են ինձ ընդ քեզ (քեզի խօսք ունիմ) լռելեայն (գաղտուկ), արքայ։ Ու ասէ Եգղոմ, Լուռ լեռ. (լռէ)։ Ապա ասէ ցամենեսին. Ի բաց գնացէք (հեռացէք). և ելին արտաքս որ զնովաւն կային (քովերնին եղողները), և նա նստէր յամարանոցի ի վերնատան իւրում միայն առանձինն։ Եւ ասէ Աւովդ. Պատգամ Աստուծոյ է իմ առ քեզ, արքայ։ Եւ յարեաւ Եգղոմ յաթոռոյն մերձ առ նա։ Եւ եղեւ ընդ յառնելն նորա ձգեաց Աւովդ զձեռն իւր զձախ և առ զսուրն յաջոյ ազդերէ իւրմէ և եհար (խոթեց) ի կշտին Եգղոմայ, արկ եւ զերախակայն (խոթեց նաեւ կոթը) եւս զհետ վիրին, և արգել ճարպն (ճու եղ) զվիրաբերանն, զի ոչ ձգեաց (քաշեց) ի բաց սուրն ի կշտէ նորա, և ել ի պատշգամն (քէօշք, շահնիշիր) և անց ընդ վանդակապատն (գաֆես, ֆարմախլըգ), եւ փակեաց զդուրս վերնատանն ընդդէմ նորա և աղխեաց (կղպեց), և ինքն ել գնաց։ Եւ ծառայքն Եգղոմայ մտին և տեսին, և ահա դուրք վերնատանն փակեալ էին, և ասեն. Գուցէ յաքոռն նստիցի ի պէտս (ըլլայ որ հարկաւորութեան համար ամանը նստած ըլլայ) ի սենեկին, և կացին մնացին ամաչեցեալք։ Եւ ահա ոչ ոք էր որ բանայր զդուրս վերնատանն։ Եւ առին զբանալին և բացին, և ահա տէրն իւրեանց անկեալ կայր մեռեալ ի գետնի։ Եւ Աւովդ զերծաւ (ազատծաւ, ճամբայ չինկաւ), մինչ նոքա զաղմկաւն էին (էրար անցած էին) և ոչ ոք փոյթ առնէր զնմանէ, և նա անց անցաւ (ազատեցաւ, ազատուել եղաւ) ի Սիրովթա։ Դատ Գ.

ԴԱՆԻԷԼ ՑԱՐՔՈՒՆԻՍ ՆԱԲՈՒԳՈԴՈՆՈՍՈՐԱՑ

Ասէ Նաբուգոդոնոսոր ցներքինապետ իւր ածել (ուստա ըր բէրբէ) յորդւոց գերութեանն Իսրայելի, ի զաւակէ թագաւորութեան (Ֆուքարալըղըն տէրտէնտէն) և ի Պարթեւաց մանկունս անարատս (Բէրաբէրճէ չալըշըյօղ), գեղեցիկս երեսօք և խելամուտս (տեղեակ) ամենայն իմաստութեան և հմուտս գիտութեան, մտավարժս (Խէլքը Չէրմէքը, Խէլօ+), հանճարեղս (Խէլօշէ) և զօրաւորս, կալ ի տաճարին (տէղանապան) առաջի թագաւորին. և ուսուցանել նոցա դպրութիւն (կարտալ ճրել) և զլեզու Քաղդէացւոց: Եւ կարգեաց (տըրաւ, հաստատեց) նոցա թագաւորն ռոճիկս (ատելէ, Խոյէն) օր ըստ օրէ (ամէն օր) ի սեղանոյ (կէրակուր, ատելէ) արքայի և ի գինւոյ զոր ինքն ըմպէր. սնուցանել (պահել, մեծցընել) զնոսա ամս երիս, և ապա (էտքը) կացուցանել առաջի (Ներկայացընել) թագաւորին: Եւ էին ի նոսա յորդւոցն Յուդայ Դանիէլ և Անանիա. և եդ նոցա ներքինապետն անուանս, Դանիելի՝ Բաղտասար. և Անանիայի՝ Սեդրաք: Եւ եդ Դանիէլ ի մտի իւրում չճաշակել (քէրանը չէնել) ի սեղանոյ թագաւորին, և ոչ ի գինւոյ ըմպելւոյ նորա (անոր խելքը ֆէնէէն): Եւ ասէ ներքինապետն ցԴանիէլ. Երկնչիմ ես ի տեառնէ իմմէ արքայէ որ կարգեաց ձեզ զկերակուրդ ձեր և զըմպելի. գուցէ տեսանիցէ (չէլէյ օր տէսնէ) զերեսս ձեր տրտմագոյն (տէղած, տծգոյն) քան զայլոց մանկանց հասակակցաց ձերոց, և առնիցէք զիս գլխապարտ (մոհատաւոր) թագաւորին: Եւ ասէ Դանիէլ ցայրն զոր կացուցեալ էր (տըրած էր) ներքինապետն ի վերայ Դանիէլի և Անանիայի. Աղէ՛, փորձեա զծառայս քո աւուրս տասն, և տացեն մեզ ունդս (ընտեղէն, շահէ) և կերիցուք, և ջո՛ւր արբցուք, և երեւեսցին առաջի քո գոյնք մեր

և զոյն մանկանցդ որ ուտեն զսեղան թագաւորին ։ Եւ անսաց (*մօհլէթ վէրտի*) *նոցա այրն և փորձեաց զնոսա աւուրս տասն ․ և յետ* կատարելոյ (*պիթիրմէնուլ ըմենուլ*) *աւուրցն տասանց երեւեցան երեսք նոցա նմա* բարիք (*էյի*), *և էին նոքա հզօրք մարմնով քան զամենայն մանկունսն որ ուտէին զսեղան թագաւորին ։ Եւ առնոյր այրն զընթրիս նոցա և զգինի ըմպելւոյ նոցա, և տայր ունդս ։* Եւ յետ կատարածի աւուրցն (*տահմինէտ ժամանակը ըմենալըն նոտը*) *հրաման ետ թագաւորն ածել զնոսա, և ած զնոսա ներքինապետն առաջի Նաբուգոդոնոսորայ, և խօսեցաւ ընդ նոսա արքայն ։ Եւ ոչ գտաւ յամենայն մանկունս նման Դանիէլի և Անանիայ, և կային նոքա առաջի թագաւորին, և յամենայն բանս իմաստութեան և գիտութեան զոր խնդրէր ի նոցանէ թագաւորն՝ գտանէր զնոսա տասնապատիկ* առաւել (*ֆէ-րուհը*) *քան զամենայն* գէտս *և* զմոգս (*ֆալընէ ֆէլէքճի և ֆալականշի ըշոդ*) *որ էին ի թագաւորութեան նորա ։ Դան․ Ա ։*

ԵՐԵՔ ՄԱՆԿՈՒՆՔ Ի ՀՆՈՑԻՆ

Նաբուգոդոնոսոր արքայ արար պատկեր (*պութ*) *ոսկի, բարձրութիւն նորա վաթսուն կանգուն, և լայնութիւն նորա կանգուն վեց, և կանգնեաց զնա ի դաշտին Դէերայ,* յաշխարհին (*էյալէթ, Բաբելոնեայ*) *Բաբելացւոց ։ Եւ ժողովեցան* կուսակալք (*կուսակալը նահանգէ*), *զօրավարք և զօրագլուխք, մեծամեծք և* գործակալք (*պաշտօնէ կամ գործէ տէր*), *գալ ի* նաւակատիս (*նոււիրման հանդէս*) *պատկերին զոր կանգնեաց արքայն ։* Քարոզ կարդայր (*Բէլլալ կանչէր*) *և ասէր ․ Ձեզ ասի, ազգք և ազինք և լեզուք, յորժամ լսիցէք զձայն փողոյ, սրնգի, թմբկի, քնարի և տաւղի* (*տաւիղ, ջնջնոր, Նամպուր*) *և ամենայն* ազգաց արուեստականաց

(ամէն տեսակ երաժշտական գործոյ) և երգոց միաբանութեան (Ներդաշնակութեան), անկանիջիք և երկիր պագանիջիք պատկերին, և որ ոչ անկեալ (խոնարհելով) երկիր պագանիցէ՝ ի նմին ժամու ընկեսցի ի հնոց հրոյն բորբոքելոյ։ Յայնժամ մատեան արք Քաղդէացիք և եղեն չարախօս զՀրէից առ Նաբուգոդոնոսորայ և ասեն. Արքայ, յաւիտեան կեաց. դու հրաման ետուր զի ամենայն մարդ որ լուիցէ զձայն փողոյ, զսրնգի և զքնարի և զտաւղի և նուագարանաց, և ոչ անկեալ երկիր պագանիցէ պատկերին ոսկւոյ՝ անկցի ի հնոց հրոյն բորբոքելոյ։ Արդ, են աստ արք Հրէայք զորս կացուցեր ի վերայ գործոց աշխարհիս Բաբելացւոց, Սեդրաք, Միսաք և Աբեդնագով, որ ոչ հնազանդեցան հրամանի քում. զդիս քո ոչ պաշտեն, և պատկերիդ ոսկւոյ զոր կանգնեցեր՝ երկիր ոչ պագանեն։ Յայնժամ Նաբուգոդոնոսոր սրտմտութեամբ և բարկութեամբ հրամայեաց ածել զարսն, և ածին զնոսա առաջի թագաւորին։ Ասէ ցնոսա արքայ. Արդարեւ դուք զդիս իմ ո՞չ պաշտէք, և պատկերին ոսկւոյ զոր կանգնեցի՝ երկիր ո՞չ պագանէք։ Արդ, պատրաստ լինիցիք, զի յորժամ լսիցէք զձայն փողոյ, սրնգի, թմբկի և քնարի, և զմիաբանութիւն ամենայն ազգաց արուեստականաց, անկանիցիք և երկիր պագանիցէք պատկերին զոր արարի. ապա թէ ոչ պագանիցէք երկիր, ի նմին ժամու անկանիցիք ի հնոց հրոյն բորբոքելոյ, և ո՞վ է որ փրկէ զձեզ ի ձեռաց իմոց։ Պատասխանի ետուն արքն երեքին և ասեն ցարքայ. Ոչինչ է պիտոյ (հարկ չէ) վասն այդորիկ տալ քեզ պատասխանի. զի Աստուած զոր մեքն պաշտեմք՝ կարող է փրկել զմեզ ի հնոցէ հրոյդ բորբոքելոյ, և ի ձեռաց քոց, արքայ, ապրեցուցանել զմեզ։ Այլ այս ինչ յայտնի լիցի քեզ, զի զդիս քո մեք ոչ պաշտեմք, և պատկերիդ ոսկւոյ զոր կանգնեցեր՝ երկիր ոչ պագանեմք։ Յայնժամ Նաբու-

գողոնոսոր լի եղեւ սրտմտութեամբ. գոյն երեսաց նոցա շրջեցաւ ի վերայ արանցն, և ասէ. Ջեռուցէք զհնոցն եւթնապատիկ, և արք հինգ, զօրաւորք զօրութեամբ, կապեսցեն զդոսա՝ արկանել ի հնոց հրոյն բորբոքելոյ: Յայնժամ արքն այնոքիկ կապեցան պատմուճանօք և վարտեօք, արտախուրակօք (գըխօրկ) և զանկապանօք (օրօնէը ծօծկէլօ հօնդէրյ) իւրեանց, ընկեցան ի մէջ հնոցի հրոյն բորբոքելոյ, և զնային (կը բօ– լէէն) և օրհնէին և գովէին զԱստուած: Նաբուգոդոնոսոր, իբրեւ լուաւ զօրհնութիւնս (հօգէօօր էրգ) նոցա, զարմացաւ. յարեաւ տագնապաւ (օօբ էլօ– օճօրօրանօբ) և ասէ ցմեծամեծս իւր. Ո՞չ (օ՞չ օղօթէն) արս երիս կապեալս արկաք ի մէջ հրոյն այլ ես տեսանեմ արս չորս արձակս (թօկօօօծ): Եւ մատեաւ թագաւորն ի դուռն հնոցին և ասէ. Ծառայք Աստուծոյ բարձրելոյ, ելէք և եկայք, և ելին նոքա ի միջոյ հրոյն: Ժողովեցան նախարարքն և կուսակալք և զօրավարք թագաւորին, և տեսանէին զարսն զի ոչ տիրեաց (օղդէյ) հուրն ի մարմինս նոցա, և հեր գլխոյ նոցա ոչ խանձատեցաւ, և վարտիք նոցա ոչ այլագունեցան (դէչնէյան) և հոտ հրոյ ոչ գոյր ի նոսա: Յայնժամ թագաւորն առաւել շքեղացոյց (ղօօօօ–էյ, ֆօօօօօ–օրէյ) զնոսա և բարձրացոյց, և արար զնոսա իշխան ամենայն Հրէիցն որ էին ի թագաւորութեան նորա: Դան. Գ:

ԴԱՆԻԷԼ Ի ԳՈՒԲՆ ԱՌԻՒԾՈՒՑ

Հաճոյ թուեցաւ առաջի Դարեհի, և կացոյց ի վերայ թագաւորութեանն նախարարս հարիւր և քսան, և ի վերայ նոցա երիս հրամանատարս, և մի ի նոցանէ էր Դանիէլ, տալ նոցա (նախարարացն) հրաման, զի արքայ աշխատ ինչ մի լիցի (չօֆնէ): Եւ Դանիէլ առաւել էր քան զնոսա, և հրամանատարքն և նախարարք նա–

խանձէին և խնդրէին պատճառս (ամբաստանութեան նիւթ) և յանցանս և բողքաղայս (պարծառանք, մեղանք), և ոչ գտանէին, քանզի հաւատարիմ էր նա ։ Յայնժամ հրամանատարքն և նախարարք կացին առաջի (ներկայացան) թագաւորին և ասեն ․ Դարեհ արքայ, յաւիտեան կեաց, խորհուրդ արարին ամենայն զօրավարք և նախարարք, իշխանք և կուսակալք որ են ի թագաւորութեան քում․ հաստատել արքունի հրամանաւ, զի եթէ ոք խնդրեսցէ խնդրուածս յամենայն աստուծոյ կամ ի մարդոյ մինչեւ յաւուրս երեսուն բաց ի քէն յարքայէ, անկցի ի գուբ առիւծուց ։ Արդ, հաստատեա, արքայ, և գրեա դիր, զի մի եղծանիցի հրաման Մարաց և Պարսից ։ Յայնժամ Դարեհ արքայ պատուէր ետ դրել զհրամանն ։ Եւ արքն այնոքիկ դիտեցին և գտին զի Դանիէլ կայր յաղօթս և աղաչէր զԱստուած իւր ։ Մատեան և ասեն ցթագաւորն ․ Արքայ, ո՞չ ապաքէն հրամայեցեր, զի ամենայն մարդ որ խնդրիցէ խնդրուածս յամենայն Աստուծոյ կամ ի մարդոյ մինչեւ յաւուրս երեսուն, բաց ի քէն յարքայէ, անկցի ի գուբ առիւծուց ։ Եւ ասէ արքայ ․ Ճշմարիտ է բանդ, և զհրաման Մարաց և զՊարսից չէ օրէն շրջել (փոխել) ։ Նոքա պատասխանի ետուն արքայի և ասեն ․ Դանիէլ ոչ հնազանդեցաւ հրամանի քում, արքայ, և երիս ժամս յաւուրն խնդրէ խնդրուածս յԱստուծոյ իւրմէ ։ Թագաւորն, իբրեւ լուաւ զբանն՝, տրտմեցաւ յոյժ վասն Դանիելի, և ջանայր փրկել զնա մինչեւ ցերեկս ։ Յայնժամ արքն այնոքիկ ասեն ցթագաւորն ․ Գիտասջիր, արքայ, զի հրամանի Մարաց և Պարսից զոր արքայ հաստատիցէ՝ ոչ է օրէն շրջել ։ Ապա հրաման ետ թագաւորն և ածին զԴանիէլ և արկին զնա ի գուբն առիւծուց ։ Եւ բերին վէմ մի և եդին ի վերայ գբոյն, և կնքեաց թագաւորն զվէմն մատանեաւ իւրով և մատանեօք մեծամեծացն, և գնաց ի տուն իւր, և ննջեաց առանց ընթրեաց ․ և խորտիկ (եփած, շինուած

ներշնչոյ) ոչ մուծին առաջի Նորա, և քուն հատաւ (կտրեցաւ) ի Նմանէ։ Եւ եխից (խնում, ծոցել, Ըրզամաք) Աստուած զբերանս առիւծոց, և ոչ ըլկեցին (ծամեցին) զԴանիէլ։ Յարեաւ արքայն ընդ առաւօտս լուսով) — առաւօտուն լուսնալուն պէս), և փութով եկն ի գուբն առիւծուց։ Իբրեւ մերձեցաւ (հասաւ, մօտաւ) ի գուբն, աղաղակեաց ի ձայն մեծ և ասէ. Դանիէլ, Աստուածն քո զոր դու յաճախ պաշտէիր՝ կարա՞ց փրկել զքեզ ի բերանոյ առիւծուցդ։ Եւ ասէ Դանիէլ ցարքայ. Արքայ, յաւիտեան կեաց. Աստուած իմ առաքեաց զհրեշտակ իւր և եխից զբերանս առիւծուցս, և ոչ ապականեցին զիս, զի առաջի Նորա ուղղութիւն դտաւ իմ, և առաջի քո, արքայ, վնաս (յանցանք) ինչ ոչ արարի։ Յայնժամ թագաւորն զուարճացաւ յանձն իւր, և հրաման ետ հանել զԴանիէլ ի գբոյ անտի։ Հանաւ Դանիէլ ի գբոյ անտի, և ամենեւին ապականութիւն ոչ գտաւ անտի։ Եւ հրաման ետ թագաւորն և ածին զարսն չարախօսս զԴանիէլէ, և ընկեցան Նոքա ի գուբն առիւծուց, և չեւ էին ի յատակս գբոյն հասեալ (գուբին յատակը դեռ չհասած՝) տիրեցին Նոցա առիւծքն, և զամենայն ոսկերս Նոցա մանրեցին։ Դան. Զ։

ԲԷԼ ԵՒ ՊԱՇՏՕՆԵԱՅՔ ՆՈՐԱ

Էին կուռք մի Բաբելացւոց անուն Բէլ, և ելանէր Նմա ռոճիկ աւուր միոջ, Ճաշին (ճաշակ ուտելու), երկոտասան արդու (հին չափ) և քառասուն ոչխար, և գինի՝ վեց մար (հին չափ)։ Եւ թագաւորն պաշտէր զՆա, և երթայր հանապազ երկիր պագանել Նմա։ Բայց Դանիէլ պագանէր երկիր Աստուծոյ իւրում։ Եւ ասէ ցՆա թագաւորն. Դու ընդէ՞ր ոչ երկիր պագանես Բելայ։ Եւ Նա ասէ. Քանզի ոչ պաշտեմ զկուռս ձեռագործս, այլ զԱստուած կենդանի։ Եւ ասէ ցՆա թագաւորն. Իսկ

Բէլ ո՞չ Թուի քեզ Թէ իցէ աստուած կենդանի . միթէ ո՞չ տեսանես ո՛րչափ ուտէ և ըմպէ հանապազ ։ Ասէ Դանիէլ ծիծաղելով . Մի՛ խաբիր , արքայ , զի դա է ի ներքոյ կաւեայ , և արտաքոյ պղնձի , ոչ կերեալ (է) դորա երբէք , և ոչ արբեալ ։ Եւ բարկացեալ Թագաւորն , կոչեաց զքուրմսն նորա , և ասէ ցնոսա . Եթէ ոչ ասիցէք ինձ ո՛վ ուտէ զսեղանն զայն , մահու մեռանիցիք . ապա եթէ յայտ առնիցէք (ապացուցանէք) Թէ զամենայն Բէլ ուտէ , մեռանիցի Դանիէլ զի հայհոյեաց զԲէլ ։ Եւ էին քուրմք Բելայ եւԹանասուն , Թող զկանայս և զմանկտի ։ Եւ եկն Թագաւորն Դանիելիւ հանդերձ ի տուն Բելայ , և ասեն քուրմք Բելայ . Ահաւասիկ մեք արտաքս ելցուք , և դու , արքայ , դիր առաջի դորա զկերակուրսդ , և զգինիդ խառնեալ դիցես . և փակեա զդուրսդ և կնքեա մատանեաւ քով . և եկեալ ընդ առաւօտս , եթէ ոչ գտցի այդ ամենայն կերեալ ի Բելայ , մեռցուք մեք , ապա Թէ ոչ Դանիէլ՝ որ սուտ խօսեցաւ զմէնջ ։ Նոքա վստահ (անկասկած) էին , զի արարեալ էին ընդ սեղանովն մուտ անյայտ , և ընդ այն մտանէին հանապազ և ուտէին ։ Եւ եղեւ իբրեւ ելին արտաքս , Թագաւորն եդ զկերակուրսն առաջի Բելայ ։ Հրաման-ետ Դանիէլ իւրում մանկտւոյ (իր մանչերուն , սպասաւորներուն) , և բերին մոխիր և ցանեցին ընդ ամենայն մեհեանն առաջի Թագաւորին միայնոյ . և ելեալ արտաքս փակեցին զդուռնն և կնքեցին մատանեաւ Թագաւորին և գնացին ։ Եւ քուրմքն մտին գիշերի ըստ սովորուԹեան իւրեանց , կանամբք և որդւովք իւրեանց , կերան զամենայն և արբին , և ոչինչ Թողին ։ Եւ կանխեաց (կանուխ , ամենէն առաջ եկաւ) Թագաւորն ընդ առաւօտն (առտուն կանուխ) Դանիելիւ հանդերձ , և ասէ . Ո՞ղջ (չաւրուած , ամբողջ) են կնիքդ , Դանիէլ . և նա ասէ . Ո՛ղջ են արքայ ։ Եւ եղեւ ընդ բանալ դրանցն (դուռը բացուելու պէս) հայե-

ցաւ Թագաւորն ի սեղանն, և ի ձայն մեծ աղաղակեաց և ասէ. Մեծ ես, Բէլ, և ոչ գոյ նենգութիւն (խաքիքաթսըզլըգ) ի քեզ՝ և ոչ մի։ Եւ ծիծաղեցաւ Դանիէլ, և կալաւ (թութտու) զԹագաւորն զի մի մտցէ ի ներքս, և ասէ. Աղէ, հայեաց ընդ յատակդ, և տես ո՞յր է հետք (իզի նշան) այդ։ Եւ ասէ Թագաւորն. Տեսանեմ հետս արանց, կանանց և մանկտւոյ։ Յայնժամ բարկացեալ Թագաւորն կալաւ զքուրմսն, և զկանայս և զորդիս նոցա, և նոքա ցուցին նմա զգաղտնի դրունսն ընդ որ ([illegible]) մտանէին և ծախէին ([illegible]) զսեղանն ([illegible])։ Եւ կոտորեաց զնոսա Թագաւորն, և զԲէլ ետ ի ձեռս Դանիէլի, որ կործանեաց զնա և զմեհեան նորա։ Դան. ԺԴ։

ՎԻՇԱՊՆ ԶՈՐ ՊԱՇՏԷԻՆ ԲԱԲԵԼԱՑԻՔ

Եւ էր վիշապ ([illegible]) մի մեծ, և պաշտէին զնա Բաբելացիքն։ Ասէ Թագաւորն ցԴանիէլ. Միթէ և զդմանէ՞ ասիցես թէ պղնձի է. ահաւադիկ կենդանի է, ուտէ և ըմպէ. և ոչ կարես ասել թէ չիցէ դա աստուած կենդանի. արդ, եկ, պագ դմա երկիր։ Ասէ ցնա Դանիէլ. Ես տեառն. Աստուծոյ իմոյ երկիր պագանեմ, զի նա է Աստուած կենդանի. բայց դու, արքայ, տուր իշխանութիւն (իգթիտարլըգ), և սպանից զվիշապդ առանց սրոյ և գաւազանի։ Եւ ասէ Թագաւորն. Տուեալ քեզ։ Եւ առ Դանիէլ իւղ, ձիւթ և ճարպ և մազ, և եփեաց ի միասին և արար գնդակս և եհար ի բերան վիշապին ([illegible]), որ իբրև կերաւ զայն, պայթեաց։ Եւ ասէ Դանիէլ. Տեսէք զպաշտամունս ձեր ([illegible])։ Իբրև լուան զայս Բաբելացիքն, բարկացան յոյժ, և կուտեցան ([illegible]) ի վերայ Թագաւորին և ասեն. Հրեայ եղև Թագաւորն. զԲէլ կործանեաց և

և զվիշապն սպան, զքուրմսն կոտորեաց։ Եւ ասեն ցԹագաւորն. Տուր մեզ ի ձեռս զԴանիէլ, ապա թէ ոչ սպանանեմք զքեզ և զտունն քո (ընտանիքդ)։ Իբրև ետես Թագաւորն եթէ կարի տագնապէին (ստիպողանց կը տրվէին) զնա, հարկաւ ետ ի ձեռս նոցա զԴանիէլ, և նոքա արկին զնա ի գուբն առիւծուց, և անդ էր նա զվեց օր։ Եւ էին ի գբին առիւծք եւթն, և տային նոցա հանապազ երկուս մարդս և երկուս պատրուճակս (կով, եզ). բայց յայնժամ ոչ ինչ արկին նոցա, զի վաղվաղակի կերիցեն զԴանիէլ։ Եւ՛ էր Ամբակում մարգարէ ի Հրէաստանի. և եփեաց թան (ապուր) և բրդեաց (հաց բրդել, հացը մանրել) ի կուր (ձողէ մէջ), և երթայր յանդ՝ տանել մշակաց իւրոց։ Եւ ասէ հրեշտակ տեառն ցԱմբակում. Տար զճաշդ զոր ունիս՝ ի Բաբելոն Դանիելի, ի գուբն առիւծուց։ Եւ ասէ Ամբակում. Տէր, զԲաբելոն իմ չիք տեսեալ, և զգուբն ոչ գիտեմ ուր իցէ։ Եւ բուռն եհար (բռնեց) հրեշտակն զգագաթանէ նորա, և կալաւ զվարսից գլխոյ նորա, և եդ զնա ի Բաբելոն ի վերայ գբոյն սաստկութեամբ (արագութեամբ, շուտով) հոգւոյ իւրոյ։ Եւ աղաղակեաց Ամբակում և ասէ. Դանիէլ, Դանիէլ, արի առ զճաշդ զոր առաքեաց քեզ Աստուած։ Եւ յարեաւ Դանիէլ և եկեր. և հրեշտակն Աստուծոյ տարաւ զԱմբակում նոյնժամայն (անմիջապէս) անդրէն ի տեղի իւր։ Եւ Թագաւորն եկն յաւուրն եւթներորդի աշխարել (ողբալ, լալ) զԴանիէլ. և իբրև եկն ի բերան գբոյն, հայեցաւ և ետես զի նստէր Դանիէլ, և առ զնա 'ի վեր, և զպատճառս կորստեանն նորա (անոր կորուստը, մահը ուզող յանցաւորները) արկին ի գուբն, և դէշ դէշ պատառեցան նոքա նոյնժամայն առաջի նորա։

ԾՆՈՒՆԴՆ ՅԻՍՈՒՍԻ

Եւ ի ծնանելն Յիսուսի ի Բեթղեհեմ Հրէաստանի յաւուրս Հերովդի արքայի, ահա մոգք յարեւելից եկին յԵրուսաղէմ, և ասեն. Ո՞ւր է որ ծնաւ արքայն *(ծնած Բաթշահըը) Հրէից, զի տեսաք զաստղն նորա յարեւելս, և եկաք երկիր պագանել նմա։ Եւ իբրեւ լուաւ արքայ Հերովդէս, խռովեցաւ, և ամենայն Երուսաղէմ՝ ընդ նմա։ Եւ ժողովեալ (Հերովդէս) զամենայն զքահանայապետս և* զդպիրս *(կարդացող գրող) ժողովրդեանն, հարցանէր ի նոցանէ թէ ուր ծնանիցի Քրիստոսն։ Եւ նոքա ասեն ցնա.* Ի *Բեթղեհէմ Հրէաստանի։ Յայնժամ Հերովդէս գաղտ կոչեաց զմոգսն և* ստուգեաց *(իմացա, տեղէկացա) ի նոցանէ զժամանակ աստեղն երեւելոյ։ Եւ արձակեալ զնոսա ի Բեթղեհէմ, ասէ. Գնացէք, ստուգեցէք վասն մանկանն, և յորժամ գտանիցէք՝* ազդ արասջիք *(իմացուցէք, լաւ փոռէք) ինձ, զի և ես եկեալ երկիր պագից նմա։ Եւ նոքա իբրեւ լուան ի թագաւորէն, գնացին. և ահա աստղն զոր տեսին յարեւելս՝* առաջնորդեաց նոցա *(առջևէն գնաց, ճամբայ ցուցուց) մինչեւ եկեալ եկաց* ի վերայ ուր էր մանուկն *(տղան եղած տեղւոյն վրայ)։ Եւ իբրեւ մտին ի տուն, տեսին զմանուկն հանդերձ Մարեմաւ մարբն իւրով, և անկեալ երկիր պագանէին նմա. և բացեալ զգանձս իւրեանց մատուցին նմա պատարագս՝ ոսկի և կնդրուկ և զմուռս։ Եւ* հրաման առեալ *ի տեսլեան* չդառնալ անդրէն *(դարձեր ընդանելով որ ետ չդառնան) առ Հերովդէս՝* ընդ այլ ճանապարհ *(ուրիշ ճամբով) գնացին յաշխարհն իւրեանց։ Մատթ. Բ։*

ԿՈՏՈՐԱԾ ՄԱՆԿԱՆՑ ԲԵԹՂԵՀԵՄԻ

Իբրեւ գնացին նոքա (մոգքն) անտի, ահա հրեշտակ տեառն երեւէր ի տեսլեան Յովսեփու եւ ասէր. Արի, առ զմանուկդ եւ զմայր իւր, եւ փախիր յԵգիպտոս եւ անդ լինիցիր (Քօչէր) ցորժամ (Քինչէ օր) *ասացից քեզ, քանզի* ի խնդիր է (Խօրէւէ է, նը ֆիտօւէ) *Հերովդէս կորուսանել զմանուկդ: Եւ նա յարուցեալ առ զմանուկն եւ զմայր իւր* գիշերի (Կէճէլէյին) *եւ գնաց յԵգիպտոս, եւ անդ էր մինչեւ* ցվախճան (մահ) *Հերովդի: Յայնժամ իբրեւ ետես Հերովդէս թէ խաբեցաւ ի մոգուց անտի, բարկացաւ յոյժ, եւ առաքեաց կոտորեաց զամենայն մանկունսն որ էին ի Բեթղեհէմ եւ յամենայն սահմանս նորա՝* յերկեմենից եւ ի խոնարհ (Երկու տարեկանէն վար. *երկեամեան,* Երկու տարեան), *ըստ ժամանակին զոր ստուգեաց ի մոգուցն: Եւ ի վախճանելն Հերովդի, ահա հրեշտակ տեառն ի տեսլեան երեւէր Յովսեփայ յԵգիպտոս, եւ ասէր. Արի, առ զմանուկդ եւ զմայր իւր, եւ գնա յերկիրն Իսրայելի, զի մեռան որ խնդրէին զանձն մանկանդ: Եւ նա յարուցեալ առ զմանուկն եւ զմայր նորա, եւ եկն յերկիրն Իսրայելի: Եւ իբրեւ լուաւ եթէ Արքեղայոս թագաւորեաց Հրէաստանի փոխանակ Հերովդի հօրն իւրոյ, երկեաւ երթալ անդր, եւ հրաման առեալ ի տեսլեան՝ գնաց ի կողմանս Գալիլեացւոց. եւ եկեալ բնակեցաւ ի քաղաքին որ կոչէր Նազարէթ: Մատթ. Բ.*

ՅԻՍՈՒՍ ՎԱՐԻ ՅԱՆԱՊԱՏ ՓՈՐՁԻՒ Ի ՍԱՏԱՆԱՅԷ

Յայնժամ վարեցաւ (տարուեցաւ) *Յիսուս յանապատ ի Հոգւոյն փորձել ի սատանայէ. եւ պահեալ* (պահել, ջան չարել, ծոմ պահել) *զքառասուն տիւ եւ զքառասուն գիշեր՝ ապա քաղցեաւ: Եւ մատուցեալ փորձիչն ասէ*

ցնա . Եթէ որդի ես Աստուծոյ, ասա զի քարինքս այսոքիկ հաց լինիցին : Նա պատասխանի ետ և ասէ . Գրեալ է թէ Ոչ հացիւ միայն կեցցէ մարդ, այլ ամենայն բանիւ որ ելանէ ի բերանոյ Աստուծոյ : Յայնժամ առեալ ածէ զնա սատանայ ի քաղաքն սուրբ, և կացուցանէ զնա ի վերայ աշտարակի տաճարին, և ասէ ցնա, Եթէ որդի ես Աստուծոյ, արկ զքեզ աստի ի վայր, զի գրեալ է թէ Հրեշտակաց իւրոց պատուիրեալ է վասն քո, և ի վերայ ձեռաց բարձցեն զքեզ, զի մի երբէք հարցես զքարի զոտն քո : Ասէ ցնա դարձեալ Յիսուս . Գրեալ է թէ Ոչ փորձեսցես զՏէր Աստուած քո : Դարձեալ առնու ածէ զնա սատանայ ի լեառն մի բարձր յոյժ, և ցուցանէ նմա զամենայն թագաւորութիւնս աշխարհի և զփառս նոցա, և ասէ ցնա . Զայս ամենայն քեզ տաց, եթէ անկեալ երկիր պագանիցես ինձ : Յայնժամ ասէ ցնա Յիսուս . Երթ յետս իմ (գնա՛ տեղէն), սատանայ, զի գրեալ է . Տեառն Աստուծոյ քում երկիր պագցես և զնա միայն պաշտեսցես : Ապա եթող զնա սատանայ, և ահա հրեշտակք մատեան և պաշտէին (ծառայութիւն ընել, սպասաւորել) զնա : Մատթէոս Դ :

ԹԷ ՉԷ ՊԱՐՏ ՀՈԳԱԼ ՎԱՍՆ ՄԱՐՄՆՈՅ

Մի հոգայք վասն ոգւոց (ոգի, անձն) ձերոց թէ զինչ ուտիցէք կամ զինչ ըմպիցէք . և մի վասն մարմնոց ձերոց թէ զինչ ագանիցիք (հագնիլ) . ո՞չ ապաքէն ոգի առաւել (գերազանց) է քան զկերակուր, և մարմին՝ քան զհանդերձ : Հայեցարուք ի թռչունս երկնից, զի ոչ վարեն (սերմանեն, ցանեն) և ոչ հնձեն, և ոչ ժողովեն ի շտեմարանս, և հայրն ձեր երկնաւոր կերակրէ զնոսա . ո՞չ ապաքէն դուք առաւել էք քան զնոսա : Իսկ արդ՝ ո՞ ի ձէնջ առ հոգալ իւրում (հոգալով, հոգա—

ըլան համար) յաւելուլ կարիցէ ի հասակ իւր կանգուն մի ։ Եւ վասն հանդերձի զի՞ (ինչո՞ւ համար) հոգայք․ հայեցարուք ի շուշանն վայրենի (վայրի տեղ, բոյս բուսանող), ո՛րպէս աճէ․ ոչ ջանայ և ոչ նիւթէ (մանել, գործել)․ ասեմ ձեզ զի ոչ Սողոմոն յամենայն ի փառսն իւրում զգեցաւ իբրեւ զմի ի նոցանէ ։ Իսկ եթէ զխոտն ի վայրի (բաց տեղ, դէր), որ այսօր է (կայ) և վաղիւն ի հնոց արկանի, Աստուած այնպէս զգեցուցանէ, ո՞րչափ եւս առաւել զձեզ, թերահաւատք ։ Մի այսուհետեւ հոգայցէք և ասիցէք․ Զի՞նչ կերիցուք կամ զի՞նչ արբցուք կամ զի՞նչ զգեցցուք․ քանզի գիտէ Հայրն ձեր երկնաւոր թէ պիտոյ է (պէտք է, հարկաւոր է) ձեզ այդ ամենայն ։ Մատթ․ Զ ։

ՅԻՍՈՒՍ ՍԱՍՏԷ ԾՈՎՈՒՆ

Իբրեւ եմուտ ի նաւն, գնացին զկնի նորա աշակերտքն նորա ։ Եւ ահա շարժումն մեծ եղեւ ի ծովուն՝ մինչ նաւին ծածկել յալեաց անտի (այնպէս մեծ ալեկոծութիւն եղաւ ծովին մէջ՝ որ նաւը կը ծածկուէր ալիքներէն), և ինքն ննջէր ։ Եւ մատուցեալ աշակերտքն յարուցին զնա և ասեն․ Տէր, փրկեա զմեզ զի կորնչիմք ։ Եւ նա ասէ ցնոսա․ Ընդէ՞ր վատասիրտք (վախկոտ, վատ) էք, թերահաւատք ։ Յայնժամ յարուցեալ սաստեաց (վխեց) հողմոցն և ծովուն, և եղեւ խաղաղութիւն մեծ ։ Եւ մարդիկն զարմացան և ասէին․ Ո՞րպիսի՛ ոք իցէ սա, զի եւ հողմք եւ ծովք (հովերը և ծովը ալ) հնազանդին սմա ։

ԴԵՒՔ ՄՏԱՆԵՆ Ի ԽՈԶԵԱՆՆ

Իբրեւ անց յայնկոյս յերկիրն Գերգեսացւոց, պատահեցին նմա դիւահարք երկու՝ ելեալք ի գերեզմանացն (գերեզմանք, գերեզմաննոց), չարաչարք յոյժ (շատ

չարաչար, սաստիկ), որպէս զի (այնպէս որ) *չէր հնար ու-մեք անցանել* ընդ այն ճանապարհ (այն ճամբէն) ։ *Եւ ահա աղաղակեցին և ասեն* ․ Զի՞ կայ մեր եւ քո (Մենէ ի՞նչ կ'ուզես), *Յիսուս, որդի Աստուծոյ, եկիր* տարա-ժամ (ժամանակէն առաջ) *տանջե՞լ զմեզ ։ Եւ էր հեռագոյն ի նոցանէ* երամակ մի *խոզից*՝ արօտական (արածող խումբ մը) ։ *Եւ դեւքն աղաչէին զնա և ասէին ․ Եթէ հանես զմեզ աստի, հրաման տուր մեզ երթալ յերամակ խո-զիցն ։ Եւ ասէ ցնոսա Յիսուս ․ Երթայք ։ Եւ նոքա ել-եալ գնացին յերամակն խոզից, և* դիմեաց (գնաց դէպ ի ․ ․ ․) *ամենայն երամակն ի դարէ* (դար, գահավէժ տեղ, զառիվայր) *անտի ի ծովն, և մեռան ի ջուրսն, և խոզարածքն փախեան ։ Մատթ ․ Ը ։*

ԳԼԽԱՏՈՒՄՆ ՅՈՎՀԱՆՆՈՒ ՄԿՐՏՉԻՆ

Յայնմ ժամանակի լուաւ Հերովդէս զլուր Յիսուսի և ասէ ցծառայս իւր ․ Նա է Յովհաննէս Մկրտիչ, նա յարեաւ ի մեռելոց, և վասն այնորիկ զօրութիւնք լի-նին նովաւ ։ Քանզի Հերովդէս կալաւ զՅովհաննէս, կապեաց և եդ ի բանտի վասն Հերովդիայ կնոջ Փի-լիպպոսի եղբօր նորա, զի ասէր Յովհաննէս, Չէ ար-ժան քեզ ունել զդա (կին) ․ *և Հերովդէս կամէր սպա-նանել զՅովհաննէս, բայց երկնչէր ի ժողովրդենէ ան-տի, քանզի* իբրեւ *զմարգարէ* ունէին (կը համարէին) *զնա ։ Եւ իբրեւ եղեն ծնունդք* (ծննդեան օրը) *Հերովդի, կաքաւեաց դուստրն Հերովդիայ ի մէջ* բազմականին (հրաւիրելոց), *և հաճոյ թուեցաւ Հերովդի, ուստի և երդմամբ խոստացաւ տալ նմա զինչ և խնդրեսցէ ։ Եւ նա յառաջագոյն խրատեալ ի մօրմէ իւրմէ, Տուր ինձ, ասէ, այսր ի վերայ* սկտեղ (Թէփսի) *զգլուխն Յով-հաննու Մկրտչի ։ Եւ տրտմեցաւ թագաւորն, բայց վասն երդմանցն և* բարձակցացն (հետը նստողներուն) *հրա-*

մայեաց տալ նմա ։ Եւ առաքեաց գլխատեաց զՅովհաննէս ի բանտի, և բերաւ գլուխ նորա սկտեղբ (սկուտեղ, ․․․ ․ սկտեղ) և տուաւ աղջկանն, և նա տարաւ զնա առ մայր իւր ։ Եւ մատուցեալ աշակերտքն Յովհաննու բարձին զմարմինն և թաղեցին ։ Մատթ․ ԺԴ ։

ՅԻՍՈՒՍ ԲԱԶՄԱՑՈՒՑԱՆԷ ԶՀԱՑՆ ԵՒ ԳՆԱՑ Ի ՎԵՐԱՑ ԾՈՎՈՒՆ

Իբրև ընդ երեկս եղեւ (էրէկ․․․ ըլ․․ ․․․), մատեան առ նա աշակերտքն և ասեն, Տեղիս անապատ է, և օրս՝ տարաժամեալ (․․․, ․․․ ․․․)․ արձակեա զժողովուրդս զի երթիցեն շուրջ ի շէնսն, գնեսցեն իւրեանց կերակուրս ։ Եւ ասէ Յիսուս, Ոչինչ պիտոյ է (հարկ չէ) դոցա երթալ, դուք տուք դոցա ուտել ։ Եւ նոքա ասեն ցնա․ Ոչինչ ունիմք աստ, բայց (․․․ ․․․) հինգ նկանակ և երկուս ձկունս ։ Եւ ասէ ցնոսա Յիսուս, Բերէք այսր զայն ։ Եւ հրամայեաց բազմեցուցանել զժողովուրդն ի վերայ խոտոյ, և առեալ զհինգ նկանակն և զերկուս ձկունսն հայեցաւ յերկինս, օրհնեաց և եբեկ, և ետ ցաշակերտսն զնկանակսն, և աշակերտքն՝ ժողովրդոցն ։ Կերան ամենեքեան և յագեցան, և բարձին զնշխարս կոտորոցն երկոտասան սակառի (զէմպիլ) լի ։ Եւ որք կերանն՝ էին արք իբրեւ հինգ հազար (հինգ հազար ․․․), թող զկանայս և զմանկտի (․․․ ․ ․․․) ևն․)։ Եւ ստիպեաց (․․․) Յիսուս վաղվաղակի զաշակերտսն մտանել ի նաւ և յառաջել (․․․ ․․․ ․․․) յայնկոյս, մինչ ինքն զժողովուրդսն արձակիցէ ։ Եւ իբրև արձակեաց զժողովուրդսն, ել ի լեառն առանձինն կալ յաղօթս (․․․)․ և իբրև ընդ երեկս եղեւ, անդ էր միայն ։ Եւ նաւն մեկնեալ էր ի ցամաքէն բազում ասպարիսօք (միլ, ․․․) ծփեալ (․․․) յալեացն, քանզի ընդդէմ էր հողմն ։ Եւ ի չոր–

բորդուռմ պահու գիշերոյն եկն առ Նոսա Յիսուս զնալով *(քալելով) ի վերայ ծովուն* ։ *Իբրեւ տեսին զնա աշակերտքն զի գնայր ի վերայ ծովուն , խռովեցան , և ասեն թէ* առ աչօք ինչ *իցէ (ոչ էրթան , ալէ միայն երեւ-ցող բան մը) , և* առ ահին *(վախէն) աղաղակեցին ։ Եւ վաղվաղակի խօսեցաւ ընդ Նոսա Յիսուս և ասէ* · *Քաջալերացարուք , ես եմ , մի երկնչիք ։ Պատասխանի ետ Նմա Պետրոս և ասէ , Տէր , եթէ դու ես , հրամայեա ինձ գալ առ քեզ ի վերայ ջրոյս ։ Եւ Նա ասէ , Եկ ։ Եւ իջեալ ի Նաւէն Պետրոս* գնաց *(քալեց) ի վերայ ջուրցն , և եկն առ Յիսուս , և տեսեալ զհողմն սաստիկ՝ երկեաւ , և իբրեւ սկսաւ ընկղմել , աղաղակեաց և ասէ , Տէր ,* փրկեա *(ազատէ) զիս ։ Եւ վաղվաղակի Յիսուս ձգեաց զձեռն իւր , կալաւ զնա և ասէ* · *Թերահաւատ , ընդէ՞ր* երկմտեցեր *(տարակուսեցիր) ։ Եւ իբրեւ ելին ի Նաւն , հանդարտեաց հողմն ։ Մատթ* · *ԺԴ* ։

BԱԶՄԱՑՈՒԹԱՆԷ ՋՀԱՑՆ

Կոչեցեալ առ ինքն զաշակերտսն ասէ · *Գթամ ի ժողովուրդդ , զի* արդ *(հիմա) երեք աւուրք են զի կան առ իս , և* ոչ ունին զինչ ուտիցեն *(ուտելիք չունին)* · *և արձակել զդոսա* նօթիս *(անօթի) չկամիմ ,* գուցէ *(ըլլայ թէ)* նքթիցին *(անօթութենէ մարէլ)* զճանապարհայն *(ճամբան)* ։ *Ասեն ցնա աշակերտքն , Իսկ արդ , մեզ յանապատի աստ ուստի՞ իցէ այնչափ հաց մինչ յագեցուցանել զայսչափ ժողովուրդ ։ Եւ ասէ ցնոսա Յիսուս , Քանի՞ Նկանակ ունիք ։ Եւ Նոքա ասեն , Եւթն , և սակաւ ձկունս ։ Եւ հրամայեաց Յիսուս ժողովրդեանն* բազմել *(նստիլ) ի վերայ գետնոյ ։ Եւ առեալ զեւթն Նկանակն և զձկունսն գոհացաւ և եբեկ , և ետ ցաշակերտսն , և Նոքա՝ ժողովրդեանն ։ Կերան ամենեքեան և յագեցան , և բարձին* զնշխարս *(մանրուք , կտորտանք) կոտորոցն եւթն*

զամբիւղ (չփմղէլ) մի ։ Եւ որք կերանն՝ էին իբրեւ արք չորք հազարք , թող զկանայս և զմանկտի ։ Մատթ․ ժե ։

ՁԱԿՔԷՈՍ

Էր այր մի անուն կոչեցեալ Զակքէոս․ և նա էր մաքսապետ և ինքն մեծատուն , և խնդրէր տեսանել թէ ով իցէ Յիսուս , և ոչ կարէր ի բազմութենէն զի կարճ էր հասակաւ ։ Եւ ընթացեալ յառաջս (տողջէ-է նողմը ճողչըլով) ել ի ժանտաթզենին զի տեսանիցէ զնա , քանզի ընդ այն (ոնկէ) անցանելոց էր ։ Իբրեւ եկն Յիսուս ի տեղին , հայեցաւ ի վեր և ասէ ցնա․ Զակքէ , փութա , էջ այտի , զի այսօր ի տան քում արժան է ինձ ագանել (էջնել, օթեւանել)։ Փութացաւ Զակքէոս և էջ և ընկալաւ զնա ուրախութեամբ ։ Իբրեւ տեսին ամենեքին , տրտնջէին և ասէին թէ առ առն մեղաւորի եմուտ լուծանել (օթեւանել, էջնել)։ Եկն եկաց (եկաւ , ներկայացաւ) Զակքէոս , և ասէ ցՅիսուս․ Տէր , ահա զկէս ընչից իմոց տաց աղքատաց , և եթէ զոք զրկեցի (անիրաւութեան ըրի) , հատուցից չորեքկին (քառապատիկ) ։ Ղուկ․ ժթ ։

ՀԱՐՍԱՆԻՔ Ի ԿԱՆԱ

Հարսանիք էին ի Կանա , և անդ էր մայրն Յիսուսի ։ Կոչեցաւ և Յիսուս և աշակերտքն նորա ի հարսանիսն ։ Եւ ի պակասել գինւոյն ասէ մայրն ցՅիսուս․ Գինի ոչ ունին ։ Ասէ ցնա Յիսուս , Զի՞ կայ իմ եւ քո (ինչ ընդհ կ'ուզես) , կին դու ։ Ասէ մայր նորա ցսպասաւորսն․ Որ զինչ ասիցէ ձեզ՝ արասջիք ։ Անդ էին թակոյկք կճեայք (մարմարեայ քէ-փ) վեց , տանէին մի մի ի նոցանէ մարս երկուս կամ երիս (ամէն մէկը երկերկու կամ երեք երեք մար կ'առնէր)։ Ասէ ցնոսա Յիսուս , Լցէք զթա–

կոյկադ ջրով ։ Եւ ելցին զնոսա մինչեւ ի վեր ։ Եւ ասէ ցնոսա Յիսուս . Արդ, առէք և բերէք տաճարապետիդ (սեղանապետ, քէլէրճի, սոֆրաճը) ։ Եւ նոքա բերին, և ճաշակեաց տաճարապետն զջուրն գինի եղեալ, և ոչ գիտէր ուստի իցէ . բայց սպասաւորքն գիտէին որք արկին (դրին, լեցուցին) զջուրն ։ Խօսի ընդ փեսային տաճարապետն և ասէ . Ամենայն մարդ զանոյշ գինին յառաջագոյն պատուէ (առաջ կը բերէ, կը հրամցունէ), և յորժամ արբենան (գինովնան)՝ յայնժամ զյոռին (գէշը) . դու պահեցեր զանոյշ գինիդ մինչեւ ցայժմ ։ Յովհ . Բ ։

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ Ի ՎՍ ՏՆԷ ԿՈՒՐԻՆ

Մինչդեռ անցանէր Յիսուս, ետես այր մի կոյր ի ծնէ ։ Հարցին ցնա աշակերտք նորա և ասեն . Ո՞յր վնաս է (յանցանքը ո՞րն է), սորա՞ թէ հօր և մօր իւրոյ զի կոյր ծնաւ ։ Պատասխանի ետ Յիսուս . Ոչ դորա մեղաւ է և ոչ հօր և մօր նորա ։ Զայս իբրեւ ասաց, եթուք ի գետին և արար կաւ ի թքոյն, և ծեփեաց զկաւն ի վերայ աչաց կուրին, և ասէ ցնա . Երթ լուա յաւազանին Սելովմայ ։ Զոքաւ լուացաւ այրն, եկն և տեսանէր ։ Իսկ դրացիքն և որոց տեսեալն էր զնա յառաջագոյն թէ մուրացիկ (մուրացկան) էր, ասէին . Ո՞չ սա էր որ նստէրն և մուրանայր ։ Կէսքն (ոմանք) ասէին, նա է ։ Այլքն ասէին . Ոչ, այլ նման է նմա ։ Եւ ինքն ասէր թէ Ես եմ ։ Ասեն ցնա . Իսկ զիա՞րդ բացան աչք քո ։ Նա ետ պատասխանի . Այր մի որում Յիսուսն ասեն՝ կաւ արար և ծեփեաց զաչս իմ, և ասէ ցիս, Երթ ի Սելովամ և լուա ։ Զոգայ, լուացայ և տեսանեմ ։ Ասեն ցնա . Ո՞ւր է նա ։ Եւ նա ասէ ցնոսա, Ոչ գիտեմ ։ Ածին առ փարիսեցիսն զնա որ երբեմն կոյրն էր ։ Եւ էր շաբաթ յորժամ զկաւն արար Յիսուս, և եբաց զաչս կուրին ։ Դարձեալ հարցանէին զնա փարիսեցիքն .

Զիա՞րդ տեսանես ։ Նա ասէ ցնոսա ․ Կաւ եդ ի վերայ աչաց իմոց , և լուացայ և տեսանեմ ։ Ասեն ոմանք ի փարիսեցւոցն ․ Ոչ է այրն այն յԱստուծոյ , զի զշաբաթս ոչ պահէ ։ Կէսքն ասէին , Իսկ զիա՞րդ կարէ մարդ մեղաւոր այսպիսի Ճշաճս (հրաշք) առնել ։ Եւ էին ճեր-ճուածք (երկպառակութիւն) ի մէջ նոցա ։ Ասեն դարձեալ ցկոյրն ․ Դու զի° (ինչ) ասես վասն նորա , զի եբաց զաչս քո (աչէրդ բանալուն համար դուն ինչ կ՚ըսես) ։ Եւ նա ասէ , Մարգարէ է ։ Եւ ոչ հաւատային Հրեայքն զնմանէ թէ կոյր էր և բացաւ , մինչեւ կոչեցին զծնողս բացելոյն , հարցին ցնոսա և ասեն ․ Սա՞ է որդին ձեր զորմէ դուքն ասէիք եթէ կոյր ծնաւ ․ արդ զիա՞րդ տեսանէ ։ Պատասխանի ետուն ծնողքն նորա և ասեն ․ Գիտեմք զի սա է որդին մեր , և զի կոյր ծնաւ ․ բայց զիարդ այժմդ տեսանէ , ոչ գիտեմք ․ կամ թէ ով եբաց զաչս դորա , մեք ոչ գիտեմք ․ ցդա իսկ հարցէք , իճքճիճ (ինքը) ի չափ հասեալ է , ինքն իսկ խօսեսցի վասն իւր ։ Զայս ասացին ծնողք նորա , զի երկնչէին ի Հրէից ։ Քանզի ուխտ (դաշման) եդեալ էր Հրէից , զի եթէ ոք խոստովանեսցի զՅիսուս՝ Քրիստոս , ի բաց կացցէ ի ժողովրդեճեճ (եկեղեցիէն հանուի) , վասն այնորիկ ասացին ծնողք նորա թէ ինքնին ի չափ հասեալ է , ցնա իսկ հարցէք ։ Դարձեալ կրկին անգամ կոչեցին զայրն որ կոյրն էր , և ասեն ցնա ․ Մեք գիտեմք զի այրն այն մեղաւոր է ։ Եւ նա ասէ ․ Թէ մեղաւոր իցէ՝ ես ոչ գիտեմ ․ բայց գիտեմ զի կոյր էի և արդ տեսանեմ ։ Դարձեալ ասեն ցնա ․ Զի°նչ արար քեզ , զիա՞րդ եբաց զաչս քո ։ Պատասխանի ետ նոցա այրն ․ Այժմ ասացի ձեզ և ոչ լուարուք ․ զի° կամիք միւսանգամ լսել ․ միթէ և դո՞ւք կամիք աշակերտել նմա ։ Նոքա հայհոյէին զնա և ասէին ․ Դու միջիր նորա աշակերտ ․ Մեք Մովսիսի աշակերտք եմք ․ մեք գիտեմք զի ընդ Մովսիսի խօսեցաւ Աստուած , զսա ոչ գիտեմք

ուստի է։ Պատասխանի նա այրն և ասէ ցնոսա. Այդ իսկ ԷՆ սքանչելիք (այս է զարմանալին) զի դուք ոչ գիտէք ուստի իցէ, և զիմ աչս եբաց. և գիտեմք զի Աստուած մեղաւորաց ոչ լսէ, բայց եթէ աստուածապաշտ ոք իցէ և զկամս նորա առնիցէ, նմա լսէ. ի յաւիտենից ոչ ոք լուաւ եթէ եբաց ոք զաչս կուրի ի ծնէ կոյր ծնելոյ. եթէ ոչ յԱստուծոյ էր այրն այն, ոչ կարէր առնել ինչ։ Պատասխանի ետուն փարիսեցիքն և ասեն ցնա. Ի մեղս իսկ ծնեալ ես ամենեւին, և դու վարդապե՞տ լինիս մեզ։ Եւ հանին զնա արտաքս։ Յովհ. Թ։

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՂԱԶԱՐՈՒ

Եղբայրն Մարիամու և Մարթայի Ղազարոս հիւանդ էր։ Առաքեցին (արս) առ Յիսուս քորք նորա և ասեն. Տէր, ահաւասիկ զոր դուն սիրէիր՝ հիւանդացեալ է։ Իբրեւ լուաւ Յիսուս թէ հիւանդացեալ էր Ղազարոս, զտեղի կալաւ (կեցաւ) անդրէն ուր էրն՝ աւուրս երկուս։ Յետ այնորիկ ասէ ցաշակերտս իւր. Եկայք երթիցուք միւսանգամ ի Հրէաստան։ Ասեն ցնա աշակերտքն. Այժմ եւս խնդրէին զքեզ Հրեայքն քարկոծ առնել, և դարձեալ երթա՞ս անդրէն։ Ասէ ցնոսա Յիսուս. Ղազարոս բարեկամ մեր ննջեաց, երթամ զի զարթուցից զնա։ Ասեն ցնա աշակերտքն. Տէր, եթէ ննջեաց, ապա ապրի։ Յիսուս վասն մահուն նորա ասէր, նոցա այնպէս թուեցաւ թէ վասն ննջելոյ քնոյն ասէր։ Յայնժամ ասէ ցնոսա Յիսուս յայտնապէս. Ղազարոս մեռաւ, և ես ուրախ եմ զի չէի անդ. բայց արդ եկայք երթիցուք առ նա։ Ասէ Թովմաս ցաշակերտակիցսն. ՕՆ (հայդէ), եկայք և մեք զի ընդ նմա մեռցուք։ Եկն Յիսուս և եգիտ զՂազարոս չորեքօրեայ (չորս օրէն ի վեր) ի գերեզմանի։ Եւ էր Բեթանիա (ուր էր Ղազարոս մեռեալ) մերձ յԵրուսաղէմ, և բազումք

ի Հրէից անտի եկեալ էին առ Մարթա և առ Մարիամ զի մխիթարեսցեն զնոսա վասն եղբօրն ։ Մարթա իբրև լուաւ թէ Յիսուս գայ , ընդ առաջ գնաց նորա . բայց Մարիամ նստէր անդէն ի տան . Ասէ Մարթա ցՅիսուս . Տէր , եթէ աստ լեալ էիր , եղբայրն իմ չէր մեռեալ ։ Զայս իբրև ասաց , գնաց կոչեաց զՄարիամ զքոյր իւր լռելեայն և ասէ . Վարդապետն եկեալ է և կոչէ զքեզ ։ Նա իբրև լուաւ , յարեաւ վաղվաղակի և եկն առ Յի-սուս ։ Չեւ եւս եր եկեալ (դեռ եկած չէր) *Յիսուս ի գեղն , այլ էր անդրէն ի տեղւոջն ուր ընդ առաջ եղեւ նմա Մարթա ։* Իսկ *Հրեայքն որ էին ընդ Մարիամու ի տան. անդ և մխիթարէին զնա , իբրև տեսին զՄարիամ թէ յարեաւ վաղվաղակի և գնաց , գնացին և նոքա զհետ նորա . համարէին թէ ի գերեզմանն երթայ զի լացցէ անդ ։* Իսկ *Մարիամ իբրև եկն* ուր էրն Յիսուս (Յիսու-սին եղած տեղը) *և ետես զնա , անկաւ առ ոտս նորա և. ասէ . Տէր , եթէ աստ էիր դիպեալ , ոչ էր մեռեալ եղբայրն իմ ։ Յիսուս իբրև ետես զնա զի լայր , և* որ ընդ նմայն էին Հրեայքն (անոր հետ եղող Հրեաները) *լային , խռովեցաւ յոգի իւր և ասէ . Ո՞ւր եդիք զնա ։ Ասեն ցնա , Տէր , եկ և տես ։ Գայ Յիսուս ի գերեզմանն , և էր* այր (մաղարա) *մի և վէմ մի եդեալ ի վերայ նորա ։ Եւ ասէ Յիսուս ,* ի բաց արարէք (մէկդի ըրէք) *զվէմդ ։ Ասէ ցնա Մարթա քոյր մեռելոյն . Տէր , արդ հոտեալ իցէ , քանզի չորեքօրեայ է .* Իբրև ի վեր առին (վեր-ցուցին) *զվէմն , ի ձայն մեծ աղաղակեաց Յիսուս և ասէ . Ղազարէ , արի , եկ արտաքս ։ Եւ ել մեռեալն ոտիւքն կապելովք , և* ձեռօքն երիզապնդօք (երկայն լաթերով փաթ-թած ձեռքերով) *, և* երեսօքն վարշամակապատօք (վար-շամակով պատած երեսով) *։ Եւ ասէ ցնոսա Յիսուս . Լու-ծէք զդա և թողէք երթալ ։ Բազումք ի Հրէից որ եկ-եալ էին առ Մարեմանս , իբրև տեսին զոր արարն Յիսուս՝ հաւատացին ի նա ։ Յովհ . ԺԱ ։*

ՍՔԱՆՉԵԼԻՔ ՈՐՍՈՅ ՁԿԱՆՑ

Էին ի միասին Սիմոն Պետրոս և Թովմաս և Նաթանայէլ և որդիքն Զեբեդեայ։ Ասէ ցնոսա Սիմոն Պետրոս. Երթամ ձուկն որսալ. և նոքա ասեն, Գամք և մեք ընդ քեզ։ Գնացին և մտին ի նաւ, և յայնմ գիշերի կալան և ոչինչ։ Իբրև այգ եղեւ (լուսցաւ), կայր Յիսուս յեզր ծովուն, բայց ոչ ծանեան աշակերտքն թէ Յիսուս իցէ։ Ասէ ցնոսա Յիսուս. Մանկունք, միթէ ունի՞ք ինչ ուտելոյ։ Պատասխանի ետուն նոքա և ասեն ցնա, Ոչ։ Ասէ ցնոսա Յիսուս. Արկէք յաջակողմն նաւին զուռկանդ և գտանիցէք։ Արկին և ոչ կարէին ձգել (քաշել) ի բազմութենէ անտի ձկանցն։ Ասէ աշակերտն այն զոր սիրէրն Յիսուս՝ ցՊետրոս. Տէր է այն։ Սիմոն Պետրոս իբրև լուաւ թէ տէր է, արկաւ զիւրև զափածանելին (փէշդիմալ), քանզի մերկ էր, և ընկէց զինքն ի ծով. և այլ (միւս) աշակերտքն նաւաւն իսկ գային, քանզի չէին հեռի ի ցամաքէն, այլ իբրև երկերիւր կանգնաւ, և քարշէին զգործին հանդերձ ձկամբքն։ Իբրև ելին ի ցամաք, տեսանեն կրակետղ կայծակայնից (վառած կրակ, քէօզ) և ձուկն մի ի վերայ և հաց։ Ասէ ցնոսա Յիսուս. Բերէք ինձ ի ձկանց այտի զոր դուքդ կալարուք այժմիկ։ Ելմուտ Սիմոն Պետրոս և ձգէր զգործին ի ցամաք լի մեծամեծ ձկամբք, հարիւր և յիսուն և երիւք. և այնչափ ինչ (այնչափ բան) կայր և ոչ պատառեցաւ գործին։ Ասէ ցնոսա Յիսուս։ Եկայք ճաշեցէք։ Եւ ոչ ոք յաշակերտացն իշխէր (կը համարձակէր) հարցանել թէ Դու ո՞վ ես. զի գիտէին թէ տէրն էր։ Գայ Յիսուս և առնու զհացն և տայ նոցա, նոյնպէս և զձուկնն։ Յովհ. ԻԱ.

ՊԱՏՈՒՀԱՍ ԱՆԱՆԻԱՅ ԵՒ ՍԱՓԻՐԱՅ

Այր ոմն Անանիա անուն, հանդերձ կնաւ իւրով Սափիրաւ. վաճառեաց ագարակ, և խորեաց (մաս մը ծածկեց, պահեց) ի գնոց անտի գիտելով և կնոջն, և եբեր մասն ինչ և եդ առ ոտս առաքելոցն։ Ասէ Պետրոս. Անանիա, ընդէ՞ր խորեցեր ի գնոց գեղջն. ո՞չ ապաքէն մինչ կայրն քո էր, և ի վաճառելն՝ ընդ քո իշխանութեամբ էր։ Իբրև լուաւ Անանիա զբանս զայսոսիկ, անկաւ և եհան զոգի, և եղև ահ մեծ ի վերայ ամենեցուն որ լուան զայս։ Յոտն կացին երիտասարդքն և ամփոփեցին (պատել) զնա, տարան թաղեցին։ Իբրև ժամք երեք անցին, և կին նորա ոչ գիտէր զինչ եղեալն էր (եղածը), եմուտ ի ներքս։ Ասէ ցնա Պետրոս. Ասա դու ինձ թէ այնչափ գնո՞յ զգեղն վաճառեցէք։ Եւ նա ասէ։ Այո, այնչափ։ Ասէ ցնա Պետրոս, Զի՞ է զի միաբանեցայք դուք փորձել զհոգին տեառն. ահա ոտքն որ թաղեցին զայրն քո ի դրանն՝ հանցեն և զքեզ։ Եւ անկաւ կինն անդրէն առ ոտս նորա և եհան զոգի։ Մտին երիտասարդքն և գտին զնա մեռեալ և հանին թաղեցին առ առն իւրում։ Գործ. Ե։

ՍՏԵՓԱՆՈՍ ՔԱՐԿՈԾԻ

Ստեփանոս, այր լի շնորհօք և զօրութեամբ, առնէր առաքեալս եւ նշանս (հրաշք) մեծամեծս ի ժողովրդեանն։ Յարեան ոմանք ի ժողովրդեանն (ժողովարանոց, աղանդք) որ կոչէր Լիբեացւոց և Կիւրենացւոց և Աղեքսանդրացւոց և որ ի Կիւլիկեցւոց և յԱսիայ, վիճել ընդ Ստեփանոսի, և ոչ կարէին զդէմ ունել զիմաստութեանն եւ զհոգւոյն (փոխանակ՝ իմաստութեան և հոգւոյն) որով խօսէր։ Յայնժամ հրապուրեցին արս ոմանս ասել զնմանէ թէ լուաք զդորա խօսել բանս հայհոյու-

թեան ի Մովսէս և յԱստուած ։ Եւ խռովեցին (փոխա-
նակ՝ խօսեցուցին) զժողովուրդն և զերիցունսն (ծերեր,
գլխաւորներ) և զդպիրսն (գրագէտ, նօտարագող), և հասեալ
ի վերայ յափշտակեցին զնա և ածին յատեանն (ատեան-
ըէն)․ և կացուցին վկայս սուտս որ ասէին, Այրս այս
ոչ դադարէ խօսել բանս հայհոյութեան զտեղւոյն
սրբոյ և զօրինացն․ լուաք ի դմանէ զի ասէր թէ, Յի-
սուս Նազովրեցի, նա քակեսցէ զտեղիս զայս, և փո-
խեսցէ զօրէնս զոր ետ մեզ Մովսէս ։ Ասէ քահանա-
յապետն եթէ Արդարև այդ այդպէ՞ս իցէ ։ Եւ նա ա-
սէ․ Լուարուք ինձ . . . խստապարանոցք և անթըլ-
փատք սրտիւք և ականջօք ։ Դուք հանապազ հոգւոյն
սրբոյ հակառակ կայք, որպէս հարքն ձեր և դուք ։
Զո՞ ոք ի մարգարէիցն ոչ հալածեցին հարքն ձեր, և
սպանին զայնոսիկ որ յառաջագոյն պատմեցին վասն
գալստեան արդարոյն որոյ դուք այժմ մատնիչք և
սպանողք եղերուք . . . ։ Եւ լուեալ զայն զայրանա-
յին ի սիրտս իւրեանց, և կրճտէին զատամունս ի վե-
րայ նորա ։ Եւ նա էր լի հոգւով սրբով․ հայեցաւ յեր-
կինս, և ետես զփառս Աստուծոյ, և զՅիսուս զի կայր
ընդ աջմէ Աստուծոյ, և ասէ․ Ահա տեսանեմ զերկինս
բացեալ և զորդի մարդոյ զի կայ ընդ աջմէ Աստու-
ծոյ ։ Աղաղակեալ ի ձայն մեծ՝ խցին զականջս իւրեանց
(խնտալ, ռըճտալ), և դիմեցին առհասարակ (ամէնը մէ-
կէն) ի վերայ նորա, և հանեալ արտաքոյ քաղաքին՝
քարկոծէին զնա․ և վկայքն դնէին զձորձս իւրեանց
(իրենց լաթերը) առ ոտս երիտասարդի միոջ որ կոչէր
Սաւուղ ։ Եւ քարկոծ առնէին զՍտեփանոս որ կարդայր
(աղաղակել առ Աստուած) և ասէր, Տէր, Յիսուս, ընկալ
զոգի իմ ։ Եդ ծունր և աղաղակեաց ի ձայն բարձր,
Տէր, մի համարիր դոցա զայս մեղս․ և զայս իբրև
ասաց, ննջեաց․ և Սաւղոս էր կամակից սպանման
նորա ։

ՏԵՍԻԼ ՊԱՒՂՈՍԻ ՑԵՐԹԱԼՆ Ի ԴԱՄԱՍԿՈՍ

Իսկ Սաւղոս տակաւին լցեալ սպառնալեօք և սպանմամբ (հոշոտումով) *աշակերտացն Տեառն, մատուցեալ առ քահանայապետսն՝ խնդրեաց ի նոցանէ թուղթս ի Դամասկոս առ* ժողովսն (ժողովրդանոց), որպէս (զի) թէ (չէ եթէ) *զոք գտցէ* զայնր ճանապարհաւ (այն ճամբուն հետեւող), *արս և կանայս, կապեալս ածցէ յԵրուսաղէմ։ Եւ* ընդ երթալն նորա՝ *եղեւ մերձենալ ի Դամասկոս* (մօտենալու ատենը), *յանկարծակի* շուրջ զնովաւ փայլատակեաց լոյս (շողշողաց մը լոյս) *յերկնից, և անկեալ յերկիր՝ լուաւ* բարբառ (ձայն) *որ ասէր ցնա, Սաւո՛ւղ, Սաւո՛ւղ,* զի՞ (ինչո՞ւ համար) *հալածես զիս։ Եւ ասէ, Ո՞վ ես, Տէր։ Եւ նա ասէ. Ես եմ Յիսուս զոր դու հալածես. այլ* յոտն կաց (ոտք ելիր) *և մուտ ի քաղաք, և պատմեսցի քեզ զինչ քեզ պարտ իցէ առնել։ Իսկ արքն որ ընդ նմայն երթային՝ կային* անշշունջ (անձայն). *զձայնն միայն լսէին, բայց* տեսանէին ոչինչ (բան մ'ալ չէին տեսներ)։ *Յարեաւ Սաւղոս յերկրէ անտի և աչօք բացօք ոչ զոք տեսանէր. զձեռանէ նորա առեալ մուծին ի Դամասկոս, և էր անդ աւուրս երիս, և ոչ տեսանէր. և ոչ ուտէր, և ոչ ըմպէր։*

Եւ էր ոմն աշակերտ ի Դամասկոս՝ Անանիա անուն։ Ասէ ցնա Տէր ի տեսլեան, Յոտն կաց և գնա ընդ փողոցն որ կոչի Ուղիղ, և խնդրեսցես յապարանս (է տուն) *Յուդայ Սաւղոս անուն զՏարսոնացի զի կայ դեռ յաղօթս։ Եւ (Պաւղոս) ետես ի տեսլեան այր մի Անանիա անուն,* մտեալ եւ եդեալ (ու ներսոք ու եղ) *ի վերայ նորա զձեռն, որպէս զի տեսցէ։ Պատասխանի ետ Անանիա, Տէր, լուայ ի բազմաց վասն առնն այնորիկ, ո՛րչափ չարիս արար սրբոց քոց յԵրուսաղէմ. և աստ ունի իշխանութիւն ի քահանայապետից՝ կապել զամենեսեան որ կարդան զանուն քո։ Ասէ ցնա Տէր, Երթ*

դու, զի անօթ ընտրութեան է ինձ նա առ ի կրել զանուն իմ առաջի հեթանոսաց և թագաւորաց և որդւոցն Իսրայելի . քանզի ես իսկ (քէնտի) ցուցի նմա (թէ) որչափ պարտ իցէ նմա չարչարել (կէրէկ) վասն անուան իմոյ : Եւ գնաց Անանիա և եմուտ յապարանսն . և եդեալ ի վերայ նորա ձեռս՝ ասէ, Սաւուղ եղբայր, ի վեր հայեաց . Տէր առաքեաց զիս, Յիսուս որ երեւեցաւն քեզ ի ճանապարհին յորում գայիրն, որպէս զի տեսցես և լցցիս հոգւով սրբով : Եւ վաղվաղակի անկան յաչաց նորա իբրեւ կեղեւանք (յոքնակի կեղեւ բառին) . ետես, և յարեաւ մկրտեցաւ, և առեալ կերակուր՝ զօրացաւ : Եւ եղեւ ի Դամասկոս ընդ աշակերտսն աւուրս ինչ, և վաղվաղակի ի ժողովուրդսն (ի ժողովրդա-նոցին) քարոզեաց զՅիսուս թէ Սա է Որդին Աստուծոյ : Զարմացեալ էին ամենեքեան որ լսէին, և ասէին . Ո՞չ սա էր որ աւարն հարկանէր (տղաքանէր, տնէրէր)՝ յԵրուսաղէմ զայնոսիկ որ կարդային զանուն Յիսուսի, և այսր նմին իրի եկեալ էր, զի կապեալս զսոսա տարցի առ քահանայապետսն : Այլ Սաւղոս առաւել եւս զօրանայր և յաղթահարէր (ծնչէր, նեչէր) զՀրեայսն որ բնակեալ էին ի Դամասկոս, և խելամտեցուցանէր (տատագանէր, հաստնեցագաներ) թէ սա է Քրիստոսն : Իբրեւ կատարէին (ըհնաքն) աւուրք բազումք, խորհեցան Հրեայքն սպանանել զնա : Յայտնեցաւ Սաւղոսի նենգութիւնն նոցա, քանզի պահէին զդրունսն ի տուէ և ի գիշերի, որպէս զի սպանցեն զնա : Եւ առեալ զնա աշակերտացն ի գիշերի՝ ընդ պարիսպն կախեալ իջուցին վանդակաւ (կըլ) : Իբրեւ եկն Սաւղոս յԵրուսաղէմ՝ ընդելանէր (ջանրը, խնդրէր) յարել յաշակերտսն . և ամենեքեան երկնչէին ի նմանէ . չհաւատային թէ իցէ աշակերտ : Բայց Բառնաբայ առեալ զնա ած առ առաքեալսն, և պատմեաց նոցա (թէ) ո՛րպէս ի ճանապարհին ետես զՏէր, և խօսեցաւ (նա) ընդ նմա, և զի ի Դամասկոս

համարձակեցաւ յանուն Յիսուսի։ Եւ էր ընդ նոսա (ի) մտանել և (յ) ելանել յԵրուսաղէմ, համարձակեալ յանուն Տեառն, խօսէր և վիճէր ընդ Յոյնսն, և նոքա խոկային (ետքէն է մտքէ) սպանանել զնա. և իմացեալ եղբարց՝ իջուցին զնա ի Կեսարիա, և առաքեցին զնա ի Տարսոն։

ՊԵՏՐՈՍ ԲԺՇԿԷ ԶԱՆԴԱՄԱԼՈՅԾՆ. ՅԱՐՈՒՑԱՆԷ ԶԱՅԾԵՄՆԻԿՆ

Եւ եղեւ ի շրջելն Պետրոսի առ ամենեքումբք, իջանել նմա (գէ էջնա) առ սուրբսն որ բնակեալ էին ի Լիւդիա, և եգիտ անդ այր մի որում անուն էր Ենեա, ութեմեան (յութ ամաց հետէ) դներ ի մահիճս (անկողին ինկած էր) անդամալոյծ։ Եւ ասէ ցնա Պետրոս, Ենեա՛, բժշկէ զքեզ Տէր, արի և քեզէն (անձամբ) թօթափեա (ցրուէ, փարածէ) զանկողինս քո։ Եւ վաղվաղակի յարեաւ։ Եւ տեսին զնա ամենեքեան որ բնակեալ էին ի Լիդիա և ի Սարոնիա, որք և դարձան իսկ ի Տէր։ Եւ ի Յոպպէ էր կին մի աշակերտեալ, անուն Տաբիթա, որ անուանեալ կոչի Այծեմնիկ։ Սա լի էր գործովք բարեօք և ողորմութեամբք զոր առնէր։ Եւ եղեւ յաւուրսն յայնոսիկ հիւանդանալ նմա և մեռանել. լուացին զնա և եդին ի դստիկոնի անդ (է ստորեւ՝ վերնատան. Յն. բառը կը նշանակէ, երկրորդ յարկ)։ Եւ մերձ էր Լիւդիա ի Յոպպէ. աշակերտացն լուեալ եթէ Պետրոս անդ է, առաքեցին երկուս արս առ նա, աղաչել զի մի դանդաղեսցի գալ առ նոսա։ Եւ յարուցեալ Պետրոս եկն ընդ նոսա, զոր, իբրեւ եկն, հանին ի վերնատունն, և կացին շուրջ զնովաւ այրիքն ամենայն. լային և ցուցանէին զձորձս (լաթ, մանաւանդ ներքին հանդերձ) և զհանդերձս որչափ առնէր նոցա Այծեմնիկն։ Եւ հանեալ արտաքս զամենեսեան Պետրոսի՝ եդ ծունր, ե-

կաց յաղօթս, և դարձաւ ի մարմինն և ասէ, Տաբիթա, արի կաց (ել կայնէ) յանուն Տեառն Յիսուսի Քրիստոսի ։ Եւ նա եբաց զաչս իւր, և տեսեալ զՊետրոս՝ նստաւ կանգուն (կանգնած, շիտակ), ձեռն ետ նմա և յարոյց զնա · կոչեաց զսուրբսն և զայրիսն, առաջի կացոյց (ներկայացուց) զնա կենդանի ։ Եւ յայտնի եղեւ ընդ ամենայն Յոպպէ, և հաւատացին բազումք ի Տէր ։ Եւ եղեւ աւուրս բազումս լինել նմա ի Յոպպէ առ ումեմն Սիմոնի խաղախորդի ։

ԴԱՐՁ ԿՈՌՆԵԼԵԱՑ Ի ՁԵՌՆ ՊԵՏՐՈՍԻ

Այր մի էր ի Կեսարիա, անուն Կոռնելիոս · հարիւրապետ, ի գնդէն որ կոչէր Իտալացի · բարեպաշտօն և երկիւղած (վախցող) յԱստուծոյ ամենայն տամբ իւրով · առնէր ողորմութիւնս բազումս ի ժողովրդեանն, և յաղօթս կայր առ Աստուած յամենայն ժամ ։ Նտես ի տեսլեան՝ յայտնապէս զիններորդ ժամու աւուրն (ժամը եբրե իննին) զհրեշտակ Աստուծոյ զի մտանէր առ նա և ասէր ցնա · Կոռնելիէ · և նա հայեցեալ ընդ նա՝ զարհուրեցաւ, և ասէ · Զի՞ է, Տէր ։ Եւ ասէ ցնա, Աղօթք քո և ողորմութիւնք քո ելին յիշատակաւ առաջի Աստուծոյ. և արդ յղեա արս ի Յոպպէ և կոչեա զՍիմոն զոմն որ կոչի Պետրոս · նա մտեալ է (հիւր է) առ Սիմոնի ումեմն խաղախորդի, որոյ է տունն մերձ ի ծով ։ Եւ իբրեւ դնաց հրեշտակն որ խօսէր ընդ նմա, կոչեաց երկուս ի ծառայիցն և զինուոր մի բարեպաշտօն ի սպասաւորացն իւրոց, և պատմեալ նոցա զամենայն՝ առաքեաց զնոսա ի Յոպպէ ։ Եւ ի վաղիւ անդր ի ճանապարհ անկանել նոցա և մօտ ի քաղաքն լինել (յանկանել նոցա ի ճանապարհ և ի լինել մօտ ի քաղաքն), ել Պետրոս ի տանիսն կալ յաղօթս զվեցերորդ ժամուն · քաղցեաւ և կամէր ճաշակել ։ Եւ ի պատրաս-

տեսլն նոցա՝ եղեւ ի վերայ նորա զարմացումն *(յուխշլու-կութիւն)*. *և տեսանէ զերկինս բացեալ, և զչորեցունց* տանոց *(ծայր) կախեալ անօթ ինչ իբրեւ* կտաւոյ մեծի *(կտաւ մէծ) իջեալ նստեալ ի վերայ երկրի. յորում էին ամենայն չորքոտանիք և սողունք երկրի և ամենայն թռչունք երկնից. և եղեւ ձայն առ նա յերկնից, Ա-րի, Պետրոս, զե՛ն և կեր: Եւ Պետրոս ասէ.* Քաւ լիցի *(օլմասըն)*, *Տէր, զի ոչ երբէք կերայ* խառնակ *(հա-րամ, մուրտար, պիղծ) ինչ և անսուրբ: Ձայն եղեւ առ նա կրկին անգամ. Զոր Աստուած սրբեաց՝ դու մի պըղ-ծեր: Այս եղեւ երիցս, և վերացաւ անօթն յերկինս: Եւ մինչդեռ զարմացեալ էր ընդ միտս Պետրոս թէ զի՞նչ իցէ տեսիլն զոր ետես, ահա արքն առաքեալք ի Կոռնելեայ հարցին զապարանիցն Սիմոնի, կացին առ դրանն, կոչեցին և հարցանէին, եթէ Սիմոն որ կոչի Պետրոս՝ ա՞ստ մտեալ իցէ: Եւ մինչդեռ Պետրոս զմտաւ ածէր վասն տեսլեանն, ասէ Հոգին ցնա. Ահաւասիկ, արք ոմանք խնդրեն զքեզ. այլ արի էջ, և երթ ընդ նոսա* առանց իրիք խղճելոյ *(առանց խըղճութիւն ընելու)*, *զի ես առաքեցի զնոսա: Եւ իբրեւ էջ Պետրոս առ նո-սա, ասէ. Ահաւասիկ ես եմ զոր խնդրէքն.* զի՞նչ իրք են *(ի՞նչ է պատճառը) վասն որոյ եկիքդ: Եւ նոքա ասեն. Կոռնելիոս հարիւրապետ, այր արդար և երկիւղած յԱստուծոյ, վկայեալ յամենայն ազգէն Հրէից,* հրա-ման *(պատգամ) առեալ ի հրեշտակէ սրբոյ կոչէ զքեզ ի տուն իւր լսել բանս ի քէն: Կոչեաց զնոսա ի ներքս և* առ իւր ագոյց *(հիւրընկալեց)*: *Եւ ի վաղիւ անդր յա-րուցեալ Պետրոս գնաց ընդ նոսա. և ոմանք յեղբարց անտի որ ի Յոպպէ էին՝ եկին ընդ նմա: Եւ ի վաղիւ անդր մտին ի Կեսարիա, և Կոռնելիոս* մնայր *(սպասեր) նոցա, կոչեցեալ* զազգատոհմն իւր *(ազգականներն իր) և զկարեւոր բարեկամսն: Եւ եղեւ ի մտանելն Պետրոսի՝ ընդ առաջ եղեւ նմա Կոռնելիոս, անկեալ առ ոտսն*

նորա երկիր պագանէր։ Եւ Պետրոս կանգնեաց (Վերցուց, ոտքի վրայ կեցուց) զնա և ասէ. Յոտն կաց, և ես ինքն մարդ եմ, և խօսելով ընդ նմա եմուտ ի ներքս, և գտանէր անդ ժողովեալ զբազումս։ Եւ ասէ ցնոսա. Դուք ինքնին գիտէք (Թէ) ո՛րպէս անմարթ (ապօրինաւոր) է առն Հրէի հպել (յարել) և մերձենալ առ այլազգի (օտար). և ինձ Աստուած եցոյց մի՛ զոք խառնակ կամ անսուրբ ասել ի մարդկանէ։ Վասն այսորիկ և առանց ընդ բանս ինչ ածելոյ (առանց ընդդիմաբանելու) եկի կոչեցեալ. բայց արդ հարցանեմ, յի՞նչ պէտս (ի՞նչու համար) կոչեցէք զիս։ Եւ Կոռնելիոս ասէ, Յառաջ քան զչորս աւուրս մինչ ցայս ժամ կայի յաղօթս յինն ժամն ի տան իմում, և ահա այր մի եկն եկաց առաջի իմ ի հանդերձս սպիտակս և ասէ. Կոռնելիէ, լսելի եղեն աղօթք քո, և ողորմութիւնք քո յիշատակեցան առաջի Աստուծոյ։ Եւ արդ յղեա առս ի Յոպպէ, և կոչեա զՍիմոն որ կոչեցեալն է Պետրոս. սա մտեալ է ի տան Սիմոնի ուրումն խաղախորդի մերձ ի ծով. որ եկեսցէ և խօսեսցի ընդ քեզ։ Եւ ես իսկ և իսկ յղեցի առ քեզ. դու բարւոք արարեր զի եկիր. արդ ամենեքեան մեք առաջի Աստուծոյ կամք, լսել զամենայն որ հրամայեալ է քեզ ի Տեառնէ։ Եբաց Պետրոս զբերան իւր և ասէ. Ճշմարտութեամբ հասեալ եմ (կը հասկնամ) զի ոչ գոյ ակնառութիւն (աչառութիւն) առաջի Աստուծոյ, այլ առ ամենայն ազգս որ երկնչին ի նմանէ և գործէ զարդարութիւն՝ ընդունելի է նմա։ Զբանն առաքեաց (Աստուած) որդւոցն Իսրայելի՝ աւետարանել զխաղաղութիւն ի ձեռն Յիսուսի Քրիստոսի. սա է ամենայնի տէր։ Դուք ինքնին գիտէք զբանն որ եղեւ ընդ ամենայն Հրէաստան սկսեալ ի Գալիլեէ, յետ մկրտութեանն զոր քարոզեաց Յովհաննէս, զՅիսուս որ ի Նազարեթէ, զոր օծ Աստուած հոգւով սրբով և զօրութեամբ. որ շրջեցաւ բարի առնել և բժշկել զա-

մենայն ըմբռնեալսն ի սատանայէ. զի Աստուած էր ընդ նմա: Եւ մեք վկայեմք ամենայնի զոր արար յերկրին Հրէաստանի և յԵրուսաղէմ. զոր և սպանին կախեալ զփայտէ. զնա Աստուած յարոյց յերրորդ աւուր, և ետ նմա յայտնի լինել ո՛չ ամենայն ժողովրդեանն, այլ մեզ վկայից յառաջագոյն ընտրելոցս յԱստուծոյ, որք և կերաք և արբաք ընդ նմա յետ յարութեան նորա ի մեռելոց. Եւ պատուիրեաց մեզ քարոզել ժողովրդեանն և վկայութիւն դնել (վկայել) թէ նա է սահմանեալն յԱստուծոյ դատաւոր կենդանեաց և մեռելոց: Նմա ամենայն մարգարէքն վկայեն. թողութիւն մեղաց առնուլ անուամբ նորա ամենայն հաւատացելոց ի նա: Եւ մինչդեռ խօսէր Պետրոս զբանս զայս, հանգեաւ (ինկաւ, նստաւ) Հոգին սուրբ ի վերայ ամենեցուն որ լսէին զբանն: Զարմացան որք ի թլփատութենէ անտի հաւատացեալք եկեալ էին ընդ Պետրոսի, զի և ի հեթանոսս պարգեւք հոգւոյն սրբոյ զեղուին (կը թափուէին). քանզի լսէին ի նոցանէ խօսել լեզուս և մեծացուցանել զԱստուած: Յայնժամ պատասխանի ետ Պետրոս և ասէ. Միթէ զջո՞ւրն ոք արգելուլ կարէ առ ի չմկրտելոյ զսոսա, որք զՀոգին սուրբ ընկալան որպէս և մեք: Եւ հրամայեաց նոցա մկրտել յանուն Յիսուսի Քրիստոսի: Յայնժամ աղաչեցին զնա լինել անդ աւուրս ինչ:

ՊԵՏՐՈՍ ԱՐԿԱՆԻ Ի ԲԱՆՏ, ԵՒ ԱԶԱՏԻ ՍՔԱՆՉԵԼԵՕՔ

Ընդ ժամանակսն ընդ այնոսիկ արկ Հերովդէս արքայ ձեռն չարչարել զոմանս յեկեղեցւոյն. և սպան զՅակոբոս զեղբայրն Յովհաննու սրով. և տեսեալ եթէ հաճոյ է Հրէիցն՝ յաւել եւս ունել զՊետրոս, և էին աւուրք բաղարջակերաց. զոր իբրեւ կալաւ, եդ ի բանտի, և մատնեաց չորից չորրորդաց զինուորաց պա-

հել զնա, և կամէր-յետ զատկին ածել զնա ժողովրդեանն: Եւ Պետրոս ի պահեստի էր (կը պահուէր) ի բանտին. և աղօթք ստէպ լինէին յեկեղեցւոյն վասն նորա առ Աստուած: Իբրև կամեցաւ ածել զնա Հերովդէս, ի գիշերին յայնմիկ էր Պետրոս ի քուն ի մէջ երկուց զինուորաց՝ կապեալ կրկին շղթայիւք, և պահապանքն առաջի դրանն պահէին զբանտն: Եւ ահա հրեշտակ Տեառն եկն եկաց ի վերայ, և լոյս ծագեաց ի տանն. և խթեաց զկողն Պետրոսի, յարոյց զնա և ասէ. Արի վաղվաղակի. և անկան շղթայքն ի ձեռաց նորա: Եւ ասէ ցնա հրեշտակն, Ած (կապէ, պատէ) զգօտի քո, և արկ զհողաթափս յոտս քո. և արար այնպէս. և ասէ ցնա, Արկ զձորձս քո (լաթերդ հագիր), և եկ զկնի իմ: Եւ ելեալ երթայր զհետ, և ոչ գիտէր եթէ ճշմարիտ իցէ որ ինչ եղեւն ի հրեշտակէն, զի համարէր երազ տեսանել: Եւ իբրև անցին նոքա ըստ մի պահ (պահապան զինուոր) և ըստ երկուս, եկին մինչև ի դուռնն երկաթի որ հանէր ի քաղաքն, որ և ինքնին բացաւ նոցա, և մտեալ անցին ընդ փողոց մի, և վաղվաղակի ի բաց եկաց ի նմանէ հրեշտակն: Եւ Պետրոս իբրև ի միտս եղեւ (ինք իրեն եկաւ), ասէ. Արդ գիտեմ ճշմարիտ եթէ առաքեաց Տէր զհրեշտակ իւր, և փրկեաց զիս ի ձեռաց Հերովդի և յամենայն ակնկալութենէ ժողովրդեանն Հրէից: Եւ լեալ ի միտս (ինքնիրեն խորհելով)՝ եկն ի տուն Մարեմու, մօր Յովհաննու որ կոչեցաւն Մարկոս. անդ էին բազումք ժողովեալ և աղօթս առնէին: Ի բախել նորա զդուրս տանն, մատեաւ աղախին մի ունկն դնել, որում անուն էր Հռովդէ. և ծանուցեալ զձայնն Պետրոսի՝ ի խնդալոյն ոչ եբաց զդուռն. ի ներքս ընթացեալ պատմեաց, եթէ Պետրոս առ դրանն կայ: Նոքա ասեն ցնա, Մոլիս. և նա եւս պնդէր թէ այդպէս է. և նոքա ասէին Հրեշտակ նորա իցէ: Եւ Պետրոս ստէպ բախէր. իբրև բացին, տեսին զնա և

զարմացան . և նա ձեռամբ ցուցանէր նոցա լռել . և պատմեաց (թէ) որպէս Տէր եհան զնա ի բանտէն . և ասէ , Պատմեցէք Յակոբայ և եղբարց զայս . և ելեալ գնաց յայլ տեղի ։ Եւ իբրև եղև այգ , էր խռովութիւն մեծ ի մէջ զինուորացն թէ զի՛ արդեօք Պետրոսն եղև ։ Իսկ Հերովդէս իբրև խնդրեաց զնա և ոչ եգիտ , հարցեալ զպահապանսն՝ հրամայեաց սպանանել , և իջեալ ի Հրէաստանէ ի Կեսարիա՝ անդ լինէր ։

Եւ էր Հերովդէս ցասմամբ ընդ Տիւրացիս և ընդ Սիդոնացիս . և նոքա առհասարակ եկին առ նա , և ի բանի արարեալ (շահել չէր կուզէ) զԲղաստոս սենեկապետ արքայի , խնդրէին զխաղաղութիւն վասն կերակրելոյ երկրին նոցա յարքունուստ ։ Յաւուր միում յերևելւոջ՝ Հերովդէս զգեցեալ էր զհանդերձ թագաւորութեան , և նստէր յատենի (ժամ) , և խօսէր ընդ նոսա հրապարակաւ (հրապարակախօս լինէր) , և ամբոխն աղաղակէր թէ Աստուծոյ բարբառ է և ոչ մարդոյ ։ Եւ անդէն եհար զնա հրեշտակ Տեառն , փոխանակ զի ոչ ետ փառս Աստուծոյ , և եղեալ որդնալից՝ սատակեցաւ ։

ԾՂԻՄԱՍ ՄՈԳ ՊԱՏԺԻ

Էին ոմանք յԱնտիոք ըստ եկեղեցւոյն (եկեղեցւոյն համար , եկեղեցին) մարգարէք և վարդապետք , Բառնաբաս և Շմաւոն կոչեցեալն Նիգէր , և Ղուկիոս Կիւրենացի և Մանայեն դայեկորդի Հերովդի չորրորդապետի , և Սաւղոս ։ Մինչդեռ ի պաշտաման Տեառն կային և պահէին (պահէ , ծոմ պահել) , ասէ Հոգին սուրբ . Որոշեցէք (զատեցէք) ինձ զԲառնաբաս և զՍաւղոս ի գործ յոր կոչեցեալ է իմ զդոսա ։ Յայնժամ պահեալ և աղօթս արարեալ՝ եդին ձեռն ի վերայ նոցա և արձակեցին ։ Եւ նոքա առաքեալք ի Հոգւոյն սրբոյ իջին ի Սե-

չեւկիա, և անտի նաւեցին ի Կիպրոս․ և հասեալ ի Սաղամինա՝ պատմէին զբանն Աստուծոյ ի ժողովուրդս Հրէից․ ունէին և զՅովհաննէս պաշտօնեայ։ Շրջեալ ընդ ամենայն կղզին մինչեւ ի Պափոս, գտին անդ այր զոմն մոգ, սուտ մարգարէ հրեայ, որում անուն էր Բարեյեսու, որ էր ընդ փոխանակի բդեշխին (անթիպհի–պատոս) Սերգեայ Պաւղոսի առն իմաստնոյ․ նորա աղաչեալ զԲառնաբաս և զՍաւղոս՝ խնդրէր լսել զբանն Աստուծոյ։ Ընդդէմ եկաց նոցա Եղիմաս մոգ, քանզի այսպէս թարգմանի անուն նորա, և խնդրէր շրջել (տարջանել) զփոխանակ բդեշխին ի հաւատոց։ Իսկ Սաւղոս, որ և Պաւղոսն, լցեալ Հոգւով սրբով հայեցաւ ի նա և ասէ, Ո՛վ լի ամենայն նենգութեամբ և խորամանկութեամբ, որդի սատանայի, թշնամի ամենայն արդարութեան, ո՞չ լռես ի թիւրելոյ զճանապարհս Տեառն զուղիղս․ և արդ՝ ահա ձեռն Տեառն ի վերայ քո, և եղիցիս կոյր՝ չտեսանել զարեւ մինչեւ ի ժամանակ մի։ Եւ անդէն անկաւ ի վերայ նորա մէգ և խաւար, և շրջէր խնդրէր առաջնորդս։ Յայնժամ տեսեալ փոխանակի բդեշխին զիրսն որ եղեն՝ հաւատաց, զարմացեալ ընդ վարդապետութիւնն Տեառն։ Եւ ամբարձեալ ի Պափէ Պաւղոսեանց՝ եկին ի Պերգէ Պամփիւլեայ։ Յովհաննէս մեկնեալ ի նոցանէ դարձաւ յԵրուսաղէմ․ և նոքա գնացեալ ի Պերգեայ՝ եկին յԱնտիոք Պիսիդեայ, մտեալ ի ժողովուրդն (սինաոն) յաւուր շաբաթու նստան։ Եւ յետ ընթեռնլոյ զօրէնս և զմարգարէս, առաքեցին առ նոսա ժողովրդապետքն և ասեն, Արք եղբարք, եթէ իցեն ի ձեզ բանք մխիթարութեան առ ժողովուրդդ՝ խօսեցարուք։

ԲԺՇԿԻ ԿԱՂՆ ՅՈՐՈՎԱՅՆԷ . ՊԱՒՂՈՍ ՔԱՐԿՈԾԻ

Եւ եղեւ յԻկոնիոն ի միասին մտանել նոցա ի ժողովուրդ Հրէիցն, և խօսել նոյնպէս, մինչեւ հաւանել (համոզուել) Հրէից և Յունաց բազմաց յոյժ։ Բայց անհաւան (չհամոզուող, յամառ) Հրեայքն յարուցին (ոտքի հանել) և չարացուցին զանձինս հեթանոսացն ի վերայ եղբարց։ Բազում ժամանակս շրջէին, համարձակեալք Տեառն վկայութեամբ, բանիւ շնորհաց իւրոց, և տալ նշանս և արուեստս որ լինէին ի ձեռս նոցա։ Եւ եղեն հերձուածք բազմութեան քաղաքին. ոմանք (յարեցան) ի Հրեայսն, և ոմանք՝ յառաքեալսն։ Իբրեւ եղեւ դիմել հեթանոսացն և Հրէից իշխանօքն իւրեանց ի թշնամանել և ի քարկոծել զնոսա, ազդ եղեալ նոցա (իմանալով) փախեան ի քաղաքսն Լիկայոնացւոց, ի Լիւստրա և ի Դերբէ և շուրջ զգաւառաւն, և անդ աւետարանէին։ Եւ այր ոմն Լիւստրացի, տկար յոտից, նստէր, կաղ յորովայնէ մօր իւրոյ, որոյ երբէք չէր գնացեալ (քալած չէր)։ Սա լուաւ զխօսսն Պաւղոսի, որոյ հայեցեալ ի նա և տեսեալ թէ ունի հաւատս փրկութեան, ասէ մեծաձայն. Քեզ ասեմ յանուն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, յոտն կաց (ելիր) ի վերայ ոտից քոց ուղիղ. և (նա) վազվազէր (կը ցատկըտէր) և գնայր։ Եւ ժողովրդոցն տեսեալ զոր արարն Պաւղոս՝ բարձին զձայնս իւրեանց Լիկայոնարէն և ասեն, աստուածք նմանեալ մարդկան իջին առ մեզ. և կոչէին զԲառնաբաս Դիոս, և զՊաւղոս՝ Հերմէս, քանզի նա էր առաջնորդ բանին։ Եւ քուրմն Դիայ որ կայր առաջի քաղաքին, ցուլս և պսակս հասուցեալ ի դուռն հանդերձ բազմութեամբքն՝ կամէր զոհել։ Եւ լուեալ առաքելոցն Բառնաբայ և Պաւղոսի, պատառեալ զհանդերձս իւրեանց՝ արտաքս վազեցին յամբոխէն, աղա-

զակէին և ասէին , Արք , զի՞նչ գործէք զայդ · մեք ձեզ Նմանողք կարեօք (ὁμοιοπαθεῖς) մարդիկ եմք · աւետարանել (εὐαγγελιζόμενοι) ձեզ յայդպիսի ունայնութեանց դառնալ յԱստուած կենդանի որ արար զերկինս և զերկիր , և զծով և զամենայն որ ի նոսա · որ յանցեալ ազգսն (ἔθνη) թոյլ ետ ամենայն հեթանոսաց գնալ ի ճանապարհս իւրեանց · և սակայն ոչ եթէ առանց վկայութեան զինքն եթող , բարերարութեամբն տալ (διδούς) յերկնից ձեզ անձրեւս և ժամանակս պտղաբերս , լնուլ կերակրովք և ուրախութեամբ զսիրտս ձեր ։ Եւ զայս ասացեալ հազիւ լռեցուցանէին զժողովուրդսն ի չզոհելոյ նոցա , այլ գնալ յիւրաքանչիւր տեղիս ։

Եւ ի շրջելն նոցա և յուսուցանել՝ եկին հասին յԱնտիոքէ և յԻկոնիոնէ Հրեայք · և ի վիճել նոցա համարձակութեամբ , պատրեցին զժողովուրդսն ի բաց կալ ի նոցանէ , և ասէին թէ Ոչինչ ճշմարտութիւն ասեն , այլ զամենայն ստեն · և քարկոծեալ զՊաւղոս քարշեցին արտաքս քան զքաղաքն , և համարէին զնա՝ մեռեալ ։ Եւ ի պատել զնովաւ (κυκλωσάντων αὐτὸν) աշակերտացն , յարեաւ եմուտ ի քաղաքն · և ի վաղիւ անդր ել Բառնաբաւ հանդերձ ի Դերբէ ։ Աւետարանեալ ի քաղաքին յայնմիկ և աշակերտեալ զբազումս , դարձան ի Լիւստրա և յԻկոնիոն և յԱնտիոքիա · հաստատեալ զանձինս աշակերտելոցն և մխիթարեալ , կալ հաստատուն ի հաւատսն , և թէ՝ բազում նեղութեամբ պարտ է մեզ մտանել յարքայութիւն Աստուծոյ։ Ձեռնադրեցին նոցա ըստ եկեղեցեաց երիցունս · աղօթս արարեալ հանդերձ պահովք , յանձն արարին զնոսա Տեառն յոր հաւատացեալ էին ։ Եւ շրջեալ ընդ Պիսիդա՝ եկին ի Պամփիւլիա , և խօսեցեալ ի Պերգէ զբանն Տեառն , իջին յԱտալիա , և անտի նաւարկեալ գնացին յԱնտիոք ուստի էին , յանձն արարեալ շնորհացն Աստուծոյ ի

գործն զոր կատարեցին ։ Եւ եկեալ ժողովեալ զեկեղեցին՝ պատմեցին որչափ արար Աստուած ընդ նոսա, և զի եբաց հեթանոսաց դուռն հաւատոց ․ չրջեցան ժամանակս ոչ սակաւս ընդ աշակերտսն ։

ԱՂԱԽԻՆՆ ՈՐ ՈՒՆԷՐ ԱՅՍ ՀԱՐՑՈՒԿ․ ԽՌՈՎՈՒԹԻՒՆ ՎԱՍՆ ՆՈՐԱ․ ԴԱՐՁ ԲԱՆՏԱՊԵՏԻՆ

Եկն եհաս (Պաւղոս) ի Դերբէ և ի Լիւստրա ․ և ահա աշակերտ ոմն էր անուն Տիմոթէոս, որդի կնոջ Հրէի հաւատացելոյ և հօր հեթանոսի, վկայեալ ի Լիւստրացւոց և յիկոնացւոց եղբարց ։ Զսա կամեցաւ Պաւղոս ընդ իւր տանել . . . ։ Իբրեւ անցանէին ընդ քաղաքսն, աւանդեցին նոցա պահել զհրամանսն պատուիրեալս յառաքելոցն և յերիցանցն որք յԵրուսաղէմ։ Եւ եկեղեցիքն հաստատէին ի հաւատս, և յաւելուին ի թիւն հանապազօր ի նոյն ։ Եւ չրջեցան ընդ Փռիւգիա և ընդ կողմանս Գաղատացւոց, արգելեալք ի Հոգւոյն սրբոյ խօսել զբանն յԱսիա ․ բայց եկեալ առ Միւսեաւ՝ թեւակոխեին (փորձել, ջանալ) երթալ ի Բիւթանիա, և ոչ համարձակեաց նոցա հոգին Քրիստոսի ։ Եւ անցեալ ըստ Միւսիա՝ իջին ի Տրովադա, և տեսիլ երեւեցաւ ի գիշերին Պաւղոսի ․ այր ոմն Մակեդոնացի կայր աղաչէր զնա և ասէր, Անցեալ ի Մակեդոնիա՝ օգնեսցես մեզ ։ Եւ իբրեւ զտեսիլն ետես, վաղվաղակի խնդրեցաք ելանել ի Մակեդոնիա, տեղեկացեալ թէ հրաւիրեաց զմեզ Տէր աւետարանել նոցա ։ Եւ ելեալ ի Տրովադայ՝ դեպ ուղիղ (շիտակ) գնացաք ի Սամոթրակէ, և ի վաղիւ անդր՝ ի Նոր քաղաք, և անտի՝ ի Փիլիպպուս որ է առաջին վիճակ (բաժին) Մակեդոնացւոց՝ քաղաք Կողոնիա ։ Եւ անդ ի քաղաքին դադարեալ մեր աւուրս ինչ, յաւուր չաբաթու ելաք արտաքոյ քաղա-

քին առ գետափինն ուր համարէին աղօթս մատուցանել Պաւղոսիւ, և նստեալ խօսէաք ընդ ժողովեալ կանայսն։ Եւ կին ոմն անուն Լիդիա ծիրանավաճառ ի Թիւատիր քաղաքէ, երկիւղած յԱստուծոյ, լսւաւ. զորոյ Տէր խսկ եբաց զսիրտն անսալ խօսիցն Պաւղոսի։ Եւ իբրեւ մկրտեցաւ ինքն և տուն իւր, աղաչէր և ասէր, Եթէ համարիք զիս հաւատացեալ Տեառն, մտեալ ի տուն իմ ագերուք. և բռնադատեաց տարաւ զմեզ։ Եւ եղեւ մինչդեռ երթայաք մեք յաղօթս, պատահեաց մեզ աղախին ոմն զոր ունէր այս հարցուկ (դեւ գուշակախօս) որ շահս բազումս տայր տերանց իւրոց մոլեցովն (ըղ-յանիմն ընել, մոլեգարեանալ քէրել- դիւահար)։ Նա զհետ եղեալ Պաւղոսի և մեր՝ աղաղակէր և ասէր, Արքս այս ծառայք Աստուծոյ բարձրելոյ են, որ պատմեն ձեզ զճանապարհս փրկութեան. և զայս առնէր ի բազում աւուրս։ Ձայրացեալ Պաւղոս՝ դարձաւ և ասէ ցայսն. Պատուիրեմ քեզ յանուն Յիսուսի Քրիստոսի ելանել ի դմանէ. և ել այսն ի նմին ժամու։ Իբրեւ տեսին տեարք նորա եթէ հաստաւ (ճնոց, լինցան) յոյս շահի նոցա, առեալ զՊաւղոս և զՇիղա ձգեցին ի հրապարակն առ իշխանսն, և ածեալ զնոսա առ զօրագլուխսն՝ ասեն. Արքս այս խռովեցուցանեն զքաղաքս մեր. ինքեանք Հրեայք են, և պատմեն մեզ օրէնս զոր չէ արժան մեզ ընդունել և ոչ առնել. զի Հռոմայեցիք եմք. և կուտեցաւ ամբոխն ի վերայ նոցա։ Եւ զօրագլուխքն պատառեցին զհանդերձս իւրեանց, և հրամայեցին գան հարկանել, և բազում վէրս եդեալ ի վերայ նոցա՝ արկին ի բանտ, պատուիրեցին բանտապետին զգուշութեամբ պահել զնոսա։ Որոյ առեալ զայսպիսի պատուէր՝ արկ զնոսա ի ներքին բանտն, զոտս նոցա պնդեաց ի կոճեղ։ Ի մէջ գիշերոյն Պաւղոս և Շիղա կային յաղօթս և օրհնէին զԱստուած. ունկն դնէին նոցա կալանաւորքն (կապեալք)։ Եւ եղեւ յան-

կարծակի շարժումն մեծ, մինչեւ շարժել հիմանց բանտին, և բացան անդրէն դրունքն ամենայն, և ամենեցուն կապանքն լուծան: Իբրեւ զարթեաւ բանտապետն և ետես բացեալ զդուրս բանտին, ձգեաց զսուսեր և կամէր երբալ զիւրովին *(սպանանել զանձն), կարծէր փախուցեալ զկապեալսն: Եւ կոչեցեալ ի ձայն մեծ Պաւղոս ասէ. Մի՛ ինչ գործեր ընդ անձն քո չար, քանզի ամենեքին աստ եմք: Խնդրեաց լոյս և դիմեաց ի ներքս, և զահի հարեալ անկաւ առաջի Պաւղոսի և Շիղայի. ածեալ զնոսա արտաքս՝ ասէ. Տեարք, զի՞նչ պարտ է ինձ առնել զի ապրեցայց: Եւ նոքա ասեն, Հաւատա ի Տէր Յիսուս Քրիստոս, և ապրեսցիս դու և ամենայն տուն քո: Եւ խօսեցան նմա զբանն Տեառն, և ամենեցուն որ էին ի տան նորա: Եւ առեալ զնոսա ի նմին ժամու գիշերոյն՝ լուաց ի վիրաց անտի, և մկրտեցաւ ինքն և իւրքն ամենեքեան անդէն վաղվաղակի, և ածեալ զնոսա ի տուն իւր, եդ առաջի նոցա սեղան, և ուրախ եղեւ ամենայն տամբն հաւատացեալ յԱստուած: Եւ իբրեւ այգ եղեւ, առաքեցին զօրագլուխքն* զՆուիրակսն *(վերակացուք, հսկողս), և ասեն, Արձակեա զարսդ զայդոսիկ: Եւ պատմեաց բանտապետն Պաւղոսի, եթէ առաքեցին զօրագլուխքն զի արձակիցիք. արդ ելէք և երթայք խաղաղութեամբ: Իսկ Պաւղոս ասէ ցնոսա. Գան հարեալ զմեզ հրապարակաւ, արս անմեղս հռոմայեցիս, արկին ի բանտ, և արդ* լռելեա՞յն *(չ ծածուկ) հանեն զմեզ. ոչ այդպէս, այլ եկեսցեն ինքեանք իսկ հանցեն զմեզ: Եւ պատմեցին զօրագլխացն Նուիրակքն զբանսն. և եկեալ աղաչեցին զնոսա. և իբրեւ հանին, աղաչեցին գնալ ի քաղաքէն: Եւ ելեալ ի բանտէն մտին ի Լիւդիա, և տեսեալ զեղբարս՝ մխիթարեցին զնոսա և գնացին:*

ՊԱՒՂՈՍ ԵՐԹԱՑ Ի ԹԵՍԱՂՈՆԻԿԷ

Շրջեալ ընդ Ամփիպոլիս և ընդ Ապողոնիա, եկին ի Թեսաղոնիկէ, ուր էր ժողովուրդ Հրէից։ Եւ ըստ սովորութեանն Պաւղոս եմուտ առ նոսա, և ի շաբաթս երիս խօսեցաւ ընդ նոսա ի գրոց։ Բանայր և դնէր առաջի (ապացուցանել) եթէ պարտ էր Քրիստոսի չարչարել և յառնել ի մեռելոց, և թէ նա է Քրիստոսն Յիսուս զոր ես պատմեմ ձեզ։ Եւ ոմանք ի նոցանէ հաւանեցան, և վիճակեցան (յարեցան) Պաւղոսի և Շիղայի․ բայց պաշտօնէից հեթանոսաց էր բազմութիւն յոյժ, և ի կանանց գլխաւորաց ոչ սակաւք։ Եւ նախանձեցան Հրեայքն, և առեալ արս ոմանս գռեհիկս (ռաֆիկ, խասմաղանճ) անօրէնս, ամբոխ արարեալ խռովեցին զքաղաքն, և կուտեալ առ ապարանսն Յասովնի, խնդրէին զնոսա ածել ի հրապարակ․ և իբրև ոչ գտին զնոսա, քարշէին զՅասոն և զոմանս եղբարս առ քաղաքապետսն, բողոք բարձեալ (գոչելով) թէ որք զաշխարհս խռովեցուցին՝ սոքա և այսր հասին․ զորս ընկալեալ է Յասոնի․ և սոքա ամենեքեան հակառակ հրամանացն կայսեր գործեն, թագաւոր զոմն ասեն զՅիսուս։ Եւ խռովեցուցին զժողովսն և զքաղաքապետսն որ լսէին զայն․ և առեալ երաշխաւորութիւն առ ի Յասովնայ և յայլոցն՝ արձակեցին զնոսա։ Բայց եղբարք վաղվաղակի գիշերայն յուղարկեցին (ղրկել, ճամբայ դնել) զՊաւղոս և զՇիղա ի Բերիա․ որք իբրև հասին անդր, ի ժողովուրդն Հրէից գնացին, զի սոքա էին ազնուազոյնք քան որ ի Թեսաղոնիկն էին (Թեսաղոնիկէ եղողներէն լաւ)․ որք ընկալան զբանն ամենայն յօժարութեամբ, հանապազ քննէին զգիրս եթէ իցէ այս այսպէս։ Եւ բազումք իսկ ի նոցանէ հաւատացին, և ի Հելլենացւոց կանանց զգաստից և յարանց ոչ սակաւք։

ՊԱՒՂՈՍ ՅԱԹԷՆՍ

Եւ յԱթէնս ի մնալն (սպասել) նոցա Պաւղոսի, զայրանայր հոգի նորա, զի տեսանէր ի կռապաշտութեան զքաղաքն։ Խօսէր ի ժողովրդեանն (ժողովրդանոցին մէջ) ընդ Հրէայսն և ընդ պաշտօնեայսն և ի հրապարակսն զամենայն օր որոց և պատահէին։ Ոմանք յԵպիկուրեանցն և ի Ստոյիկեանց փիլիսոփայից հակառակէին ընդ նմա։ Ոմանք ասէին, Զի՞նչ կամիցի սերմանաքաղս (շատախօս) այս խօսել։ Իսկ այլք թէ՝ օտարոտի (օտար) իմն դից թուի պատմիչ լինել։ Եւ առեալ ածին զնա յԱրիսպագոսն և ասէին, Կարասցո՞ւք իմանալ թէ զինչ է նոր վարդապետութիւնդ որ ի քէն պատմի. օտարացուցիչս (օտարոտոց) իմն բերես ի լսելիս մեր, կամիմք գիտել թէ զինչ կամիցի այս լինել։ Զի Աթենացիք ամենեքին և եկքն օտարք (օտարներ, պանդուխտներ) ոչ յայլ ինչ պարապէին (զբաղէլ, եւ ... ...) բայց ասել ինչ և լսել նորագոյնս։ Եկաց Պաւղոս ի մէջ Արիսպագին և ասէ. Արք Աթենացիք, ըստ ամենայնի (բոլորին) իբրև պաշտօնասէրս (բարեպաշտ) տեսանեմ զձեզ. քանզի շրջեալ և տեսեալ զպաշտամունս ձեր (ձեր կրօնական պաշտօնը) գտի բագին (սեղան կայ) յորում գրեալ էր, Անծանօթի Աստուծոյ։ Զոր դուք յանծանօթս (չճանաչելով) պաշտէք, ես զնոյն պատմեմ ձեզ։ Աստուած որ արար զաշխարհս և զամենայն որ ի նմա, Նա երկնից և երկրի է տէր. ոչ ի ձեռագործ տաճարս բնակէ, և ոչ ի ձեռաց մարդկան պաշտի իբրև կարօտ իմիք։ Նա տայ ամենայնի կեանս և շունչ և զամենայն ինչ. արար ի միոջէ արենէ զամենայն ազգս մարդկան բնակել ի վերայ երեսաց երկրի. հաստատեաց ժամանակս նոցա խնդրել զԱստուած, զի թերևս զննիցեն (գտնել, տեսնել) զնա և գտանիցեն։ Նա և ոչ հեռի իսկ է յիւրաքանչիւր ումեքէ ի մէնջ, զի նովաւ

կեամք և շարժիմք և եմք, որպէս ոմանք ի ձերոց ճարտարաց (բանաստեղծ) ասացին թէ Նորա և ազգ (սերունդ) իսկ եմք։ Եւ արդ, որովհետև ազգ եմք Աստուծոյ, ոչ պարտիմք համարել ոսկւոյ կամ արծաթոյ կամ քարի, որ ի ճարտարութենէ և ի մտաց մարդկան քանդակեալ (փորձել, շինել, կռանով և։), զաստուածականն (աստուածութիւնը) լինել նմանող։ Իբրև լուան զայս ամենայն, ոմանք ծաղր առնէին, կէսքն ասէին, Լուիցուք ի քէն վասն այդորիկ միւսանգամ։ Եւ ապա Պաւղոս ել գնաց ի միջոյ նոցա, և ոմանք արք անկեալք ի նա (անոր յարելով) հաւատացին։ Գործ. ժէ։

ՊԱՒՂՈՍ ԳՆԱՑ Ի ԿՈՐՆԹՈՍ

Յետ այսորիկ մեկնեալ (բաժնուելով) Պաւղոսի յԱթենացւոց անտի եկն ի Կորնթոս, և եգիտ զոմն Հրեայ, անուն Ակիւղաս, յազգէ Պոնտացի, այն ինչ (դեռ նոր) եկեալ յԻտալիայ, և Պրիսկիղա կին նորա ընդ նմա, վասն հրամանին Կղաւդեայ որոշել (աքսորել) զամենայն Հրեայս ի Հռովմայ, և յարեցաւ ի նոսա։ Եւ վասն զի (որովհետեւ) համարուեստ (արուեստակից) էր, եղեւ առ նոսա և գործէր, քանզի էին խորանակարք արուեստիւ։ Իբրև իջին ի Մակեդովնիա Շիղա և Տիմոթէոս, գնաց Պաւղոս անտի և եմուտ ի տուն ուրումն որոյ անուն էր Տիտոս Յուստոս, պաշտօնեայ Աստուծոյ, որոյ ապարանքն (տունը) էին մերձ ի ժողովետղն (ժողովրդանոց), և նստաւ անդ տարի մի և ամիսս վեց։ Առ Գաղիոնաւ փոխանական բդեշխին (անթիպատոս, հիւպատոսի փոխանորդ) Աքայեցւոց, յարեան միաբան Հրեայքն ի վերայ Պաւղոսի և ածէին զնա յատեան և ասէին. Արտաքոյ օրինաց Հրէից պատրէ (կը խաբէ, կը մոլորեցնէ) սա զմարդիկ պաշտել զԱստուած։ Եւ իբրև մերձ էր Պաւղոս բանալ զբերան իւր, ասէ Գաղիովն ցՀրեայսն.

Եթէ էր ինչ անիրաւութիւն կամ խարդախութիւն չարեաց , ով Հրեայք , ի դէպ էր (ուզած էր , նէ կոյլէր) ինձ անսալ ձեզ , ապա թէ խնդիրք ինչ են օրինաց ձերոց , տեսէք ձեզէն (դատ անձամբ) , քանզի դատաւոր այդպիսի իրաց չկամիմ լինել , և մերժեաց զնոսա յատենէ անտի ։ Եւ առեալ Յունաց զՍոսթենէս ժողովրդապետն , հարկանէին առաջի ատենին , և ոչինչ զայնմանէ Գաղիոնի փոյթ լինէր (ամենեւին հոգ չէր ըներ) ։ Բայց Պաւղոսի տակաւին մնացեալ աւուրս բազումս , յեղբարցն հրաժարեալ նաւէր յԱսորիս , և ընդ նմա Պրիսկիղա և Ակիւղաս ։ Իջին յԵփեսոս , և եղեն անդ ժամանակս ինչ ։ Թողեալ զնոսա անդ Պաւղոսի ինքն եւ շրջել կարգաւ ընդ Գաղատացւոց աշխարհն և ընդ Փռիւգիա ։ Հրեայ ոմն Ապողոս անուն , աղեքսանդրացի յազգէ , այր ճարտարաբան (տրամաբան) , եկն եհաս յԵփեսոս ։ Սա զօրաւոր էր գրովք ։ Իբրև լուան ի նմանէ Ակիւղաս և Պրիսկիղա , առին զնա առ իւրեանս . և իբրեւ կամեցաւ նա գնալ յԱքայիա , յօժարեալ եղբարք գրեցին առ աշակերտսն ընդունել զնա ։ Գործ . ժԸ ։

ԽՌՈՎՈՒԹԻՒՆ ԵՓԵՍՈՍ

Իբրև կատարեցաւ այս , եդ Պաւղոս ի մտի (որոշեց) շրջել ի Մակեդոնիա և ընդ Աքայա և գալ յԵրուսաղէմ ։ Ասէր , Յետ երթալոյն իմոյ անդր , պարտ է ինձ (ասէր) և զՀռոմ տեսանել ։ Առաքեաց ի Մակեդոնիա երկուս ի պաշտօնէից իւրոց , զՏիմոթէոս և զԵրաստոս , և ինքն մնաց ժամանակս ինչ յԱսիա ։ Եւ եղեւ ի ժամանակին յայնմիկ խռովութիւն ոչ սակաւ (եփ ոչէկ) վասն ճանապարհին ։ Դեմետրիոս ոմն անուն , արծաթագործ , գործէր մեհեանս (որյան , պատկեր) արծաթիս Արտեմեայ դից (Արտեմիս չաստուածին) , և տայր ճարտարացն (շինողներուն) լինել ոչ սակաւ շահ . որ և ժողովեաց իսկ զձեռագէտս

(արհեստաշ, վէրդիլէր) արուեստին և ասէ․ Արդ, դուք ձեզէն իսկ գիտէք զի յայսմ գործոյ է շահ մեր (Պէր վարտըր)․ և տեսանէք և լսէք եթէ ոչ միայն զԵփեսացւոց, այլ գրեթէ ամենայն իսկ Ասիացւոց Պաւղոս այս համանեցուցեալ շրջեաց (համալէրդի դօլաշդը) բազում ժողովս (ժողովլարը, քալապալըղը), ասել թէ ոչ են աստուածք ձեռագործք։ Զայս իբրև լուան արքն, լի եղեն բարկութեամբ․ աղաղակէին և ասէին, Մեծ է Արտեմիս Եփեսացւոց։ Եւ լցաւ քաղաքն խռովութեամբ։ Դիմեցին առ հասարակ ի թէատրոնն, յափշտակեցին զԳայիոս և զԱրիստարքոս Մակեդոնացի, զուղեկիցսն Պաւղոսի։ Բայց Պաւղոս իբրև կամեցաւ մտանել յամբոխն (քալապալըղը)՝ ոչ թողին զնա աշակերտքն․ ոմանք և յԱսիապետացն որ էին նորա բարեկամք՝ յղէին առ նա (արս) և աղաչէին մի տալ զանձն (չըքմը) ի թէատրոնն։ Այլք այլ ինչ (օպըրը պիրպիրի կէրդ, խօսքշըրըշ) աղաղակէին յամբոխին, զի էր ժողովն նոցա խռովեալ, և բազումք ի նոցանէ ոչ գիտէին թէ վասն որո ժողովեալ իցեն։ Յամբոխին բազմութենէ յառաջ կալան (դըշարը դօւշդիլէր) Հրեայքն զԱղեքսանդրոս․ և իբրև ածին զնա յառաջ, Աղեքսանդրոս շարժեաց զձեռն և կամէր պատասխանի առնել ամբոխին։ Իբրև գիտացին թէ այրն Հրեայ էր, միաբարբառ (պիրսէսլէ) եղեալ ամենեցուն, իբրև ժամս երկուս աղաղակեցին։ Լռեցոյց դպրապետն զամբոխն և ասէ․ Արք Եփեսացիք, ո՞վ է ի մարդկանէ որ ոչ գիտէ զԵփեսացւոց քաղաքս մեհենազարդ մեծին Արտեմեայ դիցն (Արդեմիս չաբադըյըն դաբընըճըսը գըլըրդըղըմըզ)․ և զի այդ այդպէս է անշուշտ (կէրչէք, շիւպհէսիզ), պարտ է ձեզ հանդարտել և մի ինչ յանդգնութեամբ գործել։ Ածէք (գէթիրդինիզ) զարս զայդոսիկ այսր, ոչ իբրև մեհենակապուտս (Մէհէտան հըրսըզը) և ոչ հայհոյիչս Աստուծոյն մերոյ։ Եթէ Դեմետրիոս և որ ընդ նմա ճարտարք ունիցին ինչ ընդ ումեք բանս (Մէկեան հէր դադ,

կոխ-ուածքն) , յատեան երթիցեն , և դատաւորք գոն , և ամբաստան լիցին զմիմեանց . ապա թէ վասն այլ իրիք խնդիր իցէ , յօրինաւոր ժողովսն վճարեսցեն (լմնցու-նեն) . քանզի եւ մեզ վիշտ վտանգի է ընդ կռուոյս այսր աւուր առանց իրիք յանցանաց լինելոյ (կը վախնանք թէ այսօրուան կռւին համար մեղադրուինք) և ոչ կարասցուք տալ պատասխանի (չենք արդարանալ) վասն ժողովոյս (ամբոխիս) այսորիկ ։ Եւ զայս ասացեալ արձակեաց (ցրուեց) զժողովսն ։ Գործ. ժԹ ։

ՊԱՒՂՈՍ ԵՐԹԱՅ Ի ՄԱԿԵԴՈՆԻԱ , ԱՆՏԻ ՅԵԼԼԱԴԱ ԵՒ ԵՐՋԻ ՅԱՍԻԱ

Յետ դադարելոյ ամբոխին կոչեաց Պաւղոս զաշակերտսն և մխիթարեաց . Ողջոյն ետ և ել գնաց ի Մակեդոնիա ։ Եւ շրջեալ ընդ կողմանսն անդ այնոսիկ եղեւ յԵլլադա ։ Իբրեւ արար (անցուց) անդ ամիսս երիս , եղեւ նմա դաւ ի Հրէից , մինչդեռ կամէր ելանել յԱսորիս ։ Կալաւ խորհուրդ (խորհեցաւ , որոշեց) դառնալ ընդ Մակեդոնիա ։ Եւ երթայր ընդ նմա մինչեւ յԱսիա Սոսիպատրոս Բերիացի , և ի Թեսաղոնիկեցւոց՝ Արիստարքոս և Սեկունդոս , և Գայիոս Դերբացի և Տիմոթէոս , և Ասիացիք՝ Տիւքիկոս և Տրոփիմոս ։ Սոքա յառաջ երթեալ մնային մեզ ի Տրովադա ։ Եւ մեք նաւեցաք յետ աւուրցն բաղարջակերաց ի Փիլիպպեայ , և եկաք առ նոսա ի Տրովադա մինչեւ յաւուրս հինգ ։ Անդ դադարեցաք աւուրս եւթն ։ Եւ յաւուրն շաբաթուց մինչդեռ ժողովեալ էաք , Պաւղոս խօսէր ընդ նոսա , զի գնալոց (մեկնելու) էր ի վաղիւ անդր , և երկայնեաց զբանն մինչեւ ի մէջ գիշերին (կէս գիշեր) ։ Եւ էին լապտերք բազումք ի վերնատանն ուր էաքն ժողովեալ , և նստէր ոմն երիտասարդ անուն Եւտիքոս ի վերայ պատուհանին , նիրհէր ի քուն թանձրութեան , և ի խօ-

սեղն Պաւղոսի յաճախ (շատ), ընկղմեալ ի քնոյ անտի անկաւ յերրորդ դստիկոնէն ի վայր և բարձաւ մեռեալ։ Եւ իջեալ Պաւղոսի անկանէր զնովաւ, և առնոյր զնա ընդ գիրկս և ասէր. Մի խռովիք, քանզի ոգի սորա ի սմին է. և ած զպատանին կենդանի։ Եւ մեք մտեալ ի նաւն ամբարձաք յԱսովն (ելանք յԱսոն). անտի ակն ունէաք (կը յուսայինք, կը սպասէինք) միւսանգամ առնուլ զՊաւղոս, զի այնպէս պատուիրեալ էր (նորա), մինչ ինքն զցամաքաւն (ցամաքէն) երթալոց էր։ Եւ իբրեւ դիպեցաւ (հանդիպեցաւ) մեզ յԱսովն, առեալ զնա եկաք ի Միտիլինէ և անտի նաւեալ՝ ի վաղիւ անդր հասաք հանդէպ Քիայ, և ի միւսում աւուր հասաք ի Սամոս, և ի վաղիւ անդր եկաք ի Միլիտոն, զի ի մտի եդեալ էր Պաւղոսի նաւել առ Եփեսոսաւ, որպէս զի մի լիցի նմա ժամանակ ինչ յամել յԱսիա, քանզի փութայր, եթէ հնար ինչ իցէ նմա, զօրն Պենտեկոստէից երթալ յԵրուսաղէմ։ Գործ. Ի։

ՊԱՒՂՈՍ ԳՆԱՑ ՅԵՐՈՒՍԱՂԷՄ, ԵՒ ԽՌՈՎՈՒԹԻՒՆ ԱՆԴ

Մեկնեալ մեր ի նոցանէ, ճանդեպ գնացեալ (դէպ ի դիմաց երթալով) եկաք ի Կով, և ի վաղիւ անդր (հետեւեալ օրը) ի Հռոդոն, և անտի ի Պատարա։ Եւ գտեալ նաւ մի զի (որ) երթայր ի Փիւնիկէ, ելեալ ի նա գնացաք։ Թողեալ զԿիպրոս ի ձախակողմն, նաւեցաք յԱսորիս, և իջաք ի Տիւրոս, քանզի անդ էր նաւն թափելոց (պարպելու) զբեռինսն։ Եւ գտեալ զաշակերտսն՝ կացաք անդ զաւուրս եւթն, որք ասէին ցՊաւղոս մի ելանել յԵրուսաղէմ։ Աղաչեցաք և մեք, և որ ի տեղւոջն էին (հոն եղողները)՝ չելանել նմա յԵրուսաղէմ։ Յայնժամ ետ պատասխանի Պաւղոս և ասէ. Զի՞նչ գործէք, զի լայք և ճմլեցուցանէք զսիրտ իմ (կոտրել կը ճմլէք). քանզի ես ոչ միայն կապելոյ, այլ և մե-

առնելոյ յԵրուսաղէմ պատրաստ եմ ։ Եւ ի չանսալն նորա՝ ասեմք . Տեառն կամք լիցին ։

Յետ աւուրցն այնոցիկ հանդերձեալ (պատրաստուելով) ելանէաք յԵրուսաղէմ ։ Եկին ընդ մեզ և յաշակերտաց անտի Կեսարացւոց , և տանէին զմեզ առ որում վանս ունելոց էաք (որուն որ տունը պէտք բնակէինք) , Մնասոնի ումեմն Կիպրացւոյ ։ Եւ ի մտանելն մեր յԵրուսաղէմ՝ խնդութեամբ ընկալան զմեզ եղբարք ։ Ի վաղիւ անդր եմուտ Պաւղոս ի տաճարն , և տեսեալ զնա Ասիացւոց Հրէիցն ի տաճարին , զեղուին զնովաւ (դիզուեցին անոր բոլորտիքը) զամենայն ամբոխն , և արկեալ ի նա ձեռս (բռնելով) աղաղակէին . Արք Իսրայելացիք , օգնեցէք . այս այր է որ հակառակ ժողովրդեանն և օրինաց՝ ամենեցուն ամենայն ուրեք ուսուցանէ . մինչեւ հեթանոսս եւս եմոյծ ի տաճարն և պղծեաց զսուրբ տեղիսն ։ Քանզի էր նոցա յառաջագոյն տեսեալ ընդ նմա ի քաղաքին զՏրոփիմոս զԵփեսացի , զոր կարծէին եթէ ի տաճար անդր եմոյծ Պաւղոս ։ Շարժեցաւ քաղաքն ամենայն և կուտեցաւ ժողովուրդն , և առեալ զՊաւղոս ձգէին արտաքոյ տաճարին , և վաղվաղակի փակեցան դրունքն , և խնդրէին զնա սպանանել ։ Ե՛հաս զրոյց (լուր) ի հազարապետ անդր գնդին , եթէ խռովեալ է ամենայն Երուսաղէմ ։ Առեալ անդէն հազարապետին զօրականս և հարիւրապետս , դիմեաց ի վերայ նոցա . և նոցա տեսեալ զհազարապետն և զզօրականսն , դադարեցին ի հարկանելոյ զՊաւղոս ։ Յայնժամ մատուցեալ հազարապետն կալաւ զնա և հրամայեաց կապել կրկին շղթայիւք , և հարցանէր թէ ո՛վ իցէ , և զինչ իցէ արարեալ ։ Այլք այլ ինչ աղաղակէին զնմանէ յամբոխին ։ Իբրեւ ոչ կարաց գիտել զստոյգն վասն ամբոխին , հրամայեաց ածել զնա ի բանակն ։ Իբրեւ եհաս (Պաւղոս) յաստիճանսն (սանդուղին վրայ) , դէպ եղեւ բառնալ բերել զնա զօրականացն (զինուորներէն վեր վերցնելով

քննուիլ) վասն բռնութեան ամբոխին, քանզի զհետ երթայր բազմութիւն ժողովրդեանն, և ասէին, Բարձ զդա։ Մինչդեռ մտանելոց էր Պաւղոս ի բանակն, ասէ ցհազարապետն, Եթէ արժա՞ն իցէ ինձ խօսել ընդ քեզ (կրնա՞մ քեզի հետ խօսիլ)։ Եւ նա ասէ, Յունարէն գիտե՞ս, մի արդեւք (չըլլայ որ) դու իցես Եգիպտացին, որ յառաջ քան զայս աւուրս ապստամբեցուցեր և հաներ յանապատ չորս հազար արս։ Եւ ասէ Պաւղոս, Ես եմ այր Հրեայ, ի Տարսոնէ Կիլիկեցւոց, ոչ աննշան քաղաքի քաղաքացի, աղաչեմ զքեզ հրամայեա ինձ խօսել առ ժողովուրդդ։ Եւ ի հրամայելն նորա՝ Պաւղոս կացեալ ի վերայ աստիճանացն՝ շարժեաց զձեռն ժողովրդեանն։ Իբրեւ բազում լռութիւն լինէր, սկսաւ բարբառել Եբրայեցւոց բարբառոյն —։ Գործ. ԻԱ։

ՊԱՒՂՈՍ ԱԶԱՏԻ Ի ԳԱՆԷ

Ունկն դնէին նմա մինչեւ ցայս բան. ապա բարձին զձայնս իւրեանց և ասեն. Բարձ յերկրէ զայդպիսիդ, զի չէ պարտ այդպիսւոյդ կեալ։ Եւ յաղաղակելն նոցա և յընկենուլ զհանդերձս և զփոշին ցանել յօդսն, հրամայեաց հազարապետն մուծանել զնա ի բանակն. ասէր դանիւ հարցանել զնա։ Զի գիտասցէ, ասէր, վասն որոյ յանցման այնպէս աղաղակէին զնմանէ։ Եւ իբրեւ պրկեցին զնա փոկովք (խօշէլով կապեցին), ասէ Պաւղոս ցհարիւրապետն որ ի վերայ կայր, Եթէ զայր Հռոմայեցի և անարատ (անդէզ) պա՞րտ իցէ ձեզ գան հարկանել։ Իբրեւ լուաւ հարիւրապետն, մատուցեալ առ հազարապետն պատմեաց և ասէ, Զի՞նչ կամիցիս առնել, քանզի այրն այն Հռոմայեցի է։ Եւ մատուցեալ հազարապետն ասէ ցՊաւղոս, Ասա դու ցիս, Հռոմայեցի՞ ես։ Եւ նա ասէ, Այո . . . ծնեալ իսկ ի դմին եմ։ Եւ վաղվաղակի ի բաց կացին ի նմանէ որ հարկա-

նելոցն էին զնա, և հազարապետն իսկ երկեաւ, իբրև գիտաց եթէ Հռոմայեցի էր Պաւղոս, և զի կապեալ եւս էր զնա։ Գործ ԻԲ։

ՊԱՒՂՈՍ ԱԶԱՏԻ Ի ԴԱՒԱՃԱՆՈՒԹԵՆԷ ՀՐԷԻՑ

Իբրև այգ եղև, արարեալ ժողով Հրէիցն, Եզովեցին (Երդում ըրին) զանձինս ոչ ուտել և ոչ ըմպել մինչև սպանցեն զՊաւղոս։ Եւ էին աւելի քան զքառասուն որոց զայս ընդ միմեանս երդմունս արարեալ (Երդում ըրած) էր։ Որք մատեան առ քահանայապետսն և ասեն, Նզովիւք նզովեցաք զանձինս ոչինչ ճաշակել մինչև սպանցուք զՊաւղոս. բայց դուք զգացուցէք (իմացուցէք) հազարապետին զի իջուսցէ զնա առ ձեզ, որպէս թէ կամիցիք ճշմարտագոյնս ինչ գիտել զնմանէ, և մեք յառաջ քան զմօտել նորա պատրաստ եմք ի սպանանել զնա։ Եւ լուեալ քեռորդւոյն Պաւղոսի զդաւաճանութիւնն եկն եմուտ ի բանակ անդր, պատմեաց Պաւղոսի։ Եւ կոչեցեալ Պաւղոսի առ իւր զմի ի հարիւրապետաց անտի ասէ, Զպատանիս զայս տար առ հազարապետն, զի ունի ինչ պատմել նմա։ Եւ նորա առեալ զնա տարաւ առ հազարապետն և ասէ. Կապեալն Պաւղոս կոչեաց զիս և աղաչեաց զպատանիս զայս ածել առ քեզ. ունի ինչ խօսել ընդ քեզ։ Առեալ զձեռանէ նորա հազարապետին գնաց մեկուսի, հարցանէր թէ Զի՞նչ ունիս խօսել ընդ իս։ Եւ նա ասէ, Հրեայք միաբանեցին աղաչել զքեզ զի վաղիւ զՊաւղոս իջուսցես յատեան, իբրև թէ կամիցին ինչ ճշմարտագոյնս հարցանել վասն նորա. արդ, դու մի անսայցես նոցա, քանզի դարան գործեալ է նմա ի նոցանէ արանց աւելի քան զքառասուն, որ նզովեցին զանձինս ոչ ուտել և ոչ ըմպել մինչև սպանցեն զնա. արդ, պատրաստ են և սպասեն քում հրամանին։ Ապա հազարա-

պետն արձակեաց զպատանին՝ պատուիրեալ մի ումեք ասել թէ Զայս զգացուցեր ինձ։ Կոչեաց հազարապետն երկուս ի հարիւրապետացն և ասէ, Պատրաստեցէք զօրականս երկերիւր որպէս զի երթիցեն մինչեւ ի Կեսարիա, և հեծեալս եւթանասուն և տիգաւորս երկերիւր յերից ժամուց գիշերոյն (գիշերուան ժամը երեքէն), և գրաստս (Յէ) պատրաստական զի իջուցեալ զՊաւղոս ապրեցուսցեն։ Եւ առ Փելիքս դատաւոր գրեաց թուղթ որ ունէր օրինակ զայս․ Կղաւդիոս Լիւսիաս առ քաջ (լաւ) դատաւոր Փելիքս՝ ողջոյն։ Զայրս զայս կալեալ ի Հրէից եւ մերձ ի սպանանել ի նոցանէ՝ հասեալ ի վերայ զօրականաւ ապրեցուցի (ազատեցի), իմացեալ թէ Հռոմայեցի է։ Կամեցայ գիտել զվնասն (յանցանքը) վասն որոյ ամբաստանէին զդմանէ, իջուցի զդա յատեան նոցա, և գտի ամբաստանեալ վասն խնդրոյ իւիք իւրեանց օրինաց (կրօնքին), և ոչինչ արժանի մահու կամ կապանաց ունէր նա վնաս։ Իբրեւ ազդ եղեւ ինձ նենգութեան յայրդ լինելոյ ի նոցանէ (երբ իմացայ որ անանցմ նենգաւորութեան կայ այս մարդուն դէմ), յղեցի զնա առ քեզ․ հրաման տուեալ և չարախօսացն (ամբաստանողներուն) խօսել զդմանէ առաջի քո, ողջ լեր։ Եւ զօրականացն ըստ հրամանի նորա առեալ զՊաւղոս ածին գիշերայն յԱնթիպատրիս, և ի վաղիւ անդր արձակեալ զհեծեալսն ընդ նմա երթալ, ինքեանք դարձան ի բանակն։ Նոքա մտին ի Կեսարիա, և տուեալ ցդատաւորն զթուղթն, առաջի կացուցին նորա զՊաւղոս։ Իբրեւ ընթերցաւ դատաւորն զթուղթն, եհարց ցՊաւղոս թէ յորմէ նահանգէ իցէ, և ստուգեալ եթէ ի Կիլիկեայ է, Լուայց քեզ, ասէ, յորժամ և չարախօսքն քո եկեսցեն, և հրամայեաց յապարանսն Հերովդի պահել զնա։ Գործ. իԳ։

ՊԱՒՂՈՍ ՅԱՏԵՆԻ ՓԵԼԻՔՍԻ Ի ԿԵՍԱՐԻԱ

Յետ հինգ աւուրց էջ քահանայապետն Անանիա հանդերձ ծերովք ոմամբք և ճարտարախօսաւ Տերտուղեաւ ոմամբ, որք և զգացուցին դատաւորին վասն Պաւղոսի ։ Իբրև կոչեցաւ Պաւղոս, սկսաւ Տերտուղոսն ամբաստան լինել զնմանէ և ասել, Բազում խաղաղութիւն գտեալ է ի քէն և իրաց ուղղութիւն ազգիս այսորիկ քով խնամով. ամենայնիւ և ամենայն ուրեք չնորհակալ եմք, քաջդ Փելիքս, ամենայն գոհութեամբ ։ Բայց զի մի եւս աւելի աշխատ արարից (յոգնեցնել) զքեզ, աղաչեմ լսել մեզ կարճ ի կարճոյ (քիչ մը) քոյին հեզութեամբդ, Գտաք զայրս զայս ապականիչ և խռովիչ ամենայն Հրէից որ են ընդ տիեզերս, որ և զտաճարն իսկ կամեցաւ պղծել ։ Կալաք զնա, և ըստ մերոց օրինաց դատել կամեցաք, այլ եկեալ Լիւսիաս հազարապետ՝ մեծաւ բռնութեամբ ի ձեռաց մերոց եհան, հրամայեաց և չարախօսացն նորա գալ առ քեզ, զի դու իսկ բաւական լինիցիս վերստին դատեալ ամենայնի հասու լինել զորոց մեզս ամբաստանեմք զդմանէ ։

Պատասխանի ետ Պաւղոս յակնարկելն նմա դատաւորին խօսել ։ Ի բազում ամաց լինել քեզ դատաւոր ազգիս այսորիկ գիտեմ. յօժարութեամբ վասն իմոց իրաց պատասխանի առնեմ ։ Ոչինչ աւելի է իմ քան զաւուրս երկոտասան յորմէ հետէ ելի երկիր պագանել յԵրուսաղէմ, և ոչ ի տաճարի անդ գտին զիս ընդ ումեք խօսեցեալ, և կամ ժողովս արարեալ բազմաց, ոչ ի ժողովուրդս և ոչ ի քաղաքի, և ոչ յանդիման առնել (ապացուցանել) կարեն քեզ վասն որոյ այժմս չարախօսեն զինէն ։ Յապաղեաց (ուշացուց, ուրիշ օրուան թողուց) զնոսա Փելիքս և ասէ. Յորժամ Լիւսիաս հազարապետ իջցէ այսր, տեղեկացայց վասն ձեր ։ Եւ հրամայեաց

հարիւրապետին պահել զնա և ունել յընդարձակի (ազա-տութիւն տալ), և մի զոք յիւրոց անտի արգելուլ ի պաշտելոյ զնա (անոր ծառայութիւն ընելու)։ Յետ աւուրց ինչ եկն Փելիքս հանդերձ Դրուսիղաւ կնաւ իւրով որ էր Հրեայ, կոչեաց զՊաւղոս, և ի խօսելն նորա վասն արդարութեան և ժուժկալութեան և հանդերձեալ դատաստանին, զահի հարեալ Փելիքս ետ պատասխանի. Դու առ այժմ (հիմակուան հիմա) երթ, և յորժամ ժամ լինիցի (երբ պարապութիւն ըլլայ), կոչեցից զքեզ։ Միանգամայն և ակն ունէր (կը յուսար) թէ տացի ինչ նմա ի Պաւղոսէ, վասն որոյ և ստէպ (շատ անգամ) կոչեցեալ զնա խօսէր ընդ նմա։ Եւ ի կատարել երկուց ամաց եկն փոխանակ Փելիքսի Փեստոս Պորկիոս։ Իբրև կամեցաւ շնորհս առնել Հրէիցն (Հրէից հաճոյ բան մ'ընել) Փելիքս, եթող զՊաւղոս կապեալ։ Գործ. ԻԴ։

ՊԱՒՂՈՍ ԲՈՂՈՔԷ ԱՌ ԿԱՅՍՐ

Փեստոս իբրև եհաս իշխանութիւնն, յետ երից աւուրց ել յԵրուսաղէմ ի Կեսարիայ։ Զգացուցին նմա գլխաւորք Հրէիցն զՊաւղոսէ, և աղաչէին խնդրել շնորհս ի նմանէ զի կոչեսցէ զնա յԵրուսաղէմ, և դարան գործեալ էր նոցա սպանանել զնա ի ճանապարհին։ Իսկ Փեստոս արար պատասխանի պահել զնա (թէ պահելոց էր) ի Կեսարիա, զի ինքն իսկ ընդ հուպ (քիչ ատենէն) անդր երթալոց էր։ Որ ի ձէնջ կարողքդ իցեն, ասէ, ընդ իս իջցեն. եթէ իցէ ինչ յառնն մեղ' ամբաստան լիցին զնմանէ։ Եղեալ նորա անդ (հոն մնալով) աւուրս ոչ աւելի քան զութ կամ զտասն, եկն էջ ի Կեսարիա, և ի վաղիւ անդր նստեալ յատենի հրամայեաց ածել զՊաւղոս։ Իբրև եկն Պաւղոս, կացին շուրջ զնովաւ որ յԵրուսաղեմէ իջեալ էին Հրեայքն։ Բազում և ծանր վնասս դնէին (յանցանք մը կը բերէին)

զորս ոչ կարէին ցուցանել, քանզի առնէր պատասխանի Պաւղոս եթէ՝ Ոչ յօրէնս Հրէից և ոչ ի տաճարն և ոչ ի կայսր ինչ վնասակար եմ։ Բայց Փեստոս կամեցեալ Հրէից շնորհս առնել, ասէ ցՊաւղոս, Կամի՞ս յԵրուսաղէմ ելանել և անդ վասն դոցին իրաց դատել առաջի իմ։ Ասէ Պաւղոս, Յատենի կայսեր հասեալ կամ, ուր պարտ է ինձ դատել, Հրէից ինչ չեմ վնասակար, որպէս և դու իսկ (դուն ալ) քաջ (աղէկ) գիտես․ ապա եթէ վնասակար եմ և արժանի ինչ (բան մը) մահու գործեցի, ոչ զանգիտեմ (չեմ վախնար) ի մեռանելոյ, իսկ եթէ ոչինչ է զորոց սոքայս ամբաստան լինին զինէն, ոչ ոք կարէ զիս դոցա շնորհել, ի կայսր բողոքեմ։ Յայնժամ Փեստոսի խօսեցեալ ընդ խորհըրդակցին արար պատասխանի․ Ի կայսր բողոքեցեր, առ կայսր երթիջիր։ Գործ․ ԻԵ։

ՊԱՒՂՈՍ ՅԱՏԵՆԻ ԱԳՐԻՊԵԱՅ

Իբրև անցին աւուրք ինչ, Ագրիպպաս արքայ և Բերենիկէ եկին ի Կեսարիա յողջոյն (ողջունելու, շնորհաւորելու) Փեստոսի։ Եւ իբրև աւուրս բազումս հանէին (անցուցին) անդ, Փեստոս զեկոյց (ծանուց) արքային զՊաւղոսէ և ասէ․ Այր մի աստ մնացեալ է կապեալ ի Փելիքսէ։ Իբրև շոքայ յԵրուսաղէմ, զգացուցին ինձ վասն նորա գլխաւորքն Հրէից, խնդրէին յինէն առնել նմա պատուհաս (պատժել)։ Ետու նոցա պատասխանի եթէ չէ օրէն Հռոմայեցւոց շնորհել ումեք զոք, մինչչև ամբաստանեալն յանդիման ունիցի զդատախազսն եւ տեղի պատասխանւոյ առնուցու վասն ամբաստանութեանն (Հռոմայեցւոց օրէնքին դէմ է մէկուն խօսքը դատապարտել առանց որ, ամբաստանեալն ու ամբաստանողները երես երեսի չեկած, և ամբաստանեալը պաշտպանութեան չըրած ինքզինք արդարացնելու)։ Իբրև եկին դատա–

խազքն այսր, ոչինչ յապաղեցի, այլ ի վաղիւն (հե–փեթեալ օրը) նստեալ յատենի հրամայեցի ածել զայրն, վասն որոյ մատուցեալ ամբաստանքն և ոչ մի ինչ վնաս չարութեան ի մէջ բերէին զորոց ես կարծէի, բայց խնդիրս ինչ վասն իւրեանց պաշտաման (կէօնկէն) ունէին ընդ նմա։ Իբրև յանճնարս մտի (ծարշը հարփա) վասն այնպիսի իրաց քննութեան, ասեմ ցայրն եթէ Կամիցի՞ երթալ յԵրուսաղէմ, և անդ դատել վասն նոցին իրաց։ Բայց ի Պաւղոսի բողոքելն զի պահեսցի ի քաջի արանցն յանդիմանութիւն (կէօյնէր ներկէօյանալըն), հրամայեցի պահել զնա մինչև տաց տանել առ կայսր։ Ագրիպպաս ցՓեստոս ասէ, Կամէի և ես լսել առնն, և նա ասէ, Վաղիւ լուիցես։ Եւ ի վաղիւ անդր իբրև եկն Ագրիպպաս և Բերենիկէ բազում և երևելի սպասուք (հեփը եղընէր), և մտին յատեանն հանդերձ հազարապետօքն և արամբք պատուաւորօք քաղաքին, հրամայեալ Փեստոսի՝ ածին զՊաւղոս։ Եւ ասէ Փեստոս․ Արքայ Ագրիպպա և ամենայն արք որ ընդ մեզ էք, տեսանէ՞ք զսա․ վասն սորա ամենայն ժողովք Հրէից ամբաստան եղեն ինձ յԵրուսաղէմ, և աստ աղաղակէին թէ չէ պարտ դմա կեալ․ բայց ես ի վերայ հասի (վերահասու եղայ) թէ ոչինչ է դորա արժանի մահու գործեալ, և դորա ինքնին բողոք կալեալ առ քաջ արանցն (կէօյնէր), խորհեցայ յղել։ Բայց ստուգութեամբ ինչ գրել տեառն իմում ոչ ունիմ․ վասն այնորիկ ածի զդա առաջի ձեր, և մանաւանդ առաջի քո, արքայ Ագրիպպա, որպէս զի վերստին քննեալ մարթացից (կարող ըլլամ) ինչ գրել․ քանզի անպատեհ իմն թուի ինձ տալ տանել կապեալ մի, և ոչինչ վնաս զնմանէ նշանակել։ Գործ․ իե։

ՊԱՏԱՍԽԱՆԻ ՊԱՒՂՈՍԻ ՔԱՐՈԶՈՒԹԵԱՄԲ ԽԱՌՆ

Եւ Ագրիպպաս ասէ ցՊաւղոս, Հրամայեալ է վասն քո խօսել: Յայնժամ Պաւղոսի ձգեալ զձեռն առնէր պատասխանի: Վասն ամենայն ամբաստանութեան Հրէից զինէն, արքայ Ագրիպպա, համարիմ զանձն երանելի, զի քո առաջի տալոց եմ այսօր պատասխանի. մանաւանդ զի գիտակ իսկ ես (ֆիքրի, դեյիլ մի) ամենայն կրօնից (դին, օրթոդոքսլուղընտան) և խնդրոց Հրէից. վասն որոյ աղաչեմ երկայնմտութեամբ լսել ինձ: Կենաց իմոց, որ ի մանկութենէ յազգի անդ իմում յԵրուսաղէմ, տեղեակ են ամենայն Հրեայք. յառաջագոյն (ա–աշըրը) գիտեն ի վաղուց հետէ (չօքտան), եթէ կամիցին վկայել, զի ըստ ճշմարտագոյն (ատղըֆա) կրօնից օրինացն մերոց կեցեալ եմ փարիսեցի: Պատշաճ համարէի զբազում ինչ հակառակ անուանն Յիսուսի Նազովրեցւոյ գործել, զբազումս ի սրբոցն ես բանտարգել առնէի՝ ի քահանայապետիցն առեալ իշխանութիւն, և զսպանելոցն նոցա բերէի համար (հաշը, դեյինլերին), և բազում անգամ պատժեալ զնոսա բռնադատէի հայհոյել. առաւել ևս մոլեալ (կուդուրալ, ջընլէնել) ի վերայ նոցա հալածէի մինչև յարտաքին քաղաքսն: Ի գնալ իմում ի Դամասկոս իշխանութեամբ և հրամանօք քահանայապետիցն, զմիջաւուրբն (կէս օրուան մէջըն) ի ճանապարհի տեսի, արքայ, յերկնից առաւել քան զլուսաւորութիւն արեգական ծագեալ զինև լոյս, և զնոքօք որ ընդ իսն երթային. և յամենեցուն մեր անկանելն յերկիր, լուայ ձայն որ ասէր ցիս Եբրայեցւոց բարբառովն. Սաւուղ, Սաւուղ, զի՞ հալածես զիս, խիստ է քեզ ընդդէմ խթանի (դէլ) աքացել (կէց տը– նել): Պաւղոսի զայս պատասխանի տուեալ (երբ այս պատասխանը տուաւ), Փեստոս ի ձայն մեծ ասէ, Մոլիս

(կը ցնորէ), Պաւղէ, բազում դպրութիւնք (շատ ուսմունքը) զքեզ ի մոլութիւն (խենդութեան) դարձուցանեն։ Իսկ Պաւղոս ասէ, Ոչ մոլիմ, քաջդ Փեստոս, այլ զգածութեան (ծմտութեան, ողջմտութեան) և զճշմարտութեան բանս բարբառիմ (կ՚արտասանեմ)։ Յոտն կացին արքայն և դատաւորն և Բերենիկէ և որք ընդ նոսայն նստէին, և իբրև գնային, խօսէին ընդ միմեանս և ասէին․ Ոչինչ արժանի մահու կամ կապանաց գործեալ է այրս այս։ Իսկ Ագրիպպաս ցՓեստոս ասէ․ Արձակել մարթ էր զայրս զայս, եթէ ոչ էր բողոքեալ ի կայսր։ Գործ․ ԻԶ։

ՆԱԻԱՐԿՈՒԹԻՒՆ ՊԱՒՂՈՍԻ ՅԻՏԱԼԻԱ ԼԻ ՎՏԱՆԳՕՔ

Իբրև հրամայեցաւ մեզ նաւել յԻտալիա, տային զՊաւղոս և զայլս ոմանս կապեալս ի հարիւրապետ մի որում անուն էր Յուլիոս, սեբաստեան գնդին։ Եւ ելեալ ի նաւ մի անդրամիտտացի որ երթալոց էր ի կողմանս Ասիացւոց՝ գնացաք․ էր ընդ մեզ Արիստարքոս Մակեդոն Թեսաղոնիկեցի, և ի վաղիւ անդր իջաք ի Սիդոն։ Մարդասիրութիւն ցուցեալ Յուլեայ առ Պաւղոս, հրամայեաց (հրաման, թոյլ տուաւ) առ բարեկամսն երթալ և դարման գտանել (դարմանուիլ)։ Եւ անտի ելեալ խոնարհագոյն (դէպ ի վար) նաւեցաք ի Կիպրոս վասն հողմոյն ընդդէմ լինելոյ։ Յայնժամ ընդ մէջ (դէմէն) ծովուն Կիլիկեայ և Պամփիլեայ նաւեալ իջաք ի Սմիւռս Լիկէացւոց և անդ գտեալ հարիւրապետին նաւ մի աղեքսանդրացի որ երթայր յԻտալիա՝ եմոյծ զմեզ անդր։ Ի բազում աւուրս ծանրանաւեալք հազիւ (դժուարաւ) հասաք առ Կնիդեաւ, և ի չթողացուցանել մեզ հողմոյն՝ նաւեցաք խոնարհագոյն ի Կրետէ առ Սաղամինեաւ․ հազիւ անցեալ առ նովաւ եկաք ի տեղի ինչ որ կոչէր գեղեցիկ նաւահանգիստ, յոր հուպ էր

քաղաքն Ղասեայ։ Եւ իբրեւ բազում ժամանակք անցանէին, և սխալ եւս լինէր նաւելոյն, խրատ տայր Պաւղոս և ասէր. Արք, տեսանեմ զի բազում վնասու, ոչ միայն բեռինդ և նաւիդ, այլ և անձանց մերոց լինելոց է նաւարկութիւնս։ Իսկ հարիւրապետն նաւապետին և նաւավարին առաւել անսայր քան բանիցն Պաւղոսի։ Իբրեւ դժպատեհ (անյարմար) իմն թուէր նաւահանգիստն առ ի ձմերել, բազումք խորհեցան գնալ անտի, զի թերեւս կարասցեն հասանել ի Փիւնիկէ, ձմերել ի նաւահանգստին Կրետացւոց։ Ի շնչել հարաւոյն՝ համարեցան ուր դիմեալն էին հասանել. և անկեալ մօտ առ ցամաքաւն՝ անցանէին առ Կրետեաւ։ Եւ ոչ յետ բազում ժամուց անկաւ զնաւաւն հողմ ուռուցիկ։ Ընդ յափշտակել նաւին և չհանդուրժել (չէք-մանալ) ընդդէմ հողմոյն, թոյլ տուեալ երթայաք և գայաք։ Ապա ի կղզի ինչ դիմեալ որ կոչէր Կղաւդիա՝ հազիւ կարացաք ըմբռնել զմակոյկն, զոր առեալ կապէին ընդ նաւն, և երկուցեալք թէ գուցէ ի յորձանուտն (օֆընիը) անկանիցին, իջուցեալ զառագաստն՝ այնպէս երթային և գային։ Ի սաստկագոյն վշտանայոյն մերոյ (շոփ հեղելով) ի վաղիւ անդր զկարասին ընկեցիկ առնէին (Նեւթէլ), և յերիր աւուրն (եպըօրը օղը) ընդ իւրեանց ձեռն (էլլէրի յեւտէն) զգործի նաւին ընկեցին։ Իբրեւ ոչ արեւ ոչ աստեղք երեւէին ի բազում աւուրս, և ձմեռն ոչ սակաւ կայր ի վերայ, ապա բառնայր ամենայն յոյս փրկութեան մերոյ։ Եւ զի բազում աւուրս նօթի էին. յայնժամ Պաւղոս կացեալ ի մէջ նոցա ասէ, Պարտ էր ձեզ, ով արք, անսալ ինձ և ոչ ելանել ի Կրետեայ, և շահել զվիշտս զայս և զվնաս. և արդ, խրատեմ զձեզ քաջալերել, զի վնաս անձին և ոչ միում ի ձէնջ լինիցի բաց ի նաւէդ։ Իբրեւ չորեքտասաներորդ գիշեր լինէր, մինչդեռ ծփէաք ի հանդրին (ադրիատիկին) անդուենդս, ի մէջ գիշերին կար-

ծէին Նաւավարքն եթէ հասեալ իցեն յաշխարհ ուրեք, և ընկեցեալ զզունդսն (ճըպաններըը) գտին գիրկս (ֆօուլած) քսան. և սակաւ ինչ դադարեալ դարձեալ ընկեցին, և գտին գիրկս հնգետասան։ Զահի հարեալ թէ գուցէ ի խիստ ինչ տեղիս անկանիցին, յետուստ կողմանէ ընկեցին խարիսխս չորս, ըղձանային (կը ֆօֆօ-էլէն, կը ճօղ-ըէն) այգուն լինելոյ։ Բայց Նաւավարքն խնդրէին փախչել ի Նաւէ անտի, և իջուցին զկուրն ի ծով անդր պատճառանօք որպէս թէ առաջոյ կողմանէ զխարիսխն ձգելոց (թալչէլ) իցեն։ Ասէ Պաւղոս ցհարիւրապետն և ցզօրականսն. Եթէ ոչ դոքա մնան ի Նաւիս, ապրել (ազա-տէլ) ոչ կարէք։ Յայնժամ զօրականքն հատին զլարս (չուան) կրիճ (սանդալ) և ի բաց ընկեցին։ Եւ մինչդեռ այգն կամէր լինել, աղաչէր Պաւղոս զամենեսեան առնուլ կերակուր, ասէ. Այս չորեքտասաներորդ օր է որում ակն ունիք (կը ողաւէթ) նօթիս կատարել, և չէ ինչ ճաշակեալ. վասն որոյ աղաչեմ զձեզ ճաշակել կերակուր, զի այն իսկ վասն ձերոյ փրկութեան է. զի ոչ ուրուք ի ձէնջ մազ մի ի գլխոյ կորիցէ։ Քաջալերեցան ամենեքին և առին կերակուր։ Իբրև յագեցան կերակրոյն, թեթևացուցին զնաւն թափեալ զցորեանն ի ծով։ Իբրև այգ եղև, զերկիրն ոչ ճանաչէին, բայց զգոգ մի Նշմարէին թէ ափն ծովուն իցէ, յոր խորհէին, թէ հնար ինչ իցէ, զերծանել զնաւն։ Զխարիսխն հատեալ ընկեցին ի ծովն, թուլացուցին զխառնելխ (կողէրը) թևոցն (առագաստ) և ի բաց առին (բաջէն) զառագաստն, և ետուն հողմոյն յափն կոյս ծովուն (դէող է ծօվէղըը)։ Անկեալ ի տեղի մի երկծով՝ բիւրեցին (ծան-ցէն, դարջօցէն) զնաւն, և աջոյ կողմն Նաւին խրեալ անշարժ մնայր, և յետին հողմն քակէր (կը թակալէր) ի բռնութենէ (ոստափկորնէան) ալեացն։ Զօրականքն խորհուրդ արարին զի զկապեալսն սպանցեն, զի մի ոք լուղիցէ և փախիցէ, բայց հարիւրապետն, քանզի կամե-

ցաւ ապրեցուցանել (ողորդել) զՊաւղոս, արգել զնոսա ի խորհրդոյն. հրամայեաց զի որ կարողն իցեն լուղել՝ անկանիցին եւ ի ցամաքն ելանիցեն, այլքն ի տախտակս եւ յայլ ինչ կառ ի նաւէ անտի (ըսել ձեռքերնին ծովը նետուելով ցամաք ելլեն, ուրիշներն ալ տախտակներով կամ նաւուն ուրիշ մէկ կտորովը). և այսպէս եղեւ ամենեցուն փրծանել (ազատիլ, ողորդիլ) յերկիր։ Գործ. ԻԷ։

ԽՈՐՏԱԿԻ ՆԱՒՆ ԵՒ ՊԱՒՂՈՍԵԱՆՔ ԵԼԱՆԵՆ Ի ՄԵԼԻՏԻՆԷ

Ապրեալք (երբ ողորդեցանք), յայնժամ գիտացաք եթէ Մելիտինէ էր անուն կղզւոյն։ Բարբարոսքն շնորհեցին ոչ սակաւ մարդասիրութիւն մեզ։ Լուցին խարոյկ և ընկալան զամենեսեան զմեզ վասն անձրևուին որ ստիպեր (կու գար սաստիկ) և վասն ցրտոյն։ Եւ ի ժողովել Պաւղոսի խռիւ (չոր ցախեր) բազում և դնել ի վերայ խարուկին, իժ մի ի ջերմութենէն ելեալ կալաւ զձեռանէ նորա։ Իբրև տեսին բարբարոսքն կախեալ զգազանն զձեռանէ նորա, ասէին ցմիմեանս. Աւրեմն սպանող է այրս այս, որ թէպէտ ապրեցաւ ի ծովէն, իրաւունքն չետուն նմա կեալ։ Եւ նորա թօթափեալ զգազանն ի հուրն, եղեւ նմա չար (փեշտաբեան, ցաւ) և ոչինչ, և նոքա ակն ունէին նմա այտնլոյ կամ անկանելոյ և յանկարծակի մեռանելոյ։ Իբրև շատ (բաւական ժամանակ, երկայն ատեն) ակն կալեալ (սպասելով) տեսանէին թէ ոչինչ վնաս եղեւ նմա, դարձեալ դարձուցին զբանսն և ասէին թէ աստուած ոմն է։ Եւ շուրջ զտեղեաւն այնուիկ էին գիւղք գլխաւորի կղզւոյն որում անուն էր Պոպղիոս, որ առ զմեզ յերաշխի (ընդունեց իր տունը) զերիս աւուրս և սիրով ընկալաւ։ Եւ եղեւ հօրն Պոպղեայ ի ջերմն և յախտ քանչից (լուծալ) հիւանդացեալ դնել. առ որ մտեալ Պաւղոս և կաց-

եալ յաղօթս եդ ձեռն և բժշկեաց զնա։ Իբրեւ այս եղեւ, այլ հիւանդք որ էին ի կղզւոջն՝ գային և բժշկէին, որք և բազում պատուովք պատուեցին զմեզ, և իբրեւ գնացաք, ետուն մեզ որ ինչ պէտք էին։

Յետ երից ամսոց ելաք ի նաւ մի աղեքսանդրացի որ ձմերեալ (ձմեռը անցուցեր) էր ի կղզւոջն; և իջեալ ի Սիրակուսա եղեաք անդ աւուրս երկուս. անտի գնացեալ հասաք ի Հռեգիոն։ Յետ աւուր միոյ ի շնչել հարաւոյն՝ երկօրեայք (երկու օրէն) եկաք ի Պատիողոս, ուր եւ գտաք եղբարս։ Աղաչեցեալք ի նոցանէ յինել աւուրս եւթն, ապա (աղաչեցին որ եօթը օր մնանք, եօթը) ելաք ի Հռովմ, և անտի լուեալ եղբարց զմէնջ ելին ընդ առաջ մեր. զորս տեսեալ Պաւղոսի գոհացաւ զԱստուծոյ և քաջալերեցաւ։ Իբրեւ մտաք ի Հռովմ, հրամայեցաւ Պաւղոսի լինել առանձինն հանդերձ զինուորաւն, պահապանաւ իւրով։ Եւ եղեւ յետ երից աւուրց կոչել նմա զՀրէից գլխաւորս։ Ժամ եդեալ նմա օր մի (օր մը որոշելով) եկին ի վանսն (բնակարանը) առ նա բազումք, որոց խօսէր յայգուէ մինչեւ ցերեկոյ։ Ոմանք հաւանէին (կը համոզուէին) բանիցն, և կէսք չհաւատային, և անմիաբան լեալք ի միմեանց արձակէին (կ'ուրանային, կը ժխտէին)։ Եւ եղեւ Պաւղոս զերկեամ մի բովանդակ (ամբողջ երկու տարի) իւրով վարձու (իր ստակովը), և ընդունէր զամենեսեան որ մտանէին (կու գային) առ նա։ Գործ. ԻԸ։

ԱՌԱԿ ՊԱՐՏԱՊԱՆԻՆ

Թագաւոր ոմն կամեցաւ համար առնուլ (հաշիւ ուզել) ի մէջ ծառայից իւրոց, և իբրեւ սկսաւ առնուլ, մատուցաւ առ նա պարտապան (պարտական) մի բիւր քանքարոյ։ Իբրև ոչ ունէր հատուցանել (բան չունէր վճարելու), հրամայեաց տէր նորա վաճառել զնա և զկին

նորա և զորդիս և զամենայն որ զինչ և ունիցի, և *հատուցանել*։ *Եւ անկեալ ծառայն երկիր պագանէր նմա և ասէր*․ Երկայնամիտ լեր (հօմշէրէ) *առ իս*, և *զամենայն հատուցից քեզ*։ *Գթացեալ տէր ծառային այնորիկ* արձակեաց (Բօղ փասա) *զնա*, և զփոխն (դօրբօյը) *եթող նմա*։ *Եւ ելեալ ծառայն եգիտ զմի ի ծառայակցաց իւրոց որ պարտէր նմա հարիւր դահեկան*, և *կալեալ զնա* խեղդէր (շօփ օթէղել) և *ասէր*, *Հատո ինձ զոր պարտիսդ*։ *Արդ*, *անկեալ ծառայակցին առ ոտս նորա աղաչէր զնա և ասէր*։ *Երկայնամիտ լեր առ իս*, և *հատուցից քեզ*, և *նա ոչ կամէր*, *այլ չոգաւ արկ զնա ի բանտ մինչև հատուցէ զպարտսն*։ *Իբրև տեսին ծառայակիցքն որ ինչ եղեւն*, *տրտմեցան յոյժ*, և *եկեալ ցուցին տեառն իւրեանց զամենայն ինչ որ եղեւն*։ *Յայնժամ կոչեաց զնա տէրն իւր և ասէ*։ *Ծառայ չար*, *զամենայն զպարտսն քո թողի քեզ*, *վասն զի աղաչեցեր զիս*, *իսկ արդ*, *ո՞չ էր պարտ և քեզ ողորմել ծառայակցին քում*, *որպէս և ես քեզ ողորմեցայ*։ *Եւ բարկացեալ տէրն նորա մատնեաց զնա դահճաց*, *մինչև հատուսցէ զամենայն զպարտսն*։ Մատ. ԺԸ։

ԱՌԱԿ ԱՅԳՒՈՅ

Այր ոմն տանուտէր ել ընդ առաւօտս (ահփաաանց) ի վարձու ունել (վօրյէօվ բանել) *մշակս այգւոյ իւր*, և *արկ* վարձս *մշակացն* աւուրն դահեկան (օրը բէկ դահնէկան վօրյէ կօրէօյ), և *առաքեաց զնոսա յայգի իւր*։ *Եւ ելեալ* զերրորդ ժամու (ժամը ներէ+էն օրէնները) *ետես այլս զի կային դատարկք ի հրապարակս*, *ասէ և ցնոսա*․ *Երթայք և դուք յայգի իմ*, և *որ ինչ արժանն իցէ տաց ձեզ*։ *Գնացին և նոքա*։ *Եւ դարձեալ ելեալ տանուտեառնն զվեց ժամու և զինն ժամու արար այնպէս*։ *Եւ զմետասաներորդ ժամու ելեալ ետես այլս զի կա—*

յին դատարկք, և ասէ ցնոսա. Ընդէ՞ր կայք աստ զօրս ցերեկ (բոլըր ցիրկիը) դատարկք։ Ասէ ցնոսա տանուտէրն. Երթայք եւ դուք (դուք ալ) յայգին, և որ ինչ արժան է առնուցուք։ Եւ իբրև երեկոյ եղև, ասէ տէր այգւոյն ցգաւառապետ (փոփեկ) իւր. Կոչեա զմշակսն և տուր նոցա վարձս սկսեալ ի յետնոցն մինչև ցառաջինսն։ Իբրև եկին որ զմետասաներորդ ժամուն (ժամը տասնմէկիններըը), առին մեն մի դահեկան (մէյմէկ դահեկան)։ Եկեալ և առաջինքն համարէին (կը կարծէին) թէ աւելի առնուցուն, և առին մէն մի դահեկան և նոքա։ Իբրև առին, տրտնջէին զտանուտեառնէն և ասէին, Դոքա յետինքդ մի ժամ գործեցին, և հաւասարակորդս (հաւասար) արարեր զդոսա մեզ որ զծանրութիւն աւուրն բարձաք (կրեցինք) և զտօթ։ Նա պատասխանի ետ միում ինոցանէ, և ասէ. Ընկեր, չզրկեմ զքեզ (անիրաւութիւն չեմ ըներ)։ ո՞չ դահեկանի միոյ սակ արկեր (ձեն կորեցիր) ընդ իս. առ զքոյդ և երթ. չիցէ՞ ինձ իշխանութիւն յիմս առնել զինչ և կամիմ։ Մատթ. Ի։

ԱՅԼ ԱՌԱԿ ԱՅԳՒՈՅ

Այր մի էր տանուտէր որ տնկեաց այգի և ցանգով պատեաց զնա, և փորեաց ի նմա հնձան, և շինեաց աշտարակ, և ետ զնա ցմշակս, և գնաց ի տար աշխարհ (հեռու երկիր)։ Իբրև մերձեցաւ ժամանակ պտղոյ, առաքեաց զծառայս իւր առ մշակսն առնուլ զպտուղս նորա։ Եւ կալեալ մշակացն զծառայս նորա, զոմն տանջեցին, զոմն սպանին, զոմն քարկոծեցին, (մէկը փանջեցին, մէկը սպաննեցին, եւն)։ Դարձեալ առաքեաց այլ ծառայս, բազումս քան զառաջինսն, և արարին նոցա նոյնպէս։ Յետոյ առաքեաց առ նոսա զորդի իւր և ասէ. Թերևս ամաչեսցեն յորդւոյ աստի իմմէ։ Իսկ մշակքն իբրև տեսին զորդին, ասեն ընդ միտս (կըսեն+

ճըքնոյ ըօքի) • Սա է ժառանգն, եկայք սպանցուք զսա և կալցուք (տանատե) զժառանգութիւն սորա ։ Եւ առեալ հանին զնա արտաքոյ քան զայգին և սպանին ։ Մատթ. ԻԱ ։

ԱՌԱԿ ՀԱՐՍԱՆԵԱՑՆ

Թագաւոր մի էր որ արար հարսանիս որդւոյ իւրում և առաքեաց զծառայս իւր կոչել զհրաւիրեալսն ի հարսանիս, և նոքա ոչ կամեցան գալ ։ Դարձեալ առաքեաց այլ ծառայս և ասէ • Ասացէք հրաւիրելոցն • Ահաւասիկ զճաշ իմ պատրաստեցի, զուարակք իմ (ծօ–փուղ եղ) պարարակք (պէօլք) զենեալ են, և ամենայն ինչ պատրաստ է, եկայք ի հարսանիսս ։ Եւ նոքա յուլացեալ (տանտանղըքըլ) գնացին մի յագարակ իւր, և մի ի վաճառ իւր (տարլափարքի, ֆուրծիի), և այլք կալան զծառայս նորա, թշնամանեցին (ոնօրքեցին) և սպանին ։ Իսկ Թագաւորն լքրեւ լուաւ, բարկացաւ և առաքեաց զզօրս իւր, և սատակեաց զսպանողսն զայնոսիկ և զքաղաքս նոցա այրեաց ։ Յայնժամ ասէ ցծառայս իւր • Հարսանիքս պատրաստ են, և հրաւիրեալքն չէին արժանի • արդ, երթայք յանցս ճանապարհաց (ծամբա գլուխները), և զորս միանգամ գտանիցեք (դուղ ու քոնէ) կոչեցէք ի հարսանիսս ։ Եւ ելեալ ծառայքն ի ճանապարհս, ժողովեցին զամենեսեան զոր և գտին, զչարս և զբարիս, և լցան հարսանիքն բազմականօք ։ Եւ մտեալ Թագաւորն հայել զբազմականօքն (հըրա–էքէօ–ընէրը ընէլ), ետես անդ այր մի որ ոչ էր զգեցեալ հանդերձ հարսանեաց, և ասէ ցնա • Ընկեր, զիա՛րդ մտեր այսր, զի ոչ ունէիր հանդերձ հարսանեաց • և նա պապանձեցաւ ։ Յայնժամ ասէ Թագաւորն ցսպասաւորսն • Կապեցէք զոտս զդորա և զձեռս, և հանէք զդա ի խաւարն արտաքին ։ Մատթ • ԻԲ ։

ԱՌԱԿ ՏԱՍՆ ԿՈՒՍԱՆԱՑ

Տասն կուսանք առեալ զլապտերս իւրեանց ելին ընդ առաջ փեսայի և հարսին։ Հինգն ի նոցանէ յիմարք (անխելք) էին, և հինգն՝ իմաստունք։ Յիմարքն առին զլապտերս իւրեանց, և ձէթ ընդ իւրեանս ոչ բարձին (չառին իրենց հետ)․ իսկ իմաստունքն առին և ձէթ ամանօք ընդ լապտերս իւրեանց։ Ի յամել փեսային ննջեցին (մրափել, քունը գալ) ամենեքեան և ի քուն մտին (քունը տանիլ)։ Ի մէջ գիշերի եղեւ բարբառ (ձայն), Ահա փեսայ գայ, արիք ընդ առաջ նորա (դիմաւորեցէք)։ Յայնժամ յարեան ամենայն կուսանքն․ և կազմեցին (պատրաստել, շտկել) զլապտերս իւրեանց։ Ասեն յիմարքն ցիմաստունսն․ Տուք մեզ յիւղոյդ ձերմէ, զի ահա շիջանին լապտերքս մեր։ Պատասխանի ետուն իմաստունքն և ասեն․ Գուցէ ոչ իցէ մեզ և ձեզ բաւական․ այլ երթայք ի վաճառականս և գնեսջիք ձեզ։ Իբրեւ նոքա գնացին գնել, եկն փեսայն և պատրաստքն մտին ընդ նմա ի հարսանիսն, և փակեցաւ դուռնն։ Յետոյ գան և այլ կուսանքն և ասեն․ Տէր, տէր, բաց մեզ։ Նա պատասխանի ետ և ասէ․ Ոչ գիտեմ (չեմ ճանչնար) զձեզ։ Մատթ․ ԻԵ։

ԹԷ ՊԱՐՏ Է ՅԱՐԳԵԼ ԶՔԱՆՔԱՐՆ

Այր մի գնացեալ ի տար աշխարհ, կոչեաց զծառայս իւր և ետ նոցա զինչս իւր։ Ումեմն ետ հինգ քանքար, և ումեմն՝ երկուս, և ումեմն՝ մի, իւրաքանչիւր ըստ իւրում կարի, և գնաց։ Զոգաւ վաղվաղակի որ առ զհինգն (հինգը առնողը), գործեաց (գործ բռնեց) նոքօք և շահեցաւ այլ եւս հինգ։ Նոյնպէս և որ զերկուսն առ՝ շահեցաւ այլ եւս երկուս․ և որ զմին առ՝ գնաց փորեաց զերկիր, և թաքոյց զարծաթ տեառն

իւրոյ։ Յետ բազում ժամանակի գայ տէր ծառայիցն այնոցիկ, և առնէ համարս (հաշիւ կը տեսնէ) ի մէջ նոցա։ Մատուցեալ որ զհինգ քանքարն առ՝ մատոյց այլ ևս հինգ քանքար և ասէ. Տէր, հինգ քանքար ետուր ցիս, արդ ահաւասիկ հինգ այլ ևս քանքար ի վերայ շահեցայ։ Ասէ ցնա տէրն իւր. Ազնիւ, ծառայ բարի և հաւատարիմ, որովհետև ի սակաւուդ հաւատարիմ ես, ի վերայ բազմաց կացուցից զքեզ. մուտ յուրախութիւն տեառն քո։ Մատուցեալ և որոյ զերկուս քանքարսն առեալ էր՝ ասէ. Տէր, երկուս քանքարս ետուր ցիս, ահաւասիկ երկուս ևս այլ քանքարս ի վերայ շահեցայ։ Ասէ ցնա տէրն իւր. Ազնի՛ւ, ծառայ բարի և հաւատարիմ, որովհետև ի սակաւուդ հաւատարիմ ես, ի վերայ բազմաց կացուցից զքեզ. մուտ յուրախութիւն տեառն քո։ Մատուցեալ և որոյ զմի քանքարն առեալ էր՝ ասէր. Տէր, գիտէի զի այր մի խիստ ես, հնձես զոր ոչ սերմանեցեր, և ժողովես ուստի ոչ սփռեցեր (չցանածը կը հնձես, չցրուած տեղէն կը ժողվես), երկեայ, գնացի և թաքուցի զքանքարն քո յերկրի (գետինը). արդ՝ ահաւասիկ քոյդ ցքեզ։ Պատասխանի ետ տէրն և ասէ ցնա. Ծառայ չար և վատ (ա-ղէկոր, ծոյլ) գիտէիր թէ հնձեմ ուստի ոչ սերմանեցի, և ժողովեմ ուստի ոչ սփռեցի, պարտ էր քեզ արկանել զարծաթդ իմ (դրամը) ի սեղանաւորս (սառրաֆ), և եկեալ ես տոկոսեօք պահանջէի զիմն։ Արդ, առէք ի դմանէ զքանքարդ և տուք այնմ որ ունի զտասն քանքարն. զի ամենայնի որ ունիցի (ամէն ունեցողին)՝ տացի և յաւելցի. և որ ոչն ունիցի, եւ զոր ունիցին՝ բարձցի ի նմանէ (չունեցողին ունեցածն ալ առնուի)։ Մատթէոս ԻԵ։

ԱՌԱԿ ԱՆԻՐԱՒ ՄՇԱԿԱՑՆ

Այր մի տնկեաց այգի և ած չուրջ (ածել չուրջ · պօտել) զնովաւ ցանգ, և գուբ հնձան փորեաց և շինեաց աշտարակ, և ետ զնա մշակս և գնաց ի տար աշխարհ *(օտար, հեռու երկիր)։ Եւ առաքեաց առ մշակսն ի ժամանակի ծառայ մի, զի ի մշակաց անտի առցէ ի պտղոյ այգւոյն։ Եւ նոքա կալեալ՝* զան հարին *(ծեծեցին) զնա և արձակեցին ունայն։ Դարձեալ առաքեաց առ նոսա այլ ծառայ, և զնա* կառափնատեցին *([illegible]) և արձակեցին անարգեալ։ Եւ դարձեալ այլ առաքեաց, և զնա սպանին. և զբազում այլս՝ զոմանս* հարկանէին *(զարնել, ծեծել) և զոմանս սպանանէին։ Ապա որդի մի էր իւր սիրելի, զնա առաքեաց առ նոսա յետոյ, և ասէ. Թերևս ամաչեսցեն յորդւոյ աստի իմմէ։ Իսկ մշակքն, իբրև տեսին զնա թէ գայ, ասեն ցմիմեանս. Սա է ժառանգն, եկայք սպանցուք զսա, և մեր լիցի ժառանգութիւնն։ Եւ կալեալ զնա սպանին և հանին արտաքոյ այգւոյն։ Արդ՝ զի՞նչ արասցէ տէր այգւոյն. եկեսցէ և* կորուսցէ *(ջնջանէ) զմշակսն, և տացէ զայգին ի ձեռս այլոց։ Մարկ.* ԺԲ։

ԱՌԱԿ ԱՆԱՌԱԿ ՈՐԴՒՈՅՆ

Առն միոջ էին երկու որդիք։ Ասէ կրտսերն *(պզտիկը) ի նոցանէ ցհայրն. Հայր, տուր ինձ բաժին որ անկանի յընչիցդ. և նա բաժանեաց նոցա* զկեանսն *(ունեցածը, ինչքը)։ Յետ ոչ բազում աւուրց ժողովեալ զամենայն կրտսերոյն՝ գնաց* յաշխարհ *(երկիր) հեռի և անդ* վատնեաց *(մսխեց) զինչս իւր, զի կեայր անառակութեամբ։ Իբրև սպառեաց զամենայն, եղև սով սաստիկ յաշխարհին յայնմիկ, և սկսաւ ինքն* չքաւորել *(կարօտ ըլլալ), և գնացեալ յարեցաւ ի մի ումն ի*

քաղաքացւոց աշխարհին այնորիկ. և նա յղեաց (ղրկեց) զնա յագարակ իւր արածել խոզս։ Ցանկայր նա անդր, և առ ի չգոյէ կերակրոյ ցանկայր լնուլ զորովայն իւր յեղջերէն զոր խոզքն ուտէին, և ոչ ոք տայր նմա։ Եւ եկեալ ճորա ի միտս իւր (իր՝ իրեն գալով) ասէ. Քանի՛ վարձկանք (վարձով բանւորներ) իցեն ի տան հօր իմոյ հացալիցք, և ես աստ սովամահ կորնչիմ. յարուցեալ գնացից առ հայր իմ և ասացից ցնա. Հայր, մեղայ, ոչ եւս եմ արժանի կոչել որդի քո, արա զիս իբրեւ զմի ի վարձկանաց քոց։ Եւ յարուցեալ եկն առ հայր իւր, և մինչդեռ հեռագոյն էր նա, ետես զնա հայրն և գթացաւ, յարեաւ և ընթացաւ ընդ առաջ, անկաւ զպարանոցաւ նորա և համբուրեաց զնա։ Ասէ ցնա որդին. Հայր, մեղայ առաջի քո, ոչ եւս եմ արժանի կոչել որդի քո։ Յայնժամ ասէ հայրն ցծառայս իւր, Վաղվաղակի հանէք զպատմուճանն առաջին և ագուցէք (ագուցանել, հագցնել) նմա, և տուք զմատանին ի ձեռն նորա և կօշիկս յոտս նորա, և ածէք զեզն պարարակ, զենէք, կերիցուք և ուրախ լիցուք։ Եւ սկսան ուրախ լինել։ Եւ էր երէց (մեծ) որդի նորա յագարակի. և մինչդեռ գայր և մերձ եղեւ ի տունն, լուաւ զձայն երգոցն և զպարուց, և կոչեցեալ առ ինքն զմին ի ծառայիցն հարցանէր թէ զի՞նչ իցէ այն։ Եւ նա ասէ ցնա. Զի եղբայր քո եկեալ է, և եզեն հայր քո զեզն պարարակ, զի ողջամբ (ողջ առողջ) ընկալաւ զնա։ Բարկացաւ որդին երէց և ոչ կամէր մտանել, և հայրն ելեալ արտաքս աղաչէր ըզնա։ Նա պատասխանի ետ ցհայրն. Այս քանի՛ ամք են զի ծառայեմ քեզ, և երբէք զպատուիրանաւ քով ոչ անցի (հրամանէդ դէմ չելայ). ուլ մի երբէք ոչ ետուր ինձ զի ուրախ եղէց ընդ բարեկամս իմ. յորժամ եկն որդիդ քո այդ որ եկեր զկեանս քո ընդ պոռնիկս, զեներ դմա զեզն պարարակ։ Ասէ ցնա հայրն, Որդ-

եակ, դու հանապազ ընդ իս ես, և ամենայն որ ինչ իմ է՝ քո է. այլ ուրախ լինել և խնդալ պարտ էր, զի եղբայր քո այս մեռեալ էր և եկեաց, կորուսեալ էր և գտաւ։ Ղուկ. ԺԵ։

ԱՌԱԿ ՏՆՏԵՍԻՆ

Այր մի էր մեծատունն (Հարուստ) որոյ էր տնտես, և եղեւ զնմանէ ամբաստանութիւն որպէս թէ վատնիցէ զինչս տեառն իւրոյ։ Կոչեաց զնա տէր նորա և ասէ ցնա. Զի՞նչ է այս զոր լսեմս զքէն. տուր զհամար տնտեսութեան քո, զի ոչ եւս կարես լինել տնտես։ Ասէ ընդ միտս իւր (ինքն իրեն կ՚ըսէ) տնտեսն. Զի՞նչ գործեցից (ի՞նչ ընեմ), զի տէր իմ հանէ (կ՚առնէ) զտնտեսութիւնս. գործել ոչ կարեմ, մուրանալ ամաչեմ. գիտեմ զինչ արարից, զի յորժամ ի բաց լինիցիմ (Ձեր-ձակիմ) ի տնտեսութենէս, ընկալցին զիս ի տունս իւրեանց։ Եւ կոչեցեալ առ ինքն մի ըստ միոջէ զամենեսին ի պարտապանաց տեառն իւրոյ, ասէ ցառաջինն. Քանի՞ ինչ պարտիս տեառն իմում. Եւ նա ասէ, Հարեւր մար (չափ է) ձիթոյ։ Ասէ ցնա տնտեսն, Կալ զգիր քո (տոմսակդ առ), և նիստ գրեա վաղվաղակի յիսուն։ Դարձեալ ասէ ցմեւսն. Դու քանի՞ ինչ պարտիս։ Եւ նա ասէ, Հարեւր քոռ ցորենոյ։ Եւ ասէ ցնա տնտեսն, Կալ զգիր քո, և նիստ գրեա ութսուն։ Եւ գովեաց տէրն զտնտեսն անիրաւութեան (անիրաւ), զի իմաստութեամբ արար։ Ղուկ. ԺԶ։

ԱՌԱԿ ՄԵԾԱՏԱՆ

Այր ոմն էր մեծատուն, և ագանէր բեհեզս (բարակ, ազնիւ կտաւ) և ծիրանիս, և ուրախ լինէր հանապազ առատապէս։ Եւ աղքատ ոմն, անուն Ղազարոս (Ղազարոս անունով) անկեալ դնէր (պառկած կենար) առ

դրան նորա վիրաւորեալ, և ցանկայր լնուլ զորովայն իւր ի փշրանացն որ անկանէին ի սեղանոյ մեծատանն. այլ և շունք եւս գային և լիզուին զվէրս նորա։ Եւ եղեւ մեռանել (ղօփանեյօ օր մեռաւ) աղքատին և տանել զնա հրեշտակաց ի գոգն Աբրահամու։ Մեռաւ և մեծատունն և թաղեցաւ, և ի դժոխսն ամբարձ զաչս իւր մինչ ի տանջանսն էր, ետես զԱբրահամ ի հեռաստանէ և զՂազարոս ի գոգ նորա հանգուցեալ (հանգստացած)։ Աղաղակեաց մեծատունն և ասէ. Հայր Աբրահամ, ողորմեաց ինձ, և առաքեա զՂազարոս զի թացցէ (ընդէ) զծագ (ծայր) մատին իւրոյ ի ջուր, և զովացուսցէ զլեզու իմ, զի պապակիմ (չոր ծարաւած ըլլալ) ի տապոյ (տաքութենէն) աստի։ Ասէ ցնա Աբրահամ, Որդեակ, յիշեա զի ընկալար անդէն (հոն) զբարիս քո ի կեանս քում, և Ղազարոս նոյնպէս (ընկալաւ) զչարչարանս. արդ, սա աստ մխիթարի, և դու այդր (հոդ) պապակիս. և ի վերայ այսր ամենայնի (բաց ասկէ) վիհ մեծ է ընդ մեզ եւ ընդ ձեզ (մեր և ձեր մէջ վերը անդունդ կայ). Եթէ կամիցի ոք աստի առ ձեզ անցանել, ոչ կարէ, և ոչ այտի (հոդկէ) ոք առ մեզ անցանել։ Ղուկ. ԺԶ։

ԱՌԱԿ ԴԱՏԱՒՈՐԻՆ

Դատաւոր մի էր ի քաղաքի ուրեմն, յԱստուծոյ ոչ երկնչէր և ի մարդկանէ ոչ ամաչէր։ Եւ այրի մի էր ի նմին քաղաքի, գայր առ նա և ասէր. Դատ արա ինձ յոսոխէ իմմէ (Թշնամույս հետ դատս տես)։ Եւ դատաւորն ոչ կամէր բազում ժամանակս։ Յետ այնորիկ ասէ ի մտի իւրում (ինք իրեն). Թէեւ յԱստուծոյ ոչ երկնչիմ և ի մարդկանէ ոչ ամաչեմ, գոնէ վասն աշխատ առնելոյ զիս այրւոյն արարից նմա դատ, զի մի խայտառ (բոլորովին, մինչև վերջը) եկեալ թախանձիցէ (շատ աղաչելով յանձնացնել) զիս։ Ղուկ. ԺԸ։

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԳՐՈՑՆ ՏՈՒԲԻԹԱՑ

Ես Տուբիթ զճանապարհս ճշմարտութեան գնացի և յարդարութեան զամենայն աւուրս կենաց իմոց․ և ողորմութիւնս բազումս արարի ես եղբարց իմոց և ազգին իմում որ ընդ իսն էին յերկրին Ասորեստանեայց ի Նինուէ։ Եւ յորժամ էի ես ի գաւառի իմում յերկրին Իսրայելի, և մինչդեռ մանուկն էի, ամենայն ազգն Նեփթաղիմայ հօրն իմոյ մերժեցան, ի բաց եղեն ի տաճարէն Երուսաղեմի, և ես միայն երթայի բազում անգամ անդր ի տօնս տարեկանաց․ զպտուղս և զտասանորդս զարդեանց (ջէպէ) տայի որդւոցն Ղեւեայ որք պաշտօնեայքն էին յԵրուսաղէմ․ և զերկրորդ տասանորդսն ժողովէի և վաճառէի, և երթայի ծախէի (ծախէ ընել) զայն ամենայն յԵրուսաղէմ և զերրորդն տայի որոց արժանն էր, որպէս պատուիրեաց մայր հօրն իմոյ, զի որբ մնացեալ էի ես ի հօրէ իմմէ։ Եւ յորժամ եղէ այր, առի ես ինձ կին ի զաւակէ հայրենեաց իմոյ և ծնայ ես ի նմանէ զՏուբի։ Եւ յորժամ գերի վարեցայ ի Նինուէ, ամենայն եղբարք իմ և ազգ իմ ուտէին ի հացէ անտի հեթանոսաց, և ես պահեցի զանձն իմ զի մի կերայց։ Եւ ետ ինձ Բարձրեալն շնորհս առաջի Նեմեսարայ և էի նորա վաճառական։ Երթայի ես ի Մարս․ և եղի ես ի պահեստի (պահ, տանըք ընել) առ Գաբաելայ յերկրին Մարաց արծաթոյ քանքարս տասն։ Եւ յորժամ մեռաւ Նեմեսար և թագաւորեաց Սենեքերիմ որդի նորա փոխանակ նորա, և զի էր խռով (խօվլըմըշըն) յամս նորա, ոչ եղեւ ինձ երթալ յերկիրն Մարաց։ Եւ յաւուրս Նեմեսարայ ողորմութիւնս բազումս առնէի ես եղբարց իմոց․ զհաց իմ տայի քաղցելոց և զձորձ իմ մերկոց, և զոր տեսանէի ես յազգէն իմմէ թէ մեռեալ էր և ընկեցեալ արտա–

քոյ պարսպին, Թաղէի. և կամ յորժամ սպանանէր զոք Սենեքերիմ արքայ յորժամ եկն փախստական ի Հրէաստանէ, գողանայի և Թաղէի զնոսա. վասն զի զբազումս կոտորեաց նա սրտմտութեամբ իւրով և յետոյ խնդիր արար (փնտռել) մարմնոց Թիականցն և ոչ եգիտ: Եւ եմուտ ոմն ի Նինուէացւոց անտի, և իմացուցանէր Թագաւորին վասն իմ զդիակունսն Թաղելոյ, և Թաքեայ, զի գիտացի եթէ խնդրեն սպանանել զիս. և զահի հարեալ փախստեայ գնացի. և յափշտակեցան ամենայն ինչք իմ և ոչ մնաց բնաւ ինչ բայց միայն կին իմ և Տուբի որդին իմ: Եւ ոչ անցին աւուրք յիսուն, մինչեւ սպանին զնա երկոքին որդիք նորա և փախեան նոքա ի լերինս Հայոց: Եւ Թագաւորեաց Ասորդան որդի նորա ընդ նորա. և կարգեաց նա զԱքիաքարոս որդի եղբօր իմոյ ի վերայ ամենայն իշխանաց Թագաւորութեան իւրոյ և ի վերայ ամենայն տան իւրոյ. և աղաչեաց Աքիաքարոս զԹագաւորն վասն իմ. և եկին դարձուցանել զիս, և եկի ես ի Նինուէ: Եւ էր Աքիաքարոս տակառապետ, և ամենայն գիր համարոյ ելի և մտի տան Թագաւորին ի ձեռին նորա էր: Եւ յորժամ եկի ես ի տուն իմ, ետուն ինձ զԱննա կին իմ և զՏուբի զորդին իմ:

Եւ ի տօնին մեծի արարին ինձ ճաշ մեծ, և բազմեցայ ուտել և ըմպել, և տեսի ես առաջի իմ խորտիկս բազմապատիկս և ասեմ ես ցորդին իմ. Երթ, ած դու յեղբարց մերոց յաղքատաց զորս և գտանես, և ես մնամ քեզ: Եւ եկն և ասէ. Հայր, մի ոմն յազգէս մերմէ որոյ թափեալ են (ինկած են) ոտք նորա, և անկեալ պճղունք (ոտքին Թաթերը) նորա, կայ ի հրապարակի անդ մեռեալ: Եւ իմ մինչչեւ էր ճաշակեալ, չոքայ առի զնա և բերի ի տուն իմ մինչեւ եմուտ արեգակն. և ընդ երեկս լուացայ և ուտէի զհաց իմ տրտմութեամբ, և լացի յոյժ. և յորժամ եմուտ արե-

դակն, փորեցի և թաղեցի զնա. և մերձաւորքն իմ այպն առնէին (ծաղրել) և ասէին. Արդ ո՞չ եւս երկնչի մեռանել վասն իրացս այսոցիկ. զի վասն որոյ հալածեցաւն՝ և դարձեալ եկեալ թաղէ զդիակունս։

Եւ ի նմին գիշերի դարձայ իբրեւ թաղեցի. և ննջեցի ես պղծեալ առ որմոյ գաւթին, և զերեսս իմ ոչ ծածկեցի։ Եւ ոչ գիտէի թէ ճնճղուկք նստէին յառաստաղս (ձողը) անդ. և աչօք բացօք ի վեր հայէի. և ծրտէին ճագքն ջերմաջերմ յաչս իմ. և երթեալ իմ առ բժիշկս, ոչինչ օգտեցայ. և Աքիաքարոս դարմանէր (կերակրել, նայել) զիս ռոճկօք (Թոշակ) իւրովք, և կինն իմ մանէր և գործէր ձեռօք իւրովք, և տայր տերանցն, և նոքա տային զվարձս նորա, և յաւելին և տուին նմա ուլ մի եւս։ Եւ յորժամ եկն նա առ իս, սկսաւ կայթել (կաքաւել խաղալ) ընդ նմա, և ասեմ ցնա. Ուստի՞ բերեր դու զուլդ զայդ. միթէ գողունի՞ (գողցուած բան) իցէ. տուր զդա անդր ցտեարս իւր, զի ոչ է ինձ օրէն ուտել զգողունի։ Եւ ասէ կինն իմ. Պատիւ (պարգեւ) ետուն ինձ վասն վարձուց իմոց. և ես ոչ հաւատացի նմա, այլ ստիպէի տալ զնա ցտեարս իւր և զամօթի հարկանէի. և նա ասէ ցիս. Ո՞ւր են այն ողորմութիւնք քո և արդարութիւն, զի ահաւասիկ յայտնի եղեն քեզ։ Եւ ես տրտմեցայ և լացի, և յարեալ կացի յաղօթս զայրագին սրտիւ։ (Քանզի և ի նմին խոկ աւուր էր լուեալ Տուբիթայ զիրսն որ էին անցեալ (պատահած էր) ընդ Սառրա ընդ դուստրն Ռագուելայ որ էր յԷկբատանս ի Մարաց գաւառին. զի նախատէին զաղջիկն աղախնայք հօր նորա, քանզի էր տուեալ զնա արանց եւթանց, և դեւն չար սպանանէր զարսն։ Եւ նախատէին զնա աղախնայք և ասէին. Ո՞չ իմանաս զի հեղձուցանես զարս քո. զի ահա եւթն այր առեր և ոչ ի միում վայելեցեր, արդ զմեզ զի՞ տանջես, ընդէ՞ր և ոչ դու ընդ նոսա կորեար։ Զայս

իբրեւ լուաւ աղջիկն, տրտմեցաւ յոյժ, և կամէր խեղդել զինքն. և ասէր. Մի եմ ես, միամօր հօրն իմում, որդ՝ եթէ զայս նախատինս առնեմ նմա, իջուցանեմ ես զծերութիւն նորա ցաւօք ի դժոխս։ Եւ կայր նա յաղօթս ընդ պատուհանն որ էր ընդդէմ Երուսաղեմի։ Եւ լսելի եղեն աղօթք երկոցունցն առաջի մեծին Հռափայելայ. և առաքեցաւ նա բժշկել զերկոսեան. Տուբիթայ կեղեւել (կեղեւ հանելու դեր հանել) զլուսնն (աչքի բէյազը) յաչաց նորա, և զՍառայի զդստերն Հռագուելի հանել զդեւն, և տալ զնա կին Տուբիայ որդւոյ Տուբիթայ, վասն զի Տուբիայ անկ իսկ էր (կ՚էյնոր) ժառանգել զնա, Նւ ի նմին ժամանակի դարձաւ Տուբիթ և եմուտ ի տուն իւր, և Սառա էջ ի վերնատանէ իւրմէ.

Եւ յաւուր յայնմիկ յիշեաց Տուբիթ զարծաթն զոր եդ առ Գաբայելայ ի Հռագիւս քաղաքի յերկրին Մարաց. և ասէ նա ի միտս իւր. Ես խնդրեցի մահ անձին իմոյ, ընդէ՞ր ոչ կոչեմ զՏուբիա զորդին իմ և ցուցանեմ նմա զամենայն մինչչեւ մեռեալ իցեմ։ Եւ կոչեաց զնա և ասէ ցնա. Որդեակ իմ, եթէ մեռանիցիմ ես, թաղեսջիր զիս, և մի անարգիցես և կամ անճտես առնիցես (երեսէ ձգել) զմայր քո, այլ պատուեսցես զնա զամենայն աւուրս կենաց քոց, և արասցես նմա զամենայն ինչ որ հաճոյ է նմա. և մի տրտմեցուցանիցես զնա, և յիշեսցես դու զի բազում ճգունս (նեղութիւն) կրեաց վասն քո յորժամ էիր դու յորովայնին. և յորժամ մեռանիցի, թաղեսցես զնա ընդ իս ի նմին շիրմի (գերեզման)։ Յընչից քոց առնիցես ողորմութիւնս. և մի ագահիցէ (խնայել) ակն քո յորժամ առնիցես դու զողորմութիւնսն, և մի դարձուցանիցես զերեսս քո յամենայն աղքատէ, և ի քէն ոչ դարձուսցէ Տէր Աստուած զերեսս։ Որչափ և իցէ քո՝ ըստ նմին բազմութեան արասցես զողորմութիւնսն. եթէ սակաւ իցէ

քո՝ ըստ սակաւին, և մի յապաղեսցես (դանդաղիլ) տա-
նել զողորմութիւնն, զի գանձս բարիս գանձեսցես
քեզ յաւուրն կենաց քոց. զի ողորմութիւնք փրկեն
ի մահուանէ։ Եւ մի՛ առնուցուս դու կին յազգէ օտարէ։
Վարձք վարձկանի ([illegible]) քո առ քեզ մի ագցին
([illegible]), այլ հա-
տուսցես դու առժամայն (անմիջապէս), և զոր ատես
դու՝ ումեք մի՛ առնիցես։ Գինի արբեցութեան (գինով-
ցելոյ) մի՛ ըմպիցես. մի երթայցես դու արբեալ (գինով)
ի ճանապարհ. ի հացէ քումմէ տացես քաղցելոց և
ի հանդերձէ քումմէ մերկոց։ Խորհուրդ յամենայն
մարդոյ խնդրեսցես, և մի արհամարհեսցես զամենայն
խորհուրդս պիտանեաց։ Եւ արդ, որդեակ իմ, յիշես-
ցես դու զամենայն պատուիրանս իմ զոր պատուիրեմ
ես քեզ. մի ջնջեսցին նոքա ի սրտէ քումմէ։ Եւ արդ,
ես ցուցանեմ քեզ զտասն քանքար արծաթոյն զոր
եդի ի պահ (պահ դնել) առ Գաբայելայ ի Հռագաւ
յերկիրն Մարաց։ Եւ մի երկնչիցիս, որդեակ, զի աղ-
քատացաք յոյժ. գոն քո բազում ինչք և ստացուածք,
եթէ երկնչիցիս դու յԱստուծոյ, և ի բաց լինիցիս
յամենայն մեղաց, և արասցես դու զհաճոյսն առաջի
նորա։

Պատասխանի ետ Տուբիա և ասէ ցնա. Հայր, ա-
րարից զամենայն ինչ զոր պատուիրեցեր ինձ. այլ ես
զիարդ կարացից գտանել զարծաթն, զի ոչ գիտեմ
զայրն. Եւ ետ նմա (Տուբիթ) զգիր (սէնէտ) առնն առ
որում կայր արծաթն յաւանդի. և ասէ ցնա, Խնդրեա
դու քեզ այր որ եկեսցէ ընդ քեզ. և ես տաց զվարձս
նորա մինչ կենդանիս եմ, և երթիցես առցես զարծաթն։
Եւ գնաց Տուբիա խնդրել ընդ իւր վարձուոր։ Եւ եգիտ
նա զՌափայէլ հրեշտակ, և նա ոչ գիտէր թէ ով իցէ
նա. և ասէ ցնա Տուբիա. Կարե՞ս գալ դու ընդ իս ի
Հռագաւ յերկիրն Մարաց. և կամ ե՞ս դու տեղեակ

խելամուտ տեղեացն ։ Ասէ ցնա հրեշտակն. Եկից ես ընդ քեզ. և՛ ճանապարհին տեղեակ եմ, և՛ ճանաչեմ զԳաբայէլ զեղբայրն մեր ։ Եւ ասէ ցնա Տուբիա. Մնա դու վայրիկ մի (քիչ մը տղեն) *աստէն մինչեւ մտից հարցից ես զհայրն իմ ։ Եւ ասէ ցնա (հրեշտակն). Երթ և մի* յամիցես (ողջունել) ։

Եւ եմուտ պատմեաց Տուբի հօրն. Աւասիկ գտի ընկեր որ գայ ընդ իս ։ Եւ ասէ ցնա հայր նորա. Կոչեա դու զնա առ իս զի գիտացից թէ յորմէ՞ ազգէ է նա, և կամ թէ հաւատարի՞մ է գալ ընդ քեզ ։ Եւ նա կոչեաց զնա ի ներքս, և ողջոյն ետուն միմեանց ։ Եւ ասէ ցնա Տուբիթ. Եղբայր, յորմէ՞ ի ցեղիցն մերոց ես դու, պատմեա ինձ ։ Եւ նա ասէ ցնա. Զազգատո՞հմ իմ խնդրես թէ վարձուոր որ երթայ ընդ որդւոյդ քում ։ Եւ ասէ ցնա Տուբիթ. Կամիմ, եղբայր, գիտել զազգն քո և զանուն ։ Եւ ասէ. Անուն իմ է Ազարիա Անանիա ։ Եւ ասէ ցնա Տուբիթ. Ողջ եկիր, եղբայր. և մի ցասնուր ինձ զի խնդրեցի զազգատոհմն քո գիտել. զի դու եղբայր իմ իսկ ես, ի բարի և յազնուական ազգէ ։ Այլ արդ, ասա դու ինձ. զի՞նչ տայցեմ քեզ վարձս. դրամ մի ցաւուր, և զոռճիկն (ուտելիք) *որպէս որդւոյ իմում, և յաւելից եւս ի վարձսն քո, եթէ ողջութեամբ դառնայցէք այսրէն ։ Եւ հաճոյ թուեցաւ նոցա առնել այսպէս ։ Եւ ասէ Տուբիթ. Պատրաստ լեր դու, որդեակ, ի ճանապարհ և յաջողեսցի ձեզ ։ Եւ պատրաստեաց մանուկն* զբոշակ (պաշար) *ճանապարհին ։ Եւ ասէ ցնա հայր նորա. Գնա դու, որդեակ, ընդ առնդ ընդ այդմիկ. այլ որ բնակեալն է յերկինս Աստուած՝ յաջողեսցէ զճանապարհ ձեր, և հրեշտակ նորա ուղեկից լիցի ձեզ ։ Եւ ելին գնացին երկոքեան ի միասին, և շուն պատանեկին ընդ նոսա ։ Եւ ասէ մայր նորա լալով. Տուբիթ, զի՞ արձակեցեր զորդեակն ի մէնջ. ո՞չ դա է ցուպ ծերութեան մերոյ.*

մտանել և ելանել առաջի մեր․ արծաթ արծաթոյ մի՛ ժամանեսցէ․ այլ եղիցի՞ փոխանակ որդեկին մերոյ․ քանզի որ պատրաստեալս է մեզ յԱստուծոյ՝ բաւական է մեզ։ Եւ ասէ ցնա Տուբիթ, Մի՛ լիցի քեզ տրտմութիւն, քոյր, զի ողջութեամբ եկեսցէ, և աչք քո տեսցեն զնա․ զի հրեշտակ նորա բարի առաջնորդեսցէ նմա և աջողեսցէ զճանապարհս նորա, և դարձցի այսրէն ողջութեամբ։ Եւ ապա դադարեաց մայրն ի լալոյ անտի, և նոքա գնացին ի ճանապարհն։

Եւ եկին ի գետն Դկղաթ (Տէճլէ), *և հանգեան առափամբն․ և պատանեակն էջ լուանալ յեզր գետոյն, և* վազեաց (ցատկեց) *ձուկն մի ի գետոյ անտի և կամէր կլանել զպատանեակն։ Եւ հրեշտակն ասէ ցպատանեակն․* Բուռն հար (բռնէ), *կալ զձուկնդ։ Եւ կալաւ պատանեակն զձուկնն և եհան զնա ի ցամաք։ Եւ ասէ ցնա հրեշտակն․ Բաց դու զփոր ձկանդ, և հան զսիրտդ և* զլեարդդ (ու ճիյէր) *և զլեղիդ, և դիր զգուշութեամբ։ Եւ արար պատանեակն որպէս և ասաց ցնա հրեշտակն․ և զձուկն* խորովեցին (կրակի վրայ եփել, քէպապ) *և կերան․ և ապա գնացին երկոքեան ի միասին, մինչև մօտ եղեն յԵկբատանս։*

Եւ ասէ պատանեակն ցհրեշտակն․ Ազարիա եղբայր, վասն ո՞յր բարձաք (առէք պահեցէք) *զսիրտս և զլեարդս և զլեղիս ձկանս։ Եւ ասէ ցնա․ Եթէ զոք ունի դեւ կամ այս պիղծ, զսիրտդ և զլեարդդ արժան է* ծխել (ծուխ-ծուխ ընել) *առաջի առնն կամ կնոջ, և այլ ոչ եւս դիւահարեսցէ․ և եթէ ոք ունի զլուսն յաչս իւր,* օծանի (քսել) *լեղեաւս և բժշկի։ Եւ իբրեւ մերձեցան նոքա ի Հռագաւ, ասէ հրեշտակն ցպատանեակն․ Եղբայր, այսօր* ունիմք մեք հանգչել (իջնենք հանգչինք) *առ Հռագուելայ, և նա ինքն ազգական է քո․ և է նորա դուստր և անուն է նորա Սառա․ արդ խօսեցայց ես վասն նորա զի տացէ զնա քեզ կին, զի քեզ անկ է ժա–*

ռանդութիւն աղջկանն · և դու միայն ես յազգէ նորա, և աղջիկն արդարեւ բարւոք է, զգաստ է և իմաստուն (խելքլը չըլուխը, թեմիզլ) · և արդ լուր ինձ և խօսեցայց ընդ հօր աղջկանն, և յորժամ դարձցուք մեք այսրէն ի Հռագուացւոց անտի, արասցուք քեզ զհարսանիսն, քանզի գիտեմ ես զի Հռագուէլ ոչ տացէ զնա առն օտարի · վասն զի և զժառանգութիւնն քեզ արժան է առնուլ քան ամենայն մարդոյ։ Յայնժամ ասէ պատանեակն ցհրեշտակն · Եղբայր Ազարիա, իմ այսպէս լուեալ է վասն աղջկանն, թէ տուեալ է զնա եւթն առն, և ամենեքեան նոքա մեռեալ են յառագաստի (հօքքին օ- ֆեօքին օննեօտը) անդ · և ես մի եմ, միամօր հօրն իմում · երկնչիմ, զուցէ (ղելլի օր) մտանիցեմ և մեռանիցիմ որպէս և առաջինքն · զի ունի զաղջիկն դեւ և սիրէ զնա, և ոչ մերձենայ մեղանչել (ֆեօնել) ումեք բայց միայն որոց մերձենանն առնուլ զնա կնութեան · արդ՝ եթէ առնեմ զայս, երկնչիմ · գուցէ իջուցանիցեմ ես զհայրն իմ և զմայրն իմ ցաւօք ի վերայ իմ ի գերեզման իւրեանց · և որդի այլ ոչ գոյ որ թաղէ զնոսա։ Եւ ասէ ցնա հրեշտակն · Ո՞չ յիշես դու զբանս պատուիրանաց հօր քոյ առնուլ քեզ կին յազգէ քումմէ · և արդ լուր դու ինձ, զի քեզ եղիցի նա ի կնութիւն, և վասն դիւին մի ինչ հոգար, զի ի գիշերիս յայսմիկ առցես դու զնա քեզ կնութեան։ Եւ յորժամ մտանիցես յառագաստ անդր, առցես դու աճիւնախառն կրակ (թէօզ) յորում խունկք ծխեալ են, և դիցես դու ի վերայ նորա ի սրտէ անտի և ի լերդէ ձկանն, և ծխեսցես · և հոտոտիցէ (հօրբը տանալ) դեւն և փախիցէ, և ոչ եւս դարձցի անդրէն։ Եւ յորժամ մտանիցէք դու և աղջիկն ի սենեակ անդր, յարիջիք դուք երկոքեան և գոչեսջիք առ ողորմածն Աստուած լալով մեծաւ, և կեցուսցէ զձեզ և ողորմեսցի ձեզ, զի քեզ էր նա պատրաստեալ ի սկզբանէ, և դու ապրեցուսցես զնա, և նա ընդ քեզ

եկեսցէ ի տուն քո, և կարծեմ թէ որդիք լինին քո ի նմանէ։ Եւ իբրև լուաւ զայս Տուբիա, անկաւ նմա գութ (սէր կապեց) ընդ աղջկանն, և ոգի նորա կցեցաւ ի սէր նորա (հոգին անոր սիրով կապուեցաւ)։

Եւ եկին նոքա յԵկբատանս և մտին նոքա ի տուն Հռագուելայ, և ել ընդ առաջ (դիմաւորել) նոցա Սառա և ողջոյն ետ նոցա և նոքա նմա· և տարաւ զնոսա ի տուն։ Եւ Հռագուէլ ասէ ցՀեդնա ցկին իւր· Տեսանե՞ս զի նման է պատանեակս Տուբիթայ եղբօրորդւոյն իմոյ։ Եհարց զնոսա Հռագուէլ և ասէ· Ուստի՞ էք, եղբարք։ Եւ ասեն ցնա· Յորդւոցն Նեփթաղիմայ եմք որք գերեալն են ի Նինուէ։ Եւ ասէ ցնոսա· Ճանաչէ՞ք դուք զՏուբիթ զեղբայր մեր։ Եւ ասեն· Ճանաչեմք։ Եւ ասէ ցնոսա· Ո՞ղջ է։ Եւ նոքա ասեն· Ողջ է։ Եւ ասէ Տուբիա· Հայր իմ է։ Եւ յարուցեալ վաղվաղակի Հռագուէլ համբուրեաց զնա և ելաց յոյժ, և օրհնեաց զնա և ասէ ցնա· Բարւոյ և բարերարի առն որդի։ Եւ իբրև լուաւ թէ Տուբիթայ կացին աչքն (կոյրնալ), ելաց· և տրտմեցաւ ինքն և Հեդնա կին իւր և Սառա դուստր նոցա։ Եւ ընկալան և հանգուցին զնոսա մեծաւ ուրախութեամբ, և զենին նոցա խոյ մի ի խաշանց, և յօրինեցին եդին առաջի նոցա խորտիկս բազումս։ Եւ ասէ Տուբիա ցՌափայէլ· Եղբայր Ազարիա, արդ խօսեաց դու վասն որոյ խօսէիրն ի ճանապարհի անդ, զի եղիցի այնպէս։ Եւ դարձոյց (Ռափայէլ) զբանսն անդրէն առ Հռագուէլ։ Եւ ասէ Հռագուէլ ցՏուբիա· Կեր, արբ և ուրախ լեր, զի քեզ անկ է առնուլ զմանուկն իմ։ բայց ասեմ քեզ զճշմարիտն· ետու ես զմանուկդ իմ եւթն առն· և յորժամ կամէին մտանել առ դա, մեռանէին ի նմին գիշերի։ Եւ ասէ Տուբիա· Ոչինչ ճաշակեմ ես աստ, մինչև հաստատէք առ իս զիրսդ։ Եւ ասէ Հռագուէլ· Առ զնա քեզ ըստ օրինաց, զի դու եղբայր ես աղջկանն, և քեզ լիցի։ Եւ

կոչեաց նա զՍառա զդուստր իւր, և կալաւ նա զձեռանէ նորա և ետ զնա Տուբիայ կնութեան և ասէ. Ահաւասիկ ըստ օրինացն Մովսիսի առ դու զնա, և տար դու զնա առ հայր քո, և օրհնեաց զնոսա: Եւ կոչեաց նա զՀեդնա զկին իւր, և առեալ նա տայր աղջկանն զամենայն ինչս զտանն. և հաստատէր մուրհակօք (սենէտ) և կնքէր. և ապա սկսան ուտել և ըմպել և ուրախ լինել: Եւ կոչեաց Հռագուէլ զՀեդնա զկին իւր և ասէ ցնա. Քոյր, պատրաստեա դու զմեւս սենեակն և տար անդր զաղջիկն: Եւ արար որպէս և հրամայեաց նմա. և տարաւ զնա անդր: Եւ ելաց աղջիկն. և ընջէր մաքրէր մայրն զարտասուս աղջկանն, և ասէր ցնա. Քաջալերեաց, դուստր. Տէր երկնից և երկրի տացէ քեզ ուրախութիւն և ցնծութիւն փոխանակ տրտմութեանս այսորիկ. քաջալերեաց, դուստր, քաջալերեաց: Եւ իբրև կատարեցին նոքա ուտել զընթրիսն, տարան զՏուբիա առ աղջիկն: Եւ իբրև եմուտ, յիշեաց նա զբանսն Հռափայելի, և առ նա զաճիւնախառն զկրակն խնկոցն, և եդ ի վերայ նորա զսիրտ ձկանն և զլեարդն, և ծխեաց: Եւ իբրև հոտոտեաց դեւն զհոտն զայն, փախեաւ ի վերին կողմն սահմանացն Եգիպտոսի, և կապեաց զնա հրեշտակն: Եւ ննջեցին երկոքին ի միասին ի գիշերին յայնմիկ: Եւ չոքաւ Հռագուէլ և փորեաց նմա (Տուբիա) գերեզման, քանզի երկնչէր եթէ գուցէ և նա մեռանիցի: Եւ եկն Հռագուէլ ի տուն իւր, և ասէ ցՀեդնա ցկին իւր. Յղեա դու զմի ոք յաղախնեաց այտի, և տեսցէ թէ կենդանի՞ իցէ (պատանեակն). ապա թէ ոչ թաղեսցուք զնա և մի ոք գիտասցէ: Եւ եմուտ աղախինն և ետես զերկոսեան զի ննջէին. և ել նա և պատմեաց նոցա եթէ կենդանի են: Եւ հրամայեաց Հռագուէլ ծառայից իւրոց խնուլ (գոցել ծակ մը, կա̄) զգերեզմանն. և արար նոցա հարսանիս աւուրս չորեքտասան: Եւ ասէ

ցնա Հռագուէլ. Երդմնեցուցանեմ զքեզ, մի գնասցես դու աստի մինչև կատարեսցին աւուրք չորեքտասան հարսանեացս, և ապա առցես դու զկէս ընչից իմոց, և երթիցես դու և աղջիկդ խաղաղութեամբ առ հայր քո, և զայլն ամենայն առնուցուք, յորժամ մեռանիցիմք ես և կինս իմ:

Եւ կոչեաց Տուբի զՀռափայէլ և ասէ ցնա. Եղբայր Ազարիա, առ դու ընդ քեզ պատանի մի և երկուս ուղտս և գնա դու ի Հռագիս Մարաց առ Գաբայէլ, և բեր դու ինձ զարծաթն անտի, և զնա առեալ ընդ քեզ ածցես ի հարսանիսս, վասն զի երդուաւ Հռագուէլ եթէ Ոչ արձակեմ զքեզ: Արդ հայր իմ համարէ (Բունէ) զաւուրսս. և եթէ յամեմք, մեծաւ վշտօք ի տրտմութեան լինի: Եւ գնաց Հռափայէլ և հանգեաւ առ Գաբայելայ, և ետ նմա զգիր մուրհակին, և եբեր զպարկսն (տոպրակ) կնքօքն հանդերձ և ետ ցՏուբի: Եւ կանխեալ (կանուխ ելլէլ) ընդ առաւօտն գնացին նոքա ի հարսանիս անդր, և հանձեցաւ Տուբիա ընդ կինն իւր:

Եւ Տուբիթ հայր նորա զամենայն աւուրս խորհէր ի սրտի իւրում: Յորժամ կատարեցան աւուրք ժամանակելոյն (որոշուած օրերը) և ոչ եկին, ասէ. Արդեւք մեռա՞ւ Գաբայէլ և ոչ ոք ետ նմա զարծաթն, և նա ոչ կամի գալ յամօթոյ: Եւ տրտում էր նա յոյժ, և ասէ ցնա կին նորա. Կորեաւ մանուկն զի յամեաց այսչափ: Եւ սկսաւ լալ և ողալ զնա և ասէ. Ոչ է ինձ պիտոյ, որդեակ իմ, և ոչինչ. այլ ընդէ՞ր բնաւ թողի զքեզ, լոյս աչաց իմոց: Եւ ասէ ցնա Տուբիթ. Լուռ լեր և մի հոգար (վիշտ ընել). ողջ է մանուկն: Եւ նա ասէ ցնա. Դու լուռ լեր և մի խաբեր զիս. զի մանկիկն իմ կորեաւ: Եւ ելանէր զօրհանապազ (ամէն օր) և դայր ի ճանապարհն ընդ որ գնացինն. ի տուէ հաց ոչ ուտէր և ի գիշերի ոչ դադարէր ի ողալոյ զՏուբիա զորդին իւր: Իբրև կատարեցան աւուրք չորեքտասան հարսան-

եացն զոր երդուաւ Հռագուէլ լինել նոցա անդ, ասէ Տուբիա ցՀռագուէլ. Արձակեա զիս, զի հայր իմ և մայր իմ ոչ ևս ակն ունին տեսանել զիս ի հոգոց (վէ-վէ-է). Եւ ասէ ցնա աներն իւր. Կաց մնա դու աստ առ իս, և ես յղեցից մանկունս առ հայր քո, և նոքա պատմեսցեն նմա վասն քո: Եւ ասէ Տուբիա. Ոչ է այդպէս, այլ արձակեսցես զիս առ հայր իմ: Եւ յարեաւ Հռագուէլ և ետ նմա զՍառա զկին նորա և զկէս ընչից իւրոց և զծառայ և զաղախին և զանասուն և զարծաթ, և օրհնեաց զնոսա և արձակեաց և ասէ. Յաջողեսցէ ձեզ, որդեակ իմ, Տէր Աստուած երկնից մինչչեւ մեռեալ իցեմ ես: Եւ ասէ ցդուստր իւր. Պատուեա դու, որդեակ իմ, զսկեսուրն քո և զսկեսրայրն, քանզի արդ նոքա են քո հայր և մայր. և ի բաց (հեռու) լեր դու ի բանից ամբաստանութեան, և համբուրեաց զնա: Եւ Հեդնա ասէ ցՏուբիա. Եղբայր սիրելի, ողջութեամբ տարցի զքեզ Տէր ի տուն քո, և տացէ տեսանել ինձ զաւակ ի Սառայէ դստերէս իմմէ, զի բերկրեցայց (շատ ուրախ ըլլալ) ես առաջի Տեառն: Եւ արդ յանձն առնեմ զսա քեզ, մի տրտմեցուցանիցես զսա յետ այսորիկ: Եւ Տուբիա երթայր և օրհնէր զԱստուած, զի յաջողեաց Տէր զճանապարհ նորա: Իբրեւ մերձեցան նոքա ի Նինուէ, ասէ Հռափայէլ ցՏուբիա. Արդ ո՞չ գիտես դու եղբայր, ո՛րպէս թողեր դու զհայր քո. եկ, յառաջ անցցուք մեք քան զկինդ քո և պատրաստեսցուք մեք զտունն. և առ դու ի ձեռն զլեղի ձկանն: Եւ գնացին նոքա, և եկն շունն զկնի նոցա: Եւ Աննա նստէր և սպասէր ըստ սովորութեանն ճանապարհի որդւոյն իւրոյ. և ետես նա զնա զի գայր և ասէ ցայր իւր. Ահաւասիկ որդին քո գայ, և այրն որ ընկերն չոքաւ՝ ընդ նմա: Եւ ասէ Հռափայէլ ցՏուբիա. Գիտեմ ես զի բանան աչք հօր քոյ. արդ՝ օծ (քսէ) շուրջ զաչօքն զլեղիդ, և նա կսկծեցուսցէ (ցաւցնել) և հանցէ զլուսնն

յաչաց նորա, և տեսանիցէ։ Եւ ընթացաւ ընդ առաջ Աննա և անկաւ ի վերայ պարանոցի որդւոյն իւրոյ, և ասէ ցնա․ Տեսի ես զքեզ, որդեակ իմ, արդ այսուհետեւ անհոգ մեռանիմ․ և լացին երկոքին։ Եւ Տուբիթ ելանէր արտաքոյ առ դրունսն, խարխափէր (մութը մէջը կամ կոյրի պէս երթալ), գլորէր (գլորիլ, իյնալ)․ որդին ընթացաւ առ նա, և յարուցանէր կանգնէր զհայր իւր, և ցանէր նա զլեղին յաչս հօր իւրոյ և ասէր․ Ժուժեա, հայրիկ, և համբերեա։ Եւ իբրև եկաց վայր մի (քիչ մը ատեն) վաղվաղակի կեղեւեցան և անկան լուսունքն յաչաց նորա, և ետես նա զորդին իւր, և անկաւ նա զպարանոցաւ նորա և լայր։ Եւ եմուտ որդի նորա ի ներքս խնդութեամբ, և պատմեաց նա հօրն իւրում զմեծամեծսն որ եղեն նմա ի Մարս։ Եւ ել Տուբիթ ընդ առաջ Ցուոյն (հարս) իւրոյ խնդութեամբ, և օրհնէր զԱստուած առ դրունսն Նինուէի, և զարմանային ոյք տեսանէին զնա զի յընթանալն իւրում տեսանէր։ Եւ Տուբիթ գոհանայր առաջի նոցա թէ ո՛րպէս ողորմեցաւ նոցա Աստուած․ և իբրև մօտ եղև Տուբիթ առ նուն իւր, օրհնեաց զնա և ասէ․ Եկիր ողջութեամբ, դուստր. օրհնեալ է Աստուած որ ած զքեզ առ մեզ․ և եղև ուրախութիւն եղբարց նորա որք էին ի Նինուէ, և աբարին հարսանիս աւուրս եւթն։

Եւ կոչեաց Տուբիթ զՏուբիա զորդին իւր և ասէ ցնա․ Տես արդ, որդեակ, զվարձս (աշխատանքի վարձը, վարձքը տալ) առնն որ եկն ընդ քեզ, և յաւելուլ յայն արժան է։ Եւ ասէ որդին․ Հայր, ոչինչ պակաս է ինձ եթէ տամ դմա զկէս ընչից իմոց զոր բերի․ զի զիս ած առ քեզ ողջ, և զկինն իմ ողջացոյց, և զարծաթն իմ եբեր և զքեզ նոյնպէս ողջացոյց։ Եւ ասէ ծերն․ Ցիբաւի (Իրաւունք) է տալ նմա։ Եւ կոչեաց նա զհրեշտակն և ասէ ցնա․ Առ դու զկէս այնր ամենայնի զոր բերեր։ Եւ առ յայնժամ հրեշտակն զնոսա զերկոսին և ասէ

ցնոսա · Օրհնեցէք դուք զԱստուած և խոստովան եղերուք առաջի ամենայն կենդանեաց վասն այդր զոր արար ընդ ձեզ , զի բարի է օրհնել զԱստուած և բարձրացուցանել (փառաւորել, հռչակել) զանուն նորա , և զպատգամս գործոց Աստուծոյ պատուով մեծացուցանել ։ Զխորհուրդ Թագաւորի բարւոք է ծածկել , այլ զգործս Աստուծոյ յայտնել ։ Ես եմ Հռափայէլ յեւթանց անտի ի սրբոցն հրեշտակաց որք մատուցանեն զաղօթս սրբոցն , և մտանեն առաջի փառաց սրբոյն ։ Եւ խռովեցան երկոքին և անկան ի վերայ երեսաց իւրեանց , զի զահի հարան յոյժ ։ Եւ ասէ ցնոսա (հրեշտակն) · Մի երկնչիք , խաղաղութիւն լիցի ձեզ և զԱստուած օրհնեցէք ։ Եւ արդ ելանեմ ես առ այն որ առաքեացն զիս · և այլ ոչ եւս տեսին զնա ։

Ի ԳՐՈՑՆ ՅՈՒԴԹԱՅ

Նաբուգոդոնոսոր արքայ հանդէս առնէր (ծննել, համբել) զօրաց իւրոց · Կոչեաց նա զամենայն մեծամեծս իւր և զկուսակալս , և խորհէր ընդ նոսա խնդրել վրէժ յամենայն երկրէ ։ Եւ նոցա պատասխանի տուեալ ասեն · Սատակեսցի ամենայն մարդ դիմակաց (դէմ կեցող, անհնազանդ) Թագաւորին ։ Եւ կոչեաց նա զՀողեփեռնէս զսպարապետ ամենայն զօրաց իւրոց և ասէ ցնա · Ընտրեսցես առցես դու քեզ հետեւակս հազարս հարեւր քսան (հարիւր քսան հազար) , և բազմութիւն յոյժ հեծելոց բեւրս երկոտասան , և ելցես դու ընդ կողմն արեւմտից , քանզի ապախտ արարին (բանի տեղ չդրին) բնակիչք կողմանցն այնոցիկ զբանիւք հրամանաց իմոց ։ Եւ պատուիրեսցես նոցա զի պատրաստեսցեն զերկիրն և զջուրսն , զի ելանեմ ես բարկութեամբ իմով ի վերայ նոցա և առնեմ կոխան ոտից (ոտքի տակ առնել, ծեծել) զնոսա , և վիրաւորք նոցա լցցեն զձորս և զծոր-

ծորս, և գետք խաղասցեն յարենէ նոցա ։ Եւ դու ե-ղանիցես, պատիցես պաշարիցես զսահմանս նոցա, և ոչ անխայեսցէ (խնայել, ողորմել) *ակն իմ ի վերայ այնո-ցիկ որ ապախտ արարին զիս ։ Եւ մի՛* զան՚ց առնիցես (անցնել, չկատարել) *և մի՛ զմիով բանիւ զոր* ետու *քեզ* հրաման (հրամայեցէ) ։

Եւ ել Հողեփեռն յերեսաց տեառն իւրոյ, և կոչ-եաց առ ինքն զամենայն իշխանս և զզօրագլուխս, և ընտրէր ի նոցանէ, և թուէր արս ի պատերազմ բեւրս երկոտասան, և հեծելազօրս աղեղնաւորս երկոտասան հազար, և կարգէր կազմէր զնոսա ճակատելս ի պա-տերազմ ։ Եւ առ նա ուղտս և գրաստս (բեռ կրող անասուն) *բազումս յոյժ, բառնալ զկահ և զկարասի, և խաշն և արջառս և* երամակս (ոչխարք) *այծից* ի դարմանս (պա-շար) *իւրեանց, և տայր ամենեցուն թոշակ ի ճանապարհ՝ ոսկի և արծաթ ի տանէ թագաւորին բազում յոյժ ։ Եւ գնացին նոքա ի Նինուէ քաղաքէ* զնաց երից աւուրց (երեք օրուան ճամբայ) *ի դաշտն, և բանակեցան նոքա մերձ առ լերինն ի ձախակողմն վերին Կիլիկեայ. և առ զամենայն զօրս իւր, զհեծեալս և* զհետևակս (ոտնա-ւոր զօրք)*, և զէնս և զկառս, և գնաց նա անտի ի լեռ-նակողմն ։* Քանդէր (կործանել) *և* աւար հարկանէր (կո-ղոպտել) *զամենայն որդիսն Հռամասեայ որ բնակեալ էին ընդ երեսս անապատին, ընդ հարաւակողմն ։ Եւ անց ընդ Եփրատ գետ և շրջեցաւ նա ընդ Միջագետս և ե-հար վանեաց զամենայն քաղաքս բարձունս, և հարկա-նէր սատակէր զամենայն դիմադարձս իւր ։ Եւ եկն մին-չեւ ի սահմանս Յաբեթայ ի հարաւակողմն որ է* դեմ յանդիման (դէմացը) *Արաբիայ, և արգելեալ փակեաց զամենայն որդիսն Մադիամու, և հրձիգ արար զամե-նայն յարկս և զխորանս նոցա, և աւերէր քանդէր զամենայն* գոմս (ոչխարներու ախոռ) *խաշանց նոցա ։ Եւ էջ նա ի դաշտն Դամասկոսի յաւուրս հնձոց ցորենոյ,*

և հրձիգ արար զամենայն զանդս և զագարակս նոցա, և զհօտս և զանդեայս *(ուղտաներու խումբ) նոցա արար յապականութիւն. զքաղաքս նոցա աւար հարկանէր և զմանկունս նոցա ջարդէր, և հարկանէր սատակէր զերիտասարդս նոցա ի բերան սրոյ։ Եւ անկաւ ահ և երկիւղ ի վերայ բնակչաց ծովեզերեայց։ Եւ առաքեցին առ նա խօսել ընդ նմա բանիւք խաղաղութեան և ասեն. Ահաւասիկ մեք ծառայք Նաբուգոդոնոսորայ եմք. ահա տունք մեր և ամենայն դաշտք ցորենոյ և հօտք և անդեայք և ամենայն գոմք խաշանց մերոց. եկ, մուտ ի սոսա որպէս և բարի թուի քեզ։ Եւ առ նա ի քաղաքաց անտի արս ընտիրս պատերազմակիցս իւր. և ելին ընդ առաջ նորա քաղաքքն այնոքիկ երգօք և պսակօք և* ծնծղայիւք *(դէֆ) և* թմբկօք *(տաւուլ)։ Եւ փորեաց նա զսահմանս նոցա և ի բաց ընկէց զամենայն անտառս նոցա, և եկն նա դէմ յանդիման* սարոյն *(ճէրան ծայր) մեծի Հրէաստանի, և եղեւ անդ ամիս մի ժողովել ռոճիկս և* դարմանս *(կերակուր, պարէն) զօրաց իւրոց։ Եւ ահ նորա պատեալ էր զամենայն բնակիչս որ շուրջ զնովաւ։*

Իբրեւ զայն լուան որդիքն Իսրայելի և բնակիչքն Հրէաստանի, երկեան նոքա յոյժ յերեսաց նորա. զի ընդ այն ժամանակս էին դարձեալ ի գերութենէ անտի իւրեանց, և իբրեւ նորք էին ժողովեալք ի Հրէաստան և զսեղանն Տեառն Աստուծոյ իւրեանց և զսպասն *(կարաք, փործէք) և զտունն ի պղծութենէ անտի* դեռ ես *(դեռ նոր) էին սրբեալ։ Եւ առաքեցին նոքա յամենայն սահմանս Շամրնի (Սամարեայ), և հասին կալան զամենայն գլուխս լերանց բարձանց, և պարսպեցին զգիւղս որ էին ի նոսա, և կազմեցին և եդին անդ* զդարմանս *(պաշար) ի գործ պատերազմի,* զի ընդ այն ժամանակս *(ան ատենները) էին հնձեալ զանդս իւրեանց։ Եւ գրեաց Յովակիմ քահանայ մեծ և ծերակոյտ ժողովրդեանն*

Իսրայէլի որ նստէին յՆրուսաղէմ՝ բնակչացն Բեթուղուայ և ասեն. Նկէք, կալէք զանցս (անցնելու տեղ) լեռնային կողմանն. զի ընդ այն էին մուտք ի Հրէաստան, և էր դիւրին նոցա արգելուլ զնոսա, քանզի նեղ էին անցք կրճին (նեղ տեղ) զոր կարէին պահել արք երկու։ Եւ արարին որդիքն Իսրայէլի որպէս և հրամայեաց նոցա Յովակիմ քահանայ մեծ. և կարդացին առ Տէր և խոնարհեցուցին զանձինս իւրեանց՝ ինքեանք և կանայք իւրեանց, և ամենայն պանդուխտք և վարձկանք հանդերձ անասնօք իւրեանց, և արծաթագին ծառայք նոցա արկին քուրձ զմիջովք իւրեանց, և ամենայն այր Իսրայէլի կանամբք և մանկամբք իւրեանց ի գուճս իջեալ (ծնկան վրայ գալ) առաջի տաճարին Տեառն աղաչէին, և արկին մոխիր զգլխովք իւրեանց, և թօթափէին զքուրձն առաջի Տեառն, և զսրբութեան սեղանօքն քուրձ արկանէին, և խնդրէին յամենակալէն ապրեցուցանել զնոսա ի վտանգէն։

Եւ պատմեցին Հողեփեռնեայ եթէ որդիքն Իսրայէլի պատրաստեցան ի պատերազմ, և զանցս լեռնային կողմանցն փակեցին, և պարսպեցին զամենայն գլուխս լերանց բարձանց, և թագուցին ի դաշտս որոգայթս։ Եւ բարկացաւ յոյժ Հողեփեռնէս բարկութեամբ մեծաւ, և կոչեաց նա զամենայն իշխանս և զզօրագլուխս և զամենայն նախարարս ծովեզերեայս, և ասէ ցնոսա. Պատմեցէք դուք ինձ, ո՞վ են ժողովուրդս այս որ նստին ի լեռնակողմանս, և զի՞նչ քաղաքք են յորս բնակեալ են սոքա և կամ բազմութիւն զօրաց նոցա, և ի՞ւ է ոյժ նոցա և կամ զօրութիւն, կամ ո՞վ է թագաւոր նոցա և առաջնորդ զօրաց նոցա, և ընդէ՞ր քիւրեցին (ծռել, դարձնել) զմիտս իւրեանց զի մի՛ եկեսցեն ընդ առաջ (դիմաւորել) իմ։ Եւ ասէ ցնա Աքիովր առաջնորդ ամենայն որդւոցն Ամոնայ. Ժողովուրդս այս են յազգէ Քաղդէացւոց, և եղին նոքա ի հայրենի երկրէն իւր-

եանց, և երկիր պագին Աստուծոյ երկնաւորի զոր ճըշմարտեալ ծանեան։ Եթէ անգիտութիւն (յանցանք) ինչ լինի ի ժողովրդեան նոցա և մեղանչիցեն Աստուծոյ իւրեանց, գումարեսցուք ի վերայ նոցա, և տացուք ընդ նոսա պատերազմ։ Ապա թէ չիցէ ինչ նոցա անիրաւութիւն առ Աստուածն իւրեանց, զանց արասցուք առ նոքօք. գուցէ պաշտպանիցէ նոցա Տէր Աստուածն իւրեանց, և լինիցիմք յամօթ նախատանաց ամենայն երկրի։ Եւ եղեւ իբրեւ դադարեաց Աքիովր ի խօսելոյ զբանս զայս, տրտնջեաց ամենայն բանակն որ շուրջ զխորանաւն, և ասեն իշխանքն Հողեփեռնի զի պատուհասեսցէ զԱքիովր։ Եւ ասէ Հողեփեռնէս ցԱքիովր. Ո՞վ ես դու, Աքիովր, որ դիմադարձ ես ժողովրդեանն այլազգեաց։ Եւ զի ասացեր թէ մի՛ տացուք պատերազմ ընդ որդիսն Իսրայելի. ոչ եւս յաւելցես տեսանել զերեսս իմ յօրէս յայսմանէ մինչեւ խնդրեցից վրէժ յազգէն որ յԵգիպտոսէ ելին. ապա անցցէ (մտնել, խոցոտել) սուր զօրաց իմոց ընդ կողս քո։ Այլ այժմ դարձուսցեն զքեզ ծառայք իմ ի լեռնակողմն, և պահեսցեն զքեզ յանցս քաղաքի միոյ որ յանցս ճանապարհացն է, և մի՛ կորնչիցիս մինչեւ սատակեսցիս նոքօք հանդերձ. և եթէ յուսաս եթէ ոչ մատնին, յայդ ինչ մի՛ վտահ լինիցիս։ Եւ կալան զնա ծառայք Հողեփեռնեայ և ածին զնա արտաքոյ բանակին ի դաշտ անդր, և գնացին նոքա ի դաշտէ անտի և եկին ի լեռնակողմն աղբերացն ի ներքոյ Բետիւղա։ Եւ իբրեւ տեսին զնոսա արք քաղաքին ի վերայ գլխոյ լերինն, առին նոքա զզէնս իւրեանց և յարձակեցան ի վերայ նոցա ի գլուխ լերինն. և ամենայն այր պարսաւոր (քար նետող) կալան զելս (ելքի տեղ) նոցա և քարաձիգ արտքին (քար նետել) ի վերայ նոցա. և մտին նոքա ընդ լեռնոտամբն և կապեցին զԱքիովր և ընկեցին զնա առ լեռնոտինն։ Եւ իջին որդիքն Իսրայելի ի քաղաքէ ան-

տի, և հասին ի վերայ նորա և լուծին զնա, և տարան ի Բետիուղա։ Եւ կոչեցեալ զԱքիովր ի մէջ ամենայն ժողովրդեանն հարցանէին զնա թէ վասն է՞ր եղեն ընդ քեզ այդ անցք (դէլիգ–աշ)․ և նա պատմէր զբանս խորհըրդոյն Հողեփեռնեայ, և զոր ինչ միանգամ մեծաբանեալ խօսեցաւ Հողեփեռնէս վասն տանն Իսրայելի։ Եւ ի գուճս իջեալ ամենայն ժողովուրդ երկրին երկիր պագանէին Աստուծոյ։ Եւ մխիթարեցին զԱքիովր և գովեցին յոյժ զնա․ և առ զնա Ոզիա և տարաւ ի տուն իւր, և արար նմա կոչունս։

Եւ ի վաղիւ անդր պատուիրեաց Հողեփեռն զօրաց իւրոց չուել գնալ ի Բետիուղա, և ի վերայ ելից լեռնակողմանն, և հասանել տալ պատերազմ ընդ որդիսն Իսրայելի։ Եւ կազմեցան պատրաստեցան գնացին յաւուրն յայնմիկ ամենայն այր պատերազմի և ամենայն հետևակազօր պատերազմողացն հարեւր եւթանասուն հազար, և հեծելազօրքն վառեալք երկոտասան հազար, թող զայլ ռամիկն ամենայն և զկահ և զկարասի բազում սաստիկ յոյժ։ Եւ բանակեցան նոքա ի հովտին որ մերձ էր ի Բետիուղա ի վերայ աղբերն։ Եւ որդիքն Իսրայելի իբրև տեսին զայնչափ բազմութիւն, խռովեցան յոյժ, և ասեն այր ցընկեր իւր․ Այժմ լիզուն նոքա զամենայն երեսս երկրի, և ոչ լերինք բարձունք և ոչ ձորք և բլուրք կարասցեն կալ առաջի (դէմանալ, դէմ դնել) զօրութեան դոցա։ Եւ առին որդիքն Իսրայելի այր իւրաքանչիւր զզէն իւր, և լուցանէին ջահս ի վերայ աշտարակաց քաղաքին, և կային պահէին զամենայն գիշերն զայն։ Եւ յաւուրն երկրորդի եհան Հողեփեռնէս զամենայն զհեծելազօրն դէմ յանդիման որդւոցն Իսրայելի որ էին ի Բետիուղա, և հաս նա ի վերայ ելից քաղաքին նոցա, և զաղբերս ջրոցն կընքեաց և աճապարեք (ֆուռնալ) պաշարել զնոսա, և հարկանեք (Վ՚ուրջուլէր, նը հանէր) ի վերայ նոցա բանակս յա–

րանց պատերազմողաց , և ինքն չուէր զնայր անդրէն (*վերադառնալ*) *ի բանակն իւր ։ Եւ մատեան առ նա զօրագլուխք ծովեզերեայց և ասեն , ժողովուրդ որդւոցս Իսրայելի ոչ են յուսացեալ ի նիզակս իւրեանց և ոչ ի զէնս , այլ ի վերայ լերանց բարձանց իւրեանց , և ոչ իսկ հնար է հասանել ի նոսա ։ Եւ արդ , Տէր , մի տար դու ընդ նոսա մարտ պատերազմի , այլ կալցին ծառայք քո զաղբերս ջուրցն որ ելանեն ի լեռնոտանէ անտի , քանզի անտի ըմպեն ամենայն բնակիչք քաղաքիդ , և սատակին նոքա ի ծարաւոյ , և ապա ինքեանք իսկ մատնեսցեն զքաղաքն ի ձեռս քո . քանզի սպառեսցին նոքա ի սովոյ և ի ծարաւոյ , ինքեանք և կանայք իւրեանց և որդիք իւրեանց . մինչչեւ եկեալ իցէ ի վերայ նոցա սուր ,* տապաստ անկցին (*փռած էնալ*) *ի հրապարակս քաղաքին իւրեանց , փոխանակ զի* ի կուիւ կացին (*կոռած ըլէլ*) *և ոչ հնազանդեցան քեզ խաղաղութեամբ ։ Եւ հաճոյ թուեցաւ խորհուրդն Հողեփեռնեայ , և գնաց բանակ որդւոցն Ամոնայ և ընդ նոսա հազարք հինգ որդւոցն Ասուր , և բանակեցան նոքա ի ձոր հովտին , և հասին կալան նոքա զաղբերս ջուրցն զորդւոցն Իսրայելի ։ Եւ որդիքն Իսրայելի գոչեցին առ Տէր Աստուած իւրեանց , զի զահի հարեալ սպառեալ էին ոգիք նոցա ։ Եւ լքան* պարտասեցան (*շունչը հատնէլ, մարէլ*) *ամենայն բնակիչք Բետիւղա և ամենայն ամանք նոցա սպառեալ էին ի ջրոյ , և* գուբք (*ջըհոր , խաշնէ ջուրէ*) *սպառեալ* թափեալ (*դատարկած*) *էին , և ոչ գոյր ըմպելի միում աւուր , և զոր ըմպէինն՝ չափով և կշռով ըմպէին և ի վարանի և ի տարակուսի կային կանայք և մանկունք նոցա , և երիտասարդք նոցա լքեալ էին ի ծարաւոյ և* գլորեալք (*ընկած , կործանած*) *կային ի հրապարակս քաղաքին և ընդ անցս դրանցն , և ոչ ուստեք էր նոցա մխիթարութիւն ։ Եւ ժողովեցան ամենայն ժողովուրդն ի վերայ Ոզիայ և ի վերայ իշխանաց*

քաղաքին, երիտասարդք և կանայք և մանկտին, և լացին նոքա ձայնիւ մեծաւ առաջի ամենայն ծերոց ժողովրդեանն, և էին ի վարանս և ի մեծ տարակուսանս։

Եւ լուաւ յաւուր յայնմիկ Յուդիթ, դուստր Մերարեայ։ Մեռեալ էր այր նորա յաւուրս հնձոց գարեաց, զի կայր նա ի վերայ հնձողաց իւրոց ի դաշտին. զի յընթանայ ([illegible]) խորշակին ([illegible]) և գալ հասանել ի վերայ գլխոյ նորա մեռաւ ի Բետուղիա ի քաղաքի իւրում և թաղեցաւ նա յագարակին որ մերձ էր առ Գովթայիմ։ Եւ նստէր Յուդիթ այրի ի տան իւրում ամս երիս և ամիսս չորս, և արար նա տաղաւար ([illegible]) ի տանիս ([illegible], [illegible]) տան իւրոյ, և ած քուրձ ([illegible]) ի վերայ միջոյ իւրոյ, և էր արկեալ զիւրեւ ([illegible]) հանդերձ այրութեան, և պահէր նա զամենայն աւուրս այրութեան իւրոյ, բայց միայն զօր շաբաթուն և զամսամտից ([illegible]) և զտարեկանացն և զուրախութեան տանն Իսրայելի։ Եւ էր նա գեղեցիկ յոյժ, և եթող նմա Մանասէ այր նորա ոսկի և արծաթ, ծառայս և աղախնայս և անդս և ագարակս և անասուն. ինքն Յուդիթ դարմանէր զնոսա. և ոչ ոք ասէր վասն նորա բան չարութեան; զի երկիւղած էր նա յոյժ ի Տեառնէ։ Եւ առաքեաց զնաժիշտն ([illegible]) իւր որ էր ի վերայ ամենայն ընչից իւրոց. և կոչեաց զՕզիա և զամենայն ծերս քաղաքին իւրոյ և ասէ ցնոսա. Լուարուք դուք ինձ. Արդարիցս ես իրս մի որ պատմեսցի ազգաց մինչև յազգս, և որդւոց մինչև յորդիս։ Դուք կացջիք առ դրան քաղաքիս զգիշերս զայս, և ելից ես նաժշտաւս իմով, և դուք մի քննէք զգործն զոր գործելոց եմ, քանզի ոչ իսկ ասացից ձեզ մինչև կատարեսցի այն զոր ես առնեմ։ Եւ ասէ Օզիա իշխանօքն հանդերձ ցնա. Գնա դու ի խաղաղութիւն։ Եւ նոքա դարձան ի տաղաւարէ անտի Յուդթայ յիւրաքանչիւր տեղիս։

Եւ անկաւ Յուդիթ ի վերայ երեսաց իւրոց, և ի բաց առ (վերցուցել) զքուրձն զոր զգեցեալ էր, և ցանեաց մոխիր ի վերայ գլխոյ իւրոյ, և կարդաց նա ձայնիւ մեծաւ առ Տէր Աստուած, և ասէ. Տէր Աստուած իմ, լուր ձայնի աղախնոյ քոյ, և նայեաց ի խնդրուածս այրւոյս։ Ահաւասիկ Ասորեստանեայն ելից զօրօք իւրովք զերկիրս, և բարձրացաւ հեծելովք երիվարացն, և հպարտացեալ մեծամտեաց (մեծ համարում անենալ) ի բազուկ հետեւակացն բազմութեան, և յուսացաւ ի նիզակս և ի սպառազինութիւնս և ի կորովս (ճշդութեան) աղեղնաւորացն և պարսաւորաց և ոչ գիտաց թէ դու ես որ խորտակես զպատերազմունս։ Տուր ձեռն (օգնէ) աղախնոյ քում, և հար կործանեա զծառայն խաբաճօր (հրապոյր) շրթանց իմոց, և խորտակեա զաստկութիւն նոցա ի ձեռն կնոջս. զի ոչ եթէ ի բազմութենէ է քո զօրութիւնդ, և ոչ կարդ (կարողութեան) քո յայնս է որ հզօրքն են, այլ խոնարհաց ես Տէր Աստուած, և կարօտելոց ես օգնական, տկարաց ես ընդունելութիւն (ընդունող), կարօտելոց ես խնդրակ (խնդրող), անյուսից ես փրկիչ։

Եւ իբրև դադարեաց Յուդիթ յաղօթից իւրոց, յոտն եկաց, և կոչեաց զնաժիշտն և էջ ի տուն իւր։ Մերկացաւ յիւրմէ զքուրձն զոր զգեցեալն էր, և ի բաց եհան զհանդերձ այրութեան իւրոյ, և լուաց զմարմինս իւր ջրով, և օծաւ իւղով անուշիւ, և եհիւս (հիւսուլ, հիւսել) զհեր գլխոյ իւրոյ, և կապեաց զապարանջն (գլխու կապ) ի ճակատ իւր և զգեցաւ զհանդերձ ուրախութեան իւրոյ զոր զգենոյր առ կենդանութեամբ առն իւրոյ, և ագանէր կօշիկս ոսկեզօծս, և արկանէր ապարանջանս ի ձեռս իւր, և արկանէր քայուս (կերպանքէ) յականց պատուականաց ընդելուզեալս մարգարտով ի պարանոց իւր, և մատանիս ի մատունս իւր և զորշապահանգս (ոտքի խալխալներ)

ի գլուխ իւր, և յօրինէր կազմէր ամենայն զարդու իւրով, և պայծառանայր առաւել յոյժ։ Եւ ետ ցաղախին իւր զմախաղն, և ելից զնա փոխնդով (ֆոխէնտ, եղով մրկած ալէւր) և պաղատակօք (չըր թօզ չարխով, տէղէ քնձէր) և հացիւք սրբովք, և զհաղաղակն (հաղաղակ, տանքձանա, չօրբա) գինւոյ և զսրուակն (շիշէ) իւղոյ, և սրբէր կազմէր զամենայն ըստ օրինի իւրեանց և տայր ցաղախին իւր։ Եւ ել Յուդիթ ինքն և աղախին իւր ընդ նմա, և միտ դնէին նմա արք քաղաքին յերթալն նորա, մինչեւ եղեւ նա ընդ լերամբն, մինչեւ անց նա ընդ ծործոր (տէրէ, ուսուտէ Չօր կը ճօղէ) հովտին, և ապա ոչ եւս տեսին զնա։ Եւ երթային նոքա ընդ ծործոր հովտին ուղիղ ընդ ճանապարհն, և պատահեցին նոցա պահապանքն Ասորեստանեայց և կալան զնոսա և տարան զնա ի խորանն։ Եւ Հողեփեռն նստէր ի գահոյսն իւր, և էր փակեալ զնա վարագուրօք չուրջանակի, զորս էր ընդելուզեալ (բանուած) ոսկւով և մարգարտով և ակամբք պատուականօք։ Եւ իբրեւ լուաւ նա զՅուդթայ, ել նա արտաքս ի սրահ խորանին ջահիւք և լապտերօք արծաթեօք, քանզի գիշեր էր. և իբրեւ ետես զնա Հողեփեռնէս, զարմացաւ ընդ տեսիլ գեղոյ նորա։ Եւ անկեալ ի խոնարհ երկիր պագանէր Յուդիթ Հողեփեռնեայ, և կանգնեցին զնա ծառայք նորա։ Եւ ասէ ցնա Հողեփեռնէս. Համարձակեաց, կին դու, և մի երկնչիր։ Ծողովուրդ քո այդ որ բնակեալդ է ի լեռնակողմանդ, եթէ ոչ էր ապստամբեալ յինէն, ոչ էր իմ առեալ զնիզակ իմ ի վերայ դոցա. այլ դոքա ինքեանք արարին անձանց իւրեանց զայս։ Արդ ասա դու ինձ, վասն որո՞յ ես դու փախուցեալ ի նոցանէ և եկեալ ես առ մեզ։ Եւ ասէ ցնա Յուդիթ. Ընկալ զբանս աղախնոյ քո, և խօսեսցի աղախին քո առաջի քո և ոչ ինչ ստութիւն պատմեմ տեառն իմում ի գիշերիս յայսմիկ։ Զբանսն զոր խօսեցաւ Աքիովր ի խորհրդեան սե-

նեկի քում, լուաք և մեք․ զի խնայեցին ի նա արք Բետիուղայ, և նա պատմեաց զամենայն որպէս և խօսեցաւ ընդ քեզ։ Եւ արդ այժմ, Տէր, մի անցանեք զբանիւք նորա (անոր խօսքէն մի ելլեր), այլ հաստատեա զնոսա ի սրտի քում, քանզի ճշմարիտ են․ զի ոչ ոք կարէ չարչարել զազգս մեր, և ոչ սուր թշնամւոյ մնասէ մեզ, բայց յորժամ մեղանչիցեն Աստուծոյ իւրեանց։ Արդ արարին նոքա մեղս մեծ անօրէնութեան, և ես աղախին քո յորժամ գիտացի զայս, փախեայ ի նոցանէ, զի աղախին քո աստուածապաշտ է, և աղաչեմ զցայգ և զցերեկ զՏէր Աստուած երկնից։ Եւ արդ մնացից ես առ քեզ, Տէր իմ, և ելցէ աղախին քո ի գիշերիս յայսմիկ ի ծործոր հովտին, և կացից յաղօթս առ Տէր Աստուած իմ․ նա պատմէ ինձ յորժամ մեղանան (մեղանչել) նոքա նմա, և ես գամ և պատմեմ քեզ․ և դու ելցես ամենայն զօրօք քովք հանդերձ, և ոչ իցէ ի նոցանէ որ ապրեցէ ի քէն։ Եւ տարայց զքեզ ընդ աջմէ Հրէաստանի, մինչև տարայց զքեզ յԵրուսաղէմ, և արկցես զաթոռ քո ի միջի նորա, և ժողովեսցես զնոսա որպէս զհօտ որոց ոչ իցէ հովիւ, և ոչ հաջեսցէ շուն մի լեզուաւ իւրով ընդդէմ քո։ Հանճոյ թուեցան բանք նորա առաջի Հողեփեռնեայ և առաջի ամենայն ծառայից նորա, և զարմանային ընդ իմաստութիւն նորա, և ասեն․ Ոչ գտանի կին գեղեցիկ համեմատ սմա ի ծագաց (ծով, ծայր) երկրի մինչև ի ծագս իմաստութեամբ, բանիւք և գեղեցկութեամբ։ Եւ ասէ ցնա Հողեփեռնէս․ Տեսանեմ զքեզ կայտառ (աշխոյժ, զուարթուն) տեսլեամբ․ եթէ արասցէ որպէս խօսեցար՝ Աստուածն քո, եղիցի նա և իմ, Աստուած, և դու ի տան Նաբուգոդոնոսորայ նստցիս և եղիցիս անուանի քան զամենայն երկիր։

Եւ հրամայեաց տանել զնա ի տուն գանձին, և հրամայեաց (կարգեց) նմա ռոճիկս (ուտելիք և ըմպելիք

Նոյեն) յիւրոց՝, խորտկաց (կերակուր) և ի գինւոյ անտի զոր ինքն ըմպէր ։ Եւ ասէ Յուդիթ․ Ոչ կերայց ես ի դոցանէ, այլ տացես ինձ հրաման ուտել ինձ անտի զոր բերի ինձ ի քաղաքէ անտի ։ Եւ ածին զնա ծառայքն Հողեփեռնեայ ի խորան նորա, և ննջեաց նա անդ մինչև ի մէջ գիշերի ։ Եւ եղև նա ի բանակի անդ աւուրս երիս․ և ելանէր նա ի գիշերին ի ձորն Բետիուղայ և մկրտէր (լուացուել) ի բանակի անդ յաղբիւրս ջուրցն ըստ օրինի Հրէիցն ։

Եւ եղև յաւուրն չորրորդի արար Հողեփեռնէս կոչունս ծառայից իւրոց միայն, և կոչեաց ի կոչունսն և ոչ զմի ոք յօտարաց անտի ։ Եւ ասէ ցԲագու ցներքինին իւր որ էր հազարապետ (տնտես) հաւատարիմ ի վերայ ամենայն ընչից նորա․ Երթ, հաւանեցո (համոզէ) դու, ասէ, զկինն Հեբրայեցի որ է առ քեզ, ուտել և ըմպել ընդ մեզ, և զինչ է այդ այպն կատականաց (ամօթ, նախատինք) թողուլ մեզ զայսպիսի կին և ոչ բնաւ խօսել ընդ նմա․ արդ եթէ ոչ ածցուք զմարդդ (կին), ցուցէ (չըլլայ որ) ծաղր ինչ առնիցէ զմեզ ։ Եւ ել Բագու յերեսաց Հողեփեռնեայ, և եմուտ առ Յուդիթ և ասէ ցնա․ Մի դանդաղեսցի աղախինդ դեղեցիկ գալ առ տէր իմ և փառաւորել ի նմանէ, և ըմպել ընդ նմա զգինի ուրախութեան մեւք հանդերձ ։ Եւ ասէ ցնա Յուդիթ․ Եւ ո՞վ ոք եմ ես որ ընդդէմ դառնամ տեառն իմում ։ Եւ յարեաւ զարդարեցաւ, և գնաց առ Հողեփեռն, և մատեաւ նաժիշտ նորա և արկ նմա բազմական (նստարան, ոտքեր) ի գետնի դէմ յանդիման Հողեփեռնեայ զմորթս ճաշկեայ (մորթէ նստարան) զոր առ նա ի Բագուայ ի հանապազորդ սպաս (շարունակ գործածելու) նմա․ և բազմեցաւ Յուդիթ ի վերայ նորա ։ Եւ ուրախ եղև Հողեփեռնէս ի վերայ նորա, և արբ նա զինի սաստիկ յոյժ որչափ ոչ էր արբեալ նորա յօրէ ծննդենէ իւրմէ ։ Եւ իբրև երեկոյ եղև, փութացոյց

զծառայս իւր գնալ արտաքս. և Բագու փակեաց զդուրս խորանին, և գնացին նոքա յիւրաքանչիւր անկողինս իւրեանց արտաքոյ քան զխորանն, քանզի էին ամենեքեան խոնջք և վաստակք (յօգնած) ի բազում գինեբբուաց (շատ գինի խմելէն) անտի, և մնացին Յուդիթ և Հողեփեռնէս միայն ի խորանին: Եւ Հողեփեռնէս մտեալ ի դահոյս իւր ի քուն եղև, և էր թմբրեալ յոյժ ի գինւոյ անտի. Եւ ասէ Յուդիթ ցաղախին իւր զի կացցէ արտաքոյ խորանին և սպասեսցէ նմա: Եւ մատեաւ Յուդիթ առ քանուն (երկայն գաւազան, ֆարմաքլըք) դահոյիցն որ էր ընդ սնարսն Հողեփեռնեայ, և եհան զդաշոյն նորա յազդերէ նորա, և կալաւ զհերաց նորա և ասէ. Զօրացո զիս, Աստուած Իսրայելի, յաւուրս յայսմիկ: Եւ եհար ի պարանոցի նորա երկիցս զօրութեամբ իւրով, և հատեալ եբարձ զգլուխ նորա, և թաւալեցոյց (գլտորել) ընկէց զմարմին նորա ի դահոյից անտի: Եւ յետ ժամու միոջ ել և ետ նաժշտին իւրում զգլուխն Հողեփեռնեայ, և ընկէց ի մախաղ (շանթա) կերակրոյն իւրոյ: Եւ ելին երկոքին ի միասին ըստ սովորութեան իւրեանց, և անցին նոքա ըստ բանակն, և շրջեցան եկին ընդ ձորն, և ելին նոքա ի լեառնն Բետուղա, և եկին նոքա ի դրունս քաղաքին: Եւ ասէ Յուդիթ ի հեռաստանէ ցպահապանս դրանցն. Բացէք, բացէք արդ զդրունսդ, զի ընդ մեզ է Տէր Աստուած մեր:

Եւ իբրև լուան արք քաղաքին զձայն նորա, փութացան իջանել ի դրունս քաղաքին իւրեանց, և կարդացին (կանչել) նոքա զծերս ժողովրդեանն, և ժողովեցան ի փոքուէ մինչև ցմեծամեծս, քանզի զարմացեալ էին նոքա յոյժ ընդ գնալն նորա: Եւ բացին զդուռն քաղաքին և առին զնոսա ի ներքս, և լուցին զլապտերս իւրեանց և կացին շուրջ զնոքօք: Եւ ասէ Յուդիթ բարձրաձայն բարբառով. Օրհնեցէք Իսրայելի, օրհնեցէք զԱստուած որ ոչ մերժեաց զողորմութիւն իւր ի տա-

նէս Իսրայելի, այլ եհար վաննեաց զԹշնամիս մեր ի ձեռն իմ ի գիշերիս յայսմիկ։ Եւ եհան զգլուխն ի մախաղէն և եցոյց նոցա, և ասէ ցնոսա. Ահաւասիկ գլուխն Հոլոփեռնեայ զօրագլխի զօրացն Ասուրայ, և ահա վարագոյրքն պատուականք ընդ որովք անկեալ դնէր յարբեցուԹեան իւրում, և սատակեաց զնա Տէր Աստուած ի ձեռն կնոջս։ Եւ ասէ Յուդիթ ցնոսա. Լուարուք դուք ինձ, եղբարք, զոր ասեմս. Առէք զգլուխս զայս և կախեցէք զսա առաջի մահարձանաց (աշրաֆին, մէյը տօնելըք կատանելու տեղ) պարսպաց քաղաքիս։ Եւ եղիցի յորժամ մերկասցի առաւօտն և ծագեսցէ արեգակն յերկիր, վառեցարուք ամենայն արք զօրաւորք պատերազմի, և կացուցանիցէք ի վերայ ձեր զօրավարս և ելանիցէք արտաքոյ քաղաքիս, իբրեւ Թէ իջանիցէք ի դաշտ անդր ի Թեւ մի պարսկապանաց (քանակլը դահադան) որդւոցն Ասուր. և անդր մի իջանիցէք, այլ խռով հարկանիցեք (խասմիցնել) նոցա, և նոքա առցեն զզէնս իւրեանց և գնասցեն ի բուն բանակն և յարուցանիցեն զզօրագլուխսն, և ժողովեալք դիմեսցեն ի խորանն Հոլոփեռնեայ և զնա ոչ գտանիցեն, և անկցի ի վերայ նոցա ահ և ի փախուստ դարձցին (փախչին) նոքա յերեսաց ձերոց. և դուք զկնի մտեալ (երեւէն էյնալու) և ամենայն բնակիչք սահմանացս Իսրայելի՝ տապաստ արկեալ վանեսջիք զնոսա յամենայն ճանապարհս նոցա։ Եւ արդ, մինչչեւ արարեալ զայս՝ կոչեցէք առ իս զԱքիովր զի տեսցէ զայն որ ընդ ոտն եհար (արհամարհել) զտունն Իսրայելի, և որ կապեացն զնա և ետ ածել այսր ի մահ։ Եւ կարդացին զԱքիովր ի տանէն Ոզիայ. և իբրեւ եկն և ետես նա զգլուխն Հոլոփեռնեայ ի ձեռին առն միոջ ի ժողովրդեանն, անկաւ ի վերայ երեսաց լըրոց և քաւալեցաւ (թըքէլ էյնալ), և իբրեւ անդէն զօրացաւ, անկեալ առ ոտս (ոտքը էյնալ) Յուդիթայ երկիր եպագ նմա։

Եւ յորժամ ծագեաց առաւօտն, կախեցի զգլուխն Հողեփեռնեայ ի պարսպէ անտի․ վառեցաւ (չէնէը հօգ-նէլ) ամենայն այր զզէն իւր, և ելին նոքա առնել զոր հրամայեացն Յուդիթ։ Եւ որդիքն Ասուր իբրև տեսին զնոսա, ազդ արարին նոքա առ առաջնորդս իւրեանց, և եկին նոքա առ զօրագլուխս, և դիմեցին նոքա ի խորանն Հողեփեռնեայ և ասեն ցսենեկապետ նորա․ Արդ՝ մուտ, յարո զտէրդ մեր, զի իշխեցին Հրեայք ի վերայ մեր ի պատերազմ, և սատակեսցուք զնոսա իսպառ (մէնչէ- մէրճը, բօլըրօմէն)։ Եւ եմուտ Բագու և բախեաց զդուրս սենեկին, քանզի կարծէր թէ ի քուն իցէ հանդերձ Յուդթաւ։ Իբրև ոչ ոք ետ նմա պատասխանի, քաջալերեալ եմուտ ի ներքս ի սենեակն, և ետես զի անկեալ կայր Հողեփեռնէս ի վերայ գետնոյն մերկ, և գլուխ նորա բարձեալ էր ի նմանէ։ Եւ գոչեաց Բագու ձայնիւ մեծաւ և լալով և ողբմամբ յոյժ, և պատառեաց նա զպատմուճան իւր, և եմուտ նա ի սենեակն Յուդթայ և ոչ եգիտ զնա․ և ել ընթացաւ նա առ զօրսն և ասէ․ Արար ամօթ Նախատանաց կին մի Հեբրայեցի տան արքային Նաբուգոդոնոսորայ, զի ահաւասիկ Հողեփեռն յերկիր կործանեալ և գլուխ իւր չէ առ նմա։ Եւ իբրև լուան զայս բանս իշխանք զօրացն Ասուրայ, պատառեցին ամենեքեան զպատմուճանս իւրեանց և երկեան յոյժ։ Եւ իբրև լուան որք ի վրանսն էին, յիմարեցան վասն իրացն որ եղեն․ և անկաւ ի վերայ նոցա ահ և դողումն յոյժ և ապա ոչ մնացին ամենեւին այր ընկերի իւրում, և ճեղեալք զբաղեալք (դօօլօ դօլըմօշօըլ, ըլըօըլ) առ հասարակ ի փախուստ դարձան ի դաշտակողմանն և ի լեռնակողմանն շուրջ զԲետիուղաւ, և դարձեալ անտի փախստեայք լինէին։ Եւ ապա ամենայն այր պատերազմող որդւոցն Իսրայելի յարձակէին անկանէին ի վերայ նոցա, և կոտորէին հարկանէին, մինչև անցու-

ցանէին զնոսա ընդ Դամասկոս · և ընդ սահմանս նորա ։ Եւ բնակիչքն Բետուղայ ելանէին աւար հարկանել, ժողովել զառ. եւ զապուռ. ([illegible]) բանակացն, և լցան յղփացան ([illegible]) մեծացան ([illegible]) յոյժ ։ Եւ որդիքն Իսրայելի դարձան ի կոտորածէ անտի, և սկսանէին ժողովել զկապուստ կողոպուտ ([illegible]) զանկելոցն ([illegible])։ Եւ ժողովուրդն կրէին զաւար բանակին զաւուրս երեսուն, և ետուն Յուդթայ զխորանն Հողեփեռնեայ և զամենայն զարծաթ խորանին և զդահոյսն, և զամենայն զսպասսն զոսկւոյ և զարծաթոյ նորա ։ Եւ նորա առեալ կուտէր զայն ի սայլս իւր և ի վերայ դրաստուց իւրոց և բերէր ի ներքս ի քաղաքն ։ Եւ եկին առ նա ամենայն կանայք որդւոցն Իսրայելի տեսանել զնա, և օրհնեցին զնա և նուագէին նմա երգս պարուք, և առեալ նորա ոստս արմաւենեաց և ձիթենեաց ծաղկօք հանդերձ տայր նոցա ։ Եւ այլ եւս կանայք մեծամեծք գային գունդագունդ գովել զնա, և ամենայն Իսրայէլ զկնի երթային նոցա վառեալք և կազմեալք, պսակս զունակս զունակս ([illegible]) ի գլուխս իւրեանց, և օրհնութիւն ի բերանս իւրեանց փառաւորել զԱստուած ։

ՆԵՐՍԷՍ ԸՆՑՐԻ ԿԱԹՈՂԻԿՈՍ

Ապա ի մի ժողով կուտեցան առ Արշակ նահապետք ազգաց ազգաց, գնդից և դրօշուց տեարք, ամենայն ազատք, զօրավարք և սահմանապահք, զի խորհեցին վասն իւրեանց առաջնորդի, թէ ո՛ւմ արժան իցէ նստել յաթոռ հայրապետութեան ։ Ապա յաղթեաց կալաւ այս բան խորհրդի, զի ի Մնացորդաց տանն Գրիգորի դուցեն զոք յառաջնորդութիւն ։ Ամենեքեան ասէին, Վասն զի նորոգեաց Աստուած զհարստութիւն

ձեր . սոյնպէս պարտ է յայնմ զաւակէ (սէրսէնկէն) *նորոգել զհոգեւոր նահապետութիւնն, զի ընդ նորոգել այնր աթոռոյ, ասեն, նորոգեսցին պայծառ փառք աշխարհիս ։*

Ապա յականէ յանուանէ իսկ խնդրեցին աշխարհաժողով զօրքն (քօլըր երկէն չըրէը) *զՆերսէս, զորդի Աթանագինի, զթոռն Յուսկան, որդւոյ Վրթանայ, որդւոյն Գրիգորի, մեծին և առաջնոյ քահանայապետին ։*

Եւ էր Ներսէս մեծ և բարձր հասակաւ, և վայելուչ գեղով, նախանձելի յարուցեալն (ուրէօ-ըլեան) *և ի զինւորական կրթութեան . երկիւղած ի Տեառնէ, յոյժ աւանդապահ պատուիրանաց նորա, մարդասէր, սուրբ, զգաստ, սաստիկ իմաստուն և առանց* ակնառութեան (անալըա), իրաւարար (արդարըօ-ըլեան ընօդ), ցածուն (պօրնէըա), *քաղցր, խոնարհ, և զաղքատս այնպէս սիրէր և* ակն ածեր (հօտ տանել) *ի վերայ նոցա, զի զիւր ինչ հանդերձս և զկերակուր* հասարակեր (հուաաար, հօղըրդ ընել) *ընդ նոսա և նեղելոց և* տարակուսելոց (նեղըօ-ըլենէ ըէօըաձ) *օգնական և վերակացու, և* ջատագով (պօղըդան) *ամենայն* զրկելոց (անէըաաա-ըլըան նըօդ) *լինէր նա ։*

Միչդեռ եւս զզինուորական ձեւն (դէնոր, նըանօդէնոր) *յինքեան բերէր, և զարդարեալ էր գեղեցիկ պատմուճանաւ, ցանկալի գեղով, երկայն հասակաւ և չքնաղատես հերօք վարսից իւրոց կայր մօտ* ի սնարս (ֆըխօ-ն նօղճը) *զարքունական սուսերն, զպողովատիկն, զոսկեպատեանն հանդերձ* ականակապ (վըան ալնանէ ֆօմաձ) *մարգարտազարդ կամարաւն ի սպասու նորա բարձեալ, առ հասարակ ատեանն* զբօղոք բարձեալ (ֆօըէլ) *աղաղակէին եթէ Ներսէս միցի մեր հովիւ ։ Զայս լուեալ Ներսիսի, զբողոք բառնալով, զանձն անարժան համարեալ, չկամէր առնուլ յանձն, և առ յոյժ խոնարհութեան իւրում խօսէր զանձնէ իւրմէ զանօրէնութիւնս ։ Իբրեւ*

լուան զայս բազմութիւնքն, առ հասարակ հանդերձ Թագաւորաւն թալացեալ էին ի ծաղուէ *(խնդալէն մաբէլ)*։ *Եւ զօրքն աղաղակէին առ հասարակ. Ի մեզ և ի գլուխ մեր դարձցին այն մեղք զոր գործեցեր*։ Եւ ձգեալ *(թաշէլ) զուսերն արքունական զոր նմա Ներսէսն* բարձեալ ունէր *(նը նէր) ի սպասու ըստ օրինաց սեննեկապետութեանն՝ ի բաց հանէր ի նմանէ, և զհերսն գանգրագեղս, զվայելուչ Թագագանգուր վարսիցն, ի բաց խզել հրամայէր, և ընդ նմին զվայելուչ պատմուճանն ի բաց պատառել*։ *Եւ բերին հանդերձս կղերիկոսաց և զգեցուցանէին նմա*։ *Եւ հրաման Թագաւորն, և կոչեցին ըղձերունի եպիսկոպոսն որում անուն էր Փաւստոս, և տայր զնա ձեռնադրել ի սարկաւագութիւն*։ *Յորժամ զհերսն* վիրային *(ածէլէլ) ի նմանէ, բազումք* յարտասուս հարան *(լոյսն), այլ յորժամ տեսին զնա քրիստոսեան դեղոյն զարդարեալ, բազմաց լինէր ուրախութիւն*։ *Բուզ. էջ* 65—70։

ՍՈՒՐԲՆ ՆԵՐՍԷՍ ՑԱՔՍՈՐ

Ապա սրտմտեալ Վաղէս յարոյց *(հանեց) հալածանս ի վերայ եկեղեցեաց ընդ ամենայն կողմանս իւրոյ իշխանութեանն, և զամենայն եպիսկոպոսս* մեկնեաց *(զարեց) եհան յիւրաքանչիւր ժողովրդոց և ընկէց զնոսա* յօտարութիւն *(օտար երկիր). առաւել էր* ցիւքեալ *(արդէն մէջ անձնալ) բարկութեամբ ի վերայ սրբոյն Ներսիսի, վասն զի կարծէր եթէ պատճառք մահուան* միամօր *(մէկ հատէկ) որդւոյն իւրոյ սիրելւոյ եղև նա.* ապա *(արածէ)* դառնութեամբ մահուան *(դաժան մահուամբ) կամէր* վճարել *(մեռցանել) զնա*։ *Մեծամեծքն և ամենայն խորհրդականք Թագաւորին չհաւանեալ չառնուին յանձն, այլ* հազիւ *(դժուարաւ) կարացին* թափել *(ողորել) զՆերսէս ի մահուանէ*։ *Ապա ետ հրաման կայսրն ընկենուլ զնա ի կղզի*

մի մեծ ։ Եւ էին որք ընդ նմայն աքսորեցան (*անոր հետ աքսորուածներն էին*) *յիւրոցն՝ երկու , անուն միոյն Բաստոմ սարկաւագ , և երկրորդին՝ Տիրանամ . և այլ եւս արք եւթանասուն զորս* ուստեք ուստեք (*այլ և այլ տեղերէ*) *ընդ նոսա* ամացեալ (*կեցուանել*) *ի նաւն՝ ի կղզին* . խաղացուցին (*տարին*)։ *Եւ գնաց մեկնեցաւ նաւն որ զնոսայն տանէր , և ըստ հողմոյն յաջողութեան ի հնգետասան օր հասանէր ի հրամայեալ տեղին , և* թափեաց (*հանեց , դուրսեց*) *զնոսա նաւն ի կղզին , և ինքն* այսրէն դարձաւ (*վերադարձաւ*)։ *Եւ յայնմ կղզւոջ ոչ գտանէր ոչ ջուր ըմպելոյ և ոչ դոյզն ինչ արմատ ։ Վասն այնորիկ իսկ տարեալ էր (մարդկանն) զնոսա անդր զի սովամահ լիցին նոքա ըստ խստութեան հրամանի թագաւորին ։ Եւ եղև իբրև* եհաս (*դիմեցաւ*) *նոցա յամել անդ ամսօրեայ մի ժամանակ , որ տկարագոյնքն էին ի նոսա՝ սկսան* ցքողել (*ցամքիլ , տոչորիլ*) *ծարաւել* ցուաղել (*մարիլ*) , *և* ցերգեւեալ դոսոմել (*հիւծիլ*) *ի քաղցոյ ։ Եւ յարեաւ ի ծովու անդ հողմ սաստիկ , և սկսաւ ընկենուլ ի կղզի անդր ձուկն յոյժ , մինչև չեղջս չեղջս կուտել ի ցամաքի , և ընդ նմին փայտ սաստիկ յոյժ ։ Հանին կուտեցին արքն զփայտն , և (փայտքն) լուցեալ վառէին . ապա մատուցեալ արկին զձկունսն ի խորովս (խորովեցին) և բազմեցան յուտել ։ Իբրև կերան յագեցան և պէտք եղեն ըմպելոյ ջուր , յոտն եկաց սուրբն Ներսէս , և մատուցեալ փորեաց զաւազն ի կղզւոջն , և բխեաց աղբիւր ջրոյ քաղցր , և անտի ըմպէին որք հանապազորդք էին ի կղզւոջն ։ Բուզ .* 90—93 ։

ՊԱՏԺԱՐ Ի ՄԷՋ ԲԱՐՍՂԻ ՆԻ ԱՐԻԱՆՈՍԱՑ

Ապա ի մի վայր եկեալ (*մէկտեղ գալ , ժողվուիլ*) *խորհեցան* մոլեկան (*կատաղի*) *արիանոսաց աղանդոյն վարդապետք , և աւէրին ցկայսրն . Թող* պայքար յանդիմա–

Նուբեան (հալաճառաբիան) լեցի, արքայ, և որոյ կողման
իցէ յաղթութիւնն՝ յայտ լիցի։ Եւ Թագաւորն Վաղէս
զայս լուեալ խնդալից լինէր։ Ընտրեաց իւր արս եր-
կուս ճարտարս և պատրաստաբանս, զորս կարծէր
դպիրս բանիբունս (ճարփարախօս) աղանդոյն արիանոսաց.
և առաքէր պատգամ առ եպիսկոպոսն Կեսարու Եւսե-
բիոս գալ ի պայքար յանդիմանութեան։ Ապա իբրև
սահմանեցաւ (որոշել) ժամադրութիւն, առեալ եպիս-
կոպոսն Եւսեբիոս զկղերն զամենայն ի մեծ հոգս մտա-
նէր, և հաստատեցաւ այս բան ի խորհրդեանն, յղել
և հաւանեցուցանել (համոզել) զերանելին Բասիլիոս գալ
առ նոսա։ Գրեաց թուղթ աղաչանաց եպիսկոպոսն առ
երիցապետն Բարսեղ մի՛ դնել ի մտի (միտք) զառաջին
բանիցն գժտութիւն, այլ վաղվաղակի փութալ գալ
առանց դանդաղանաց։

Այն ինչ արքն յուղի անկան (ճամբայ ելան) երթալ
ածել անդր զԲասիլիոս, նա կայր ի պաշտաման Տեառն,
և անկաւ նմա քուն ծանր թանձրամած, և տեսանէր
ի տեսլեան զի այգի մի էր մեծ և վայելուչ, քաջարբեր,
լի պտղով. և խոզք երեք անկեալ էին յայգին, ապա-
կանէին զնա և բրէին, պատառէին բազում ունջս (քէ-
ֆէ+) որթոյ, արմատաքի խլէին զտաշտսն (բողչօզ) գըլ-
խովին, և զբազուկսն (ծէօղ) ընջովին (արմաղօվ)։ Եւ
մատուցեալ էին այգեգործքն, ջանային և ոչ կարէին
հանել զճիւաղակար խոզսն յայգւոյ անտի։ Ապա զաղա-
ղակ հարեալ (պօռալով) գոչէին առ Բասիլիոս և ասէին,
Եթէ ոչ դու, Բասիլիոս, եկեսցես, ոչ ոք կարէ հա-
նել զսոսա. աճապարեա, եկ հասիր, զի աւասիկ զիւաս
մեծամեծս առնեն։ Ապա մատուցեալ Բասիլիոս հանէր
զխոզսն յայգւոյ անտի, և կազմէր զխախտածն։ Զարթ-
եաւ սքանչելին Բարսեղ և էր մտախորհ զարմացեալ՝
թէ զինչ տեսիլն իցէ. և անդէն հասեալ առաքեալքն
ի Կեսարեայ քաղաքէ մատուցանէին նմա զթուղթն։

Իբրեւ ընթերցաւ Բասիլիոս զթուղթն, խնդայր և ուրախ լինէր, զի գիտաց թէ յԱստուծոյ պատրաստեցաւ կոչել նմա (Աստուածն էղաւ որ կանչուեցաւ) ջատագով ճշմարտութեան, և յարուցեալ գնաց զհետ կոչելեացն (կոչուեց), և չոգաւ առ եպիսկոպոսն Եւսեբիոս։ Իբրեւ խորհեցան երկոքին զարժանն, ասէ Բասիլիոս ցեպիսկոպոսն խնդրել ի կայսերէ իշխանութիւն՝ զոք յերիցանց տանել ընդ իւր։ Եւ խնդրէր Եւսեբիոս ի կայսերէ և ասէր. Երկուս ածես ինձ ախոյեանս, թող եկեսցէ մի ոք ընդ իս յերիցանց իմոց։ Եւ հարցանէր կայսրն ցԱրիանոս եպիսկոպոսս, և յանձին կալան (յանձին ունել, հաճիլ, յանձն առնուլ) նոքա զի ածցէ Եւսեբիոս ընկերս ընդ ինքեան յորժամ գայցէ յատեանն։ Իսկ իբրև ժամ ատենին հասանէր, առեալ ածէր կայսրն զեպիսկոպոսն Եւսեբիոս և ընդ նմա զերանելին Բասիլիոս զերիցապետն, և զերկուս ախոյեանսն որ ի կուսէ արիանոսաց, որք մտանէին ի բանից քննութիւն։ Եւ Բասիլիոս որ զկնիագոյն (ետեւ-օր) կայր եպիսկոպոսին Եւսեբի, ածեալ վկայութիւնս յամենայն աստուածաշունչ գրոց, զերկոսին ախոյեանսն կարկեալ (պապան-ձեցնել) ըմբռնեալս ամօթապարտեալս հանդերձ թագաւորաւն կացուցանէր։

Ապա հայեցաւ թագաւորն Վաղէս ընդ եպիսկոպոսն և ետես զի քրտնեալ էր, սկսանէր խօսել և ասէր. Արդ զի՞ է զի այդչափ հոսեն ի քեն քրտունքդ, զի ի բանս ճշմարտութեան քննութեան վարձկանագրչաց յաղթեցեր (ինչո՞ւ համար այդչափ քրտինք կը թափես, մանաւանդ առանց յաղթելու, վարձկանի մը գրչին յաղթեցիր)։ Ետ պատասխանի Բասիլիոս թագաւորին և ասէր. Երկուս խազս և մի էշ վարեալ (քշել) է մեր այնչափ ընդ երկար ճանապարհ, և դու ասես. Զի՞ ես քրտնեալ այդչափ։ Զղջացաւ թագաւորն թէ ընդէր զԲասիլիոսն հրամայեաց բնաւ օժանդակ Եւսեբի թողուլ ի ներքս։ Ապա յոտն

կացեալ ամօթով արիանոսքն ասացին ցԹագաւորն․ Ընդէ՞ր այս աշխատութիւն քննութեանց են, այլ տիրաբար տուր հրաման զի որ քո կամացդ ոչ լուիցեն, անկցին ի տագնապ նեղութեան։ Եւ լուծեալ ատեանն վճարեցաւ (*վերջացաւ*)։ *Բուզ*․ 94—98։

ՏԷՍԻԼ ՍՈՓԵՍՏԵՍԻՆ

Ապա խնդիր հրամայէր առնել Թագաւորն Վաղէսզի տեսցեն գտցեն այր մի ճարտար որ կարող իցէ դնել, (*շուրտըրել*) *գրով բանս դիմադարձութեան ընդդէմ հաւատոց քրիստոնէութեան։ Եւ պատմեցին նմա զի էր այր մի Սոփեստէս ճարտար ի քաղաքի միոջ։ Ապա առաքեաց կայսրն առ նա իշխանս զի երթիցեն փութով, և* անճզքաղապէս (*անյաղաղ*) *զայրն առ նա ածցեն։ Իբրև գային օթեւանս երկուս, դէպ եղև նոցա դիպել այլ քաղաքի միոջ, և արտաքոյ քաղաքին էր վկայանոց մի սուրբ տիկնոջն Թեկղի։ Էջ Սոփեստէսն, և իւր* վանս ունէր (*էջեւանել*) *ի ներքս ի վկայանոցի անդ․ իսկ իշխանքն ունէին իւրեանց վանս ի քաղաքին։ Իբրև կերաւ հաց Սոփեստէսն, էարկ անկողին, և փակեաց զդուրս վկայանոցին, և* ի նիստ եղեալ (*նստել*) *ի վերայ անկողնին կամէր* լինել ի կողմն (*ընկողմանել, պառկել*)։ *Մինչդեռ արթուն էր, աչօք բացօք տեսանէր զի յանկարծ բացան դրունք վկայանոցին, և եղև ժողով մեծ բազմութեան վկայից։ Եւ ելանէր ընդ առաջ նոցա, սուրբ տիկինն Թեկղէս զարդարեալ մեծապայծառ, զի* ճշոյլք *որպէս* ի լուսոյ հատանէին (*լոյս կ'արձակուէր*) *ի նմանէ, և ասէր ցնոսա տիկինն Թեկղ, Բարի եկիք, սիրելի բարեկամք։ Տուեալ միմեանց ողջոյն, արկեալ զիւրաքանչիւր աթոռսն նստէին կարգաւ։ Ապա սկսանէին սուրբքն խօսել և ասէին․ Սուրբք Տեառն ի նեղութեան են, են որք ի կապանս են, են որք ի բանտս*

և են որք յաքսորս, և են որք յայլ բռնութեան և ի խոշտանգանս (փանճանէ) *չարչարանաց։ Բազում մշակք տեառն խափանեալ կան, և բազում անդք ի* դերեւելին (անդրդուղ ճառլ) *և բազում այգիք խոպանացան. արդ եկայք առաքեսցուք ի մէնջ երկուս, որք երթեալ* վճարիցեն ի կենաց (կեանքը վըրնօցնէն) *զչարագործն Վաղէս։ Եւ արձակէին երկուս, միում անուն էր Սարգիս, և միւսումն Թէոդորոս։* Դնէին ժամ (ժամադէր լինել) *և աւէին. Վաղիւ ի սոյն ժամու եկեսջիք դուք այսր։ Զայս ամենայն լուեալ Սոփեստէսն կայր զարմացեալ, և անքուն լինէր մինչև ցառաւօտն։*

Եւ ընդ այգս այգոյն (առաջուանց կանուխ) *եկին Հասին իշխանքն և ասեն ցՍոփեստէսն. Արի գնասցուք զճանապարհ մեր. և նա* խօթապատճառս լինէր (հէյանը կը յեռանէր), *և ոչ կարէր ի տեղւոյն խաղալ։ Իբրև սկսան նոքա ստիպել զնա, նա* թալանայր (մոռէլ), ոգի զոգւով ածէր (կը հեւար), *և ոչ կարէր բանիցն տալ պատասխանի մինչև ցերեկոյ։ Ապա իբրև երեկոյ եղև, թողին զնա իշխանքն ի վկայանոցին, և գնացին ի քաղաքն,* ի վանս (բնակարան) *իւրեանց։ Եւ Սոփեստէսն փակէր զդուրս վկայանոցին և ի կողմն լինէր յիւրում տեղւոջն։ Յանկարծակի բացան դրունք վկայանոցին և եկին կուտեցան վկայքն. ապա արկանէին զաթոռս իւրաքանչիւր, և* յօրինեալ բոլորեին կարգեին ի նստել (կըր շուռ-նելով կը նուաէին)*։ Եւ գային սուրբքն Սարգիս և Թէոդորոս ի գործոյն։ Հայեցեալ բազմութեան ժողովոյ վկայիցն, ասեն ցնոսա. Ո՞րպէս, յոր գործ երթեալ էիք՝ վճարեցէ՞ք։ Պատասխանի տուեալ երկոքեան ասէին. Յորժամ ի ձէնջ գնացաք, սպանաք զթշնամին ճշմարտութեան զՎաղէս։ Եւ յահի մեծի լինէր Սոփեստէսն մինչեւ յառաւօտն։ Ապա իբրև այգ եղև, եկին իշխանքն և ասեն ցՍոփեստէսն. Արի, գնասցուք առ կայսրն։ Նորա պատասխանի տուեալ ասէ. Կայսրն մեռաւ,*

արդ մեք առ ո՞ երթիցուք։ Եւ բազում վիճումն լինէր ի մէջ նոցա վասն այսր բանիս, և գրաւական եդին (դէօ-քօնել) ի մէջ մինչև յերիս աւուրս․ և յետ երից աւուրց ստուգեցաւ զրոյցն, զի մեռեալ էր կայսրն։ Բուզ․ 100—103։

ՀԱՅՔ ՅԵՏ ՄԱՀՈՒՆ ՅՈՒՍԿԱՆ

Երանելին Յուսիկ յաջորդեաց զտեղի հայրապետացն Հայոց։ Եւ էր սա աւուրբք մանուկ, տիօք առոյգ, բարձր հասակաւ, գեղով երեսաց սքանչելի և չքնաղ, սուրբ և պայծառ հոգւով, ամենեւին ոչինչ զբաղեալ ընդ աստիս (աստիք, այս աշխարհս), իբրեւ զքաջ սպառազէն Քրիստոսի, իբրեւ զախոյեան նահատակ ի տղայութեան տիոց նշկահեր (դէմ դնել, դէմ ելլել) աներեւոյթ թշնամւոյն։ Ակն առնուլ կամ աչառել (երեսպաշտութիւն ընել) մարդկան բնաւ ամենեւին ոչ գիտէր, այլ զբան Հոգւոյն սրբոյ սուսեր ածեալ (կապել) ընդ մէջ իւր կրէր։ Իսկ և այլ մեծամեծ աւագանին ոչ ինչ ըստ Աստուծոյ կամացն վարս յանձն առեալ իմաստուն ինչ գնացեալ լինեին (կը ճարտէին), վասն որոյ հանապազ բանիւն Աստուծոյ խոցոտեալ լինէին ի սուրբ հայրապետէն։ Իբրեւ յաւուր միում դիմեաց գալ թագաւորն հանդերձ աւագանւովն մտանել յեկեղեցին, իսկ նա (Յուսիկ) ընդդէմ բարբառեալ ասէր․ Չես արժանի, նի՞մ (ընդէ՞ր) գաս․ մի գար ի ներքս։ Վասն որոյ հրաման տայր թագաւորն անդէն ի ներքս քարշել զնա յեկեղեցւոյն։ Եւ բրածեծ եղեալ, ջախջախեալ (կոտըր-տէլ) երանելի մանուկն Յուսիկ, կիսամահ կոշկոճեալ (ծե-ծուիլ ատտւէլ) ընկեցեալ լինէր, զոր բարձեալ պաշտօնէիցն բերին ի գեւղն Թորդան, և անդ ոչինչ յետ բազում աւուրց հանգեաւ։

Զկնի քոպամահն լինելոյ (ծեծով սպաննուիլ) երանել–

ւոյն Յուսկան, անառաջնորդ եղեալ իբրեւ զկոյրս մոլորեցան կամակոր (յամառ) ազգ տանն Հայոց, զի ոչ ոք գոյր որ նոցա մոլեգնութեանն պատկառուկս արկանէր (ամչնալ, զղջալ). նմանեալ լինէին այնմ հօտի խաշանց որ զպահպանութիւն չանցն պահապանաց ի բաց մերժիցեն, և իւրեանց կամօք գէշ (որս, կեր) այլոց մատնեցան։ Զմեծամեծս իւրեանց օրինակ չարի առնէին, նովին օրինակաւ ձեւել սկսան և նոյնպէս գործել. Զի ի վաղնջուց (ի սկզբանէ), յորժամ առին նոքա զանուն քրիստոնէութեան, լոկ իբրեւ զկրօնս իմն մարդկութեան (մարդկային) և ոչ ջերմեռանդն ինչ հաւատովք ընկալան զնա, բայց միայն ի սակաւուց որք զհանգամանս գիտէին Հելլէն կամ Ասորի դպրութեան (Յունարէն կամ Ասորերէն լեզուի տեղեակ էին)։ Իսկ խառնաղանճ (ամբոխ, հասարակ) բազմութիւն մարդկանն, մեծամեծաց և շինականաց, եթէ զցայգ և զցերեկ նստեալ վարդապետաց, ըստ նմանութեան ամպոց, իբրեւ զյորդահեղեղ ինչ անձրեւաց սաստկութիւն՝ զվարդապետութիւնն ի վերայ հոսէին, ոչ մի բան և ոչ կէս բանի, ոչ դոյզն յիշատակ ինչ և ոչ նշմարանս ինչ յորոց լսէինն՝ կարէին ունել ի մտի (հասկնալ). վասն զի միտք նոցա ընդ անպիտանս և եթ զբօսեալ (զբաղել) էին. զկարեւորացն ոչինչ փոյթ արարեալ՝ դեգերեալ մաշէին յանուղղայս (ծուռ ճամբաներու երթալ էին) ըստ չքոտի (չնչին) մտաց հեթանոսութեան, զիւրեանց երգս առասպելաց զվիպասանութեան սիրեցեալք ի նոսին հանապազորդէին, ի հեռ (ատելութիւն) և ի նախանձ, ջարակնութեամբ (նախանձու) և ատելութեամբ ոխութեան զմիմեանս խածատէին և նենգէին այր զընկեր (զընկերն)։

Իբրեւ ոչ ոք գոյր յորմէ խիթային (ակնածել, քաշուել), և ոչ հովիւ կամ առաջնորդ որ կայր գլուխ ժողովրդեանն, մեծամեծք հաւանեցուցին զՏիրան ածել զծերունի քորեպիսկոպոսն Դանիէլ, զի նստցի նա յաթոռն

հայրապետական, և ած ին զնա առ արքայ։ Իբրև մատանէր նա առաջի նորա, անդէն ի ձեռն առնոյր զկշտամբութիւնն (յանդիմանութեան)։ Մինչդեռ խօսէր նա, հիացեալ զարմացեալ Տիրան և միտ եդեալ լուռ և եթ կայր, և ապա բորբոքեալ ցասմամբ հրաման տայր անդէն խեղդամահ առնել զնա։ Մեծամեծք չատ եղին ի մտի (խրատ տալէն) Տիրանայ չառնել ինչ վնաս առնն, այլ նա ոչինչ անսաց նոցա, և սպասաւորացն լուեալ զհրամանն՝ ճոպանի (չուան) ի փող եդեալ խեղդամահ արարին զծերունին։ Բուզ. 26—42.

ՔՍՈՒԹԻՒՆ ՓԻՍԱԿԱՑ

Բայց դեռ բարեկամութիւն էր ի մէջ Թագաւորին և Պարսից, այլ անկաւ խռովութիւն արամբ միով անարգաւ որ ոչինչ պակաս քան զդև էր մոլորութեամբ և որոյ անուն Փիսակ կոչէր, որ և սենեկապետ էր, ազգաւ Սիւնի։ Սա դեսպան գնացեալ էր առ Վարազ Շապուհ զոր թողեալ էր սահմանապահ արքային Պարսից յԱտրպատական աշխարհին։

Զայնու ժամանակաւ ձի մի էր երիւար (արու ձի) զորմէ կարի զարմանային, և էր ձին գունով ճարտուկ ճանճկեն (ղէշակ), լի քաջութեամբ, հոյակապ (փառաւոր) մեծ և բարձր քան զամենայն ձիս, և համեմատ նմա այլ ոչ գտանէր։ Սենեկապետն արքային Փիսակն մատնեաց զձին Վարազայ, որ խնդրէր յարքայէն զձին թղթով. զոր Փիսակն առեալ բերէր արքային, և արքայն տալ ոչ առնոյր յանձն զձին. այլ զի կասկածէր (կը վախնար) յառնէն, ի խնդիր անկանէր գտանել զնոյն գոյն (նոյն գունով) ձի. և երիվար մի նմին նման ճարտուկ ճանճկէն գտեալ, բաց ի մեծութենէն, հանդերձ պատարագօք (ընծայներ) ի ձեռն մոլեկանն Փիսակայ առ իշխանն Ատրպատականի առ Վարազ արձակէր։ Ասասցես, ասէ,

եթէ այս ինքն է զոր խնդրեցերն, զի առ սէր քո ոչ խնայեաց 'ի քէն։ Իսկ Փիռակայ հասեալ առ Վարազ՝ յայտնէր զիրս խնայութեանն։ Այնչափ, ասէ, ի հեռ և ի նախանձ, ի չարակնութեան (չֆաշել), ի թշնամութեան, յատելութեան, ի չկամութեան (հոխոխրոնբխան), յերկմտութեան և յանհրկիւղութեան է առ քեզ և առ թագաւորն Պարսից արքայն, մինչ անգամ վասն կաշուոյ միոջ խնայ արարեալ թաքոյց, և զքեզ ծաղր արար այլ ընդ այլոյ (Յեռան տեղ ռըէշ Յէ) առաքեալ զի զմիտս քո զողացցի (ֆեղ խոջե)։ Եւ ոչ այդ միայն է, ասէ, այլ և ի կայսր և ի զօրս նորա յուսացեալ խորհի հանել (ռոնոււ) զթագաւորութիւնն Պարսից յազգէն Սասանայ, զի ասէ թէ Մեր լեալ է և հարցն մերոց այն տէրութիւն, և չեմ ծուլալոց (դէոբ ըշտոդըէմ) մինչև զնախնի թագաւորութիւնն Պարթևաց այսրէն (նոքէն) առ զաւակ (օերոնտ) նոցա յազգ իմ դարձուցանեմ։

Իբրև զայս ամենայն լուաւ Վարազ Շապուհ ի կատաղախօս, ի չնաբերանն Փիռակայ, վաղվաղակի նամակ (ֆէր) ամբաստանութեան գրէր զարքայէն Ներսեհի արքային Պարսից, և առնոյր հրաման ի նմանէ մարթել զտանել ճանապարհս (հնարք մը ֆոնել), մեքենայիւք (նենգաւընեամբ) գայթակղութիւնս դնել որսալ ըմբռնել զարքայն։ Ասլա Վարազ արձակէր դեսպան առ արքայն, և զանձուկ սիրոյ պատճառեալ (օէր և կարօտ ռանենալ կեղծելով)՝ համարձակութիւն խնդրէր զալ նմա առ նա (ոք անոր երթայ)։ Իբրև լուաւ զայս արքայն, փութապէս մեծաւ ուրախութեամբ առ ինքն կոչել զնա հրամայէր։ Եւ մինչչեւ նա եկեալ էր, խորհէր արքայն ընդ իւր ծառայսն, սպասաւորս իւրոյ սենեկին, և ասէ. Արժան է մեզ զայրն որ գայ առ մեզ՝ զբօսուցանել և ուրախ առնել որսովք. բայց մի մեծ ինչ նախճիրս որսոց կոտորեցուք (շատ անասուն ջարդաննեն+) առ ի ցոյցս առնելոյ (ցուցք համար), այլ վարկպարագի (ըներն,

Պէր է Պէրդ) *արասցուք վասն չարակնութեան և յաչա-*
ղանաց (*չար նախանձա*) *չարաբարոյ և ննենգաւոր ազ-*
գին Պարսից ։

Ապա եկն եհաս Շապուհ Վարազ երիւք հազարօք , յանդիման եղև Թագաւորին յերկրին Ապահունեաց , և մեծապէս մեծարեցաւ ի նմանէ ։ Այն բանք որ վա-
սըն որսոյն ի Թագաւորէն ասացան՝ վաղվաղակի յունկն զօրավարին Պարսից հասանէին ի բերանոյ շորիկն շոգ-
մոզն (*քանարկա*) *տիրանենգն տիրադրուժն տիրամատ-*
նիչն տիրասպանուն Փիսակայ , յաշխարհակործոյս առնէ
անտի ։ Այլ իշխանն Պարսից զԹշնամութիւնն զոր ու-
նէր ի ներքոյ՝ խորամանկեալ առագաստեալ (*ծածկել*)
բերէր , և առներ սպաս (*դարեհանըեան կը պաեր*) *զդաւն*
կատարել ։ Եւ ի ժամանակին յայնմիկ այնպէս դիպեցաւ
զի զօրավարք Թագաւորին չէին անդ , այլ սարտուց-
եալ (*օրդողըլըմ երեւալ*) *էին , և մեծամեծք ի նախարա-*
րացն և աւագ տանուտեարք (*ցեղաղեր*) *և զօրքն ար-*
քունի յիւրաքանչիւր կայանս դադարեալ էին , և ոչ
էին միացեալ առ Թագաւորին ոչ գունդ և ոչ այրու-
ձի , բայց միայն սակաւ սպասաւորք՝ որսոցն պառա-
կանօք (*օրսէ Բախըլմ , շաներ*) *և* ռահվիրայ (*ճամբայ քացող*)
մարդկաւն և խառնաղանձ (*ղոյաղէ*) *խորանապահ զօ-*
րուն , և տիկնաւն հանդերձ արքայորդին , մանուկն ։
Թէպէտ և ետես արքայն հարուստ (*ղըրաար*) *գնդաւ*
եկեալ զզօրաւարն Պարսից , զի էին ընդ նմա սպառա-
զէնք վառեալք արք իբրև երեք հազարք , ոչինչ խի-
թացեալ (*կաակածէլ*) *զգուշաւ (զգուշութեամբ) , ան-*
կասկած լինէր ։ Իբրև ոչ բազում աւուրք ընդ մէջ եղեն
(*շար օր ղանցա*) ընթրիս առներ (*ճաշ տաւլ*) *զօրավարն*
Պարսից , ի հաց հրաւիրէր զարքայն ։ Իբրեւ ընդ գինիս
մտին (*Երբ գէնէ խոնըլա ականն*) քաջ (*շար*) *արբեալ լի-*
նէին Թագաւորն և որ ընդ նմայն էին , և զօրն Պար-
սից դարանակալ՝ յանպատրաստից յանկարծօրէն ի վե-

րայ հասեալ ըմբռնէին զնոսա յիւրաքանչիւր բազմականի, և վահանափակ (վահանով ծածկուած) շերտաւորացն (որոնց որ ձեռքը շերտ կայ) հասեալ պատէին զԹագաւորն, և կալեալ կապէին զոտս և զձեռս Նորա ի կապս երկաթիս, զբանակն աւար հարկանէին, և զգանձս և զստացուածս, զկին և զորդիս Թագաւորին զոր գտին ի բանակին՝ խաղացուցին (տարին) յերկրէն Ապահունեաց։ Իբրև եկին հասին ի գեւղ մի որում անուն Դալարիս կոչէին՝ առ է վարազ. Աղէ, տեսէք (բերէք) ածուխ, որով երկաթ շողացուցուք (շողացունել, կրակի մէջ կարմիր ընել) զի զաչս խարեսցուք (դաղ երկաթով աչքը հանել) զարքայիս։ Եւ անդէն բերին ածուխ, և խարէին զաչս Տիրանայ։ Բուզ. 49–53։

ՄԱՐԴՊԵՏՆ ԵՒ ՄԱՀ ՆՈՐԱ

Եւ մարդպետն Հայր էր այր չար և ժանտաբարոյ, անօրէն և անիրաւ քան զառաջին Հայր անուն մարդպետն։ Ելանէր նա շրջել ընդ մարդպետութիւն իւր, և եկն էջ ի գաւառն Տարօնոյ զիւր դեւղսն տեսանել։ Զայնու ժամանակաւ և սուրբ կաթողիկոսն Ներսէս շրջէր ընդ իւր ձեռական իշխանութիւնսն (կալուած), զի հնգետասան գաւառ ձեռական իշխանութեան ունէին հայրենական ի բնմէ (առաջուց ի վեր) կաթողիկոսք Հայոց։ Ցանկացաւ մարդպետն ելանել ի սուրբ տեղին Աշտիշատու կալ յաղօթս, և առնուլ ողջոյն ի սրբոյ եպիսկոպոսապետէն Ներսիսէ։ Իբրև կացին երկոքեան յաղօթս, ետուն ողջոյն, և հրաման տայր սուրբ հայրապետն Ներսէս սպասաւորաց իւրոց ճաշ պատրաստել մարդպետին և եկելոցն ընդ նմա։ Մինչդեռ նոքա պատրաստէին նմա արժանի աւագօրէն սպաս (կերակուր), նա ելանէր յեպիսկոպոսական կայանէն, յապարանիցն մինչև ի վկայարանս սրբոցն, ի մեծ և ի գեղեցիկ հրա-

պարակին զերթեւեկս առեալ շրջէր (ճեմել)։ Տեսանէր զգեղեցկութիւն վայրացն, զճիստ (դէրէ) զքեղուքեան (չէօլ) բարձրաւանդակ տեղեացն, և զնայեացն ի խոնարհ (դէօշ է ճօր նայօնաժէլը, դէնէլը) զի կարի վայելուչ էր, և չարակնեաց (նախանձեցաւ)։ Ապա եմուտ բազմեցաւ յուտել և ըմպել։ Յորժամ արբեցաւ. սխալակեցաւ (գէնօլէօլ, քէֆ ըլըլ), սկսաւ ներքինին խօսել բանս հպարտս և ամբարտաւանս յարբելեաց (գէնօզօրեան օրէնը)․ ղնէր բշնամանս (կը նախատէր) — — —, ազգի և տակի (ցեղ) և տոհմի — — — — — — — — — —։ Զիա՞րդ, ասէ, զայսպիսի տեղիս կանանցահանդերձ (կնկան ոէօ ոէէօր հօգնօղ) մարդկան տուեալ է, և ոչ արանց։ Եւ զսուրբ սեղեօքն քամահեալ արհամարհէր, և ասէր. Զայս տեղիս ի բաց քակեմք, զի աստ պարտ է շինել զապարանս արքունի։ Եթէ ես Հայր մարդպետ կենդանի իցեմ և առ թագաւորն հասից, զորս իցենն աստէն՝ զնոսա հանից և զտեղիս սենեակ արքունի կազմեցից։ Իսկ սուրբ եպիսկոպոսապետն յորժամ լսէր զայս, ասէ, «Տէր մեր Յիսուս Քրիստոս որ պատուիրեաց մի ամենեւին յայլոյ ինչ ակն դնել (ալէ ոնկել) կամ ցանկալ՝ ընտրեաց զայս տեղի դնել զանուն իւր աստ. իսկ որ ձլատեալ ի նորա նուէրսն բերեն աչս՝ (օգահելաշ ալէ ոնկել) մի հասցեն որում ցանկանն։» Ապա գնայր մարդպետն Հայր ի սուրբ տեղեացն, և էջ յափն գետոյն հոսանացն Եփրատու, ի հովիտս Թանձրախուռն անտառին, ի գետախառնուռնսն երկուց գետոց, ի Թաւուտն խարձից (խօրշ, անփառ) մամխեաց (գէօյէ օլըր), յորում տեղւոջ ի հնումն էր շինեալ քաղաք Սանատրկոյ։ Իբրև եկն եհաս մարդպետն յայն տեղի, մատնեցաւ նա ի ձեռս առն միոյ որում անուն Տաւասպ կոչէր, Մեացորդ ազգին Արծրունեաց։ Մինչդեռ նստէր Հայր ի կառսն և երթայր զճանապարհն, եկն Տաւասպ, սկսաւ պատմել մարդպետին

սուտ ի քմաց իւրոց (էր թօզէն սօսօր), և ասէ. Արջ մի *տեսի սպիտակ իբրև զձիւն։ Եւ հրապուրեաց զմարդ-պետն իջանել ի կառաց անտի և հեծանել ի նժուգի*, *և մտեալ* պառակէին մայրեացն (*անտառըն մէջ օլօ ըմբ-լը օլան*)։ *Իբրև ընդ Թաւուտսն անկանէին*, զկնի եղ-եալ (*եօրէ կէնալ*) *սակաւ մի Շաւասպն*, յետսագոյն մնացեալ (*եօրէ ճալ*), յետոյ յառաջ (*եօրէ-էն դէլ աալ*) *նետիւ հարկանէր զմէջ ներքինւոյն Հայրի, և անդէն* թափ հանէր (*դէկ կօղէն մօա կօղը անլաանէլ*) *զնետն*։ *Անդ յերկիր անկեալ սատակեցաւ մարդպետն*։ *Եւ առնն Աստուծոյ ասացեալքն* հուպ ընդ հուպ (*շօտօլ*) *կատա-րեցան, զի ամենեւին բան ի գետին ոչ անկանէր առնն Աստուծոյ*։ *Բուզ*. 113-115։

ԱՄԲԱՍՏԱՆՈՒԹԻՒՆ ԶԳՆԵԼԱՅ

Զայնու ժամանակաւ էր դուստր մի գեղեցիկ Ան-դովկայ նահապետին Սիւնեաց, և Գնէլ էառ զնա ի կնութիւն։ Առ համբաւ գեղեցկութեան կնոջն հօրեղ-բօրորդին Գնելայ Տիրիթ տըրփեալ (*օխտահարէալ*) անկա-ներ ի գաղտագողօնս, մինչ զի զնուն իւր տեսանել կարասցէ (*ծածանկ եօրէ-է էր էր հօրըը տէանէլը*)։ *Եւ յոր-ժամ* եհաս որում ցանկայրն (*էրք քօղչանէն հաասա*), *այ-նուհետեւ* հնարս (*դէչօյ*) *խնդրէր կորստեան առն կնոջն*, ո գիտէ (*Բէրէաա*) *զկնի նորա նմա հնար լիցի յափշտակել զնա*։ *Ապա* ի հնարս նենգութեան մտեալ (*Նէնգօ-Բէան քանէցնէլօմ*) քսիս ստութեան *զԳնելոյն* առ թագաւորն մատուցանէր (*օսօտ խօս կը խօանէր Բօգաաօրէն թօմ*)։ *Գնէլ, ասէր, Թագաւորել կամի և զքեզ սպանանել*։ *Ամենայն մեծամեծք սիրեն զԳնէլ, և ամենայն աշխարհիս նախա-րարք կամին զտէրութիւն նորա ի վերայ իւրեանց առա-ւել քան զքո*։ *Արդ, գիտա և տես, արքայ, զինչ գոր-ծեսցես, զիարդ* մաքրասցիս (*կօրէնաա*) ապրել (*օշօտէլ*)։

Ոխացեալ Թագաւորն ընդ պատանեկին Գնելոյ, Նիւթէր նենգութիւն (նենգամտութիւն կը խորհէր, կը դաւադրէր) բազում ժամանակս։ Ապա զնաւասարդաց ժամանակօքն առնէր խորհուրդ Թագաւորն կոչել առ ինքն զպատանեակն Գնէլ և սպանանել։ Առաքէր զՎարդան, զնահապետ Մամիկոնեան տոհմին պատրանօք և հրապուրանօք ածել զնա մինչև ի տեղի մահուն։ Եւ էր բանակ Թագաւորին ի Շահապիվանի։ Երթեալ Վարդանայ մեծաւ ուխտիւ և բազում պատրանօք հաւանեցուցանէր զպատանեակն Գնէլ հանդերձ կնաւն երթալ ի բանակն արքունի, և իբրև այն թէ ի մեծարանս ինչ զնա կոչիցէ Թագաւորն՝ բազում խնդրանօք տարեալ հասուցանէր ի բանակն։ Ոչ կամեցաւ, ասէ, Թագաւորն զտօնս Նաւասարդաց առանց քո անցուցանել, վասն զի եհաս ի վերայ (հասաւ) զի զուր առնէր զքեզ որ ի նմանէն մեծ սիրոյ արժանի ես։ Եւ յայնմ աւուր տօն դիպեցաւ յիշատակի մեծին Յովհաննու որ ի Գրիգորէ յաւանին Բագաւանի կարգեալ էր։ Եւ յայնմ գիշերի ցայգապաշտօն (գիշերային պաշտօն) մեծ եղև ի բանակին առ կաթողիկոսին։

ՍՊԱՆՈՒՄՆ ԳՆԵԼՈՅ

Իբրև առաւօտն ծագեաց, հասանէր վաշտն (գունդը) Գնելոյ ի բանակն, և մինչ Գնէլն արքունական բանակին լինէր միջամուխ (կը մտնէր), ազդ լինէր Թագաւորին եկն (գողունի) նորա, և անդէն յարքունուստ հասանէին բազում սպասաւորք վառեալք, սուսերաւորք, նիզակաւորք, վաղրաւորք (վաղր, կոր թուր). սակրաւորք (սակր, կացին), սուսաւորք (սուին, սվինի), և սպարակիր (վահանաւոր) հետեւակք, որք բուռն հարեալ ընկենուին յերիւարէ զպատանեակն Գնէլ, և ձեռս յետս կապէին զնա, և առեալ գնային ի տեղի կառափելոյն (գլխատման տեղը)։ Եւ քանզի կին նորա եկեալ էր

ընդ նմա ժանուած (ժանու, Բոխնըրաձան) և ի նմին վաշտու էր ընդ առն իւրում, իբրեւ տեսանէր թէ կալան զայր իւր և կապեցին, վաղվաղակի ընթացաւ յեկեղեցախորանն ուր առաւօտին աղօթքն մատչէին, և անդ էր Ներսէս մեծ եպիսկոպոսապետն: Հասեալ կինն առ եպիսկոպոսապետն գոյժ արկանէր նմա զիւրոյ առնն տարապարտ կորուստն (իր երկանը անէյրաս մահուան փէսար լուըը կուտար): Ճչէր (կը պոռար) մեծաձայն, Վաղ հասիր: ասէ, զամուսինն իմ առանց վնասու (յանցանքէ) խողխողեն, Մեծին Ներսիսի խափանեալ (դադրեցանել) զպաշտօնն, ընթանայր ի խորանն արքունի: Իսկ թագաւորն իբրեւ տեսանէր զմեծ քահանայապետն, գիտացեալ զբարեխօսութիւն համոզելոյն վասն առնն մահուանն, զիւր սամոյրսն զգլխովն ածեալ (սամոյրը գլուխը թաղելով), զդէմս երեսացն ծածկէր, քնոյ պատճառ եղեալ (թնաւ ջեանա-լով) զի զնորա բանսն մի լուիցէ: Իսկ սուրբն Ներսէս մատուցեալ բուռն հարկանէր զնմանէ, և խօսէր ընդ նմա բազում ինչ: Բայց նա սալացեալ (թորացեալ) ոչ ինչ լսէր և ոչ կամէր առնել բանիցն պատասխանի, այլ ընկողմնեալ պատեալ ծածկեալ կայր ի գահոյսն (գահաւորակ, վրան նստելու և պառկելու): Մինչդեռ եպիսկոպոսապետն բանս ողորս (որթաշարժ խօսքեր) ընդ նմա խօսէր, գայր արտաքուստ դահճապետն Նրազմակ, մտանէր ի խորանն արքունի, սկսանէր պատմել. Ի գլուխ հանի, կատարեցի, ասէ, զհրամանն արքունի. առի գնացի զԳնէլ, տարայ մինչեւ յորմ Սիւսին, սպանի զնա և անդէն թաղեցի:

Յայնժամ խօսել սկսանէր սուրբն Ներսէս և ասէր ցնա. Փոխանակ զի խցեր դու զականջս քո և կափուցեր (փոցել) զլսելիս զի մի լուիցես զօգտակարս, այլ զգազանաց բարս առեալ սկսար լինել մարդախանձ (մարդու ար-եան ծարաւող), և փոխանակ զի զգործս Կայենի գործեցեր, զանէծսն Կայենի զգեցջիր. չարչարեսցիս ա-

ռաւել քան զՏիրան զհայրն քո, և ղառն մահուամբ զկեանս քո վճարեսջիր ։ Եւ էր արդարեւ տարեալ դահ-ճապետին ղպատանեակն Գնէլ ի սարակ (Բեֆէ) *լերինն,* մօտ յորմածս արգելոցացն որսոյն երեոց (ուրոյ կենդանի-ներուն պատով շրջապատուած տեղին մօտ), *ընդդէմ* մրտաստանին (մրտենիներու պուրակին), *յանդիման* բանակետեղն (բանակետղ, բանակի տեղ) *և անդէն* կառափեալ (կառափել ․ գլխատել) ։

ՍՈՒԳ ՎԱՍՆ ԳՆԵԼԱՅ

Ապա հրաման տայր Թագաւորն զի ամենայն մար-դիկն որ իցեն ի բանակին՝ առհասարակ երթիցեն դի-ցեն աշխար (ողբ) *կոծոյ և լացցեն զԳնէլ սեպուհն Ար-շակունի ․ և ինքն Թագաւորն երթեալ նստէր առ գին և լայր ։ Իսկ կին սպանելոյն, փառանձեմ, զհանդերձսն պատառեալ, զգէսս արձակեալ, ձայն արկանելով ճչէր, յողբս արտասուաց, աղիողորմ գուժիւ առհասարակ զամենեսեան լացուցանէր ։ Եւ Թագաւորն* ի լալիսն (կոծին առնելը) *տեսեալ զկին սպանելոյն ռամէր, և ակն դնէր առնուլ զնա իւր կնութեան ։ Իսկ Տիրիթ որ յառաջագոյն* հարեալ (ուխտահարած) *էր ի կնոջն յայնմիկ, պատգամ յղէր առ նա, ասէ ․* Մի կարի զանձն քո աշխատ առներ այդչափ (այսուհետև ինձմէ մի յուսար), *ես սիրեցի զքեզ և մատնեցի զայր քո ի մահ զի զքեզ առից ինձ կնութեան ։* Մինչդեռ զկոծ մոլութեան զդիա-կամբն ջայլեկին (երբ դեռ մանկին վրայ այս յիմարական լացը կ'ըլլար), *զայսպիսի պատգամս առաքէր Տիրիթն ։*

Իբրեւ իրքն համարձակ յայտնեցան, ձայնարկութքն (աղաղակները) *ի ձայն ողբոցն սկսան նուազել զիրս* տըր-փանացն (ուխտահարութեան) *Տիրիթայ, զակն դնելն, զքսու-թիւնն,* զհնարս մահու նիւթել (ջանք մտածելով միջոց փնտռելը) *և զսպանումն ․* զայս ամենայն ձայնիւք մրմնջոցն

ի վերայ սպանելոյն ի մէջ կոծոյն բարբառէին զեղգեղեալ խանդաղատութեամբ (ֆօրօվլալը եղանալով երփելով կ'ըռէյն այս քանեըը ձանեյն վըրայ)։ Զայս իբրեւ լուաւ Թագաւորն և եհաս ի վերայ իրացն (տեղէկացաւ քանին), զարմացեալ լինէր. արմանայր ընդարմանայր (աղըէլով ձայց), ստրջացեալ (ղըճըլըվ, ցանելով) ի միտ առնոյր զիրսն։ Ապա խօսել սկսանէր Թագաւորն, ծափ զծափի հարեալ մեծաւ զղջմամբ ընդ իրսն զոր գործեաց, ասէ. Վասն զի ի կնոջն Գնելոյ անարժան սիրով հարաւ Տիրիթ, Նիւթեաց քսութիւն, և զմեզ ևս արդար արեանն շաղախեաց զուր և տարապարտ։ Իբրեւ այսպէս պատմէր նա իրացն հաստատութեան վերայ (երբ այդեա հատար կերդով տեղէկացա), և ճշգրտէր (ատտաֆել) զիրսն, խլիվլեալ անսայր առ ժամանակ մի (ժամանակ մը լեց)։ Իբրև աւուրք հարուստ (շար) անցին ի վերայ իրացն գործելոց, պատգամ յղէր Տիրիթն առ Թագաւորն. Կամ լիցի (հանէ), ասէ, քեզ արքայի, զի հրաման տացես, զփառանձեմ զկին Գնելայ թող առից ինձ կնութեան։ Զայս լուեալ արքային, ասէ. Արդ հաստատ գիտեմ եթէ զոր լուայն ստոյգ է. և խորհէր սպանանել զՏիրիթ։

ՄԱՀ ՈՂՈՄՊԵԱՑ ՏԻԿՆՈՋՆ

Յետ այսորիկ էառ իւր Արշակ զկին սպանելոյն զփառանձեմ. և որչափ սիրէր արքայն զկինն, նոյնչափ ատեաց կինն զնա, ասելով թէ՝ Թաւ է մարմնով և թուխ է գունով։ Իբրև կինն ի նա ոչ յանկոյց զմիտս իւր (չհակամերեցան անոր), առաքեաց Արշակ յերկիրն Յունաց, և խնդրեաց էած անտի կին ի կայսերական տոհմէն, անուն նորա Ողոմպի. և ուժգին սիրով սիրեաց զնա, և նախանձուկս արկանէր (Նախանձը շարժել) նմաւ առաջին կնոջն, և կինն փառանձեմ ոխացաւ ընդ Ո–

ղոմպին և խնդրէր սպանանել զնա։ Բայց ծնաւ Փառանձեմ Թագաւորին ուստր մի, և կոչեցին զանուն նորա Պապ, և սնուցին զնա և ի չափ հասուցին։ Եւ իբրեւ չըրթափեաց նա եւ եղեւ հուժկու (երբ չափահաս եղաւ), ետուն զնա պատանդ ի դուռն կայսեր։ Իսկ Փառանձեմն մեծաւ նախանձու և ոխութեամբ գնայր (կը վարուէր) ընդ Ողոմպեայ և խնդրէր սպանանել զնա դեղովք (թոյն)։ Իբրև ոչինչ հնարս մեքենայից (միջոց) կարէր գտանել, վասն զի անձին իւրում զգոյշ կայր Ողոմպին, մանաւանդ ի կերակրոց և յըմպելեաց, զի զիւրոց նաժշտացն կերակուրս արարեալ և զնոցին պարզեալ (քամել, զտել) զգինի ճաշակէր, ապա զերէց ոմն Մրջիւնիկ անուն ի բանի արկանէր (խօսք մէկ կ'ընէր) Փառանձեմն անօրէն։ Ընդ տէրունական ընդ սուրբ ընդ աստուածական մարմինն, ընդ հացն օրհնաց (հաղորդութեան հացը) խառնէր զդեղն սատակման երէցն Մրջիւնիկ, և տուեալ զայն յեկեղեցւոջ Ողոմպեայ տիկնոջն, սպանանէր զնա։ Բուզ. 116-123։

ԱՐՇԱԿ ԳՆԱՑ ԱՌ ՇԱՊՈՒՀ

Ցայնմ ժամանակի կոչէր առ ինքն Շապուհ արքայն Պարսից զԹագաւորն, որ մեծարեցաւ ի նմանէ բազում պատուով և մեծաւ փառօք, իբրև զեղբայր, որպէս զորդի գրգեալ եղեւ (նեղուեցաւ, վրդովուեցաւ) ի նմանէ։ Երկոքին Թագաւորքն ի միասին ի միում տախտի (գահ) գահուն բազմէին՝ միագոյն միանշան համահանդերձ զարդու։ Ապա եղեւ դէպ օր մի յաւուրց, եկն եմուտ Թագաւորն շրջել զասպաստանաւ միով (տաղաւարան, ախոռ) զարքային Պարսից. իսկ ախոռապետն արքային Պարսից նստէր ի ներքս ի տան ասպաստանին։ Իբրեւ տեսանէր զնա, ոչ ինչ առ լաւս կալեալ մեծարեաց զնա, և ոչ ինչ շուքս դնէր նմա (պատիւ չըրաւ անոր), այլ անարգանս եւս դնէր Թշնամանաց, ասելով ի

Պարսկերէն լեզու. Այծից Հայոց արքայ, եկ նիստ ի խորձաճ `(խօրըճն, տէճին) խոտոյ վերայ: Զայս բանս իբրև լսէր սպարապետն, որում Վասակն կոչէր, ի Մամիկոնեան տոհմէն, մեծաւ սրտմտութեամբ բարկանայր, և ի վեր առեալ զսուսերն զոր ընդ մէջն ունէր, հարեալ անդէն ի տեղւոջն զախոռապետն արքային Պարսից գլխատէր ի ներքս յասպաստանի անդ. զի ոչ կարաց լսել և ծոյժ ունել (համբերել) զիւրոյ Թագաւորին զանարգանս. զիւր մահն առաջի եղեալ (աչքը առնել) լաւ հաշուէր մեռանել քան զտեառն իւրոյ լսել զվատթարութեան Թշնամանս: Իսկ Թագաւորն Պարսից յորժամ զայս լսէր, բազում շնորհ ունէր (շնորհակալ ըլլալ) զօրավարին Վասակայ, ընդ քաջասրտութիւն նորա զարմացեալ և ընդ բազում աներկիւղութիւնն, և բազում պարգևւաց և պատուոյ արժանի առնէր՝ զքաջութիւնն և զտիրասիրութիւն գովեալ:

Մինչդեռ անդէն առ արքային Պարսից էր Թագաւորն Արշակ, և մեծ սէր էր ի մէջ նոցա, երկեաւ Շապուհ եթէ գուցէ ստեսցէ սիրոյ նորա Արշակ և լիցի միաբան ընդ կայսերն Յունաց, և կամ կողոպտած իցէ լիցի (ըլսուն) ի նմանէ. վասն այսորիկ երդումն պահանջէր ի նմանէ. Հաւանեաց, ասէ, և երդուիր ինձ յօրէնս քո զի մի ստեսցես ինձ: Իբրև կարի բռնադատեցաւ Արշակ և ի նեղ անկաւ, ետուն հրաման ածել զերիցունս եկեղեցւոյն Տիզբոնի, և բերին զաւետարանն սուրբ, և տայր արքայն Պարսից Արշակայ երդնուլ յաստուածեան աւետարանն, զի կացցէ յուխտի (ուխտ, դաշինք, մուքաւէլէն) նորա, և պահեսցէ զդաշինսն: Եւ վասն զի պատգամաւոր (մըժտէճի) իրացս այսոցիկ էր տանուտէրն Մամիկոնեան տոհմին Վարդան, մեծապէս արքայն Շապուհ յակճ առեալ (ալըր) սիրէր զնա: Իսկ եղբայրն Վարդանայ Վասակ, Ճախանձ բերէր (նախանձիլ) ընդ երիցու եղբօրն իւրում: Բուզ. 124-126:

ՋՈՒԻԹ ԵՐԷՑ ԱՐՏԱՇԱՏՈՒ

Իբրեւ չոքան տարան յերկիրն Պարսից զամենայն գերութիւն Հայոց, զՋուիթ երէց Արտաշատ քաղաքի ունէին կապանօք առաջի Թագաւորին Պարսից Շապհոյ։ Եւ նայէր Թագաւորն Պարսից եւ տեսանէր զերէցն Ջուիթ այր բարձր եւ անձնեայ եւ ի տիոց մանուկ, եւ հեր գլխոյն ալեւորեալ (ճերմկած) էին, այլ մօրուքն տակաւին սեաւ եւս կային։ Ապա յարժամ զառաջինն խօսել սկսաւ Շապուհ, ասէ. Տեսանէ՞ք զառնդ զայդորիկ զչարութիւն, քանզի յայտ է, եւ ի հերաց այտի երեւի թէ կախարդ է, զի հերքն սպիտակ են եւ մօրուքն սեաւ։ Իսկ երիցուն տուեալ պատասխանի ասէ. Քեզ զի՞ պէտ լիցէ, զինչ կամիս խօսել խօսեաց. այլ վասն այդորիկ գիտեա, զի յիրաւունս (իրաւամբ) սպիտակացեալ են նախ հերքս. քանզի բազում աւուրբք երէց են. գոնեա հնգետասան ամօք քան զմօրուս նախաբոյս են։ Իբրեւ զայս ասաց, զայրացան վերակացուք սպանողութեանն, եւ տագնապաւ (փութով) ի տեղի մահուն հասուցանէին։ Իսկ նա մեծաւ խնդութեամբ կարկառեալ զպարանոցն վճարէք (Ճոպան) ի սուսերէն։ Բուզ. 174։

ՄՈՒՇԵՂ ԿԱՐԳԻ ՍՊԱՐԱՊԵՏ ՓՈԽԱՆԱԿ ՀՕՐՆ

Եւ Մուշեղ լինէր սպարապետ փոխանակ հօր իւրոյ. կարգէր յօրինէր զամենայն գունդս զօրացն արս ընտիրս միամիտս միականս իբրեւ քառասուն հազար, եւ կազմեաց զնոսա ձիով եւ Թոշակաւ եւ զինու։ Հասանէր անկանէր ի վերայ զօրուն Պարսից, զամենայն կարաւան բանակին առհասարակ ընդ սուր հանէր, եւ զբազումս յաւագանւոյն Պարսից ձերբակալս առնէր, եւ առնոյր զգանձս Թագաւորին Պարսից յաւարի, եւ ըմբռնէր

զտիկնանց տիկինն հանդերձ այլովք կանամբք։ Այս իբրև վեց հարեւր հրամայէր մորթել զօրավարն Մուշեղ և լնուլ խոտով, և տայր բերել առ Պապ արքայն։ Առնէր զայս ի վրէժս հօրն իւրոյ Վասակայ։ Բայց զկանայս Շապհոյ թագաւորին Պարսից ոչ ումեք թոյլ տայր Մուշեղ զօրավարն անարգել, այլ ժանուարս (Բոխբըրա-վան) տայր նոցա կազմել ամենեցուն, հանեալ արձակէր զամենեսեան զհետ առն նոցա։ Իսկ թագաւորն Պարսից զարմացեալ ընդ բարերարութիւնն Մուշեղի, զի ոչ արար ինչ նմա յաղագս կանանցն թշնամանս։ Եւ էր ի ժամանակին յայնմիկ երիվար Մուշեղի, ճերմակ ձի մի։ Իսկ թագաւորն Պարսից Շապուհ յորժամ առնոյր գինի ի մատունսն ըմպել, իբրև խրախութիւնս առնէր զօրաց իւրոց, ասէր. Ճերմակաձին գինի արբցէ։ Եւ ետ նկարել ի տաշտի (թեաւէ) զպատկեր Մուշեղայ ճերմակաւն, և ի ժամ ուրախութեան իւրոյ դնէր զտաշտն առաջի իւրոյ, և յիշէր հանապազ զնոյն բանս ասելով. Ճերմակաձին գինի արբցէ։ Բուզ. 189-190։

ՊԱՏԵՐԱԶՄ ԸՆԴ ՊԱՐՍՍ, ՄՈՒՇԵՂ ԵՒ ՈՒՌՆԱՅՐ

Յետ այսորիկ թագաւորն Պարսից զօրաժողով լինէր ամենայն ուժով ուրով, և — — Մուշեղ ժողովէր զամենայն զօրս — — աւելի ևս քան զինն հազար։ Իբրեւ զօրահատոյց առնէր Շապուհ զզօրս իւր ի վերայ աշխարհին — — եւ ի վերայ զօրացն Յունաց (Երբ Շապուհ էր զօրը կը բաժնէր — եւ Յունաց վրայ), Ուռնայր արքայ Աղուանից անդ էր առ թագաւորին Պարսից։ Ապա յառաջ գայր և խնդրէր պարգևս Ուռնայր ի Շապհոյ արքայէն Պարսից և ասէր. Կամ լիցի քեզ, արանց քաջ, հրաման տալ ինձ զի — — գնդին Պապայ արքային ես ելից իմով գնդովս ճահատակ (ախոյ-եան)։ Արեաց գնդին պատեհ է (կը վայլէ) դիպան ե-

լանել (դէմօյ եպէւ) զօրացն Յունաց․ իսկ ես իմով գըն-
դաւս — — իշխանացն ելից։ Եւ Շապուհ Թագաւորն
հաճեցաւ և շնորհ կալաւ և հրամայեաց։ Բայց Մերու-
ժանայ արծրունւոյ պատասխանի տուեալ Ուռնայրի ա-
սաց։ Աստ արկեր զգազիւ գիրկս, բայց թէ ժողովել կա-
րիցես, մեծ զարմանք իցեն (ֆօռ ֆըռնեջէր, ճօյ ֆըմ ֆէօռեր
Բէ ոլէօք կըռօ՞ս ծօղմէլ)։ Եւ գաղտուկ խորհրդով զայս
գուշակութիւն Մերուժանն ի ձեռն հրեշտակի առ Մու-
շեղ — — — հասուցանէր․ Գիտեա, ասէ, և պատ-
րաստեաց, Մուշեղ, զի մեծաւ պարծանօք պարգեւ
խնդրեալ է զձեզ Ուռնայրի արքային Աղուանից․ արդ
տես զինչ գործիցես։ Մինչչեւ մտեալ էր ի ճակատ,
սպարապետն Մուշեղ եբեր զնշանս (դըշօւ) իւր եւ զզէն-
առ Ներսէս զի օրհնեսցէ։ Յայնժամ յիշեաց Թագա-
ւորն Պապ զհին զրոյցսն (խօսք) և ասէ․ Յիշեցի ես զի
բարեկամ է Մուշեղ Թագաւորին Պարսից։ Ո՞չ այդ այն
Մուշեղ է որ արձակեաց զկանայս Շապհոյ հանդերձ
ժանուարօք և վաշտկաւորքն (ֆօռնդ), և լուեալ եւս է
իմ թէ ի Պարսիկս խօսի (Պօրօէյ հէր խօսքը մէկ է)․ արդ
մի մտցէ դա ի ճակատ։ Իսկ Մուշեղ բարեխօս առնէր
առ Թագաւորն զմեծ քահանայապետն Ներսէս, և Թա-
գաւորն, քանզի զբանիւ ինչ ոչ անցանէր զնորա ի ժա-
մանակին յայնմիկ, ասէ ցՆերսէս․ կամք քո կատա-
րեսցին։

Իբրեւ մերձեցան առ միմեանս բանակքն երկոքեան,
գունդն Մուշեղեան յառաջեալ քան զայլ գունդսն
յառաջամուխ տագնապեալ երթայլն (ֆօռ Բօղ յառաջ կը
ծօռէէն) մինչ զի նայէր Թագաւորն և տեսանէր զի
ըստ ակն անկանելոյն (այլ եւս ասէլ չէին երեւար), և
ոչ երեւէին նշանքն Մուշեղի։ Իբրեւ չերեւեալ սկսան
նշանքն, աղաղակել սկսաւ Թագաւորն Պապ առ Ներ-
սէս․ Դու խլեցեր այրեցեր զիս, զի ասացի ես բամ։
Մի յղեր զայրն զայն ի գործ պատերազմիս, ահա ի

զօրսն Պարսից անկաւ նա, և արդ մեծամեծ վնաս գործեսցէ։ Եւ ասէ Ներսէս. Մի, արքայ, մի կարծեր (մի կօնկօնիր), զի ոչ ստէ մեզ այրն այն, այլ տեսցես քեզէն զքաջութիւն նորա։ Այլ ի պատերազմին յայնմիկ օգնութիւն Աստուծոյ հասանէր, և Հայ գնդին լինէր յաղթութիւնն։ Եւ Մուշեղ սպաս արարեալ (ողօնել, դէօրել) դիպէր գնդին Աղուանից, և հասանէր Ուռնայրի, արքային նոցա ի փախստեանն, և նիզակաբնաւն ի կառափն մատուցեալ ծեծէր բազում անգամ. Այդմ շնորհս կալ (շնորհակալ եղէր) զի այր թագաւոր ես և թագ ունիս. . ես ոչ սպանից զայր թագաւոր, թէ (Բէ եօ) կարի նեղ հասցէ ինձ։ Եւ ութ հեծելով թոյլ ետ նմա փախչել երթալ յաշխարհն Աղուանից։

ԳՈՎՈՒԹԻՒՆ ՊԱՊԱՅ ԶՄՈՒՇԵՂԷ

Ապա ամբաստան լինէին ոմանք քսութեամբ առ Պապ զՄուշեղէ և ասէին. Գիտեա, զի մեծաւ նենգութեամբ է ընդ քեզ Մուշեղ, և քեզ մահու սպասէ, զի զբազումս ի թշնամեաց բազում անգամ ի բուռն արկեալ՝ սովոր է արձակել։ ԶՈւռնայր արքայ արձակեալ թոյլ ետ ապրել։ Եւ վասն այսր խրաց բազում անգամ լինէր գժտութիւն թագաւորին ընդ Մուշեղի։ Իսկ Մուշեղ տայր պատասխանի թագաւորին. Զիմ ընկերսն զամենեսեան ես կոտորեցի. իսկ որ թագս ունին՝ նոքա իմ ընկերք չեն, այլ քո. եկեսցես սպանանել զքոյսն, որպէս ես զիմսն սպանի. այլ իմ յայր թագաւոր որ թագ ունի՝ ոչ ձգեալ է ձեռն երբէք և ոչ ձգեմ, և մի այլ ձգել լիցի։ Եթէ կամիս սպանանել զիս, սպան. այլ ես, եթէ գայ ինձ ի ձեռն երբէք այր թագաւոր, որպէս եկն բազում անգամ, ոչ սպանանեմ զայր թագաւոր որ զամ մի (անգամ մը, երբեք) թագ ունի,

եթէ ոք զիս սպանցէ (Ոէ ես զէս սպաննէն)։ Իբրեւ լսէր զբանս զայս Պապ, յարտասուս հարեալ, և յարուցեալ ի գահոյիցն բուռն հարկանէր զՄուշեղէ, արկանէր զնո-վաւ գիրկս և լայր ի վերայ պարանոցի նորա, և ասէր․ Մահապարտ են այնոքիկ որ իշխեն խօսել չարութիւն (չէշ խօսէլ, անբաստանէլ) զՄուշեղէ, զառնէ քաջէ և զպատուականէ։ Զի այր որ ազգաւ պատուական է իբրեւ զմեզ, նախնիք դորա իբրեւ զնախնիս մեր են։ Թողեալ նոցա զթագաւորութիւնն ծննդ աշխարհին առ մեզ եկեալ, և ի վերայ նախնեաց մերոց կեցեալ և մեռեալ են։ Հայր սորա ի վերայ հօրն իմոյ մեռաւ, և ի ձեռն դորա շնորհեցաւ մեզ բազում խաղաղութիւն․ զի՞արդ ասեն ցիս եթէ Մուշեղ քեզ մահու սպասէ։ Սա աւասիկ այր իրաւախոհ (աբտար, չէրակ) է, զի որ յօտար տեարսն վասն բարեկամութեան խնայեաց, զի՞արդ ի բնակ (բնիկ) տեարս ձեռն ձգէր։ Ցայնմ ժա-մանակի բազում պարգեւս և պատիւս և բազում գեղ-եան (գէօզէլ) Մուշեղի Պապն շնորհէր։

ԴԱՐՁԵԱԼ ՊԱՏԵՐԱԶՄ ԸՆԴ ՊԱՐՍՍ

Ապա լինէր գուշակ (ծոցը կ'իմացանէր) Մուշեղի Ուռ-նայր արքայ Աղուանից, յղէր առ նա հրեշտակ և տայր նմա տեղեկութիւն, ասէր․ Մեծ շնորհակալու-թիւն ունիմ փոխանակ զի ոչ սպաներ դու զիս։ Աստ-ուած էած զիս ի ձեռս քո և դու անխնայեցեր (խնա-յեչէր)․ զայս սէր քո ոչ մոռացայց մինչեւ լիցեմ ես։ Բայց գուշակեալ իմ քեզ (կ'իմացանեմ քեզ), զի Շապուհ թագաւորն Պարսից ամենայն զօրօք իւրովք կամի գալ անկանել յանպատրաստից ի վերայ քո։ Եւ Մուշեղ գումարեաց ի մի վայր զզօրսն ամենայն, կուռ վառ-եալ իննսուն հազար այր ընտիր՝ նիզակ ի ձեռն, թող զսպարակիրս։ Իսկ թագաւորն Պարսից Շապուհ դայր

հասանէր ամենայն զօրօք իւրովք ի տեղի պատերազմին ։ Եւ լինէին խառնուրդք ճակատուց ։ Ի պարտութիւն մատնեցան զօրքն Պարսից ։ Մանաւանդ գունդք Նիզակաւորացն — — յարձակեալք քաջութեամբ զախոյեանսն ի վերուստ յերիվարաց յերկիր կործանէին յանդիման Թագաւորին Պարսից , և ընդ ընկենուլն (վըր նէփէսինտէն դէօ) խրախոյս բառնայիկ (ուրախօրլէան , փոքահօրլէան յայն հանէլ) ամենայն զօրքն պատերազմիկք համակ (մէշր , մէօյն) զայս բանս ասելով . Ա — — քաջ ։ Զամենայն ախոյեանսն զոր ի ճակատուն սպանանէին՝ նուիրէին իւրեանց — — — — ասէին . — — — — — զոհ լիջիր ։ Եւ յորժամ ազատանուոյն Նիզակաւորացն ռազմ արարեալ (կռռայ պօդբըռոռէլ) յարձակեալ , զզօրսն Պարսից ընկենուին , ասէին ի խրախուսելն . Ա — — քաջ ։ Իսկ յորժամ զենեալ գլխատէին զախոյեանսն ասէին . — — — զոհ լիջիր ։

Շապուհ Թագաւորն յորժամ յաշխարհն իւր հասանէր , զարմացեալ ընդ քաջութիւն գնդին ասէր . Զարմացեալ եմ ես զոր ինչ տեսի . զի իմ ի մանկութենէ իմմէ համակ ի ճակատ և ի կռիւ մտեալ է , և բազում ամք են զի հասի ի թագաւորութիւն , և առանց կռուոյ ամ չեմ լեալ (տարի մը առանց կռուի նըստած չեմ) . բայց իմ ջերմ կռիւ զայս ՚նր տեսեալ , որ այս անգամս դիպեցաւ ինձ ։ Զի յորժամ Նիզակաւորքն յարձակէին որպէս զլեառն մի բարձր և կամ որպէս զաշտարակ մի հաստաբեստ (հօռփոփան) հզօր և անշարժ , և յորժամ մեք զնոսա սակաւ մի շարժէաք , նոքա ի լեզէոնն Հոռոմոց (Հռոմայեցւոց) ապաստան լինէին , և նոցա զվահանափակսն բացեալ (վահաննէրը բանալով) իբրեւ ի քաղաքորմ պարսպաւոր (էֆէր Բէ պօրպադով պաշտած թալէօէ մը մէջ) ամրացեալ՝ զզօրսն ընդունէին ։ Եւ անտի սակաւիկ մի ոգի առեալ զօրացն , դարձեալ ելեալ մարտնչէին ։ Եւ մեւս՚եւս (մէյ մ'ալ , նանէ) , ընդ մտերմութիւն

միամտութեան գնդին, ընդ տիրասիրութիւն նոցա զարմացեալ եմ ես։ Զի այնչափ ամք են զի տէրն նոցա — — կորուսեալ է ի նոցանէ, և նոքա ի պատերազմին ի նա խրախուսէին։ Յորժամ զախոյեանսն ընկենուին, համակ ասէին, Ար — — և նա չէր ի մէջ նոցա. զի յԱնդմըշըն բերդին կայ նա յերկրին Խուժաստանի, և նոքա առ գութն համարէին թէ ի գլուխ նոցա նա իբրև — — — կայցէ, և կամ ընդ նոսա ի մէջ գնդին իցէ ի գլուխ ճակատու պատերազմին, և առ տիրասիրութեանն զոր առ բնակ տէրն իւրեանց ունին, զամենայն ախոյեանսն զոր սպանանէին՝ նմա նուիրէին։ Երանի՛ որ այնր գնդի տէր իցէ, այնպիսի տիրասէր. և միաբան միամիտ — — ։ Բուզ. 189-202։

ՍՊԱՆՈՒՄՆ ԴՂԱԿԱՑ ՄԱՐԴՊԵՏԻ

Իսկ մարդպետն Դղակ զոր կացուցեալ էր Պապայ սահմանապահ (սահմանագլուխը պահող) ի Գանձակ՝ խոստանայր արքային Պարսից Շապհոյ մատնել ի ձեռս նորա զթագաւորն. բայց այլ մեծամեծ նախարարք որ էին ընդ նմա՝ գաղտ ազդ առնէին թագաւորին։ Ապա թագաւորն յղեաց դեսպանս առ մարդպետն և ասէ. Զզօրսդ որ են ընդ ձեռամբ քով՝ յանձն արասցես Գնելոյ անձեւացւոյ և վաղ եկեսցես, զի պիտոյ է ինձ յղել զքեզ առ թագաւորն Պարսից, զի ես մտից նմա ի ծառայութիւն։ Յորժամ լսէր զայս մարդպետն, մեծապէս խնդացեալ ասէր ընդ միտս իւր. Արդ դիւրին է ինձ կատարել զոր խոստացայն թագաւորին Պարսից, զի դուրս գտի (ճամբայ գտայ) յանհոգս առնել բանիւք զՊապ, և յանկարծօրէն յանպատրաստից արկանել զթագաւորն Պարսից զգլխով նորա։ Եւ ապա գայր յանդիման լինէր թագաւորին։ Մեծապէս մեծարեցաւ ի թագաւորէն, և ի ժամ ընթրեացն հրաման ետ — — Պապ

տանել պատմուճան և ագուցանել մարդպետին Դղա-
կայ, և ագուցին նմա դրաստս (դոփմաճան նըշկային) և
վարտիս։ Եւ էր հանդերձն անհեդեդ մեծութեամբ,
զի խորշ զխորշիւ (քաթ քաթ) իջանէր։ Եւ ագուցեալ
զպատմուճանն մեծ է ած զգօտին ընդ մէջ իւր զորմէ
թուրն կախէր, և խորշ ի գօտւոյ դրաստից իջեալ
զթուրն ծածկէր։ Եւ իբրև զվարտիսն զգեցեալ և մոյկս
(չիզմէ) ագուցեալ, զնրաճճ (քաֆթան) յագդեր կապէր,
խորշն ի վարտեացն իջեալ անկանէր ի վերայ նրանին
և ծածկէր մինչեւ ի սրունսն, և ոչ իմացաւ Դղակ թէ
այն մեծութիւն հանդերձին ջարոյ ճորա իցէ (անոր քո-
րքան դափտան չէրի ըլլար)։ Իսկ յիննն ժամու աւուրն
կոչեցին զԴղակ և ասեն, Կոչեն զքեզ յընթրիս ի ներքս
յարքունիս։ Եւ մուծին զնա ի փող (Նեղ ճամքայ) տանն
յորում արքայն էր, և էր փողն ընդ երկար, և բա-
զում երդս լոյսիջոյցս էր թողեալ (Քէրէն դափահաննէր կո-
յին)։ Իբրև տանէին զնա ընդ այն, կայր շուրջ սպարա-
կիրճ (ճահանտար դօշէ) սակրաւորօք, և զերդս ամենայն
լուսոյն ծածկէին։ Ապա ճգճգէին (կը քաշկարէին) զնա սակ-
րաւորքն անդէն ի տեղւոջն. իսկ նա թէպէտ տանէր
ձեռն ի զէն, ի խորշխորշաճ (քաթ քաթ) հանդերձիցն
պատատելոց զոր էր զգեցեալ՝ ոչ զմի զէն ոչ կարաց
դտանել։ Եւ զի էր ինքն Դղակն այր մեծ և անձնեայ,
քաջ ճարուստ (շատ դօշամօշ) ոսկերօք, ասպարակիր մարդ-
կանն պատեալ զնովաւ բարձին զնա, և վերըմբարձ
տանէին զնա մինչև ի դուրս տաճարին (Կերակրոյ օդան)
արքունի։ Իսկ իբրև ետես — — — թէ անդր տա-
նէին ասէ. Մի այսր, մի այսր, այլ մուծէք զդա ի
տուն պատմուճակացն (Հօքանելու տեղ)։ Եւ ի փողին
զօրք սպարակրացն մուծին զնա կապեալ ձեռս յետս ի
ներքս ի տունն պատմուճակաց, այսինքն ուր թագ ար-
քունի դնէին։ Եւ անդէն խօսել սկսաւ Դղակն և ասէ.
Ասացէք ցարքայ, գոգէք (ըսէք), Ես այս մահու արժա-

նի էի, բայց քեզ արժան էր զիս ի հրապարակի սպանանել և ոչ ի տան Թագաց, և զքո Թագդ արեամբ շաղախել։ Եւ զայս միայն ժամանեաց (կրցաւ) ասել, և անդէն ի վանս (տուն, տեղ) պատմուճակացն փողոտեցին զնա, և հատին զգլուխ նորա և հանին հարին (անցուցին) ի նիզակի, և կանգնեցին ի հրապարակին արքունի։ Բուզ. 203-205։

ՎԵՐՋԻՆ ՊԱՑԱՃԱՐՔ

Եւ էր ներքինի մի — —, հաւատարիմ յոյժ, անուն Դրաստամատ։ Սա բազում մեծամեծ քաջութիւնս գործեաց ի պատերազմին Պարսից ընդդէմ Քուշանաց, և զՇապուհ իսկ փրկեաց ի թշնամեաց անտի։ Յորժամ դարձաւ Շապուհ յերկիրն Պարսից, ասէ ցԴրաստամատն, Խնդրեա դու ինչ յինէն. զինչ և խնդրեսցես տաց քեզ։ Եւ ասէ Դրաստամատ ցթագաւորն, Ինձ ի քէն այլ ինչ ոչ պիտի (պէտք չէ), բայց տուր ինձ հրաման զի երթայց տեսից զբնակ տէրն իմ — —, և առ. մի օր (օրուան մը չափ) հրաման տուր արձակել զնա ի կապանացն, և ես իշխեցից լուանալ զգլուխ նորա և օծանել, և ագուցանել նմա պատմուճան, և արկանել նմա բազմականս, և դնել առաջի նորա խորտիկս, և տալ նմա գինի, և ուրախ առնել զնա արուեստականօք (երաժիշտ) մի օր ճիշդ։ Եւ ասէ Շապուհ, Խիստ են խնդրուածքդ, զի յորմէ հետէ թագաւորութիւնս Պարսից կանգնեալ է, և բերդն այն Անյուշ բերդ կոչեցեալ է, չիք ոք ի մարդկանէ որ իշխեցեալ է, յիշեցուցանել թագաւորաց զոր յայնմ բերդի եդեալ զոք է թագաւորաց։ Բայց զի քո մեծ վաստակք ([illegible]) են առ իս, զոր ինչ խնդրեցերն, երթ, տուեալ լիցի քեզ։ Եւ ետ նմա Շապուհ փուշտիպան (պահապան) մի հաւատարիմ և հրովարտակ արքունի զի երթիցէ ի

քերդն յԱնդմըշն, և զիարդ եւ կամք իցէ նորա (ուզածին պէս) տարացէ կապելոյն — —։ Եւ չոգաւ Դրաստամատ յԱնյուշ բերդն, և ետես զտէրն բնակ, և արձակեաց զնա ի կապանացն երկաթեաց, ի ձեռացն և յոտիցն երկաթոց և յանիրոց (հալքա) պարանոցին, և լուաց զգլուխ նորա և լոգացոյց զանձն նորա (քաշնել ընելով, բոլոր մարմինը լուալ), և ագոյց նմա պատմուճան ազնիւ, և եարկ նմա բազմականս (մինտէր, մինտէր դնել) և բազմեցոյց զնա, և եդ առաջի նորա ընթրիս ըստ օրինաց թագաւորաց. և սքանչեաց (խելքը գլուխը բերել) զնա և մխիթարեաց, և ուրախ առնէր զուսանօք (երգեցող, երաժիշտ)։ Եւ ի ժամ աղանդեր (չէ-րէզ) մատուցանելոյ եդին առաջի նորա միրգ, խնձոր և վարունգ, և ամիճ (մի պտուղ) զի կերիցէ, և եդին դանակ նմա որպէս զի հատցէ և կերիցէ զիարդ և կամեսցի։ Եւ Դրաստամատ մեծապէս ուրախ առնէր զնա։ Իսկ յորժամ արբեցաւ — —, և զինին եկն զականք նորա (գինին գլուխը զարկաւ, գինովցաւ), ասէ. վա՜յ ինձ, — —, այս անցք անցին ընդ իս (այս բաները՛ եկան իմ գլուխս)։ Եւ զայս ասացեալ, զդանակն զոր ունէր ի ձեռին, որով զմիրգն կամ զամիճն կամէր ուտել, եհար ի սրտի իւրում, և մեռաւ անդէն մինչդեռ կայր ի բազմականին։ Յորժամ զայն ետես Դրաստամատ, յարձակեցաւ եհան ի նմանէ զնոյն դանակ, և եհար յիւրում կշտին, և անդէն մեռաւ և նա։ Բուզ. 202-208։

ՆԿԱՐԱԳԻՐ ՅՈՀԱՆ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ

Այլ Յոհան եպիսկոպոս, եթէ արժան իցէ զնա կոչել եպիսկոպոս, էր այր կեղծաւոր, և երեւեցուցանէր զանձն իւր մարդկան պահօղ և խորգահանդերձ (խոշոր հագնող), մինչ զի մոյգս (կօշիկ) անգամ ոչ ագանէր, այլ զամառն հեսկով (խուզեր) պատէր զոտս իւր, և

զձմեռն՝ կեմով (սօրն, կօշէ)։ Եւ յագահութեան առանց չափոյ էր։ Էր երբեմն զի ի ճանապարհի ուրեմն (ճամբուրջուլնեան մը ալին) նստէր նա ի դրաստու վերայ և գայր։ Եկն դիպեցաւ նմա օտար պատանի մի աշխարհական հեծեալ ի ձի, սուսեր ընդ մէջ, թուր զգօտւոյ, աղեղնակապարճ զմիջովն, լուացեալ զհերս իւր, օծեալ մարձեալ (մարձել, խօչել), վարսակալ եդեալ ի գլուխ իւր, և օղիկ (ղէնէշ) արկեալ զուսովք իւրովք, և գայր զճանապարհ իւր, թերևս յաւազակութենէ։ Իսկ ձին յորում հեծեալ էր՝ մեծ էր հասակաւ գունաւոր և գնացող (ալէկ յօրղ)։ Մինչ ի բացէ (հեռուէն) տեսանէր եպիսկոպոսն Ցոհան զձին, մեծապէս զարմացեալ ակնկառոյց լինէր։ Ապա իբրև եկն մերձեցաւ հեծեալն մօտ ի նա անդր, սպասեալ Ցոհանու բուռն հարկանէր զերասանակաց (եօլար) ձիոյն, և ասէր ցայրն. Էջ դու վաղվաղակի ի ձիոյ այտի, զի բանք են ինձ ընդ քեզ։ Ասէ այրն. Ոչ դու զիս գիտես, և ոչ ես զքեզ. զի՞նչ այն բանք իցեն զոր դու ընդ իս իցես խօսելոց։ Մանաւանդ զի այրն արբեալ եւս դիպեցաւ, և շատ յամառեաց իջանել ի ձիոյն։ Ապա բռնադատեաց զնա Ցոհան, իջոյց ի ձիոյ անտի, և առ տարաւ զնա մեկուսի ի ճանապարհէ անտի, և առնն խոնարհել (ծօքէլ) հրամայէր և ասէր. Ձերիցութեան ձեռն դնեմ ի վերայ քո (քեզ երեց ղէօր յեանադըրեմ)։ Իսկ նա տայր պատասխանի զանձնէն (կ'ըսէր էրէն համար). Այր աւազակ սպանող չարագործ և խառնագնաց լեալ ի մանկութենէ իմմէ, ես ոչինչ եմ արժանի այդպիսի իրաց, և այժմ դեռ ի նմին գործ կամ։ Եւ շատ ի վէգ եկեալ (դէմ կենալ) յամառէր այրն, իսկ նա եւս չար քան զնա։ Ապա բռնաբար զգետնեալ զայրն, դնէր Ցոհան զձեռն իւր ի վերայ նորա առնել զնա երէց, և յարուցեալ հրամայէր լուծանել զհանգոյցս (կօղ) մեկնոցին (վերարկուին), և արկանէր նմա աղաբողոն, և ասէր. Երթ ի գեւղ քո և

մՋիր դու անդ երէց ի գեղՋն ուստի ես։ Եւ անգամ ոչ գիտէր թէ յորմէ գեղՋէ իցէ։ Ապա մատուցեալ Յոհան բուռն հարկանէր զձիոյն և ասէր․ Այս ինձ կօշիկք լիցին, փոխանակ զի երէց արարի զքեզ։ Իսկ այրն յամառեալ ի վերայ ձիոյն չառնոյր յանձն տալ․ ապա բռնաբար յինքն հանեալ (յօֆչըրանքել) Յոհաննու զձին, զայրն արձակեաց։ Եւ այս ամենայն իրքս վասն ձիոյն եղեն։

Ապա այրն թէ (Բէդլէր) ոչ կամօք՝ աղաբողոն արկեալ գնայր ի տուն իւր, և երթեալ մտանէր ի մէջ ընտանեաց իւրոց, ասէր ցկին իւր և ցընտանիս․ Արիք, յաղօթս կամք։ Եւ նոքա ասեն, Մոլի՞ս դու (խէնդէյ-մի՞ր), դե՞ւ ուրեմն հարսն ի քեզ (դէվահարէյմի՞ր)։ Իսկ նա ասէ․ Արիք, կամք յաղօթս․ վասն զի երէց եմ։ Իսկ նոքա զարմացեալ մերթ չիկնէին, մերթ ծիծաղէին, մինչեւ բազում անգամ յամառեալք ապա ուրեմն հաւանեցան կալ յաղօթս ընդ նմա։ Ապա ասէ կինն ցայրն իւր, Ո՞չ (ո՞չ ապաքէն) դու երախայ (չիճուգտուն) էիր, և չէիր մկրտեալ։ Ասէ այրն ցկին իւր․ Որ արարն զիս երէց՝ ապշեցոյց զիս, չետ յիշել, և ոչ ես յիշեցի զայդ ասել ցնա․ զիս երէց արար, և զձին սանձաւ թամբաւ առ և անց։ Եւ ասեն ցայրն ընտանիք նորա, Յարիցես անդրէն գնասցես առ եպիսկոպոսն և ասասցես․ Մկրտեալ չէի զի՞ արարեր զիս երէց։ Իսկ նորա յարուցեալ գնաց առ եպիսկոպոսն և ասէ ցնա․ ես մկրտեալ չէի, զի՞ արարեր զիս երէց։ Եւ ասէ Յոհան, Սափորով միով ջուր բերէք։ Եւ առեալ զՋուրն էարկ զգլխով նորա և ասէ․ Երթ, մկրտեցի զքեզ։ Եւ արձակէր զայրն վաղվաղակի յիւրմէ։

Երբեմն սոյն Յոհան անցանէր առ այգեօք ուրումըն, և էր ժամանակ զայգիսն յատելոյ (պուդամադ)։ Աղաղակէր առ նա այր մի յայգւոյն և ասէր․ Օրհնեա, տէր եպիսկոպոս, զմեզ և զայգիսս։ Ասէ Յոհան,

Փուշ և տատասկ բուսցի։ Ասէ այրն, ի մարմինդ քո բուսցի փուշ և տատասկ, փոխանակ զի տարապարտուց անիծանես զմեզ։ Եւ եղեն նշանք յԱստուծոյ, զի իբրեւ չոքաւ եպիսկոպոսն ի վանս (տուն) իւր, հասին հարուածք ի վերայ նորա․ սկսաւ ընդ ամենայն անդամս մարմնոյ նորա որպէս զփուշ հարկանել։ Եւ մեծապէս շտապեալ անկեալ ի տանջանս չարաչարս, ի մեծ տագնապի կայր աւուրս բազումս։ Ապա յղեաց կոչեաց առ ինքն զայգորդն (այգեգործը), աղաչեաց զնա առնել ի վերայ նորա աղօթս զի փրկեսցի նա ի ցաւոցն։ Այգորդն ասէր․ Իսկ ես ո՞վ եմ զի կարեմ զոք օրհնել կամ անիծանել, թող թէ զայր եպիսկոպոս։ Իսկ նա բռնադատէր զնա, մինչեւ յառնէր այգորդն կայր յաղօթս, և անդէն բժշկեցաւ եպիսկոպոսն, և սկսաւ յամենայն մարմնոյն փուշն ի բաց թափել։

Սոյն Յոհան եպիսկոպոս յորժամ երթայր առ թագաւորն, խաղակատակ լինէր (ծաղրածութիւններ կ'ընէր)։ Ի չորս անկեալ յոտս եւ ի ձեռս (չորքոտանիի պէս չորս ոտք ելլել) սողէր առաջի թագաւորին, և զուղտու զձայն ածէր կառաչելով և զօրէն ուղտու (ուղտի պէս) փարելով։ Եւ ընդ կառաչելն մի մի բան խառնէր ասելով, Ուղտ եմ, ուղտ եմ, և զարքայի զմեղս բառնամ․ դիք ի վերայ իմ զմեղս արքայի, թող բառնամ։ Իսկ թագաւորն զմուրհակս (սէնէտ) գիւղից և ագարակաց գրեալ և կնքեալ դնէր ի վերայ ողին (կռնակ) Յոհաննու փոխանակ ընդ մեղաց իւրոց։ Եւ ի թագաւորացն ստացաւ նա իւր գեւղս և ագարակս և գանձս յուղղոն լինելոյ և զմեղսն բառնալոյ։ Այսպիսի էր Յոհան կապեալ ի ռժդութեան (կծծութիւն) և յագահութեան զամենայն աւուրս կենաց իւրոց։

Ի ԳՐՈՑ ՄԱԿԱՐԲԱՅԵՑԻՈՑ

ՑԱՂԱԳՍ ՆՈՒԻՐԱԿԱՆ ՀՐՈՅՆ

Ի ժամանակի յորում վարեցան հարքն մեր ի կողմանս Պարսից, որ այնց ժամանակաց պաշտօնասէր (քաջեղալը) *քահանայքն էին՝ առին ի սեղանոյ անտի զհուրն ի ծածուկ, և տարան թաքուցին* ի խորշս (անկէսն, ծածուկ տեղ) *կողմանցն անջուր ջրհորոցն. անդ զգուշութեամբ զտեղին* հետախաղաղ ծածկէին (տեղը անյայտ ըլլին) *զի ամենայն տեղին աներևույթ լիցի։ Իբրեւ անցին ամք բազումք,* առաքեաց Նեեմի զհրոյն (կրակը բերելու համար մարդ ղրկեց), *հրամանաւ Պարսից արքային զթոռունս քահանայապետիցն այնոցիկ որոց ծածկեալ թաքուցեալ էր զհուրն, զի բերցեն։ Նոքա իբրև եկին, պատմեցին և ասեն. Բայ՝ հուր ինչ մեք անդ ոչ գտաք. բայց գտաք մեք անդ ջուր* դանդաղամած (ժանգրացած, ժանգը) *թանձրացեալ. ապա ետ նոցա հրաման (Նէեմի) երթալ* մխոցաւ (քեփչէ) *առնուլ և բերել։ Եւ իբրև եղև ժամ պատարագացն ողջակիզաց, հրաման ետ քահանայապետն Նէեմի ցանել զայն ի վերայ փայտիցն և պատարագացն. և իբրև զայս արարին, փոքր մի ժամանակ անց ի վերայ և արեգակն* շող ամպագոյն (ամպի նման նշան) *ի վերայ ծագեաց, բորբոքեցաւ բոց հրոյն ի վերայ փայտից սեղանոյն և մաշեաց զողջակէզսն, զի ոքանչացեալ էին ամենեքեան։* Զայն առին (բարձր ձայն հանել), *սկսան օրհնել քահանայքն, մինչդեռ ողջակէզքն կատարէին. բայց* առաջնորդէր (երթին առաջնորդ ըլլալ) *Յովնաթան իբրև ի բերանոյ Նէեմիայ, և այլքն* զկնի կցէին (ժխտաւոր երգերն հետեւել)։ *Քահանայքն օրհնէին զօրհնութիւնս իւրեանց, և ողջակէզքն տակաւ վառեալ բորբոքեալ մաշէին։ Եւ իբրև* վախճան (վերջ) *եղև պատարագացն, զջուրն մնացեալ հրամայեաց*

Նէեմի զվիմօքն արկանել (Բաքնել)։ Եւ իբրև այս եղև, առաւել բոցն ի վերայ բորբոքեցաւ։ Եւ իբրև բոցոյն նշոյլք եղեն (Քօյը ճօքնըլը դէօ եղա), դարձեալ միւսանգամ վառեցաւ բորբոքեցաւ սեղանն և որ ինչ էր մնացեալ՝ և այն մաշեցաւ։ Ապա իբրև եհաս թագաւորն յիրացն հաստատութեան վերայ (Եղիկլը-Բէյնը խմայա) հրամայեաց շուրջ փակել զտեղին, և տաճար շինել։

Եւ գտանի այս գրեալ ի մատեանս առաջինս, եթէ Երեմիա մարգարէ հրաման ետ առնուլ ի հրոյ անտի։ Արդ՝ եկն եհաս Երեմիա մարգարէ ի տեղի անդր (ուր զհուրն թաքուցին), և անդ եգիտ այրս ամուրս անտառախիտս (Ծառէբըզ դարած)․ զվրան ժամու և զտապանակն կտակարանաց և զսեղանն խնկոց անդ տարեալ դնէր ի ներքս, և զդրունսն ինքնին առարկանէր (տօղմէօր դնել, քօյել)։ Եւ անդէն մատեան որ ընդ նմայն իսկ էին՝ նշանակել (Նշան դնել) զտեղին․ և ամենեւին ճանապարհ ի տեղի անդր ոչ կարացին գտանել։ Իբրև զգաց (խմայա) Երեմիա, պատուհասել (յան-դիմանել) սկսաւ զնոսա և ասէ․ Ո՞րք ոչ գիտէք եթէ հրաման է անծանօթ զտեղիդ կացուցանել, մինչեւ ժողովել հրամայեսցէ Աստուած զժողովս ժողովրդեան իւրոյ, և ապա Տէր յայտնեսցէ զայս․ Ցուսամք եթէ Տէր հուպ ընդ հուպ (փէլ տօփէնէն) ժողովեսցէ ի սուրբ տեղին։ Բ․ Մակաբ։

ՑԵՂԵԿՈՒԹԻՒՆ ՋՅՕՐԻՆՈՒԱԾՈՑ ԳՐՈՑՆ ՄԱԿԱԲԱՅԵՑՒՈՑ

Որ ինչ միանգամ ի ձեռն Յասոնեայ Կիւրենացւոյ ի հինգ գլուխս դպրութեան (Հէնք Քէրք) ցուցեալ է, զայն ամենայն ջանասցուք ի մի գլուխ հրովարտակիս (Դէն Քիւմբեան, յօդուածէ Դէզ) կարճ ի կարճոյ ցուցանել․ զի հայեցաք մեք ի խուռն (Չարօնբէան) մեծաթիւ համարոյ բանիցդ, և հոգացաք մեք առնել ընթերցանելեացն (կար-

դաշողներըան) զբօսանս: Եւ մեզ՝ որ զաշխատութիւնս զայս յանձն առաք վասն համառօտ բանիս, մի դիւրին ինչ ջանս (աշխատանեան) համարիջիք, կամ սակաւ քըրտանց և տքնութեանց (հոկում) արժանի: Որպէս ոք զի պատրաստիցի առնել ուրախութիւն կոչնոց ընկերաց, մեծահաց (կերակորները ատար) գործիցէ զընկերացն ուրախութիւն, և ոչ զիւր դիւրութիւն խորհիցի: Սակայն վասն բազմացն հաճութեան ջան յանձն առաք, զճըշդելն եւ զճշմարտելն (ոտուքել) զայն առաջնոյն (մատենագրին) թողաք, զեղչելն եւ զբազկելն (կրճատել) և զկարճառօտ բանն ի համառօտ կացուցանել՝ զայն (առնել) մեք ոչ դանդաղեցաք: Որպէս ի հասարակաց շինութեան ապարանից բազումք զգործն բաժանեն, սկիզբն և կատարած (վէրմէ) շինուածոյն ի բուն ճարտարապետ անդր հայի (կը վէրաբերէ), այլ ծեփելն և զուննելն (ռէնկել) և արծնելն (փայլեցնել, ցիլա) և նկարելն՝ այն ի զարդարիչ անդր հայի: Սոյնպէս և մերս. հարցանելն և փորձելն և քննելն և զհետ վարել (երեւան ըլլալ, փնտռել) ճշմարտութեան բանիցն և զխորին խորհուրդս խորագիտութեամբ (յառաջատեսութեան) ի վեր բերել (մոտաբերել), որ առաջնորդն եղև այնց դպրութեանց՝ ի նմանէ խնդրելի է (պէտք է խնդրել). այլ համառօտ կարճառօտ զբանսն առնել՝ այն յինէն պահանջելի է: Արդ աստի սկիզբն արասցուք պատմել, և ինչ ինչ զօդեսցուք (նշել, նոտել) յառաջին անդր. բայց սակայն և այս անագորոյն միտաց է, զճառս մատենին յառաջագոյն երկայնել, և զմատեանն ի զլխովին (նոյն ձեւ, ձեւն) համառօտ կարճառօտ պատմել: Բ. Մակաբ:

ՆԵՆԳՈՒԹԻՒՆՔ ՅԱՍՈՆԻ ԵՒ ՄԵՆԵՂԱՒԵԱՅ

Իբրև Սելևկոս փոխեցաւ յաշխարհէ և առ զթագաւորութիւնն Անտիոքոս որ անուանեալն կոչէր Եբե-

եալ (երեւելի), *Յասոն անուն ումն, եղբայր Ոնեայ, ջանացաւ* հանել (տանուլ) *զքահանայապետութիւնն յՈնեայ։ Խոստացաւ տալ յարքունիս վաթսուն քանքար ի վերայ երեք հարեւր քանքարոյ, և յայլոց մտից ութսուն քանքար։ Եւ այլ եւս հարեւր մատուցից, ասէ, եթէ գործն աջողեսցի. զքաղաքն ի ձեզ* նուաճեցից (հնազանդեցնել), թէատրոնս *և* կրկէսս (ընդարձակ տեղաւոր խաղեր կը կատարուէին) *շինեցից։ Իբրև յանձն առ թագաւորն և* եգիտ (յետ+ յետեւ) *նա (Յասոն) զիշխանութիւնն զոր խնդրէր,* հետ ըստ հետ (անմիջապէս) *վաղվաղակի ի Յունաց հեթանոսութիւն անգր զընտանի օրէնսն դարձուցանէր. ի ներքս ընդ բերդաւն իսկ թէատրոնս և երիտասարդանոցս շինէր. ժիրաժիր մանկունս ընտրանաւ յուսումն* արուեստականացն (երաժիշտ) *տայր։ Եւ զի այնուհետև թողեալ էր (ազգն) զպաշտօն պատարագաց սեղանոյն և* զպասս (ծառայութիւն) *տաճարին, և արհամարհեալ էր զողջակէզս պատարագացն, յօժարագոյնս տային զանձինս իւրեանց ազգք քահանայիցն* ի մարզիչս (կռուելու ձեւ կրթող) *և* ի բռնամարտիկս (բռունցք, ըմբշամարտող կռուող)*. զհայրենի պատիւն առ ոչինչ համարէին, զանօրէն հեթանոսութեան փառս քան զօրհնութեան փառս լաւ համարեալ։ Վասն այսորիկ իսկ և վաղ հասանէին ի վերայ նոցա նեղութիւնք. զի որոց ընդ բարս և ընդ գնացս նախանձէին և կամէին ամենայնիւ նմանել նոցա, զնոսին իսկ դահիճս և թշնամիս և տանջիչս անձամբ անձին ինքեանք իսկ պատրաստեցին, զի անօրինել ոք յաստուածեղէն օրէնսն դիւրին մի համարիցի. այլ զայս ամենայն ժամանակդ որ առաջի կայ՝ յայտնապէս պատմեսցէ։*

Յայնմ ժամանակի խաղաց գնաց Անտիոքոս ի քաղաքն Յոպպէացւոց, և անտի եկն յԵրուսաղէմ, անդ մեծապէս մեծարեցաւ ի Յասոնէ և ի քաղաքէ անտի ջահիւք և բոցաճաճանչ սպասուք. ապա անտի խաղաց

գնաց ի կողմանս Տաճկաստանի ամենայն զօրօքն հան-
դերձ։ Ապա յետ երից ամաց ժամանակի արձակեաց
Յասոն զՄենեղաւոս զեղբայր մոլեկան (մոլի, նոպայի)
Սիմոնի. ի ձեռն նորա տանել առ արքայ զդանձն
զարքունի։ Նա իբրև յանդիման եղև արքային և մե-
ծարեցաւ ի նմանէ, յանձն իւր սկսաւ կորզել (խլել
հանել) զքահանայութիւնն. յաւել ևս ի սակ (գին, չափ)
գանձին այլ ևս երեք հարեւր քանքար, և առեալ
դայր զհրաման իշխանութեան զարքունի։ Եկն եհաս,
քահանայապետութեան ինչ արժանի գործ ոչ գոր-
ծեաց։ Եւ զՅասոնի, որ դաւով (նենգութեամբ) զիւրոյ
եղբօր զքահանայութիւնն առեալ էր, քահանայու-
թիւնն դարձեալ այլ տարաւ (տարաւ). և նա փախըս-
տեայ յերկիրն Ամոնացւոց հալածական անկանէր։ Իսկ
Մենեղաւոս առնուլ առ (ընդունել առնուլ) ի ձեռս զիշխա-
նութիւն քահանայութեանն, բայց զայն ինչ զոր թա-
գաւորին խոստացեալ էր՝ ողջ (ամբողջ) ոչ կարէր
առնել։ Իբրև ստիպել տագնապել պահանջել սկսաւ
հազարապետն (Անդրոնիկոս), զի նմա էր յանձն հանել
հարկ (հարկ առնուլ) զաշխարհին, երկոքին ի միասին
ի դուռն կոչեցան։ Իբրև ետես Մենեղաւոս թէ չէ
զհարկն ի դուրս հատուցանելոց, կացոյց փոխանակ
զԼիւսիմաքոս զեղբայր իւր. և ժամանակ իւր պարա-
պոյ գտեալ (յարմար ժամանակ գտնելով) Մենեղաւոս, մեղ-
մով (կամացուկ մը) սպաս ոսկի գողացաւ ի տաճարէ ան-
տի և ետ Անդրոնիկեայ, որպէս յանդիմանութեամբ
(աղաչանքներով) յայտ առնէր Ոնիա յամրէ (ամուր, բերդ)
անտի յոր անկեալն (ապաստանեալ) էր. վասն այնորիկ
Մենեղաւոս իբրև իւր արարեալ (իրեն կողմը շահել)
զԱնդրոնիկոս՝ աղաչէր զնա և նովաւ ջանայր զբռամբ
արկանել (ձեռք ձգել) զՈնիա։ Անդրոնիկոս եկն առ
Ոնիա. և հաւատացուցանէր զնա նենգութեամբ և
դաշինս հաւատարիմս կռէր ընդ նմա ծանր ծանր երդ-

մամբք, և հաւանեցոյց զնա ելանել յամրէ անտի։ Եւ անդէն իբրև եհան, խողխողեաց զնա. ամենեւին ոչ զանգիտեաց յիրաւանցն արդարութենէ. վասն այսորիկ ոչ միայն Հրեայք այլ և հեթանոսք բարկացեալ էին վասն առնն տարապարտուց մահուանն։ Այլ թագաւորն իբրև դարձաւ ի կողմանցն Կիւլիկեայ, առաջի անկանէին (ֆանֆառել) քաղաքաց քաղաքաց Հրեայքն և հեթանոսք սրտցաւութեամբ վասն առնն զուր մեռելոյ։ Ցայնր վերայ սրտի մտօք Անտիոքոս դժգմեցաւ (դժուարըէյտա). ի գութ դարձաւ և արտասուեաց յոյժ ի վերայ սրբութեան և բազում իմաստութեան առնն. և ջեռաւ (տաքցաւ) բորբոքեցաւ ի սրտմտութիւն բարկութեան իւրոյ. և անդէն հրամայեաց զգլխով ածել (հանել, մերկացանել) զծիրանիսն Անդրոնիկեայ, և զԱնդրոնիկոս մերկացեալ ի հանդերձէ իւրմէ, շուրջ ածեալ զքաղաքաւն, ի նմին տեղւոջ ուր զՕնիայն խողխողեցին՝ հրամայեաց զկառափն հարկանել (գլուխը կտրել) զանօրէն մահապարտին։

Իբրև բազում զաղտագողօնք (ֆօղոնի ֆողոմբէաններ) լինէին դանձին ի ձեռն Լիւսիմաքեայ Մենելեայ խորհրդով և համբաւն ի դուրս յաճախէր (լուրը դուրս կ՚ելլէր), ժողովեցան զօրքն ի վերայ Լիւսիմաքեայ։ Իբրև սկսան զօրքն տագնապել և լի բարկութեամբ ի վերայ յարձակել, վառեցոյց Լիւսիմաքոս արս իբրև երիս հազարս. սկսաւ ձեռն ի գործ արկանել և սկիզբըն առնել գործոցն չարութեան արամբ միով որ խուժադուժ ևս էր տեսանելով քան զմտօքն թանձրութեան։ Իբրև տեսին զԼիւսիմաքեայ զդաւն և զնենգութիւն, խռնեցան վաղվաղակի. ձեռն ի գործ արկանէին. ոմն վէմս, ոմն վիրգս (նետելու տեղ), կէսքն զաւազն, զխիճս (խոշոր աւազ) հողախառն առհասարակ յարձակելոցն ի վերայ արկանէին. զոմանս վիրաւորս, զոմանս կառափնստս (գլուխը դարձուած) արձակէին. ըզ-

բազում սպանանէին և զամենեսին առհասարակ ի փախուստ դարձուցանէին. զնոյն ինքն զսեղանազերծն եւ զտաճարակապուտ՝ (ձեղանը կողողող, օրթաղեղձ) ըզգանձի տամբն արկանէին փախստեայ (փանչարանէն կը փախցնէին)։ Վասն այսր ամենայնի լինէին դատաստանք (դաւա, խրատանք) ընդ Մենեղաւեայ։ Իբրեւ եկն էջ Թագաւորն ի Տուր (Տիւրոս), յանդիման նորա իսկ եղեն դատաստանք, զի՞ եկին արք երեք ի ծերակոյտ ժողովրրդենէ անտի ցուցանել զիրաւունս (դաւա վարել)։ Իբրեւ ի պարտութիւն մատնեցաւ Մենեղաւոս, խոստացաւ գանձ բազում տալ Թագաւորին զի հաճեսցէ զմիտս նորա (սիրտը առնէ), վասն այսորիկ առեալ զԹագաւորն մեկուսի, իբրեւ զբօսանաց պատճառաւ շրջեաց զմիտս նորա (միտքը դարձուց)։ Զչարեացպարտն Մենեղաւոս. արձակէր Թագաւորն ի պարտեաց անտի, և զայն տառապեալսն, որ Թէպէտ առաջի Խաղտեաց դատ վարէին, իրաւունս դտանէին և գտեալ անարատ արձակեալ երԹային, զնոսա մահապարտս առնէր։ Վասն այսր ամենայնի Տուրացիքն չարատեացք առատապէս սրտցաւութեամբ հանդերձեցին (խնամեցին) զնոսա։ Բ. Մակաբ։

ՈՐ ԻՆՋ ԴԻՊԵՑԱՒ ՀՐԷԻՑ ՑԵՐԿՐՈՐԴ ԳԱԼՍՑԵԱՆ ԱՆՏԻՈՔՈՍԻ Ի ՀՐԷԱՍՑԱՆ

Ժամանակօք երկրորդ գալստեանն Անտիոքու յերկիրն Եգիպտացւոց, դէպ լինէր ընդ ամենայն քաղաքն զաւուրս քառասուն երեւել ընդ երկինս և ընդ երկիր արս հեծեալս տիգաւորս, ի զարդ ոսկի վառեալս, զարդարեալս, արշաւեալս (արշաւել, հիւճում վուրմագ, յուրիւմէք), յարձակեալս, խառնեալս ընդ միմեանս. անդ էր լսել թնդիւն (օտը շարժելէն առաջ եկած ձայն) վահանաց, շկահիւն (քան մը օտքէ դըշնելէն յառաջ եկած ձայնը) զաղեղանց, շա-

չիւն նշանաց (թանի մը քերթի վրայ տալէն կամ խօսքը տառանելէն եղած ձայնը), շառաչիւն (կոտրելէ կամ պայթելէ յառաջ եկած ձայն) նետից, զշողիւն (փչելը, ցոլացում) սուսերաց և զփայլիւն զոսկեղէն վառելոց։ Իբրև շռինդն (լաց, շնչելուն) իմն յանկարծուստ զհամբաւի հարկանէր եթէ Անտիոքոս փոխեալ իցէ յաշխարհէ, առնոյր Յասոն ոչինչ պակաս քան զքսան հազար վառեալ, և յարձակէր ի վերայ քաղաքին. և նոքա վասն յանկարծ դաւոյն ի պարսպէ անտի մերժէյին (ետ կը մղուէին). և Մենեղաւոս արշաւեալ ի քաղաք անդր հասանէր, ուր Յասոնն մոլեգին յանխնայ անկեալ գործէր մեծամեծ կոտորած քաղաքացեացն իւրոց։ Այլ իշխանութեան ինչ ոչ կարաց հասանել. բայց ի կատարած (է վերջը) զամօթ դաւոյն ժառանգեր (ունենալ, ստանալ), և ինքն քաղաքէ ի քաղաք փախստեայ լինէր։ Աստեղի հալածական յամենեցունց իբրև ապստամբ յօրինացն, պղծեալ գարշեցեալ իբրև գաւառի և քաղաքի և դնդի մատնիչ և դահիճ, յերկրին Եգիպտացւոց հեռացեալ թաքեաւ։ Նազում և անթիւս յիւրմէ աշխարհէ օտարացոյց, և ինքն օտարացեալ ի մէջ օտարաց կորեաւ անսուգ, անխնամ, անհանդերձ, և գերեզմանացն հայրենեաց չեղև արժանի։

Իբրև ազդ եղև արքային վասն իրացն եղելոց, ապստամբ համարեցաւ թագաւորն զՀրէաստան յիւրմէ. վասն այսորիկ փութացաւ գնաց յերկրէն Եգիպտացւոց, եկն առ զքաղաքն զԵրուսաղէմ ի սուր սայր (սուր բերան) սուսերի և ի տեգ նիզակի (նիզակին ծայրը). և հրաման ետ զօրացն զի զորս ի բուռն անկանիցին՝ յանխնայ կոտորեսցեն, և զորս յապարանս ամրասցին (ապաստանել)՝ անդէն ի ներքս սատակեսցեն։ Եւ անդ լինէր տղայոց և ծերոց առհասարակ կոտորած. կանանց և մանկանց առհասարակ սատակումն. ութ բիւր յայն երիս աւուրս միանգամայն կոտորեցին, և չորս բիւրս ոչինչ պակաս

աւութեամբ քան զսպանեալսն՝ վաճառեցին։ Եւ իբրեւ այսու չարեօք ոչ յագեցաւ (Թագաւորն), իշխեաց ձեռնամուխ լինել (ձեռք զարնել) ի սուրբն ամենայն աշխարհաց․ իշխեաց մտանել ի տաճար անդր․ առաջնորդ ի ձեռին ունէր զՄենեղաւոս որ օրինացն և աշխարհին և գնդին մատնիչ և դաւաճան եղեալ էր։

Այլ Անտիոքոս ութ հարեւր քանքար ի վերայ ինն հարիւրոյն բարձեալ բերէր ի տաճարէ անտի, արագ արագ հասանէր ի քաղաքն Անտիոքացւոց, հպարտացեալ մտօք համարէր զծով ի ցամաք՝ և զցամաք ի ծով փոխել։ Եւ անդ թողոյր զՓիլիպպոս, յազգէ Փռանգ բայց ի բարուց խժդժագոյն (բարբարոսագոյն) եւս քան զայն որ եթող զնա անդ, չարչարել զմնացորդս Երուսաղեմացւոց։ Ապա առաքեաց նա զԱպողոնիոս երկուք բիւրուք զօրօք․ զի զամենայն մարդ հասակաչափ (չափահաս) կոտորեսցէ, և զկանայս և զմանկունս վաճառեսցէ։ Սա իբրեւ եկն յԵրուսաղէմ, զառաջինն (առաջ) խաղաղութեամբ դաւով եմուտ․ իբրեւ յաւուրն շաբաթուց եգիտ զՀրեայսն դատարկացեալս, հրաման ետ զօրացն իւրոց վառել (պատրաստուել), և որ միանգամ ի զնին (ի տես) տեսլեանն եկին՝ սուր ի վերայ եդեալ կոտորեաց․ և զօրքն ընդ քաղաքն ամենայն զինու հանդերձ այսր անդր վարեալք ընթանային, առհասարակ տարածեալ դիթաւալ կացուցանէին ([illegible])։

Յուդա Մակաբէ փախստեայ լինէր, յանապատ եանէր, գազանակեաց կեանս ի լերինս անցուցանէր, և լայնպէս գնդաւն որ ընդ նմա էին՝ խոտաբուտ (խոտով կերակրող) կերակուր կերակրեալ անցուցանէին զժամանակն զի մի ի պղծութիւնս մերձեսցին։ Բ․ Մակաբ։

ՀԱԼԱԾՈՒՄՆ ԸՆԴԴԷՄ ՀՐԷԻՑ

Յետ բազում ժամանակաց առաքեաց Թագաւորն զԱթենոբիոս ծերունի՝ ստիպել տագնապել զՀրէայսն անցանել զհարցն օրինօք և յօրէնսն Աստուծոյ այլ ևս մի յամենալ (Ֆալ, դէօնէլ), և պղծել զտաճարն Երուսաղեմի և անուանել զնա յանուն հիւրասէր որմզդական դիցն վանատրի, և չարաչար գժուարին նեղութիւն չարեաց ի վերայ հասուցանէին։ Եւ անդ էր ոչ զօրէնս չաքաթուց տեսանել, և ոչ զտօնս տարեկանաց զհայրենիս պահել, և ոչ բնաւ ամենեւին Հրէայ անուն անուանել իշխել։ Իբրեւ տօն հասանէր սպանդարամետական (Բաէօօք) պաշտամանն, տագնապէին զնոսա պսակեալս բաւ (շատ դէրբէա ունէցող) ոստովք Սպանդարամետին (Բաքոս) կաքաւել։ Հրաման առաքեցին յամենայն մօտաքաղաքս պաշտօնեաւորս լինել (պաշտօն ծառայանել). և այն որ ոչ յանձն առնուցուն զոհել՝ անդէն սուր ի վերայ դնել. և անդ էր տեսանել ցտապ տազնապի (ածապարանք, չէօլնա-Թէյին) ի տառապանս չարչարելոցն։ Նամակագիր եղեն (ամբառդանել քրով) զերկուց կանանց վասն զորդիս իւրեանց Թլփատելոյ. ածին վաղվաղակի, զմանկունսն զստեանցն կախեցին զմարցն, և զնոսա ընդ հրապարակսն առ առակէ (խայտառակութեան համար) շրջեցուցանէին. ապա ի պարըսպաց անտի ի վայր հոսեցին (Նետել)։ Կէսքն երթեալ գաղտուկ յայրս մօտաւորս զշաբաթուց աւուրսն անցուցանէին. իբրեւ ի վերայ հասանէին սպասաւորքն, կենդանւոյն խանձատեալս (երեւլ, մրնել) հրով սպանանէին վասն երկիւղածութեան աւուրն փափկութեան։

Այլ ես աղաչեմ զամենեսեան որ գգիրսդ յակն արկանիցէք (աչքէ անցնել) մի ինչ վասն ազգին խղճիցէք (մեղէնալ), և զվիշտս պայս ամենայն առ սատակման

տոհմին (Հէքէյ օղլըն Ըրըամ) համարիցիք, այլ ի խրատ ազգին մերոյ, զի ոչ եթէ որպէս առ այլ հեթանոսս երկայնամիտ լինի (համբէրէլ, օղաւել) Աստուած մինչեւ լցցեն զչափ մեղաց իւրեանց և եկեսցեն հասցեն ի դատաստանս անհնարինս, այլ մօտ առ. մօտ (շօսփօլ) խրատէ, և արագ արագ ածէ ի վերայ զողորմութիւն։ Զայս բանս ընդ ձեզ վասն յիշատակի բանիցդ խօսեցաք. արդ անդրէն ի գլուխ պատմելոյն մատիցուք։

Եղիազարոս այր մեծ, ընդ առաջինսն ի գնդի անդ, լցեալ աւուրբք, ծերացեալ հասակաւ, գեղեցիկ երեսօք, ածեալ դայլ ի բերան ստիպէին ուտել խոզենի (խօզէ էթ.)։ Նա ի մտի եդեալ, յամառեալ պնդեալ (համփափանած) սրտիւ, յանձն առ ընդունել զմահ քաջ անուամբ քան զկեանս լղճիւ (խըճէ խօյնով) և ընկերաց ստգտանելով (մէղամբէլ)։ Ընտրեաց 'ինքնակամ հասանել ի տանջանս. ձեռներեց լինէր (համարձակէլ) թքանել անարգել զպաշտօնս նոցա, որպէս օրէն է համբերողաց բացէ ի բաց (բօլբօլին) անարգել ինչ զոր ոչ է օրէն յանձինս մատուցանել։ Իսկ այն որ պատրաստեալ եկեալ էին՝ ինքեանք առ տկարութեան մտացն, վասն անձնասէր բարոյից զոհից ի պաշտօն, ծանօթ եւս էին առնն աւագութեան, առեալ զնա մեկուսի, իւրեանց տկարութեան մտօքն զհաստատեալ միտսն ի հրապոյրս ցոփութեան (Տօսլըւթէն, Դէզէօսլթէն) դարձուցանել ջանային։ Յանձն առ, ասեն, զհրաման թագաւորիդ, և քեզ այլ միս մատուսցուք զի լուծցես զկարծիսն (օսբէշըն կարծիքը Չըէլ. վըսյէն Նէօրել) և ի մահուանէդ ապրեսցիս։ Նա գեղեցիկ խորհուրդս հաստատուն յանձին եդեալ զարժանի հասակին, ըստ ծերութեան մեծութեանն, ըստ երեւելի վայելչութեանն, ըստ զուարթածաղիկ (օղէկ բօստամ) ալեացն զուարճացելոց (բօղանէլ օղէկ), ըստ գեղեցիկ ի մանկութենէ մինչև յաւագոյթ (օսֆօսըլթէն, Ճէրօսըլթէն) անդրեանն, մանաւանդ առաւել

ջիւՆ Նշանաց (բանի մը փետնի վրայ տալըլըն կամ խրտրը տառուե-լըն եղած յոյնը), շառաչիւՆ (կոտրելը կամ պայծնելը յառաջ ե-կած յոյն) Նետից, զշողիւՆ (փուշերը, ցուցցամ) սուսերաց և զփայլիւն զոսկեղէն վառելոց։ Իբրև շուինդՆ (լոյս, շըճիլըն) իմն յանկարծուստ զհամբաւի հարկանէր եթէ Անտիոքոս փոխեալ իցէ յաշխարհէ, առնոյր Յասոն ո-չինչ պակաս քան զքսան հազար վառեալ, և յարձա-կէր ի վերայ քաղաքին. և Նոքա վասն յանկարծ դաւոյն ի պարապէ անտի մերժէիՆ (եր կը մղըկէն). և Մենեղա-ւոս արշաւեալ ի քաղաք անդր հասանէր, ուր Յասոնն մոլեգին յանխնայ անկեալ գործէր մեծամեծ կոտորած քաղաքացեացն իւրոց։ Այլ իշխանութեան ինչ ոչ կա-րաց հասանել. բայց ի կատարած (է վերջը) զամօթ դա-ւոյն ժառանգէր (սանենալ, որանալ), և ինքն քաղաքէ ի քաղաք փախստեայ լինէր։ Ատելի հալածական յամե-նեցունց իբրև ապստամբ յօրինացն, պղծեալ գարշեց-եալ իբրև դաւառի և քաղաքի և գնդի մատնիչ և դա-հիճ, յերկրին Եգիպտացւոց հեռացեալ թաքեաւ։ Բա-զում և անթիւս յիւրմէ աշխարհէ օտարացոյց, և ինքն օտարացեալ ի մէջ օտարաց կորեաւ անսուգ, անխնամ, անհանդերձ, և գերեզմանացն հայրենեաց չեղեւ ար-ժանի։

Իբրև ազդ եղեւ արքային վասն իրացն եղելոց, ապստամբ համարեցաւ թագաւորն զՀրէաստան յիւրմէ. վասն այսորիկ փութացաւ գնաց յերկրէն Եգիպտաց-ւոց, եկն առ զքաղաքն զԵրուսաղեմ ի սուր սայր (սուրբ բերան) սուսերի և ի տեղ Ն͡իզակի (Նէշանէն ծայրը). և հրա-ման ետ զօրացն զի զորս ի բուռն անկանիցին՝ յանխնայ կոտորեսցեն, և զորս յապարանս ամբաւցիՆ (տղաքենել)՝ անդէն ի Ներքս սատակեսցեն։ Եւ անդ լինէր տղայոց և ծերոց առհասարակ կոտորած. կանանց և մանկանց առհասարակ սատակումն. ութ բիւր յայն երիս աւուրս միանգամայն կոտորեցին, և չորս բիւրս ոչինչ պակաս

աւութեամբ քան զսպանեալսն՝ վաճառեցին ։ Եւ իբրև այսու չարեօք ոչ յագեցաւ (թագաւորն), իշխեաց ձեռնամուխ լինել (յետ դառնել) ի սուրբն ամենայն աշխարհաց ․ իշխեաց մտանել ի տաճար անդր ․ առաջնորդ ի ձեռին ունէր զՄենելաւոս որ օրինացն և աշխարհին և գնդին մատնիչ և դաւհիճ եղեալ էր ։

Այլ Անտիոքոս ութ հարեւր քանքար ի վերայ ինն հարիւրոյն բարձեալ բերէր ի տաճարէ անտի, արագ արագ հասանէր ի քաղաքն Անտիոքացւոց, հպարտացեալ մտօք համարէր զծով ի ցամաք՝ և զցամաք ի ծով փոխել ։ Եւ անդ թողոյր զՓիլիպպոս, յազգէ Փռանգ բայց ի բարուց խժդժագոյն (ճարճարոտածոյն) ևս քան զայն որ եթող զնա անդ, չարչարել զմնացորդս Երուսաղեմացւոց ։ Ապա առաքեաց նա զԱպողոնիոս երկուք բիւրուք զօրօք ․ զի զամենայն մարդ հասակաչափ (չափահաս) կոտորեսցէ, և զկանայս և զմանկունս վաճառեսցէ ։ Սա իբրև եկն յԵրուսաղէմ, զառաջինն (առաջ) խաղաղութեամբ դաւով եմուտ ․ իբրև յաւուրն շաբաթուց եգիտ զհրեայսն դատարկացեալս, հրաման ետ զօրացն իւրոց վառել (տպաւորուել), և որ միանգամ ի զՆին (է տեղ) տեսլեանն եկին՝ սուր ի վերայ եդեալ կոտորեաց ․ և զօրքն ընդ քաղաքն ամենայն զինու հանդերձ այսր անդր վարեալք ընթանային, առհասարակ տարածեալ դիքաւսւ կացուցանէին (տանելով փետին տնկեցնել) ։

Յուդա Մակաբէ մախաւեայ լինէր, յանապատ եանէր, գազանակեաց կեանս ի լերինս անցուցանէր, և լայնպէս գնդաւն որ ընդ նմա էին՝ խոտաբուտ (խոտով կերակրող) կերակուր կերակրեալ անցուցանէին զժամանակն զի մի ի պղծութիւնս մերձեսցին ։ Բ ․ Մակաբ ։

ՀԱԼԱԾՈՒՄՆ ԸՆԴԴԷՄ ՀՐԷԻՑ

Ցետ բազում ժամանակաց առաքեաց Թագաւորն զԱթենորիոս ծերունի՝ ստիպել տագնապել զՀրեայսն անցանել զհարցն օրինօք և յօրէնսն Աստուծոյ այլ եւս մի յամենայ *(Թալ, դեռել)*, *և պղծել զտաճարն Երուսաղեմի և անուանել զնա յանուն հիւրասէր որմզդական դիցն վանատրի, և չարաչար դժուարին նեղութիւն չարեաց ի վերայ հասուցանէին։ Եւ անդ էր ոչ զօրէնս չաքաթուց տեսանել, և ոչ զտօնս տարեկանաց զհայրենիս պահել, և ոչ բնաւ ամենեւին Հրեայ անուն անուանել իշխել։ Իբրեւ տօն հասանէր* սպանդարամետական *(Բատաքի)* *պաշտամանն, տագնապէին զնոսա պատկերալս* քաւ *(շատ դեպքեր ունեցող)* *ոստովք Սպանդարամետին (Բաքըս) կաքաւել։ Հրաման առաքեցին յամենայն մօտաքաղաքս* պաշտօնաւորս լինել *(պաշտօն մատուցանել)*. *և այն որ ոչ յանձն առնուցուն զոհել՝ անդէն սուր ի վերայ դնել. և անդ էր տեսանել* շտապ տագնապի *(ածապարանք, չեոնիւնեան)* *ի տառապանս չարչարելոցն.* Նամակագիր եղեն *(ամբաստանել դրով)* *զերկուց կանանց վասն զորդիս իւրեանց թլփատելոյ. ածին վաղվաղակի, զմանկունսն զստեանցն կախեցին զմարցն, և զնոսա ընդ հրապարակսն* առ առակէ *(խայտառակութեան համար)* *շրջեցուցանէին. ապա ի պարըսպաց անտի* ի վայր հոսեցին *(Նետել)*։ *Կէսքն երթեալ գաղտուկ յայրս մօտաւորս զշաբաթուց աւուրսն անցուցանէին. իբրեւ ի վերայ հասանէին սպասաւորքն,* *կենդանւոյն* խանձատեալս *(երել, մրկել)* *հրով սպանանէին վասն երկիւղածութեան աւուրն փափկութեան։*

Այլ ես աղաչեմ զամենեսեան որ զգիրսդ յակն արկանիցեք *(ուշքէ անցնել)* *մի ինչ վասն ազգին* խղճիցեք *(Մեղմնալ)*, *և զխիշտս զայս ամենայն* առ սատակման

տոհմին (Չէնկէզ օղլու Չնկըզ) համարիցիք, այլ ի խրատ ազգին մերոյ, զի ոչ եթէ որպէս առ այլ հեթանոսս երկայնամիտ լինի (համբէրէլ, օղաթէլ) Աստուած մինչեւ լցցեն զչափ մեղաց իւրեանց և եկեսցեն հասցեն ի դատաստանս անհնարինս, այլ մօտ առ մօտ (շօփօլ) խրատէ, և արագ արագ ածէ ի վերայ զողորմութիւն։ Զայս բանս ընդ ձեզ վասն յիշատակի բանիցդ խօսեցաք. արդ անդրէն ի գլուխ պատմելոյն մատիցուք։

Նշխազարոս այր մեծ, ընդ առաջինսն ի գնդի անդ, լցեալ աւուրբք, ծերացեալ հասակաւ, գեղեցիկ երեսօք, ածեալ գայլ ի բերան ստիպէին ուտել խոզենի (խօզէ մի)։ Նա ի մտի եդեալ, յամառեալ պնդեալ (հափփայած) սրտիւ, յանձն առ ընդունել զմահ քաջ անուամբ քան զկեանս լղճիւ (խըճէ խայրով) և ընկերաց ստգտանելով (մէղադրէլ)։ Ընտրեաց ՚ինքնակամ հասանել ի տանջանս. ձեռներեց լինէր (համարձակէլ) թքանել անարգել զպաշտօնս նոցա, որպէս օրէն է համբերողաց բացէ ի բաց (բօլըրովին) անարգել ինչ զոր ոչ է օրէն յանձինս մատուցանել։ Իսկ այն որ պատրաստեալ եկեալ էին՝ ինքեանք առ ոկարութեան մտացն, վասն անձնասէր բարոյից զոհից ի պաշտօն, ծանօթ եւս էին առնն աւագութեան, առեալ զնա մեկուսի, իւրեանց տկարութեան մտօքն զհաստատեալ միտսն ի հրապոյրս ցոփութեան (Նօսըռութիւն, Դըկըսութիւն) դարձուցանել ջանային։ Ցանձն առ, ասեն, զհրաման թագաւորիդ, և քեզ այլ միս մատուսցուք զի լուծցես զկարծիսն (ուրէշըն կարծիքը Չէբէլ, փրայէն Նէրէլ) և ի մահուանէդ ապրեսցիս։ Նա գեղեցիկ խորհուրդս հաստատուն յանձին եդեալ զարժանի հասակին, ըստ ծերութեան մեծութեանն, ըստ երեւելի վայելչութեանն, ըստ զուարթածաղիկ (աչէկ բօսաած) ալեացն զուարճացելոց (բաննէլ աչէկ), ըստ գեղեցիկ ի մանկութենէ մինչև յաւագոյն (աւագօսութիւն, մեծօսութիւն) սննդեանն, մանաւանդ առաւել

ըստ աստուածագործ սրբութեան օրինադիր կրօնից , ամենայն կարգօք լի , արագ արագ առնէր պատասխանին ։ Ոչ արժան և ոչ պատշաճ է , ասէ ,. մերոյ չափոյ հասակի՝ կեղծաւորութիւն մուծանել ընդ սրբութեան խոստովանութիւն . իցեն բազումք ի մանկտւոյ այտի որ ընդ ակամբ (ձուռ աչքով) *հայիցին , կարծիս ի մտի դնիցեն և ասիցեն եթէ Եղիազարոս իննսնամեան ,* անցեալ ծերութեամբ (ծերացած) , *հասեալ ի դուռն* վախճանի (մահ) , *յայլազգութիւն դարձաւ . և նոքա վասն իմ կեղծաւորեալ գայթակղեսցին . և զայս* խիղճ (խայթ) *մտաց և* կեղտ (աղտոտ) *անուն ծերութեանս յաշխարհի թողից ։ Իսկ արդ՝ եթէ ամենեւին նոյնչափ ժամանակս կենաց շնորհիցեն ինձ , և ի ձեռս մարդկան բնաւ ոչ մատնիցիմ , սակայն յաւիտենից ի մշտնջենաւոր ձեռաց անտի , ոչ* կենդանեօք (կենդանութեան ատեն) *և ոչ յետ կենդանութեան , ուրեք փախչել կարիցեմ ։ Վասն այսորիկ քաջութեամբ փոխեցայց յաշխարհէ աստի , զի արժանի իմոյ ծերութեանս երեւեցայց , և օրինակ բարեաց և առաքինութեան մանկտւոյ թողից , զի յօժարութեամբ և քաջութեամբ ի վերայ սրբութեան օրինացն* մահու չափ (մինչև ի մահ) *ջանալ մարթասցեն ։ Զայս ամենայն իբրեւ ասէր , ինքնակամ* դիմագրաւ (դիմացը երթալով) կամակար (իր կամօքը) *ի վիշտս մահուն և տանջանացն դիմէր ։ Նոքա որ յառաջագոյն շուրջ մատուցեալ մխիթարէին՝ զբանս մխիթարութեանն ի թշնամութիւն դարձուցանէին , և զիմաստութեան խորհուրդսն իբրեւ մոլորութիւն համարէին . առաւել մատուցեալ տանջանս՝* տագնապէին (նեղել) ։ *Նա իբրեւ մերձ եղեւ ի տանջանաց անտի ի վախճան , երաց զբերան իւր հեծեծելով , սկսաւ խօսել ի Տէր որ ունի զգիտութիւն սրբութեան խորհրդոց և ասէ . Այս մի ինչ յայտ եղեւ , եթէ ի ձեռս իմ էր արձակել* ի մահուս վշտաց (մահ կրնալէն) . *զայս խստութեան տանջանս մարմնոյ ընկալեալ համբե-*

րեմ, և քաղցրութեամբ վասն ահի սաստիցն (*սօսօպ, աբ-ֆէլըղ պօզօւքէր*) *Տեառն ընդունիմ։ Եւ սա զայս օրինակ պատերազմեալ յաշխարհէ փոխեցաւ։ Բ. Մակաբ։*

ԽՈՇՏԱՆԳԱՆԱՑ ՄԱՀ ԵՕԹՆ ԵՂԲԱՐՑ

Դէպ եղեւ եղբարս եւթն, մարբն հանդերձ կալեալս, ածել յատեան թագաւորին։ Իխոշտանգանս (*թան-ջանէ*) *գանի ստիպէին զնոսա ուտել խոզենի։ Մին ի նոցանէ նախհատակեցաւ յառաջագոյն. սկսաւ խօսել և ասէ. Զի՞ կայք, կամ զմեզ զի՞նչ հարցանելոց էք. մեք պատրաստ եմք ի մեռանել քան* անցանել ընդ օրէնս (*օրէնքը չիղնէլ*) *հայրենիս։ Բարկութեամբ և սրտմտութեամբ լի եղեւ թագաւորն, հրամայեաց ջեռուցանել* տապակս (*Թավա*) *և* կաթսայս (*Վէծ Բէնճէրէ*) *և անիւս, և պէս պէս գործիս տանջանաց պատրաստել։ Զայն իբրեւ վաղվաղակի ջեռուցին պատրաստեցին, հրամայեաց զնախհատակն յառաջ մատուցանել. և նախ զլեզուն կտրեցին և զգլխոյն մորթն զերեսօքն դարձուցին. ապա զոտս և զձեռս առաջի մօրն և եղբարցն* ծայրաքաղս առնէին (*ծայրերը կտրտէլ*)*։ Եւ ապա իբրեւ ի բանից և ի ձեռաց անպիտան առնէր, հրամայէր* կենդանւոյն (*ողջ ողջ*) *ի տապակսն ջեռուցեալս իջուցանել. ապա իբրև* ճենճերն (*եղին ծուխը*) *ընդերկար այնպէս ի տապակէ անտի ելեալ դիզացեալ* ծառանայր (*ծառը գէօ բարձրանալ*)*, սկսան եղբարքն ընդ միմեանս մարբն հանդերձ մխիթարել և ասել. Քաջութեամբ մեռցուք, զանուն և զոգիս ժառանգեսցուք. հայի Տէր Աստուած ի ճգնութիւն պատերազմին մերոյ. և ի ծառայս իւր մխիթարի։*

Իբրեւ առաջինն զօրինակ զայս (*այս կերպով*) *յաշխարհէ փոխեցաւ, զերկրորդն ի տեղի տանջանացն մատուցանէին, և զգլխոյն մորթն* վարսիւքն (*գլխո–*

ժող) հանդերձ զերեսօքն արկանէին, եւ՜անդէն հարցանէին. Կերիցե՞ս խոզենի միս, մինչչեւ զամենայն մարմինդ անդամ անդամ լուծեալ է: Նա եւս պատասխանի իւրեանց բարբառովն և ասէ. Ոչ: Վասն այսորիկ և սա ի նոյն տանջանսն տանջեալ վախճանէր: Իբրեւ յոգւոցն պարզել ապաստանն եղեւ (հօքքն տալըմըշ եղու), սկսաւ խօսել և ասէ ցԹագաւորն. Ա՛յ սեզ (ջոռող), հպարտ և ամբարտաւան, դու զմեզ յայսց կենաց աշխարհիս կարճել (Ըշէւ, Վէրցնէւ) համարիս. իսկ այն որ աշխարհաց Թագաւորն է, Թէպէտ և մեռանիմք մեք վասն օրինացն, ի կեանսն յաւիտենից ի միւսանգամ ծննդեանն ժամանակի կենաց ի կեանս դարձուցանէ: Յետ նորա զերրորդն ածին, և զլեզուն խնդրէին. Նա վաղվաղակի մատուցանէր, և զձեռսն քաջասիրտս (քաջասրտութեամբ) տարածանէր, զի և Թագաւորն ինքնին իսկ զարմացեալ լինէր վասն պատանւոյն ուշի մտացն (մօքքն հաստատութեանը) և սրտին քաջութեան. զի առ ոչինչ զցաւսն համարեցաւ: Եւ սա իբրեւ փոխէր, զչորրորդն ի տեղի մատուցեալ՝ ի նոյն տանջանս չարչարէին: Իբրեւ շունչ վախճանին (Վէրճէ շունըը) հասանէր, խօսել սկսաւ այսպէս. Մեզ լաւ է զի փոխիմք աստի ի մարդկանէ, և յուսոյն ակն ունիմք միւսանգամ ծննդեանն յարութեան մեռելոց, քան քեզ ի կենդանիս, զի արգելեալ փակեալ է ի քէն յարութիւն մեռելոց: Յետ սորա զհինգերորդն մատուցին ի տանջանս չարչարանացն: Իբրեւ զաչս ի վեր եբարձ նա, հայեցաւ ընդ Թագաւորն, սկսաւ խօսել ընդ նմա և ասէ. Իշխանութիւն առեալ մարդկան, և դու մարդ մահկանացու, գործես զինչ եւ կամիս. բայց մի ի վատութիւն ինչ և զմեր ազգս համարիցես (վարացնել), կամ լքեալ Թողեալ ինչ ի ձեռաց Աստուծոյ համարիցիս: Կաց մնա դու, և տեսցես զզօրութիւն մեծամեծ սքանչելեացն, որպէս զի զքեզ և զազ –

գատոհմն քո չարաչար հարուածովք չարչարիցէ։

Ցետ այսորիկ ածեալ եղեւ վեցերորդն. և իբրեւ մերձ եղեւ ի մեռանել, ասէ. Զի՞ մոլորեալ ես տարապարտուց. ընդ մեզ այս անցք անցանեն (*սա քանէրը կը հանդիպին*) *վասն մեր մեղաց, զի մեղանչեմք առ Աստուած արժանի զարմանալոյ. բայց դու մի* ակն ունիցիս (*յօլտաշ*) ողջանդամ (*ողլ մուրթուլ*) *բարեմիտ ապրել* յաստուածամարտ (*Աստուծոյ հէտ պատէրազմ*) *մատուցեալ*։ *Եւս առաւել բարեաց յիշատակաց արժանի մայրն սքանչելի, զայնպիսի զեւթն որդի յիւրմէ կորուսեալ ի միում աւուր վասն յուսոյն Աստուծոյ՝ քաջալերեալ* սրտապնդեալ (*տօղլըշըրըլ*) *զմի մի ի նոցանէ մխիթարէր իւրեանց բարբառովն. և զխրատն և զմիտսն զիգութեան* առնապէս (*էրքէկմէրտանէ պէս*) *վառեալ՝ քաջութեամբ յառաջ մատուցեալ ասէր. Զգիտեմ որպէս բնաւ դուք յարգանդիս երեւեցարուք. և ոչ ես ինչ զոգիսդ կամ զկեանսդ ձեզ շնորհեցի, և ոչ զկերպարանսդ ձեր զիւրաքանչիւր ես նկարեցի, և զհասակսդ ձեր ծնեալ և սնուցեալ՝ այսուհետեւ իմ ինչ ոչ համարեցայց. այլ որ աշխարհի արարիչն է, որ ստեղծ զծընունդս մարդկան, զկեանսդ և զոգիսդ ի գալստեան իւրում իւրով ողորմութեամբն ի ձեզ դարձուցանէ*։ *Անտիոքոս Թէպէտ և արհամարհեալ զինքն համարեցաւ վասն բարբառոյ նահատակացն, սակայն, մինչդեռ ոգիքն կրտսերոյ մանկանն առ իւր կային, սկսաւ ոչ միայն բանիւք մխիթարութիւն մատուցանել, այլ և երդմամբ հաստատէր ի մեծութիւնս*, յաւագութիւնս (*մէծա-բէյան, էշխանա-բէյան*) *հասուցանել*, երանելի (*երջանիկ*) *առնել յաշխարհի, միայն թէ ի նախնեացն օրինաց փոխեսցի.* գործ ի ձեռն տալ (*պաշտօն տալ*) *և բարեկամ անուանել թագաւորաց*։ *Իբրև ետես թէ ամենեւին պատանին ի բանս թագաւորին ոչ* խոտորեցաւ (*գէջա*), *կոչեաց թագաւոր զմայրն, և աղաչէր լինել պատան–*

ւոյն կենաց խորհրդական զի փրկեսցի ։ Իբրև կարի չատ ստիպեաց, յանձն առ մայրն խօսել ընդ որդւոյն. խոնարհեցաւ ի նա, սկսաւ ծաղր առնել զհպարտ զամբարտաւան Թագաւորն և ասէ. Ողորմեաց ինձ, որդեակ իմ. յուշ լիցի քեզ (յէշէ) զի կրեցի զքեզ ինն ամիս յարգանդի և սնուցի զքեզ զերիս ամս ի գիրկս ստեամբ և հասուցի զքեզ յայդ չափ մեծութեան հասակի. արդ աղաչեմ զքեզ, որդեակ, մի զարհուրիր դու ի չարաչուք դահճէ այտի. այլ եղբարցն արժանի եղեալ ընտրեա (Նախադաս համարէ) զմահ քան զկեանս աշխարհի, զի ընդ այն եղբարս ընկալայց զքեզ ի ձեռն ողորմութեան մեծին Աստուծոյ ։ Եւ մինչդեռ մայրն զայն մխիթարութիւնս մատուցանէր ի միտս հաստատունս, սկսաւ խօսել պատանեակն և ասէ. Ո՞ւմ կայք, զի՞ յապաղէք. չեմ ինչ լսելոց հրամանի Թագաւորիդ, այլ հնազանդեալ եմ օրինաց հարցն մերոց ։ Այլ դու որ զամենայն չարիս խորամանկեցեր (Նենգօ-Բեամք Նէ-Բեւ) ի վերայ որդւոյդ Եբրայեցւոց, անօրէն, ապերստամբ, պիղծ, վատ արանց, զի՞ զուր հպարտանաս յուսով քով սնոտւով ի վերայ ծառայից նորա, չես ինչ ապրելոց յամենագէտ յամենակալ դատաստանացն Աստուծոյ. այլ ես յուսացեալ կարդամ առ Աստուած ինեւ և եղբարքն իմովք՝ զամենայն նիւթեալ (դարձաւծել Թեքենայել) սրտմտութիւն բարկութեան քո ջնջել և ի բաց անցանել ։

Յայնչափ քաջութենէ սրտի մանկանցն եւթանեցունց սրտաբեկ լինէր (վհատէլ) Թագաւորն. առաւել ի վերայ կրտսերոյն դառնապէս տանջանս մատուցանէին. սակայն և սա անարատութեամբ և սրբութեամբ յուսացեալ ի Տէր մեկնեցաւ յաշխարհէ ։ Զհետ որդւոյն և մայրն երանելի ի նոյն օրէնս կատարեցաւ ։ Բ. Մակ ։

———

ՔԱՋՈՒԹԻՒՆՔ ՅՈՒԴԱՅԻ ՄԱԿԱԲԵԱՅ

Այլ Յուդա Մակաբէ և որ ընդ նմա էին՝ սաստ անդ զաղտագողացեալ (ֆողլը ղէօ ֆողըր) մտանէին ի գեւղս , ի քաղաքս և յագարակս ։ Յինքն արկանէր (ճըրեն յֆէլ) Յուդա զազդատոհմն իւր և նուաճէր զՀրեայսն որ կացեալ էին հաստատութեամբ յուխտին իւրեանց ․ կազմէր լինէր զօրաժողով ․ դիմակալ (տէմ տնէլ) ինչ ոչ լինէին նմա հեթանոսքն ․ հասանէր ի վերայ գիւղից և քաղաքաց , հրձիգ առնէր զամուր ամուր տեղիս թըշնամեացն , անդրէն նուաճէր դարձուցանէր զըմբընեալսն ի թշնամեաց ․ մեծամեծ սաստիկ հարուածս ի վերայ թշնամեացն հասուցանէր ․ մանաւանդ զգիշեր եւս իւր օգնական գործակից գտանէր , և համբաւ (լօր) քաջութեանն ընդ ամենայն կողմանս ընթանայր ։ Իբրեւ զայն տեսանէր Փիլիպպոս զի գամ քան զգամ (եըրնալըլ) իրք առնն յառաջադէմ աջողէին , արքունի հրովարտակօք առ Պտղոմէոս սպարապետ սորին Ասորւոց և Տաճկաստանի հրեշտակս առնէր (պօտֆամօօր ըրեէլ) օգնական ի թիկունս (կանակ , օֆնական) զօրս ի ձեռն հասուցանել ։ Նա վաղվաղակի իբրեւ առնոյր զհրովարտակսն , զՆիկանովր Պատրոկղեանց զառաջին սիրելի աւագաց (դճադճներան) իւրոց ի ձեռն գումարէր (կը ըրէէր ըօրթաղ) ոչինչ պակաս քան զքառասուն հազարաւ , առհասարակ բառնալ ի միջոյ , ջնջել զազգն Հրէից ․ յանդիմանէր (նէրէայօցնել) նմա զԳորգի սպարապետ , զայր քաջ , իրաց պատերազմի տեղեակ , ամենայնի հմուտ ։ Յանձն առ Նիկանովր զհարկն առաջին զոր թագաւորն տայր Հռոմայեցւոց հարիւր քանքար՝ ի Հրէից գերութենէ անտի լնուլ ։ Ընդ հրաման տայր շուրջ զծովեզերօքն կոչել զվաճառականսն մարդագինս (մօրը ֆնօղ) ի Հրէաստան , խոստանայր ինսուն ինն-

սուն մարդ տալ նոցա ի քանքար մի։ Ցուդայի էին ոմանք որ գուշակ լինէին (լօր օդու, խմաջնել) վասն Նիկանովրայ արշաւանին։ Նոքա (Հրեայք) առ վստա֊ սրտել իւրեանց այսր անդր խուսափէին ապրել յանօ֊ րէն յանարժան ձեռանէ Նիկանովրայ որ, մինչչեւ տեսեալ էր զնոսա, ընդ վաճառականս անձանց նոցա գինս հատանէր (ֆէն կորել)։ Այլ Յուդա միխիթարէր զնոսա զի մի պակասիցեն (Բօսուսու) յայնչափ զօրաց բազմութենէ և մի վհատեսցին․ և այսու մխիթարէր, քաջալէր բանիւք վառէր պատրաստէր զնոսա ի վերայ օրինացն և աշխարհին իւրեանց մտադիւր (յօժարու֊ Բնամը) մարտնչել․ համարձակ մեռանել։ Ցերիս գունդս զզօրսն բաժանէր։ Երկոցունց գնդացն զերկոսին զեղ֊ բարսն զՇմաւոն և զՅովսէփ զօրավար կացուցանէր, և առաջնոյ գնդին ինքնին զօրագլուխ պատրաստեալ՝ յարձակէր, ի դիմի հարկանէր (դէմը ելլել, ղարշուել) Նիկանովրայ։ Հասանէին հարկանէին ի զօրաց անտի թշնամեացն աւելի քան զինն հազար սպառազէն, և զայլսն խոցս (վէրաւոր) և խեղս (օախօՌ) և վիրաւորս առնէին․ և չուրջ զբանակաւն պահ արկանէին (պահա֊ պան դնել), և զինչս և զգանձս մարդագին վաճառա֊ կանացն լուրեանց առնուին (էրենց կ'առնէին), և զմնաց֊ եալ զօրսն Նիկանովրայ առաջի իւրեանց փախստա֊ կանս առնէին, մինչ օրն տարաժամէր (էրէկուան ըլլալ)։ Իբրև ժամ աւուրն ի տարաժամել անկանէր, այսրէն վաղվաղակի տագնապաւ դառնային, և ոչ ընդ երկար (երկայն օրեն) հալածէին զնոսա, զի ի վաղիւ անդր շա֊ բաթ էր․ այլ հասեալ այսրեն (նորէն ատքէն ֆալով) ու֊ նէին զճակատուն տեղի, զզէնս քաղէին (ժողվել) զան֊ կելոցն, դիազերծ առնէին (մերկացնել, կողոպտել) զվի֊ րաւորսն, և ինքեանք շաբաթուն պատրաստէին։ Յետ շաբաթուն՝ նեղելոց և այրեաց և որբոց մասն հանէին յաւարէ անտի, և ապա ինքեանք ընդ բաժինս սա֊

թին խառնեին ([illegible])։ Իբրեւ զայս գործեցին, առհասարակ անկեալ աղօթս մատուցանէին առ ողորմածն Աստուած. աղաչէին մինչ ի վախճան հաշտ լինել ([illegible]) ընդ ծառայս իւր։ Իսկ յամենայն կողմանց թշուառացեալ Նիկանովր, որ զհազարս վաճառականսն ի մարդագին ([illegible]) ածէր որդւոցն Հրէից, մեծաւ տառապանօք թշուառութեամբ անկեալ ի փառացն հանդերձէ, գձձեալ ([illegible]), ընդ մուրողս անկեալ ([illegible]), մեծ սուգ առեալ վասն զօրացն կորստեան, փախըստեայ, կորացեալ ([illegible]) ի քաղաքն Անտիոքացւոց անկանէր։ Եւ որ հռոմայեցւոցն խոստանայր զհարկն յերուսաղեմացւոց գերութենէ անտի լնուլ՝ ինքնին նովին բերանով պատմէր թէ յայտնի Աստուած է նոցա օգնական, վասն այսորիկ ողջանդամ (ողջ առողջ) և առանց խոցոտելոյ ի պատերազմէն ելանեն։ Բ. Մակ։

ՉԱՐԱՉԱՐ ՍԱՏԱԿՈՒՄՆ ԱՆՏԻՈՔԱՑ

Ընդ այն ժամանակս դէպ եղեւ դառնալ Անտիոքայ մեծաւ անարգանօք ի կողմանցն Պարսից. քանզի էր երթեալ նա ի քաղաքն ի բուն նոցա։ Խորհեցաւ ձեռն արկանել զգանձիւն, և եթէ հնարեսցի ([illegible]), զքաղաքն իսկ աւերել ջանայր։ Իբրև զայն զգացին զօրք քաղաքին, առհասարակ ի զէնս իւրեանց ընթացան, և զայն որ մեծաւ սաստկութեամբ ի վերայ երթեալ էր՝ անարժան կորակոր ([illegible]) յանձանց ի բաց մերժէին։ Իբրև չու առնէր, խաղայր գնայր ամօթալից Անտիոքոս, ազդ լինէր նմա որ ինչ անցք անցեալ էին ընդ նա։ Զմտաւ ածէր զատահակութիւն ([illegible]) քաղաքացւոցն որ զնա ի փախուստ դարձուցին. լցեալ սրտմտութեամբ զմտաւ ածէր յերուսաղեմացիս անդ յագեցուցանել զսրտմտութիւն բարկու-

թեան իւրոյ։ Հրաման տայր կառավարին ստէպ տագնապաւ (շուտով) *անդադար վարել՝ մինչ եղեալ ճանապարհին,* մեծամեծս փքայր (գեջ գեջ ձայնել) *ի հպարտութիւն ամբարտաւանութեան իւրոյ, և ասէր* անմարդի (անմարդ) *զԵրուսաղէմ կացուցանել։* Իսկ *ամենակալ Բարձրեալն եհար զնա աներևոյթ հարուածովք։ Այն ինչ բանքն ի բերան նորա էին, անհնարին սաստիկ ցաւք ոսկերաց ի վերայ հասանէին, և դառնութեան* խիթք (սանջը) *ի փորն անկանէին։ Եւ կալի յիրաւունս. զի որ բազում նորանոր չարաչար ցաւս յայլոց մարմինս տանջանօք հասուցանէր, նոյն սաստկութեան ցաւք զնովաւ անկեալ պաշարեալ պահէին, և այն որ այն ինչ կամէր ի վերայ ալեաց ծովու սաստել՝ զվերին լերանցն* ներքին (դաղը դիբ) *առնել և զներքին վերին, զնա ինքն* յերկիր ճողեալ՝ (գետինը զարկեցին) ղալակաւ (պատգարակով) *շրջեցուցանէին, մինչև յաչաց անտի անօրինին* եռանդն (եռալով) *որդանց բղխեալ* սորսորել (խաղխղել), *և ի* նեխոյն (նեխ, վերջին գարշ) *հոտոյ զօրացն ամենայնի նեղել տագնապաւ, և որ յառաջն հպարտացեալ մտօք զաստեղս երկնից ամփոփել համարէր, այսր անդր զնա* ՇՐՋՇՐՋել (դարձնել) *ոչ ոք կարէր վասն նեխոյն հոտոյ տագնապի. ինքն իսկ ոչ կարէր* ժոյժ ունել (համբերել) *ի նեխոյ հոտոյ անտի։ Սկսաւ այսպէս խօսել. Պարտ և պատշաճ է հնազանդ լինել տեառն Աստուծոյ, և մի ի մարմինս մահկանացուս* աստուածակերպ օրինակ (Աստուծոյ պէս) *բարձրանալ։ Ուխտս դնէր զսուրբ քաղաքն մարդաշատ և ազատ կացուցանել. զՀեբրայեցիսն, որոց սպառնայր ոչ պատուանաց և ոչ թաղելոյ արժանի առնել, այլ կանամբք և մանկտւով ի* ճաւակերի դնել (թռչուններուն կերակուր ընել) զազանաբեկս (գազաններէն ջարդուած) *արարեալ, զնոսա քաղաքակիցս իւր, հաւասարս Աթենացւոց գրով* մուրհակօք (մէկէն, գիր) *կացուցանել, և*

զտաճարն սուրբ, զոր յառաջ ապառնայր կապուտ կողոպուտ թողուլ, գեղեցիկ պատարագօք զարդարել, զզարդ և զսպաս (ամաններ) որ յառաջ անտի տարեալ էցէ, բազմապատիկ անդրէն դարձուցանել. և ի վերայ այսր ամենայնի Հեբրայեցի եւս լինել և յամենայն մարդաշէն տեղիս հասանել պատմել զզօրութիւն մեծութեանցն Աստուծոյ։ Եւ մարդախողողն (մարդիկ սպաննող), անօրէն հայհոյիչն, զայս օրինակ անկեալ կործանեալ սատակմամն լինէր (սատկիլ). յօտար լերինս չարաչար տանջանօք զոր ընդ այլս անցոյց (հասցունել)՝ կարճէր ի կենաց անտի։ Իսկ Փիլիպպոս դայեկորդի նորա որ առեալ տանէր զմարմին նորա՝ երկեաւ յորդւոյ անտի, առ Պտղոմէոս յերկիրն Եգիպտացւոց հատուածով (թողնելով, փախչելով) փախստեայ լինէր։

Մակաբէոս և որ ընդ նմա էին՝ յօգնականութենէ Տեառն զօրացեալ, զերեզարձ առնէին ([illegible]) քաղաքին և տաճարին, սուտս առեալ գեղեցիկս ի թաւ ծառոց և սուտս արմաւոյ՝ ցնծութեամբ և ուրախութեամբ առնէին տօն զութ օր ըստ աւուրցն տաղաւարահարաց, զի յուշ լիցի նոցա ո՛րպէս յառաջ զտօնս տաղաւարահարացն ի լերինս պաշտէին, յայրս և ի քարաձերպս (ժայռերու ճեղքերը) զօրէն երեոց (վայրի անասուն) խոտաճարակ շրջեալ։ Այլ վասն Անտիոքայ երեւեալն անուանելոյ մահուանն այսչափ բանք. բայց վասն հօրամոյն (հօրը նման) Անտիոքայ անօրէն զաւակի (սերունդ) ցուցցուք համառօտ։ Բ. Մակաբ։

ԼԻՍԻԱՍ ՄԵՌԱՆԻ. ՄԱԿԱԲԱՅԵՑԻՔ ՊԱՇԱՐԵՆ ԲԵՐԴ ՄԻ

Իբրեւ առ բազ ([illegible]) Անտիոքոս, կացոյց իշխերայ իրացն արքունի կողմանցն ստորին Ասորւոց և Տաճկաստանի զԼիւսիաս և զՊտղոմէոս որում բարձրանձնն (բարձրահաւան) ասէին։ Չիրաւունս հաստատուն

պահէր (Լիւսիաս) առ Նբրայեցիս, վասն այսորիկ ամբաստան լինէին զնմանէ ընկերքն նորա առ Անտիոքոս, և մատնիչ կոչէին զնա, յայն սակս նա իբրև ոչ համբերէր նախատանացն, դեղս (*Թոյն*) *առ անձամբ իւրով և մեռաւ։*

Գորգիաս զօրավար վայրացն զօրաժողով լինէր Եդովմայեցւովքն հանդերձ՝ հասանել հարկանել զամուր ամուր կողմանսն։ Իսկ որ զՄակաբայեցւովքն էին՝ կանխեցին հարկանել զամուրսն Եդովմայեցւոց, եկին հասին, պատեցին, խումբ արարին (*ժողվ ըլլալ*), *առհասարակ ի վերայ յարձակեցան, զամուրսն փլուզին, հարին կոտորեցին, զոր* ի ձեռն առին (*ձեռք ձգեցին*) *առ հասարակ սատակեցին։ Էին ոմանք որ փախստեայ գնացին, և եկին ամրացան ի բերդս երկուս ամուրս. և նոքա (Մակաբեանք) ընդ իւրեանս ունէին զամենայն* կահ (*կայնած, ոտքի*) *մեքենայից։ Շուրջ* պահ եդին (*պահել, պահպանել*) *և զմեքենայսն առ պարիսպն կանգնեցին։ Եւ Մակաբէոս եթող ի վերայ բերդին զՇիմոն և որ ընդ նմա զօրք էին՝ վասն բերդիցն պաշարման. և ինքն գնաց։ Իսկ Շիմոնեանք որ զբերդաւն նստէին՝ ի պատգամս անկանէին,* կաշառագնաց լինէին (*թշնամիներուն հետ խօսք ընելով կաշառ առնել*)*. առնուին յամրականաց անտի եւթն բիւր սատեր արծաթոյ. և թողային նոցա ելանել սփռել յամրոցաց անտի։ Իբրև ազդ եղև Մակաբեայ վասն իրացն որ եղեն, ժողովէր զիշխանսն ամենայն, ամբաստան լինէր, յայտ առնէր զի արծաթոյ վաճառեցին զեղբարսն և արձակեցին զթշնամիսն։ Զայնոսիկ որ այնպէս* մատն եդեն (*մատնել*) *օրինացն՝ ածին սատակեցին, և ինքեանք ի բերդն արշաւեցին։ Եւ Տիմոթէոս որ յառաջ ի պարտութիւն մատնեցաւ՝ դարձեալ* զուարթագնայր (*զօրանալ, ծաղկէլ*)*. դարձեալ զօրաժողով լինէր* յոտարակողմն կուսաց (*օտար կողմերէ*)*. բազում զայրուձի կուտեալ, ի մտի եդեալ*

դայր վարել ի դերութիւն զերկիրն Հրէաստանի։ Իսկ որ զՄակաբայեցւովքն 'էին՝ ընդ մերձենալ նոցա ի խնդրուածս պնդէին (աղօթք խնդրուածներ կ'ընէին) *առ Աստուած, հող ի գլուխ* քրձազգած լինէին (սուգ հագ-նել)։ *Իբրեւ զաղօթսն կատարեցին, առհասարակ ի զէն դարձան.* հարուստ մի (ծածկան տեղ) *ըստ քաղաքն արտաքս ելին. իբրեւ մերձ եղեն ի գունդն թշնամեաց, կարգեցան կազմեցան օրինօք ճակատեցան։ Այն ինչ վարդագոյն ծայրակարմիր արեգակն ընդ երկիր ծաւալել կամէր, և նոքա երկոքին կողմանքն ընդ միմեանս խառնէին. կիսոցն օր* բարենշան (յաջող) *զուարթութեամբ պատրաստել, կիսոցն սրտմտութիւն բարկութեան։ Յայնմ աւուր անկեալ գտանէր ի գնդէ անտի թշնամեացն առաջի նոցա քսան հազար և հինգ հարեւր սպառազէն. և ինքն Տիմոթէոս* պրծեալ (գաղտ աղաչել) *ընդ ամբոխն ի փախուստ դառնայր, և եկն* անկաւ (ամրոցը) *ի քաղաք մի ամուր։ Մակաբէ զօրօքն եկն, փակեաց պաշարեաց զամուրն ի չորս աւուրս. իսկ այն որ ի ներքս անդ էին՝ յամրութիւն քաղաքին յուսացեալ՝* այպնակատակ լինէին (ծածկել) *Եբրայեցւոցն և բանս կսկծելիս թշնամանաց* առ իւրեանց չարի (է հեռու խուր-եանց) *ի նոսա արձակէին։ Իբրեւ օրն հնգօրեայ շաբաթուց լուսանալ կամէր, արք ընտիրք քսան ի գնդէ անտի Եբրայեցւոց զէնս առեալ ընդ դուռն քաղաքին ի ներքս յարձակեցան. զորս առ դրանն գտին՝ առ ոտս իւրեանց կոտորեցին, և որ զօրք պարսպապահ ի վեր անդ կային՝* քան զտեղ քան զտարափ (անձրեւէ առնէլ) *թանձր և արագ ի վերուստ ի վայր թօթափէին. և զօրքն առհասարակ ի ներքս անկանէին, զաշտարակս բերդին և զամենայն* փայտակերտ (փորուած շինուած) *քաղաքին հրձիգ առնէին, ապա* խարոյկս *ի մէջ քաղաքին* արկանէին (կրակ վառել), *և զհայհոյիչ թշնամանողսն ի նմա այրէին. մինչեւ զՏիմոթէոս եկին գտին փա-*

խուցեալ և Թագուցեալ ի դբի միոջ · զնա և զեղբայր նորա ի նոյն գուբ (ֆօրտունած տեղ) փողոտեցին ։

ՅԱՂԹՈՒԹԻՒՆ ՄԱԿԱԲԱՅԵՑԻՈՑ ԸՆԴԴԷՄ ԼԻՒՍԵԱՅ

Յետ սակաւ ժամանակաց հազարապետն արքայի Լիւսիաս իբրև լուաւ, մեծաւ բարկութեամբ լի նախանձու ծանրացեալ տրտմէր ի վերայ գործոցն եղելոց ։ Զօրաժողով լինէր, կուտէր ութսուն հազար, և զամենայն զօրսն հեծելազօրս ընդ իւր առեալ խաղայր ի վերայ Եբրայեցւոցն, և զփիղսն աղխաղխեալ (կոտրել) տանէր, ի մտի եդեալ զքաղաքն գլխաւոր առնել բնակութիւն հեթանոսաց, և զտաճարն սրբութեան դրամաժողով (հարչապու) ի վաճառ կացուցանել իբրև զայլ մեհեանս, և զքահանայապետութիւնն ինքնին վարձկան (վարձուոր, հարչապու) գանձուն կացուցանել ամ յամէ ։ Իբրև ի Հրէաստան մխեցաւ և մերձ եղև յամուրսն Բեթսովրայ որ մերձ է յԵրուսաղէմ իբրև ասպարիսօք հինգ, և ի նեղ մեծ զամուրն հասուցանէր, ազդ եղև Մակաբայեցւոցն պաշարումն ամրոյն, միաբան միահաւան վառեալ պատրաստեալ յառաջ մատչէին ։ Այն ինչ լինէր նոցա մերձ ի կողմն քաղաքին Երուսաղեմացւոց հասանել, եկն էջ առաջի նոցա այր մի սպիտակաձի յոսկիազէն (ոսկէ զէնք) վառեալ · ճօճէր (երերցնել) զնիզակն և պատրաստէր յարձակել · և առհասարակ ամենեքին խրախոյս (քաջալերութեան ձայն) բարձեալ երթային իբր ոչ եթէ մարդկան ինչ ի դիմի հարկանել, այլ թէ և գազանք ինչ անհնարինք պատահեսցեն և կամ պարիսպք երկաթիք, հարկանել, սատակել, կործանել, թափ անցանել (մինչև ներսը, խորը մտնել) ։ Եւ այնպէս փարազախառն (վայրէ խոլէ ոէ) առիւծաբար յարձակեցան ի վերայ գնդին Թշնամեաց · և անդէն ի նմին տեղւոջ հարին, տապաստ արկին մետա—

սան հազար ընտիր զօր․ և բազումք ի Նոցանէ խոց վիրաւորք և ապիկար (*անկարըղ*) *մերկանդամք փախստեայք ապրեցան։ Եւ ինքն Լիւսիաս կորակոր փախուցեալ* մազապուր լինէր (*հօշ- աշըրէլ*), անճնարինս առ յաղթութիւն (*անյաղնելի*) *առէր զՆբրայեցիսն։ Եւ* յղեաց (*մուրդ դըրկեց*) *զկնի Նոցա հաշտութիւն առնել․ և Թագաւորն եւս յանձն առ, զի և զԹագաւորին* միտս հաճեաց (*համոզեց*) *բարեկամ լինել ընդ Նոսա։ Յանձն առ Յուդա զոր միանգամ Լիւսին աղաչեաց զՆա վասն օգտի հասարակաց․ և որչափ միանգամ Մակաբէ* Ցամսկ ետ (*ֆըրալ խնդրեց*) ց*Լիւսիաս վասն Հրէից՝* քողացոյց (*շնորհեց*) *Նոցա արքայն։ Եւ Լիւսիաս անց գնաց անդրէն առ Թագաւորն, և Հրեայք անդրէն զգործովք և* զարարովք (*արարք, ստացուած*) *և* զարդեամբ (*բերդ*) պատաղեցան (*դժուդէլ*)։ Բ․ *Մակաբ*։

ՑԱՐՁԱԿՈՒՄՆ Ի ՎԵՐԱՅ ՄԱԿԱԲԵԱՆՑ, ՊԱՇԱՐՈՒՄՆ ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ԵՒ ՅԱՂԹՈՒԹԻՒՆ ՄԱԿԱԲԵԱՆՑ

Արք անօրէնք յիսրայելացւոց անտի գնացին առ արքայն և ասեն․ Մեք հաւանեալ եմք ծառայել հօր քում և երթալ զհետ հրամանաց Նորա․ այլ որդիք ժողովրդեան մերոյ ի մեզ ձեռս մխեցին, և այժմ եկեալ պաշարեալ պահեն զմիջնաբերդն Երուսաղեմի առնուլ զՆա․ և զԲեթսուրա ամրացուցին։ Եւ եթէ ոչ վաղ (*ժամ մը յառաջ*) *անձապարեսջիք, եւս մեծամեծս ինչ քան զայս գործիցեն, և դուք* զառաջս *ոչ կարիցէք* ունել (*առջևը առնել*)։ *Իբրև զայն լուաւ Թագաւորն, բարկացաւ յոյժ․ հրամայեաց կոչել զիշխանս որ ի վերայ զօրացն էին․ և եկին առ Նա զօրք բազումք ի վարձու․ և էր Թիւ զօրաց Նորա հարեւր հազար* ասպար (*ջահան*) *ի ձեռին տիգաւոր հետեւակ, և քսան հազար հեծեալ սպառազէն, երեսուն և երկու փիղք վառեալք*

երիվարիկք (երէվարէ պէս կըԹառած)։ Եւ եկին ճակատե-ցան, պաշարեցին զԹեԹսովր քաղաք, և մարտ պատերազմի եդին շուրջ զնովաւ աւուրս՝ բազումս, կազմեցին շուրջ մանգղիոնս և մեքենայս։ Զուեաց խաղաց գնաց Յուդա ի միջնաբերդ ամրոցէ անտի, և եկն բանակեցաւ դէմ յանդիման բանակի արքային։ Կանխեաց (ֆու-Նոց) ընդ առաւօտն Թագաւորն․ առ զբանակն, տարաւ բանակեցոյց, և զզօրսն սփռեաց ճակատեցոյց ի մարտ պատերազմի։ Փող հարին․ կազմեցին պատրաստեցին զփիղսն, ճաշակեցուցին յարիւն խաղողոյ․ ի զմուռս և ի գինիս․ բաշխեցին ի գունդս գունդս, և կարգեցին առ փիղ փիղ (ֆիլ ֆըլաւ) հազար հազար (հաղարական) այր սպառազէն․ և սահապան ի գլուխ գնդին հինգ հազար հեծեալ վառեալ նժոյգ ի ձեռն (յէ նէտէկ), պաշտպան գնդին, զի ուր և կայցեն գազանքն՝ կայցեն և նոքա, և ուր և գնայցեն՝ գնայցեն և նոքա․ և վանդակակապ (ֆորմաֆըլըֆըլը, ֆաֆէտյ) մարտկոցս մեքենայիւք ի վերայ փղացն կազմեցին, զփղապանն ի վերայ գլխոյն նստուցին, և զայլ այրուձին յաջ և յահեակ (յախ) Թևս գնդին կազմեցին։ Իբրև անտի արեգակն ծայրս արձակեր (ծաֆել), առհասարակ ի զրահաւոր պատենազեն (զըրխը, ֆաֆըլու) պղնձապատ վահանացն նշոյլք (շըլաշաամ) զլերամբքն փայլատակեին (ֆայլարյակէլ), և ճառագայթք հատանեին (լայ կը շըլնաւր) իբրև ի փայլատականց հրոյ (Բոբբոտած կրակէ)։ Եւ երկայնէր ճակատն և զեղոյր (կը տարածուէր) զբարձամբք լերանցն, զձորովք և զխորովք և զդաշտիւք։ Եւ խաղային յառաջ առհասարակ կարգեալք և կազմեալք, միաբան շարժէին առհասարակ ամենեքին որ լսէին զձայն բարբառոյ բազմութեանն, զշաչիւն զինու և զշառաչիւն․ զերիվարա ն Թնդիւն և զոտնաձայն վահանաւոր վառելոցն։ Ե ն եհաս Յուդա իւրով գնդաւն․ յարձակեցաւ, ի դի ի հարաւ գնդի Թագաւորին, յայնմ տեղւոջ յանդիմ ն

թագաւորին մեց հարեւր հեծեալ սպառազէն դիթաւալ կացուցանէր ։ Ցայնմ վայրի դետ ակն ի վեր ամբառնայր ([illegible]) Եղիազար Աւարան · տեսանէր զմի ի գաղանաց անտի վառեալ զարդարեալ ի զէն արքունի և նշանս արձակեալ ([illegible]) · համարեցաւ թէ արքայն իսկ ի նմին իցէ , յարձակեցաւ ի վերայ գնդին , յաջ և յահեակ կոտորեաց , չոգաւ մինչև եհաս ի փիղ անդր նշանաւոր ([illegible]) , զէն վերացոյց և եմուտ ի ներքոյ , եհար և անդէն կործանեաց . և էջ նստաւ փիղն ի վերայ և զնա անդէն ճմլեաց ։ Նոքա իբրեւ տեսին զզօրութիւն Մակաբեանցն , խոյս ետուն . և խօսեցաւ Յուդա ի հաշտութիւն խաղաղութեան ընդ Բեթսովր քաղաքի , և ելին սփռեցան նոքա ի քաղաքէ անտի զի ոչ գոյին նոցա անդ համբարք ([illegible]) ։ Իսկ թագաւորն պաշարեալ պահէր զսուրբ քաղաքն աւուրս բազումս · և շուրջ զնովաւ կանգնէրին մանգղիոնս և մեքենայս , հրացանս և քարընկեցս ([illegible]) ումբաքարս ([illegible]) , նետաձիգ աշտարակս և աշտարակս պարսաւորաց ։ Դարձեալ և նոքա ի քաղաքէ անտի սկսան կազմել մեքենայս առ մեքենայս նոցա ։ Մարտ եդեալ կռուէին զօրք թագաւորին աւուրս բազումս · բայց համբար ինչ ոչ գտանէին , զի գաղթականք աշխարհին սպառեցին զհամբարսն մթերեալս ([illegible]) , և սովն սաստկացեալ էր ի վերայ նոցա ։ Իբրեւ լուաւ Լիւսի եթէ Փիլիպպոս դարձաւ ի Պարսից և ի Պարթեւաց , և զօրքն ամենայն ի նա հաստան ([illegible]) , եկն և ասէ ցարքայ · Նեղին զօրքս հանապազ . համբարք նուազեալ են և կերակուրք կարճեալ ([illegible]) , և տեղիդ յորոյ վերայ պատերազմդ է՝ ամուր է և անճնարին ([illegible]) · արդ եկայք ի հաշտութիւն խօսեցարուք · դաշինս կռեսցուք ([illegible]) , խաղաղութիւն արասցուք ընդ արս ազգիդ այդորիկ ։ Բանս հաստատեսցուք ([illegible]) ընդ նոսա կալ նոցա յիւրաքանչիւր օրէնս իբրեւ զա–

ռաջինն, զի վասն օրինացն իսկ իւրեանց բարկացան նոքա. ի վէգ եկին (դէմ դուրջան) և արարին զայս ամենայն: Հաճոյ թուեցաւ բանն առաջի թագաւորին, և արձակեաց նա հրեշտակս խօսել ի խաղաղութիւն: Ա. Մակաբ:

ՀՐԵԱՅՔ ՆԵՂԻՆ Ի ԲԱՔԻԴԱՅ, ՅՈՒԴԱ ՄԱԿԱԲԷ ԶՕՐԱՆԱՅ

Յամին հարիւրորդի յիսներորդի յառաջնում համբարձաւ Դեմետրիոս Սելեւկեան ի Հռոմ քաղաքէ, և եկն նա սակաւ զօրօք ի քաղաքն ծովեզերեայ, և թագաւորեաց ի նմա: Եւ եղեւ իբրեւ մտանել կամէր Անտիոքոս ի տուն թագաւորութեան հարց իւրոց, շուրջ եղեն, պատեցին զնա զօրք բազումք, ձերբակալ արարին զԼիւսի և զԱնտիոքոս կալեալ կապեալ ածին առ Դեմետր: Նա հրաման ետ և ասէ. Բնաւ զերեսս նոցա ինձ յակն մի արկանէք (մի ցուցնէք): Եւ տարան սպանին զնոսա, և նստաւ յաթոռ թագաւորութեան Դեմետր: Եւ եկին առաջի նորա արք անօրէնք ամբարիշտք յազգացն Իսրայելի. և Յակիմոս գլուխ էր նոցա, զի ինքն իսկ անսայր (կ'ողոքէր) քահանայութեանն. ամբաստան եղեն զժողովրդենէն և ասեն. Կորոյս սպառեաց Յուդա զմեզ զեղբարս իւր և քո բարեկամս, և զմեզ ցրուեաց յերկրէ անտի: Եւ ընտրեաց թագաւորն զԲաքիդ սիրելի զարքայի, իշխան մեծ հաւատարիմ յարքայութեան իւրում, և արձակեաց զնա և զանօրէնն Յակիմոս ընդ նմա. և ետ հրաման խնդրել զվրէժ որդւոցն Իսրայելի: Չու արար, խաղաց գնաց Բաքիդ, և հրեշտակս արձակեաց ի տեղւոջէ անտի առ Յուդա և առ եղբարս նորա խօսել ընդ նոսա ի խաղաղութիւն բանիւք նենգութեամբ, և նոքա ոչ ինչ անսացին բանից նորա: Սկսան ժողովել առ Բաքիդ և առ Յակիմոս ժողովք բազմաց որ խնդրէին զիրաւունս: Նախ Ասիդացիքն

էին յորդւոցն Իսրայելի որ խնդրէին զխաղաղութիւն. զի այսպէս համարեցան եթէ այր քահանայ որ ի զաւակէ Ահարոնի եկեալ է ընդ զօրսն՝ ոչ ինչ տացէ մեղանչել մեզ։ Եւ խօսեցաւ ընդ նոսա (Յակիմոս) բանս խաղաղութեամբ և Երդմնի եղեւ (երդուած բրաւ) նոցա եթէ Ոչինչ տաց մեղանչել ձեզ։ Եւ հաւատացին ի նա, և նա առ ի նոցանէ արս վաթսուն և սպան յաւուր միում։ Եւ անկաւ ահ և երկիւղ ի վերայ ժողովրդեանն, զի ասացին թէ Չիք ի նոսա իրաւունք և ոչ ճշմարտութիւն. զի անցին ըստ հաստատութիւն և ըստ Երդումն (երդումը դրժեցին) զոր երդուան։ Չուեաց Բաքիդ յԵրուսաղեմէ և եկն բանակեցաւ ի Բէրաէթ, և առաքեաց կալաւ նա զբազումս ի նոցանէ, յարանցն ինքնեկաց (ինքնիրեն եկող), և հրամայեաց փողոտել ի ջրհոր անդր ի ներքս։ Իբրեւ ետես Յուդա զչարիսն զոր արար Յակիմոս և որ ընդ նմա էին որդիքն Իսրայելի, յարձակեցաւ նա ի վերայ Հրէաստանի շուրջանակի զսահմանօք նորա, և արար վրէժխնդրութիւն ի վերայ արանցն որ ինքնակամ գնացեալ էին ի հեթանոսս։ Եւ կարճեցան (դադրեցան) նոքա այնուհետեւ դառնալ անդրէն յերկիրն Հրէաստանի։

ԱՅԼ ՅԱՂԹՈՒԹԻՒՆ ՅՈՒԴԱՅԵԱՆՑ ԸՆԴԴԷՄ ՆԻԿԱՆՈՎՐԱՅ · ՄԱՀ ՅՈՒԴԱՅԻ

Իբրեւ ետես Յակիմոս եթէ միւսանգամ եւս զօրացաւ Յուդա, և գիտաց թէ Ոչ կարեմ ժոյժ ունել (դիմանալ) նմա, դարձաւ անդրէն առ թագաւորն չարախօս լինել զնմանէ։ Եւ առաքեաց թագաւորն զՆիկանովրա, զմին ի փառաւոր իշխանաց անտի որ մանաւանդ ատեայր և թշնամութեամբ կայր ընդ կողմն Իսրայելի։ Եկն եհաս Նիկանովր զօրօք բազմօք, և առաքեաց նա առ Յուդա բանս խաղաղութեան նենգու-

թեամբ․ Մի եղիցի կռիւ ընդ իս և ընդ ձեզ․ եկից ես սակաւ արամբ տեսանել զերեսս ձեր խաղաղութեամբ։ Եւ եկն Յուդա և ողջոյն ետուն միմեանց խաղաղութեամբ․ և զօրքն ճակատեալ պատրաստեալ էին յարձակել ձերբակալ առնել զՅուդա։ Իբրեւ ազդ եղեւ բանն այն առ Յուդա եթէ նենգութեամբ եկեալ է զնմանէ (զինք բռնելու եկած է), խռովեցաւ, խորշեցաւ (փախչիլ), մերժեցաւ, հեռացաւ և այլ ոչ կամէր տեսանել զերեսս նորա։ Իբրեւ ետես Նիկանովր եթէ յայտնեցաւ խորհուրդն, խաղաց պատահել նմա պատերազմաւ ի կողմանս Փարսաղայ։ Հասին ճակատեցան երկոքեան և ընդ միմեանս բախեցան։ Ի պարտութիւն մատնեցաւ, խորտակեցաւ գունդն Նիկանովրայ, և անկաւ նախ ինքն ի սուր սուսերի ի մէջ երկուց ճակատուցն։ Իբրեւ ետես գունդն եթէ անկաւ Նիկանովր, զէնընկեց լինեին (զէնքերը թողուլ). ի փախուստ դառնային․ սոքա զհետ երթային նոցա օր մի մինչեւ եկին հասին յԱզերա․ և հարկանէին ըզփողս նշանաց զհետ նոցա, և ելանէին յամենայն քաղաքաց անտի Հրէաստանի շուրջանակի և կրճատեին (ճամբան կտրել) զնոսա։ Եւ անկան յայնմ աւուր ամենեքին ի սուր սուսերի և ոչ մնաց ի նոցանէ և ոչ մի։ Եւ եկին խառնեցան ընդ աւար, ընդ կապուտ, ընդ զէն, ընդ գանձ և ընդ կահ բանակին․ և զգլուխն Նիկանովրայ աջոյ ձեռամբն հանդերձ 'զոր իշխեաց ձըգել նա հպարտութեամբ ի տաճար անդր՝ բերին պըրկեցին (կապել) յանդիման Երուսաղեմի։ Եւ ուրախ եղեւ ժողովուրդն յոյժ, արարին զօրն զայն տարեկան (տօն) մեծ, և կարգեցին ամ յամէ զօրն զայն տօն տարեկանաց, զերեքտասաներորդ ամսոյն Ադարայ։ Իբրեւ լուաւ Դեմետր զի անկեալ կործանեալ էր Նիկանովր գնդաւն իւրով ի նոցանէ պատերազմաւ, անդրէն կրկնեալ յղեաց զԲաքիդ և զՅակիմոս և զյա-

ռաջակողմն թեւոյն իւրոյ ընդ Նոսա յերկիրն Հրէաստանի։ Եւ գնացին ի ճանապարհն Գազգաղայ և եկին բանակեցան մերձ առ Երուսաղէմ. և չուեցին գնացին հասին ի Բերէթ քսան հազար մկնդաւոր (Նիշանլաւոր) արամբք և երկուք հազարօք հեծեալ սպառազինաւ։ Եւ Յուդա էր բանակեալ յԷւղիշա, և երեք հազար սպառազէն ընտիրք ընդ Նմա։ Որքա իբրեւ տեսին զամբոխ բազմութեան գնդի Թագաւորին, երկեան յոյժ. և բազումք թօքափեցան (Բողուցին, ղափուեցան) ի Յուդայէ, և ոչ ոք մնաց առ Նմա բայց ութ հարեւր հեծեալ սպառազէն։ Իբրեւ ետես Յուդա թէ թօթափեցան զօրքն ի Նմանէ և պատերազմն Նեղէր զնա, Նեղեցաւ ի սիրտ իւր, լուծաւ, լքաւ, անկաւ, սկսաւ խօսել ընդ մնացեալսն և ասէ. Եկայք, հարցուք ի դիմի, թերեւս կարասցուք կծանել (խածնել, քրցանել) ինչ ի Նոցանէ։ Եւ ինքն արձակ խաղայր. և զօրքն մատուցեալ պաշարէին զՅուդա դարձուցանել ի խորհրդոյն, սկսան խօսել ընդ Նմա և ասեն. Այր դու, Նոցա ինչ մեք ոչ կարեմք ստնանել (քան մը ընել, ընա ընել), բայց այժմ զանձինս ապրեցուցանել ուղ դիցուք (Նոյէն+, Ջանան+). հապա դարձցուք ժողովեսցուք զեղբարս մեր, ապա մարտիցուք, թէպէտ և իցեմք սակաւք։ Պատասխանի ետ Նոցա Յուդա և ասէ. Քաւ լիցի ինձ առնել զիրդ զայդ, ի փախուստ դառնալ ինձ ի Նոցանէ. եթէ հասեալ իցէ ժամանակ մեր, մեռցուք քաջութեամբ և ոչ խառնեսցուք զանուն վատութեան մերոյ ընդ արութիւնս (արէօութեան) քաջութեան։ Եւ ելին զօրքն յիւրաքանչիւր բանակէ և ճակատեցան դէմ յանդիման միմեանց. երկու գունդք լինէին, գունդքն Բաքիդեան սպառազինեալ, և պարսաւորքն և աղեղնաւորք առաջի գնդին խաղային, և Նահատակքն յառաջագոյն խաղացեալ էին։ Բայց Բաքիդ յաջում թեւի անդ ճեպէր զզօրսն, ի ձայն փողոյ տագնապաւ յառաջ մատուցանէր։ Եւ

գունդն Յուդայեան փող հարեալ, ի վերայ յարձակեալ գային, մինչեւ երկիրն շարժէր յամբոխ (խոռնոյոյն) աղաղակէ անտի երկոցունց կողմանց. և եղեւ պատերազմն խառնեալ անդադար յառաւօտէ մինչեւ յերեկոյ. Իբրեւ եtես Յուդա եթէ Բաքիդ ընտիր ընտիր զօրօք յաջում թեւի անդ էր, զընտիր ընտիր սպառազինաց յիւրմէ գնդէ անտի յառաջ կոչէր, քաջալերէր և անդէն ի վերայ յարձակէր: Ի նմին ժամանակի զաջակողմն թեւին բեկանէր և զձախուն արկանէր. և անդստին առաջի արկեալ փախստեայս տանէր մինչեւ ի կողմանս վերինս Ազովտայ: Եւ որ ի ձախակողմն թեւի անդ էին՝ իբրեւ տեսին թէ աջակողմն թեւին բեկաւ առաջի Յուդայեանց, գային խառնէին և զՅուդա գնդաւն հանդերձ ի մէջ արկանէին: Յայնմ վայրի վիրաւորք յերկուց կողմանց անկեալ ընդ երկիր թաւալէին: Անդ անկանէր Յուդա առաջին Նահատակօրն (ախոյեան, յաղթակող). և որ մնացեալքն էին՝ ի փախուստ դառնային: Դարձան Յովնաթան և Շմաւոն, եղբարքն երկոքին, բարձին զՅուդա, տարան թաղեցին ի շիրիմս հարց իւրեանց: Լացին, կոծեցան զնա որդիքն Իսրայելի կոծ մեծ. սուգ առին աւուրս բազումս և սկսան խօսել և ասեն. Զիա՛րդ անկաւ, կործանեցաւ հզօր փրկիչն Իսրայելի:

Այլ ուրեք ուրեք մարտ կամ ճակատ կամ մղել պատերազմի կամ քաջութիւնս ինչ զոր արարեալ է Յուդայի՝ գրեցաւ իսկ ոչ յայսմ մատենի. զի բազում էր կարի յոյժ: Ա. Մակաբ:

—⁂—

Ի ԳՐՈՑ ԱԳԱԹԱՆԳԵՂԵԱՅ

ԽՈՍՐՈՎ ԱԻՆՐԷ ԶԵՐԿԻՐՆ ՊԱՐՍԻՑ

Ի մեւս եւս ի գլուխ տարւոյն (հեփեալ փատիշահն ակէշքը) *սկսանէր Թագաւորն* գունդ կազմել (ջէբէ ծողլէլ), *գումարել զզօրս Աղուանից և Վրաց, հանել զզօրս Հոնաց*, ասպատակ դնել (յօրջուկէլ) *ի կողմանս Ասորեստանի, մինչև ի դրունս Տիսբոնի։ Աւար առեալ զերկիրն ամենայն յապականութիւն դարձուցանէր*, զշէն (բօղմամըրր, ծողլեալ) *երկիրն ամենայն* բափուր (անմարդի) *և աւերակ թողոյր, ջնջել, ի միջոյ ի բաց կորուսանել, խլել, քակել*, հիմն ի վեր *ջանայր* առնել (կործանել)․ սպառսպուռ ջանայր զվրէժ խնդրել՝ մեծաւ քինու նախանձաբեկ լինելով (սօսրէկ ու ոանենալ), մեծամեծափքայր (մեծաքանել) *ի բազմութիւն զօրացն ապաստանեալ*։ Վ*աղվաղակի* ի թիկունս հասանէին (օգնական գալ) *մեծաւ բազմութեամբ* ծիր (որէ) *և քաջ առն և ձիոյ* բուռն կազմութեամբ (հօգը պատրաստութեամբ) Լ*փինիք և Ճիղպք և Կասպք*։ *Էր և* դեսպան արարեալ (պատկամաւոր ղըկած էր) *զի իւրեանց* տոհմայինքն (ազգականները) *ի թիկունս եկեսցեն*․ *սակայն տոհմքն և ազգապետքն և Նախարարք Պարթևաց* ոչ լինէին ունկընդիր (մտիկ ըրին), *զի* միամտեալ (համամիտ) *և հաւանեալ էին ի տէրութիւնն Արտաշրի քան ընդ տէրութիւն իւրեանց* ազգատոհմին (ցեղին)։

Իբրև ետես Թագաւորն Պարսից զայն ամբոխ կազմութեան զնդի (ազէկ պատրաստուած, ընտրած զօրքէ բաղմանընէը), *զի մեծաւ ուժով դիմեալ հասեալ էին ի վերայ նորա, եւ և նա ընդառաջ նոցա* ի պատրաստութիւն պատերազմի (պատերազմ պատրաստութեամբ)․ *բայց սակայն ոչ կարաց* ունել զդէմ (դէմ դնել) *նոցա*․ *փախըստեայ լինէր առաջի նոցա, և նոցա* զհետ մտեալ

(նորէն իջնալ, հալածել) կոտորէին զամենայն զօրսն Պարսից, և գաշտացն և ճանապարհաց ցիր դիաթաւալ կացուցանէին (անոնց դիակները ցիր ու ցան կը թողուին)։ Եւ Թագաւորն դառնայր ի մեծ կոտորածէն մեծաւ յաղթութեամբ և բազում աւարաւ և ցնծալից ուրախութեամբ ի կողմանս Հայոց։ Սպիտակ ցլուք և սպիտակ նոխազօք, սպիտակ ձիովք և սպիտակ ջորւովք, ոսկեղէն և արծաթեղէն զարդուք ի վերջաւորս փողփողեալս (շողշողուն ծոպեր, փայլփլուն, ոսկի ունեցող զարդերով), ոսկւով և արծաթով, զիւրոյ ազգին պաշտամանց (կրօնքին) տեղիսն մեծարէր. Նաև հինգերորդ (հինգ տարեկան ձի կու տար) եւս հանէր յամենայն մեծամեծ աւարացն ածելոց, և մեծամեծ պարգևս քրմացն շնորհէր։ Իսկ զօրացն որ վիրաւորեալ էին՝ ետ պարգևս և արձակեաց յիւրմէ։

Իսկ ի գալուստ ամին միւսոյ զօր բազում կուտէր յոյժ, ասպատակ սփռէր զկողմամբքն Ասորեստանի, և աւար առեալ զամենայն երկիրն քաջութեամբ դառնայր ի տեղի իւր։ Եւ ամս տասն ստէպ ստէպ զայս օրինակ աւար առեալ աւերէին զամենայն երկիր սահմանացն որ ընդ Պարսից իշխանութեամբ էր։

ՍՊԱՆՈՒՄՆ ԽՈՍՐՈՎՈՒ ՑԱՆԱԿԱՑ

Իբրև ետես Թագաւորն Պարսից զայս ամենայն չարիս որ եկին հասին ի վերայ նորա, վարանէր յանձն իւր. առ ինքն կոչէր զամենայն կուսակալս և զնախարարս, զզօրավարս և զպետս իւրոյ տէրութեանն։ Ի խորհուրդ մտանէին, և աղաչէր Թագաւորն զամենեսեան հնարս ինչ մարթել գտանել (միջոց մը գտնել). ազգի ազգի պարգևս խոստանայր, Թերևս ոք գտցի, ասէր, որ զվրէժուց հատուցումն խնդրել մարթասցէ։ Արդ ոմն ի միջոյ խորհրդեանն, գլխաւոր նահապետ Պարթե-

ւաց տէրութեանն, որում անուն էր Անակ, յոտն կացեալ յիւրմէ ազգէն իբրեւ ի Թշնամւոյ խոստանայր վրէժ խնդրել։ Խօսել սկսաւ ընդ նմա Թագաւորն և ասէ. Եթէ զայդ նախանձ *(վէքէժ) խնդրեսցես միամտութեամբ,* զբնակութիւն պարթեւական, զձեր սեպհական Պահլաւն *(Պօրնեաօց քեօն եւրիէրը բաշլ ֆաաաաը) ի ձեզ դարձուցից, և զքեզ երեւելի և փառաւոր ի Թագաւորութեանս իմում արարից, և երկրորդ ինձ կոչեցից։ Պատասխանի ետ Պարթեւն և ասէ. Զմնացորդս ազգի իմոյ կեցուսցես դու. այլ ես և եղբայր իմ հարազատ այսօր հրաժարեսցուք ի քէն։*

Յայնժամ հանդերձեցաւ *(դօփրաօփուէլ) կազմեցաւ Պարթեւն եղբարբն իւրով, հանդերձ ընտանեօք, կանամբք և որդւովք և ամենայն* աղխիւ *(կաճ կօրաօէ),* չու արարեալ *(կէօչ ըՆէլ)* յուղի անկեալ *(ճամբայ էյնալ) երթայր* հատուածի պատճառաւ *(բաժնուած ջէանմալըվ) ի կողմանս Հայոց, իբրեւ թէ ապստամբեալ իցէ յարքայէն Պարսից։ Եկեալ* յանդիման եղեւ *(Ներկայացաւ) Թագաւորին, յՄւտի գաւառի, ի Խաղխաղ քաղաքի, ի ձմերոցս արքայութեանն Հայոց։*

Իբրեւ ետես Թագաւորն զայրն զի դիմեալ եկեալ էր առ նա ամենայն ընտանեօքն հանդերձ, միամտութեամբ *(աՆկեղծօւթեամբ) հաւատաց ի նա։ Տայր նմա պատիւ ըստ օրինի Թագաւորաց, և հանէր նստուցանէր զնա յերկրորդ աթոռ Թագաւորութեանն. և զամենայն ժամանակս ձմերայնոյն, զաւուրս ցրտաշունչ սառնամանեացն ուրախութեամբ անցուցանէին։*

Իբրեւ եկին հասին աւուրք ջերոտք *(փաք, մէվ),* համբարձաւ *(ելաւ) Թագաւորն ի կողմանցն յայնցանէ։ Եկին իջին ի Վաղարշապատ քաղաք։* Գումարտակ առնէր *(ղօրք կը ժողվէր) Թագաւորն անդրէն արշաւել ի կողմանս Պարսից։ Իբրեւ զայն լսէր Պարթեւն (Անակ), զերդումն ուխտին յիշէր զոր ընդ Պարսից արքային*

ուխտեալ էր · *Նաեւ զխոստմունսն յիշէր զպարգեւացն եւ ի բուն աշխարհն փափաքէր որ Պահլաւն կոչէր* ։ *Վասն խորհուրդ* ի միտ արկանէր (Միտքը կը դնէր), *առնոյր զԹագաւորն* մեկուսի (մէկդի), *Նաեւ եղբայրն իւր հարազատ*, *իբրեւ ի պատճառս ինչ զբօսանաց*, *իբրու խորհուրդ ինչ խորհելոյ ընդ նմա* ։ *Զասւսերան պղղովատիկս* թերեւս (կէօզ չաք խօռնած պատեանը) *ունէին* · յեղակարծումն ժամանակի (յանկարծ) *զէնս վերացուցեալ*, *զԹագաւորն* դիաթաւալ կացուցեալ յերկիր կործանեին (Մօխրով ծածկը կը պահեցնէին)։ Անդուստ ուրեմն (ան–դէն) իրազգած եղեն (իմացան) *իւրացն որ եղեն* · գայժ աղաղակի ամբոխին թանձրանայր (ողողակը կ'աւերէր)։ Մինչ այս մինչ այն (այն միջոցին) *նոքա հեծեալ յերիվարս փախստական լինէին* ։

Իբրեւ զայն գիտացին Նախարարք զօրացն զունդ հատանեին (փոնդ կը հանէին), զկնի յինեին (ետեւէն իյնալ) *ոմանք ընդ ցամաքն անապարեալ հասին* ի խելս կամրջացն (կամուրջին գլուխը) *առ դրունս քաղաքին*, *զի գետն Երասխ* յարուցեալ (յորդելով) *գայր* դարիւ եւ դարիւ (Մեծ յորդութեամբ)։ *Կէսք անցեալ ընդ կամուրջն քաղաքին* · *զոր եւ կամուրջ Մեծամօրի կոչեն*, *աճապարէին անդր հասանել*։ Ի կիրճս ճանապարհացն (ճամբուն նեղ տեղը) *արգելին զնոսա*, ի մէջ արարեալ զնոսա (երկու կողմէն պաշարելով), *ի Տաճկական կամրջացն* զետավեժ առնեին (գերի կ'ընէին) *զնոսա*, *եւ ինքեանք անդրէն դարձեալ՝ վայիւք*, ճչովք (աղաղակի ձայն) *եւ ողբովք զԹագաւորն* աշխարեին (կ'ողբային)։ *Մինչդեռ* ջերմ ոգին ի ծոցոյն չեւ էին թափեալ, եւ շունչ վախճանին չեւ եր հասեալ, (երբ դեռ հոգին վրան էր,) *հրաման տայր Թագաւորն* զազգատոհմն (ընտանիքը) *Անակայ սատակել* ։ *Ցայնժամ սկսան կոտորել* · *Նաեւ զիգական* տոհմն (ցեղը) մաշեին ի սուր սուսերի (սուրէ անցունել)։ *Բայց միայն երկուս մանկունս փոքրկունս յորդւոց Պարթեւին* պրծ–

Եղել (կորչել, ոչնչել) ոմն ապրեցուցանէր ի ձեռն դայեկաց։ Ագաթ։

ԵՒ ԳՐԻԳՈՐ ԱՊՐԻՆ Ի ԿՈՑՈՐԱԾԷ

Իբրեւ լուաւ զայս թագաւորն Պարսից, զուարճանայր, զուարթանայր. զօրածողով լինէր, խաղայր գնայր զկողմամբք — — — — — —, զծեր և զտղայ առհասարակ խաղացուցանէր ի գերութիւն։ Անդ ոմն պրծեալ ապրեցուցանէր յորդւոցն մանկիկ մի փոքրիկ — — անուն, զոր առեալ դայեկացն փախուցանէին ի դրունս կայսեր։ Անդ սնեալ ուսանէր Տրդատէս՝ առ կոմսի ումեմն որ Լիկիանէսն կոչէր։ Իսկ որդին Անակայ Գրիգորիոս, իբրև տեղեկացաւ ի դայեկէն իւրմէ հայրենի գործոցն, եկ և գնաց առ Տրդատիոս. թագուցանէր զանձն, ի վեր ոչ հանէր (չէր յօժարեր) թէ ոյր որդի իցէ, զանձն ի ծառայութիւն տուեալ պաշտէր (կը ծառայէր) առաջի նորա։ Ագաթ։

ՔԱՋՈՒԹԻՒՆՔ ԵՒ ԹԱԳԱՒՈՐԵԼ ՆՈՐԱ

Յաւուրս ժամանակացն այնոցիկ զօրաժողով լինէր իշխանն Գթաց, գայր տալ պատերազմ ընդ իշխանին Յունաց. պատգամս յղէր օրինակաւս այսուիկ. Ընդէ՞ր բնաւ ելանեմք խառնամբոխ (քաղմաբնեամբ) ի պատերազմ սպառել զզօրս մեր, և վտանգ և տագնապ միանգամայն աշխարհի հասուցանեմք։ Ես աւասիկ առնելեան ելանեմ քեզ ի մերոց զօրաց ատի, և դու ինձ ի յունականաց այտի. եթէ ես զքեզ յաղթահարեցից, Յոյնք ինձ հնազանդեսցին. եթէ դու ինձ յաղթեսցես, մերքս նուաճին և հնազանդին քեզ։ Իբրև զայն լուաւ թագաւորն Յունաց սրտաքաւ եղեալ զարհուրեցաւ (շփոթեցաւ, լքաւ), ոչ գիտէր թէ զինչ տացէ բանիցն պա-

տասխանի ։ Հրաման՝ տայր հրովարտակս և դեսպանս առնել առ իշխանս իւր , զի ուր և իցեն՝ առ նա հասանիցեն վաղվաղակի ։ Ցայնմ ժամանակի իշխանք և զօրք առ նա հասանէին ։ Առեալ և Լիկիանու զգունդն որ ընդ իւրով ձեռամբ էր՝ փութայր հասանել ի տեղի պատերազմին ։

Մինչդեռ գային գունդք զօրաց նորա և Տրդատէս ընդ նմա , դէպ եղեւ նոցա գալ մտանել ի նեղագոյն տեղի մի , յառուամէջս այգեստանւոյն (այգիներուն մէջտեղը նեղ ճամբան) , ի փողոցամէջս համբարոցացն (համբարանոցներուն մէջտեղի ճամբաները) , առ դրունս քաղաքին , քանզի զդրունս քաղաքին աղխեալ (կղպած) էր (քաղաքացւոց) , զի ժամ էր հասարակ (կէս) գիշերոյ ։ Իբրև ոչ գտաւ խսար (ճար ելք) երիվարաց զօրուն բազմութեան , հայեցեալ տեսանէին ի քաղաքորմի միոջ (պատէն մէկ կողմէն երբ) զի խոտահամբար մթերեալ էր (շատ խոտ դիզուած էր) , և ոչ ոք կարաց ձգել զձեռն իւր վասն տեղւոյն բարձրութեան ։ Ցայնժամ Տրդատէս ելեալ և իջեալ (յայնկոյս որմոյն) , հոսեր (կը նետէր) ընկենոյր բարդս բարդս (շատ դէզեր) ի մէջ զօրացն մինչ ի լրութիւն բաւականի ․ նաեւ զհամբարապանսն եւ բազում իշեան (համբարանոցին պահապանները ու էշեր) յայնկոյս որմոյն ընկենոյր ի մէջ զօրացն , և ինքն անդրէն ելեալ իջանէր ։ Զայս ամենայն ոյժ պնդութեան տեսեալ Լիկիանէս զարմանայր ։ Իբրեւ այգն զառաւօտն մերկացաւ (երբ առտու եղաւ) , դրունք քաղաքին բացան և զօրքն առհասարակ ի ներքս մտանէին ։ Իբրև Լիկիանէս յանդիման լինէր թագաւորին , կաց պատմեաց թագաւորն իշխանացն զամենայն պատգամս թագաւորին Գոթաց ։ Խօսել սկսաւ Լիկիանէս ընդ արքային և ասէ ․ Մի ինչ զարհուրեսցի սիրտ տեառն իմոյ , զի դոյ աստ այր մի ի դրան քում , Տրդատէս անուն , ի տոհմէ — — — իրքդ այդ նուաւ վճարին (կը կատարուին) ։

Ի միւսում աւուրն, ընդ այգն, ընդ առաւօտն, հրամայեաց Թագաւորն զարդարել — — ի զարդ կայսերական, արկանել զնովաւ ծիրանիս և զնշան Թագաւորութեանն, և ոչ ոք գիտէր վասն նորա. հրաման ել ամենեցուն թէ ինքն կայսրն իցէ: Եւ նա առեալ զգունդ զօրացն բազմութեան ի ձայն փողոյ տագնապաւ ([illegible]) յառաջ մատուցանէր մինչև յանդիման Թշնամեացն: Իբրև յանդիման եղեն միմեանց կայսերակերպն և Թագաւորն (Գթաց), մտրակ ի կուշտ արարեալ երիվարացն ([illegible]) ի միմեանս հասանէին: Անդ յաղթահարէր կայսերակերպն զԹագաւորն. ծերբակալ տարեալ զնա ([illegible]) առաջի կայսերն կացուցանէր:

Յայնժամ մեծացոյց յոյժ Թագաւորն (Յունաց) զՏրդատիոս, մեծամեծ պարգևս ետ նմա, Թագ կապեալ ի գլուխ նորա և ծիրանեօք զարդարեալ, գումարեաց ի ձեռս նորա զօրս բազումս յօգնականութիւն, և արձակեաց յիւրական ([illegible]) աշխարհն — —:

ԳՐԻԳՈՐ ՉԱՌՆՈՒ ՅԱՆՁՆ ՏԱՆԵԼ ՆՈՒԷՐՍ ԱՆԱՀՏԱՅ

Յառաջին ամին — — — արքայութեանն — —, եկն եհաս նա ի գեւղն Երիզա, ի մեհեանն անահտական զի անդ զոհս մատուսցէ: Իբրև եմուտ ի խորան անդր և յընթրիս բազմեցաւ, և իբրև ընդ գինիս մտին ([illegible]), հրաման ետ — — — — Գրիգորի զի պսակս և թաւ ոստս ծառոց նուէրս տարցի բագնին անահտական պատկերին ([illegible]). այլ նա ոչ առնոյր յանձն պաշտօնատար լինել ([illegible]) դիցն երկրպագութեան: Մինչդեռ խորհէր — — խօսել ընդ նմա ողորով ([illegible]), մատուցեալ ոմն ի նախարարացն ասէ ցԹագաւորն. Այսքան ժամանակք են առ մեզ բնակեալ է (սա) և ոչ գիտէաք թէ իցէ որդի Ա-

Նակայ մահապարտի որ սպան զհայր քո Խոսրով և ա-րար խաւար — — — — —. արդ չէ պարտ կեալ դմա. զի որդի վրիժապարտի (վրիժապարտ, պատժոյ ար-ժանի) է դա: Իբրեւ հասանէր Թագաւորն ի վերայ (տե-ղեկացաւ, իմացաւ) եթէ արդարեւ որդի էր Անակայ որ սպան զԽոսրով հայր նորա, հրաման տայր կապեալ ոտիւք և կապեալ ձեռօք խաղացուցանել (տանել) զնա, և տալ զնա ի դղեակ բերդին Արտաշատ քաղաքին, և իջուցանել ի վիրապն որ անհնարին էր խորութեամբ, մինչեւ անդէն մեռցի:

Իսկ Թագաւորն — — զամենայն ժամանակս իւրոյ թագաւորութեանն աւերէր գանդէր զերկիրն Պարսից թագաւորութեանն. զաշխարհն Ասորեստանի աւերէր և հարկանէր ի հարուածս անճնարինս (ԼԺ, ոսոխէն): Վասն այսորիկ պատշաճեցան բանքս այս ի բանս կարգի առակաց, թէ «Իբրև զսէգն — — որ սիգալովն ա-ւերեաց զթուփս գետոց, և ցամաքեցոյց իսկ ի սիգալ իւրում զյորձանս ծովուց»: Վասն զի սէգ իսկ էր առ հանդերձ, այլ և ուժովութեան՝ բուռն ոսկերօք և յաղթ մարմնով, քաջ և պատերազմող անհնարին, բարձր և լայն հասակաւ, որ զժամանակս կենաց իւրոց պա-տերազմեալ առնէր մարտից յաղթութիւնս: Մեծ անուն պարծանաց քաջութեան անձին ստանայր, և զհոյակապ չքեղութիւն յաղթութեան ընդ ամենայն աշխարհ կա-ցուցանէր: Հարկանէր ի հարուածս զթշնամիսն, և խնդ-րէր զքէնս վրիժուց իւրոց հայրենեացն. առնոյր աւար բազում ի կողմանցն Ասորւոց, և թափէր (առնուլ) կողո-պուտ սաստիկ անհնարին ի նոցանէ: Արկանէր ի սուր զզօրս Պարսից, և թափէր զկողոպուտ անհնարին. լի-նէր առաջնորդ առն և ձիոյ զօրացն Յունաց, և մատ-նէր նոցա զբանակս Պարսից. հանէր զզօրս Հոնաց սաս-տիկ յոյժ, և գերէր զկողմանս Պարսից: Ագաթ.

ՀՌԻՓՍԻՄԷ ԵՒ ԸՆԿԵՐՔ ՆՈՐԱ

Ընդ ժամանակս ընդ այնոսիկ խնդրեաց իւր կին կայսրն Դիոկղետիանոս ։ Ընդ ամենայն կողմանս տէրութեան նորա արձակեալ շրջէին պատկերագործք նմանահանք (պատկեր մը ճիշդ նկարող) որ զգեղ երեսաց և զմրազարդ (ոսկե) յօնից ի տախտակս (պատկեր, նկար) հանեն դեղովք պաճուճանաց (տեսակ տեսակ գոյներով)։ Եկեալ գտանէին ի քաղաքին Հռոմայեցւոց յարգելավանս (վանք) մի կուսանաց սրբամատոյց (օրիորդներէն նուիրուած) կանայս, որոց գլխաւորին անուն Գայիանէ, և սան նորին կոչէր Հռիփսիմէ յաստուածապաշտ և ի թագակայ (թագաւորական) տոհմէ ։ Բռնութեամբ մտին պատկերահանքն ի կայանս (բնակարան) առաքինեացն, և տեսեալ զպարկեշտագեղն Հռիփսիմէ, սխրացեալ (զարմանալ) ընդ տեսիլ նորա, ի նկարապաճոյն տախտակն յօրինէին (պատկերը քաշեցին), և առ թագաւորն հասուցանէին ։ Իբրև ետես թագաւորն զգեղապանծ վայելչութիւնն Հռիփսիմեայ, տագնապաւ ճեպէր (փութացնել) ուրախութիւնս հարսանեաց կատարել ։ Տագնապափոյթ ստիպա· (մեծ փութով) դեսպանս արձակէր, պատուիրակս հանէր ընդ աշխարհ զի ամենեքեան օժտաբեր ընծայատար լիցին (ընծա, [illegible] մեծի հարսանեացն ։

Իբրև տեսին առաքինիքն Գայիանէ և Հռիփսիմէ զգաղտածիգ նենգս թշնամւոյն, պարկեշտածողով ընկերօքն հանդերձ դիմ եղեալ տարագեմ փախստեայ լինէին ([illegible]), զի զանձինս իւրեանց պահեսցեն ի հողաքաւալ, տղմաքաքաւ, յանօրէն դիւակամ (դիւաց կամքը կատարող) մարդկանէ ։ Գային հասանէին — — — — — զոր և Նոր քաղաքն կոչեն ; — — — — — — — — — ։ Մտանէին ի հնձանայարկս (հնձաններուն [illegible]) այգեստանւոյն որ կան շին–

եալ յարեւելից կուսէ (կօշկն), և կերակրէին ընչիւք իւրեանց ի վաճառաց քաղաքին ։ Ոչ գոյր թոշակ (պօշուր) ընդ նոսա, բայց մի ոմն ի նոցանէ ունէր արուեստ ապակագործութեան, առնէր ուլունս ապակեղէնս (ապակիէ պօնճուգ) և տայր գինս ընդ կերակրոյ աւուրն պարենի (օրալըգ եէմէք բէնէլու գարշը) ։ Յայնմ ժամանակի ոչ սակաւ ինչ խռովութիւն լինէր ի մէջ Յունաց աշխարհին, ի կողմանս կողմանս յուզախնդիրք (ֆէսատճիլէր) ելանէին, թերեւս ուրեք գտանել կարասցեն ։ Արդ գտեալ լինէին նոքա ի շինուածս հնձանացն քաղաքին · քանզի իբրեւ եկն եհաս հրաման հրովարտակին ի մեծ թագաւորէն Յունաց առ — —, ոչ սակաւ խռովութիւն եղեւ եւ ի մէջ աշխարհին — —, զի պահէին զամենայն անցս ճանապարհաց ամենայն գաւառաց, և ուսումն տեսեալ պատմեաց զնոցանէ ։ Իբրեւ իրքն հուչակեցան (խմաչանէտա) · զաւուրս երկուս սպարափակս արարեալ (պահապան զօրտօմ քուլլուքէն աանելով) տայր պահել զնոսա թագաւորն անդէն ուր գտինն ։ Իսկ ի տեսիլ գեղոյն Հռիփսիմեայ նախարարք և մեծամեծք աւագանւոյն ընթացեալք, ի տեսանել զմիմեամբք ելանէին (կէլ միշէյին), նաեւ ազատակոյտն (ազնուականք) խառնաղանճ ամբոխիւք (համարակ ժողովուրդ) հանդերձ զմիմեամբք դիզանէր ։ Իսկ երանելիքն իբրեւ գիտացին զանմիտ և զշղուաբարոյ (ցօփ, ցանկասէր) մարդկանն յոռութիւն, կականաբարձ (ողբալով) արտասուալից զձեռս յերկինս համբառնային խնդրել զփրկութիւն յամենազօր ամենակալ տեառնէն ։ Ի միւսում աւուրն ընդ այգն ընդ առաւօտն հրաման ելանէր ի թագաւորէ անտի զերանելին Հռիփսիմէ տանել յարքունիս ։ Անդէն յարքունուստ վաղվաղակի ոսկիապատ գահաւորակս (թէտիկէրէ) սպասաւորօք հանդերձ հասուցանէին առ դուրս հնձանին ուր էին վանքն (կիլիսան, բնակարան) նոցա ։ Նաեւ հանդերձս ազնիւս, գեղեցիկս, փափուկս, պայծառս, և զար-

դարանս երեւելիս մատուցանէին նմա յարքունուստ, զի զարդարեսցի և շքով և պատուով մտցէ ի քաղաքն յանդիման լինել Թագաւորին։ Իսկ նորա սրտասուագոչ ձեռս յերկինս համբարձեալ խնդրէր ի կամարար տեառնէն ապրեցուցանել զնա։ Յայնժամ լինէր որոտումն յերկնից սաստիկ անհնարին մինչեւ ահաբեկել (վախցնել) զամենայն ամբոխն. և այնպէս յերկար որոտայր, զի թմբրեալ լինէին մարդիկն յահէ անտի, և ընդոստուցեալ (ցատկել) անզուշեալ (անուշաթնել) բազում երիվարք հեծելոց յահէ անտի, զբազումս ընկեցեալ և զբազումս առապուր հարեալ (կոխկռտել) սատակէին, և անհնարին չարիք և արհաւիրք ի վերայ մարդկան հասանէին։ Իբրեւ այս շփոթ ամբոխի եղեւ ի մէջ մարդկան, ոմանք յամբոխէ սպասաւորացն արքունի ընթացան պատմել Թագաւորին զամենայն։ Եւ ասէ Թագաւորն, փոխանակ զի ոչ կամեցաւ գալ կամօք, բռնաբար ածցեն մինչեւ յապարանս։ Առեալ զՀռիփսիմէ սպասաւորացն բռնաբար, մերթ վերամբարձ, մերթ ի քարշ, ածին և մուծին զնա յապարանս Թագաւորին։ Ագաթ։

ՀՌԻՓՍԻՄԷ ԿՌՈՒԻ ԸՆԴ ՏՐԴԱՏԱՅ ՎԱՍՆ ՀԱՄԵՍՏՈՒԹԵԱՆ ԵՒ ՑԱՂԹԷ

Մինչդեռ սուրբն Հռիփսիմէ աղօթս մատուցանէր, եկն եմուտ Թագաւորն ի ներքս ի սենեակն ուր էրն զնա արգելեալ (Թագաւորին)։ Արդ, իբրեւ եկն եմուտ նա ի ներքս, մարդիկն, ոմանք արտաքոյ ապարանիցն, կէսքն ի փողոցս ի ներքսագոյնսն, առհասարակ երգս առեալ բարբառեցան կայթիւք վազելով (ծափահարութեամբ ցատկոտելով), այլք ցուց (խաղ, թէարտի) բարձեալ ի բերդամիջին, և կէսքն զքաղաքամէջն լցին խնճոյիւք առհասարակ։ Համարէին հարսանեացն զպարսն պարել և զկաքաւսն յօրդորել . . . ։ Արդ, մատուցեալ Թագա-

ւորն բուռն հարկանէր զնմանէ կատարել զկամս ցանկութեանն, իսկ նա զօրացեալ լինէր ի Հոգւոյն սրբոյ․ գազանաբար ոգորեալ (ճնամարտիկ), առնաքար մարտնչէր։ Իբրեւ յերեք ժամուց սկսեալ մարտնչէր մինչեւ ի տասն ժամն (ժամը երեքէն մինչեւ ժամը տասը), պարտեալ լինէր Թագաւորն։ Այն որ անհնարին համարեալ (էր) ուժով, և մինչ ի Յունաց աշխարհին էր, բազում ոյժս պնդութեան ոսկերաց ցուցեալ էր և զարմացուցեալ զամենեսեան, և ի Թագաւորութեանն իսկ, իբրեւ ի հայրենի բնակութիւնն դարձեալ էր, բազում գործս արութեան քաջութեան (էր) և անդ ցուցեալ, որ այնպէս (ասեմ) հռչակեալ էր ամենայնիւ, արդ (հիմա) յաղջկանէ միոջէ պարտեալ վատթարանայր։ Նա իբրեւ պարտեցաւ, վաստակեցաւ, լքաւ, եւ նա արտաքս, և ետ ածել զերանելին Գայիանէ և արկանել խառան (շալն) ի պարանոց նորա, և ածել ունել զնա ի դուրս սենեկին, և ինքն անդրէն մտանէր․ և եդ բանս ի բերան սպասաւորացն (պաշտօնատուներուն ատեն-ցուց, բանտ) զի ստիպեսցեն զանհրապոյրն Գայիանէ ասել ի դրաց անտի ի ներքս ի սենեակն առ Հռիփսիմէ՝ թէ Արա զկամս դորա և կեաց դու և մեք։ Իբրեւ իմացան թէ զոր խրատ յանձախեաց մատուցանել Գայիանէ, բերեալ քարինս՝ հարկանէին զբերանն մինչեւ թափել ատամանցն . . . ։ Այլ նա դարձեալ զնոյն բանս խօսեցաւ ի բարբառ (լեզու) Հռոմայեցւոց ընդ իւրում սանուն (աշակերտ, յետնատուն) ի դրաց սենեկին, մինչդեռ Թագաւորն ոգորէր ընդ սրբոյն Հռիփսիմեայ։ Բայց գոյին անդ ոմանք ի սպասաւորացն արքունի որ լսէին (կը հասկնային) զայն ամենայն ի բարբառ Հռոմայեցւոց, և ի բաց առին զնա ի դրաց անտի։ Զի թէպէտև բազում հարին զնա, և ծեծեցին քարամբք զերեսս նորա, և թափեցին զատամունս նորա, և ջարդեցին զմսուր բերանոյն լնդաց (ակռաներուն միսը), ոչ շրջեաց

զբանս իւր խօսել ընդ աղջկանն այլ ինչ, այլ զոր սկիզբն արարեալ էր՝ զնոյն յաճախեալ բազմացուցանէր։

Իսկ նա (Հռիփսիմէ) մարտեաւ եւ ընդ նմա ի տասն ժամէ աւուրն մինչև ի պահ մի գիշերոյն, և պարտեաց զթագաւորն։ Զօրացեալ ի Հոգւոյն, հարեալ վանեալ պարտեալ վաստակաբեկ առնելով զթագաւորն մեղկ-եալ ընկենոյր։ Մերկ կողոպուտ եւս ի հանդերձից զթագաւորն կացուցանէր, և զպատմուճանն պատառ-եալ, և զնշան թագաւորին ցրուեալ կողոպտեալ՝ ամօ-թալից թողոյր զնա։ Թէպէտ և զիւր զգեստիկն քճքճեալ (Քէչէօճ) պատառատուն ի դուրս բերէր, յաղթող պա-հէր զանձն իւր սրբութեամբ։ Եւ բացեալ զդուրս տանն բռնաբար՝ ի դուրս ելանէր, հերձեալ զամբոխ մարդկանն, և ոչ ուրուք կարացեալ յաղթահարել զնա։ Եւ ընթացեալ ընդ քաղաքամէջն, ելանէր ընդ արեւելակոյս, ընդ արեգ (ուչէ-ելէան) դուռն քաղաքին։ Երթալ առ հնձանօքն ուր էին իսկ յառաջ վանք իւր-եանց, ձայն աւետեաց մատուցանէր ընկերացն, և ինքն անցանէր հարուստ մի ի քաղաքէն ի կողմն մի հիւսիսոյ՝ ի տեղի յարեւելս կոյս, ի սարաւանդակ (Քօրճը, օթէլէ), ի բարձրաւանդակ յաւազին տեղի մի, մօտ ի բուն պո-ղոտայն (Դէծ ճամբայ) որ երթայր ի քաղաք։ Ագաթ։

ՆԱՀԱՏԱԿՈՒԹԻՒՆ ՀՌԻՓՍԻՄԵԱՑ

Անդէն ի նմին գիշերի եկին հասին վաղվաղակի ի տեղի անդր իշխանք թագաւորին, և դահճապետն դահճօքն հանդերձ ընդ նոսա և ջահք լուցեալք առաջի նոցա։ Եւ մատեան վաղվաղակի կալեցին զնա (զՀռիփ-սիմէ) ձեռս յետոյ, և խնդրէին զի հատցեն զլեզուն։ Իսկ նա իւրովք կամօքն բացեալ զբերանն՝ հանեալ մա-տուցանէր զլեզուն։ Եւ անդէն զհանդերձիկն պատա-ռատուն որ զնովաւն էր՝ ի բաց զերծուին ի նմանէ․ և

Հարեալ չորս ցիցս ի գետինն, երկուս՝ ոտիցն, և երկուս՝ ձեռացն, պրկեցին զնա. և մատուցին զկանթեղունսն ցմեծ ժամս (ժամերով), այրէին և խորովէին զմարմինս նորա հրով կանթեղացն։ Եւ քարինս վարեցին ընդ գոգ նորա, և ի վայր վայթեցին զաղիս նորա. և մինչդեռ եւս կայր կենդանի՝ փորեցին զաչս երանելւոյն։ Ապա անդամ անդամ յօշէին զնա և ասէին, եթէ Ամենեքեան որ իշխեսցեն անգոսնել (քանի՛ յարգել չընել) և անարգել զհրամանս թագաւորաց՝ ըստ նմին օրինակի կորիցեն։ Ագաթ։

ՊԱՏՈՒՀԱՍ ՏՐԴԱՏԱՅ. ԵԼՔ Ս. ԳՐԻԳՈՐԻ Ի ՎԻՐԱՊԷՆ ԵՒ ԲԺՇԿՈՒԹԻՒՆ ԱՅՍԱՀԱՐԱՑ

Արդ աւուրս վեց ի տխրութեան և յանհնարին տրտմութեան կացեալ թագաւորն առ անձուկ սիրոյ գեղոյն Հռիփսիմեայ, ապա յետ այսորիկ ժամ տայր (ժամանակ որոշել, հրաման տալ) ամենայն զօրացն ածել կուտել զպառուականն (որսի շուն, կամ որսի Բազէ), խռուճապական (անասուններն իրենց ծակերէն դուրս հանող) սփռեալ (փոխանակ՝ սփռել), երագաղ (տեսակ մը որսոյ գործիք) տուեալ (փոխանակ՝ տալ), թակարդ ձգեալ (փոխանակ՝ ձգել), կամեցեալ որս առնել երթեալ ի դաշտն Փառական։ Այն ինչ ի կառս ելեալ կամէր թագաւորն ըստ քաղաքն ելանել, անդէն վաղվաղակի պատուհաս ի տեառնէ ի վերայ հասանէր, և հարեալ զթագաւորն այսոյն պղծութեան՝ ի կառացն ի վայր կործանէր. և անդէն մոլեգնել (խենթենալ, կատղիլ) սկսաւ (թագաւորն), և իւրովի ուտել զիւր մարմինն. Նաեւ ըստ նմանութեան Նաբուգոդոնոսորայ արքային Բաբելացւոց, ելեալ ըստ մարդկային բնութիւն արտաքս ի նմանութիւն վայրենի խոզաց, իբրեւ զնոսա՝ ընդ նոսա ի մէջ նոցա երթեալ բնակէր։ Եւ այնուհետեւ մտեալ յեղէգն (եղէգ-

Ներսս անփառ) խոտաճարակ լեալ անհնարին անզգայու-թեամբ, մերկ զանձն ընդ դաշտսն կոծելով: Զի թէ-պէտ կամեցան արգելուլ զնա անդէն ի քաղաքին՝ ոչ կարացին, մի՝ վասն բնական ուժոյն, և մի՝ վասն զի էր և ոյժն դիւաց որ ի նմայն հարեալ (մռած) էին: Նաեւ ամենայն մարդիկն որ ի քաղաքին էին՝ նոյն օրինակ դի-ւաբախք մոլեգնէին, և անհնարին կործանումն ի վերայ աշխարհին հասանէր: Եւ ամենայն ընտանիք թագաւո-րին, ծառայք և սպասաւորք առհասարակ հարուածովք հարեալք լինէին, և անհնարին սուգ վասն հարուա-ծոցն լինէր:

Յայնմ ժամանակի տեսիլ Աստուծոյ երեւեալ (երե-ւէր) ի վերայ քեռ թագաւորին որոյ անուն էր Խոսրո-վիդուխտ: Արդ եկեալ խօսէր ընդ մարդիկն, պատմէր տեսիլ և ասէր · Տեսիլ երեւեցաւ ինձ յայսմ գիշերի · այր մի ի նմանութիւն լուսոյ եկեալ պատմեաց ինձ, եթէ ոչ այլ ինչ գոյ բժշկութիւն հարուածոցն որ եկին հասին ի վերայ ձեր, եթէ ոչ յղեսջիք դուք ի քաղաքն յԱրտաշատ, ածել անտի զկապեալն Գրիգորիոս · Նա եկեալ ուսուսցէ ձեզ դեղ ցաւոցդ բժշկութեան: Իբրեւ լուան մարդիկն, սկսան ծիծաղել զբանիւքն զոր ասաց · սկսան խօսել ընդ նմա և ասեն · Եւ դու ուրեմն մո-լեգնեցար, դեւ ուրեմն հարաւ ի քեզ · այս հնգետա-սան ամ է զի ընկեցին զնա յանհնարին խոր վիրապն, և դու ասես եթէ կենդանի է · արդ և ոսկրոտին (ոս-կըները, կմախքը) իսկ ո՞ւր իցէ · զի նոյնօրին (առժամայն) իբրեւ իջուցին զնա անդր՝ յօձիցն իսկ տեսլենէն նոյն-ժամայն սատակեալ իցէ:

Իսկ (բայց) կրկնեաց դարձեալ եւս կնօջն նոյն տե-սիլն, եւ հինգկնեաց (Նոյն տեսիլը կրկնուեցաւ մինչեւ հինգ անգամ) սպառնալեօք, զի եթէ ոչ պատմեսցէ (Խոսրո-վիդուխտ) ստէպ ստէպ (փոխել), մեծամեծ տանջանս ընկալցի, և հարուածք մարդկան և թագաւորին եւս

քան զեւս սաստկացին մահու և պէսպէս տանջանօք ։ Եւ մտեալ անդրէն Խոսրովիդուխտ մեծաւ երկիւղիւ և զգուշութեամբ ասաց զբանսն հրեշտակին ։ Իսկ նոքա վաղվաղակի յղէին անդր նախարար զոմն աւագ որոյ անուն Օտա կոչէր ։ Եւ գնաց նա ի քաղաքն Արտաշատ հանել զնա ի խոր բանդէ վիրապին ։ Արդ իբրեւ եկն եհաս Օտայն ի քաղաքն յԱրտաշատ, ընդ առաջ ելանէին նմա քաղաքացիքն՝ հարցանել զպատճառս դալոյն ։ Եւ նա ասէ ցնոսա, թէ վասն կապելոյն Գրիգորի եկեալ եմ տանել զնա ։ Իսկ նոքա զարմացեալ առհասարակ ասէին ։ Ո՞ գիտէ թէ կայցէ, զի բազում ամք են զի (յուրմէ հետէ) ընկեցին զնա անդր ։ Իսկ նա պատմեաց զիրս տեսլեանն (տեսէլէն դեղնը) և զգործն զինչ եղեւն (եղէլունբինը) ։ Ապա եկին բերին կարս պարանաց երկայնս եւ ստուարս (երկայն և հաստ չուանէ կոշիներ, Բօֆ), և կցեցին իջուցին ի ներքս ։ Աղաղակեաց Օտայն նախարար ի ձայն մեծ և ասէ ․ Գրիգորիոս, եթէ կայցես ուրեք (եթէ դեռ կը կենաս՝) եկ ի դուրս զի տէր Աստուածն քո զոր պաշտես դու՝ նա հրամայեաց հանել զքեզ այտի ։ Եւ անդէն յոտն կացեալ վաղվաղակի շարժեաց զպարանն, և բուռն հարկանէր ։ Իսկ սոցա գիտացեալ (հասկնալով՝) հանին զնա ի վեր, և տեսին զի թխացեալ էր մարմին նորա իբրեւ զածուխ սեւացեալ ․ և անդէն հանդերձս մատուցեալ զգեցուցին նմա, և խնդութեամբ առին գնացին յԱրտաշատ քաղաքէ, տանել ի Վաղարշապատ քաղաք ։ Յայնմ ժամանակի առ վըտանգի տարակուսանաց ցաւոցն (ցաւերուն ստորին կողմնակէն՝) ելեալ (ել) Թագաւորն ․ գիւին առեալ ածէր (զնա) ընդ առաջ նորա մերկ․ խայտառակ ։ Եւ նախարարքն արտաքոյ քաղաքին սպասէին նմա ։ Արդ՝ իբրեւ տեսանէին ի բացէ զի գայր Գրիգորիոս Օտայիւն հանդերձ, և այլ բազում մարդիկ գային ընդ նոսա յԱրտաշատ քաղաքէ, ընդ առաջ խաղացեալ (Թագաւորն և այլք յայսահարաց) մոլեգնելով և ուտելով զմարմինս, դի-

ւահարէին և փրփրէին առաջի նորա ։ Իսկ նա (Գրիգոր) վաղվաղակի ծունր եդեալ յաղօթս կայր, իսկ նոքա անդէն ի զգաստութիւն դառնային ։ Եւ սա անդէն հրամայեաց զի արկցեն զանձամբք իւրեանց հանդերձ, և ծածկեսցեն զամօթն իւրեանց ։ Եւ մատուցեալ թագաւորն և նախարարքն, բուռն հարեալ ունէին զոտիցն Սրբոյն Գրիգորի և ասէին. Խնդրեմք ի քէն, թող մեզ զյանցումն մեր զոր մեք ընդ քեզ արարաք ։ Իսկ նա մատուցեալ կանգնեաց զնոսա ի գետնոյ անտի և ասէ. Ես մարդ եմ իբրև զձեզ, և մարմին ունիմ իբրև զձերդ. բայց դուք ծաներուք զձեր արարիչն որոյ զերկինս և զերկիր արարեալ է, զարեգակն և զլուսին և զաստեղս, զծով և զցամաք. և նա կարող է զձեզ բժշկել ։ Իսկ անդէն սկսաւ հարցանել Գրիգորիոս թէ ո՛ւր եդեալ են մարմինք վկայիցն Աստուծոյ ։ Եւ նոքա ասեն. Որո՞ց վկայից ասես ։ Եւ նա ասէ. Որ վասն Աստուծոյ մեռան ի ձէնջ ։ Իսկ նոքա ցուցին նմա զտեղիսն, և նա ընթացաւ ժողովել և ամփոփել զմարմինս նոցա ի սպանման տեղեացն զի կային անդէն. և տեսին զի զօրութիւնն Աստուծոյ պահեալ էր զմարմինս նոցա ։ Զի այն ինն տիւ էր և ինն գիշեր՝ զի արտաքոյ ընկեցեալ էին մարմինք նոցա, և ոչ գազանի էր մատուցեալ և ոչ շան, քանզի անդէն շուրջ զքաղաքաւն էին մօտ ի քաղաքն, և ոչ հաւու (թռչնոց) մնասեալ եւս էր նոցա, և ոչ էր հոտեալ մարմին նոցա ։ Իսկ նոքա բերին հանդերձս բազում պատանաց ([illegible]) . բայց երանելին Գրիգորիոս ոչ արժանի համարէր զպատանսն բերեալս թագաւորին կամ զայլոց մարդկանն. այլ իւրաքանչիւր պատառատուն հանդերձիւն պատէր զսուրբսն ։ Առ անգամ մի ([illegible]), ասէ, մինչև լինիք դուք արժանի պատել զմարմինս նոցա ։ Եւ ամփոփեաց առ գնաց ի հնձանն ուր վանքն ([illegible]). Իսկ լեալ էին նոցա. և իւր իսկ վանս անդէն կալեալ։

(հօն էրէն օրեղ ընելըմ) օթեւանս առնէր։ Եւ երանելին Գրիգորիոս զցայգն ամենայն (ճօլը ճէլէրը) առ Աստուած աղօթս մատուցանէր վասն Նոցա փրկութեան, և խընդրուածս առնէր զի դարձցին և ապաշխարութեան հնարս գտանել մարթասցեն։ Եւ ի վաղիւ անդր Թագաւորն և Նախարարքն և մեծամեծ աւագանին խառնաղանճ ամբոխիւն բազմութեամբ եկեալ ի ծունր իջեալ առաջի Սրբոյն Գրիգորի և առաջի Սուրբ ոսկերաց վկայիցն Աստուծոյ խնդրէին և ասէին. Թող մեզ զամենայն յանցումն չարեացն զոր մեք քեզ արարաք, և խնդրեա դու վասն մեր յԱստուծոյ քումմէ զի մի կորիցուք։ Ագաթ։

ՊԱՏՄԱԿԱՆ

—

Ի ՔՐՈՆԻԿՈՆԷՆ ԵՒՍԵՓԵԱՅ

ՎԱՍՆ ՋՐՀԵՂԵՂԻՆ

Կրօնն, զոր հայրն անուանեն Օրամազդայ, Նմա (Քսիսութրայ) ի քուն յայտնէր (ինոյ մըջ կ'էմացնէր) մարդկան ի ջրհեղեղէ սատակել (ըէ մօրդէկ ստրակէլըց էկն է ջըրձեղչէ), և հրաման տայր զամենայն մատեանս փորել և դնել յԱրեգ քաղաքի Սիպարացւոց, Նաւ գործել և ի ներքս մտանել հանդերձ ազգականօք և կարեւոր բարեկամօք. համբարել ի ներքս ռոճիկս (ոստեկէ) և ըմպելիս, մուծանել և գազանս և Թռչունս և չորքոտանիս, և ամենայն կազմածովք պատրաստ լինել ի նաւարկել։ Հարցեալ (Քսիսութրայ) թէ յո ուրեք (ոսր) արդեւք նաւարկիցէ, պատասխանի առնէ թէ Առ դիսն՝ աղօթս առնել զի բարիք մարդկան լինիցին։ Եւ չատունդանէր (Քսիսութրոս) գործել զնաւն որոյ երկայնու-

թիւնն էր հնգետասան վտաւան (մղոն) և լայնութիւնն երկու վտաւանք։

Հանդերձեալ (պատրաստել) կազմեալ ըստ ամենայնի որպէս և առ հրաման, զկին և զորդիս և զկարեւոր բարեկամս ի ներքս մուծանէր։ Ի հասանել ջրհեղեղին և վաղվաղակի ցածնուլ, թռչունս ինչ արձակէր Քսիսութրոս, և նոքա չգտանէին ուտել ինչ և ոչ տեղի և դադար իջանելոյ։ Դարձեալ միւսանգամ առնոյր զնոսա Քսիսութրոս ի նաւն։ Յետ սակաւ ինչ աւուրց դարձեալ արձակէր այլ հաւս, և նոքա եւս միւսանգամ անդրէն ի նաւն գային՝ կաւով թաթախ զմագիլսն բերեալ։ Ապա երրորդ անգամ արձակէր հաւս, և նոքա միւսանգամ ոչ գային ի նաւն։ Յայնժամ իմանայր Քսիսութրոս եթէ յայտնեալ և բացեալ է երկիր, և քակէր զկողմ մի ձեղուան նաւին, և տեսանէր երթեալ յեցեալ զնաւն ի լեառն ինչ։ Ապա ելանէր հանդերձ կնաւ և դստերբ միով հանդերձ և ճարտարապետաւ նաւին, և երկիր պագանէր յերկրի, բագին կանգնէր և զոհս մատուցանէր դից, և այնուհետեւ չիք յաչաց լինէր նոքօք հանդերձ որք ընդ նմա ի նաւէն ելանէին։ Եւ որք անդէն ի նաւին մնային և չելանէին ընդ Քսիսութրեանց, ելեալ յետոյ խնդրէին զնա, և յանուանէ շրջէին, գոչէին, կոչէին։ Քսիսութրոս չերեւէր այնուհետեւ նոցա․ բայց ձայն բարբառոյ յօդոցն եկեալ պատուէր տայր եթէ պարտ էր նոցա դիւցապաշտս լինել, և թէ ինքն վասն դիւցապաշտութեան երթեալ բնակիցէ ի բնակութիւն դիցն, և կնոջ նորա և դստեր և նաւապետին ի նոյն պատիւ վայելեալ։ Եւ դուլ (հրաման) և պատուէր տայր նոցա երթալ միւսանգամ ի Բաբելոն, և ի Սիպարացւոց քաղաքէն փորել հանել զմատեանսն որ ծածկեալ կային անդ, և տալ մարդկան․ և տեղին յորում ելեալ կային՝ Հայոց աշխարհն էր։

Նոցա լուեալ զայն ամենայն զոհս դից մատուցա-նեն, և հետիոտս ի Բաբելոն գնան։ Եւ ի նաւէն որ չա-քաւ դադարեաց ի Հայս՝ ցայժմ սակաւ ինչ մասն ի Կոր-դուացւոց լերինն ի Հայոց աշխարհին մնալ ճշխար (մոռ) *ասեն. և ոմանց քերել բերել ի ծեփածոյ նաւին նաւ-թոյ ի բժշկութիւն և* ի ջնջոց (ջնջում) *ցաւոց ինչ բժժա-*նաց (կախարդանք)։ *Եւսեբ. Քրոնիկ.*

ԱՅԼ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՎԱՍՆ ՋՐՀԵՂԵՂԻՆ

Յետ որոյ տիրեաց Սիսիթրոս որում Կռոնոս յա-ռաջագոյն գուշակեաց լինել յաճախութիւն անձրևւաց։ Հրաման տայ զմատեանս ամենայն յԱրեգ քաղաքի Սի-պարացւոց թագուցանել։ Եւ իբրև Սիսիթրոս զայն ի գլուխ հանեալ վճարեր (կատարել), *մինչդեռ առագաստ* ձգեալ (պարզել, բանալ) *նաւարկել ի Հայս կամէին, յան-կարծակի հասանէին նաւավարքն յԱստուծոյ։ Յերրորդ աւուր, յորժամ անձրևքն* ցածնուին (էջանել, դադրել), *արձակէր Սիսիթրոս հաւս ինչ ի հաւուց,* դետակն կալ-եալ (դիտելով, սպասելով) *եթէ կարիցեն զերկիր փարա-տեալ ի բազմութենէ ջուրցն տեսանել։ Նոցա* յածեալ (թափառել, պտտել) *ընդ անհուն համատարած ծովն ծփա-նաց՝ չգտանէին ուրեք ոտից դադար. անդէն առ Սի-սիթրոս յետս դարձեալ դիմէին։ Նորա դադարեալ այլ ևս երիս աւուրս, դարձեալ արձակէր հաւս, որ եկեալ կաւով թաթախ զմագիլսն բերէին։ Եւ անդէն դիքն զնա ի մարդկանէ* հետակորոյս առնէին (աներեւոյթ կ՚ընէին), *և նաւն երթեալ յաշխարհն Հայոց դադարէր, և ի փայտիցն դեղ օգնականութեան բնակչաց աշխար-հին պարգևէր։ Եւսեբ. Քրոնիկ.*

ՎԱՍՆ ԱՇՏԱՐԱԿԱՇԻՆՈՒԹԵԱՆ

Աբիւդենոս ասէ զառաջնոցն, լինել նոցա զօրութեամբ և յաղթանդամութեամբ յուղւացեալք (ծերացեալ, տարեցած) *մինչեւ զդիսն ևս անգոսնել և* յանպիտանութիւն հատանել (անպիտանութեան, չարութեան մէջ ինկալ)։ *Սկսանէին զբարձրաբերձ զբուրգնն կանգնել ուր այժմ Բաբելոն կոչի. և իբրև մօտ յերկինս հասանէին դիցն, այնուհետեւ հողմոց օգնական լեալ դից՝ մղէին և յերկիր կործանէին զմեքենաւոր գործն* անարեացն (հսկայից). *և յատակն կործանեալ Բաբելոն անուանէր։* Ցայն վայր (մինչև այն տեղն) *միաշուրթն* համայեզուք էին (մէկ լեզու ունէին), *և ի դիցն* բազմամբոխ խառնախօս խղուըրտիւն (այլ և այլ լեզուի ձայներ) *ի միաբանեալսն եկեալ մտանէր։ Եւ յետ այնորիկ Կրոնին և Տիտան ի մարտ պատերազմի ընդ միմեանս բախէին։ Եւսեբ. Քրոնիկ։*

ՅՈՎՍԵՓՈՍ Ի ԲԵՐՈՍՈՍԷ ԶՊԱՏՄՈՒԹԵՆՆԷ ՀՐԷԻՑՆ

Ճառեցից այժմիկ (ասէ Յովսեպոս) զառ ի Քաղդէացւոց մի ըստ միոջէ զմէնջ գրեալսն և զպատմեալս, յորս կայ բազում միաբանութիւն (համաձայնութեան) *առ այլ ևս մեր դիրս։ Եւ վկայ այսոցիկ Բերոսոս է, այր Քաղդէացի յազգէ, և երեւելի յամենեսին որք զխրատու եւ զիմաստութեամբ* գային (գիտութեան և կրթութեան տէրն էին). *քանզի և զաստեղագիտութեան մատեանս և որ ինչ ի Քաղդէից ճարտարութիւն իմաստութեան պատմէր՝ նա եհան ի Յունաց լեզու։*

Նոյն իսկ Բերոսոսն մտադեւր զհետ Երբեալ (հետեւեալ) *առաջնոցն մատենից՝ վասն ջրհեղեղին և բնաջինջ մարդկան լինելոյ* զնոյն ձեւ (նոյն կերպով) *ըստ Մովսէսի պատմութեանն վիպագրեաց, և վասն արկղա-*

կերտ տապանին որով Նովքոս (Նոյ) նախնին մերոյ ազգիս ապրեցաւ։ Եւ տապանն, ասէ, երթեալ դադարէր ի գլուխս լերանց աշխարհին Հայոց։ Եւ ապա մի ըստ միոջէ ի Նովքայ համարեալ, ի Նաբուպաղասարոս, ի Բաբելոնի և Քաղդէացւոց թագաւորն, եկեալ հասանէ, և զնորա գիրս և զարւութիւնս (ტაძარ-მთავრობიან) պատմեալ, ասէ թէ յոր իրս և յինչ միտս առաքեաց յերկիրն Եգիպտացւոց և ի մեր աշխարհս զիւրուրոյն (ეგ ყოფილ) որդին Նաբուգոդոնոսորոս յաճախագունդ զօրօք, բազմատարած բանակօք։ Քանզի ազդ լինէր նմա թէ յապստամբութիւն մտաբերեցին բնակիչք աշխարհին, եկեալ հասեալ ամենեցուն շահեալ տիրէր, և զտաճարն Երուսաղեմի հրձիգ արարեալ եղծանէր, և զամենայն զմերազգեայ ժողովուրդն խախտեալ (ჩეჩე ფანელ) ի Բաբելացւոց երկիրն բնակեցուցանէր։ Դէպք եւ պատահարք հասանէին (ლაფარაკეჲა) քաղաքին աւերել, տաճարին եղծանել եւթանասնամեայ ժամանակ մինչեւ ցԿիւրոս առաջին Պարսից թագաւոր։ Տիրել, ասէ, Բաբելացւոյն Եգիպտացւոց աշխարհին և Ասորւոց և Փիւնիկեցւոց և Արաբացւոց, արութեամբ և քաջութեամբ անցեալ զանցեալ (ჩეჩალანჯელ) զամենեքումբ որ նախ քան զնա Քաղդէացւոց և Բաբելացւոց թագաւորեցին։

Ազդ եղեւ հօրն նորա (ჰაერი ხმალა) եթէ շահապն (ოფრად) նախարարապետ որ կարգեալ կայր ի վերայ աշխարհին Եգիպտացւոց և կողմանցն Ասորւոց և Փիւնիկաստան (ფინიკიან) գաւառացն՝ կապարճս դարձոյց, յետս եկաց յապստամբութիւն (ოპოტამბეჲა)։ Եւ զի չէր ատակ (ჭეჲ ხორთ) այնուհետև ինքն կշտամբել (ლაფძელ, ელედ) գումարեաց եդ ի ձեռին որդւոյ իւրոյ Նաբուգոդոնոսորայ որ այնուհետեւ ի չափ իսկ հասակի հասեալ էր՝ մասն ինչ ի զօրացն, և առաքեաց երթալ ի վերայ։ Երթեալ հասեալ Նաբուգոդոնոսոր, խումբ

գործեալ տայր պատերազմ ընդ ապստամբին և յաղթէր, զաշխարհն որպէս և էր իսկ ի բնէ՝ անդրէն ընդ իւրեանց թագաւորութեամբ նուաճէր։ Իսկ հօրն նորա Նաբուպաղասարայ դէպք տային (կը պատահէր) ի նմին ժամանակի հիւանդանալ ի Բաբելացւոց քաղաքին և վճարել զկեանս, թագաւորեալ ամս ԻԱ։

Զգաստ լինէր (լուր կը տրուէր, կ'իմանար) յետ բազում ժամանակաց Նաբուգոդոնոսորայ զհօրն վախճանէ։ Կարգէր յարդարէր (նա) զիրս երկրին Եգիպտացւոց և զայլոցն աշխարհաց, և զգերին (գերեալները, գերիները) Հրէից և զՓիւնիկեցւոց ազգացն, և հրաման տայր ոմանց ի բարեկամացն հարստաբուռն (ուժ, ծանր) զօրօք զառ (առնուած բաներ, աւար) և զկահ և զկազմած խաղացուցանել (փոխել) ի Բաբելոն։ Երթեալ հասեալ, գըտանէր ուրուք ազնուականի ի նոցանէ նուաճեալ զիրս ամենայն ի Քաղդէացւոց աշխարհին, և պահեալ նմա զթագաւորութիւնն։ Տիրէր բովանդակ հայրենի իշխանութեանն, և զգերուոյն հրաման տայր յազնիւ տեղիս Բաբելացւոց աշխարհին բնակեցուցանել։ Եւ ինքն յառէ և յաւարէ պատերազմին զմեհեանն Բելայ ամենայն առատութեամբ զարդարէր։ Եւ ի բուն քաղաքն և այլ ևս արտաքուստ ի ներքս յաւել ջուրս. և պնդէր (ամրացնել) զտեղիսն զի մի ևս լինիցի հնար պաշարողաց զդետն ի քաղաքն դարձուցանել։ Եւ յաւելոյր երիս պարիսպս ներքնոյ քաղաքին, և երիս՝ արտաքնումն. և զկէս պարսպացն ի ծիւրծուն (եփած) աղիւսոյ և ի նաւթոյ շինէր, և զկէսն ի լոկ աղիւսոյ, և պատէր ազնըուագոյնս (աղէկ կերպով, բոլորտիքը) զքաղաքն պարըսպօք, և զդրունսն զարդարէր դիւցազունս (դիւցազնական, շքեղ կերպով)։ Եւ այլ արքունիս մօտ ի հայրենի արքունիսն շինեալ յաւելոյր, զորոց զչափ և զգեղ և զազգի ազգի յօրինուածս հազիւ որք ուրեք երէ պատմել կարասցէ (մարդ դժուարաւ կրնայ պատմել), բայց այն-

չափ միայն՝ թէ կարի նորակերտ նորանշան մեծապայծառ և չնաշխարհիկ գործ էր , և կատարեցաւ համօրէն ի հնգետասան աւուր ։ Եւ յարքունիսն աշտարակս բարձրաբերձս հանդերձ մահարձանօք (կօնող եոլը պահպանատելու համար) շինեալ յօրինէր , և զճակատս կոզակացն (օխան) ի նմանութիւն լերանց յարդարէր ։ Եւ տնկեաց ծառս ազգի ազգիս , և գործեաց և կազմեաց զանուանեալ բուրաստանսն կախաղանս վասն տենչանաց կնոջ իւրոյ ի լեռնային հովասուն վայրաց (կէնը լեռնային ղըզ տեղերէ օխուշմելուն համար) , որ ի Մարաց աշխարհին հովասուն սնեալ էր ։

ԲԱՆՔ ԲԵՐՈՍՈՍԻ ՁԲԱՂՄԱՎԻՊԷՆ

Զբաղմավիպէն Աղեքսանդրէ ասէ Բերոսոս լինել ի տիս (տիք , պօչէ , ժամանակ) Աղեքսանդրի Փիլիպեայ , և գրել զբազմաց մատեանս որ ի Բաբելոնի բազում զգուշութեամբ պահէին յերկերիւր և ի հնգետասան բիւրուց ամաց ։ Զերկնից և զերկրէ և զծովէ և զնախակերտն արարչութենէ և զթագաւորաց և զնոցուն իրաց և զգործոց պատմէ ։ Նախ , ասէ , զԲաբելացւոց երկիրն հաստատեալ ի վերայ Դկղաթ (Տէգրէս) գետոյ , և Արածանւոյ (Եփրատ) ընդ մէջ անցանել , և երկրին բերել վայրենի ցորեան և գարի և ոսպն և ոլոռն և կնճիթ . և ի խաղս և ի շամբս գետոյն արմատոց ինչ ուտելեաց գտանել , և ունել արմատոցն զօրութիւն գարւոյ հացի ։ Լինել անդ և արմաւ և խնձոր , և այլոց եւս ազգի ազգի մրգոց , և ձկանց և հաւուց (Բըլըղըան) վայրենեաց և մօրականաց (ծախնայեն) ։ Լինել և Արաբացւոց կողմանցն նորա անջրդիս և անպտուղս , և դէմ յանդիման Արաբացւոց աշխարհին՝ լեռնայինս և պտղաբերս ։ Եւ ի Բաբելոնի բազմամբոխ այլազգեաց մարդկան բնակել ի Քաղդէացւոց աշխարհին , և կեալ

Նոցա անառակութեամբ իբրեւ զանասունս և զգազանս ։

Նա յառաջնում ամին յայտնել ի կարմիր ծովէ, անդէն իսկ ի մէջ սահմանացն Բաբելացւոց, ահագին ինչ գազանի ։ Ապողոդորոս պատմէ թէ ամենայն մարմինն ձկան էր, և ընդ գլխով ձկանն այլ գլուխ առ նմին պատշաճեալ, և ի տոտունն ոտք իբրեւ զմարդոյ, և բարբառ (ձայն) *ըստ մարդկան բարբառոյ ։ Եւ գազանին այնմիկ, ասէ, ցերեկ ընդ մարդկան շրջել և ի կերակուր ինչ ամենեւին չհպել, և ուսուցանել մարդկան* դպրութիւնս (կարդալ, գրել) *և զպէս պէս հանգամանս արուեստից, զձեւս քաղաքաց և մեհենաց պատշաճութիւնս և օրինաց* խելամտութիւնս (տեղեկութիւն)*, և սահմանաց և բաժնից պայմանս ուսուցանել, և զսերմանց և զպտղոց ժողովս ցուցանել, և ամենայն որ ինչ ի դէպ ընտանութեան կենաց իցէ՝ աւանդել մարդկան ։ Եւ ի մտանել արեգականն, գազանին միւսանգամ անդրէն ի ծով* մխել (սուզել) *և* զգայգ (գիշերը) *ի համատարած ծովուն* զետեղել (կենալ)*, և այնպէս* երկեկից իմն կեանս կեալ (երկակենցաղ, թէ ջրոյ մէջ և թէ ցամաքի վրայ ապրել) ։ Եւս ։

ՎԱՐԴԱՊԵՏԱԿԱՆՔ

ԵԶՆԻԿ

ԹԷ ՉԷ ԱՐԺԱՆ ՊԱՇՏԵԼ ՋԱՐԱՐԱԾՍ

Բարուոք է արեգակն և գեղեցիկ բնութեամբ ('ի բնէ) *և մեզ և ամենայն արարածոց որ ի ներքոյ երկնից՝ յօգուտ և ի դարման, իբրեւ ճրագ մի ի մեծի տան ի մէջ* ձեղուան (բաճան) *և յատակի լուցեալ, առ ի ղխա–*

ւարն և զատուերն զերկուց մեծացն անօթոց՝ ի բաց ի միջոյ փարատելոյ · բայց ինքն եթէ իցէ և եթէ չիցէ՝ զայն ոչ գիտէ ։ Մերթ երթայ դօղէ (նօգտէ) իբրև զարհուրեալ , և տայ տեղի խաւարին լնուլ զմիջոց ի մեծի տանս , և ընդ ժամանակս ժամանակս (արէն արէն) ի խաւար դառնայ առ ի յանդիմանութիւն եւ յամօթ (յանդիմանելու և ամչնելու համար) իւրոցն պաշտօնէից , յայտ արարեալ եթէ Զեմ ես արժանի պաշտաման , այլ այն՝ որ զիս զամենայն տիւ լուսաւոր պահէ և զցայգ (գիշերը) զօղեցուցանէ և երբեք երբեք (արէն արէն) խաւարեցուցանէ . և իբր խօսուն բերանով անշշունչն (անխօսը) բոդոքէ (կը գօչէ) եթէ Զեմ արժանի պաշտօն առնլոյ (պաշտօնելու) այլ պաշտօն հարկանելոյ (պաշտելու) ։ Կամ (զիարդ պաշտիցեմք) զլուսին որ ամսոյ ամսոյ (ամէն ամիս) հիւծանի (կը մաշի) , գրեթէ և մեռանի , և ապա սկիզբն առնու կենդանանալոյ , զի քեզ զյարութեան օրինակն նկարիցէ ։ Կամ (զիարդ պաշտիցեմք) զօդ որ մերթ գոչիցէ վարազացեալ (խօզի պէս կատղած) հրամանաւ (Աստուծոյ) , և մերթ սառսէ (վախնալով կը լռէ) ի գոչելոյն սաստիւ (Աստուծոյ) ։ Եւ կամ (զիարդ պաշտիցեմք) զհուր որում և զքեզ երկրորդ արարիչ կազմեաց (ըրաւ) յօրինիչն (շինողը) , զի յորժամ կամիցիս՝ վառիցես , և յորժամ կամիցիս՝ խափուցանիցես (մարես) ։ Կամ (զիարդ պաշտիցեմք) զերկիր զոր հանապազ բրեմք (կոխկռտենք հողը) , ցանգ (միշտ) կոխեմք , և զաղբ զմեր և զանասնոց մերոց ի նա հեղումք ։ Կամ զջուրս՝ զոր հանապազն ըմպեմք , և զանուշութիւն նոցա ի ժանտահոտութիւն (գարշահոտութեան) ի փորի մերում դարձուցանեմք , և զներքին և զարտաքին աղտեղութիւնս մեր նոքօք սըրբեմք (կը մաքրենք) ։

Նաև զողումն և սոսկումն (դող, վախ) ունի (կը բռնէ) զարարածս , յորժամ զպատիւ արարչին ոք նոցա մատուցանիցէ . և յայտ առնէ երկիր շարժելովն , և լու

սաւառքն՝ խաւարելովն , *և օդքն՝* գծղմելովն (*նեշանալ*) *և* քստմնելով (*դօղդօղալ, օտօէլ*) , *և ծով՝ սաստկու-թեամբ ալեացն* : *Զի թէ ոչ սաստ արարչին* նահանջէր (*եթ քանել*) *զնոսա* , մի մի (*ամէն մէկը*) *ի նոցանէ* բաւական էր (*կընար*) *զամենեսին սատակել՝ առ ի խնդրելոյ զվրէժ հասարակաց արարչին* : *Ծով՝ ծածկելով* , *որ տկար աւազովն պաշարեալ չիշխէ* անցանել ըստ հրաման (*հրամանը չկատարել*) . *կամ երկիր՝ կլանելով* , *կամ հողմ՝* պ*ւ*րտասեցուցանելով (*շանչ աննել շօւլ, շանչը կօրել*) , *կամ օդք՝ երբեմն* զատռնամանիսն (*յօւքր հօվ*) *ընչելով* , *և երբեմն* զխորշակն (*տաք հօվ*) *բերելով* :

ՄԻԱԲԱՆՈՒԹԻՒՆ ՏԱՐԵՐԱՑ՝ ՆՄԱՆՈՒԹԵԱՄԲ ԿԱՌԱՑ

Անհաւասիկ իբրեւ զկառս իմն լծեալ ի չորից երի-վարաց զաշխարհս տեսանեմք . *ի ջերմութենէ* , *ի ցըր-տութենէ* , *ի* ցամաքութենէ (*շօրութիւն*) *և ի* խոնաւութենէ (*թացութիւն*) , *և զօրութիւն իմն ծածուկ կառա-վար որ զչորս* կազեցողսն (*կանաչող*) *ընդ միմեանս ի* հաշտութեան եւ ի հաւանութեան (*հօշտ և մաքան*) պահեալ նուաճէ (*կը քանէ, կը շօղէ*) : *Ամենայն կառք ի հա-*մազգեաց (*համազգի, նոյնացեղ*) *երիվարաց լծին* , *բայց միայն յայսց կառաց՝ որ ի չհամազգեաց լծեալ են* : Որ ի նամազգեայն լծեալ են (*նոյն տեսակ երէվցիներէ ըլլած կառքերը*) *երբեմն* սայթաքին (*օրթը գրնել, էյնալըմօր ըլլալ*) , *երբեմն* օճտեն (*ճամբէն դուրս ելլել*) *և ի* տագնապի (*վրանգ*) *զկառավարն և զանձինս կացուցա-նեն* , *և երբեմն* խորտակումն *իսկ կառացն* գործեն (*կը կօտրուին*) . *և յորժամ* ողջ (*ամբօղջ*) *կառքն իցեն* , *և ողջ կառավարն և վարժ երիվարքն* , ուղ եղեալ ի հանդեպ երեսացն *ուղեթ* (*շէղշէտակ առաջ*) արշաւեն (*կը վազէն*) : Այս կառք զարմանալիք (*այս շարժանալէ կառքը*) *ի հակա-ռակ և յաննման երիվարաց լծեալ և ծածուկ ձեռամբ*

ուղղեալք , ոչ ի մի միայն կողմն ի հանդէպ երեսաց ևւեթ արշաւեն , այլ յամենայն կողմանս վարգին (կը վուրէն) *և* ընդհանուր (ուճն պէյ) *արշաւեն , և* ընդ բնաւս (ուճն նուղմ) սլանան (կը վուրէն)։ *Յորժամ ընդ արեւելս ընթանան , չէ ինչ արգել թէ ընդ արեւմուտս ոչ արշաւիցեն , և յորժամ ընդ հիւսիսի վարգին , չէ ինչ արգել թէ ընդ հարաւ ոչ* սուրայցեն (վուրէլ), *զի ձեռն կառավարին* բաւական է (նուրուղ է) *յամենայն կողմանս դիմեցուցանել , և ընդ չորս անկիւնս տիեզերաց արշաւեցուցանել ։ Եզն . Ա.։*

ԱՍՏՈՒԱԾ ՉԷ ԱՐԱՐԻՉ ՉԱՐԵԱՑ

Եթէ Աստուած բարեաց արարիչ է , ասեն , և ոչ չարաց իրաց , ուստի՞ է խաւար , ուստի՞ են չարիք , ուստի՞ են աշխատութիւնք , ուստի՞ են չկանք (նէղու-նէան) *մերթ ի ցրտոյ , մերթ ի խորշակէ ։* Կամ *ուստի՞* *են* անզգամութիւնք (ղուրաֆուրծուութնան), *զի տեսանեմք երկուս արս միազգիս որ ընդ միմեանս գրգռեալ , միմեանց մահու և արեամբ ծարաւի են ։ Եւ այլք զգերեզմանս* կրկտեն (կը քանան , կը +ր+րէն) , *և զթաղեալ մամինս ընդ հողով՝ մերկացեալ* խայտառակեալ (հրադարկել , օրնան հանել) *արեւու ցուցանեն , և զմեծարեալ* դին (դէանկը) առ փութի չծածկելոյ (աճադուրանքէն ըծածկելով) *թերեւս և շանց եւս* կուր արկանեն (կէրանուր կ'ընէն) ։ *Եւ է երբէք զի մին փախուցեալ երթայցէ* անձնապուր (էնքնընք ողորմելով) *ուրեք զկեանս անձինն շահել , և միւսն ցասմամբ բորբոքեալ , սրով զկնի ընթացեալ ոչ դադարէ , մինչեւ յագեցուցանէ զցասումն . ուստի՞ է այն անյագ ցասումն ։ Եւ ոմն մերկանայ զհանդերձս ընկերին . եթէ ընդդէմ դառնայցէ նա ,* յարեւէ ևւս արկանէ (մայնել) *զնա ։ Եթէ Աստուծոյ կամօք* գործէին (կը ֆործուէին) *այնպիսի չարիք , ընդէ՞ր ի* գործել–

եաց (ֆուրծուղուց) *չարեացն* վրէժս պահանջէ (կը դարծէ). *այլ* այնու զի (*Աստուած*) ըստ չարեաց գործոցն վրէժս պահանջիցէ (չար ֆուրծէներու համար դարծելուկը), *յայտ է թէ ոչ ախորժէ զչարիսն, այլ ատեայ, և պատիժս պատուհասից ի վերայ գործելեացն ածէ. Եզնիկ Ա.*

ԽՏԻՐ Ի ՄԷՋ ՉԱՐ ԵՒ ԲԱՐԻ ԳՈՐԾՈՑ

Յորժամ զըմբռնեալն ի գողութեան ոք սպանանիցէ, պատուհաս ի վերայ ածեալ վասն յանդգնութեանն, չառնէ չար ինչ. Ապա եթէ ոք զանմեղն որոյ ոչինչ ի վնասականացն (պարծոյ ըրծանէ, ուրֆելըուալ բան) *գործեալ իցէ, սպանանիցէ, կամ* վասն ինչս զերծանելոյ (ինչէը առնելու համար), *կամ* վասն ստացուածս հատանելոյ (ստացուածն առնելու), *չարութիւն գործէ, և գործն նոյն է երկոցունց, բայց* օրինակն (եղանակը) *ոչ նոյնպիսի.* Նա եւ յինչս առնոյլ նոյն բանք են (ձևէն բան մը առնելու մէջ ու այնպէս է). *որ պարգեւ ի տեառնէ կամ* ձիր (ընծայ) *ի բարեկամէ առնուցու, ոչինչ չարութիւն գործէ. իսկ որ բռնաբար* յանաւազեն (դէպքէն) հանիցէ (յափշտակէ), *չարութիւն գործէ. և առնուլն երկոցուն նոյն է, բայց օրինակ առնլոյն ոչ նոյնպիսի. Նոյնպէս և աստուածպաշտութեան* յօրինակէ անտի (կերպէն) *ցուցանի չարութիւնն. եթէ զճշմարիտն Աստուած ոչ պաշտիցէ, գործ* ազնուական (լաւ, ֆոքելի) *գործէ. ապա եթէ թողեալ զճշմարիտն, քարանց և փայտից, որպէս թէ Աստուծոյ, պաշտօն մատուցանիցէ, անհնարին վնաս գործէ. Եթէ պատկեր ոք գործիցէ, և ոչ վասն սիրոյ սիրելւոյն որ մահուամբ յաչացն վրիպեցաւ, կամ վասն զճարտարութիւն ցուցանելոյ, այլ ի պաշտօն առեալ երկիր պագանիցէ իբրեւ Աստուծոյ, գործ չարութեան գործէ. Եզնիկ Ա.*

ԱՆՁՆԻՇԽԱՆՈՒԹԻՒՆ ՄԱՐԴՈՅ

Աստուած այնպէս պատուել զմարդն կամեցաւ, զի զանձնիշխանութիւնն (ազատութիւն, ազատ կամք) պարգեւեաց նմա, որով կարող իցէ (մարդն) առնել զինչ և կամիցի, և զանձնիշխանութիւն նորա ի լաւն խրատէ դարձուցանել. Որպէս հայր ոք յորժամ խրատիցէ զորդի իւր, որ կարող իցէ ուսումն ինչ ուսանել, չծուլալ յուսմանէն այլ յառաջադէմ լինել ի լաւն ստիպէ. վասն զի գիտէ եթէ կարող է յառաջադէմ լինել, պահանջէ զուսումն յոր աւանդեցաւ։ Նոյնպէս և զԱստուծոյ պարտ է իմանալ, եթէ յօժարեցուցանիցէ զմարդըն անսալ հրամանաց նորա, բայց զկամակար իշխանութիւնն (անձնիշխանութիւնը) ոչ հանէ (չառներ) ի նմանէ, որով կարողն է (մարդն) անսալ (մտիկ ընել) և չանսալ հրամանացն։ Եւ արդ յայտ է թէ անձնիշխան եղեւ մարդն առնել զբարի և ժտել (յանդգնել, յօժարել) ի չարն. քանզի զի՞րդ երեւէր ընտրութիւն (տարբերութիւն) գործոցն, եթէ ոչ ունէր մարդն իշխանութիւն երկոցունց, և՛ անսալոյն և՛ չանսալոյն։ Այսպէս մարդըն առաջին առնոյր պատուէր յԱստուծոյ, և չհնազանդեալ աստուածական հրամանին՝ մտաբերէր (կը յանդգնէր, կը յօժարէր) ի չարիս։ Եզն. Ա.

ԽԱՌԵԼ ՍԱՏԱՆԱՅԻ ԶՄԱՐԴ, ՕՐԻՆԱԿԱՒ ԹՇՆԱՄԻՈՅ

Յորժամ իցէ ոք ուրուք թշնամի, և թագուցեալ զթշնամութիւնն՝ գաղտ կամիցի վնասել. և չգիտիցէ զհանգամանս վնասակարութեանն (վնասելու կերպը), և շուրջ եկեալ յածիցի հնարս խնդրել (տարին անդին երթալ միջոց գտնելու). ապա գտեալ ժամանակ (պատեհութիւն), յորժամ ոք ի բժշկաց թշնամւոյն նորա պատուէր տայ–

ցէ յայս ինչ չհպել ([illegible]), և յայս Նիշ կերակրոց չճաշակել, որով առողջութեանն կարիցէ հասանել, և Նորա լուեալ՝ վաղվաղակի ի կեղծիս բարեկամութեան կեղծաւորեալ զբժիշկն պարսաւիցէ, և զօգտակարսն Նմա միասակարս թելադրեալ ([illegible]) կարծեցուցանիցէ, և պատուէրս հակառակ հրամանաց բժշկին տայցէ, և այնու առնիցէ Նմա վնաս. ոչ եթէ յառաջագոյն գիտէր զհանգամանս վնասակարութեանն, այլ ի պատուիրելոյ բժշկին գտեալ հնարս ([illegible]) եղեւ վնասակար: Նոյնպէս և սատանայ ժտեցոյց զմարդըն անցանել զհրամանաւն Աստուծոյ. ոչ եթէ ստուգեալ գիտէր Նա եթէ այնու Նմա վնաս ինչ գործել կարիցէ, այլ ի պատուիրանէն Աստուծոյ ուսեալ կամեցաւ վնասել մարդոյն: Եթէ յառաջագոյն չէր զուշակեալ ([illegible]) Աստուծոյ մարդոյն չուտել ի կերակրոյ ծառոյն, և Նորա յանգետս ([illegible]) կերեալ (էր), չլինէր Նմա պատիժ մահ. կամ որպէս թէ առ ի չգիտանս ([illegible]) եկեր, կամ թէ առ չժուժալոյ ([illegible]) ի կերակրոյ ծառոյն, չէր ինչ պատժի պարտական: Քանզի և մանուկ կաթՆակեր որ առ ի չգոյէ կարին ([illegible]) յայլ ինչ կերակուր մտաբերիցէ, ոչ պատժելի է, այլ արգահատելի ([illegible]): Եզնիկ Ա:

ԹԷ ՊԱՐՏ Է ԿՌՈՒԵԼ ԸՆԴ ՍԱՏԱՆԱՅԻ՝ ՕՐԻՆԱԿԱՒ ՄՐՑՈՒԹԵԱՆ

Նաեւ ընդ լինելն իսկ Սատանայի յԱստուծոյ ([illegible]) գիտաց եթէ անսաստել ([illegible]) ումեք Աստուծոյ չար է. և վասն այնորիկ յիրաւի ([illegible]) տանջէ զնա Աստուած, զի գիտէ Նա զբարին և ոչ առնէ, և հմուտ է չարին և ոչ խորշի: Եւ այն իսկ մեծ և զարմանալի է զի մարդն վառեալ Աստուծոյ օգնականութեամբն, պատերազմեալ

յաղթից է Սատանայի ։ Որպէս մարտուսոյց ոք ամենայն
ճնարիւք ճնարեալ (*ադին չանդ ընելով*) *զիւր աշակերտան*
թեքել (*կէրմել*) , *առ* ի ցուցանելոյ զհանգամանս մարտից
(*կէօսթերմէ կէրէկը ցօսթէրմէկ*) , *որով մարթիցեն յաղթել ա–*
խոյանիցն , առաքիցէ *զնոսա ի* հրահանգս (*կէրթօօթէրան*
դըկէ) *մրցել ընդ ախոյեանսն , և յաղթութեանց* ուղ առ–
նել (*մէօ դէնմէլ, նայմէլ*) *խրատիցէ , մինչև զկեանս ան–*
գամ արհամարհել · զի լաւ համարի թէ վասն անուան
բարւոք մեռանիցին , քան թէ կենդանի կայցեն և վա–
տանուն լինիցին ։ Եւ նոցա զքեյադրութիւնս (*խըրար*) վար–
դապետին (*վարդեբէն*) *ի մտի եդեալ և զպարգևս* ըստ
(*փօխանակ*) *յաղթութեանն* , զեր ի վերոյ լինիցին (*յօղ–*
թէն) *ախոյեանին , և պսակեալ առ վարդապետին հա–*
սանիցեն , և նշանակ ճգնութեան (*մըցման , կօօսէն*) *ընդ*
ախոյեանին՝ առ նա զպսակն բերիցեն ։ Ապա եթէ զմար–
տուսոյցն զմտաւ ոչ ածիցեն , և յաղթութեան և պսակի
ոչ ցանկանայցեն , կործանին վատանուն յախոյեանէ
անտի · յիրաւի այնուհետև թշնամանին (*կընախօսօօէն*)
և տանջին , և մահու պատիժ փոխանակ ընդ վատու–
թեանն կրեն ։ Նոյնպէս և զԱստուծոյ իմանալի է , թէ
իւրովք պատուիրանօք վառէ (*կըդէնէ*) զեղեցիկ (*ադէկ*)
զմարդիկ՝ առ ի պսակելոյ զյաղթողն , և յամօք առնե–
լոյ (*ամըցնել, խօյդաօակել*) *զվատացեալն ։ Եւ վասն այնո–*
րիկ թողեալ է Աստուծոյ զՍատանայ իբրև ի հրահանգս
կռուանոցաց (*մէնամարդօ–թէան դեղ*) *յաշխարհի , զի յոր–*
ժամ իւր նահատակեալքն (*ըշնամայն դէմ ելօղ, դօօբէ–*
րաղմօղ) *կռուիցին և յաղթիցեն նմա , պարծանք առաջ–*
նոյ յաղթութեանն նորա քակեսցին (*լօծօօէ , փճանայ*) ։
Այլ բնաւ իսկ , ասեն , ընդէ՞ր եմոյծ զնոսա (սատանան
և մարդը) ի կռիւ ընդ միմեանս ։ Աստուած թէպէտ և
ունէր իշխանութիւն զիւրոյ արարածոյն զհանդէս տե–
սանել (*փօրձել*) , *այլ ոչ ինքն դրդեաց զնոսա* անկանել
ընդ միմեանս (*ճըրօրօ հեօ էյնալ, կօօօէլ*) ։ *Իբրև եւտես*

(Աստուած) զսատանայ նախանձու բորբոքեալ, թոյլ-
ետ անձնիշխանին ընդ անձնիշխանին ոգորել (կռուիլ). քանզի գիտէր եթէ ոչ ինչ տկարագոյն էր սորա անձնիշխանութիւնս քան զնորայն, և ոչ նա կանխագէտ և սա ոչ կանխագէտ, և ոչ նա բռնաւոր (զօրաւոր) և սա տկար ոք։ Եւ զի չէր (սատանայ) բռնաւոր ոք, յայնմանէ յայտ է (զօրաւոր ըլլալն անկէ յայտնի է որ) զի ցկինն պատրանօք (խաբէութեամբ, նենգով) մատուցեալ հարցանէր, և ոչ բռնութեամբ զարհուրեցուցանէր։ Դարձեալ և ի Յոբայ փորձանացն է ուսանել (կրնայ սորվիլ) թէ չէ սատանայ հարուստ (զօրաւոր) և կանխագէտ։ Զի եթէ հարուստ ոք ինչ էր նա, ոչ յԱստուծոյ խնդրեալ առնոյր օճան (հրաման, թոյլտուութիւն, արտօնութիւն), և ապա միխեր (մտնել, մօտենալ, ձեռնարկել) ի փորձութիւնսն. և եթէ կանխագէտ էր, ոչ մատչէր փորձել. քանզի գիտէր թէ յորժամ ոչ կարէ յաղթել, յամօթ լինելոց է (ամօթապարտ ըլլալ, պզտիկ ելնալ)։ Եզն. Ա։

ԹԷ ՉԱՐԻՔ ՉԵՆ Ի ԲՆԷ, ԱՅԼ ԿԱՄԱՒՈՐՔ

Բնութեամբ (ի բնէ) են, ասեն, չարիք, և ոչ կամածինք։ Եթէ բնութեամբ իցեն չարիք, ընդէ՞ր օրէնք ի թագաւորաց դնիցին, և սաստք՝ յիշխանաց, և պատիժք՝ ի դատաւորաց. ո՞չ ապաքէն վասն կարճելոյ (Ուզելով, Փնտռելով) չարեացն։ Այնպիսին (չարիքը ի բնէ են ըսողը), եթէ կին նորա յանցանիցէ, չպարտի մեղադիր լինել (յանցաւոր համարիլ), քանզի ոչ կամաւ յօժարեցաւ ի չարն, այլ բնութեամբ բռնադատեցաւ։ Եւ եթէ որդւոյ իւրոյ սուր առեալ ի վերայ խաղայցէ (վրան գայ), մի լիցի նմա մեղադիր, զի ոչ իւր կամաւ երթայ նա, այլ չարն տանի զնա յայն։ Եւ եթէ ի դրացւոյ և ի բարեկամէ թշնամանեսցի, մի փոխարէն թշնամանիցէ, այլ առաւել արգահատեսցէ (գթայ), զի

ոչ եթէ նա ինչ թշնամանէ, այլ չարն՝ որ բռնաքար վարէ զնա։ Նոյնպէս յորժամ դուստր զմայր անարգիցէ, և Նու՝ (հարս) զսկեսուր իւր, և կին՝ զայր, և ծառայ՝ զտէր, և եղբայր՝ զեղբայր, մի ինչ տարցին ընդ միտ (ուրդուղը, վերմանալ) որք անարգեցանն, այլ արգահատեսցեն նոցա որպէս ի չարէն բռնադատելոց։ Իսկ եթէ տեսանեմք թէ թագաւորն զխւրոց օրինաց վրէժս պահանջէ, և պահանջմամբ վրիժուցն զմնասն կարճէ (կը բռնայ), և դատաւորն զգողն և զաւազակն պրկէ (պինդ կապել) և քերէ (մէջ կտոր կտոր հանել) վասն զմնասակարութիւնն ի միջոյ բառնալոյ, և հայր զորդի դժնեայ մահապարտեալ՝ դատաւորաց մատնէ, և այլքն ամենեքեան իւրաքանչիւր զանարգանաց վրէժս պահանջեն կամ անձամբ կամ իշխանօք, յայտ է թէ չարիքն որ գործին՝ կամածինք են և ոչ բնականք։ Եզնիկ Ա.։

ԹԷ ՄԱՐԴ Ի ԲՆԷ ՑԱՆԿԱՑՈՂ Է ԲԱՐԵԱՑ ԵՒ ՈՉ ՉԱՐԵԱՑ

Նաեւ այլուստ եւս մարթեմք իմանալ (կրնանք մոռ-ցընել) զի մարդոյ բնութիւն բարեաց ցանկացող է և ոչ չարեաց։ զի չունն որ չնայ, մինչդեռ իսկ ի գործ (գործողութիւն) չնութեանն իցէ, եթէ ոք չուն կոչէ զնա, ըմբոստանայ (կը պայքանայ, դէմ կ'ելլէ)․ Նոյնպէս և գողն և աւազակն և այլ եւս չարագործքն, թէպէտ և զգործ չարագործութեանն գործեն, զանուն չարագործութեանն յանձն ոչ կամին առնուլ։ Նաեւ կեղծաւորն կեղծաւորեալ, որ մեղմեխանօք (կեղծաւորու-թիւնք) ընկերին (տարբերէ մը) կամիցի մնաս առնել, թագուցանէ զկեղծաւորութիւնն, և որպէս թէ բարւոյ ինչ խրատ տայցէ, հրապուրեալ (խաբել, մոլորցնել) արկանէ ընդ վնասիւք (յանցաւոր կ'ընէ) զանմեղն․ և եթէ ոչ զբարւոյ դէմս զգեցեալ մեղմեխիցէ (բարի չեղանալ)

չկարէ ստերիւրել (*ճամբէն հանել, խոտորցնել*) *յիրաւանց* զիրաւագէտն (*իրաւունք ճանչցող*)։ *Նաեւ յորժամ ոք զխիստ ոք իշխան կամիցի ի* քաղցրութիւն ածել (*քաղցրա-ցնել*), *չկարէ* յայտ (*յայտնապէս*) *երթալ ասել թէ Դու խիստ ես․ այլ քաղցրախառն բանիւք մատուցեալ* ողոքէ (*ողոքել, անոյշ խօսել*) *թէ Դու, տէր, քաղցր ես և բարերար ամենեցուն, ամենեքին գոհ են զքէն*, բոլորք (*ամէնը*) առ իրաւագէտս ունին (*ամէն մարդ իր իրաւունք ճանչցողին տեղ դրած է*)․ *և այնպէս կարէ* մեղմով (*կամա-ցուկ*) *քաղցրացուցանել զխստութիւն իշխանին, և խոնարհեցուցանել* ածել յիրաւն եւ յարժան (*ըսել տալ այն բանը որ իրաւունք է*)։ *Նոյնպէս և առ ցասուցեալն և տրտմեալն քաղցրութեամբ ոք մատչի և* ցածուցանէ (*կ'իջեցնէ*)․ *և անտի յայտ է թէ բարեաց ցանկացող է բնութիւն մարդկան և ոչ չարեաց*։ Եզնիկ Ա․ ժե։

ԹԷ ԶԻՔ ՉԱՐ ԲՆՈՒԹԵԱՄԲ Ի ԳԱԶԱՆՍ

Եթէ զգազանս վասն գազանութեանն չար ինչ բնութեամբ կարծիցեն, գիտասցեն զի կէսքն յանասնոցն ի պէտս արարան, որպէս արջառ և ոչխար և ամենայն ինչ որ ուտելի և կրելի (*բեռ կրող*) *է, և կէսքն վասն երկիւղ ի միտս մարդկան ծնուցանելոյ։ Զի եթէ գազանք ահագինք են և վիշապք և օձք և այլ* ճճիք (*անտառնէ*) *վնասակարք, և մարդն այնչափ հպարտացեալ է մինչ ըստ Աստուծոյ երկիւղին սահմանս արտաքոյ ելեալ* անսաստէ (*աննշանաւոր ն'ըլլայ*), *եթէ այնպէս զարհուրեցուցիչք չէին, ո՞րչափ եւս առաւել* չկայր *երբէք* յակաստանի (*չէր ըղձար*)։ *Նաև նոքին իսկ որ չարքն կարծին անմտաց՝ երբէք երբէք օգտակարք լինին և զերծուցիչք ի մահուանէ։ Զի՞նչ չար քան զօձ կայցէ, և ի նմանէ* թերիակէ (*Թէրէէտ*), *որ ի* սպանող (*մահացու*) դեղոց (*Թոյն*) *որք ի նենգութենէ մարդկան*

կազմեցան, չեւ հասուցեալ եւ անդէն բուժէ (հաննըլան-ղըճը ճըճիկը)։ Եթէ բնութեամբ չար ինչ էր օձ, ապա չգտանէր ինչ ամենեւին ի նմա օգտակար, և ոչ զզօնանայր (եմաուննալ, խըլըֆնալ) երբէք ի գազանութենէ անտի իւրմէ. նա աւանիկ տեսանեմք (զօձս) ի հնարագիտութենէ (ճարբարըգլըն) թովչաց զգօնացեալ, և իբրեւ զչուան խաղալիկ (օյունճագ) է նոցա, և բազում անգամ բնակեալ (օձք) ի տան, չմեղանչեն (չին ձ...) բնակչացն։ Եւ օձապաշտքն այնչափ զգօնացուցանեն զօձս գիտեն (կըրճան), մինչև կոչել յուսուքիւք (կախարդու-թեամբ, հմայէ-ք) ի տունս։

ՕԳՏԱԿԱՐՈՒԹԻՒՆ ԱՆԱՍՆՈՑ ԵՒ ԲԱՆՋԱՐՈՑ

Որպէս վերագոյն (վէրը) ասացաւ, եթէ չար ինչ էին գազանքն, ոչինչ ի նոցանէ օգտակար գտանէր, այլ ամենեւին իսկ վնասակար։ Իսկ արդ տեսանեմք զի կիսոցն (ոմանց) մորթքն պատսպարան (ծածկոց) մերկութեան մերոյ լինին, և կիսոցն ճրագուն (ճօրէն եղը) դեղնեղի (վառելու նէթ, ճրագ) լինի, որպէս առիւծուն և արջոյ և այլոց. ապա յայտ է թէ չեն ինչ չար գազանքն ի բնէ, զի որ չար ինչ է, նորա ամենայն ինչ վնասակար է, և՛ մորթ և՛ միս. այլ նոցա (գազանաց) որպէս զմորթն զգենումք և ոչ վնասէ, եւ զմիսն (միսնալ) եթէ սիրտ ուրուք առնոյր (չէր դանէր) և ուտէր, ոչ վնասէր. որպէս վարազի (վայրէ խոզ), որ գազանագոյն է քան զամենայն գազանս, ուստի միսն և ոչ վնասէ։ Իսկ յարջառ, զորմէ ասեն թէ բարի է, գտանի ինչ վնասակարութիւն։ Զցլու միս ուտել դարման (տաղդըղըրր) է մարմնոյ, բայց եթէ զարիւնն ոք ըմպիցէ, սատակի։ Նոյնպէս և ի բանջարս (խօտեղէն, տանկ) է ինչ որ առանձինն սատակիչ (մահացու) է, և խառնեալ ընդ այլ բանջարս՝ բժշկիչ պէս պէս ցաւոց լինի։

Մանրագորն (*ափիոն*), *եթէ ոք լոկ ուտիցէ*, *սատակիչ է*, *և խառնեալ ընդ այլ արմատս՝ քնածու լինի* քնահատաց (չընայող, գուռը կորած)։ Եւ *հազար*, *եթէ ի* տօթ (տազէ) ժամանակի (եղանակէ) *ուտիցէ ոք*, *քանզի զովացուցիչ է*, զտապս (ջերմութիւն, խաֆիֆէթ) *ի փորոյն փարատէ*, *և եթէ ի* ցուրտ ժամանակի (ցուլ եղանակէ մէջ) *ուտիցէ ոք*, *վնասէ*. *և եթէ զշուրն* քամեալ (սեղմելով հանել) անապակ (ցուրտ, անջուր) *ըմպիցէ ոք*, *սատակի*։ Եւ *մոլախինդ առանձինն սպանող է*, *բայց նովիմբ զմաղձս հնացեալս հնարին բժիշկք հատանել*։ Եւ *կաղանչանան* ազգ ինչ (մէկ տեսակը) *առանձինն սպանող է*, *և խառնեալ ընդ այլ դեղոյ՝ մաղձադեղ է*, *բուժիչ ի մահուանէ*։ Եզն. Ա։

ՕՐԻՆԱԿՔ ՉՎՆԱՍԱԿԱՐՈՒԹԵԱՆ ԳԱԶԱՆԱՑ

Այնչափ ինչ չար ի գազանացն բնութեամբ ոչ գոյր (ծաղկոց մէջ է բնէ չար տանջած չէր որ) . . . *մինչեւ ածեալ* (*Աստուծոյ*) զնորաբարսն (Նոր տերեւծաղկները) *առ նորաստեղծն* (*Ադամ*), *նմա նոցա անուանս դնել հրամայէր*. *և եթէ մօտ ոչ գային* (*գազանք*), *զիա՞րդ* (*Ադամ*) միոյ միոյ (ամէն մէկուն) ըստ իւրաքանչիւր ազգաց (ամէն մէկ տեսակին համեմատ) *անուանս յօրինէր*. *ապա եթէ մօտ գային և* ընտելութիւն (ընտանութիւն) *ընդ մարդոյն ունէին*, *յայտ է՝ թէ ոչ չարք էին*, *և ոչ մարդոյն վնասակարք*։

Եւ *առաջնոյ չվնասակարութեան գազանացն մարդոյ՝ այժմու* համբոյրս (ընտանութիւն, վարժութիւն) *և ընտելութիւնս վկայեն*։ *Զի ոմն զգայլոյ կորիւն սնուցանէ*, *և իբր զշան կորիւնս՝ առ ընտելութեան* ընդ անձն անկանին (վրան ելլել, փորել, թծնել)։ Եւ միւսն (ոստիկ մը) *զառիւծու* կորիւն (յաֆ) *սնուցեալ՝* ածէ ի համբոյր եւ ի քծինս (կ'ընտանեցնէ), մինչեւ (այնպէս որ) պա–

տել զսնուցանելեաւն (անասըզլըղըն ֆայտասըլ), *և եթէ այլ ոք ի նա հուպ գայցէ* (սօրբնայ), *չմոռացեալ* զբարս (քնանընըն) *գազանութեանն՝ ի վերայ յարձակի, և նո– րա* (*տէրը*) սաստեալ (օրտադէլ, փինէլ) *գազանին իւր չան*, ցածուցանէ (կը հանդարտեցնէ) յանսաստ (մորէն ելնող) *գազանութենէն*։ Եւ *այլ ոք զարջոյ* քօժին (ձող) *սնուցեալ*՝ կաքաւիչս ուսուցանէ (կոտրել կը սորվեցնէ), *և նմանեցուցեալ բարուց մարդկան*՝ *զգազանաբարոյն ցածուցանէ*։ Եւ *այլ ոք զկապիկս* անապատականս (ան– գղալի, ձայրենի) *ըմբռնեալս*՝ հտպիտս եւ ընչապտուկս– չեւ ամենաչար ուսուցանէ (խեղկատակութեան և չարութեան– ներ, չար կատակներ, խաղեր ընել կը սորվեցնէ)։ Եւ *այլոց* զքարբբս (տեսակ մը օձ) իգակերպս (եգէ կերպարանք ունեցող) *կալեալ թովչութեամբք յընտելութիւն մարդկան ա– ծեն*, չրեցուցեալ (Ընձըլով) *զթոյնսն սպանողս*։ Եւ *եթէ զխորշակս և զսառնամանիս վասն մնասակարութեանն*

որ կարծիցեն, գիտասցեն զի եթէ ոչ ձիւն և սա– ռամանիք պնդէին (սփռել. ցրուցնել) *զերկինս, որմամբ խոտոյ ոչ պարարէին*. *և եթէ ոչ տօթ* չեռուցանէր (թափցնել) զանդաստանս (անդ, դաշտեր), *պտուղք ոչ* հասանէին (հասուննալ)։ Եղն. Ա.

ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՔ ԵՒ ՄԱՀ ՉԵՆ Ի ՉԱՐԷ ԱՐԱՐՁԷ

Եթէ *զախտս և զհիւանդութիւնս և* զմահս տարա– ժամս (ժամանակէ առաջ, տարաժամիկ ուրիշ պատճառով մահ, եօլէմ) *և* զբնաւ իսկ զմահ (նոյն իսկ մահը) *ի չարէ ա– րարչէ* իմանայցեն (կարծել, ենթադրել), *մեք զցաւոց և զմահուան բազում ինչ պատճառս ունիմք ճշմարիտ բանիւ ի մէջ բերել*։ *Նախ այն իսկ զի յորժամ մարդն* զԱստուծոյ պատուիրանաւն անց (շնչահեց), *ապա եղեւ* ընդ ցաւովք եւ ընդ մահուամբ (հէշտանդութեան և մահուան ենթակայ)․ *քանզի ցկինն ասաց*․ Է՜ցաւովք *և տրտմու–*

թեամբ որդիս ծնջիր . և ցայրն՝ թէ Աշխատութեամբ և քրտամբ երեսաց քոց կերիցես զհաց քո ։ Ապա յայտ է զի , թէպէտ և բնութիւն մարդոյ , քանզի մարմնապատ (նէպաթ , նարմինէ քաղադըլեալ) է , ընդ ցաւովք և ընդ մահուամբ կարծէր , այլ թէ կացեալ էր ի պատուիրանին (դադաէրը քանել) , պահէր զնա՝ կենդանարարն կենդանի . զի որ յոչընչէն կարող եղեւ զշունչ (օգէ , նարգաա ջէջ կենդանաթեան դադծաաք) մարդոյն առնել , նոյն և զմարմինն զոր յերկրէ ստեղծ՝ կարող էր պահել կենդանի ։ Այլ ասեն . Եթէ ոչ մահկանացու իսկ էր մարմին , զի՞րդ էր զի վասն դոյզն (ջօէր , քեքեա) յանցման անկանէր ընդ մահուամբ , և ոչ արգահատէր (ջըղջեալ) նմա արարիչն և ներէր յանցմանն ։ — Զի ներող և արգահատող է արարիչն , այն ամենեցուն իսկ յայտնի է , և առաւել յայնմանէ յայտ է , զի յետ յանցանելոյ (յանցան+ ընել) մարդոյն իջեալ անմարմինն (Աստուած) իբրեւ զմարմնաւոր ոք ոտնաձայն առնէր ի դրախտին , և մեղմով և աղերսայից բարբառով (ճաղցր ձայնով) ասէր ցյանցուցեալն . Ո՞ւր ես Ադամ . զի մի տագնապեցուցեալ (նեղը դնելով , շփոթեցնելով) չտացէ յուշաբերել նմա ապաշխարութեան (ապաշխարել խորհել) . և զի չեկն ի զղջումն , յիրաւի կրեաց պատիժ զմահ ։

Եւ ընդէ՞ր , ասեն , տարաժամ մահք լինիցին ։ — Առնին (կ'ըլլան , պէտք կ'առնենան) մահք տարաժամք , զի յամենայն տիս և ի բոլոր (ամէն) ժամանակս պատրաստական (դադրաաթ) մարդոյն դտեալ ըզգեղծիցի (չըլլալով , անհոգ ըլլալ , զխաարէ) յաստուածպաշտութենէ ։

Իսկ վասն ցաւոց (ցաւ , հիւանդութեան , ախտ) , ասասցուք . Են ցաւք որ վասն մեղաց լինին , և են՝ որ վասն փառաց Աստուծոյ , և են ցաւք որ ի չկշռելոյ (անհաւասարակշռութենէ) խառնուածոց լինին ; Քանզի մարդոյ մարմին ի չորից տարերց (նիւթ) խառնեալ (քաղադըլեալ , ձուլեալ) է . ի խոնաւութենէ , ի ցամաքու–

թենէ, ի ցրտութենէ և ի ջերմութենէ. և եթէ մի ինչ (ի սոցանէ) պակասիցէ կամ յոլովիցէ (ահընայ), ցաւս գործէ (կը պօզար) ի մարմնին. և այն կամ ի շատ ուտելոյ և յըմպելոյ լինի, կամ ի սաստիկ պահոց, կամ յանխտիր կերակրոց, կամ յոյժ ի տօթի աշխատելոյ, կամ կարի ի ցրտոյ լլկելոյ (նեղանալ), կամ յայլոց ինչ այնպիսեաց հակառակորդաց (իրարու հակառակ բան), որովք անկարգութիւնք (անկանոնութիւն, անկարգութիւն) ի մարմինս գործին (կ՚ըլլան, կը պատճառեն)։ Եզնիկ Ա։

ԹԷ ԸՆԴԷ՞Ր ԵՆ ԴԻՒԱՀԱՐՈՒԹԻՒՆՔ

Եւ դիւահարութիւնք վասն հպարտութեան մարդկան լինին. քանզի եթէ որդի ուրուք մտավարժ (խելօք, հլու, հնազանդ) իցէ, գան ոչ ըմպիցէ, և որ չէն մտավարժ (խելօք չեղողին) բազում անգամ զծառայ այր առաջի նորա զան հարկանեն (ծեծել), զի ի նա հայեցեալ, ընդ այն (անոր) լինիցի մտավարժ (խելքը գլուխը գալ, զգաստանալ), ապա եթէ և այնու եւս ոչ խրատիցի (ազդել), ի նա իսկ մատուցանեն զտանջանսն։ Տանջին անմեղք, զի ի մտի կալցին (միտքը պահել, յիշել) այլք զբան իմաստնոյն որ ասէ. Եթէ արդարն հազիւ (դատաւորն) կեցցէ, ամբարիշտն և մեղաւորն ո՞ւր գտանիցին։ Այսպէս Աստուած սակաւուց տանջանօք աժէ յերկիւղ եւ ի խրատ (կը փոխէ եւ կ՚աւրէ) զբազումս։

Դեւ մտանելոյ ի մարդ չունի իշխանութիւն առանց Աստուծոյ թոյլացուցանելոյ (թոյլ տալ). և յայտ անտի է զի յորժամ ի խոզից երամակն մտաբերեցին (առջեւէն, յանդգնեցան) մտանել, ոչ կարացին մտանել եթէ ոչ նախ ի Քրիստոսէ առին հրաման։ Եւ յորժամ զՅոբն կամեցաւ փորձել սատանայ, ոչ իշխեաց (համարձակեցաւ) ժտել (յանդգնել) եթէ ոչ նախ յԱստուծոյ առ հրաման։ Եւ զՅուդայէ ասէ գիր թէ Ընդ պատառոյն եմուտ ի նա

սատանայ։ *Զի թէ չէր Քրիստոսի թոյլացուցեալ եւ սատանայի որ գրգռէրն, եւ Յուդայի որ վասն* կծծութեան (ագահութեան) եկն (յեծարեցաւ) *յայն*, *ոչ իշխէր մտանել ի նա չարն*. *այլ* վասն յանդիմանելոյ (ցուցնելու-համար) *զանձնիշխանութիւն երկոցուն՝ թոյլացոյց ըստ կամաց երկոցունց*։ *Նաեւ եթէ ոչ Աստուծոյ սաստ պահէր*, ազգի ազգի (տեսակ տեսակ) *խեղութեամբք* խեղէին (աղարտել), *և* անճնարին (շարաշար) *մահուամբ սպանանէին դեւք զպաշտօնեայս իւրեանց*։ *Բայց Աստուած որպէս* առնելոյն (ստեղծելու) *տէր է*, *նոյնպէս և* ի դարմանսն վայելեցուցանելոյ (տարմանել, տանել) *և ի ըկանաց չարին ապրեցուցանելոյ*. *զի* ոյր իւր ինչ որ է՝ յիւրն զընդայ եւ խնայէ (մարդ ինչ որ իրենն է՝ անոր հոգ կը տանի, կը խնայէ), *և* որ ոչ է իւր (ինչ որ իրենը չէ), զօտարին ոցտէ եւ ցրէ (ուրիշինը կը ցրուէ)։ *Այլ ճշմարտից հաւատացելոց ոչ սատանայ փորձութեամբքն կարէ* ստնանել (ջնջել, ներգործել), *և ոչ կախարդք դիւօք*։ *Նաեւ տեսանեմք իսկ զկախարդսն միշտ* ծնգեալս (ծերացեալ, նիհարացեալ) *ի դիւաց*, *և մանաւանդ* մոլիքն (տատանուած–քները, երերուն տեղափոխական շարժումներ ընողներ) *խոստանան տալ որ չիցէ ի ձեռս՝ ոչ նոցա և ոչ դիւաց*։ *Բայց*, *ասեն*, *կախարդք* մարթեն (կրնան) *անդէն կապել զդեւն*, *զի հանապազ* խեղդ ընդ անձն (կապել, կաշկանդել) *հոգւոց մարդոյն դեւն լինիցի*։ *Եւ արդ*, քան անդէն կապել կախարդացն զդեւն եւ խեղդ ընդ անձն միշտ ոգւոց մարդոյն առնել, լաւ էր թէ յայտնէր (կախարդաց յետոյ դեռ մարդուն հոգւոյն մէջ կապելէն ետքը, աւելի աղէկ էր որ յայտնուէր ան), *և սրբովք աղաչեցեալ զԱստուած՝ օգնականութիւն գտանէր բուժելոյ ի չարէն*։ Եզնիկ Ա.։

ԹԷ ՈՅՔ ԵՆ ԱՆՄԱՐՄԻՆ

Եւ զայն եւս պարտիմք գիտել թէ հրեշտակք և դեւք և ոգիք մարդկան անմարմինք են ։ Հոգիս կոչեն գիրք զհրեշտակս վասն արագութեանն *(արագաշարժութիւն)*, *որպէս թէ ասիցէ թէ քան զհողմս թեթեւք են ։ Քանզի ոգւոյ և հողմոյ անուն Եբրայեցերէն և Յունարէն և Ասորերէն նոյն է . նա թէ և Հայերէն ոք* մանր *(ճշդիւ) միտ դնիցէ , նոյնպէս գտանէ ։ Յորժամ* տագնապեալ *(փութացնել, արտորել) ոք յուսմեքէ իցէ , ասէ ։ Ձեռ ոգի կլանել, Ձեռ ոգի առնուլ . և այնու զօդոյս զոր միշտ* ծծեմք *(ներս կ'առնենք)՝ յայտ առնէ ։*

Երեքեան չոկքս այսօրիկ *(այս երեք դասը, խումբը)՝ հրեշտակք , դեւք և մարդիկ , քանզի* համաբնեայք *(բնութենակից, նոյն բնութիւնն ունեցող) են , նմանագոյնս և նովին իսկ անուամբ ոգի անուանին ։ Ասի հրեշտակ ոգի , այլ ոգի* հարկաւոր *(պարտաւորող) , որ է հնազանդ և կամակատար . ասի և դեւ ոգի , այլ ոգի չար վասն անհնազանդութեանն և ապստամբութեան . զոր թէպէտ և ի մեր լեզու այս չար ասեմք , որպէս* ի խտրանաց հարցն մերոց առաջնոց ըստ սովորութեանն ի մեզ կարգելոյ *(մեր նախնեաց ըրած տարբերութիւններն սովորութեամբ մեզի եկած է) , այլ գիտեմք եթէ այսն հողմ է , և հողմն ոգի ։ Քանզի յորժամ մեք ասեմք* սիւք *(հով) չնչէ , Ասորնայք (Ասորիք) ասեն՝ Այս չնչէ ։ Այս ամենայն ասացաւ զի ցուցցի թէ որ ինչ երեւի՝ մարմնաւոր է , և որ ինչ ոչ երեւի՝ անմարմին ։ Եւ ի մարմնաւորաց են որ* թանձրամարմինք *(թանձր , խիտ) են , և են որ* անօսր *(բարակ , անզգալի) մարմինք ։* Եւ միանգամայն իսկ ասացեալ *(մէկ խօսքով, համառօտելը) որ ինչ* ի զգայնոցս *(զգայարանք, զգայարանօք)* շօշափի *(կը բռնուի ձեռքով) , կամ* զննի *(կը տեսնուի աչքով) և* ազդի *(կը զգացուի մարմնով)՝*

այն մարմնաւոր է. և որ զգայնոց ոչ ազդի՝ անմար-
մին։ Նուրբ է տարր լուսոյ (ըշըղըն նուրու), այլ զի ա-
կամբ զննի՝ մարմնաւոր է. Նուրբ է տարր հրոյ, այլ
զի ջերմութեամբն ազդի մարմնոյ՝ մարմնաւոր է։ Նշ-
նիկ Ա.։

ԹԷ ՅՈՒՇԿԱՊԱՐԻԿՔ, ՋԻԱՑՈՒԼՔ, ԱՅԼՈՎՔՆ ՀԱՆԴԵՐՁ ԱՌԱՍՊԵԼՔ ԵՆ

Գիրք (Աստուածաշունչը) յուշկապարկաց ասեն բնա-
կել յաւերակս. Յոյն լեզու իշացուլս ասէ։ Այլ գիրք
ըստ մարդկան կարծեաց եկեալ (մարդոց կարծիքին յարմա-
րելով) ասեն առ ի նշանակելոյ զսաստկութիւն (շատ ծանր
ըլլալը) աւերածի աշխարհին։ Արդ ցուցցեն թէ գտա-
նիցի՞ն իշացուլք ի Բաբելոնի։ Ապա ուրեմն յայտ է ե-
թէ անուանք առանց անձանց (գոյութեան) են յուշկա-
պարկացն և ձիացլուց, և գիրք ըստ կարծեաց մարդ-
կան եկեալ նոյնպէս անուանեցին՝ առ ի զաւերն Բա-
բելոնի նշանակելոյ։ Ջծովացուլն ի կովէ ելեալ ասեն,
և զպայն (մարդակերպ աստուածներ կենդանի) իմն ի մարդ-
կանէ, և զառլեզն ի շանէ. և այն (ասոնք) ոչ էթէ ան-
ձինք ինչ են (գոյութեան ունեցող բաներ չեն), այլ ան-
ուանք զբանգտանաց (երեւակայական, կեղծ) և բաջաղանք
մոլորելոց մտաց ի դիւաց։ Ոչ երբէք ի մարդկանէ ել-
եալ է պայն, և ոչ ի կովուց ծովացուլն ելեալ (է) ե-
թէ ի ծովակս (լիճ) բնակիցէ, և ոչ ի շանէ ինչ ելեալ
է, զոր առլեզն կոչեն, և ասեն եթէ ընդ աներեւոյթ
զօրութիւնս ինչ կեցցէ, և յորժամ վիրաւոր ոք անկ-
եալ ի պատերազմի գնիցի, լիզիցէ և ողջացուցանիցէ։
Այս ամենայն առասպելք են և պառաւանց դրոցիւնք
(պառաւի մասալ)։

Այլ և վիճեալ եւս պնդին ի բանիցն վերայ (և քա-
ռածներին կը պնդեն)։ Մին ասէ թէ ի մերում գեւղ ծովա-

ցուլ զկով գործեաց, և զգոշիւնն (յոյնը) հանապազ մեք լսեմք ամենեքեան ։ Եւ մեւսն ասէ ․ Զպայն իմ իսկ աչօք տեսեալ է ։ Միթէ և զառլիզէ՞ն եւս ոք կարիցէ ասել թէ եւ զայն ուրուք տեսեալ իցէ ․ և եթէ յառաջին ժամանակսն արալէզք լիզէին զվիրաւորս և ողջացուցանէին (բըժշկցունել), արդ (հիմա) ընդէ՞ր ոչ լիզիցեն և ողջացուցանիցեն ․ ո՞չ (ո՞չ ապաքէն) նոյն պատերազմունք են, և նոյնպէս վիրաւորք անկանին ։

Այլ և վիշապք, ասեն, և ճիանձք (տեսակ մը առասպելեաց կենդանի) կերծու ի կերծս լինին (այլ և այլ կերպարանք կը մտնեն) յորոց մին անձնաւոր (գոյաւթեան ունեցող) է, և մեւսն չանձնաւոր ։ Վիշապն որ մարմնաւոր է՝ զիւր կերպարանսն ոչ կարէ փոխել ․ զի եթէ հնար ինչ էր մարմնաւորաց զկերպարանս փոխել, նախ մարդ որ առաւել (գերագոյն) քան զնոսա է՝ փոխէր զկերպարանսն յինչ և կամէր ։ Եւ վիշապք զտոհմականսն (ցեղը) արդեանց (արդարութեան, պտուղ) ոչ կրեն (տանել), և ոչ զրաստ (ցեղ կրող անասուն) գոյ նոցա, եթէ զարդիւնս ի կալոյ (կալ, ցորեն կասելու տեղ) ուրեք (տեղ մը) կրիցեն ․ և ի զուր է Կալ, կալն ասել ի կալս, և ոչ Առ, առ ։ Զի վիշապն որ ինքն գրաստ է, այնու զի անասուն և անխօսուն է, զիա՞րդ զայլ գրաստ վարիցէ (քշել, գործածել) ․ զի վիշապի այլազգ ինչ բնութիւն չէ երէ ոչ օձի՝ այն յայտ իսկ է (վիշապը, օձէ բնութենէն տարբեր բնութեան ունենալը յայտնի է) ։ Զօձ յաղթանդամ կամ զգազան ինչ ծովածին կոչեն գիրք վիշապ ։ Որպէս զմարդ յաղթանդամ հսկայ անուանեն, նոյնպէս և զօձ ցամաքային անճոռնի (խոշոր, անհեթեթ), և զգազանն ծովական լեռնանձեւ, զկիտացն (պալէնա) ասեմ և զդեղփինաց, վիշապս անուանեն ։ Ապա այլ ինչ ոչ են վիշապք՝ բայց կամ օձք մեծամեծք ցամաքայինք, կամ ձկունք անարիք (խոշոր) ծովականք, զորոց ասեն թէ լեռնաբերձք (լեռան պէս բարձր) և մեծամեծք են, և որս

և կերակուր նոցա մանր ձկունք են, որպէս և օձից մեծամեծաց՝ մանր ինչ ճճիք (անասունք)։ Եւ ոչ որս երբէք, որպէս մարդկան, արարեալ է վիշապաց կամ առնիցեն. և ոչ տաճարք իբրեւ մարդկան են նոցա ի բնակութիւն, և ոչ կոչք ի թագաւորազգեաց ունին կապեալ առ իւրեանս կենդանի։ Որպէս մոլորութիւնն դիւաց խաբեաց զդիւցապաշտս Հայոց, եթէ զումն Արտաւազդ անուն արգելեալ (քանդարկեալ) իցէ դիւաց, որ ցայժմ կենդանի կայ, և նա ելանելոց է և ունելոց զաշխարհս։

Այսպէս ի սնոտի յոյս կապեալ կան անհաւատք։ Այսպէս ջանայ սատանայ զի ամենայն ոք ի բարւոք ակնկալութեան (յոյս) վրիպեցուսցէ (զրկէ), և ի սնոտի յոյս կապիցէ։ Կարծեցուսանէ թէ նշանք ինչ իցեն գետոց, և շահապետք վայրաց (վայրի տեղեր). և յետ կարծեցուցանելոյ՝ ինքն կերպարանի (կերպի) կամ ի վիշապի կերպարանս կամ ի նշանգի իմն և ի շահապետի, զի այնու զմարդն յիւրմէ արարչէն թիւրեսցէ (խո-տորեցնէ)։ Զի եթէ էր ինչ նշանգն անձնաւոր, ոչ երբեմն ի կնոջ կերպարանս երեւէր, և երբեմն փոկ (խո-յեղ) լինէր և լուղորդաց (լողացող) ընդ ոտս անկեալ հեղձուցանէր։ Նոյնպէս և զոր շահապետ վայրաց կոչեն (շահապետ վայրաց կոչուածն ալ) ոչ մերթ մարդ երեւէր և մերթ օձ. և վիշապն ոչ մի անգամ օձաձեւ երեւէր, և միւսանգամ մարդակերպ։ Այլ թէ ի կալս ջորիք և ուղտք երեւիցին՝ դիւաց կերպարանք են այն, և ոչ վիշապաց. և եթէ ի դաշտս երազազանք (սուտ երազներ) ձգիցին, և հեծեալք իբրեւ զմարդիկ զհետ երեոյ (վայրի անասուն սուտ) արշաւիցեն, կեղծիք (երե-ւոյթ) դիւաց են և ոչ ճշմարտութիւն ինչ իրաց։ Եզնիկ Ա։

ԹԷ ԱՒԵԼԻ ՎՆԱՍԱԿԱՐ ԵՆ ՄԱՐԴԻԿ ԳԱԶԱՆԱՑ ՔԱՆ ԳԱԶԱՆՔ ՄԱՐԴՈՑ

Մարդիկ աւելի վնասակար են գազանաց քան գազանք մարդկան. զի սոքա ելեալ ի քաղաքաց և ի գիւղից՝ հետամուտք լինին (երթէ կ'էյան) կոտորելոյ (ջարդել, սպաննել) *զգազանսն, և նոքա* սրացեալք (փախչելով) *ի լերինս և* յափափայս (ղաւ ի վեր, ցից տեղեր) հեպեն անկանել փախստականք (կը փախին փախչելով ազատիլ). *յորոց կիսոցն և* մորիքն (որջ) արտաքոյ ընտելութեան մարդկան *են* (մարդոց ընտանութենէն հեռի): *Նոյնպէս և սողնոցն* զխօշիւն (ձայն, տռնձայն) *միայն զմարդոյն առեալ*, է որ (ոմանք) *ի ծակս, է որ* ի սորս (սողալով մտնելու ծակ), *է որ ընդ* փապարս (մէջը պարապ տեղ) *երկրի մտեալ* ղօղեն (թաքչին). *և եթէ* ի կարի (չափազանց) *ներղելոյ զնոսա մարդկան՝* մեղանչիցեն (մեղեն), այն մարդկան վնաս է (յանցանքը մարդոց է) *և ոչ նոցա: Նաեւ* չքոտեօքն (ճիճի) զկծեցուցանէ (ամչցնել, խանգրեցնել) *ըզմեզ* (Աստուած), *որպէս լուովն և ճանճիւ և* մժխով (մէկրէ մըծէք) *և* զոռեխով (ոթ մըծէք), մնով (մէկրէ մըծէք) *և մկամբ, և այլովք նոյնպիսեօք, որք չնչինք են, և զմեզ* աշխատ *կարեն* առնել (յոգնեցնել): *Եւ նոքօք* ցածուցեալ զնատուցանէ (կը խոնարհեցնէ) *զմիտս մեր. զի յորժամ գիտիցեմք թէ և փոքունքն կարող են մեզ վնասակար լինել, իջցուք* ի տարապարտ (պարապ, ունայն) *հպարտութենէ,* չունել զանձինս առ մեծարգիս (մենք զմեզ յարգի չհամարենք): *Եւ որ չնչենովքն զմեզ աշխատ առնէ՝ զմեծամեծսն հնազանդէ մեզ, զոր օրինակ զձիս և զուղտս և զփիղս և զարջառ և զոչխար. և ի լերանց և ի դաշտաց՝ զայծեմունս և զեղջերուս և ի գազանաց՝ զառեւծս և զինձս, զյովազս և զվարազս, որոց կէսքն* կրելիք (բեռ կրող) *են և կէսքն ու–*

տելիք, *և զկէսսն ի զբօսանս* ընտելացուցեալ համբուրեցուցանէ (ընտանեցնել)։ Եզն. Բ։

ԹԷ ԳՈՒՇԱԿՈՒԹԻՒՆՔ ՔԱՒԴԷԻՑ ԲԱԶԱՂԱՆՔ ԵՆ

Քաւդեայքն աստեղանշմարք (աստղերուն նայելով գուշակողներն ըսող) *զծննդոց պատճառս և զմահուանց յաստեղաց* դնեն (կը համարին, կ'ենթադրեն), *որպէս թէ յորժամ ծնանիցին* (*մարդիկ*), *անդրէն և մահուանքն իւրաքանչիւր ուրուք անվրէպ սահմանիցին*, *և* ըստ այն ոչ յառաջել ումեք մեռանել հնար իցէ, եւ ոչ յամենալ (սահմանուած ժամանակէն ոչ առաջ կրնայ մէկը մեռնիլ ոչ ալ ետքը)։ *Այլ յանդիմանեն զնոսա պատերազմացն դէպք*, *զի ի միում աւուր բիւրք բիւրուց մարդկան կոտորին և այլեւայլ* տիոմք (տարիքով), *կէսք* մատաղօրեայք (տղայ), *և կէսք երիտասարդք*, *և այլք ի կատարեալ հասակի ծերութեան. որոց ծնունդքն ի միում ժամու չէին՝ մահքն ի միասին եղանին։ Եւ դարձեալ*, *եթէ յաստեղաց էին պատճառք ծննդոց*, *ընդէ՞ր ի* Հնդիկս (Հնդկաստան) *ոչ ոք երբէք սպիտակ ծնաւ*, *և ոչ* յայլ աշխարհս (ուրիշ երկիրներ) *այնպիսի ինչ. մինչ թէ ա՞նդր միայն ոչ եհաս աստղն սպիտակարար*, *և ոչ յայլ աշխարհս՝ աստղն սեւագործ*։

Դարձեալ բախտաւորութեանց և չուառութեանց զաստեղսն դնեն պատճառս։ *Մինչդեռ առեւծն*, *ասեն*, յաստեղատանն (համաստեղութեան) *իցէ և ծնանիցի ոք՝ թագաւոր լինելոց է. և մինչդեռ եզն է և ծնանիցի ոք՝ հզօր և* բարենշան (յաղթող, երջանիկ) *գալոց է*, *և մինչդեռ խոյն է և ծնանիցի ոք՝ մեծատուն լինելոց է*,։ *և* որպէս նայն (անոր պէս)՝ թաւ եւ ասուեղ (մազոտ և բրդոտ), *և յորժամ կարիճն է և ծնանիցի ոք՝ չար և* մեղանչական ([illegible]) *լինելոց է*։ *Դարձեալ* (*ասեն*) *թէ յորժամ* կռոնոսն *յաստեղատունն մտանիցէ*, *թագա-*

ւոր մեռանի, որպէս եղեւն իսկ Երկիցս (Երկու անգամ) առ Թէոդոսիւ կայսերբ, և քաղդեայքն պնդեալ էին թէ մեռանի թագաւորն, և նա ոչ մեռաւ, զի յամօթ լիցի (խայտառակուէ) սափաառուստ (սուտ) արուեստագիտութիւն նոցա։

Դարձեալ, եթէ, յորժամ առեւծն իցէ յաստեղատանն, թագաւոր ծնանելոց է, բազում անգամ բազում թագաւորաց պարտ էր ծնանել, զի ոչ մի ոք միայն ծնանի յորժամ առեւծն յաստեղատանն իցէ, այլ բազումք։ Եւ եթէ արդարեւ առեւծն էր պատճառ ծննդեան թագաւորաց, ապա ոչ թագաւորի որդի թագաւոր լինէր, այլ որ ուրուք և դիպէր (պատահէր) ծնունդն մտանելոյ առիւծուն յաստեղատունն։ Իսկ արդ տեսանեմք եթէ թագաւորի որդի թագաւոր լինի, որպէս Դաւթայ որդի Սողոմոն ի հօրն աթոռ նըստաւ, և նորա որդին ի նորա աթոռ, և մի ըստ միոջէ կարգ (շարք) թագաւորացն Յուդայ ձգեցաւ (քաշուեց, գնաց) մինչեւ ցՄակաբայեցիսն։ Նոյնպէս և զԱսորեստանեայցն և զԲաբելացւոցն՝ որդի ի հօրէ առնուին կարգաւ զթագաւորութիւնն։ Որպէս և ի Սասանայն ուժեմնէ Սասանականքն որդի ի հօրէ կարգաւ առին մինչեւ ցայսօր զթագաւորութիւնն Սասանականաց, և չգտաւ առեւծն յերկինս մտեալ յաստեղատունն, զի զթագաւորութիւնն յայլ ազգ ուրեք կարասցէ փոխել յերկրին արեւելից։ Եւ յայտ է թէ, որպէս թագաւորութեանն չէ աստղն պատճառ, նոյնպէս և ոչ զօրութեանն, և ոչ մեծատուն առնելոյ. մանաւանդ զի տեսանեմք զմեծատունս աղքատացեալս, և զաղքատս մեծացեալս (հարստացած)։ Միթէ և զա՞յն եւս կարիցեն ասել թէ մի և նոյն աստղ մեծութեան և աղքատութեան կարէ պատճառք լինել, եւ զօրութեան եւ տըկարութեան. քանզի և զհզօրս երբէք երբէք տկարացեալս տեսանեմք, և զտկարսն զօրացեալս, զչարսն զգօ–

նացեալս ([illegible]) , և զզգօնսն չարացեալս ։ Եւ ո՞ւր իցէ այն զոր ասենն թէ Որ ինչ ի ճակատագրին գրեալ է , այնմ չէ հնար վրիպել ([illegible]) ․ այլ որ փառաւորն ([illegible]) գրեցաւ՝ փառաւոր է , և չուառն ([illegible])՝ չուառ ։ Ո՛ հրաման ([illegible]) տկար , և անզօր սահման , զոր և գողքն և աւազակքն կարեն խախտել (տեղէն շարժել) , յորժամ ի վերայ հասեալ զոմն յընչից եւ յարեւէ արկանիցեն ([illegible]) ։ Եւ եթէ ի սահմանելոյ ինչ հրամանէ ([illegible]) իրքն գործիցին , չէ պարտ՝ ոչ թագաւորաց մահու հրաման տալ , և ոչ դատաւորաց քերել և սպանանել զմարդասպանն ։ Եւ կամ յորժամ հեն (առաջարկ) յաշխարհ արշաւիցէ՝ տեռազերծ առնել ([illegible]) և կոտորել զմարդիկ , մի զօրս ժողովեսցեն , և մի գունդս առ գունդս կազմեսցեն՝ հանելոյ ([illegible]) զհէնն յաշխարհէ , այլ իրաւունս տացեն թէ Հրամանք են ([illegible]) աշխարհին ի հինէ կոտորել , մեք ընդէ՞ր դառնայցեմք ընդդէմ հրամանացն ։ Այլ գումարելով զզօրսն և հանելով զթշնամին յաշխարհէ , ցուցանեն թէ ոչ ըստ սահմանելոյ ինչ հրամանի կոտորածքն գործիցին , այլ ի բռնաւորութենէ հինին որ եկեալ ժլատութեամբ (ագահութեամբ , աչք տնկելով) կոտորէ զաշխարհ , և մերկանայ յընչից և ի ստացուածոց ։

ԿԱՆԽԱԳԻՏՈՒԹԻՒՆՆ ԱՍՏՈՒԾՈՅ ՉԷ ՊԱՏՃԱՌ ՉԱՐԵԱՑ

Բայց և զայն եւս գիտել պարտ է թէ կանխաւ գիտէ Աստուած զամենայն , և կանխագիտութիւն նորա չէ պատճառ չարեաց ։ Քանզի և ոչ , յորժամ տեսանիցէ ոք զընկեր իւր ընդ լպիրծ ([illegible]) տեղիս գնացեալ , և ասիցէ թէ Գլորելոց է ([illegible]) , նա ինչ եղեւ պատճառք գլորման ընկերին ։ Եւ ոչ , յորժամ ընդ

աւազուտ տեղիս դիմեալ զընկերն ոք տեսանիցէ , և ասիցէ թէ Եղեւն գտանէ (ըսել է , դժբախտութեան դէպք հանդիպի) , Նա ինչ իցէ պատճառք մնասուն։ Եւ ոչ , յորժամ զաղնուականի ուրուք որդի յաղակատանս հասեալ (շարալութեան , ձեղխութեան հաւած) տեսանիցէ ոք , և ասիցէ թէ Կորուսանելոց է զինչսն հայրենիս , Նա ինչ իցէ պատճառք վատնելոյ ընչիցն։ Եզնիկ Բ։

ԹԷ ԳՈՆ ԲՆԱԿԱՆ ԱԶԴՄՈՒՆՔ ՑԱՆԱՍՈՒՆՍ

Ցանասունս են ազդմունք ինչ բնականք (բնական գիտցումներ , բնական կերպով , ու թէ փորձառութեամբ բան մը գիտնալ) , որովք հանդերձելոց իրիք իրաց ազդ լինիցի նոցա (ըլլալու բաները կ'իմանան) · որպէս ձիոյն՝ ի սմբակեն վարելոյ (չէ՛ կ'իմանայ առաջուց թէ ինչ ամպակը պիտի փոխուի , էյնայ) , և եզինն , ձմերանի ընդ ալուց կողմն (ախոռին վարի կողմը) նստելոյ , և մօտ ի գարունն ընդ դրաց կողմն դառնալոյ , և ծիծռանն՝ յառաջ քան զաչունն ի ջերին տեղիս (թաց տեղեր) ի ձմերոց երթալոյ (յօժան անցանելու երթալ) , և խորդոյն՝ իմանալ յառաջագոյն զձմերունս կարեւորս (խէօր յօտը) , և վաղ (կանաչախկէկ) ի մարմանդ տեղիս (օդը թեղմ տեղեր) փութալոյ , և ճայից՝ վաղագոյն տարմատարմ (խումբ խումբ) շրջելոյ , և աղաւնեաց՝ համագունդ (մէկտեղ) երամ երամ խաղալոյ (փոնդ փոնդ մնէլ) , և ագռաւուցն՝ ի ծմակաց (ցորեն և խոտա տեղ) ի ջերին տեղիս գնալոյ , որպէս և մրջեան՝ յամարանոյն (ամառուընէ) պատրաստելոյ զկերակուրն , և ընդ երկուս զհատն կարելոյ զի մի բուսանիցի , և ի չեր ժամանակս (դուրս օրերը) հանելոյ զկտիկն յորջէ անտի և ցամաքեցուցանելոյ , և մեղուաց՝ զդուրս մեղուանոցաց յառաջ քան զցուրտն ականամոմով (կէրպարոլու) խնլոյ (փոցել , Թէմէլ) , և արջոյ՝ յառաջագոյն քան զձմեռն ի բայոց մտանելոյ (ուրիշ մտնել յօտը

ֆնանալու), *և երէոյ՝ կանուխ ի լերանց ի դաշտ դիմելոյ ։ Այս ամենայն ազդեցութիւնք բնականք են յանասունս և ոչ* խորհրդականք (*մռայլ, մռթելով դէմքով*), *որ յարարչէն տնկեալ են ի նոսա՝ առ* ի յօժարելոյ (*ձգտել, տենչալ*) *յօգտակարն և* խորշելոյ (*ետ կենալ*) *ի վնասակարացն ։*

ԹԷ ԳՈՆ ԲՆԱԿԱՆ ԱԶԴՄՈՒՆՔ ԵՒ Ի ՄԱՐԴԻԿ

Եւ ոչ միայն յանասունսն են բնական ազդեցութիւնք, այլ և ի մարդկան որ խօսուածքն (*բանաւոր*) *և իմաստունք են ։ Որպէս յորժամ ակն խաղայցէ, բնական ազդեցութեամբ վասն զնորոգ ոք տեսանելոյ լինի ասեն նշանակ, որք այնմ ստէպ միտ դնեն ։ Յորժամ յերանս կամ յայլ անդամս միս խաղայցէ, նշանակ հեծանելոյ ուրուք է ասեն, կամ հանդերձս ազնիւս ա-*
գանելոյ (*հագնել*), *կամ սիրելւոյն պատահելոյ, կամ*
զան ըմպելոյ (*ծեծ ուտել*) ։ *Նոյնպէս յորժամ ոտն* կծի-
ցէ (*խօթուէ, ժէրուէ*) *կամ ձեռն, մին ասեն ճանապարհի գնալոյ նշանակ է կամ անձրեւի, և միւսն՝ առնլոյ ինչ յումեքէ կամ տալոյ ։ Նոյնպէս և* փնչելն (*ֆռնգտալ*) *և լեզուին կծել, ի բնական ազդեցութենէ անտի են զոր տնկեալ է արարչին յանդամս ։ Եւ* յօրանջելն (*երքժկտալ*) *և* ձգտել (*կէրէւէլ*) *ի մեղկութենէ և ի թուլութենէ մարմնոյն լինի ։ Ուստի զստէպ յօրանջելն և ձգտելն հմուտ բժիշկք* ի մրթելոյ (*ծուլանալ, շարժել*) *մաղասոց ասեն, զոր և փորձն իսկ յայտ առնէ, զի յորժամ ստէպ ոք յօրանջիցէ,* սարսափիւն (*դող*) *գայ զոսկերօքն և* քստմունք (*դող, սարսուռ*) *գնան ընդ անդամսն ։ Եւ փնչելն կամ ի ցրտոյ լինի և կամ վասն այլ իրիք բնական ազդեցութեան ։ Նաեւ* յոգւոցն հանել (*հառաչել*) *երբեմն յիշատակաւ լինի, և երբեմն առանց յիշելոյ զոք ։ Յոգւոցն հանել՝ յորժամ ոչ զոք կամ* զինչ

ինչ բարի (բարի բան մը) *կամ* զկարիս (կէր+ , մէշր) *յի-չելոյ լինիցի , բնական ազդեցութիւն է . և յորժամ յիշատակաւ լինիցի , կամ առ սիրոյ սիրելւոյն լինի , կամ առ անարժանս ինչ և զվնասս* աշխարելոյ (ողբոլ, ցաւէլ) ։

ԹԷ ԱՅԼ ԵՒ ԱՅԼ ՊԱՏՃԱՌՔ ԵՆ ԵՐԱԶՈՑ

Եթէ երազոցն այլեւայլ պատճառք են ։ Է ինչ (բան կայ որ՝) *զոր ցերեկ* ընդ բերան ածիցէ *մարդն* (վրան կը խօսի) *, ի նոյն և ի դադարել մարմնոյն և ի քունն զբաղ-նուն միտքն , և է ինչ՝ զոր բնաւ չիցէ ածեալ զմտաւ , և տեսանէ յերազի ։ Եւ ոչ ամենայն* թալանայ (մօրէլ) *և* ցնորել (մօլէֆնէլ) *մարդկան ի դիւէ է , այլ է. որ ի մաղձոյ է , և է որ ի մաղասէ , և է որ* յուղղոյն սնա-նալոյ (աղէղին պօրպօսնէլէն) *, և է որ ի ստամոքսէ խան-գարելոյ , և է որ* յորովայնէ խստանալոյ (փորէ ղնտօ-բեւնէ)*, մինչեւ ցփրփրել անգամ և զաչս* յեղլեղուլ (տօր-ջընել)*։ Այլ յուղղոյն սնանալոյ և ի մտաց իսկ անկանի մարդ , և խօսի ընդ որմս , և կագի ընդ հողմս ։ Ուս-տի բժիշկք յամառին թէ բնաւ չիք դեւ որ ի մարդ մտանիցէ , այլ ցաւք են այն , և մեք* դարմանովք (տե-ղեր ընելով) *կարեմք բժշկել ։* Եզն. Բ ։

ԹԷ ԱՍՏԵՂՔ ՉԵՆ ԿԵՆԴԱՆԻ . ԱՅԼ ԵՆ ՊԱՏՃԱՌՔ ՊԷՍՊԷՍ ՓՈՓՈԽՄԱՆՑ ՑՈԴՍ

Աստեղք , ասեն , եթէ չէին կենդանիք , եւ ոչ գնա-յունք էին (երբ կենդանի չըլլային , չէին քալէր) *. բայց զի գնան , յայտ է թէ կենդանիք են ։ Արդ լուիցեն . Եթէ ամենայն ինչ որ գնայուն է՝ կենդանի իցէ , ապա եւ ջուրք որ գնան՝ կենդանի համարեսցին , և կրակ վասն շարժելոյն՝ կենդանի կարծեսցի , և օդք և հողմք վասն

չնչելոյն՝ կենդանի հաշուեսցին, և տունկք և խոտոց բոյսք, որ թէպէտ յամրագնացք են. սակայն աճելովն երեւին թէ գնայունք են։ Այլ լուսաւորք վասն լուսատու լինելոյ միայն արարան, և ցուցանելոյ ժամանակս և զնշանս անձրեւաց և զօդոց փոփոխմանց (*եղանակները*)։ *Որպէս և տէր մեր ասէ. Ցորժամ տեսանիցէք ընդ առաւօտս զերկինս կարմրացեալ, ասէք թէ անձրեւ լինելոց է, և լինի։ Քանզի ընդ ծագել արեգական, օդոյն զխոնաւութիւն ջուրց առեալ՝ զճառագայթիւք արեւու արկանէ. և քանզի չեւ եւս է թանձրացեալ և ամպացեալ օդն, սոսկաւին մի արգելլովն զնշոյլսն՝ կարմրացուցանէ միայն* զարեւն (*արեւին լոյսը*), *և ոչ մթացուցանէ. ուստի երեւի թէ անձրեւի նշանակ է։ Նոյնպէս և լուսին ի խոնաւութենէ օդոց նեղեալ, ջանայ յիւրմէ զխոնաւութիւնն* ի բաց պարզել (*Գէնտէ ընել*)։ *ուստի մերձեալ խոնաւութեանն և ի նա չհասեալ՝* բակ առեալ ծրանոյ շուրջ զնովաւ (*Պուլուտէ կը պատէ*). *սովիմբ* յայտ առնի (*յայտնի կ'ըլլայ*) *անձրեւաց նշանակ։ Եւ այն ոչ միայն ի լուսնի, այլ և ի ճրագի որ նուազագոյն լոյս է՝ եւս երեւի։ Յօդ սաստիկ, ասեն,* արկանէ (*կը ծաթէ*) *արեգակն յաշխարհին (ուր ծագէ), ուստի յայտ է թէ ի ծովէ ելանէ։ Եւ զայն ոչ գիտեն թէ զօդոյն, որ* ցայգ (*գիշերը*) *ունու ի խոնաւութենէ ջուրց, հասեալ ջերմութեան ճառագայթից արեգականն,* շքեցուցանէ ի բաց զտամկութիւնն (*խոնաւութիւնը տարր տալ կու տայ*), *ուստի ոչ միայն անդ, այլ և յամենայն երկրի ընդ* արեւածայրս (*արեւուն ծագած տեղը*) *ցօղ անկանի։*

ՄԵԿՆԻՆ ԵՐԵՒՈՅԹՔ ԻՆՉ ԲՆԱԿԱՆՔ

Այլ և երկիր, ասեն, ի միջոցի (*կեդրոն*) *կայ։ Եւ տան օրինակ ինչ այսպիսի։ Զփամփուշտ, ասեն, յոր—*

ժամ փչել կամիցիս , ընկեա ի ներքս հատ մի կորեկան . և փուքն որ ի փամփշտին արգելու (կ'ուրճելուն , կը Ճռայ)՝ *առնու զկորեկահատն և ի միջոցի ունի , ոչ ի վեր տայ գալ և ոչ ի խոնարհ ձգել ։ Նոյնպէս , ասեն , և օդս որ ի մէջ գնդին երկնից փակեալ կայ՝ ունի զաշխարհս* ի հաստարակածի (Դէջ տեղը) , *ոչ ի վեր տայ վերանալ , և ոչ ի խոնարհ* հակել (Ծռել, Դ- տել)։ *Նաև յիւրեանց իսկ բանիցն յանդիմանին , զի ասեն թէ որ ինչ թեթեւ է՝ ի վերին կողմն գնայ , և որ ինչ ծանր է՝ ի խոնարհ ։ Որպէս և փորձ իրացն յայտ առնէ . զի ծուխ և* շոգի (ֆուլուշէ) *երկրի և բոց հրոյ , քանզի թեթեւք են , ի վեր կողմն գնան . և զքար և զերկաթ և զփայտ և զայլ եւս ինչ նոյնպիսիս , որչափ և ի վեր ոք* ձգիցէ (Նետել) , ի խոնարհ (Վար) *միտեալ իջանեն ։ Եւ եթէ զսակաւ ինչ զծանրութիւնս ոչ կարէ օդն ի վեր առնուլ ունել , ո՞րչափ եւս առաւել զայնչափ ծանրութիւն երկրի չէ հնար օդոյ ի վեր ունել ։*

Լուսին , ասեն , երեսուն օր անցեալ ընդ ամենայն աստեղատունսն (համաստեղութիւն , կենդանակերպ) , *այսինքն ընդ ամենայն երկինս , հասանէ ի նոյն տեղի , և արեգակն՝ ի տարւոջ ։ Եւ երկինք զմի տիւ և գիշեր* (24 ժամ) առածեալ զինքեամբ (էր վրայ Բոլորելով, դառնալով) , շրջին (կը դառնան) *ի նոյն տեղի ։ Եւ եւթն աստղ միայն է գնայուն , և այլն ամենայն բեւեռեալ են յերկինս . և որ* գնայունն աստեղքն (մոլորակ) *են , արեգակն և լուսին և այլ եւս հինգ աստեղք , ոչ եթէ յարեւելից յարեւմուտս գնան՝ այլ յարեւմտից յարեւելս ։ Եւ տան օրինակ ինչ ։ Յորժամ , ասեն , անիւ* շրջանակիցի (կը դառնայ) , *և մրջիւն մի* ի խեցին (անուէն շըջանակէն վրայ) *գնայցէ յարեւմտից կողմանէ ընդ արեւելս , վասն անուին արագագոյն ընդ արեւմտից կողմն շրջելոյ՝ թուի թէ մրջիւնն յարեւելից յարեւմուտս* կոյս

(կողմ) ընթանայցէ · այլ նա ոչ յարեւելից յարեւմուտս կողմն գնայցէ, այլ յարեւմտից յարեւելս, և անխուն ստէպ շրջելովն այնպէս երեւեցուցանէ ։

Եւ երկինք, ասեն, որչափ ի վեր են, դոյնչափ ի խոնարհ են, և դոյնչափ յամենայն կողմանց շուրջ զերկրաւ ։ Եւ զերկինս շուրջ ջուր պատէ, և զջուրն և զերկիր՝ օդ, և զօդն և զջուր և զերկիր՝ հուր ։ Եւ լուսնի չիք իւր լոյս առանձինն, այլ յարեգակնէ գայ ի նա լոյսն · և յայտ անտի է, ասեն, զի յորժամ կուսէ արեգակն իցէ, յայնմ թերէ (կողմ) սկսանի ի նմա լոյս ծնանել, և ըստ հեռաւորութեան արեգականն սակաւ գայ ի նա լոյսն (որչափ արեգակը կը հեռանայ, այնչափ իր լոյսը կու տայ լուսնին), և ըստ տակաւ տակաւ (կամաց կամաց, աստիճանաբար) մերձենալոյն՝ յաճախէ (կը շատնայ) ի նա լոյսն · և յորժամ մօտ հասանէ ի նա՝ լնու, և յորժամ անցանէ զարեգակամբ՝ սկսանի տակաւ նուազել, և որչափ ի բացն հեռանայ, այնչափ պակասէ ի նմանէ լոյսն, մինչեւ ամենեւին նուազէ · և յորժամ միւսանգամ հանդիպի, ծագէ ի նմա սակաւիկ ինչ ի լուսոյն վասն հեռաւորութեանն, և որչափ մերձենայ, այնչափ առ սակաւ սակաւ աճէ ի նա լոյսն ։

Եւ լուսին, ասեն, ի ներքոյ (վար, ստորին, տակը) է քան զարեգակն և քան զամենայն աստեղս, և քանզի ի ներքոյ է, յորժամ կշիռ դէպ արեգական (ճիշդ արեգականը դիմացը) պատահիցէ, յայնժամ խաւարի արեգակն ։

Օդ ընդ ջուրս և ընդ երկիր (հող) խառն է ։ Եւ զի ընդ ջուրս օդ խառն է՝ ի զեռնոցն յայտ է որ ի ջուրսն զօդոյն կենդանութիւն ծծեն ։ Եւ զի ընդ երկիր նոյն օդ խառն է, յորժամ անձրեւ լցեալ իցէ և արեւ տայցէ, ի գոլորշոյն որ ի սրտէ երկրին ի վեր ցոլանայ՝ (կ'ելլէ) յայտ յանդիման երեւի ։ Եւ զի ընդ օդս հուր խառն է, ի փայլատականց որ ի շփելոյ ընդ միմեանս հողմոյն և ամպոց արձակին՝ յայտ յանդիման ցուցանի ։

Եւ դարձեալ, եթէ յապակի սպիտակ արկեալ ջուր յարեւու ունիցիս (արեւէն լուսին Փէշէնէնէ), լուսաւորու-թեան արեւուն մտեալ ընդ սպիտակութիւն ապակ-ւոյն, և ընդ յստակութիւն ջրոյն օդով թափանցանց անցեալ՝ հուր ծնուցանէ։ Եւ զի ընդ ջուրս հուր խառն է, ի քարանցն հանելոյ ի ջրոյ՝ զոր ընդ միմեանս շփի-ցեն և հանիցեն հուր՝ յայտ յանդիման ցուցանի. և գիշերի, յորժամ առ ծովեզեր. կայցես և զջուրն ծքբի-ցես (խառնել), նշոյլք լուսոյ հատանին (կ'արշակոսին)։ Եւ զեռունքն որ ի ջուրսն ի ներքս են՝ ի չորից հիւթոցն յօդեալ (բաղադրեալ) են, յերկրէ, ի ջրոյ, յօդոյ և ի հրոյ, որպէս և ամենայն մարմնաւորք որ ի ցամաքի են։ Զի այնպէս կազմեաց Աստուած զաշխարհ. նախ զչորս հիւթսն մեկնեալս (ղօր ղօր) արարեալ (օրեղծել), ապա նոքօք յօդեաց զամենայն. և միոյ արարչի գործ է ամենայն ինչ, և նոյն վարէ (կառավարել) և տածէ (կը նախախնամէ, կը պահպանէ) զբնաւ (անձը)։ Եղն. Գ.

ԹԷ Ե՞ՐԲ ԵՂԵՒ ՍԿԻԶԲՆ ՀԵԹԱՆՈՍՈՒԹԵԱՆ

Հեթանոսութեան սկիզբն ի Սերուքայ ժամանակաց անտի եղեւ, զի որ լաւ ոք եկեալ յաշխարհ՝ մեռանէր, վասն յիշատակի քաջութեանն (աղէկօրէն, առատօրէն) զպատկերն երանգօք (տօյն, ներկ) ի նկարու հանէին (կը նկարէին). և անտի առեալ տխմարաց՝ տակաւ (կամաց կամաց) ի պաշտօն առնուին (կը պաշտէին)։ Եւ կռոց (կանոնով, կանոնաւոր շինուած արձան) և դրօշելոց (դրօշմով, փորելով շինուած արձան) հանգամանք (տիպար, օրինակ) առ Թարայիւ հարբ Աբրահամու (եղեւ), և անտի (անկէ, անկէ ետքը) իւրաքանչիւր ոք իւրով արուեստիւ զնոյն դրօշէր (արձան շինել). դարբինն՝ դարբնութեամբ, հիւսնն՝ հիւս-նութեամբ, արծաթագործն և պղնձագործ և քարա-կոփ և բրուտ՝ իւրաքանչիւր արուեստիւ։ Եւ անտի

կարգեալ (յօնըրդաքեար ֆէն) հատանէր յՆգիպտացիս, ի Բաբելոնացիս և ի Փռիւգացիս և ի Փիւնիկեցիս գործ դրօշագործութեան և խորհուրդք (ֆալըննէ) նորին, և ապա ի Հելլէնս որ են Յոյնք, առ Կեկրոպաւ։ Եւ Հելլէնք կոչին Յոյնք յառնէ միոջէ որում Հեղինոս անուն էր յՆլլադացւոց աշխարհին։ Բայց այլք ասեն եթէ ի ձիթենւոյն որ յԱթէնս բուսաւ իւրովի (քէնտի) · վասն զի ձիթենի Յունարէն էլէա կոչի։ Եզն. Գ։

ՈՍԿԵԲԵՐԱՆ

ԹԷ ԾԽՈՅ ՆՄԱՆ ԵՆ ԻՐՔ ՄԱՐԴԿԵՂԷՆՔ

Զոր օրինակ մարմին ի սուրբ (մաքուր) օդ վայելեալ՝ առողջագոյն լինի, նոյնպէս և ոգին զգաստագոյն (լինի) յորժամ հոգևոր զբօսանօք (գէզմանէօլ) բուծանիցի (անանէ)։ Զտեսանելիս և զմարմինս իսկ զաչս, յորժամ հանապազ ընդ ծուխ գայցեն ([illegible]), արտօսր բերեն (արցանէ կոռ տան), և յորժամ ի խաղաղ (հանդարտ) օդս և ի մարգս (խոտաւէտ տեղ) և յաղբերս և ի դրախտս զբօսնուցուն, առողջագոյնք և քաջատեսք (լինին)։ Նոյնպէս և մտացն ակն, եթէ յեղտիւրս (ջրաւէտ տեղ) հոգևոր բանից ճարակիցի, սուրբ (յատակ) և քաջատես լինի. իսկ եթէ ընդ ծուխ աշխարհի իրացս գայցէ, բժաբեր ([illegible]) արտօսրալից լինիցի. քանզի ծխոյ իսկ նման են ամենայն իրք մարդկօրէնք (մարդկային)։ Զիք ինչ որ այնպէս տրտմեցուցանէ զակն ոգւոց և պղտորէ, որպէս աշխարհական հոգոց բազմութիւնք, և չարեաց ցանկութեանց յաճախութիւնք (շատութիւն)։ Հուր, յորժամ զգեչ (թաց, խոնաւ) և զդալար (թաց) անտառօք վառիցի, ծուխ յոյովէ (շատ ծուխ կու տայ), նոյնպէս և ցանկութիւն յայնժամ սաստիկ մրրկի (մրրկէլ, մրրկէ կու ելնէ), յորժամ ի գէջ և ի լոյծ (մեղկ) ո-

դիսն բորբոքիցի։ Վասն այսորիկ ստէպ (*չար ադամ*) *պէտք են հոգեւոր ցօղոյն և խաղաղ օդոց, զի զհուրն չիջուցանիցեն, և զծուխն* պարզիցեն (*թէրտէ ընէլ, ֆարքել*)։ *Քանզի չէ և չիք իսկ հնար այնչափ չարեօք ծանրանալ, և ընդ երկինս թռչել. այլ պարտ և պատշաճ է զմէջս պնդել,* ժրանալ (*ուրքանալ*), *հաստանել անցանել զայն ճանապարհ։ Եթէ մտաց երադութեան և հոգեւոր շնորհաց պէտք իցեն ելանելոյ յայնպիսի բարձունս, յորժամ ոչ այնպիսի ինչ իցէ, այլ սատանայական ծանրութիւն, ո՞չ ապաքէն* ի խոնարհ (*վար*) սողիցիմք (*գոյմագ*)․ *զիարդ կարիցեմք ի վեր թռանել, ուր այնչափ ծանրութիւն ի վայր ձգիցէ։ Ոսկ։*

ԹԷ ՈՒՍՏԻ՞ ՑԱՑՑՆԻ ԼԻՆԵԼՈՑ Է ՀԱՒԱՏԱՑԵԱԼՆ

Հաւատացելոյն պարտ է պայծառանալ, և ամենայն ուստեք ծանօթաւոր (*յայգընէ*) *լինել, եւ* ի գնացից (*տալտանտ*) *եւ* ի հայեցուածոյ (*նայտանտ*), *եւ ի կերպարանաց, եւ* ի բարբառոյ (*ֆայն*)։ *Զայս ասեմ ոչ զի* ի ցոյց ինչ (*ադ էրէտ*)՝ *այլ յօգուտ տեսողացն զանձինս* յարդարեսցուք (*չրկէլ*)։ *Այլ զքեզ ուստի՞ կարիցեմ ճանաչել եթէ հաւատացեալ ես։ Եթէ ի տեղեացն կամիցիմ զքեզ* ճշգրտել (*օրտաքէլ*), *ի ձիոցն ասպարէզս և ի թատերս տեսանեմ* ցանկորդեալ (*յանթախէլ*)։ *Եթէ ի կերպարանաց՝ երեսս* լկտիս (*անամօթ*) *և միշտ* յայրատս (*անպարկեշտ*) *տեսանեմ։ Եթէ ի հանդերձից՝ քան զգուսանացն* (*Նրքէն, վարձակ*) *ոչինչ լաւագոյն։ Եթէ ի սպասաւորաց՝* հացկատակս (*պալքալար*) *և* սուտակասպաս (*շաղափորթող*) *շրջեցուցանես։ Եւ զի՞նչ ասեմ եթէ հաւատացեալ, նա բնաւ թէ և մարդ իսկ իցես, չկարեմ ստոյգ իմանալ։ Յորժամ* կց ածիցես (*կէս զրնէլ*) *իբրեւ զէշ, և* եղջիւր ածիցես (*խենթկել*) *իբրեւ զցուլ, և* վրընջիցես (*խեռնջել*) *իբրեւ զձիս, և* շուայտիցես (*շար ––*

ռել) իբրեւ զարջ, և պարարիցես (ճէրյանէլ) զմարմինդ իբրեւ զջորի, և ոխս մթերեալ պահիցես իբրեւ զուղտ, և յափշտակիցես իբրեւ զգայլ, և ցասմամբ (քարկոթեամբ) վառիցիս իբրեւ զօձ, և խայթիցես իբրեւ զկարիճ, և աղու (Նենգաւոր) լինիցիս իբրեւ զիժ, և թոյնս պահիցես իբրեւ զքարբ, և կռուիցես ընդ եղբարս իբրև զդեւ չար, զիա՞րդ կարասցես զքեզ ը՛ից մարդկան հաշուել (մարդ համարէլ)։ Ջերախայն (ըմկրաւոթը) և զհաւատացեալն չգտանեմ (չէմ կընար) խիք ի միմեանց ընտրել (որոշէլ), որպէս և ոչ զմարդ և զգազան զատանել (որոշէլ) ի միմեանց։ Եւ արդ, զի՞նչ կոչեսցից զքեզ, գազա՞ն. այլ գազանքն միով խիք յայսպիսի վնասուց (այս յանցանքներէն) ըմբռնեալ են, և դու միանգամայն ամենեքումբ զգածեալ՝ քաջ ի բաց (շատ ատելի) քան զնոցա անասնութիւնս զնաս զնացս (կը վարուիս)։ Իսկ դե՞ւ անուանեցից զքեզ. այլ դեւ որովայնի բռնութեան ոչ ծառայէ, և ոչ ընչից ցանկանայ։ Իսկ յորժամ քան զգազանս և քան զդեւս յաճախագոյն (ատելի) մնասակարութիւնս ունիցիս, զիա՞րդ կոչեսցուք զքեզ մարդ։ Եւ այն իսկ են անհնարին աղետք (շարագոյնն այն է որ) զի այնչափ յախտի կամք (ախտ, մոլութեան ատենէ), և չիմանամք զողբոցն ծիւրութիւն (հէծծելը), և չդնեմք միտ ողբղութեան նորա։ Այլ առ վարսավիրայսն (ամփրէլ) նստեալ և զհերդ փորրես (մազէրը կտրել) և զհայելին առեալ, շուրջ ճշգրիտս իմն (ծղրէ) նշանակես զզանգուրս (գլխա-ւէֆ) վարսիցդ. ցմօտակայսն (Ներկայ եղողներուն) հարցանես և ցվարսավիրայսն, եթէ գեղեցիկս զգիսակդ (մազ) յօրինեա՞ց. և թերեւս ծեր եւս իցես, և չամաչես զմանկտւոյ հպտանս հպտել (կէնծէ դէօ կոտրտէլ, յն-էր ընէլ)։

Ասացի եթէ քան զամենայն գազանս եւս դժնդակ ես. զի նոքա թէպէտ և բնութեամբ ունին զգազա-

նութիւն, մարդկեղէն արուեստիւք պատրեալ (*խաբ-ալըմ*) *բազում անգամ* գան ի համբոյր (*կ'ընդունենան*)․ *իսկ դու որ զնոցա գազանութիւն ի զգօնութիւն դարձուցանես, զքո* բնականոր (*բնական*) *հեզութիւնդ* ի չբնականոր (*անբնական*) *գազանութիւն* հաներ (*փոխեցէր*)։ *Զվայրենին բնութեամբ՝ ընտանի արարեր, և զընտանիդ բնութեամբ՝ վայրենի* կացուցեր (*ըրէր*)։ *Զառեւծն* ողոքես եւ ի համբոյր ածես (*կը շոյես և կ'ընդունեցնես*), *և զքո ցասումնդ քան զառեւծ վայրենագոյն* կազմես (*կ'ընես*)։ *Համարեա թէ կամիս զցասումնն գազան ցածուցանել․ որչափ այլք յառեւծսն, նոյնպէս և դու ի նա ցոյց փոյթ, և զգօնացո, և ցածո զնա․ քանզի և նա (ցասումնն) սաստիկ* ժանիս (*ակռայ*) *և մագիլս ունի, և եթէ ոչ ցածուցանիցես զնա, զամենայն սատակէ*։ *Զի ոչ այնպէս առեւծ և ինձ ծակոտեն զաղիս, որպէս ցասումն միշտ երկաթի մագլօք զնոյն* գործէ (*կ'ընէ*)․ *ոչ զմարմին միայն ապականէ, այլ և զոգիսն եղծանէ, և զառողջութիւնն ուտէ, պատառէ և կոտորէ զամենայն զօրութիւն նորա, և անպիտան առ ամենայն իրս գործէ*։ *Եթէ որդունս ոք ի փորի ունիցի*, ոգի *անգամ չկարիցէ* առնուլ (*շունչ առնել*) *յորժամ ի ներքուստ ուտիցեն զնա ամենեքին․ իսկ մեք որ զայնպիսի օձ ի փորի ունիմք որ ուտէ ի ներքոյ, զցասմանէն ասեմ, զի՞նչ ինչ* լաւութիւն (*աղէկ բան մը*) *ծնանել կարիցեմք, և կամ զիարդ* ապրեսցուք (*ապրիլ*) *յայնպիսի* ժանտէ (*չարէ*)։ Ոսկ․ Մեկն․ Մատթ․

ԹԷ ՊԱՐՏ Է ԶԿԱԳԵՑՈՂՍ ԱԾԵԼ Ի ՀԱՃՑՈՒԹԻՒՆ ՕՐԻՆԱԿԱՒ ՆԱԽՈՐԴԱՑ ԵՒ ՍԱՄԱՐԱՑԻՈՑՆ

Հայեսցուք ի նեղեալսն որ գան *ի հրապարակսն* ըմպիցեն (*ծեծ ուտել*)․ *մի՛ դանդաղեսցուք զերծուցանել զնոսա ի տագնապէն*։ *Մի արասցուք, որպէս ցայժմ*

առնէաք, յորժամ տեսանէաք զոմանս ի միմեանս յարձակեալ, զմիմեանս զգեստնի հարեալ (ֆեսինը ղըրնել), *կայաք և ծաղր առնէաք զընկերացն* քարուականութիւնս (խայտառակութիւն, ամօթ) *և իբրեւ զսատանայական թատերբ* բակ առեալ (չըճրզարել) *կայաք և հայէաք. և զի՞նչ քան, զայն այլ ինչ* անազորութիւն (անգթութիւն) *կայցէ։ Տեսանես զի* կազին (կաւթել), *զմիմեանս ուտեն, յարձակին, այր զընկեր զգետնի հարկանեն, զհանդերձս պատառեն, զերեսս* խարարեն (կ'աւրեն). *և դու կաս հանդարտիկ և ծաղր առնես։ Միթէ արջք կռուիցին, միթէ գազանք մարտնչիցին, միթէ օձք զմիմեանս ուտիցեն։ Մարդիկ են* ամենեքին (բոլորովին) հաղորդակիցք (հաւասար) *քո, եղբարք և անդամք քո։ Մի կայցես նայիցիս, այլ* համոզակեր անկանիցիս (մէջ տեղ մտնելով հաշտեցնել)։ *Մի կայցես և ծաղր առնիցես, այլ ի միմեանց քակեսջիր։* Մի զայլս ի քարուականս կոչիցես (ուրիշները մի կանչեր այն խայտառակութիւնը տեսնելու), *այլ և զժողովեալսն* ի բաց մերժեսցես (ցրուէ), *և* զնոսա (*կռուողները*) *ի միմեանց* քակեսջիր (զատէ)։ *Քանզի անամօթից և* չկեցուաց (անդէրան) *է կալն և ծաղր առնել զայնպիսի* նշաւակութիւնս (խայտառակութիւն). *վատթարաց և իշոց անխօսից։ Տեսանես զմարդ ի խայտառակս, և չհամարիցի՞ս զայն անձինդ* ի քարուականս (*ամօթ*), *և* չանկանիցի՞ս ի մէջ (մէջ մտնել հաշտեցնելու) *և* չփլուզանիցե՞ս զհակառակ *սատանայի* (ծուղակը, թակարդը խանգարել). *զի ի քակելն զկռիւն մարդկեղէն, և նա* (*սատանայ*) վէրս առեալ (վիրաւորուած) *գնայցէ։*

Ի *մէջ անկանիցիմ, ասէ, և համոզակեր լինիցիմ, զի ես եւս վէ՞րս առից։ Համոզակեր խրատեմ լինել և ոչ վէրս առնուլ. բայց թէեւ այնպէս ինչ պատահիցէ,* ընդ մարտիրոսութիւն (մարտիրոսութեան տեղ) *համարին քեզ իրքն։ Նոքա* (*կռուողքն*) արբեալ (գինովցած) *են և*

ցնորեալ (խըլճը գըլըճն գօյած) ի բռնութենէ (սաւրկուբեան) ցասմանն, և կարօտ քում օգնականութեան որ ողջդ ես, և՛ւ որ զրկեն և՛ւ որ զրկիցին (Բէ ղըկօղը և Բէ ղըր- կըօղը)․ մին՝ զի ապրիցի ի յլկանացն (Նէզօ-Նէլէն, Հօրօթօ- Հօրօ-Նէլէն), և միւսն՝ զի ցածնուցու (Հանդարրէ, դադրէ) ի չարիսն գործելոյ։ Մօտ երթ, և կալկառ (Եըկըցօօր) ձեռն դու որ լուրջդ (ազԲօան, գէօօօ) ես՝ արբեցելոյն, զի չար է ցասմանն արբեցութիւն քան զգինւոյ։

Զտեսանիցես զնաւորդս (Նօօօարըկօղ, Նօօօօօէ) որ, իբրեւ զայլ նաւորդս նաւակոծեալս տեսանիցեն, պ․ւ․բ- զեն (Քօնօն) վաղվաղակի զառագաստն և փութան անդր հասանել, զի կարասցեն զարուեստակիցսն ի տագնապէն (վըօնգ) ապրեցուցանել։ Եթէ արուեստագէտք առ ար- ուեստակիցսն այնչափ խնամակալութիւն (Հօգ, խնամք) ցուցանեն, ո՞րչափ եւս առաւել որ միոյ բնութեան հաղորդակիցք իցեն՝ զնոյն պարտին առնել։ Քանզի և աստ նաւակոծութիւն է (կօյ) եւս չար քան զայն, կա՛մ հայհոյէ, կամ վնաս առնէ, կամ զամենայն ցասումն թափիցէ։ Եթէ սուտ երդնուցու, ամենայն այն ի ցաս- մանն բռնութենէ է, եթէ խոցիցէ կամ սպանանիցէ իսկ, յայտ է թէ և այս նաւակոծութիւն չար է քան զայն։ Փութա, երթ վաղվաղակի, ցածո զմրրիկն, և յափշտակեա (թաշէլ Հանել) զընկղմեալսն ի ծփանաց ծո- վուն։ Էջ և խանգարեա զթատրն սատանայի, և մե- կուսի առեալ զիւրաքանչիւր ոք ի նոցանէ՝ տուր խրատ ցածուցանել զբոցն բորբոքեալ․ և դադարեցուցանել զալիսն կուտակեալս։ Եւ եթէ կարի իսկ խարոյկն բոր- բոքեալ իցէ և հնոցն վառեալ, մի զանգիտիցես (վախնալ, չհամարձակել), քանզի բազում օգնականս ունիս շիջու- ցանել, և ձեռնտուս (օգնական)՝ ցածուցանելոյ, թէ միայն սկիզբն առնիցես (սկսել)։ Նախ դու սկիզբն առնիցես թօթափելոյ զբոցն, այնուհետեւ այլք բազումք իւքիկունս հասանիցեն (օգնականեան Հանել), և ընդ (փոխանակ, փոխա-

չէն) ուղղութեանն որ յամենեցունց գործիցի՝ զվարձս դու առնուցուս։ Զգրաստն (բեռնալըք անասուն) անկեալ ընդ բեռամբ յարուցանել (վերցնել) կարի թեթեւագոյն (ըներ) է քան զարս ի կռուի ի միմեանց թափել (առնել, կորզել)․ եթէ զթշնամեացն զգրաստ ընդ նոսին յարուցանել պարտ իցէ, որչափ եւս առաւել զբարեկամաց զոգիսն ընդ նոսին կանգնել (վերցնել, կայնեցնել) մանաւանդ յորժամ անճնարին (շատ մեծ, վերջին աստիճան) կործանումն (անկումը) իցէ։ Զի ոչ եթէ ի տիղմ անկեալ թաղիցին, այլ ի հուր գեհենի։ Եւ դու տեսանիցես զեղբայրն անկեալ ընդ բեռամբ, և զսատանայ հարեալ ի վերայ (վրան ինկած), զա՞նց ունիցես իբրեւ զանագորոյն և զանողորմ։

Շամարիտն (Սամարացի) ետես զանծանօթն և զօտարն ի նմանէ և չարար զանց, այլ ի գրաստն իւր եհան նստոյց, և ի պանդոկին տարաւ ի՛չոյց, թժիշկ ի վարձու կալաւ, և ետ ինչ (որակ, վարձ) և խոստացաւ տալ։ Իսկ դու ոչ յաւազակաց ըլկեալ տեսանիցես, այլ ի դիւաց բանակաց միջի ցասմամբ պաշարեալ․ ոչ յանապատի ուրեք, այլ ի շինամիջի (շէնք, այսինքն շէն տեղերայ, քաղաքէ, բազմամբոխան մէջ) և ի հրապարակս․ ոչ գրաստ հասանէ (պէտք է, հարկ կայ) ի վարձու առնուլ, և ոչ հեռի ուրեք ճանապարհ յուղարկել (երթալ), այլ բանս միայն խօսել․ և դանդաղի՛ս, և յապաղե՞ս, և զա՞նց առնես անագորոյն մտօք և անողորմածութեամբ։

Ասացից և առ ձեզ որ Եշաւակիրդ եւ քարուակ կայք (խաղք ու խայտառակ կը կենաք) ի հրապարակս․ և ցքեզ իսկ ասեմ որ ըլկիցեսդ և զրկիցես և զան հարկանիցես, այսր անդր քարշիցես, աքացիցես և խածանիցես։ Խոզ վայրենի եղեր, և իշավայր անապատի․ և չամաչիցե՞ս, և չկորանայցե՞ս (ամչնալէն գետինը անցնիլ) որ զգազանացն բարս (բնութեան) առեր, և վտարանդի եւ տուր (մոռնցէր) զազնուականութիւնդ (գերազանցութեան)։ Եթէ աղքատ ի–

ցես , այլ ազատ ես . և եթէ ձեռադէտ ինչ , սակայն քրիստոնեայ ես ։ Նա զի եւ աղքատն իցես (*մանաւանդ աղէկ ըլլալուդ համար*) , *յայն սակս կարեւոր պէտք են հեզ և հանդարտ լինելոյ ։ Ընդէ՞ր* զաղանացն օրինակի (*ժողովոյ դէմ*) խեղդես եւ մղձկես (*շունչը հատցնել, խեղդել*) *զերթայրն , և քարշես առաջի ամենեցուն ի հրապարակի , և չհամարիս եթէ դու աւելի խայտառակ կաս՝ նմանեալ անասնոց յանդգնութեան , մանաւանդ թէ եւս չար քան զնոսա եղեր ։ Քանզի նոցա (անասնոց) ամենայն ինչ հասարակաց է . առ միմեանս* մակաղին (*կը հանգչին*) , *և ընդ միմեանս* պառակ պառակ (*խումբ խումբ*) *արածին . և մեր չիք ինչ հասարակաց , այլ ամենեւին* օգտեայք (*անջատանել, ծածանել, ցրուել*) *և քակեալք ի միմեանց , հանապազ կռիւք (են ի մեզ) , միշտ հակառակութիւնք , բամբասանք , ատելութիւնք , թըշնամանք . և ոչ ակն ածեմք ի բնութենէս , զի մի բնութիւն է մեր ամենեցուն , այլ ցասումն և ընչից ցանկութիւն՝ ի քարշ արկեալ տանին զմեզ ։ Սոկ ։*

ԹԷ ԻՐՔ ԱՇԽԱՐՀԻՍ ՄԱՆԿՏՒՈՑ ԽԱՂԱԼԻԿ ԵՆ , ՕՐԻՆԱԿ՝ ԸՆՁԱՔԱՂՑՔ ԵՒ ՈՂՈՐՄԱԾՔ , ՀՊԱՐՏՆ ԵՒ ԽՈՆԱՐՀ

Զի՞նչ ընդհատ (*տարբեր*) *իցեմք ի մանկտւոյ , որ ընդ խաղ տունս շինիցեն , մեք՝ որ գեղեցիկ ապարանս շինեմք ։ Եւ ոչինչ . բայց այնչափ միայն զի մեք* տանջանս մթերեմք (*մեզի տանջանքներ կը ծագին*) ։ *Եւ եթէ չեւ եւս երեւի մեզ* ապաժամանութիւն (*ընդհանրութեան*) *գործոյն , չեն ինչ զարմանք , քանզի* չեւ հասաք ի չափ արութեան (*դեռ չափահաս չենք*) . *յորժամ ի չափ հասանիցեմք , յայնժամ ուսանիցիմք թէ այն ամենայն մանկըտւոյ գործ էր ։ Որպէս յորժամ արք լինիմք , ծաղր առնեմք զոր մինչդեռ մանկտին էաք կարեւոր համա-*

րէաք, խեցի և կաւ ժողովել և տճկունս (տընէկ) շինել, նոյնպէս յորժամ լինիցիմք կատարեալք, ոչինչ ի վայր քան զմանկունս համարեսցուք զնոսա որ մեծամեծ տունս շինիցեն և ազգի ազգի փողոցս յօրինիցեն։ Այլ, ասիցես, զոր մանկտին շինեն (տղոց շինածները՝) վաղվաղակի փլանին անկանին, և ջառնին (չէն բլուր) իմիք պիտանացու։ Այնպիսի են և գեղեցիկ ապարանքն զոր մեծամեծքն շինիցեն։ Զոր մանկտին շինեն՝ մեք ոտիւք փլուզանեմք, և որ կատարեալքն են զնոյն առնիցեն մոօք մեզ որ զմեծամեծ և զգեղեցիկ տունսն շինեմք։ Որպէս մեք զմանկտին որ ընդ փլուզանել տանցն լայցեն՝ ծաղր առնեմք, նոյնպէս որ առաքինիքն են, յորժամ տեսանիցեն թէ աշխարհեմք ընդ կորուստ մեծութեան, ծաղր առնեն, և ոչ միայն ծաղր առնեն, այլ և լան. քանզի վշտակից լինին մեզ գթով։ Եւ զոր օրինակ յորժամ մանուկն զայնպիսի խաղուք գայցէ և ի գլրայն ուսմանէ յուլանայցէ, անհնարին գան ըմպէ, նոյնպէս և մեզ, յորժամ ի սնոտիս և եթ ծախիցեմք (վատնել) զփոյթն, անհնարին պատիժս հասանիցէ կրել։

Եւ զի ուսանիցիս թէ այս այսպէս է, որ առաւել կարեւորն թուի, զմեծութիւն (հարստութիւն), ի մէջ բերցուք, և դիցուք այնմ համեմատ (անոր հետ բաղդատելով) զոգւոցն առաքինութիւն, և ապա տեսանիցես թէ զիարդ ապաժաման (տկար, չնչին) գտանիցի որ այնպէս պատուական թուի քեզ։ Գրեսցուք (ենթադրենք) թէ իցեն երկու արք, մին ինչս ժողովեսցէ, ընդ ծով նաւակեալ հրջիցի, և այլ եւս բազում հնարս (միջոց) ընչաւէտութեան (հարստութեան) գտանիցէ. և գրեսջիր (ենթադրէ) թէ շահեսցի արդարութեամբ, և գեւղս գնիցէ, և գերդաստանս (կալուածներ) ժողովիցէ, և այլ եւս ինչ նոյնպիսի։ Եւ մեւսն նոյնչափ ինչս ունիցի, և վաճառիցէ գեւղս և տունս և սպասս (անօթ, էշեա) զոսկւոյ և զարծաթոյ, և տացէ կարօտելոց. բաւական լիցի

աղքատաց (ողջադներու հանի), *դարմանիչ հիւանդաց*, *վշտացելոց դիւրութիւն առնիցէ*, *և ի կապանաց զբազումս արձակիցէ*, *և զայլս ի մետաղաց ազատիցէ*, զխեղդարկեալսն (կախաածները) *ի կախաղանաց իջուցանիցէ*, *գերեաց դարձ առնիցէ*։ *Արդ յո՞ր կողմանէ կամէիք լինել. ի նորա՞ կողմանէ որ զինչսն ժողովիցէ*, *եթէ ի սորա՝ որ զվիշտս վշտացելոցն բառնայցէ. որ զգէ՞ւղսն գնիցէ*, *եթէ որ նաւահանգիստ* ծովածուփ (ծովը ոլեւ ծփացող) *բնութեան մարդկան լինիցի. որ բազում ոսկի՞ն մթերիցէ*, *եթէ որ բարւոք համբաւս պսակեցաւ*։ *Ո՞չ ապաքէն մին հրեշտակի որ յերկնից իջեալ իցէ՝ նմանեցաւ*, *դիւրութիւն առնել մարդկան*, *և մեւսն ո՛չ մարդոյ*, *այլ մանկան որ* վայրապար (ա-նոյն տեղը) *զինչ և գտանէ՝ ժողովիցէ*։

Եթէ կամիցիս, *և զայլ ինչ կողմն առաքինութեանն* անցուցանիցեմք ի հանդիսի (թննէնք)։ *Ածցուք զայլ ոք ի մէջ որ* ի հարստութեան (զօրութեան, էշխանութեան) *իցէ*, *և բազմաց հրաման տայցէ*, *մեծամեծար պատուով մեծարիցի*, քարոզք (Բելլու, մանետեկ) *առաջի գոչիցեն՝* կամարաւոր (գոտեւոր) *պէս պէս զարդուք զարդարեալ*, *բազում սպասաւորք շուրջանակի* վարոցաւորք (գաւազանոր) *որ զամբոխն ի բաց մերժիցեն*։ *Եւ արդ թուիցի քեզ այն մեծ իմն* երանութիւն (երջանկութիւն)։ Օն առ (ողջ, եկուր) կացուսցուք նմին յանդիման (անոր հետ բաղդատէնք) *զհեզ ոք և զհանդարտ և զխոնարհ և զչոխակալ և զերկայնամիտ*։ *Եւ արդ ասէ սա*, *ո՞ զարմանալի իցէ. ուռուցեա՞լն և հպարտացեալ*, *եթէ հանդարտն և համբերողն*։ *Ո՞չ ապաքէն դարձեալ մին վերին զօրութեանցն նմանեցաւ*, *որ ամենեւին ազատ են* ի կարեաց (կրեջ), *և մեւսն ջրգողելոյ*, *որ ուռուցեալ և* տորոմեալ (ոսսաջ) *իցէ. մին հոգեւոր բժշկի*, *և մեւսն մանկտւոյ որ* զքուրձսն (թաշ, ավլարտ) *ուռուցանիցեն*։

Ընդէ՞ր մեծամտիցես (հպարտանալ), *ով այր դու. զի*

ի կամաւս բարձունս նստիցիս, լո՞ւծք (չըչէ) ջորեաց ձգի- ցեն. նաեւ զփայտ և զքար այնպէս կրեն սայլիւք և յօպնակօք (գօտր օայլ). կամ զի մեծապայծառ հանդերձ ունիցիս, այլ նայեաց ընդ այն որ զառաքինութեան հանդերձս զգեցեալ իցէ, և տեսանիցես զքեզ իբրեւ զխոտ մերձ ի փտել, և զնա իբրեւ զծառ պտղալից որ խտտղիցէ զաչս տեսողացն: Դու զցեցոյն և զորդանց կերակուր արկեալ զանձամբ չրջիս. քանզի հանդերձքն և ոսկի և արծաթ, կէսն (օմանէ) ցեցոյ ճարակ (կերակուր) է, և կէսն՝ հող և փոշի, և այլ ինչ ոչ աւելի: Իսկ որ զառաքինութեան հանդերձսն ունիցի,՝ այնպիսի պատ- մուճան զգեցեալ է, որում ոչ միայն ցեց, այլ և ոչ մահ կարիցէ գամագիտ լինել (ողջել, ճանչել). և յի- րաւի իսկ, քանզի յերկինս անկանին (կը փորձուին) այն հանդերձք: Ամէն:

ՀԱՄԵՄԱՏՈՒԹԻՒՆ ԲՈՒՆ ՄԵՌԵԼՈՑ ԵՒ ՄԵՌԵԼՈՑՆ Ի ՄԵՂՍ

Ցոյժ կարեւոր է ճանաչել թէ զինչ կեանք են, և զինչ մահ իցէ: Քանզի բազումք թուին անձանց իւր- եանց թէ կենդանիք իցեն, և չեն ինչ ընդհատ ի մե- ռելոց, յորժամ ի չարիսն կայցեն. մանաւանդ զի ա- ռաւել վատթարագոյն քան զմեռեալսն են: Եւ զայն ինչ մի ասիցես ցիս, թէ յորդանցն ըծախիցի (փտտել, աւրել), և ոչ ի տապանի (գէրէզման) կայ, և ոչ զաչսն եխից (գոցել), և ոչ պատանօք պատեցաւ: Զի եւս չար քան զվախճանեալն (մեռած) է ի տագնապի (գէշ վիճակի մէջ). ոչ յորդանցն ծախեալ, այլ ի սաստիկ ոգւոցն կարեաց (հոգւոյն կերերէն) գէշ գէշ (կտոր կտոր) պատառ- եալ, և թարախով (փտութեան, շարաւ) լցեալ: Թէպէտ և ի բաց (բաց) իցեն աչքն, եւս չար կարկեալ (գոցուած) են քան զայնոցիկ՝ որոց կարկեալ և կափուցեալ (գոցել)

իցեն (աչք մարմնոյն)։ Մեռելոյն աչք չտեսանեն ինչ զարեւ (արեգական լոյսը), իսկ սորա բազում ցաւս կուտեալ է անձինն աչօք բացօք։ Մեռեալն ի տապանի կայ անշարժ ամենեւին, և սա մեղօք ի գերեզմանի պէս պէս ցաւօք թաղեալ (է)։ Նորա (մեռելոյն) մարմինն հարեալ իցէ, և զսորայս չտեսանե՞ս, զի յառաջ քան զմարմինն՝ ոգիքն հարեալ են և կորուսեալ, և բազում տխրութիւն կրէ ի սրտին։ Մեռեալն զտասն օր միայն հոտեցաւ, և սա մեղօք զամենայն աւուրս կենաց բուրէ ժանտահոտութիւն, և բերան այնպիսի ունի որ զվտակս (փօղփօղուր, եռ.) պիղծս աղբանոցաց (լողմ) բղխէ։ Այնչափ ընդհատ է սա (մեռեալն ի չարիս) ի Ըմանէ (քուն մեռելն), զի նա ըստ ընութեան միայն (բնականութեւ) ապականութիւն կրէ, իսկ սա հանդերձ այնու (այն ապականութեան հետ) և զգեղխութիւն և սրբտմտութիւն ի նոյն յարէ։ Այլ ի ձի՞ հեծեալ յօրանայցէ (պարծիլ, պերճանալ), և այն զի՞նչ աւելի իցէ, քանզի և մեռեալն մահճօք բարձեալ յուղարկի (կը պարտի)։ Եւ այս եւս սմա (մեռելոյն ի չարիս) անհնարին աղէտք են, զի զմեռեալն ոչ ոք տեսանէ, քանզի ի տապանի իբրեւ ընդ վարագուրաւ ծածկեալ կայ․ իսկ սա Ըեխեալ (փտած, հոտած) է, և յածեալ զայ զվայրօք (ապէն անդէն կը դառնի)։ Ո՞թէ հնար ինչ էր տեսանել զոգի առն որ ի փափկութեան և ի չարիս կայցէ, տեսանէիր իսկ զի կարի լաւ էր ի գերեզմանի կապեալ կալ, և ոչ պարաւանդօք (կապանք, պարանք) մեղաց ծածկեալ։ Լաւ իցէ վէմ կափարիչ (խափախ) ի վերայ յարկել (յարկէ դէն դնել, ծածկել), և ոչ անզգայութեամբ արբեցութեանն ծանրացեալ կալ։ Թէպէտ և հոտեալ իցէ կամ չորեքօրեայ (իբրեւ զՂազարոս), մի զանգիտիցես, այլ մատիր և զվէմն ի բաց վերացո, և ապա տեսանիցես զի իբրեւ զմեռեալ պատեալ վարկեալ (կապել, պատել) կայ ի գերեզմանի։ Եւ եթէ կամիք, յալեւորաց (մաշէր ծերդած)

Իսկ զոք ի մէջ ածցուք, որ յարբեցութիւն եւ յագահութիւն հատեալ *իցէ* (ինչպէս գինեմոլութեան և ագահութեան տուած)։ *Նախ տեսանիցեմք կապեալ և* կաշկանդեալ (պինդ կապել). *զգլուխ նորա. քանզի յորժամ* ցանց (մէշ, շարանով) *արբենայցէ, իբրև բազում պատանօք և կտաւօք* պատրուակին (կը ծածկուին) *և* խնոյն (կը գոցուին) *և կապին ամենայն զգայութիւնք նորա։ Եթէ կամիս և զձեռսն տեսանել, հայեաց զի՛ և այն իսկ կապեալ և* կծկեալ (կծիկի պէս եղած և գոցուած) *կան ի վերայ լանջացն, ոչ պատանօք, այլ եւս անհնարին կապանօք ագահութեան, զորս (զձեռսն) պարտ էր ցանգ յողորմածութիւն* կարկառել (երկնցնել)։ *Կամի՞ս և զոտսն* ծնգեալս (փակած, անդամալոյծ եղած) *տեսանել, տես և զայն եւս* պարանացեալս (կապուած, պատած) *հոգովք։*

Տեսեր զմեռեալն, տես և զպատողն։ Ո՞վ իցէ պատող այնպիսեացն։ Սատանայ՝ որ սաստիկս վարկէ (կը կոչէ) *զնոսա, և չտայ այնուհետեւ երեւել թէ մարդ իցէ, այլ փայտ* զօս (չորցած), *որոյ ոչ ակն (աչք) իցէ, ոչ ձեռք և ոչ ոտք, և ոչ այլ ինչ ի նոյնպիսեաց, և զիա՞րդ երեւի այնպիսին մարդ։ Այլ թէպէտ և այսպէս յանզգայս անկեալ դնի, և* ի մեռելոց համարի է (մեռելներու կարգն է) *և ոչ ի կենդանեաց, և բազում համարձակութեամբ լի իցէ, սակայն* իւրոց ջերմոցն (իր ջերմ սիրելիներուն) *չէ պարտ զնա* ի ձեռաց թողուլ (երեսէ ձգել), *այլ եւս* ջերմագոյն (ջերմեռանդութեամբ) *մատչել առ Տէրն քան զքորսն Ղազարու, որ այնպէս ջերմաջերմ* խաղապատեին (փաթթուելով աղաչել), *և ոչ (պարտ է)* ի բաց մեկնել (մէկդի կենալ, դադրիլ) *յաղօթից և ի պաղատանաց և ի խնդրուածոց, մինչեւ զնա կենդանի* ի մէջ առնուցուն (մէջտեղ բերել)։ Ոսկ։

ԹԷ ԶԷ ՊԱՐՏ ԹՇՆԱՄԱՆԵԼ ԶԱՂՔԱՏՍ , ԱՅԼ ԱՐԳԱՀԱՏԵԼ ՆՈՑԱ

Յորժամ պահայոյզքն (պէքճէ) *հրՀիցին , և փողովք և քնարիւք ի ժամանակս ձմերայնւոյ ի քնոյ զարթուցանիցեն ,* և ի զուր եւ ընդ վայր (գօրօղ տեղը) բախանձիցեն (անհանգիստ ընել) , *պարգեւս բազումս առնուն և գնան ։ Իսկ եթէ աղքատ ոք կարօտեալ* առ. վշտին (Ռեզիլ-Ռիսվէյ) *մատուցեալ աղաչիցէ վասն պատառոյ միոյ հացի , անդ տեսանես ազգի ազգի չարախօսութիւն , թամբասանս , վատութեան պարսաւանս ։ Եւ զայն չածե՞ս զմտաւ , ՚թէ և դու* վատանաս (ծուլանալ) , *սակայն Աստուած զիւրն տայ քեզ ։ Զասէ , Վասն զի ի վատութիւն հատեալ էք , չծագեմ զարեգակն , չիջուցանեմ զլուսին , կապեմ զարգանդ երկրի , խնում զակունս աղբերաց , ցամաքեցուցանեմ զգետս , արգելում զօդս ,* կարճեմ (Դէշրէղէն վերցնել, Ըսկել) *զտարեւոր անձրեւս ։ Այլ զամենայն առատութեամբ պարգեւէ , և ոչ միայն վատաց , այլ և չարագործաց եւս շնորհէ վայելել ։ Դու տեսանես զաղքատն և ասես .* Հեղձնում եւ մղձկիմ (խըղտուէլ) , *զի* մանուկ (կէնճ) *մարդ է և ողջ , և չունի ինչ ցաւս յանձին , և մուրով կամի կեալ . ի վատութիւն հատեալ (է) ։ Զայս ամենայն դու զքումմէ անձնէ ասա , մանաւանդ թէ նմա (աղքատին) իսկ տացես համարձակութիւն ասել (զքէն) , և յիրաւի իսկ , թէ Հեղձնում և մղձկիմ զի ողջդ ես և ի դատարկութիւն հատեալ , և չառնես ինչ ի պատուիրանացն Աստուծոյ .* յածեալ շրջիս (Ռաֆայէլեան , ասդին անդին կը պտըտի) , *և զայլոց տունս ձանձրացուցանես . արբենաս , գողանաս , յափշտակես զայլոց , կործանես զտունս ։*

Զայս ասեմ , ոչ զի ի վատութիւն ինչ հատանել

դրդեմ (կը ծըծուեմ) զաղքատս, քաւ լիցի, Յայլ կարի իսկ կամիմ զամենեսեան ի գործս՝ վաստակել. քանզի զամենայն չարիս դատարկութիւնն ուսոյց։ Բայց աղաչեմ, մի անողորմ և անագորոյն լինել առ աղքատս։ Այլ բազում ինչ սուտ, սուտ, և պէս պէս պատճառանս դնէ (սուտ պատճառներ կը բերէ)։ Նա յայն սակս իսկ արժանի է ողորմելոյ, զի յայնպիսի վիշտս եհաս մինչեւ այնչափ անամօթել։ Եւ մեք ոչ միայն չողորմիմք, այլ և զանագորոյն բանս յաւելումք, թէ Ո՞չ միանգամ և երկիցս առեր։ Իսկ զի՞րդ, միթէ չիցէ պարտ միւսանգամ հաց ուտել, քանզի միանգամ կերաւ։ Ընդէ՞ր ոչ և քում որովայնիդ այդպիսի օրէնս դնես, և ասիցես, թէ Երէկ և եռանդ յագեցար, այսօր մի խնդրեր, այլ դդա (զորովայնդ) աւելի քան զչափն երկիծուցանես (կը պոռպոռէ), և զնա (զաղքատն) որ չափոմն խնդրէ՝ հալածես։ Նմին իրի իսկ պարտ էր ողորմել, զի հանապազ առ վշտին նեղի գալ յերեսդ քո և կողկողել (շատ ողոքել, խեղճ ըլլալ)։ Աղքատութեանն հարկ բռնադատէ զնա յայն, և դու չողորմիս, նա զայնպիսի լսէ բանս և ժտի (կը համարձակի)։ Բռնաւորէ (կը հարկադրէ) հարկն խնդրել զպէտս իւր, և դու ոչ միայն չողորմիս, այլ և ճաղես (Ռոխորել) եւս։ Աստուած գաղտ տալ հրամայէ, և դու ի հրապարակաձոյծ արկանես (ռով ընել)։ Նա դիմեաց ի քեզ իբրեւ ի նաւահանգիստ, և ի քո ձեռսդ նայի. ընդէ՞ր յարուցանիցես ալիս. և սաստիկ մրրիկ ձմերայնւոյ գործիցես։ Նա ակն ունէր այնպիսի ինչ լսել ի քէն, և ժտեցաւ մերձենալ. գիտէր զայն յառաջագոյն, և մատեաւ գտանել ողորմութիւն, չսոսկացեալ ի քումմէ անագորոյն մտաց, և դու այնպէս անհրաժեշտ (բացորջակ) զվիշտսն տեսեալ, չլինիս մեղմագոյն։ Զհամարիս բաւական իրաւունս ժտութեան զքաղցին տագնապ (անօգնութենէ բուսական պատճառ չէս համարեր անոր շէնչ Բ—

խանձիլան), այլ անամօթութեան պարսաւանս ի վերայ դնես (անամօթութեան յանցանք կը դնես անոր վրայ)․ Թէպէտ և դու իսկ յոյժ բազում անգամ անամօթ գտանիս, և ի դժպատեհ իրս։ Աստ արգահատութիւն բերէ անամօթութիւնն (հոս անամօթութիւնը, համարձակութիւնը, արժահաւնելի է)․ բայց մեք բազում անգամ տանջանաց արժանի լկրչութիւն (անամօթութիւն) լկրչիմք։ Պարտ էր զայն զմտաւ ածել և խոնարհել, և մեք ոտնհար եւս լինիմք (կ'անարգենք, կը մերժենք) թշուառացն։ Նա դեղս վիրացն խնդրէ, մեք վէրս եւս ի վերայ յաւելումք։ Եթէ չկամիս տալ, ընդէ՞ր թշնամանես։

Այլ չիք ինչ, ասեն, ժտագոյն (աչքընդերեւ, Թախանջուղ) քան զաղքատն։ Ընդէ՞ր, աղաչեմ․ զի չրջին և մոլորի՞ս (Բոֆառան)։ Կամի՞ս այսուհետեւ զի ցուցից քեզ թէ քան զնոսա մեք ամօթագոյնք եմք, և կարի իսկ լրբագոյնք։ Յիշեա զի բազում անգամ յորժամ սեղանն առաջի կայցէ երիկունն (իրիկուան), և զծառայն որ պաշտիցէ (սպասաւորութեան ընող ծառան) կոչիցես, և նա յամիցէ զգալն, զի՞արդ զայրանաս, աքացի ծեծես և թշնամանես, և մեղադիր լինիս վասն սակաւ ինչ յամելոյն, թէպէտ գիտես իսկ ճարտար (աղէկ), զի թէ ոչ վաղվաղակի, այլ յետ սակաւ միոյ վայրկենի վայելեսցես ի խորտիկսն։ Զքեզ որ վասն ոչնչին զայրագնիս՝ չկոչես անամօթ, իսկ զաղքատն որ վասն կարեւորացն կասկածէ (կը խնայ) և դողայ, հի՞մ լիրբ և անամօթ կոչես, և որ ինչ քան զնոյնս ծանրագոյնք իցեն։

Մի այսուհետեւ անագորոյնք և անգութք և անխնամք և անողորմք լինիցիմք․ մի եւս չար քան զգազանս։ Քանզի և զբազումս իսկ գիտեմ յայնպիսի գազանաբարոյ միտս եկեալ, մինչեւ առ ի չտալոյ սակաւ ինչս զսովամահսն անտես առնել (երեսէ ձգել)։ Մի բամբասեր, մի զզուեր (ծէշ նայել, խըրճալամաք), մի պատուհասեր (յանդիմանել, պատժել), քանզի դեղոց և ոչ վի-

րաց կարօտ է մուրողն . ողորմութեան՝ և ոչ սրոյ ։ Աղէ սա , եթէ քարիւ ոք վէր ի գլուխ առեալ , և զամենեսեան թողեալ ի քո ծունկս դիմէր արեամբ եւ ապաժուժաւ (ուբեամբ) թաթաւեալ , միթէ մեւս եւս քարիւ հարկանէի՞ր զնա , և այլ եւս վէ՞րս ի վէրսն յաւելուիր ։ Թուի ինձ թէ ոչ . այլ և ձեռն ի գործ արկանէիր (Ջա-նալ) բժշկել զնա ։ Իսկ առ աղքատն ընդէ՞ր զնորին հակառակն առնես ։ Բամբասես և թշնամանես զնա , և նա գնայ ի քէն ընդ միտսն թախծեալ և բազում արտասւօք լցեալ ։ Աստուած առ քեզ յղէ զմուրողն , և քեզ հրամայէ տալ , և դու ոչ միայն չտաս , այլ և թշնամանես զեկեալն առ քեզ ։ Եթէ անտեղեակ ինչ իցես յոռութեան գործոյն , աստէն ի մարդկանէ (աշխարհէս մարդոցմէ) առ զօրինակն , և ապա առնուցուս ի միտ բարւոք զմեղացն ստուարութիւն (մեծութիւն) ։ Եթէ ոք ծառայ ի քէն հրաման առնոյր երթալ առ այլ ծառայ որ զքո գանձս ունէր՝ առնուլ ինչ անտի , և ոչ միայն դատարկաձեռն գայր , այլ և թշնամանեալ , որպիսի՞ ինչ գործ գործէիր ընդ թշնամանիչն , զո՞ր վրէժս ոչ պահանջէիր ։ Զնոյն և զԱստուծոյ ած զմտաւ . քանզի նա յղէ առ մեզ զաղքատն . իսկ մեք ընդ չտալուն (վե-լան հետ) թշնամանօք եւս յղարկեմք . զմտաւ ած ո՛րչափ բարկութեան , քանի՛ փայլատականց գործս գործեմք ։ Ոսկ ։

ԱՐՈՒԵՍՏՔ ԿԱՐՕՏ ԵՆ ՄԻՄԵԱՆՑ

Իւրաքանչիւր յարուեստից՝ այլոցն կարօտ է ։ Եթէ կամիս՝ նախ զմշակութիւն քննեսցուք ։ Եթէ ոչ ի դարբնութենէ ունիցի զբահն (կէ-րէկ) և զերկմատնին (յա-բալ քօրծէկ) , զխոփն (սաբան տէմիրի) , զգերանդի (մեծ ման-գաղ) և զմանգաղ , և զդակու (տեստէ մը կէսէր) և զուրագ (կէսէր) և զայլ ինչ բազում փոխ առեալ , 'և ի հիւս-

նութենէ՝ տրոր կազմել և լուծս յօրինել, և սայլս եւ կամուրջս առ ի զօրացն կրել եւ կասուլ (որան տանելու և կանելու համար տայլ և կանոնատայլ), և ի փոկահանութենէ՝ կարս հարկանել եւ ճիգս հիւսուլ (կաշեփործութենէ կար և յետ, տոպիծե ֆոկ որոմ եջերը կը փաշեն արերը), և ի շինողութենէ (տէպրիկէրլէք)՝ եզանցն որ վարիցեն (հերկել) եզնանոցս շինել, և մշակացն որ զսերմանսն հանիցեն (ձանել սերմանս, ճշակել)՝ տունս, և ի մայրեւորութենէ (օրմանճըլըք)՝ փայտս հատանել, և ի հացարարութենէ (հացագործութեան)՝ զհացն, առանձինն ոչ կազմի։ Նոյնպէս և ուստայնանկութիւն բազում այլ արուեստս կոչէ ընդ իւր նպաստ լինել (օգնել) ի գործն որ առաջի կայ. և եթէ ոչ գայցեն նոքա և ձեռնտու լինիցին, (ուստայնանկութիւն) կայ ի վարանս և ի տարակոյս։

ՓԱՓԿԱԿԵԱՑՔՆ ԹՇՈՒԱՌԱԳՈՅՆՔ ԵՆ ՔԱՆ ԶՏԱՌԱՊԵԱԼՍՆ

Եթէ կամիք զօրս ի բարեկեցութեան (հուզուրլեան, հանգիստ կեանք), ի փափկութեան և ի մեղկութեան իցեն՝ քննեսցուք. զծանր և զտաղտկալից տխրութիւն ցուցցուք։ Նստեալ կայցէ ի միջի կալանաւոր (զնտանլեալ, ճերէ) ոք կապեալ, և մեւս եւս թագաւոր մանուկ և որբ մնացեալ, և բազում մեծութիւն հայրենի ժառանգեալ։ Նստեսցէ կայցէ ի միջի և վարձկան (էշմէ) ոք որ ցանգ աշխատութեամբ խոնջեալ իցէ, և մեւս բարեկեցիկ որ հանապազ փափկանայցէ։ Կամի՞ս զի զբարեկեցին զտրտմութիւնն նախ ասասցուք։ Տես, որչափ մրրիկ (հօփ) ի միտսն յառնիցեն, յորժամ փառաց ինչ այնպիսեաց ցանկանայցէ՝ որոց չիցէ ձեռնհաս (կուրդող) հասանել, յորժամ ի ծառայիցն արհամարհիցի, յորժամ ի վատթարաց թշնամանիցի, յորժամ

բազում չարախօսս և ամբաստանս ունիցի ։ Զայլսն ես ամենայն որ ի մեծութեան ի դէպ պատահեն (*հօրօսօօ-նիրօն պօրտահօծ օօրէն քօնէրը*)՝ *ասել չեմ բաւական, զթշնամութիւնսն ասեմ և զնախանձաւորացն զնենգութիւնսն ։ Յորժամ* զմեծութիւն (*հօրօսօօ-լիւն*) *նորա* յինքեանս հանել (*յօֆշօրօկէլ, տօնօւլ*) *չկարիցեն*, ծզծզեն (*քօշկօրդէլ*), փետեն (*քօշքէլ*) *յամենայն կողմանց զայրն, ազգի ազգի* ծմերուկս (*նէշօ-լիւն, ֆօրչօնք*) *ի վերայ ածեն ։*

Կամի՞ս *զի և զվարձկանին* զհեշտութիւնսն (*շօօրծօօ-լիւնը*) *ասացից. յամենայնէ յայնմանէ ազատ է նա ։ Եթէ թշնամանիցէ ոք՝ չտրտմի, զի չհամարի զանձն քան զոք ի վեր. և ոչ վասն ընչից* կասկածէ (*ֆօխնօւլ, հօֆ ընէլ*). *հեշտութեամբ ուտէ զկոտորն, ուրախութեամբ ի քուն լինի ։ Ոչ այնպէս որ զարքունի գինին ըմպեն՝ ուրախ լինին, որպէս նա յորժամ յաղբերացն երթայցէ և յականցն ըմպիցէ ։* Օն առ (*հօյրէ*), *զթագաւորն խսկ և զկալանաւորն* ընդ միմեանս հարցուք (*ճօղշօրէլ*) ։ *Տեսանիցես զնա բազում անգամ ի բանտին ուրախ, խաղալ և խնդալ, և զնա ի թագն և ի ծիրանիսն տրտմեալ, և ազգի ազգի հոգովք մաշեալ, և մեռանել ի կասկածոյ ։ Զի չիք և չիք խսկ զուրուք զկեանս առանց տրտմութեան գտանել, այլ և ոչ յուրախութենէ անմասն ։*

ԱՐԲԵՑՈՒԹԵԱՆ ԱՂԷՏՔ ՕՐԻՆԱԿԱՒ ՆԱՒԱԲԵԿԵԼՈՑ

Ոչ միայն յորում աւուր արբենասն՝ կրեն զվնաս արբեցութեանն, այլ յետ այնր աւուր եւս ։ Եւ որպէս ի սարսռոյ (*դօղ*) *ջերմանն մնացեալ տենդն ապականիչ է, նոյնպէս յարբեցութենէն մնացեալ* թմբիր (*լծրօօ-լիւն*) *արբեցութեանն ուտէ զոգիս և զմարմինս ։ Հէք և թշուառական մարմինն անկեալ դնի լուծեալ իբրեւ*

զնաւակիկ ինչ յալեաց ծփանաց. իսկ որ քան զնա հիքագոյն հոգին, ի նորա լուծանելն անկանելն՝ զմրրիկն գրգռէ և զցանկութիւնն բորբոքէ. և յորժամ արբեալն համարիցի (կը [illegible]) *զգաստանալ, յայնժամ առաւել* մոլի եւ կտղի ([illegible]), *գինի և* կարաս (ֆէսէ) *և* թակոյկս ([illegible]) *ըղձանայ։ Եւ զոր օրինակ ի ցածնուլ մրրկացն միայ միաս մրրկին, նոյնպէս և աստ. և զոր օրինակ անդ ընկեցիկ զբեռինան առնեն, նոյնպէս և աստ գրեթէ ամենայն բարութեանցն* վատնութիւն (կորուստ) *լինիցի. եթէ* ցածութիւն ([illegible]) *իցէ և եթէ* իմաստութիւն ([illegible]), *եթէ հեզութիւն և եթէ խոնարհութիւն, զամենայն* վարատէ (ցրուել) *ընկենու յանօրէնութեան ծովն արբեցութիւնն։ Այլ որ ինչ* առյապայս (ետքը) *լինելոց է, չէ ինչ այսմ նման. զի անդ յետ ընկեցիկ զբեռինան առնելոյ թեթեւանայ նաւն, և աստ եւս քան զեւս ծանրանայ, զի փոխանակ թեթեւութեանն ընդունի զաւազ և զջուրն աղի, և* զբնաւ իսկ ([illegible]) զսիկ ([illegible]) *արբեցութեանն. միանգամայն ընկղմէ զամենեսեան որ ի նաւին իցեն, եւ զնաւորդսն եւ զնաւապետն եւ զնաւն։ Ուկ։*

ԶԿԱՐԵՒՈՐՆ ԹՈՂՈՒԼ ԵՒ ԶԱՒԵԼՈՐԴՆ ՀՈԳԱԼ

Զընտանեաց փրկութենէ չառնեմք ինչ փոյթ, զկնոջ և զորդւոց և զծառայից, այլ այլ իմն ընդ այլոյ ([illegible]) *հոգամք. զի բազում ծառայք լինիցին և կայցեն մեզ ի սպասու, և որդիքն* ստուար (մէծ) *ժառանգութիւնս առնուցուն ի մէնջ, և կլինն ոսկի զարդս ունիցի և հանդերձս ազգի ազգիս։ Այնչափ ինչ առնեմք, որպէս եթէ զտունն ոք տեսանիցէ խախտեալ և զորմսն թիւրեալս, և թողուցու չինել զտունն, և շուրջ զնովաւ արտաքոյ փողոցս մեծամեծս կազմեսցէ. և կամ թէ մարմնոյ կնոջն ախտացելոյ դարման ոչ տա*

նիցի, և հանդերձս ոսկեհուռս կազմիցէ նմա, և նաժիշտս և ոստայնի գործի և այլ ինչ կահ ([illegible]) ի տանն առնիցէ, և զհիւանդն անտես առնիցէ յախտին ծիւրեալ (ծիւրել)։ Եթէ գազան ի գառագղացն (գառագիղ, [illegible]) զերծանիցի, զտանց դրունս փակեմք, և ընդ զանխուլ (ծածուկ) տեղիս ի ներքս աճապարեմք, զի մի ի բուռն գազանին անկանիցիմք. արդ ահաւադիկ ոչ միայն գազան, այլ բազում խորհուրդք չար զոգիսն գէշ գէշ պատառեն, և չզգամք։ Իշոց և ձիոց առաւել խնամ ունիմք քան որդւոց. և եթէ ջորի իցէ՝ այնմ աւելի դարման տանիմք. զիշավար պիտանացու խնդրեմք գտանել, և ոչ զատահակ ([illegible]) ոք և գող և արբեցող և տխմար ([illegible]) արուեստին. իսկ եթէ ի մանկան ոգւոց աղագս ([illegible]) ոստիկան. ([illegible]) պարտ իցէ կացուցանել, զդոյզն ոք եւ զվայրապար ([illegible]) համարիմք դաստիարակ կացուցանել։ Ոսկեբերան։

ԹԷ ՊԱՐՏ Է ԴՈՒԶՆԱՔԷԻՒՔ ՇԱՏԱՆԱԼ. ՕՐԻՆԱԿ՝ ՄԻԱՆՁՈՒՆՔ ՆՄԱՆՈՒԹԵԱՄԲ ԶՕՐԱՑ ԲԱՆԱԿԻ

Ոչ ոսկեհուռ հանդերձից պէտքն են մեզ, այլ ներքին պատմուճանաց։ Եւ ոչ, եթէ զտուն ոք զարդարէր, և ոսկեհուռ սրահակ ([illegible]) ձգէր, և քեզ կարկատուն կապերտօք ([illegible]) տայր մերկ և ծանակ ([illegible]) ի ներքս նստել, ախորժելով յանձն առնուիր. և աւասիկ դու զմարմինդ իբրեւ զտուն բազում սրահակօք զարդարես, և ոգւոյդ կարկատուն կապերտօք տաս ի ներքս նստել խայտառակ։ Ցիշեա զսուրբսն որ զայծեայ ([illegible]) հանդերձսն ունիցին և յանապատս բնակեալ իցեն։ Որչափ ծիրանիս տայցեն, չառնուն յանձն. այլ զոր օրինակ եթէ թագաւորի ոք զաղքատի ցնցոտիս հրամայիցէ ագանել, և

նա յայնմանէ դարշիցի , նոյնպէս և նոքա ի նորին ծի-րանեացն . զծիրանի քղամիդն անզօսնեն (*կ'անարըգէն*) *և իբրև զսարդխոստայն* կնատածոր (*ոկուր , ընկըն գէտօր*) հաշուին (*կը հօմուրըն*) ։] *Եթէ կարասցես ընդ ոգիս նոցա* ոռով մանր հայել (*ազըզըբուրընամը նայէլ*) *և ընդ ներքին զարդն ամենայն , Թէպէտէ և* ի բերանս հարկանիցիս (*երէսը վըրայ էյնալ*) , *չկարիցես ճառագայթից գեղեցկու-թեան նոցա ժուժել ։ Նոքա յերկինս* հարեալ են զխո-անս (*վըրան կանգնել*) *և զօրաժողով գումարեալ են ընդ-դէմ սատանայի , և* բակ առեալ (*ըրՋաղաշել*) *ճակատ-եալ մարտնչին ընդ նմա ։ Վասն այնորիկ* զխուղսն (*խըռ-ծըլը*) *չինեցին , զի ի քաղաքաց փախիցին ։ Քեզ* աստ (*այս աշխարհիս մէջ*) փոս *ինչ սակաւ շուրջ* հատանել (*ֆոր քանալ*) *բաւական է , և* ծողիս (*ծոզիք , ցէց*) *կանգնել , ի վերայ գլխոյդ* սակաւ մի զհովանոցակն (*ֆոտր հոլանոց*) *գործել . այլ շինուածոց և ոչ մի ինչ պէտք են ։ Տես զխարդ* վաչխսն (*վանք , վըրան ֆոց տալ*) *և սայլիւք Սկիւ-թացւոց աշխարհին կեանքն վճարին . այսպիսի կեանս պարտ է կեալ քրիստոնէից ։ Զի՞ շինես ապարանս , ով այր դու , զի առաւե՞լ զանձն կապիցես ընդ աշխարհի ։ Զանապատն՝ լի* վանակատօք (*մնանչն , կըծանուոր*) , վարկ-պարազի (*ըեըե- , պարըլ*) *խորանօք* , խիտ առ խիտ թեւ ի թեւ հարեալ (*տոլէ տոլ չընած*) *տեսանել ցանկալի իսկ է քան զբանակս զօրականաց որ սրահակս ձգիցեն , զտէգս և զգեղարդունս կանգնեսցեն , և* զբնիցն գեղարդանց (*ֆեղարըընէրըան կոըերէն*) *զաղեղնակապարճս կախիցեն , պղնձապասս զգլուխսն առնիցեն , և մեծապայծառ իմն* կմբեալ (*ֆոպարըալը*) *վահանօքն փայլիցեն , և* կողինա-ւորք (*կողէնք , կողէ գըահ*) *և զրահապատք շողայցեն , Թագաւորին* սպաս առնիցեն (*պահպանեըխան, պատխ-ընել*) *ի դաշտի ուրեք ի հարթ և* յողորկ (*շէտակ*) *վայրի , և* ճաշք զճաշս մղիցեն եւ ընթրիք զընթրեօք անցանիցեն (*շարտանակ ծաշէր և ընըերէներ ըալ*) , *գուսանք երգիցեն ,*

և փողարք (ձողահար) զձայն փողոցն նուագիցեն։ (Աստ-ատել ցանկալի է անպատշաճներուն տեղը կրանները տեղէ տեղ դնենել, տան թէ զինուորներու որոնք, Լայն)։ Ոսկ.

ՊԱՒՂՈՍ ՀԱՄԵՄԱՏԻ ԸՆԴ ՆԵՐՈՆԻ

Բե՛ր ի մէջ (հայրե) զերկոսին քննեսցուք, զՆերոն և զՊաւղոս։ Նա զփառս աշխարհիս ունէր, և սա՝ զաՆարգութիւն։ Նա իշխան էր բուռն (հզօր) և բազում պատերազմունս հարեալ (պատերազմ հարկանել, պատերազմ ընել) և բազում յաղթութիւնս արարեալ. մեծութիւն յամենայն կողմանց եռայր (կը վէտար), զօրք անչափ, զմեծ մասն աշխարհի հնազանդեալ ունէր ընդ իւրեաւ, զարքունական քաղաքն (Հռոմ) ընդ իշխանութեամբ, զսինկղիտոսն (ծերակոյտ) ամենայն նուաճեալ։ Բազում սպասուք (շքեղ, շէնք պատրաստութիւն, էնդամ) ելանէր և մտանէր, յոսկի և յականս պատուականս համակեր (համակիմ, ծածկուէլ)։ Ծիրանեօք և թագաւ պայծառանայր, բազում սպասաւորս, բազում օժանդակս եւ սպասեակս (օգնական և տէրէն ծառայող սպասաւոր-ներ) Նժուգաւորս (ձիաւոր) ունէր, և Նժոյգս զկնի և առաջի յորինէր, ծովու և ցամաքի տէր անուանէր (կը կոչուէր). ինքնակալ, աւգոստոս, կայսր և թագաւոր կոչէր, և այլ եւս բազում անուամբք որչափ ինչ ի սուտակասպասութեան ողոքանաց (շողոքորթութենէ) հնարիցին, և չէր ինչ ամենեւին պակաս ի փառաց։ Այլ և իմաստունք և թագաւորք դողային և սարսէին ի Նմանէ։ Եւ ասեն թէ կարի իմն անօրէն և բուռն (շատ) անագորոյն էր։ Առեալ կացուսցուք հանդէպ Նմա զՊաւղոս, զայր մի Կիւլիկեցի։ Եւ որչափ ինչ ընդ Կիւլիկիա և ընդ Հռովմ ի միջի կայ (տարբերութիւն կայ), զայն ամենեքեան գիտէք։ Այր մի կարուակ (կօշկակար) խրուանցիչ, կարկատիչ (Հնակարկատ), աղքատ, տնանկ,

տխմար · տգէտ յարտաքնոցն իմաստութենէ ։ Այր *մի որ բազում անգամ սովամահ լինէր ․ և* Սօթի ԷՒ աՆ–սուաղ (*անօթի և ծոմ*) ագաՆէր (*ֆէնճէրն անցունել*) *․ այր մի մերկ և բոկ , և ոչ կապերտ անգամ զուսովքն գտա–նէր արկանել , ի քաղց և ի ծարաւ և ի մերկութեան մաշեալ · և ոչ այնչափ միայն , այլ և բանտարկեալ ընդ աւազակս և ընդ կախարդս և ընդ* գերեզմաՆա–կրկիտս (*ֆէրէհմանները քօյող գող*) *և ընդ մարդասպանս ։* Եւ *արդ ո՞ փառաւորագոյն և պայծառ իցէ ։ Զնորա* (*Ներոնի*) *և ոչ զանուն անգամ գիտեն բազումք , զսա* Ցոյնք *և բարբարոսք և Սկիւթացիք և ամենայն իսկ ծագք տիեզերաց յանդ և հանապազ* չքափեՆ ի բերա–Նոյ (*բէրնէ չէն յէեր*) ։ Ո՞ր (*ո՞րը*) *պայծառագոյն և փա–ռաւոր էր · կապեա՞լն որ շղթայիւքն իբրեւ* խառաՆաւ (*վէշէն կապուսելա ըսան*) *ձգէր ի բանտէն , եթէ որ զծիրա–նիսն զգենոյր , և թագաւոն և սպասաւորօք յարքուն–եացն խաղայր ելանել ։ Անդոսնէր արհամարհէր Կիւլի–կեցին խորանակար , կալանաւոր կապեալ և սովամահ և աղքատ՝ զհռոմայեցին , զմեծատունն , զթագաւորն որ ամենեցուն իշխէր ։ Ո՞ պայծառագոյն և փառաւոր էր , որ կապանօ՞քն յաղթէր , եթէ որ ծիրանեօքն* ի պարտութիւՆ մատՆէր (*յաղթուել*) *․ որ միայնն էր և* գլէ՞ր (*յաղթել, ֆէրտաղանցել*) *, եթէ որ բազում զօրօքն էր և* ըՆկրկէր (*եւ փոխուել, ոէղէ տալ*) ։ *Շղթայքն յաղթե–ցին արքունական պսակին , և գձուձ կերպարանքն պայծառագոյն քան զպայծառն գտանէին ։ Իսկ յոր–ժամ Պաւղոս ընդ թագաւորին երկնից գայցէ բազմա–պատիկ փառօք , յորպիսի՞ ինչ կերպարանս* կոռացեալ կրկՆեալ (*եռկա խաթ եղած*) *Ներոն գտանիցի , սրտում , տխուր , ըարաշշուկ* (*անպաքն , ամօթով*) *չալատեալ ։ Ուկ ։*

ԹԷ ՋՈ՞ՐՍ Ի ՄԵՌԵԼՈՑ ՊԱՐՏ ԻՑԷ ԼԱԼ ԵՒ ԶԻԱ՛ՐԴ

Մի վայրապար զգնացեալսն (*ճօշղոխ, դանող*) *լայցեմք, այլ գնոսա՝ որ մեղօքն երթեալ իցեն։ Նոքա են ողբոց արժանի, և նոքին՝ կոծոյ և արտասուաց։ Զի՞նչ յոյս կայցէ, ասէ տաս, այնպիսեացն որ մեղօք իցեն երթեալ անդր, ուր չիք հնար մերկանալ զմեղսն։ Մինչ աստ էին, Թերեւս գոյր* ակնկալութիւն (*յոյս*) *բազում թէ երբ և է դառնալոց իցեն և պիտանիք լինելոց. եթէ երթայցեն ի դժոխս ուր չիք հնար* օգտել (*օգուտ քաղել*) *յապաշխարութենէ, զի՞ գործիցեն։ Զայնպիսիսն լացցուք, չարգելում, լացցուք, այլ մի անկարգութեամբ. մի* զհերս (*գլխու մազ*) *փետել, մի* զծամս (*կանանց մազը*) *խզել, մի* զտիզս (*ոջիլ*) *մերկանալ, մի* զայտս ցտել (*երեսները բզկտել*), *մի* ի բուխս համակել (*սեւեր հագնիլ*), *այլ մեղմով* ընդ միտս (*ծնկներէն, ոտքէն*) *և* առ ծունր (*ծնկան վրայ ինկել*) *լալ, ողողանել, դառն* արտասուս արկանել (*արցունք թափել*)։ *Մարթի և առանց այնպիսի ինչ* նշաւակութեանց (*խայտառակութեան*) *լալ դառնապէս. ողբալ ի ձայն* աղի եւ ողորմ (*ցաւալի, ողորմելի*) *և ոչ խաղ և ծաղր առնել։ Արդարեւ* չէ ինչ ընդհատ ի խաղուց զոր ոմանք անհեղեղ իմն աշխարեն (*ամանց-անպատշաճ կերպով ողջ ընկեր խառն տարբեր չէ*)։ *Ոչ վշտակցութեան են այնպիսի կոծքն զորս ի հրապարակսն կոծին,* *այլ* ի ցոյց եւ առ մարդկան ականէ (*է ցոյց մարդկան*)։ *Գիտեն և բազում կանայք,* եղերամարքն եւ ձայնարկուք (*լալկան կանայք*), *զայն կոծ որ արուեստի կրթութիւն է և ոչ* ի սրտէն եւ ի մտացն վշտակից լինելոյ (*ուրիշին ցաւակցութենէն չէ*)։ *Այլ թէ լաս, լաց դառնապէս, հեծեա, հառաչեա,* ծմրեաց (*ծմրիմ, քերել, քերթել կործ նորէլ*) *սգացիր առտնին, առ ծունր, մի առ մարդկան ականէ* վեր ի վերոյ (*դրսանց*)։ *Ոսկ*։

ՓԱԽՉԵԼ ՓԱՌՑ Է Ի ՓԱՌԱՑ

Զմաքքի ([illegible]) այլ ազգ ([illegible]) հաստանել փառաց՝ եթէ ոչ փախչելովն ի փառաց. մինչ մեք զնորա հետ խցեմք ([illegible]), փախչի ի մէնջ, և յորժամ թողուցումք, զհետ լինի և հասանէ։ Եթէ կամիցիս փառաւոր լինել, մի ցանկար փառաց, և եթէ կամիս բարձրագոյն լինել, մի ունիր զանձնդ առ. աւազս ([illegible])։ Որ զպատիւ չխնդրիցէ՝ զնա ամենեքին պատուեն, և որ խնդրիցէն՝ յամենեցունց արհամարհի, քանզի այնպէս իմն է ազգ մարդկան՝ վէս ([illegible]) և ընդ հակառակս ([illegible])։ Մի ունիր զանձն առ լաւս, զի յայլոց մեծարիցիս. որ անձամբ զանձն վերացուցանէ՝ յայլոց չվերանայ, և որ անձամբ զանձն խոնարհեցուցանէ՝ յայլոց վերանայ։ Մեծ չարութիւն է հպարտութիւն. լաւ է մորոսանալ ([illegible]) քան հպարտանալ։ Անմիտն անձին եւեթ չար է, հպարտն՝ և ընկերացն ապականութիւն. չիք հնար առն մեծամտի լինել իմաստուն, այլ հարկ է անմիտ լինել։ Ի մարմինս իսկ զո՞ր աւիցեմք առողջս. զյոյրսն ([illegible]) և զուռուցեալսն և զչրգողեալսն, եթէ զնրբաւորսն ([illegible]) և զկազմսն (կազմ, [illegible]) և զձողսն (ձող, [illegible])։

ԹԷ ՉԷ ԱՐԺԱՆ ՀՊԱՐՏԱՆԱԼ, ԶԻ ԱՆԱՍՈՒՆՔ ԱՌԱՒԵԼ ԵՆ ԲԱԶՄՕՔ ՔԱՆ ԶՄԵԶ

Հարկ է հպարտացելոյն թշնամանիչ լինել և հարկանող և բարկացող և դառն և անհամբոյր ([illegible]), գազան մանաւանդ և ոչ մարդ։ Ուժգին ([illegible]) իցես և յաջն սակս մեծամտիցես. առեւծ գազանագոյն քան զքեզ է, և վարազ՝ ուժգնագոյն. իբ-

րեւ զմժեղ (*օքիւզ օթիւ*) *մի ես դու* առ Ցորոր (*անանց թօզ, անանց նօյսըզ*). *և աւազակք և գերեզմանակրկիտք և* ի վսեր եկեայքն (*էյրայըն հէփ կէօրէօղ, մինամայքթող*) *զօրագոյն քան զքեզ իցեն։ Այլ Թերեւս գեղեցի՞կ իցես և* բարենշան (*շերհալը*) *ոք. և այն աղջկանց* նազանք (*նազլըը*) *են. բայց սակայն քան զսիրամարգ գեղեցիկ չիցես, և ոչ այնպէս ծաղկալից համապայծառ* թեւս (*ֆէթէր, խանաթ*) *ունիցիս իբրեւ զայն Թռչուն, որ* վարսիւքն եւ գիսակօքն (*Բէյլէրիլէ, մաչլարիլէ*), խրձնացեալ (*խօրօզ խօրօզ, ջուխզ ջուխզ*) *և* խոզանեալ (*խօզանէ դէօնմիւշ*), կարակնեալ (*կամարլը*) բազմաճամուկ (*ջուփլքայն*) տտնովն (*տտուն, դօլ*) *յաղթէ քեզ։ Նաեւ* փորն (*կարող*) *կարի խիկ գեղեցիկ է, և այլք եւս բազումք ի Թռչնոց, ընդ որս Թէ կամիցիս* անցանել ի հանդիսի (*ի հանդիսի անցանել, բաղչաթուրէլ, մըջէլ*)՝ *ոչ ինչ ամենեւին տեսանիցես զանձն։* Թերեւս զի մեծատուն իցես՝ հպարտանայցես (*հարուսթ ըլըլութ համար կը հպարտանա*). *ուստի՞ իցէ զոր ունիսն և կամ զի՞նչ ունիցիս. ոսկի, արծաթ, ականս պատուականս. այն և աւազակաց և սպանողաց պարծանք են և* ոսկեհանաց (*ոսկի հանող*) *և* որ ի քքեական մետաղսն խոնջիցին (*հանքերըն մէջ աշխատող*)։ *Թերեւս զարդո՞ւք ինչ և պատմուճանօք հպարտանայցես. զայն և ի ձիսն է տեսանել. Պարսիկք և* զշառաւուսն (*շառալն, օսղը*) *եւս նկարեն և պաճուճեն։ Զամաչե՞ս,* չքբղչի՞ս (*ամչնալ, ջըրնէլ*) *այնպիսի իրօք հպարտանալ։*

Այլ ի տո՞ւնս ինչ գեղեցիկս պարծիցիս. բազում Թռչունք եւս ի գեղեցիկ տունս բնակեն. մանաւանդ ճայք եւս առաւել պայծառագոյն քան զքո տունսն ունին բնակութիւնս։ Այլ Թերեւս ձայնի՞ւ ինչ հպարտանայցես. քան զփորն և զտոխակ և զասպունձակ (*օսխնկէ ըթնոյ նըքթնող Բուլբուն մը*) *չկարիցես երբէք ձայն նչ քաղցր և հեշտական* մրմնօ՛էլ (*անոր և կամոցոկ նըքնել*)

Այլ թերեւս պէս պէս արուեստիւք. և ո՞վ ոք յայնմ զմեղուօք զճարտարիկօք (ճարտարիկ) անցանիցէ *(գերա-զանցէ)։ Ո՞ր գրօշող, ո՞ր նկարիչ, ո՞ր* գետնաչափ *(երկ-րաչափ) գտանիցի (իցէ) քան զնոսա իմաստուն։ Այլ թե-րեւս բարա՞կ ինչ հանդերձիւք. այնու սարդք իսկ ան-ցանեն զանցանեն զքեւ։ Այլ թերեւս ոտի՞ց արագու-թեամբ. և այնու եւս անասունք* զլեն *(կը գերազանցեն), մանաւանդ նապաստակքն և այծեմունք։ Այլ թերեւս* ի տար աշխա՞րհ *(հեռու երկիր) ինչ երկիր երթալով. և այնու եւս թռչունք անցանեն զքեւ. մանաւանդ* խորդք *(Լակլակ) և ծիծառունք, որ դիւրաւ* հարկանեն զտա-րաշխարհական ճանապարհս *(ճանապարհ հարկանել, ճամբայ ընել). ոչ պաշար բառնան և ոչ գրաստու կա-րօտանան։ Այլ թերեւս քաջատեսութեա՞մբ ինչ հպար-տանայցես. այլ ոչինչ ժամանես այծեման և արծուոյ։ Թերեւս զի արա՞գ լսիցես. այլ չիցես սուր ականջօք քան զէշ։ Եւ թերեւս* հո՞տ քաջ առնուցուս *(աղէկ հոտ կ՚առնես), այլ չկարես անցանել զշամբ։ Եւ թերեւս զի գործօն և համբերո՞ղ իցես, այլ չես ձեռնհաս լինել անդադար իբրեւ զմրջիւն։ Եւ թերեւս զի ոսկի բա-զո՞ւմ յանձին ունիցիս. այլ ոչ որպէս զհնդիկ մրջիւնն։ Իսկ առողջութեամբ և* երագահայութեամբ *(շուտ ճանչնել) յոյժ իսկ* առաւել *(գերազանց) են քան զմեզ անասունք։*

Ոսկեբերան։

ԹԷ ԱՍՏՈՒԱԾ ԻԲՐԵՒ ԸՆԴ ՄԱՆԿՏԻՈՅ ՎԱՐԵՑԱՒ ԸՆԴ ՀՐԵԱՅՍ՝, ՕՐԻՆԱԿԱՒ ՎԱՐԴԱՊԵՏԻ

Աստուած իբրեւ ընդ մանկտւոյ վարէր ընդ Հըր-եայս։ Դպրապետ *(վարժիչ) ի վերայ կացուցանէր նոցա զՄովսէս, և իբրեւ մանկտւոյ այնպէս տայր նոցա հրաման.* ստուերագիրս *(ծրագիր, քանի մը ուրուագիծ գի-ծերով) գրէր, և* ոչ զնոյն իսկ զպատկերագիր իրացն

(ուլու քուռն դուդկերը), որպէս և մեք զալփաբետսն (այբու-բէն)։ Եւ զոր օրինակ մեք մանկտւոյ պղակունդս և պախաճամս (դէօշէկ, դօշուշ) դնեմք առաջի և այնու պատրեմք զնոսա, և զմին միայն պահանջեմք՝ զի ի դպրոցն երթայցեն, նոյնպէս և Աստուած յայնժամ եւ մեծութիւն ետ նոցա եւ փափկութիւն, և զմին միայն պահանջէր ի նոցանէ, մի բազում մտադիւրութեամբ (յօ-ժուրուլընմը) Մովսիսի ունկնդիր լինիցին։ Իբր հօր գթածի արար զնոսա նմա յանձն։ Եւ տես զիարդ ի Մովսիսէ միայն երկնչէին Հրեայք. չասացին թէ Ո՞ւր է Աստուած, այլ թէ Ո՞ւր է Մովսէս։ Մինչ նա մօտ (Նէրկոյ) էր, ահագին էր ամենեցուն, և խնամ եւս տանէր նոցա։ Աստուած կամէր տարագիր առնել (տէ-տրէլ, ճէրմէլ) զնոսա, և նա չետ թոյլ. զոր օրինակ յորժամ հայր սպառնայցէ (մանկան), և վարդապետն (վարժապետ, վարպետ) զանձամբ առնուցու (վրան առնուլ, ներաշխատոր ըլլալ) թէ Ցիս թող, յայսմհետէ ես եմ երաշխաւոր։ Այսպէս լինէր անապատն դպրոց։ Եւ զոր օրինակ մանկտի, յորժամ յամեն ի դպրոցի, փախչել կամին, նոյնպէս և նոքա յայնժամ զԵգիպտոս խնդրէին. զարտասուս հարեալ (որցանէ+ Բոժելով) լային թէ կորեաք, ծախեցաք (ծախիմ, վաճէլ, քնառնէլ), սպառեցաք։ Զպնակիտս (դնոկ) նոցա խորտակեաց Մովսէս, որպէս և վարդապետն առնիցէ. յորժամ տեսանիցէ եթէ չարաչար (ֆէշ) գրեալ է աշակերտն, ի բաց ընկենու զպնակիտն, նա և բեկանէ իսկ, յորժամ բազում ցասումն կամիցի ցուցանել։ Նա (վարդապետն) զուսումն (դաս) և խնդրէր համարս (համարը, դասը դահանջել, հարցնել). ըետուն (համարը շրտաբի, դէֆտրան), և դան եհար զնոսա։ Եւ որպէս աշակերտն, յորժամ ցան աստ անդ (աստէքէն անդէքէն, շաշըրմիշ) հարցանիցի և չասիցէ, դան ըմպէ, նոյնպէս և նոքա (Հրեայք), յորժամ ցան աստ անդ պահանջէին (կը հարցանէին),

ըտայինն համարս (կէսինց դուռը չէին գոցեր), վասն այնորիկ և զան իսկ ըմպէին։ Տեսին ջուր դառն, պարտէին յիշել, զի որ ի ջրոյն արիւնն արար յԵգիպտոս, կարող էր և զդառն ջուր ի քաղցրութիւն դարձուցանել։ Տեսին զի անարիք (հսկայ) բնակեալ էին յերկրին Քանանացւոց, այլ ոչ ինչ մեծամեծք քան զԵգիպտացիսն էին յորոց ի միջոյ զերծոյց զնոսա (Աստուած)։ Այսպէս ոչ ծանեան զգիրն յորժամ ցան աստ անդ հարցան, նմին իրի իսկ և զան արբին. կերան, արբին և կիցս ընկեցին։ Ոչ կամէին առ սեղան հօրն նստել և ի նոյն խորտիկս վայելել, այլ ըստ շարաւ խոհակերացն կամէին զալ (խոհանոցներուն ճենճէ հոտերուն Գէշ ճաշ), ամբոխեալք եւ ի վսեր եկեալք (խառնշտըւելան, ապստամբութեան հանելով)։

Զիք ինչ մեւտ (հակառակ) ի մրեժխնդրութիւն՝ որպէս զմանկտւոյ միտս. յորժամ զլորիցին (մանկունք), ցասնուն, և յայնժամ բաքրոնս կործանեմք կամ զգետինն տանջեմք (...կը նետենք կամ գետինը կը ծեծենք), և ապա ցածնու ցասումն նոցա։ Նոյնպէս և Աստուած հրամայեաց զԵգիպտացիսն և զԱմաղեկացիս տրտմեցուցիչս նոցա կոտորել։ Քնքշեցոյց (ողոքեց, փփաեց) զնոսա. որպէս մանուկն ասիցէ ցհայր իւր եթէ Այս անուն (այնուլ մարդը) եհար զիս. և հայրն ասիցէ Զարահաւ (չարաճարդ) է այրն այն, և մեք առեսցուք զնա։ Զոր օրինակ մանկտի, յորժամ երկնչիցին ի չահազին ինչ իրաց (սոսկալի բանէ մը), կամ յասուե (ասուէ, ճուրբ) կամ ի չուանէ կամ յայլմէ իմեքէ, և այնպէս յանկարծակի իմն պակչին (ապաւէն փախչին) մինչեւ թալանալ (մարել) և անմռունչ լինել (լեզուն կապուել) յերկիւղէն, հարկ լինի բերել յորմէ երկնչինն, և ի ձեռին իսկ դնել նոցա և ընդելուցանել (վարժեցնել, ընտանեցնել)։ Նոյնպէս և Աստուած արար Հրէից. քանզի ահագին թուէր նոցա դիւրն (Բաղաամ կախարդը), դարձոյց զահն ի խրախոյ-

նոցա։ Եւ զոր օրինակ յորժամ ի ստեճէ հատուցանի-ցին ([illegible]) մանկտի, ի սապատակս ([illegible]) ինչ մքերեմք ([illegible]) և պահեմք զկերակուրս նոցա, նոյնպէս և Աստուած զամենայն ինչ ետ (Հրէից) և բազում փափկութիւն։ Զմիայն ոք վարդապետ և դայեակ և դաստիարակ կոչել զՄովսէս և զարմանալ ընդ բազում իմաստութիւն առնն. քանզի չէ ընդ մի ([illegible]) արանց կատարելոց և փիլի-սոփայից վարդապետ լինել, և խակ ([illegible]) մանկտւոյ իշխան կալ ([illegible])։ Ոսկ։

ԹԷ ՈՉ Ի ՀԱՐԿԷ, ԱՅԼ ԿԱՄՕՔ ԳՈՐԾԻ ՉԱՐ

Ոճ ա՛ռ. ի մէջ ([illegible]), զայն քննեսցուք, ի հար-կէ ինչ և ի բռնութենէ մեղք գործիցին, եթէ ի յու-լութենէ և ի ծուլութենէ։ Զի՞նչ հարկ ի վերայ կայցէ սպանանել. հարկ այն իսկ էր՝ չսպանանելն, և ոչ սպա-նանելն։ Քանզի ո՞ ոք ի ձէնջ կամիցի թանալ զսուր իւր ի պարանոց ընկերին, և շաղախել զձեռս արեամբ, և ո՛չ ոք։ Տեսանե՞ս զի նորին հակառակն է բռնութիւն։ Տնկեաց Աստուած ի բնութեանս մերում խնամ ([illegible]) առ ի զմիմեանս սիրելոյ։ Տեսանե՞ս զի առ առաքինու-թիւնն ունիմք ի բնութեանն սերմն։ — Իսկ գողանալն ինչ ի հարկէ՞ իցէ։ Այո, ասէ, քանզի աղքատութիւնն առ-նէ զայն։ Աղքատութիւն մանաւանդ ի գործ ստիպէ և ոչ ի գողանալ. աղքատութիւն զնորին հակառակն գոր-ծէ. քանզի գողանալն ի դատարկութենէ է, և աղքա-տութիւն ոչ զգողութիւն, այլ զխոնջութիւն ([illegible], [illegible]) սովոր է ծնանել, որպէս զի յայտ լի-նիցի ([illegible], [illegible]) եթէ գողութիւն ծուլութեան գործ ([illegible]) է։ Եւ զի լաւ եւս ուսանիցիս, ասէ, ասա. զի՞նչ դժուարին իցէ, ո՞ր դժնդակագոյն ([illegible], [illegible]), զգիշերն ամենայն յածել շրջել ([illegible] [illegible] [illegible]-

րով), զանկիւնս փորել, և ընդ խաւար խարխափել ([illegible]), և զօգիսն ի բռին ունել ([illegible]), և ի սպանութիւն մտաբերել ([illegible]), դողալ, սրտաբախ, սրտադունք լինել ([illegible]), եթէ հանապազորդ վաստակոյն միտ դնել ([illegible]), և անհոգ վայելել, և անկասկած ([illegible]) կալ զգուշութեամբ ([illegible])․ յայտ է թէ այս դիւրագոյն է․ և զի այս դիւրագոյն է՝ անտի երեւի, զի բազումք զայս առնեն, ոչ զայն։ Տեսանե՞ս զի ըստ զբնութեան է առաքինութիւն, և արտաքոյ բնութեան՝ չարութիւնն․ զոր օրինակ ցաւքն ([illegible]) և առողջութիւն։

Իսկ արդ սուտ երդնուլն ի հարկէ՞ ինչ իցէ։ Եւ ոչ մի ինչ հարկ կամ բռնութիւն ([illegible]) ի վերայ կայ անդ․ այլ կամաւ և ոչ յակամայ դամք յայն։ Պահանջիմք ([illegible]), ասեն, և զի՞ գործիցեմք։ Վասն զի կամօք պահանջիմք, մարթ էր մեզ ի բարոյից հաւատարիմ ([illegible]) գտանել առաւել քան յերդմանէ։ Եւ արդ՝ ասէ ասա, ընդէ՞ր կիսոց, թէպէտ և երդնուն, չհաւատամք, և զայլս, թէպէտ և չերդնուն, հաւատարիմ համարիմք։ Տեսանե՞ս զի չեն ինչ պէտք երդմանց։ Այս անուն թէպէտ բանիւք ասէ առանց երդման, հաւատամք, և դու թէպէտ երդնուս, ոչ հաւատամ․ ապա ուրեմն աւելորդ է երդումն, և անհաւատութեան առաւել քան հաւատոյ նշանակ ([illegible])։ Թեթեւ լինել առ երդումն՝ չտայ թոյլ կարծիս լաւութեան ունել, որպէս զի ([illegible]) որ յերդումն յաճախիցէ, այնպիսի է՝ որ ոչ երբէք համարի կարեւոր զպէտս երդմանն ([illegible]) և որ ոչն երդնուցու՝ նա է որ ի նորուն պէտսն վայելիցէ։ Երդման պէտք հաւատալոյ վասն են․ և արդ տեսանեմ, զի որ չերդնուն՝ նոքա առաւել հաւատարիմ են։

Իսկ թշնամանողն ինչ լինել ի հարկէ՞ է։ Այո, ասէ, քանզի յորդէ ցասմանն *(բարկութեան կէր) և բորբոքի, և չտայ թոյլ մեղմանալ ոգւոյն։ Ոչ ի ցասմանէ ինչ է թշնամանել, ով մարդ, այլ* ի կարճմտութենէ *(անհամ–բերութեան)․ զի եթէ ի ցասմանէ ինչ էր, ամենեքեան որ ցասնուին՝ չդադարէին ի թշնամանելոյ։ Ցասումն ունիմք ոչ զի զընկերս թշնամանեսցուք, այլ զի զյանցաւորսն դարձուսցուք․ զի յորդորիցիմք, ոչ զի* ի պղերգութենէ *(անգործութեան) հատանիցիմք․ իբրեւ զխթան ինչ կայ ի մեզ ի ներքս ցասումն, զի ընդդէմ սատանայի ատամունս կրճտիցեմք, զի նմա դազանանայցեմք, և ոչ զի միմեանց եղջիւր ածիցեմք։ Զէն ունիցիմք, ոչ զի ընդ անձինս մարտնչիցիմք, այլ զի ընդ թշնամւոյն կռուիցիմք* սպառազինութեամբն *(այն զէնքով)։ Ցասկո՞տ իցես, մեղացն գազանեսջիր,* զմիտս հարկանիցես *(դուն մէկը ծեծէս), զխիղճ խորհրդոցդ տանջիցես, սաստիկ դատաւոր և դառն դահիճ լինիցիս քոց մեղացն․ այն է շահ ցասմանն․* Եւ միւն իրի իսկ *(այս պատ–ճառաւ) տնկեաց զնա ի մեզ Աստուած։*

Իսկ յափշտակութիւն ի հարկէ՞ ինչ իցէ․ և ո՛չ երբէք․ զի՞նչ ինչ հարկ իցէ յափշտակելն, աղէ, ասա․ ո՞ր բռնութիւն ի վերայ կայցէ։ Աղքատութիւնն, ասէ, առնէ զայն, կասկած *(երկեւղ, հոգ) կարեւոր պիտոյիցն։ Եւ վասն այնորիկ իսկ չէ պարտ յափշտակել․ քանզի չէ* զգուշալի *(ապահով) այնպիսի* մեծութիւն *(հարստու–թեան)․ դու դրեա թէ այնպիսի ինչ առնես՝ որպէս յորժամ ոք, ցոր հարցանիցէ (ոք) թէ ընդէ՞ր ի վերայ աւազոյ դնես զհիմունս տանդ, և նա ասասցէ, եթէ վասն հեղեղի և անձրեւի․* Եա *(մանաւանդ) յայն սակս իսկ չէր պարտ ի վերայ աւազոյ զհիմն դնել, քանզի վաղվաղակի յանձրեւէ և ի հեղեղէ և ի հողմոյ կործանի։* Որպէս զի *(այնպէս որ), եթէ մեծութիւն կամիցիս, մի ագահիցես․ և եթէ որդւոց կամիցիս ստանալ*

մեծութիւն, արդարութեամբ ստասջիր. եթէ իցէ ոք այսպիսի, նա է որ հաստատուն կայցէ, և որ չիցէ այնպիսի՝ վաղվաղակի կործանի։ Աղէ, տես, մեծանալ ([illegible]) կամիցիս և զայլո՞ց յափշտակել. նա և այն իսկ չէ մեծութիւն, այլ զիւրն ունել. որ զայլոց ինչ ունիցի՝ այնպիսին չէ մեծատուն։ Ապա եթէ այնպիսի ինչ է, որք զկերպաս զհանդերձսն յայլոց առնու֊ցուն և վաճառիցեն՝ մեծատունք և ընչաւէտք կոչի֊ցին. թէպէտ և առժամանակն նոցա են հանդերձքն, այլ չկոչեմք զնոսա մեծատունս. ընդէ՞ր, քանզի զայ֊լոց ունին. զի թէպէտ և հանդերձքն նոցա իցեն, սա֊կայն գինքն չեն նոցա։ Նւ եթէ տուրեւառիկ փոփո֊խումն ([illegible]) չգործեն մեծութիւն, վասն վաղվա֊ղակի նոցա ի մէնջ մեկնելոյ, իսկ յափշտակութեա՞նն ինչք մեծատունս առնիցեն։ Նա և որ յափշտակու֊թեամբն մեծանալ ցանկանայցեն՝ բազում անգամ վրէժս իսկ տան զյափշտակութեանն եւ զագահութեանն՝ մահս տարաժամս ([illegible]), և չվայելեն յարարսն ([illegible]), և կամ սակաւակեացք լինիցին, զի բազում ան֊գամ ի փափկութենէ, որպէս ի վտանգէ, ցաւք ծնա֊նին և սատակեն։

Կամէի ի վերայ հասանել ([illegible]) թէ՞ էր վասն այն֊չափ ճեպեն ([illegible]) մեծանալ մարդիկ, թէպէտ և Աստուած վասն այսորիկ եդ չափ և սահման բնութեանն, զի մի և մի՛ ինչ հարկ ունիցիմք խնդրել մեծութիւն։ Հանդերձից վասն՝ մի եւ երկու զգեստ բա֊ւական են մարմնոյ. և աւելորդացն չեն ինչ պէտք. էր վասն բազում հանդերձս ժողովել ցեցակեր մեցամես ([illegible]) առնես։ Զափ սահմանեալ է որովայնի. որ ինչ աւելի է քան զայն՝ ապականիչ է։ Է՞ր վասն այնչափ անգ֊եայք ([illegible]) և խաշինք ([illegible]) և այնքան շաղիղ ([illegible]) պատրաստել, ուր սակաւ ինչ պէտք են որովայնի։ Մի

յարկ բաւական է ի բնակութիւն, ընդէ՞ր այնչափ փողոցք (անցք, սոքաք) և սրահք և պէս պէս սեննակք. զի բուք և ագռաւք բնակեսցեն։ Զաղքատս մերկացուցանես և պէս պէս սեննակս զարդարես. որպիսո՞ւմ գեհենոյ չիցէ այն արժանի։ Նա և ի տեղիս ինչ զոր բնաւ երբէք ոչ տեսանիցին՝ սիւնս կճեայս և քարինս ծանրագինս առաքեն և շինուածս զարդարունս կազմեն. և զի՞նչ այլ ինչ ոչ հնարէն (ուրիշ ինչ՛ր չէն ընէր) յորում ոչ ինքեանք վայելեն և ոչ այլք։ Տեսանե՞ս զի ոչ վասն շահի ինչ կարասւոյ (կարասի, ինչք, ...) այնպէս լինի, այլ ամենայնի այնորիկ անմտութիւնն և սնապարծութիւնն է պատճառք։

Յորոց ասացանն յայտ է թէ ոչ ի հարկէ ինչ գործին չարիք, այլ ի կամաց, ապա թէ ոչ չէին պատժոց արժանի չարագործքն։ Գիտեն օրէնք ներել յանցանաց որ ի հարկէ լինիցին, մանաւանդ զի չիք ինչ յանցանք որ ի հարկէն լինիցին. քանզի ոչ այնպէս արար Աստուած զբնութիւնն եթէ ի հարկէ մեղանչիցէ. նա թէ այնպէս էր, ապա և տանջանք չգոյին. զի ի հարկէ և ի բնութեան յանցանաց ոչ պահանջեմք համարս։ Ոսկ։

ԹԷ ՊԱՐՏ Է Ի ԲԱՑ ԿԱԼ Ի ՓԱՓԿՈՒԹԵՆԷ

Չէ աշխատութիւն առաքինութիւնն, և ոչ դժուարին ինչ։ Զտեսանիցե՞ս զլեառնականսն (ծէնաւոր) զի նոքա են՛ւ զտունս թողին են՛ւ զկանայս և զորդիս և զամենայն պաշտպանութիւնս, և արտաքոյ արարին զանձինս յաշխարհէ. քրձեայս զգենուն, մոխիր ի ներքոյ տարածանեն, անուրս ընդ պարանոցս արկանեն, ի փոքր ինչ խցկան դադարեցուցանեն զանձինս. և զայն միայն ոչ բաւական համարին, այլ պահօք և քաղցիւք հարկանեն զանձինս (կը ծեծեն զիրենք)։ Եթէ այնպիսի

հրամանս ինչ տայի, այժմ ամենեքին սրանայիք. (սրանալ, փոխուել, [illegible]) · և ասէիք թէ ծաղր են իրքն · այլ ոչինչ այնպիսի ասեմ· թէպէտ կամիմ, սակայն չգտնեմ օրէնս · այլ զի՞նչ · ի բաղանիս երթ, և զմարմինդ դարմանեա, և ի հրապարակ ելանիջիր, և տուն ունիջիր, և ի սպասաւորաց պաշտօն առնուցուս, և կերակրօք և ըմպելեօք վայելեսջիր, բայց յագահութենէ մերժեսջիր։ Եւ միտ դիր · ցասումն յորժամ քան զարժանն յաճախիցէ, յայնժամ շարժի և արտաքս դիմէ, և ապա յանզգայս գործէ զամենայն։ Նոյնպէս և մարմնոյն ցանկութիւն, փառաց և ընչից և այլոցն ամենեցուն։ Եւ զայն մի ինչ ասիցես, եթէ այնմ (խստակեցութեան) վշտամբերքն ([illegible]) միայն հանդարտեն ([illegible]), քանզի բազում անգամ քան զվշտամբերսն՝ մեծատունքն և փափուկքն ընկալան յանձինս ([illegible]) զծանր ինչ և զխիստ վարս։ Եւ զի՞ պիտոյցի զարանց ասել, ուր և աղջկունք ոչ չեւ ևս էին քսանամեանք, ի սենեակս և ի հովանոցութեան ([illegible]) զամենայն ժամանակս կատարէին, խնկօք և իւղովք անուշիւք զուարճանային, ի կակուղ անկողինս ննջէին, ինքեանք փափուկք, և պէս պէս դարմանօք օրըստօրեայ իբրեւ զխաւարծի (ֆիտան) փափկանային, և այլ ինչ գործ ոչ ունէին բայց միայն զարդարելն և զպճնելն և ընդ ոսկի ելանել և ի բարեկեցութեան ([illegible]) վայելել, և չհարկանէին երբեք անձամբ սպասաւորութիւն (հարկանել սպասաւորութիւն, [illegible]), քանզի բազում նաժիշտս զառաջաւորս ունէին ([illegible]), հանդերձս փափուկս և առաւել կակուղ քան զմարմինսն, շապիկս բարակս ճամկաւորս ([illegible]), ուռովք զնդովք ([illegible]) պճնեալք, և համակ ի հոտս անուշունս, և ի կեանս բարիս վայելեալ. այնպիսիքն յանկարծակի զամենայն զայնպիսի գրգու-

թիւնս (ֆօքիօ-նիա) ի բաց մերկացան , և զընութիւն և զկերակուրս և զփափկութիւնս և զգեղն և զհասակն մոռացան , և իբրև զնահատակս ինչ կազմեցան և յառաջ կացին (ոօղօրէղ եղան)։ յանկարծակի յապուրակի (յանկարծ) զայնպիսի փափկութիւնսն ի բաց թօթափեցին , և միջամուխ եղեն պատերազմաց ։

Եւ թերևս չհաւատալի ումեք բանքս թուեսցին , այլ ճշմարիտ են . զայսպիսի փափուկ աղջկանց այսպէս լուայ , եթէ յայնչափ վշտամբերութիւնս ետուն զանձինս , մինչ զի և որ կարի խիստ մաղեղէնք էին , ի վերայ մերկ անդամոցն զգենուին , և բոկագնացք զփափկասուն գարշապարսն սովորեցուցանէին , և ի գետնատարած խշտիս դադարեալ , մանաւանդ թէ ըզմեծ մասն գիշերոյն ընդ հսկումն հանէին . և ոչ զխընկոցն և ոչ զայլ ինչ զառաջին դարմանոցն փոյթ յանձին ունէին . և զգլուխն որ այնպէս խնամով ի փափկութեան սնեալ էր՝ անդարման անխնամ առնէին . և այնպէս ընդ վայր իմն (վէր է վէրօյ) քրձեղէն հանդերձիւք միայն զամօթ մարմնոցն ծածկէին . զսեղան՝ միայն յերեկոյին տեսանէին , նա և սեղանն իսկ՝ սեղան չէր , այլ կամ բանջարիկ ինչ կամ հաց լոկ կամ դեղահունտք (ընդեղէն , ըահրէ) , թէ բեւեկն , թէ ձիթապտուղ , թէ թուզ . և տարազագործութիւն (յեաֆօրծ , հէաել, ֆօրծել)՝ հանապազորդ , և քան զաղախնաց եւս չար աշխատութիւն . զհիւանդս դարմանել , անկողինս արկանել (դէօշէք չէքել) , զոտս լուանալ . բազումք և խոհակերել (կերակուր եփել, խոհակերութիւն ընել) եւս ։ Բայց ես ոչ այնպիսի ինչ պահանջեմ ի ձէնջ . քանզի անձամբ կամեցայք ի վայր քան զծառայս գտանել , գոնեա որ չեն կարի ծանր քան զայն՝ առնիջիք . ըզձեռս ի չափու ունել , աչաց լկտեաց համ (լաֆ) դնել . և այն զի՞նչ դժուարին իցէ . իրաւամբք գնալ (վարուէլ) , մի զօք զրկել , մի աղքատն և մի մեծատունն , մի վա–

ճառականն և մի վարձկանն (էշէ)․ *քանզի* մարթի եւ յաղքատն անգամ հասանել անիրաւութիւն (օղլուն ու կըզըյ անէյրա ճօքծ ընէլ)․ *չտեսանիցես որչափ ինչ կռիւս նոքա կռուին ։ Վայելեա ամուսնութեամբ , և լինիցին որդեակք ։ Մեծ է պատերազմն , բարձր՝ դիտաւորութիւնն , անդր իսկ ի բարձունս հասանէ* կատարն (ճըլ—ըխը)․ չկարիցե՞ս ի մեծն հասանել , թէ այսպէս իցէ , զխոնարհագոյնն կալջիր , ի ներքնոյն մի վրիպիցիս (Վերը նէօրուէօրտ տուատէնօրնէօնը ճօրնը է․ Եինէ ժէժէն չօ կըրնօր հօտնէլ, օնօրէն տօրէնանէ ժէշ կեշէր) ։ *Զկարիցե՞ս թափուր յընչից լինել , գէթ զայլոց մի յափշտակիցես ․ չկարիցե՞ս* պահել (պօհէ բօնէլ) , *գոնեա ի փափկութիւնս մի հատանիցես զանձն ․ չկարիցե՞ս ի գետնի ննջել ,* գահոյս (մոհէֆ , տէնկօղէն) *արծաթապատս մի առնիցես , այլ այնպիսի մահիճս կազմեսջիր , որ ոչ ի ցոյցս ինչ իցէ , այլ ի հանգիստ ․ մի փղոսկրեայ գահոյս , մի*․ երիզապատ բազրիս (տօմերը ճօտասէնօէ ղուրդարթուած չէլինէ) ։ *Թեթեւացո զանձնդ ․ ընդէ՞ր բազում բեռամբք* աղխաղխես (կը լէցտանէօ) *զնաւդ ․ զի յորժամ* փոզրոզի (ընընէ) *իցէ ,* չկասկածիցես (ղճօխնօօ)․ *չերկնչիցիս ոչ ի նախանձուէ , ոչ յաւազակաց , ոչ ի նենգութեանց ․ զի ոչ այնչափ ընչիւք մեծանայցես , որչափ հոգովք , և ոչ այնչափ ստացուածովք լնուցուս , որպէս կասկածանօք և տագնապաւ , և որք փորձութիւնս և բազում անձկութիւնս ածեն ի վերայ ․ այսպիսի անցք ընդ այնպիսիսն անցանեն , որ բազում ինչս կամիցին ստանալ ։*

—*Զասեմ եթէ քեզէն* սպաս կալ (ծառայէ) *հիւանդին , այլ գոնեա ծառային հրամայեա ։ Տեսանե՞ս զի ոչ ինչ են ծանր , և աղջկունք եւս փափուկք* բացէ ի բաց (չօր հէրտօ) *հալածեն զմեզ և չտան* կալ յակաստանի (հօտպօտն ժօալ, դէմօնօլ) ։ *Ամօթ յանձին կալցուք , աղաչեմ ․ զի յաշխարհիս ինչ իրս չտամք նոցա (կանանց) մեզ* յաղթել (ճէրօղօնցէլ) , *ոչ ի պատերազմունս , ոչ* ի

բռնամարտիկս (կէ–լէշ) *և ոչ* ի մրցանամարտս (նոյն)։ *և ի հոգեւոր պատերազմունս* քաջ ի քաջ (շատ) առնէն *զմեւք* ելեւել (կը ճէրբողանցեն), *և նախ նոքա առանուն զպսակս և զպարգեւս, և թռուցեալ* առ երկնիւք (ճօրշըրէն) *դան* ի բարձանց իսկ ի բարձրաւանդակս (ճօրշըրէն ատըլք՝ ճօրշըրը) *իբրեւ զարծուիս վերացեալ* շողան (Ռօղէլ), *և մեք իբրեւ զագռաւս ատտէն* ի խռնարհ (*վարը*, ցածը՝) զճենճերով եւ զծխով զամբ ստեպ (*դալ գիւխը*․ այն ինչ բանին մէջ ըլլալ, ...)։ *Եւ արդարեւ ագռաւուց գործ է զսեղանայարդարս և զխոհակերս* իմանալ (խօրհէլ, [illegible]), *և չանց անյագաց*։ *Եւ մի ինչ զզարդուցն ասիցես*․ *քանզի զարդասէր է* ազգն (այն [illegible]), *և քան զամենայն ինչ զայն թերութիւն յաճախ ունին*․ *այլ գէթ* այնու (այս բանին մէջ) *յաղթիցէք դուք նոցա*․ *բայց ընդ նոցա զարդն իբրեւ ընդ անձանց ինչ պաճուճանս* յօրանայք (կը գոռձէք), *և թուի ինձ եթէ ոչ այնչափ կինն ընդ իւր ոսկի զարդն* քրքուիցի (կըրան դողալ), *որպէս այրն ընդ նորա*։ *և ոչ ընդ իւր կամարն այնպէս զուարճանայ* (*այրն*), *որպէս ընդ կնոջն ոսկի զարդն*, *ապա ուրեմն դուք* (*արք*) *էք որ զկայծն արծարծէք*, *և զբոցն բորբոքէք*։

ՆԿԱՐԱԳԻՐ ՎԱՐՈՒՑ ՄԻԱՆՁԱՆՑ ԵՒ ԱՇԽԱՐՀԻԿ ՄԱՐԴԿԱՆՆ

Ի խոյզ արկեալ խնդրեսջիր (փնտռէ) *զարս սուրբս որ արդարեւ սուրբքն իցեն*, *որ յանապատսն իցեն*։ *Անդ տեսանիցես* տաղաւարս (խըրճիթ ծածք) *և* գետնափորս (գետինը փորուած տեղ)․ *փոխանակ* տաճարաց (*տաճար*, [illegible]) *և ապարանից՝ զանապատն տեսանիցես*, զմենութիւնն (մենակութիւն) *նշմարիցես*։ *Արդարեւ տուն ադոյ է վանորայն*, *ուր* խորգն (*խորգ*, ...՝ հագնելու) *և մոխիրն է*, *ուր չիք ծաղր*, *և ոչ մարմնաւոր ինչ իրաց* թախանձութիւն (հոգ, Ռոճըլըք)․ *ուր պահքն են*

և գետնատարած խշտիք (*խշտի, պալաղի անկողին*) . *ամե-նեւին սուրբ* ի ճենճերոյ (*ճենճեր, եղի հոտ, ծուխ*), *սուրբ յարենէ,* յատակ (*մաթուռ*) *ի խռովութենէ և յաղմկէ, ի բազմաթախանձ զբօսանաց, անքոյթ նաւահանգիստ խաղաղ ի հողմոց և ի մրրկաց: Լապտերք հաստատեալք ի բարձունս, ամենեցուն որ անդր դիմեսցեն* բացէ ի բաց (*հեռուէն*) *երեւին. յապահով* (*են ինքեանք*), *և զայլսն յիւրեանց նաւահանգիստն ձգեսցեն. չտան հողմակոծել նաւաց որ ի նոսա դիմեսցեն. չտան ի խաւարի շրջել որոց անդր հայիցին: Մատուցեալ* բուռն հարկանիչիր (*ջանէ*) *զորբոցն ոտից, զի ի նոսա ոտսն լաւ իցէ երթալ քան զայլոց զգլուխս համբուրել: Եթէ յորժամ* զպատկերաց (*արձան*) *ոտից որք յանուն թագաւորաց կայցեն՝ բուռն հարկանիցեն յանցաւորք, հասանեն* օճանի (*օճան, ճոխհէ, թօղուրխան*), *իսկ դու զայնր որ զՔրիստոսն նկարեալ ունիցի յանձին՝ հարկանես բուռն զոտիցն, ո՞չ ապաքէն առաւել գտանիցես զփրկութիւն: Որպէս յերկրէ յերկինս համարիջիր ի սրբոց* վանս (*բնակութիւն*) *փախստական լինել. չտեսանիցես ինչ այնպիսի անդ զոր ի տունս ամենեցուն տեսանես. զի այն բնակութիւն՝ և՛ւ լռութիւն և՛ւ պարկեշտութիւն է. չիք անդ սա իմ, սա քո: Յորժամ* հաւ (*ատաղաղ*) *զառաջինն խօսիցի, ոչ որպէս աստ ի տունս՝ խորդան ծառայք, դուրք փակեալք, և՛ւ ամենեքին նման մեռելոց կան ծանրարթունք, և* պահացոյցքն (*դէքօր, դէքօրասիօն*) *միայն զզանգական գանգաչեցուցանեն. չիք անդ այսպիսի ինչ, այլ վաղվաղակի ամենեքին միանգամայն երկիւղիւ զքունն թօթափեալ յառնեն կան առհասարակ: Յորժամ գլխաւորն* ազդ *կամ ոտամբ կամ ձայնիւ* առնիցէ (*ազդ առնել, խմաց տալ*), ի զգաստական (*հաճոյ, +ետաքիլ*) *պարսն յօրինեալք, գունդ առ գունդ կացուցեալք, ամենեցուն առհասարակ զձեռսն յերկինս համբարձեալ՝* զնուիրական

(ուչքաղան) *օրհնութիւնսն երգեն* միահամուռ (մըաճան)․ *Ոչ մեզ նմանեալք բազում ժամուց կարօտանան մինչ զքունն յաչաց թօթափիցեն* և զգլխագար (գլուխը խոնգարող) *թմբրութիւնն*։

Մեք յորժամ զարթնուցումք, բազում ժամս ընդ քորելն և ընդ քոշքոտելն (*քորել, քոշքոտել* · *նոյնանշան բառեր՝* տերել, տերոսըթել) և ընդ թառանչելն և թանչելն (*թառանչել, թանչել* · *նոյնանշան՝* ձայն հանելով յորանջել) հանեմք (*հանել ընդ* . . . անցուանել . . . ով) · *ապա ուրեմն* լրջացեալք (տանը նոքել, ուրննալ) զկարեւոր պետսն վճարեմք (քնական պէտքը կատարել) · *ապա զձեռս լուանամք*, օղ (ոտքէ ամառ) *և ձորձս խնդրեմք, և բազում ժամս* ծախեմք (անցուանել)։ *Իսկ անդ չիք ոք այնպիսի* · *չիք ոք որ* զպատանիս (ողբառաոր) *կոչիցէ, և ոչ որ ծառայի հրաման տայցէ* · *իւրաքանչիւր անձանց բաւական են կալ ի սպասու*։ *Ոչ բազում հանդերձից կարօտանան, և ոչ մինչ քունն յաչաց թօթափիցի, այլ անդէն մինչ զաչսն բանայցեն՝ քան զվաղուց արթունսն եւս արթունք գտանին*։ *Ցորժամ սիրտն չիցէ ծանրացեալ ի պէս պէս կերակրոցն, ոչ ի վայր հակիցէ, և ոչ ի խոնարհ միտիցէ, և ոչ բազում ժամուց կարօտանայցէ՝ մինչ* ուշաբերեալ զուարթանայցէ (այըլմաք)։ *Ձեռք սուրբ յաղտեղութենէ, քուն անոյշ և հեշտական* · *չլսէ ոք անդ զձայն խորդալոյ և ոչ* զշնչալոյ (շըշ շըշ ձայն հանել) *և զմռնչելոյ, և ոչ զձգտելոյ և զյօրանջելոյ*։ *Նա և* ընդ քուն (տեղ աղբն) ըմբռկանան (հանտաէլ, ուզնամաք), *այլ* է՛ւս (ատելի) *զգաստացեալ քան* ի լրջէ (ցուրեկը՝) *ի քունն գտանին* . . . *քանզի բազում երկիւղն Աստուծոյ չտայ ի խոր քուն ընկղմել միտացն, այլ* ծանծաղագոյնս յաղուեսաքունս (տըղտաէտի տեղ ղէռ ըներն տառնոմ) *միայն զքաղցր ցանկութիւն քնոյն եւեթ կատարեն*։ *Նոյնպիսի ինչ նոցա և երազքն* · ոչ սահանք եւ ոչ ծփանք (յուղմանք, խառուկօռնիան), *և ոչ ցնորք առ ա-*

չօք, այլ որպէս վերագոյնն ասացի, յորժամ զառաջինն հաւ խօսիցի, և կամ թէ եւս վաղագոյն, յարուցեալ վարդապետն, եթէ միանգամ միայն դոփիցէ ոտամբ (ոտքը զարնել), ընդոստուցանէ (վեր կը ցատկեցնէ) զամենեսին և յարուցանէ. քանզի և ոչ մերկ ննջել ումեք իշխանութիւն է. ապա յարուցեալ միանգամայն և միահաւաչ երգեն զմարգարէական օրհնութիւնս գեղգեղեալ ձայնիւք եւ յօրինեալ բարբառովք (Ներդաշնակաւոր եղանակներով), ազգի ազգի կցորդիւք (կցորդ, երգէ մը վերջին մասը որ կը կրկնուի), որում ոչ ձայն քնարի և ոչ գուսիւն սրնգի նման է, և ոչ բազմախառն փողք տաւղաց (երգեհոնի պէս նուագարանի մը տեսակ տեսակ ձայն հանող գործիները) այնպիսի ինչ ձայնս յօրինեն. զի այնպէս հեշտականս և քաղցունս բարբառին։ Ցամուրս անապատին, ի խոր խաղաղութեան երգեն զերգս սրբոց։ . . . Յորժամ այդ լինիցի, հանգչին փոքր մի. և յորժամ մեք ընդ գործ խառնիցիմք, նոքա խուճ (քէշ, ֆեռֆե-) քնոյն յագեցեալք և հանգուցեալք, դարձեալ միւսանգամ յօրհնութիւնսն կազմիցին։ Իսկ մեք չեւ այդ եղեալ, իւրաքանչիւր զընկեր կոչեմք համարս պահանջել. և կէսք ընդ հրապարակս ճեմ առեալ շողայցեմք. այլք առ իշխանս կանխեալք յահի և ի դողման կայցեն, եթէ զիարդ ի պատուհասից ապրեսցին. այլք ի բոզանոցս, և այլք յիւրաքանչիւր պէտս։ Իսկ նոքա դարձեալ իբրեւ զառաւօտին զաղօթսն և զօրհնութիւնս կատարեն, ապա յընթերցուածս գրոց շրջիցին. ոմանք իսկ զճարտարութիւն գրչութեան ուսեալ, իւրաքանչիւր առանձինն սենեկիկ առեալ, կամ բնաւ միայն կամ միով ընկերաւ, միշտ սակէ ցածութեամբ. ոչ շատ խօսել, ոչ շաղակրատել, և ոչ զանօգուտս բարբառել։ Զերեք ժամն, զհասարակ օր, զինն ժամն (ժամը երեքին և կէսօրին և ժամը իննին) զերեկորին աղօթսն ցանկ անխափան կատարեն։

Մինչ մեք ամենեքին ճաշիցեմք, խաղայցեմք, ծիծաղիցիմք, ուռուցանիցեմք զորովայնս, որկորոտութեամբ շուայտանայցեմք, մցուիցեմք ([illegible]), նոքա օրհնութեամբքն զմայլին ([illegible]), և յետ ճաշոյ ի նոյն ոտն մտանեն, կան պատկառ ([illegible]) օրհնութեանցն։ Աշխարհականք և ցերեկն նընջեն, նոքա ցանկ արթունք և պատրաստք ի պաշտամանն. աշխարհականք ի բազում ժամս ի քուն յամեն, յարուցեալ դանդաչեն ([illegible]) քան զխելագարս, իսկ նոքա տակաւին սկեն, անսուաղ ([illegible]), առանց հացի, և միայն օրհնութեանցն ուշ ունիցին ([illegible])։

Աստ իբրեւ երեկոյ լինիցի, կէսք ի բաղանիս և ի հանգիստ ճեպին, իսկ նոքա վայելեալք ցերեկութեանն վաստակօք, ի չորաբեկ սեղանն մատչին։ Ոչ զբազմութիւն ծառայից յարուցանեն, ոչ զտունս դղորդեն, ոչ խռովլին, ոչ աղմկին, ոչ խորտիկք յօրինեալք առաջի մտանեն, ոչ հոտ ճենճերոյ, և ոչ համադամք կերակրոց. այլ ոմն հացիկ և աղիկ, և ոմանք եւղիկ եւս յաւելուն. և որ եւս տկարագոյնք իցեն՝ բանջարիկ եւս խառնեն, և դեղահունդս և ոսպնեայս։ Ձեւ Նստեալ ([illegible])՝ և անդէն եւս յօրհնութիւնսն յորդորին։ Եւ յորժամ հանգչել կամիցին, ի խոտեղէն խշտեկին հանգչին։ Ոչ փափկութիւն (է անդ), ոչ գրգութիւն, ոչ ահ իշխանաց, ոչ սաստ տերանց, ոչ երկիւղ ծառայից, և ոչ աղմուկ կանանց, և ոչ մանկըտւոյ խռովութիւն, ոչ սպասք բազմամբոխք ([illegible]), և ոչ փոխանակք հանդերձից ([illegible]), ոչ ոսկի և ոչ արծաթ, ոչ շտեմարանք և մառանք, և ոչ այլ ինչ նոյնպիսի, այլ ամենեւին ամենայն հոգեւոր անուշութիւնք ոչ կասկած ի դողոց, և ոչ երկիւղ յաւազակաց. չիք ինչ որով կծծասիցին, քանզի չիք ինչք և կարասի. մարմին միայն (է) և ո-

գի, և եթէ զայն ոք հանիցէ, չվնասին ինչ այլ օգ-տին, ի կապոյ արձակին, ի բանդէ ելանեն։ Զիք անդ լսել ձայն ողբոց և ոչ զճչիւն և զգուժիւն. քանզի սուրբ են յարկք նոցա յայնպիսի աղմկոյ, և յստակ և պարզ յայսպիսի աղաղակէ։ Մեռանին և նոքա, քանզի չունին անմահ մարմին, այլ չգիտեն զմահ, և օրհնու-թեամբ յուղարկեն զգնացեալն։ Ցուղարկաւորութիւն կոչեն, և ոչ դիահանութիւն (*ջանել վէրցանել*)*. և յոր-ժամ ասիցեն թէ այս անուն վախճանեցաւ, բազում ուրախութիւն լինի, առաւել ցնծութիւն. մանաւանդ զի չիշխէ ոք ասել թէ այս անուն վախճանեցաւ, այլ թէ կատարեցաւ։ Անդ առնին գոհութիւնք և փառք և բազում բերկրութիւնք. իւրաքանչիւր աղօթս մատու-ցանեն այնպիսի վախճանի արժանի լինել. ելանել ի պա-տերազմէ, հանգչել ի վաստակոց և* ի ճգանց (*ճիգն, կռիւ*)։ Յորժամ* խօբանայցէ *ոք* (*քէֆը տարել*), ոչ ար-տասուք, ոչ ողբք, ոչ բժշկաց ձեռք, այլ հաւատք միայն բազում անգամ յախտէն զերծուցանեն։ Եւ եթէ բժշկաց պէտք լինիցին, սակայն և անդ բազում* զգաստութիւն (*հանդարտութեան մօտ*) *է, *բազում* ժուժկալութիւն (*համբերութեան*)*. ոչ կին հերարձակ առ սնարսն, և ոչ որդւոց որ չեւ եւս* գիտիցեն զչափ (*գիտել չափ, ձորէրը տուած ըլալ*) *որբութեան՝ լալ,* առատանալ (*այլայմել, ալի խօռի ըլալ*)*. ոչ ծառայք որ աղաչիցեն զայն որ* յօգինս իցէ (*հոգէ տալու վրայ է*)*, եթէ ում յանձն առ-նիցէ զնոսա զգուշութեամբ. թէպէտ և լինիցին (ի նո-սա) ցաւք, ոչ ի շատակերութենէ և ոչ* ի գլխագարն (*անդէօյ*) *արբեցութենէ (լինին), այլ պատճառք ցաւոցն լինին* դրուատեօք (*ծօվըլնամբ*)*. չիք պարսաւանաց պատճառք ի միջի, այլ թէ ի հսկմանէ, և կամ թէ ի ստէպ պահոց, կամ յայլ ինչ այնպիսեաց մտին ցաւքն; ուստի և* դիւրապուրբ հարազազերծք լինիցին (*շուտով կ՚ողորին*)։ *Զի* շատ (*բաւական*) *է* վաստակաւորին (*աշխա-*

դած , յօգնած) *ի մխիթարութիւն , եթէ ոչ իցէ այնու- հետեւ ձեռնհաս ի վաստակել , զերծանել յամենայն* կարեաց (*կարիք , նէօք , ղուրղուրանք*)։

ՆԿԱՐԱԳԻՐ ՀՐԴԵՀԻ

Իցէ՞ *տեսեալ (քո) , յորժամ* հրդեհ *զմեծամեծ տանց* հարկանիցի (*կըանըն դեղ մը բանըը*) , *զիարդ* ցոլանայ (*կ'նըլէ կէր*) *բոցն և ծուխն և անդր յերկինս կցի , և չիք որ ժտի մատչել և զչարն չիջուցանել. այլ ամենայն ոք* ընդ ահձին ճեպի (*էնք զէնք նը հօգօս*) *և զիւրն միայն գի- տէ . և հրդեհն ոչ մեղմով , այլ սաստիկ զամենայն* ճա- րակեսցի (*սարէ*) . *և բազում անդամ ամենայն քաղաքն շուրջ կայցէ և տեսողք և եթ չարեացն լինիցին , և ոչ զօրաւիգն և օգնականք* ։ *Եւ անդ իցէ տեսանել զի ոչ ինչ* օգուտ լինիցին (*օգտակար ըլլալ*) *որ շուրջ կայցեն , այլ իւրաքանչիւր ոք զձեռս* ձգիցեն (*նըրնցանների*) *և նո- ցա որ* առժամայն (*դէօ նօր*) *իցեն եկեալ՝ զտեղի իմն ցուցանիցեն , կամ ընդ պատուհանս զբոցն ցոլացեալ , կամ զգերանսն որ* հապ (*արօգ և սաժօղ*) *կիսայրեաց անկանիցին , կամ ողջոյն իսկ* զփողոցսն (*նըկայն բօրակ որահ դան , անցք*) *որ միանգամայն* ի սեանցն եւ ի մուքից զերծանիցին (*օխանըրըն և դեօդըկնըրըն ղարանըլըղ*) *և յեր- կիրն կործանիցին . իցեն Թերեւս և բազումք յանդը- գունք և* ի վսեր եկեալք (*ուշըը ջէք մորդըկ*) *որ և մօտ իսկ ժտիցին ի հրդեհ շինուածոյն հասանել . ոչ զի* ձեռն տայցեն (*օքնըլ*) *և զչարն շիջուցանիցեն , այլ զի ցան- կալի իմն զտեսիլն համարիցին , յորժամ ի մօտոյն* ստոյգ (*ուղէկ , ծէղդ*) *կարիցեն նշմարել , որոց , մինչ ի բացեայն կային , չերեւէր այնպէս ։ Եւ եթէ գեղեցիկ եւս և մեծամեծ շինուածքն իցեն , զայն* համարին եղուկ եւ ողորմ (*նը կօկծան , նը ցանըն*) *և բազում արտասուաց արժանի ։ Նաեւ է իսկ ողորմ տեսիլ . բայց սիւնքն*

հանդերձ ախտաւեղագէս խոյակօքն (*ախտաւեղագէս*, *խո-յակ*, սեռան ֆլ-խ) *մանրիցին և ի յատակսն կործանիցին*. *և* իցէ ինչ բազում (շար բան ալ) *զոր ինքեանք* բեկտի-ցեն (ֆրցանել), *այսպէս կէսն ի հրոյն այրեսցի և զկէսն չինողացն ձեռքն մղիցեն ընկենուցուն, զի մի եւս քան զեւս սաստիկ* ջամբ (ծոբակ) *հրոյն լինիցի*. *Անդ իցէ տե-սանել և զբազում պատկերսն զոր ազգի ազգի նկա-րուք* քանդակեալ (ֆորտէրէանը ֆրշըլ) դրօշեալ (փրփա՝ կա-նով) *իցեն, յորժամ ձեղունքն բանայցեն և մերկ յար-կացն լինիցին, բազում* անշքութեամբ (շահթը, *այսինքն*, ֆառատաւորաթխանը կորանցներ) *մերկացեալ խանձատեալ* նշաւակ կայցեն (խայրատակ, օզնան խալ). *և զազգի ազ-գի զհանդերձսն, և զոսկեղէն և զարծաթեղէն ա-նօթսն, զոր* յանկարծ ուրեք (հալէս թէ, եւբեխն) *տա-նուտէրն հանդերձ իւրով միայն ամուսնոյն տեսանէր*, (*որպիսի են*) սապատք (սէֆեր) *հանդերձիցն և* խնկոցն կաւշարայք (ծխանելյաց դաւփէ, անօթէ) *ի մարմարակուռ սենեակսն*, յերփներփն կճէիցն դրուագաց (դոյնգյոյն ճէրճէրէ խափլանմերին) *ամենայն միանգամայն ի միոյ հր-րոյն* գուեճիկ վաճառանոց լինիցի (հասարակ բան ծախող-ներու տեղ ըլլայ)։ Եւ ճասանէ տեսանել (կը ճայ դենել, կը դենանէ) *այնուհետեւ* աղբակիրս (ջեօֆնէ), որթակիրս (օբթ, կոնակը թէ-ֆէ կրող), թիաւորս (թէօվ տշխարող, մօ-լօղ մերցանող), *զամենեսեան խառն և անհարց ի ներքս մտեալ*։ *Եւ այլ ինչ ոչ իցէ անդ տեսանել, բայց մի-այն ջուր և հուր և կաւ և մոխիր ։ և զփայտսն թե-րայրեացս*։

ՍԵԲԵՐԻԱՆՈՍ

ԹԷ ՆԻՒԹՆ ՑԱՍՑՈՒՄՈՑ Է. ԵՒ ԱՐՈՒԵՍՏՆ Ի ՄԱՐԴՈՑ

Զբնութիւնն (Նէրէ, տուրր) *եդ առաջի Աստուած, և զարուեստն թագոյց. ամենայն նիւթք և* ատաղձք (Նէրէ, եէրէրնէ) *եղան առաջի յԱստուծոյ, և արուեստն ի մտաց ծնան։ Եդ առաջի Աստուած զքարանց բնութիւն, և ոչ զշինուածն պատրաստական։ Ետ ցորեան, և ոչ եթէ հաց գործեաց և եդ առաջի։ Ետ խաղող, և ոչ եթէ գինի ինքնին արար զխաղողն։ Ետ* ասր (բօուրդ), *և ոչ եթէ զհանդերձն ինքնին գործեաց։ Ետ զոսկին խառն ընդ հողոյ, այլ ոչ եթէ ինքն* ընտրեաց (գուրեց) *ի հողոյն։* Ինքն առնէ (կը տէվէջէ), *և մարդոյ արուեստին տայ* կազմել (ընէլ. չինէլ) *զգործն. զնիւթսն ինքն եցոյց, և* զկազմած գործոյն յարուեստն ապաստանի արար (գօրծը չինէլը ուսթատին բըղաց, յանընէց)։ *Ո՞նախ կազմեաց արօր՝ փայտիւ և երկաթով զերկիր պատառել, և ակօս բանալ, և լուծ կազմել, և* ծիգ (մաճ, սբօրչին կօլը), *և եղինս* սամետեօր (*սամետիք*, լոծըն կօլը) *ի գործ ածել։* Էր (կար) *փայտն և երկաթն, այլ արուեստն* չէր ուրեք ի միջի (օբլոտն չկար). *ո՞ եցոյց քեզ, այր դու, եթէ այդպէս արօր կազմիցի, կամ խիստ բնութիւն երկաթոյ հրով կակղասցի. ո՞* եցոյց քեզ հանգամանս (*ցուցանել հանգամանս*, սօրմէցնէլ) *յայնչափ* քանձրութեանէ (հասրութեան) *երկաթոյ նստել* տուայտել (ալրալտր աչխատէլ, նեղուէլ) *և առեղն մի փոքրիկ գործել։ Ո՞արկ քեզ ի միտս՝ դրաց* աղխս եւ փականս (կղպակ) գործել (չինէլ), *և կամ ձեղունս և յարկս տանց* յարդարել (չինէլ)։ *Կարի, աւէ, տխմարաբարս իմն հարցանես. զԱստուած հնարացոյց ի միջի ունիմ, և հարցանես թէ ուստի՛ ուսար։*

Այսպէս ամենայն ուրեք մարդկեղէն բնութիւնս իւրում տեառն նմանեալ զարդարէ արուեստիւ զբնութիւնս (ջիղերը)․ և եթէ ի չափու կայցէ, բարւոք է․ ապա թէ ըստ չափն անցանիցէ, թշնամանի։ Անչափ ցանկութիւն մտաբերեաց (յանդգնիլ) գործել պատկեր մարդակերպ։ Եւ քանզի լուաւ եթէ Աստուած յերկրէ առ հող և արար զմարդն, ի վարանս մտանէ արուեստն։ Քանզի չկարէ (մարդն) ճշմարտութեամբ նմանել տեառն իւրում, այնուհետեւ ի հնարս եւ ի հայթայթանս ապաստան լինի (ծուարելու կը դիմէ)․ ժողովէ արմատս և ծաղիկս վասն զգոյնս յարմարելոյ (բաղադրել)․ Նմանեցուցանէ աչս աչաց, այլ չտեսանեն․ շարժէ ականջս, այլ չլսեն․ յղկէ (տաշել, յեսանել) զունչս, և չհոտոտին․ կշռէ զբերանն, այլ չիք բարբառ ի շրթունսն․ զձեւ ոտիցն և բարձիցն (բարձք, ծունկ, սրունք) յօրինէ, այլ չիք գնացք և քայլք ոտիցն։ Դարձեալ և միւս եւս արուեստիւ կամի (մարդ) նմանել տեառն և արարչի, բժշկաց արուեստիւն։ Յորժամ տեսանիցէ ի մարմինն փուտ, երկաթ ի գործ արկանէ, և զփուտն ի զատ (մէկդի) հատանէ․ և յորժամ զվէր բուժել կամիցի, չինել հասուցանել և ածել ի չափ զկերեալ մարմինն, ընթանայ (կը դիմէ) ի հողն ուստի մարմինն ստեղծաւ, և կազմէ անտի դեղս և սպեղանիս․ միովն (երկաթով) քակէ զփուտն, և միւսով (սպեղանեօք) չինէ։

Ածէ զմտաւ (մարդն) թէ զիարդ գործի բարբառոյ բերանոյն կազմեալ իցէ․ նկատէ զբնութիւնն, և նմանեցուցանէ (նմանը կ'ընէ) արուեստիւ բնութեանն․ և տես զինչ գործէ արուեստն։ Տիկս իմն կազմէ որ ոչ յանձնէ ունիցին զփուքն (հով) այլ ընդ տալն և ընդ առնուլ, ընդ բանալն և ընդ խփել առնուցուն փոխ օտար օդ։ Ապա յերկուց տկացն ի ցնցուղս հողմաբերս (հովը բերող ծակերուն) և անտի յամենայն փողսն (փողերը) տայ զփուքն։ Իմանայ (կը հասկնայ, կը գտնէ), զի, թէպէտ և

փուքն խաղայցէ, Նուագ ինչ չհարկանի (եղանակ չլար), *և* այնմ եւս հնարս հնարի (սազը ու ճալղը կը զարնէ) ․ *մատամբ յօրինէ և գեղգեղէ զնուագսն ։ Եւ ուստի՞ լիցի քեզ այդ , ո՛վ մարդ ․ ուստի՞* իմացար (գտար , հնարեցիր) *զտիկսն օդնկալս կազմել , և զմղեալ օդն մատամբք ի նուագս յօրինել ։ Կարի իմն , ասէ , տխմարաբար հարցանես ․ աստէն յիմ բնութիւնս հայեցայ և* նմանեցուցի (նմանեցայ , նմանը չինեցի) ․ *քանզի յիս տեսանեմ օտար չունչ ելամուտ , և* պատեանքս (կործէ , բոլ) *ստէպ* բանալով (բացուելով) *և խափանելով՝ ընդունիմ զօդն հասարակախառն ։ Տեսանեմ զի երկու* տիկք (թուլերը) *տան և առնուն զօդն իբրեւ ցնցղով իւիք* սոսորդով (շնչ-ֆող) ըստ բերանն (բերնէն) ։ *Տեսանեմ զի և օդն մտանէ և խօսք չլինին , եթէ ոչ լեզուն ի մէջ անցեալ զնուագսն յարդարիցէ ։*

ԿԻՒՐԵՂ ԱՂԵՔՍԱՆԴՐԱՑԻ

ԹԷ ԶԻԱՐԴ ՊԱՐՏ ԻՑԷ ԹԱՐԳՄԱՆԵԼ ՅԵԲՐԱՅԵՑԵՐԷՆԷ ՅԱՅԼ ԼԵԶՈՒ

Եթէ ոք կամիցի զամենայն լեզուաց նովին բանիւք (միեւնոյն բառերով) *զզօրութիւնն թարգմանել* , չկացուցանէ յանդիման (նշաններ , ձեւկոյցներ) *զբանիցն ասացելոց զմիտս ։ Քանզի բազում են ըստ իւրաքանչիւր լեզուաց* առանձինն բանք (յատուկ բառեր , յատուկ ոճ) , *որք թէ անդէն ի տեղւոջն մնայցեն՝ դեղեցիկք և լուսաւորք և յայտնիք և պատշաճողք թուին այնոցիկ որք զնոսա ի կիր արկանիցեն ․ բայց* նովին բանիւք (բառ առ բառ) *յայլ լեզու փոխեալք՝ չընծայեցուցանեն զմտացն զօրութիւն ։ Որ զհին կտակարանսն այսպէս* ըստ բանիցն (բառ առ բառ) *թարգմանեցին՝* վրիպեալ գտան (գտնուեցան , եղան) *առ ի յայտ յանդիման* զընծայութիւն

մտացն (մէթին, խմաթին հանտէրը, օղոյողը) *կացուցանե-*
լոյ, վասն որոյ և բազում մքարութիւն (մէանէխան) *է*
տեսանել ի թարգմանութիւնսն։ Պատշաճագոյն էր
թողեալ զբանիցն զառանձինն պայման (քէլէլէրին յա-
թօվ կէրուը) *զմիտսն թարգմանել, և ոչ առանձինն բա-*
նիցն պատշաճիւք (քէնտ քէլէլէրին դուդուխանող քէլէլէրով)
զզօրութիւն մտացն խաբխալել (տալըլ)։

Եթէ ոք այսպիսի պայմանաւ թարգմանութեան
վարիցի, բազում աշխատութիւն ընթերցողացն յաճա-
խէ· քանզի հարկ իսկ է այնոցիկ ուք զՅոյն լեզուն
ունիցին և զնոյն ի կիր արկեալ վարիցեն՝ տգէտ լինել
հեբրայական առանձին բանիցն, և ընթերցեալ զթարգ-
մանեալսն ըստ հեբրայեցւոց բանիցն բարբառոյ՝ շլմորել
(շէօմէլ)։

Պարտ է դիտել եթէ են բանք յեբրայեցին զոր
նոյնաբանութեամբ (մինայն քէլէլէրով) *թարգմանել չէ*
հնար վասն առանձին բանիցն խորութեան, և ի հար-
կէ թարգմանիչք զմիտսն եւեթ զբանիցն ի յայտ ածել
ջանացան։ Զիսկզբանէն արար Աստուած զերկինս և
զերկիր, ոչ է օկըթանէ ասէ հեբրայեցին, այլ է ֆէխօյ·
որպէս և Ակիւղաս որ նոյնաբանութեամբ կամեցաւ
ըստ նմին բանից թարգմանել՝ ի գլխոյն, ասէ, արար
Աստուած զերկին և զերկիր· և զլայտնաւորութիւն
(քօյօյայփօրիսան) *մտացն մթացոյց։* Եւ այն զի՞նչ իցէ
(այս ինչ դէօր ըլլայ), *զձայնաւոր նշանագիրսն որ ընդ*
անձայնսն (քօղումայն) *խառնին՝ ոչ գրեն Հեբրայեցիք,*
այլ միայն զանձայնսն, և ապա յընթերցուածոյն կարգէ
(խօթին կօրքին), որպէս եւ համանել կարէ (էր հօկչօղլու-
նեանը հօմսնար), որ ընթեռնուն (կօրչօյորը) *ածէ ի վե-*
րայ իւրաքանչիւր անձայնիցն զձայնաւորսն, և մարթի
զնոյն (մինայն քանը) *այլ և այլ ազգ ընթեռնուլ։ Այս-*
պիսի ինչ համարեաց թէ (եբրայեցին) գրիցէ զՆՆՆ
միայն և զ— և զ— առանց ձայնաւորացն, և հարկ

Մնիցի ընթերցողին յաւելուլ զձայնաւորն իւրաքան-
չիւր ումեք անձայնիցն, և ապա ասել իբրեւ ի կար-
ծեաց (կործեօ, մուկաբերոբնամբ՝) կեր, կոոր, կոր. և
այսպէս իբրեւ փոխեցէ զձայնաւորսն, այլ և այլ բար-
բառս (քոո) ցուցանեն։ Եւ բազում ինչ է որ յԵբրայե-
ցին (եբրայեցերէնին մէջ) արուաբար (էբրե- արական) ասի,
և ի Յոյնն՝ իգաբար (էգականակէ). և փոխանակ միա-
ւորին (եղակիին տեղ) զբազմաւորն (յոգնակի) դնէ Հեբրա-
յեցին. որպէս յորժամ ասիցէ Երկինք, փոխանակ ասե-
լոյ՝ Երկին, և այս յԱսորին և յԵբրայեցին նոյնպէս
գտանի (է)։ Նա և զեկն և զերբն և զկերն և զորբն և
զփոխանականութիւնն (դերանուանք) Եբրայեցին և Ասորին
արուին այլազգ (ուրիշ կերպ) ասեն, և իգին՝ այլազգ։
Որդի հարիւր և սասն ամաց էր, ասէ, Ցեսու, փո-
խանակ ասելոյ եթէ էր ամաց հարիւր և տասանց։
Նոյնպէս ասէ Ընդ արդարն և ընդ ամբարիշտն, փո-
խանակ ասելոյ Զարդարն և զամբարիշտն, քանզի Եբ-
րայեցին զընդն յաճախ վարէ (շատ կը գործածէ)։

Նաեւ սովոր են գիրք (Աստուածաշունչը) ստուարա-
ցուցանել (մեծցնել, ծփոոբիմոգ) զիրս։ Յորժամ սպառնայ
ի գերութիւն վարել ժողովրդեանն, ասէ. Խաւարես-
ցի արեգակն, և լուսին ոչ տացէ զլոյս իւր։ Խաւա-
րեցաւ երբէք արեգակն, կամ լուսին եղեւ ինչ այն-
պիսի։ Այլ յորժամ սպառնալեաց և տրտմեցուցանելոյ
բանք իցեն, յայնժամ յաճախէ այնպիսի բանս. և
յորժամ խնդութեան իրք իցեն, դարձեալ զայն ըստ-
ուարացուցանէ։ Կիւրղ։

ԿԻՒՐԵՂ ԿՈՉՈՒՄՆ ԸՆԾԱՅՈՒԹԵԱՆ

ՁՄԵՂԱՑ ԵՒ ՁԲԱՆՍԱՐԿՈՒԷՆ

Չար, չար են մեղք, չար են, այլ ոչ եթէ առանց բժշկութեան են։ Չար են այնոցիկ որ լամբեալ *(պօրճ-լու) յինքեանս զիւրեաւ ունին, և դիւրին այնոցիկ են որ ապաշխարութեամբ ի բաց թօթափեն։ Բայց եկ,* դիցուք գրեսցուք *(ենթատրէնէ) եթէ առեալ ոք ունիցի ի ձեռին* կայծակունս *(ճարաճ ածուն, կրակ),* ապարէն *(տա-պանճա) մինչդեռ ունիցի զկայծակունսն, այրի իսկ, իբրեւ ի բաց ընկենուցու զկայծակունսն, և* զայրեյն *(օֆքէ) ի բաց թօթափիցէ։ Այրեն, այրեն մեղք զՁիգս ոգւոց, և փշրեն խորտակեն զմտաւոր ոսկերս խորհրդոց, և չիջուցանեն զլուսաւորութիւնս մտաց։ Իսկ արդ, ասիցէ ոք. Զի՞նչ են մեղք, հրեշտա՞կ իցէ, դե՞ւ իցէ, ինչ ի կենդանեա՞ց իցէ. զի՞նչ են որ այնչափ* ճնարողք *(ամէն բանէ ճարը բուլող) և զօրաւորք են։* Չէն իւնչ որ ուստեր *(բան մը չէն), այլ դու, և ոչ յօտարուստ թշնամի ոք է որ մարտնչի ընդ քեզ, այլ բոյս չարին* ի կամակար բարուց քոց *(տա անչնէչիան բոլորնդէր) անդըստին ի քեզ բուսեալ։ Աղէ դու, ուղիղ քովք աչօք հայեաց, և ոչ ուստեք ծնանի ցանկութիւն։ Մի յափշտակէր զայլոցն, և դադարեալ նՁեալ կայ զըրկումն և* զերծումն *(յափչըրկավարքան)։* Ցուղ լիցի քեզ *(սէնէ) ահեղ օրն դատաստանին, ոչ սպանութիւնք և ոչ մի ինչ յանիրաւութեանց յաղթել կարասցեն քեզ։ Ապա թէ մոռասցիս զԱստուած, յայնժամ սկսանիցիս խորհել զանօրէնութիւն և կատարել զչարիս։*

Այլ ոչ եթէ դու միայն ես առաջնորդ չարին, այլ այլ ոմն չարագոյն քան զքեզ, հրապուրիչն բանսարկու։ Հրապուրել հրապուրէ զնա, այլ ոչ եթէ բռնութեամբ յաղթահարել կարէ զորս ոչն անսան նմա։ Զի եթէ

փակեսցես զդրունս խորհրդոց քոց ընդդէմ նորա, քանզի հեռի է ի քէն, ոչինչ կարասցէ մեղանչել քեզ։ Ապա թէ անխտիր ցանկութիւն զմտաւ ածիցես, քո իսկ խորհրդովք արմատս չարեաց ի քեզ տնկէ, և թակարթապատ արարեալ զքեզ, քոյին խորհրդովք շաղեալ պատեալ, ի խորխորատն չարեաց կործանեսցէ զքեզ։ Իսկ արդ թերևս ասիցես, Հաւատացեալ պինդ ([illegible]) եմ, ոչ յաղթէ ինձ ցանկութիւն, թէպէտ ստէպ ստէպ ցանկացայց։ Մի խաբիր, զիա՞րդ ոչ գիտես թէ և զվէմս պատառեցին արմատք որ առ նոսա բուսեալ էին։ Մի ընդունիր ամենևին զսերմանիս չարին զի պատառէ զհաւատս քո։ Մինչչեւ բուսեալ համարձակ ([illegible]), անդէն ի ծաղկի անդ խլեա զարմատս չարին, զի մի հեղգացեալ ի սկզբան անդ՝ հուրս և սուրս ժողովեսցես։ Ի սկզբան աչացաւին դարման տար աչաց, զի մի կուրացեալ՝ առ խարխափ որմն զորման ([illegible]) ի բժշկաց խնդիր շրջեսցիս։

Է, Է առաջնորդ մեղաց բանսարկուն, և ծնիչ չարեաց. բայց ոչ եթէ ի ծննդենէ բնաւոյ բարուցն (է բնէ, է ծնէ) ի հարկէ բարձեալ բերէր յանձին զմեղանսն (յան-յանԷը), ապա թէ ոչ յարարիչն ընթանան պատճառք մեղսուցն, եթէ նա արար զնա այսպէս. այլ ի սկզբան անդ յարարչէն բարի ստեղծաւ, բայց յիւրոց բարուց անտի բանսարկու եղև, և ի գործոց անտի իւրոց զանուն բանսարկութեան ժառանգեաց։ Զի հրեշտակապետ էր բարի, բանսարկու անուանեցաւ յետոյ, և ի բանսարկութենէ անտի ժառանգեաց ([illegible]) զանունն։ Կործանեցաւ ի վերուստ ի վայր, և զբազումս ընդ իւր յետս կացոյց։ Սա արկանէ ի միտս մարդկան զցանկութիւնս. ի սմանէ են ամենայն ազգք չարեաց։ Վասն սորա հանեին զհայր մեր զառաջին զԱդամ ի դրախտէ անտի, և փոխանակ սքանչելի ինքնամատոյց պտղոյն վայելչութեան զփշաբեր զտատասկաբեր երկիրս ժառանգեաց։

ԹԷ ՉԷ ՊԱՐՏ ՅՈՒՍԱՀԱՏԵԼ ՅՈՒՂՂՈՒԹԵՆԷ

Իսկ արդ զի՞նչ, ասիցէ ոք, պատրեցա՞ք, խաբեցա՞ք, կորեա՞ք (խաբուեցա՞նք, կորսուեցա՞նք), արդ ո՞չ գոյ այսուհետեւ յոյս փրկութեան. չիջա՞ք, կուրացա՞ք, արդ ո՞չ իցէ հնար հայելոյ. խոշտացա՞ք (կաղալ), կաղացա՞ք, արդ ո՞չ իցէ հնար գնացս ուղիղ գտանելոյ. և միանգամայն (թօվլ քանէ)՝ արդեւք ասիցէ ոք, եթէ անկա՞ք, մեռա՞ք, այսուհետեւ ո՞չ է հնար յարութեան։ Իսկ արդ, որ զՂազար չորեքօրեայ յարոյց, զքեզ կենդանիդ ո՞րչափ եւս առաւել դիւրագոյն կանգնիցէ։ Մի հատցուք զյոյս անձանց մերոց, եղբարք, և մի կործանեսցուք զանձինս յանյոյս սասանութիւն (կործանում)։ Չար է չհաւատալ յուսոյ ապաշխարութեան։ Որ ոչ ակն ունի փրկութեան՝ անխտիր (անտարբեր) անխնայ տայ զանձն իւր ի մեղանչել. իսկ որոյ յոյսն կայ (յոյս ունեցողը) ի բժշկութիւն՝ յայնմ հետէ խնայէ յանձն իւր։ Զի և աւազակք որոց հատեալ է յոյսն և ոչ ակն ունիցին շնորհի (ներման)՝ յանդգնագոյն (յանդգնաբար) յօժարին ի կորուստ. այլ յորժամ յուսան թողութեան՝ յապաշխարութիւն դառնան։ Օձք մերկանան զծերութիւն մարմնոց իւրեանց, մեք ո՞չ կարասցուք թօթափել զմեղս մեր ի մէնջ։ Երկիր փշաբեր տատասկաբեր ի պտղաբերութիւն դառնայ առ ի դարման ածել հողագործաց. իսկ մեզ այնչափ անհնա՞ր է ուղղել զանձինս բիւրութենէ (ծառփըգլըգտան, չիւրիւքլիւքտէն)։ Բոյս բարուց (բէնտէլիկտէն) վաղվաղակի ընդունի զփրկութիւն. բայց խնդիր է մտաց յօժարութեան (բանը յօժարութեան վրայ է)։

Մարդասէր է Աստուած, և բազմապատիկ մարդասէր, Մի ասեր երբէք, Մեղայ ո՛չ մի անգամ, այլ բազում անգամ, զիա՞րդ մարթիցի լինել թողութիւն. զիա՞րդ լինին այնչափ մեղք անյիշատակ։ Ոչ յաղթէ (ֆե-

չողունցէ) բազմութիւն մեղաց քոց ողորմութեանցն Աստուծոյ. ոչ է մարթ կարեւոր լինել վիրացդ քոց քան զճարտարութիւն բժշկապետին։ Պատմեա դու բժշկին զչարչարանս (կէրք) քո, անդէն (անժիջօղէօ) գայցէ բժշկութիւնն։ Կամի՞ս տեսանել զԱստուծոյ մարդասիրութիւնն, և զչափ առնուլ (ֆօրծօլ ոէօնէլ) զերկայնմտութեան նորա, լուր և ի միտ առ։ Անց զպատուիրանաւն Ադամ, առաջին ստեղծուածն Աստուծոյ։ Ո՞չ կարէր Աստուած անդէն վաղվաղակի զմահն ի վերայ ածել, բայց աղէ դու տես զմարդասիրութիւնն Աստուծոյ։ Հանել եհան զԱդամ, ի դրախտէ անտի, զի ճեմել նմա անդէն ի նմին (հօն, անօր մէջ) անարժան էր վասն մեղացն, այլ բնակեցոյց զնա ընդդէմ դրախտին, զի տեսցէ ուստի անկանէ (ինկած տեղը տեղէն) և յորմէ պատուոյ յինչն կործանեցաւ, և կարօտեսցի և միտ դիցէ (նայէ) ապաշխարութեան։ Անդրանիկ մարդկութեանս Կայէն մարդասպան եղեւ, գտակ չարեաց և առաջնորդ սպանման, նենգաւոր նախանձոտն առաջին։ Զի՞նչ ասիցէ նմա Աստուած, «Երերեալ և տատանեալ լիջիր, ասէ, ի վերայ երեսաց երկրի»։ Տես, ո՛րչափ մեծ էր վնասն, և զի՜արդ փոքր պատիժ պատուհասին։

Մեծ, մեծ է այս մարդասիրութիւն սակայն փոքր ինչ է առ այն զոր ասելոցն եմ։ Յամս Նոյի մեղան հսկայքն, և անօրէնութիւն բազում յայնմ ժամանակի ի վերայ ամենայն տիեզերաց տարածեցաւ, և վասն այսորիկ ջրհեղեղ գալ հրամայեցաւ, այլ լիուլի (ամբօղջ) զհարեւր ամ ձգեաց (երկարեցաւ) պատուհասն։ Զոր յետ հարիւրամեան ժամանակի առնելոց էր Աստուած՝ ո՞չ կարէր նոյնժամայն (իսկոյն) առնել. այլ կամովին բողանայր (բօղընալ, գէջանէլ) և ներէր զի ժամանակ տացէ նոցա ապաշխարութեան։ Եթէ էր նոցա ապաշխարեալ, ոչ էին վրիպեալ (չէկօօէլ) ի մարդասիրութենէն

Աստուծոյ։ Որթ կանգնեցին ժողովուրդն յանապատի անդ, այլ ոչ թողացաւ (ներեցաւ) Աստուած ի մարդասիրութենէ իւրմէ։ Եւ ոչ միայն ժողովուրդքն մեղան, այլ և Ահարոն քահանայապետ նոցա։ Մովսէս խնդրէր քահանայապետին յանցուածոց վասն, և հաճէր զմիտսն Աստուծոյ (հաճել զմիտս, հաւնեցնել)։

Եթէ կամիցիս, քեզ և այլ առակ (օրինակ) ապաշխարութեան ցուցից։ Յանցեաւ Դաւիթ յետ երեկօրոց (իրիկունէն ետքը) ընդ երեկս, զի ելեալ շրջէր ի վերայ տանեացն. յանխտիրս հայեցաւ (ի կինն Ուրիայ), կատարեցան մեղքն։ Եկն եհաս Նաթան մարգարէ, յանդիմանիչն, կշտամբիչն, երագ երագ բժիշկն վիրաց։ Իսկ Դաւիթ արքայ ոչ բարկանայր, զի ոչ ի նա հայէր որ խօսէրն, այլ ի նա հայէր որ առաքեացն։ Ոչ հպարտացոյց զնա սպայ զօրացն բազմաց որ շուրջ զնովաւ պատեալ կային, այլ ներքին մարդոյն հայէր ընդ զօրահրեշտակաց որ զաստուածութեամբն պատեալ կային. և յաներեւոյթ տեսլենէ անտի իբրեւ յերեւելի տեսլենէ զանզիտեալ սարսէր (վախնալով կը դողար)։ Թէպէտ լուաւ թէ Տէր անցոյց զքեւ զմեղս քո, ոչ եկաց ի բաց յապաշխարութենէ անտի, այլ քուրձ առեալ զգենոյր փոխանակ ծիրանեաց, և փոխանակ ոսկիապատ ոսկիակուռ աթոռոցն, իջեալ յերկիր ի վերայ մոխրոյ թագաւորն նստէր։ Իշխանք ամենայն մտեալ խոնարհութեամբ աղաչէին, և ոչ առնոյր յանձն խորտիկս ճաշակել, այլ եւթնօրեայ ժամանակս բովանդակեալ զպահոցն պնդութիւն ձգտէր (եօթն օր խիստ ծոմ բռնեց)։ Իսկ արդ, եթէ այր թագաւոր այնպէս պահով պնդութեան (պահք պնդութեան, ծոմ, խիստ պահք) խոստովանէր, դու որ տառապեալդ ես (խեղճ ես), որչափ եւս առաւել պարտիս խոստովանել։ Դարձեալ, յետ ամբառնալոյն ի վերայ նորա Աբիսողոմայ (Աբիսողոմ անոր վրայ ելլելէն, ապստամբելէն ետքը), թէպէտ և բազում ճանա–

պարհք առաջի կային փախստեան ընդ լեառն ձիթենեաց ընտրեաց ճանապարհ առնել փախստեան իւրում, ի մտի եդեալ զայն (զՔրիստոս) որ ընդ այն լեառն անցանելոց էր յերկինս։

Եղեւ Մանասէ անօրինագոյն քան զամենայն թագաւորս Յուդայ․ զՆսայի իսկ սղոցեաց և յազգի ազգի կռապաշտութիւնս պղծեցաւ և ելից արդարոց արեամբ զՆրուսաղէմ․ ի գերութիւն մատնեցաւ, և երթեալ ի Բաբելոնին զփորձ առեալ զչարեացն, դարման մեղաց զապաշխարութիւնն գտանէր։ Անկանէր, Ենկուն լինէր (խոնարհէր) առաջի Տեառն, և Աստուած լսէր նմա, և դարձուցանէր զնա անդրէն ի նոյն տէրութիւն արքայութեան։ Արդ, որ զմարգարէս սղոցեաց՝ ապաշխարութեամբ ապրեցաւ, դու որ ոչինչ այսպիսի գործեալ ես՝ զգոյշ լինիջիր, գուցէ ի զօրութենէ անտի ապաշխարութեանն զանգիտեալ թերահաւատիցես ի տարապարտուց։

Կամիս գիտել զկարծրութիւն զինու ապաշխարութեան։ Հարեւր ութսուն և հինգ հազարս սպառազինաց Եզեկիա ի միում գիշերի կործանեաց։ Մեծ է և այս, արդարեւ մեծ, բայց սակայն փոքր է առ այն զոր ասելոց եմ։ Զվճիռ մահու ելեալ ի բերանոյ աստուածութեանն անդէն դարձոյց ապաշխարութիւնն։ Զի հիւանդութեամբ անկեալ դնէր Եզեկիա, մուտ առ Նա Եսայի մարգարէ և ասէ․ «Հրաման տուր վասն տանքո, զի մահկանացու ես դու եւ ոչ կենդանացու (դուն մեռնելու ես և ոչ ապրելու)։ Դարձաւ Եզեկիա յորմն կոյս, համբարձ զմիտս իւր ի նմին անկողնոյ յերկինս․ զի լայնութիւնք որմոյ և թանձրութիւնք ձեղուանց ոչինչ լինին խափան աղօթից խոնարհութեամբ և սրբութեամբ յերկինս կանխեցելոց։ «Տէր,» ասէ, «Յիշեա զիս։ Առ ի դարման բժշկութեան բաւական է քո Զիսն յիշել, զի ոչ եթէ ըստ ծննդեան (բոլոր բժիշկ, ծաղկաբերէ) և ոչ

ըստ աստեղաց , որպէս ասեն գրաբանքն , կեամք մեք, այլ դու ինքն ես կենաց զօկիզըն ես ցերբ կեղն որժամ իցէ , որպէս կամիս , կարգես ։» Արդ , որում կենաց իսկ յոյս հաստեալ էր ըստ ճամաուտ ([illegible] , [illegible]) վճռոց մարգարէին՝ հնդետասանամեայ ժամանակօք աւուրք յաւելլուին ։ Եզեկիա կարող եղեւ զմահաբեր հրամանն լուծանել , իսկ տէրն ո՞չ իցէ բաւական Թողութիւն առնել մեղաց քոց ։ Այլ դարձ յապաշխարութիւն , յոզւոց հան ([illegible]) և հեծեա , փակեա ըզդուրս քո և կաց յաղօթս ([illegible]) առ այն որ զգաղտնիսն տեսանէ , զի զերծցէ (հանէ , Վերցնէ) ի քէն և ի բաց Թօթափեսցէ զպատրաստեալ յաւիտենից զտանջանսն զհրեղէնս ։ Եւ եթէ տակաւին Թերահաւատ ինչ իցես , ած զմտաւ Թէ ո՞վ էր այրն այն որ էջ ի հնոցն ընդ Անանիանսն . որպիսի՛ աղբեւրք բխեցին ի մէջ հնոցի անդ . զինչպիսի՛ չափք ջրոց , որ ի քառասուն եւ յինն կանգուն վերանայր զբոցն ([illegible])՝ չիջուցանել կարէր ։ Իսկ արդ զհնոցին բոց ցածոյց ապաշխարութիւնն , թերեւս ո՞տ ինչ լինիցիս ([illegible]) Թէ և զդժոխոց բոցն ոչ իցէ կարող ցածուցանել։

Թերեւս ընդդէմ դայցէ ոք ինձ ի սրունկն լռողաց անտի եթէ «Իրաց ժամանակիս այսորիկ անդէպ է ([illegible]) առակ ([illegible]) պատդամիս . փոխանակ զի ոչ կամեցան Անանեանքն յօժարել ի կռապաշտութիւն անդըր , արար զմեծամեծ սքանչելիսն Աստուած ։» Այո , զի՞ջայց ներեցի՞ց և ես այնպիսեացն , և այլ առաւ օրինակի սքանչելեաց ցուցանել փութացայց ։ Զի՞նչ կարծիս կարծէք դուք վասն Նաբուգոդոնոսորայ արքայի ։ Լուար ապաքէն ի գրոց Թէ ամբարշտագոյն էր քան զամենայն , և Թէ վայրենի և գազանագոյն էր բարուք , և առիւծագոյն քան զգազանս ։ Լուեալ իցէ քո զի ([illegible]) զոսկերս Թագաւորաց ի գերեզմանաց անտի բրեաց , հան , յարեզական ([illegible] , [illegible]) ընկէց ։ Ո՞չ է գիտացեալ քո զի

զժողովուրդս աշխարհօքն հանդերձ (երկիրներու ամբողջ ժողովուրդները) ի գերութիւն վարեաց։ Ո՜չ իցէ լուեալ քո զի զաչս թագաւորաց եհան, նախ առաջի նոցա զորդիս նոցա ի բերան փողոտեաց։ Ո՞չ է լուեալ քո զի զքրովբէսն յափշտակեաց, ոչ զայնս ասեմ որ հոգեւորքն և երկնաւորք են, այլ զայնոսիկ որ ի ներքս ի տաճարի անդ արարեալ դնէին, որ ի վերայ քաւութեան տապանակին եդեալ կային, յորոց միջոյ խօսէր տէրն ընդ նոցա ընդ ժողովրդեան։ Այս Նաբուգոդոնոսոր որ զվարագոյր սրբութեան սրբութեանցն պատառեաց, զսեղանն կործանեաց, և զպաս (ծոմը) տաճարին առեալ տանէր և առաջի կռոցն իւրոց դնէր, և զտաճարն ինքենին զլխովին (նոյն իսկ տաճարը) հրձիգ առնէր, քանի պատժոց պատուհասից և տանջանաց արժանի էր։ Ո՞չ բիւրոց մահուց արժանի էր նա։ Ի գազանաց կերպարանս փոխեցաւ նա, և յիրաւի (իրաւամբ), զի զգազանաց իսկ զխակութիւն (բրտութիւն, ապաշնորհութիւն) և զպազանութիւն (անգիտութիւն) ի բարս (բնութիւն) իւր ունեալ բերէր։ Եղնգունքն աճեցին և եղեն իբրև զմագիլս թռչնոց, զի յափշտակողագոյն էր նա սրբոցն ամենայնի։ Թաւացաւ մորթ նորա իբրև զգէսս առիւծու, զի էր իսկ նա իբրև զառեւծ ի մռնչել և ի յափշտակել։ Խոտ ուտէր իբրև զարջառ, զի անասնագոյն էր քան զամենայն անասուն։ Ներկաւ մարմին նորա ի ցօղոյ երկնից, քանզի մուտ, նայեցաւ ի հնոց հրոյն ուր Անանեանքն էին, և ետես անդ զցօղ օդոյն զի ցողէր, և ոչ հաւատաց։ Յետ այսր ամենայնի, բազմամեայ ժամանակօք տանջեալն օրհնէր զկենդանին ի բարձունս, և զամբաւ մարդասիրութիւնն Աստուծոյ ժառանգէր։ Եթէ ոք ի մեզ ի հեթանոսաց իցէ, որոյ զքրիստոնեայս հայհոյեալ իցէ, կամ եկեղեցեաց սրբոց ի ժամանակի հալածանաց դաւ բերեալ իցէ, առցէ առակ օրինակի զՆաբուգոդոնոսոր․ խոստովան լիցի նման նմա, զի նորին նմանու-

թեամբ անյիշատակ զմեղս յանձնէ ի բաց թօթափիցէ ։

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԵԱՆ ԵՒԹԱՆԱՍՆԻՑ

Ի ժամանակին իբրեւ մեռաւ Աղեքսանդր արքայ Մակեդոնացւոց, թագաւորութիւնն ի չորս առաջս իշխանութեան բաժանեցաւ, անդր ի կողմն Բաբելացւոց և Մակեդոնացւոց և Ասիացւոց և Եգիպտացւոց ։ Արդ մի ոմն յԵգիպտացւոց թագաւորաց անուն Պտղոմէոս, Եղբայրասէր անուն, ընթերցասէր, թագաւորեալ, զամենայն գիրս ժողովել հրաման ետ Դեմետրեայ Փաղերեանց որ ամենայն դիւանապահացն գլուխ էր (ֆրողեր, ֆըրոտան վերոկացու) ։ Խուզեցին զհին մատեանս ամենայն, բերին և զհնոց կտակարանացն և զմարգարէից գիրսն յանդիման ընթեռնուլ նմա ։ Լաւ համարեցաւ թագաւորն ոչ բռնութեամբ և սաստիւ խնդրել զգրեանն այլ սիրով կամեցաւ զմիտս հաճել Հրէից ։ Աշխեաց ի մոլի [?] իւրում եթէ, իբրեւ սաստիւ խնդրիցէ, թերեւս նենգ ինչ խառնիցեն ։ Եղիազարու որ յայն ժամանակս քահանայապետն լեալ էր՝ ետ տանել պարգեւս բազումս ի տաճար անդր Երուսաղեմացւոց, և վեց վեց այր յերկոտասան ազգացն Իսրայելացւոց, արս ընտիրս գիտութեամբ, ի թարգմանութիւն առ ինքն հրամայեաց կոչել ։ Ապա զփորձ առնոյր (ֆորձել), զհանդէս տեսանէր (ֆորձել) եթէ իցեն գիրքն սուրբ թէ չիցեն ։ Դարձեալ գի մի ընդ միմեանս խորհուրդ ինչ դիցեն թարգմանքն, ի Փարոմն, որ մօտ յԱղեքսանդրիա կայ, թարգմանացն որ եկեալ էին՝ առն իւրաքանչիւր սենեակ բաշխեալ, զամենայն գիրսն հրամայեաց թարգմանել ։ Նոքա իբրեւ եկին մտին, յեւթանասուն և յերկուս աւուրս զամենայն մատեանսն, իւրաքանչիւր յիւրում սենեկի անդ թարգմանեցին ։ Եւ

թագաւորին առեալ զամենայն մատեանսն զթարգմանեալս, չետ ընդ միմեանս խառնել, այլ ի մի վայր ժողովեալ զամենայն, գտանէր ոչ միայն մտաց զօրութեամբ (էմաւորին կօշմանէ) ի մի միաբանութիւն եկեալ, այլ և ի բանս և ի բարբառս (սէօզ) միաձայն։ Զի ոչ եթէ ի խորագիտութենէ ճարտարութեան մարդկայնոց լինելոց էր գործն, այլ ի Հոգւոյն սրբոյ որ յարանցն այնոցիկ ի սիրտս խօսեցաւ՝ թարգմանութիւնքն կատարէին։

ԹԷ ՊԱՐՏ Է Ի ԲԱՑ ԼԻՆԵԼ Ի ԴԻՒԱԿԱՆ ՀՆԱՐԻՑ

Խորշիջիր, փախիջիր յամենայն սատանայական հնարից և ի հաւանութիւն մի մատնիցես ընդ վիշապին ապստամբի, որ հրապուրել կարէ զհաւանեալսն, բայց ստիպել և տագնապել և ոչ զոք կարէ։ Մի յաստեղագիտութիւնս ինչ և ի հաւահմայս և ի հմայել հայիցիս ամենեւին, և մի ի մոլորութիւնս կռոցն սնոտեաց կործանիցիս։ Զհարցուկս դիւթութեան և զթովչութեան, և զմեռելահարցուացն դիւթութեան ճառիք չափ լսել (խօսքը, անաննն անգամ ըլել) յանձն մի առնուր։ Մի զօրկորստութեան (օրկրամօլլուգէան) զհետ լինիցիս. մի բարսզիտութեան (խօրօզգիմճլուգէան, դէմիրին գօշլուգէան ըլել) զկնի լինիցիս։ Այլ (էօկ) արծաթսիրութեան և վաշխից ամենեւին ի վերոյ թռանիշիր (վէրէն թօշլէ, այսինքն ամննալին մի դուլէր, զախէր)։ Մի ի ժողովուրդս հեթանոսաց խառնիշիր (խառնել, գիրնալ, չօրէլ), և մի զօր յուռութենն ինչ եւ ընդ անձին կապեն (բժժանք, նուսխա)՝ մերձեցուսցես ի քեզ։ Ի բաց փախիջիր յամենայն կրպակամուտ պղծութենէ (բողանոցներէ)։ Եւ յամենայն շաբաթապահ եւ շաբաթախտիր կրօնից (հըէակլան օրանդներէ) զանձն ի բաց պահեսջիր, և մի պիղծ ինչ և խառնակ զհամարձակեալ (Բոյլ փուֆուլ) կերակուրս համարիցիս։

ԽՕՍՔ Ի ՄԷՋ ՃՇՄԱՐՏԻՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՒ ԴԻՑՆ ՀԵԹԱՆՈՍԱՑ

Մի է Աստուած և յամենայնի է. զամենայն տեսանէ, զամենայն իմանայ։ Աղբեւր ամենայն բարեաց, մեծ և անպակաս գետ բարերարութեան, լոյս մշտնջենաւոր որ անպակաս փայլէ. զօրութիւն անհնարին որ զիջանել ներել գիտէ տկարութեան։ Այսչափ իմն է Աստուած, և եւս մեծամեծ ինչ։ Թէպէտ և զամենայն զօրութիւն ի մի լեզու փոխեցից, և ոչ այնպէս կարող լինիմ զարժանին ասել. մանաւանդ եթէ ամենայն հրեշտակք ի մի վայր ժողովին, ոչ կարեն զարժանի ինչ ասել։ Եթէ այսչափ ինչ է Աստուած, նմա հասու ոք զիա՞րդ մարթիցէ լինել։ Այլ մարդ գքար քանդակեալ, առ „ աստուածացոյց։ Ցայնչափ մեծութենէ յայսչափ Նկնութիւն (տօտէմ–իզմ) իջուցեալ զնա պաշտէ։ Փայտն զոր Աստուած տնկեաց, և անձրեւ աճեցոյց և յետոյ այրեցեալ մոխիր լինի ի հրոյ, այն աստուած անուանեալ կոչի, և որ ճշմարիտ Աստուածն է՝ արհամարհի։ Նա և առաւտացաւ եւս չարութիւն կռապաշտութեան մինչեւ կզից և չանց եւս փոխանակ Աստուծոյ երկիր պագանել։ Առեւծուց և գայլոց մարդակերայց փոխանակ մարդասիրին երկիր պագանեն։ Օձից և վիշապաց որ այնմ նման են որ զմեզ եհան ի դրախտէ անտի՝ երկիր պագանեն, և որ զդրախտն ինքն գլխովին (Նոյն էջ) տնկեաց՝ արհամարհեն։ Ամաչեմ ասել, սակայն ասացից. արդ և սոխոյ անգամ երկիր պագանեն։ Գինի տուաւ զի ուրախ արասցէ զսիրտս մարդկան, և Դիոնիսիոս փոխանակ Աստուծոյ երկրպագութիւն ընդունի։ Ջցորեանն Աստուած հաստատեաց, արդ ուստի՞ է այս զի Սանդարամետապետին (Դեմետրի) իբրեւ Աստուծոյ երկիր պագանեն։ Հուրդ ի քարէ

բաղխելոյ Թափի (կ'ելլէ) մինչեւ ցայսօր, և ուստի՞ է Հեփեստոս, հրոյդ արարիչ։ Ուստի՞ եկն բուսաւ հեթանոսացն բազմաստուածութեանն մոլորութիւն։ Աստուած անմարմին է. արդ ուստի՞ է ցանկութիւն պղծութեան որ ի դիս նոցա տնկեալ է։ Լուա եղէց փարքար (գոնէ) զՈրմզդի ի կարապն փոփոխութիւնս. ամօթ են ի ցուլն փոփոխութիւնք, զի անարժան են Աստուծոյ անուան պոչիւնք եւ պոռոչիւնք (պոռալու ձայներ)։ Սեղեխ (աղբահար) գտաւ (եղաւ) աստուածն հեթանոսաց, և չամաչեն. իսկ արդ եթէ սեղեխ գտաւ, գոնեայ և աստուած մի անուանեսցի. նաեւ մահուանս եւս և կործանմունս և շանթս ի վերայ դիցն իւրեանց հասեալ պատմեն։ Տեսանե՞ս, ի մեծ է բարձրութենէ անտի յորպիսի՛ անարգութիւն կործանեցան (ինկան)։

ԶՍԻՄՈՆԷ ԿԱԽԱՐԴԷ

Ամենայն հերեսիութեանց գտակ (գոյք) Սիմոնն կախարդ է. Սիմոնն այն որ զանվաճառ շնորհս Հոգւոյն վաճառաւ արծաթոյ գնել կամեցաւ։ Սա եկն եհաս ի կողմանս Հռովմայեցւոց ի Հռովմ քաղաք յետ կործանման իւրոյ, և զկյոյն մի պոռնիկ, Լուսին անուն, ընդ իւր առեալ ածէր վատ անուամբ։ Ցայնպիսի մոլորութիւն խաբէութեան դարձոյց զքաղաքն Հռովմայեցւոց, մինչև Կղոդիոս արքայ անդրի պատկեր կանգնէր նմա, և գրէր առ պատկերի անդ Հռովմայեցւոց լեզուովն, Սիմոնի դէի սանքթոյ, որ թարգմանեալ կոչի, Սիմովնի սրբոյ աստուծոյ։ Մինչդեռ յերկարէր տիրէր մոլորութիւնն, բարեաց լծակիցքն, ամոլքն (երկու ընկեր, ընկերը), Պետրոս եւ Պաւղոս, գլխաւորք եկեղեցեաց, հասեալ զպերճացեալ (հպարտացեալ, ուռացեալ) կարծեալ աստուածն, բալացեալ (մոլոր) անկեալ մեռեալ ցուցանէին, զի խրոխտացեալ (պոռթկել) յանձն առեալ էր

Սիմոմնի յերկինս ելանել, և անդէն նոցունց առաջի ի կառս ելեալ դիւաց ընդ ամպս ի վերայ օդոց շրջէր։ Ապա ծունր եդին երանելի առաքեալքն, զհաւատոյ զնետն աղօթիւք ի վեր արձակեցին, և անդէն յերկնից յերկիր զկախարդն կործանեցին։

ՑԱՂԱԳՍ ՄԱՆԵԱՑ, ԱՌԱՋՆՈՐԴԻ ԱՂԱՆԴՈՑՆ ՄԱՆԻՔԵՑԻՈՑ

Սկիւթացի ոմն էր յԵգիպտոս տաճիկ տոհմաւ։ Սա եկն բնակեցաւ յԱղեքսանդրիա, և զկախարդութեան կեանս յանձն առնոյր։ Անտի կազմեալ գայր Սկիւթացին ի Հրէաստան, և անդ կամէր զդեղս ([illegible]) իւր խառնել ([illegible]), և ապականել զաշխարհն։ Զնա Տէր դադարեցոյց ախտիւ սատակեալ։ Աշակերտ նորա Տերինթոս ժառանգորդ եղեւ ոսկւոյն և գրենոյն ([illegible]) հերեսիովտացն, և եկն նա ի կողմանս Պաղեստինացւոց ի Հրէաստան կոյս ([illegible] . . .)։ Անդ իբրեւ սկսան ճանաչել զնա և զգուել ([illegible]), դեմ եղ ([illegible]) դնալ ի կողմանս Պարսից։ Եւ զի մի յանուանէ անտի ծանիցեն զնա, զի դոյին նմա անդ հակառակորդք որ Միհրեանքն էին քուրմք Պարսից, Բուդ անուն եդ անձին իւրում։ Իբրեւ բազում բանք յուզէին և հակառակութիւնք լինէին, կշտամբեալ յանդիմանէր, և ապա Ճշաւակեալ ([illegible]) հալածական փախստական անկանէր առ կին մի այրի։ Ապա ելեալ ի վերայ տանեացն զօդոյն զվերնատ ([illegible]) դեւսն կոչէր, զորս Մանիքեցիք մինչեւ ցայսօր կոչեն, և անդէն ի վերայ տանեացն աստուածահար եղեալ հրամանաբեկ լինէր, և կործանեալ յերկիր յոդւոցն ցամաքէր։ Եւ այսպէս խզեցաւ անկաւ դիշակեր գազանն երկրորդ։

Բայց սակայն կայր միայր ամբարշտութեան կարաւին, և ժառանգորդ էր գրոցն և գանձին այրին։ Իբ-

րեւ որդի և ժառանգ և ոչ եղբայր ոք դոյր այրւոյն, եդ ի մտի իւրում ի դանձուէն յայնմանէ գնել պատանեակ մի Կուրբիկոս անուն, զոր առեալ յորդեգիր՝ անուցանէր, և ուսուցանէր զնա յամենայն ուսմունս Պարսից իբրեւ զորդի իւր, և մխեաց խարտեաց զնետս չարին։ Այսպէս Կորբիկոսն, չարածառայն, ի մէջ փիլիսոփայիցն ծաղկեալ պարարէր։ Իբրեւ մեռաւ այրին այն կին, նա լինէր գրոցն և դանձիցն բաժանակալ։ Ապա զի մի Կուրբիկ անունն նախատինք լիցին նմա, Մանի կոչեաց զանուն իւր ըստ Պարսից բարբառոյն (լե-զու)։ Ցախտ անկեալ դնէր որդին Պարսից արքային, և բազմակոյտ բժշկաց ժողովեալ էր ի դարման մանկանն։ Արդ ի մէջ մատուցեալ Մանին զամենայն բժիշկսն ի բաց թօքափիեր (Դէնէ կ'ընէր, կը մերժէր), և ինքն իբրև սուրբ ոք աղօթիւք խոստանայր զմանուկն ապրեցուցանել։ Թօքափիեցան (յուսահատեցան) գնացին բժիշկքն, թափեաց հանել զոգին մանուկն (տղան մեռաւ), յանդիմանեալ կշտամբեցաւ խաբէութիւնն Մանեայ, և կապեալ անկեալ դնէր փիլիսոփայն (Մանի) ի բանտի անդ, ոչ վասն ճշմարտութեան ինչ. և ոչ վասն զկուսութագաւորին կործանելոյ, այլ զի խոստացաւ ապրեցուցանել զմանուկն և ստեաց, մանաւանդ, եթէ պատշաճ իցէ զարդարն ասել, վասն զմանուկն սպանանելոյ կայր ի բանտի անդ։ Զի թերեւս ի բժշկաց ճարտարութենէ անտի կարէր ապրել մանուկն, նա զբժիշկսն ի բաց հալածէր, և ինքն սպանող լինէր մանկանն։ Արդ որ զանձն իւր բարեխօս անուանեալ կոչէր, և ճշմարտութեան քաջ նահատակ լինել պարծէր, ելեալ ի բանտէ անտի գնայր փախստեայ։ Ապա հրաման ետ թագաւորն Պարսից զբանտապահսն սպանանել։ Պարտ (պարտական) արեան բանտապահացն էր Մանի։ Փախստական լեալ ի բանտէ անտի, դայր ի Միջագետս։ Անդ ընդառաջ լինէր նմա Արքեղայոս եպիսկոպոս առաջի բա–

զուր մեծամեծաց, փիլիսոփայից և դատաւորաց, և կշտամբեալ յանդիմանէր Մանի ի հեթանոսաց անտի։ Եւ մի ոք կարծիցէ եթէ դատաւորք քրիստոնէից ա-ջառեալ զրկեցին զնա։ Կուրացեալ լինէր Մանի ի լու-սոյ ճշմարտութեան։ Կուրացուցանէ արեգակն զգիճա-կուճս (գիճակն, այն՝ որոյ ոտը կը կոչէ), և աչացաւքն մնասին ի լուսոյ. իբր ոչ եթէ արեգակն կուրացուցանէ, այլ զի տկարութիւն տեսանելեացն (տեսողներուն) չհան-դուրժէ հայել ընդ ճառագայթս արեգական։ Սոյնպէս և թերահաւատք, հիւանդացեալ սրտիւք, ոչ կարեն տեսանել զլոյս ճառագայթից ճշմարտութեան։ Իբրեւ ի պարտութիւն մատնէր Մանի ի ձեռն երանելւոյն Ար-քեղայոսի, փախստեայ լինէր և անտի եւս։ Որ ի բան-տէ անտի փախեաւն, եւ և ի ձեռաց ախոյեանին, և եկն անկաւ յագարակ մի ի նմանութիւն օձին որ եթող զԱդամն, և յԵւայն անկանէր։ Այլ երանելի հովիւն Արքեղայոս վասն գրոյ (կ'ըսէ) խաչանցն Քրիստոսի, իբ-րեւ լուաւ զփախստենէն Մանեայ, փութացեալ վաղ-վաղակի ի խնդիր գայլոյն հասանէր։ Մանի իբրեւ տե-սանէր զախոյեանն (Ռահապան, հակառակորդ), սաստուցեալ փախստեայ լինէր, և փախչէր զփախուստն յետին, և որ արքային խնդրակքն (խնդրողներ) էին՝ զամենայն վայրսն յուզեալ (փնտռել) գային գտանէին զփախստեայն։ Ըմբռնեցին զՄանի զոր պաշտեն նորին աշակերտք, և ածին առ արքայ։ Նա իբրեւ ետես զնա, նախ ազգի ազգի խայտառականս անցուցանէր ընդ նա, ապա Յա-խատեր (կը ծողէր) զստրկութիւնն և զփախուստն յիշե-ցուցանէր, և վրէժ խնդրէր զմանկանն մահուան, և վասն բանտապահացն մահու վճիռ ի վերայ ածէր, և ըստ Պարսից օրինակին զմորթն հանել հրամայէր զՄանեայ, և զմարմինն գեղ (կեր) հրամայէր արկանել գազանաց։ Ապա զմորթ նորա մոմնեալ (հանել, ուշորդել) իբրեւ զպարկ, ի վերայ դրաց քաղաքին հրամայէր փչել և դնել։

ՆԿԱՐԱԳԻՐ ՍՓԱՆՁԵԼԻ ՑՕՐԻՆՈՒԱԾՈՑ ԲՆՈՒԹԵԱՆ

Զի՞նչ մեղադիր կարեն լինել մեծի արարչութեանն Աստուծոյ ։ Պարտ և պատշաճ էր նոցա զարմանալ ընդ կուտակութիւն երկնից, և երկիր պագանել այնմ որ կանգնեաց հաստատեաց կացոյց զերկինս իբրև զկամար, և որ ի ծօրաճ *([illegible]) ջուրցն բնութենէ անտի անշարժ և* աճեղ *([illegible], [illegible]) զերկինս հաստատեաց ։* Ջուր *([illegible]) են երկինք, իսկ որ ի նմա հաստատեալ են արեգակն և լուսին և աստեղք՝ հրեղէն․ և արդ զիա՞րդ հրեղէնք ընդ ջուրս ընթանան ։ Եթէ ոք վասն թշնամութեան հրոյն և ջուրցն՝ երկմտեսցի, յիշեսցէ նա զհուրն որ ի ձեռն Մովսիսի յերկրին Եգիպտացւոց բորբոքէր կիզմամբ ի մէջ կարկտին, և տեսցէ նա զԱստուծոյ զայնչափ իմաստութիւնն ։ Քանզի (որովհետև) պիտոյ են ջուրք* յարդիւճարարութիւճ *([illegible]) երկրի, ջրեղէնս հաստատեաց Աստուած զերկինս ի վերուստ, զի յորժամ յորդահոս անձրևւաց կարօտեալ իցէ երկիրս, պատրաստեալ գտցի (երկինք)* բաւական լինել *([illegible])* ի բարուց իւրոց *([illegible], [illegible]) արբուցանել զերկիր ։*

Ո՞չ են սքանչելիք բնաւ հայել յարարչութիւն արեգական, որ իբրև փոքր ինչ անօթ զիւրեաւ յածեալ *([illegible]) յարևելից մինչև յարևմուտս, արձակէ զճաճանչ ճառագայթից լուսոյ իւրոյ ընդ երկիր ամենայն, և որ այգուն զզուարթաճաճանչ և զքաղցրանուագ զառաջին լոյս իւր արկանէ ի մարդիկ․ իսկ ընդ արշաւել նորա* ի միջօրեայ ժամանակի *([illegible])* ի փախուստ ի թաքուստ տագնապիմք *([illegible]) վասն կիզման նշողից ։*

Բայց աղէ դու տես զմատակարարութիւճ *([illegible], [illegible]) նորա (արեգական), մանաւանդ թէ ոչ*

նորա այլ որ ի ձեռն նորա զարշաւանս նորին հաստատեալ ։ Զիարդ ի ժամանակս ամարայնւոյ բարձրացեալ զկուտակօքն (կամար) երկնից երկայնագոյն ձգտէ զչափ տուընջեան ի ժամանակս գործոց մարդկան և ի ժամանակս ձմերայնւոյ կասէ (կը կարճնայ) յընթացից, զի մի ի ցուրտ աւուրս երկայնեսցին ժամանակք աշխատութեան. այլ և գիշերք երկայնեալ առ. ի հանգստենէ (հանգստեան համար) գործակից լիցին մարդկան, լինիցին գործակից և առ. ի պտղաբերութենէ (պտղաբերութեան կողմանէ) արդեանց (բերոց) երկրի ։ Բայց դու աղէտես, զիարդ կարգաւ ձեռնտու լինին միմեանց աւուրք տուընջեան և գիշերոյ երկայնմամբ ամարայնւոյ և կարճմամբ ձմերայնւոյ, զի խուլակոյր հերեսիովտաց իբրև բարբառով գոչեն, և ցուցանեն գեղեցիկ կարգաւորութեամբ, եթէ ոչ այլ ոք է արարիչ և հաստիչ բայց միայն Աստուած ։

Մի ոք ամենեւին ունկնդիր լիցի ոմանց որ ասեն այլ զոմն լուսոյ արարիչ և այլ զոմն խաւարի ։ Զի՞ տաղտկաս (ձանձրանալ), զի՞ թախծիս (տրտմիլ) յանձն քո, այր դու, ընդ ժամանակս հանգստեան որ քեզ տուեալ է ։ Ոչ գոյր հանգիստ ծառայից ի տերանց իւրեանց, եթէ ոչ խաւարն ի հարկէ հասուցանէր զժամանակ հանգստեանն (քնոյ) ։ Բազում անգամ աշխատեալք տուընջեամբ՝ գիշերի զհանգիստ գտանեն ։ Որ ցերեկն աշխատեալ են՝ գիշերոյն հանգստեամբն կազդուրեալք, ընդ առաւօտն յարուցեալ զօրագոյն լինին ։ Դարձեալ, զի՞նչ լաւ առ զգաստութիւն իմաստութեան քան զգիշեր. զի ի սմա զգիտութիւն իմաստութեան ընթերցուածոց և զխորհուրդս աստուածութեանն քննեմք ։ Եւ ե՞րբ իցէ մարթ յերգս սաղմոսաց կամ ի պաշտօն աղօթից զմիտս ամփոփել քան գիշերի ։ Կամ ե՞րբ երբէք բազում անգամ մերոյն իսկ մեղաց ի զղջումն եկեալ գտանիմք եթէ ոչ գիշերի ։ Արդ մի լիցի մեզ չարաչար

ընդունել զգեղեցիկն հաստատութիւն, և մի այլ աշարիչ խաւարի ասասցուք և այլ լուսոյ, և զայս փորձ իրացն ինքնին ցուցանէ ։

Պարտ և պատշաճ է ոչ միայն ընդ արեգական և լուսնի ընդ արարածս զարմանալ, այլ և ընդ գեղեցիկ պարզ և անդադար ընթացից արշաւանս աստեղաց, և ընդ ծագմունս իւրաքանչիւր՝ յիւրաքանչիւր ժամանակի ։ Զիա՞րդ ի լուսաւորաց անտի ոմանք հաստատեալ են ի նշանակս ամարայնւոյ, և ոմանք ի նշանակս ձմերայնւոյ, և զիարդ ոմանք ցուցանեն զժամանակս սերմանելոյ, և ոմանք ցուցանեն զսկիզբն նաւաց ընդ ծով գնալոյ, և զիա՞րդ մարդիկն ի նաւին նստեալ ի վերայ անսահման ծփանաց ալեացն անդնդոց, և ի վեր յաստեղսն հայեցեալ ուղղեն զանդէտն ճանապարհ ։ Բայց դու տեսջիր, զիարդ լոյս ընդ տուընջեան գեղեցիկ մատակարարեալ ընդելուզանելով ([illegible]) շնորհի մեզ. զի ոչ եթէ յանկարծակի արեգակն ծագեալ երեւի մեզ, այլ սակաւիկ մի ճաճանչ երեւեալ ծագէ մեզ, զի բիբական ընդելեալ ([illegible]) բաւական ([illegible]) լիցի հայել ի փայլումն ճառագայթիցն արձակելոց ։ Կամ զիա՞րդ խաւարն գիշերոյ մեղմացեալ լինի ի զօրութենէ անտի փայլման լուսնի ։

Ո՞վ է որ զօդս թանձրացոյց ըստ խստութեան ամպոց, և ետ նմա բեռնաբարձ լինել յորդահոս անձրեւացն սաստկութեան ։ Ո՞վ է որ երբեմն ածէ ի հիւսիսոյ ամպս ոսկեճաճանչս, և երբեմն ածէ թանձրացուցանէ զնոսա ի մթագոյն թանձրութիւն, և երբեմն ցրէ, սփռէ, զմիմեամբ թաւալեցուցանէ ([illegible]) և փոփոխէ ի պէսպէս կերպարանս ։ Կամ ո՞ յօրինեաց զսառն, որոյ ջրեղէն է ծիւրութիւնն ([illegible]), և քարեղէն՝ զօրութիւնն ։ Ջուր երբեմն լինի ձիւն իբրեւ զասր ([illegible]), և երբեմն փոխի ի քա-

բեղէն զօրութիւն ։ Մեկնաւոր են բարք բուսոյ ծննդեան (թապիաթընըն ղուվվէթի) *և բազմապատիկ են զօրութիւնք։ Ջուր ինքն ի գինի այգեստանաց փոխեալ ուրախ առնէ զսիրտ մարդոյ , և ձէթ ի ձիթաստանաց բերեալ զուարթ առնէ զերեսս մարդոյ , դարձեալ ի հաց փոխեալ հաստատէ զսիրտ մարդոյն , սոյնպէս և ի պէսպէս պտուղս մատակարարեալ բաշխի։ Տես դու զվարդի կարմրութիւն և զշուշանի սպիտակութիւն ի միջէ ցօղոյ , ի միջէ երկրէ . արդ ո՞վ է որ* զընտրութիւնն (թէրճիհլիւյիւն) *ի մէջ դնէ ։ Ո՞յր իցէ զկէսս ի ծառոց ի հովանիս , և զկէսս ի պտուղս ազգի ազգիս բաժանեալ։ Մի ճարտարապետ է* այգւոյ (բաղ , բահչա) , *և* զիմն մի (մաս մը , բան մը) *ի նմանէ* յայրեաց (մաղարա) *տուեալ է , և զիմն մի՝ ի բոյս , զիմն մի՝* ի գնդակս (սօմայ ֆիթիլ) *և զիմն մի՝ ի տերեւս, և միանգամայն յողկոյզս խաղողոյ։ Եկ , զարմացիր* ընդ պատեյն զմիմեամբք եղեգանն կեղեւանաց , եւ ընդ կապել նոցա ստէպ ստէպ առ միմեամբք զծունր (եղջէրն կեղեներուն վէրայ պօրէը , և թովէթով ծառին , պօղոմ կաղնը) , *և տեսցես զգործ ճարտարապետին ։* Ի *միջէ երկրէ ելանէ սողուն և գազան , էրէ վայրի , փայտ և կերակուր , ոսկի և արծաթ , պղինձ և երկաթ և քար ։ Մի է* բոյս բարուց ծննդեան (բնութեան) *ջրոյ , ի սմանէ* ազգ (տեսակ) *թռչնոց երկնից և* դուղակաց (լողացող , ըլլան) *ծովու , սոքա ի ջուրս* դողին (լողան) , *և նոքա ընդ օդս վերացեալ ընդ երկինս թռչին ։*

Ծով մեծ և անձորր (ընդարձակ) *է , և անդ են սողունք որոց ոչ գոյ թիւ ։ Ո՞ կարէ պատմել զձկանցն որ ի նմա գեղեցկութեամբ զարդարեալ են ։ Ո՞ կարէ պատմել զմեծամեծ ձկանցն* զյաղթութիւն (խոշորութիւն) , *և կամ* զերկակենդան (երկակենցաղ) շնչաւորացն (կենդանեաց) *զզօրութիւն . զիա՞րդ կեանք նոցա եւ անդր ի ջուրս են, եւ աստ ի ցամաքի ։ Ո՞ կարէ զծովուն պատմել զխորութիւն անդնդոց , կամ զլայնութիւն տարածման , կամ*

զանչափ թիւս ալեացն զմիմեամբք կուտակելոց. սակայն ծով հասեալ ի սահման՝ զետղ առեալ (կենալ, կանգ առնել) կայ. ընթացեալ ի խորոց անդնդոց անտի ալեօք կուտակելովք, հասեալ ի ծագ (ծայր) և ի գիծ սահմանաց իւրոց՝ անդէն յանձն իւր թուլացեալ լուծանէ զզօրութիւն իւր. յայտնապէս թողու նշան, պարոյր առեալ զսահմանս ցամաքին (եր բօլերլէրը չըզմանկ դէօ կ'ընէ ցամաքը), երեւեցուցեալ տեսողաց ամենեցուն զչիչխելն անցանել զսահմանովքն եզերովք։

Ո՞ կարէ զմտաւ ածել (երեւակայել, մըտքին առջեւ բերել) զբոյս բարուց ծննդեան զօդագնացն թռչնոց. զիա՞րդ ոմանց ոմանց լեզուքն ճչողք (սուր ձայնով պոռացող) են, ոմանց ճճուողք (ճիւ ճիւ ձայն հանող) և ոմանց՝ կանչողք (երգեցող). ոմանք, իբրեւ ազգի ազգի նկարս ճարտարաց, յերփն երփն (գոյնզգոյն) փետուրս զարդարեալ են, և ոմանք ճախրեալ (սըրանալ, թռչել) ի վեր քան զամենայն՝ հաստատեալ կան (կը կենան) ի մէջ օդոյն թռուցեալ։ Ո՞ կարէ ի մարդկանէ զարծուի բարձրացեալ տեսանել մինչ թռուցեալ իցէ ի բարձունս։ Իսկ արդ, եթէ զթռչնոց անխօսիցն զնշան և զբարձրութիւն և զհետ (հետքը) չկարես տեսանել, զիա՞րդ արարչին հասու լինել ջանաս խորհրդոց։ Ո՞ է մարդ ի մարդկանէ որ զամենայն դազանաց գիտէ ասել գոնէ զանուանս. կամ ո՞ է որ զմտաւ ածել մարթի (կրնայ) զիւրաքանչիւր նոցա զբարուցն գիտութիւն։ Արդ, եթէ զգազանաց ոչ զչափ և ոչ զբարս մարթեմք իմանալ (ըմբռնել, հասկնալ), զիա՞րդ արարչին նոցա հասու առնիմք (լինիմք)։ Ի միոջէ երկրէ են ոչխար ընտանեսուն և առեւծ գիշակեր։ Եւ ազգի ազգի անասնոց զնացմունս (վարմունք) նմանութիւն ունին ազգի ազգի բուսոյ բարուց ծննդեան մարդկան։ Զի ողուէս ցուցանէ զբարս նենգաւոր մարդկան, և օձ յայտ առնէ զբարեկամաց զժանկաւոր (թունաւոր) դժընդակութիւն (խորամանկութիւն, անհնարին չարանութիւն), և ձիոցն

վրնջիւն՝ զերիտասարդացն ցանկութիւն , և ծերազլուխ (հաժարալը) մրջիւնն զարթուցանէ զվատացն (ծոյլ) զտաղտկութիւն ։ Զի յորժամ երիտասարդութիւն (Եըլիդասարըդ) , հեղգութեամբն և տաղտկութեամբ զանգեալ (Թամբալնալ, տօքուչնալ) իցէ , յանբան անասնոյ անտի ժրութենէ կշտամբեալ յանդիմանեսցի ։ Իբրև հայիս ընդ նա զի ի ժամանակի իւրում գանձէ զհամբարս իւր , նախանձեաց և դու ընդ նա գանձել քեզ պտուղ գործոց բարութեան ։ Որպէս նա ի վերայ ամենայն ծաղկանց թռուցեալ համբարս կուտէ առ իւր օգուտ զնիւթոցն քաղցրութիւն , նոյնպէս և դու շուրջ եկեսցես զգրովք սըրբովք , և ի նոցանէ ընկալցիս զքաղցրութիւն ։

Արդ , ո՞չ (ապաքէն) փառաւորել արժան իցէ զճարտարապետն ի վերայ դաստակերտացն (Յեսակեր , Յեաագօրծ) ։ Եթէ դու ոչ գիտես զամենայն արարածոց զօրութիւն , չարաչա՞ր են արարածք ։ Միթէ զամենայն բանջարոց (խօտեղէններու) կարո՞ղ ես դու գիտել զհանգամանս պիտոյից (գործածութեան կերպը) , և կամ մարթի՞ս իմանալ զօգուտն որ ի պէտս շնչաւորաց պաշտի (կենդանեաց պէտոյէցը կը ծառայէ) ։ Տեսեա՞լ իցէ քո զի և ի թունաւոր գազանաց , յիժից և ի քարբից, անդեղայք ստեղծան յօգուտ և ի փրկութիւն մարդկան ։ Նաև սքանչելիք են ճշմարտիւ (արդարեւ) անասուն և սողուն գազանացն զօրութիւն . զիա՛րդ քան զխթան սրագոյն ունի խայթոցս կարիճ . և կէսք ի ժանիս (ակռա) իւրեանց ծածկեալ ունին զօրութիւն , կէսք ի մագիլս իւրեանց ։ Իսկ օձ արքայիկ բնաւ յերևելն իւրում ունի զմեղանչական (ճնասակար) զօրութիւն ։ Այլ զի՞ կայ քո եւ արտաքին շնչաւորացն (քայց դուռն կենդանիներուն հետ ի՞նչ քան ունիս) . եկ , դարձ անդրէն դու յանձն քո , և ի քումմէ հաստատութենէ (քու անձէդ) անտի իմասջիր զգործ ճարտարապետին ։ Զի՞նչ ստգիւտ (ընտրոնիր , դախարականք քան) է ի մարմնի քում ստեղծեալ ։ Ոչինչ

տգեղ յանձին քում յանդամս քո գտանի ։ Ո՞վ է որ-Ներգիւք և Ջղօք և ոսկերօք զմեզ հանեա (ֆուրծեց, հա-Նում, պօչ-մաք), մորթով և մսով և մազով զմեզ զգե-ցուցեալ զարդարեաց ։ Իբրեւ ծնանի մանուկն, առ-եստեղ (անմիջապէս) ի ստեանց մօրն առատութեան աղ-բեւրք կաթանցն բխեն ։ Զիարդ ի կերակրոց կէսքն ա-րիւնանան, կէսքն ապա ի դուրս վիժեալ (Բոքէլ) խօ-տին, և կէսքն ի մարմին (միս) փոխին ։ Ո՞վ է որ զխափ-կու՛թիւն աչաց զգուշացաւ փակեաց արտեւանանց ցան-կովն ։ Այլ վասն ազգի ազգի ախտից քաջնչելեաց (զարմանալ-եաց) աչաց բժշկաց գիրք պատմել հազիւ կարասցեն ։ Տեսանե՞ս, այր դու, զճարտարապետն, տեսանե՞ս ան-ձին քո զձեռագէտն ։

ՑԱՆԴԻՄԱՆՈՒԹԻՒՆ ՀՐԷԻՑ ԵՒ ՀԵԹԱՆՈՍԱՑ

Դսրովէն (պօքսամէլ) *զմեզ հեթանոսք և Հրեայք և ասեն, Ոչ էր հնար Քրիստոսի ի կուսէն ծնանել ։ Արդ զհեթանոսս ի նոցունց առասպելաց անտի կարկեսցուք ։ զի* որ ասեն բա (ըօղնէրը Բէ) *քարինք թաւալեցուցեալք մարդիկ եղեն, զիարդ ասեն թէ չէ մարթ Աստուծոյ մարմին զգենուլ ։ Որք յուղղոյ գլխոյն դուստր ծնանել բարբանջեն, անհնարին համարին թէ զիա՞րդ ի կոյս արգանդէ անտի որդի ծնանիցի ։ Որք յերանաց պնտի Արամազդայ ձերոյ յղացեալ ծնեալ ասէք զԴիոնեսիոս, զիա՞րդ զծնունդն որ ի կուսէն՝ անարգել իշխէք ։ Իսկ առ Հրեայսն այսպէս պատահեսցես ։ Հարցանիցես ցնո-սա ․ Զի՞նչ դժուարին է, ամլոյ ծերացելոյ ծնանե՞լ որդի, եթէ կուսի ունել որդի ։ Ամուլ էր Սառա, և ծնաւ որդի յանկարգ ժամանակի ։ Արդ, ամլոյն ծնանել կարգ էր, և կուսին ծնանել անկա՞րգ էր ։ Կամ* ա-Նարգեա (Դըժէ) *զերկոսին, կամ ընկալ զերկոսին ։ Զիա՞րդ հնար էր անդամոց մարդոյ յայլ գոյն փոխել, և դարձ-*

ձեալ անդրէն վաղվաղակի ի նոյն գոյն հաստատել ։ Ձեռն Մովսիսի երբեւ զձիւն սպիտակացաւ , և անդէն վաղվաղակի ի նոյն գոյն հաստատեցաւ ։ Այլ Թերեւս ասիցես · Աստուած կամեցաւ և անդէն շրջեցաւ (ձօն-տիւցու)։ Իսկ Աստուած անդ կարաց կամել և աստ ո՞չ կարէ կամել ։ Անդ նշան մի լոկ էր առ Եգիպտացիսն , և աստ նշան էր առ ամենայն տիեզերս ։ Կամ զի՞նչ էր առաւել դժուարագոյն , կուսի՞ն ծնանել , Թէ գաւազանին ինչաւորութիւն դառնալ ։ Յայտ է Թէ գաւազանն Մովսիսի որ բրտացեալն էր (կէօրծիւ էր՝) լինէր օձաձեւ կամակոր (ծօօօ)։ Մովսէս որ յառաջ ի գաւազանն երբեւ ի ցուպ յեցեալ շրջէր՝ յետոյ փախստեայ լինէր ի նմանէ , երբեւ ի վիշապ փոխեցաւ նա · բայց փախստեայ լինէր Մովսէս ոչ երկուցեալ յայնմանէ զոր ի ձեռին ունէր , այլ զահի հարեալ յայնմանէ որ զբիրտ (կէօրծիւ) ցուպն ի շնչաւորութիւն (կէնտանլըղա) դարձուցեալ սողեցուցանէր ։ Արդարեւ ժանիք էին ցպոյն և աչք վիշապացեալք ։ Արդ ի ցպոյն աչք տեսանելի (տէօ-նող) բուսանէին , և ի կուսէ անտի մանուկ ո՞չ ծնանէր կամօքն Աստուծոյ ։ Լուր մեւս եւս օրինակ · գաւազանն Ահարոնի առաւել (ֆէրաղանց) իմն լինէր քան զամենայն ծառս անտառի · զի ոստս (ծառ.ք) բազում ժամանակօք բուսանին և սնանին , գաւազանն ի միում գիշերի ի նոյն չափ հասանէր ։ Իսկ արդ , ո՞վ է որ ոչ գիտէ եԹէ գաւազան հատեալ յարմատոյ , զերծեալ (կէղչ-եւլ) ի կեղեւոյ Թէ և ի մէջ գետոյ դնես զնա , ոչ երբէք դալարանայ ։ Այլ Աստուած ոչ եԹէ զբուսոյ բարուց կարգաց (բնու-Թեան օրէնոց) զհետ երԹայ , այլ ինքն է բուսոյ բարուց արարիչ ։ Քշտեալն (փերծեալ, յա-ղթեալ), անպտուղն և անկեղեւն և ցամաքն (չոր) բուսաւ և ոստս արձակեաց և պտուղ եբեր վաղվաղակի ։ Իսկ արդ , որ վասն մարմնաւոր քահանայապետին գաւազանին արտաքոյ բնուԹեան պտուղ շնորհեաց , կու-

սին արդեւք զճշմարիտ քահանայապետն ծնանել ո՞չ շնորհէր ։ Եւա իսկ գլխովին ուստի՞ ծնաւ ։ Ո՞չ ապաքէն ի կողից անտի Ադամայ եղև ։ Իսկ Եւա ի կողից անտի առանց մօր ծնանէր, և ի կուսէ անտի առանց առն մանուկ ո՞չ ծնանէր ։

Նկ, եւս իմն մեծ քան զայս առցուք օրինակ ։ Ա՛յ աճոպայ (անհասան) Հրեայ, ուստի՞ եղև Ադամ, ո՞չ էառ Աստուած սակաւ մի հող յերկրէ և ստեղծ զայն ստեղծուած սքանչելի ։ Ի հողոյ լինին պարուտակ և առագաստ աչաց, ոսկերաց կարծրութիւն և շնչափողոց փափկութիւն, և այլ եւս անդամք ըստ իւրաքանչիւր կարգի․ մարդ ի կաւոյ զանգեալ շնչանայ, և շրջի ընդ տիեզերս, ինքնակամ գնայ, շինէ և գործէ և ջանայ, վարդապետէ և խօսի, ճիւսնէ (հէտանօրէն ընել) և Թագաւորէ, և այս ամենայն է սքանչելի․ Իսկ ի կաւոյ այսր ամենայնի լինել հնարաւոր է, կուսի որդի ծնանել չիցէ՞ հնար ։

Ոչ միայն ոսկերչացն և արծաթագործաց և պղնձագործաց են քուրայք (փօթա), այլ և խեցագործաց (չէօմլէքճի) կաւոյ գոն քուրայք, զի զմանրիկն եւ զպարարտն (քէօրուկ և ընդգանելէ ասողը) և զպիտանացու հողն ի մանրախիճ աւազոյ անտի պարզեն, և զխառնամած կոշտն (մօղէն ընեցնող խօշոր աստղը) ի բաց մաքրեն․ իբրև քուրայի նմանութեամբ ջրով հալեն զկաւն ։ Կոչ․ Ընծ ։

ՑՈՒՑԱՆԻ ՅԱՐՈՒԹԻՒՆ ՄԵՌԵԼՈՑ ՊԷՍՊԷՍ ՕՐԻՆԱԿՕՔ

Այսպէս ասեն ցմեզ հեթանոսք․ Անկաւ կործանեցաւ մարդն որ մեռաւ․ փտեցաւ ; Ցեխեցաւ (հոփեցան) և յորդանս փոխեցաւ․ ցեցք եւ մեցք (ուըըեր) և կորուստ ընկալան զմարմինն, արդ զի՞արդ յարիցէ ։ Որ

նաւավարն էր՝ Թերեւս ձկունք կերան զնա, և ինքեանք (ձկունքն) որս եղեալ կերակուր անկան այլոց։ Եր գազանաբեկն եղև՝ արջք և առեւծք արդեւք կերան զնա, և զոսկերս նորա փշրեցին մանրեցին. կամ անգեղք և ագռաւք կերան զմեռեալ մարմինն, և ինքեանք ի կողմանս կողմանս աշխարհիս Թռեան. արդ ուստի՞ ժողովիցի մարմին գիշատելոյն։ Թերեւս յայնց Թռչնոց որ կերանն՝ ուրումն (Դիկլան) դէպ եղև ի Հընդիկս մեռանել, այլում՝ ի Պարսս, այլում ումեմն ի Գութս. և իցեն՝ որ բնաւ հրով այրեալ իցեն. և զմոխիրն անձրեւաց ողողեալ իցէ (տանել տանել ջրոյ), կամ հողմոյ հոսեալ իցէ (հոսել հողմոյ, ցրուել). արդ՝ ուստի՞ ժողովի մարմինն։

Քեզ մարդոյ որ զայդ ասես, քանզի փոքր և տկար ես, հեռի իմն Թուի աշխարհն Հնդկաց և Գթաց և Պարսից. իսկ Աստուծոյ, որ զամենայն տիեզերս ի բուռն իւրում ունի՝ մերձաւոր է, ընիցե՞ս (ենքնօտըլ, համարել) տկարութիւն։ Արեգակնս այս փոքր ինչ արարած է Աստուծոյ, և ի ծագել իւրում զամենայն տիեզերս ջեռուցանէ առ հասարակ. օդքս զոր Աստուած արար՝ զամենայն արարածս միանգամայն պաշտեն (ամենայն կը ծառայեն). իսկ Աստուած որ արեգականս և օդոց արարիչ է՝ հեռի՞ ինչ իցէ յաշխարհէ։ Աղէ, եկ դիր դու ի մտի քում եւ համարեսջիր երկ (ենքնօդըէ ըէ) ազգի ազգի սերմանիս առեալ ունիցիս ի ձեռին քում. քանզի տկար ես հաւատովք, հիւանդագոյն և տկարագոյն առակս օրինակաց (օրինակ) դնեմ քեզ առաջի. արդ՝ համարեաց Թէ ազգի ազգի սերմանիս ունիս ի բուռն քում։ Քեզ որ մարդդ ես՝ զի՞նչ Թուի մեծ. յորժամ պարզես զձեռն քո, զսերմանիսն չկարե՞ս ընտրել (ղօտել), ուրոյն ուրոյն առնել ի միմեանց, զատանել զիւրաքանչիւր ըստ ազգի իւրում. զոր ի քում բուռն է՝ չկարե՞ս առնել որպէս և կամիս.

փսկ Աստուծոյ որ յիւրում բուին ունի զամենայն՝ ընտրութիւն չիցէ՞ մարթ առնել, և զիւրաքանչիւր մարմնոց զմասունս յիւրեանց տեղիս կացուցանել։

Համարեաց եթէ ազգի ազգի ծառայք են քո, և ոմանք բարեբարք իցեն և ոմանք չարաբարք. ապաքէն պատուոյ արժանի առնիցես զբարեբարսն և անարգիցես զչարաբարսն, և եթէ իցես այր ոք դատաւոր, ապաքէն գովիցես դու զբարեգործն, և ի պատիժ պատուհասի արկցես զչարագործն։ Իսկ արդ, ի քեզ որ մարդ մանկանացու ես՝ իրաւունք գոն, և յԱստուած որ ամենայնի կարող է, որ ամենայնի թագաւոր է, վարձք հատուցման ո՞չ գտանիցին։ Բազում ապանողք են որ ի մահիճս իւրեանց առանց պատուհասի մեռան, և իցէ թերեւս որ յիսուն մահու արժանի իցէ, և միանգամ գլուխն կտրեցաւ, արդ՝ երբ տացէ զքառասուն և զինն վրիժուցն հատուցումն, եթէ ոչ դատաստանք և հատուցումն յետ աշխարհիս այսորիկ լինիցին։ Մի զարմանար զյապաղել դատաստանին։ Ամենայն ճզմող (կ—ռ—ու—ղ) յետ ճզմմանն կամ պսակին կամ ամաչեն. և ոչ երբէք որ նստին ի գլուխ ապարիզին և ի վերայ ճզմմանն, յառաջ քան զճզուՇսՇ (կոխա, մօրփ, մէնէմօրփօ-Բէան) պսակէ, այլ կայ և մնայ վախճանի պատերազմողաց, զի յետոյ ընտրութիւն արարեալ, զպսակսն և զպարգեւս բաշխել մարթիցէ։ Սոյնպէս և Աստուած, մինչդեռ պատերազմս յաշխարհիս է, օգնել օգնէ (Բէղէր Կ՛օքնէ) առ անգամ մի արդարոց, բայց ապա (Եօփը) հատուցանէ զվարձս վաստակոց (ոչխարդ-Բէան) իւրաքանչիւր։ Եւ եթէ յարութիւն մեռելոց չիք, ընդէ՞ր բնաւ զդիակապուտս, զգերեզմանակրկիտս պատժէք։ Եթէ կորեաւ մարմինն և հատաւ յոյս յարութեանն, ընդէ՞ր է մահ պատուհասի որոց զդիակունսն կողոպտեն։

Ծառ յարմատոյ անտի կտրեալ բխէ միւսանգամ

և ծաղկի · մարդ մեռեալ ո՞չ ծաղկեսցի ։ Սերմանիքդ սերմանեալ մեռանին , և միւսանգամ աճեցեալ ի կալ (հօքման) պատրաստին ։ Որթ այգեաց և ծառոց ոստք հատեալ կամ խլեալ և այլուր տնկեալ միւսանգամ կենդանանան և պտղաբերեն , և մարդ վասն որոյ ամենայն եղեւ՝ անկեալ յերկիր միւսանգամ ո՞չ կենդանանայցէ ։ Ո՞ր մեծ իցէ , անդրի (ուրչան) մի որ չիցէ բնաւ ստեղծեալ (հնարուած) նո՞ր ստեղծանել , թէ որ անկեալն և կործանեալ իցէ՝ վերստին ձուլել ։ Իսկ արդ , որ յոչնչէ արար զմեզ Աստուած , զեղեալսն և զանկեալս միւսանգամ յարուցանել ո՞չ կարիցէ ։ Սերմանիք ցորենոյ և այլ ինչ սերմանեաց անկեալ յերկիր նեխին և մեռանին և անպիտան լինին այնուհետեւ ի կերակուր , և որ անկեալն է և նեխեալ՝ յառնէ միւսանգամ կանաչագոյն , և որ փոքրիկն է և անարգ՝ յառնէ միւսանգամ չքեղացեալ։ Արդ ցորեան և այլ սերմանիք որ ի մեր պէտս արարան մեռանին և յառնեն · իսկ մեք վասն որոց այն ամենայն եղեւ՝ ո՞չ յարուցեալ կենդանանայցեմք ։

Ձմեռն է ժամանակս որպէս և տեսանես , և կան ծառքդ իբրեւ մեռեալ · զի ո՞ւր է տերեւն թզենւոյ , ո՞ւր է ողկոյզն այգւոյ · ի ժամանակս ձմերայնւոյ այն ամենայն մեռեալ է , և յաւուրս գարնանւոյ կանաչանայ , և իբրեւ ժամանակն հասանէ , յայնժամ ամենայն ինչ իբրեւ ի մեռելութենէ զկենդանութիւն զգենու ։ Ճանճ կամ մեղու ի ջուր անկեալ և հեղձեալ՝ յետ սակաւ ժամանակի ոգի բերեալ (ոգեւորէլ) յառնեն․ ազգք առնետից (գետնի մուկ) ձմերանի պահեալ անշարժական , զարնանեացն (գարնան ամիսները) յառնեն ։ Քեզ չքոտւոյդ (չքոտի , շէկի , ֆօլը) զշնչէնս (շնչէն բաներ) առակ օրինակաց մատուցանեմք ։ Արդ , որ անմռունչ (անխօս) անասնոցն և անարգաց կենդանութիւն մատուցանէ , զմեզ , վասն որոց ամենայն ինչ եղեւ ՚ ո՞չ առաւել եւս կենդանացուսցէ ։

Այլ ասեն հեթանոսք․ Եթէ յառնեն անասունք, յայտ է թէ չէին համօրէն (բոլորովին) մեռեալ և նեխեալ․ այլ (բայց), անասուն մի որ արդարեւ մեռեալ և նեխեալ իցէ՝ յարիցէ։ Գիտէր Աստուած զմարդկան թերահաւատութիւն, նմին իրի արար հաւ (թռչուն) մի արմաւ անուն։ Զամանէ ասեն բազումք եթէ մի է, միածին (ան որ մէկ հատ միայն կը ծնանի) է յերկրին Եգիպտացւոց։ Ոչ եթէ յանապատ ուրեք վայրի է, զի մի յերկուացի (երկբայութեան տակ իյնայ) խորհուրդն (գաղտնիք), այլ յերեւելի քաղաքի է, զի յայտնապէս երեւեսցի մարդկան։ Արմաւն հաւ բոյն շինէ իւր ի լիբան փայտէ և ի զմուռս փայտէ և յամենայն խնկոց։ Ի կատարել ժամանակացն գայ մտանէ ի բոյնն, և անդէն (հոն) մեռանի և նեխի, և ապա ի մեռեալ և ի նեխեալ մարմնոյ մեռելոյն որդն ծնանի, և որդն աճեցեալ թռչուն կերպարանի (կը ձեւանայ)։ (Եւ դու մի թերահաւատեր (մի տարակուսիր), քանզի և աստէն (հոս) քո առաջի աչաց տեսանես զազգ մեղուաց․ զիա՞րդ յորդանէ ի թռչուն կերպարանին։ Եւ ի գիջագործ (խոնաւ) ձուոց տեսի ես թռչուն որոյ թեւք և ոսկերք և ջիղք եղեալ էին։) Ապա թեւակից եղեալ (թեւ առնելով) արմաւն վերանայ յերկինս։ Արդ, զի՞նչ յայտնի քան զայս մարթի ցուցանել զյարութիւն մեռելոց։ Սքանչելի է հաւն արմաւ, սակայն թռչուն մի անասուն և անբան է, թռուցեալ երթայ ընդ օդս երկնից։ Իսկ արդ, անբան անասնոյն յարութիւն տուեալ է, մեզ որ զբանս և զհրամանս Աստուծոյ պահեմք՝ ո՞չ տացի յարութիւն մեռելոց։

Բայց որովհետեւ հեռի է հաւն արմաւ, և չքնաղ է նշանն, թերահաւատ լինին (չեն հաւատար) բազումք։ Ո՞չ գիտես դու յորպիսի՞ չնչէն և ի միազոյն (պզտիկ) իրաց ծնանիմք։ Ի չնչէն և ի միազոյն և ի տկար նիւթոյ առնի (կ՚ըլլայ) մարմին, ջգաց տուեալ լինի հաստատութիւն, աչաց՝ լուսաւորութիւն, ընչաց՝ հոտոտելիք, ականջաց

լեզուք, սրտի՝ Թնդիւն, ձեռաց՝ գործել, և ոտից՝ ընթանալ, և լինի մարդն բանաւոր և ի լեզու խօսուն։ Այսպէս որ ի չնչէն և ի տկար նիւթոյ էր՝ գայ լինի նաւագործ և շինող և ճարտարապետ և բիւրազգի արուեստից գործիչ, և գինուորական և իշխանական և Թագաւորէ, օրէնսդիր լինի։ Իսկ արդ որ ի չնչէն և ի տկար իրաց անտի զմեզ այսպէս արար Աստուած, զանկեալ մարմինս մեր միւսանգամ յարուցեալ (յարուցանել) ո՞չ մարթասցէ։

Եկ դու, առ քեզ մեռելոց յարութեան յայտնագոյն յանդիմանութիւն *(ողոցոյց) ի վեր յերկիրն ի մէջ լուսաւորաց։ Լուսին* ամսոյ ամսոյ *(ամէն ամիս) նուազէ։ Թերեւս ոչինչ իմն երեւի նա, և ապա յետ աւուրց ինչ միւսանգամ լնու, և լինի որպէս էրն յառաջագոյն։ Աստուծոյ զայս այնպէս հաստատեալ է, զի դու ի մեռելոց յարութենէ մի Թերահաւատիցես, այլ զոր օրինակ զլուսին յերկինս տեսանես, սոյնպէս և վասն քո անձինդ հաւատասջիր։*

ՁԳՕՆ

ՆԿԱՐԱԳԻՐ ՎԱՏԹԱՐՈՒԹԵԱՆ ԻՒՐՈՑ ԺԱՄԱՆԱԿԻՆ

Են ոմանք յայսմ ժամանակի որ վարեն *(կը գործածեն)* բուռն *(սաստիկ)* ապիրատութեամբ *(անիրաւաբար) զաղքատն, Թիւրեն զիրաւունս արդարութեան, և աչառեն կեղծաւորութեամբ։ Արդարացուցանեն* զպարտաւորեն *(յանցաւոր, պատասխանատու) ապիրատս, և* պարտաւորեն *(յանցաւոր ընել) զարդարս* իրաւագէտս *(իրաւաբան-ները, յօրէնքը)։ Սիրեն զմեծատունս* գերբիչս *(կողոպտիչ, յափշտակող) և ատեն զաղքատս տառապեալս։ Արածեն զանձինս իւրեանց, և ցրուեն և վատնեն զխաշինս։ Շըլացոյց կուրացոյց զնոսա աշխարհն, գրգեցին զգուե–*

ցին զկաշառս իրաւատոյցս (իրաւատնէը տալըղ, ընկըմըղ), հալածեցին զճշմարտութիւն բացէ ի բաց (շատ հեռու), խեթիւ հայեցան (ծուռ աչքով նայէլ) ընդ յանդիմանութիւն։ Անագորոյնք եղեն առ խոնարհս և միամիտս, սիրունք և հանդարտք առ պերճանս (քանաւոր) և ամբարհաւաճս հպարտացեալս։ Խաւարեցաւ լոյս յաւուրս նոցա, անհամեցաւ աղն ճշմարտութեան, խոպանացաւ այգին պտղաբեր ողկուզալից ճարտար և արգաւանդ ուռօքն և բարունակօք, բուսան և երևեցան փուշք և տատասկք։ Ընկղմեցան ի խոր քուն նաւապետք, և ընկլուզան նաւք հանդերձ նոքօք։ Իշխանն խնդրէ ըզտուրս իւր, և դատաւորն ասէ Բեր ինձ կաշառ։ Խայթեն և խածատեն ատամամբք իւրեանց, և քարոզեն զխաղաղութիւն չինութեան։ Լիք են ցասմամբ սրտմըտութեան, ուռուցեալք և այտուցեալք ոխութեամբ։ Սիրեն զայգն կատականաց, քաղցր և շահեկան (օխուր-ծնէլ) են նոցա խօսք բամբասանաց զմիմեանց։ Զայսոսիկ գործեցաք մեք, և. առեցաք յաչս ամենեցուն; վասն զի հպարտացաք, Ցկուն եղաք (յողնաէլ, նուաստանալ) և անկաք ի վատթարութիւն։ Զոգէտս կացուցաք մեզ դատաւոր, և տկարին ոչ խնայեցաք։ Իսկ Մովսէս ասէ ցԻսրայէլ. Դպիրս և դատաւորս կացուսջիր յամենայն ազգս քո և դատեսցին զժողովուրդն ըստ իրաւանց արդարութեան. և մի առնուցուս կաշառս և մի աչառեսցես մարդոյ, այլ կրտսերին իբրև ճոխի (ճոխ, մեծ, առատ, էշխող) արասցես իրաւունս։ Եւ ցՅովբան ասէ, իբրև խնայեաց նա ի չորանալ ցամաքել դդմենւոյն. «Դու խնայեցեր ի Ջով այդր դդմենւոյդ որ առաւօտու բուսաւ և ի մեւս առաւօտու չորացաւ, ես զիա՞րդ ոչ խնայեցից ի քաղաքն մեծ ի Նինուէ յորում են աւելի քան զհարևւր քսան հազար տղէտ և տղայ մանկտի։ Եւ իբրև կամեցաւ զայգին դաշտաձեւ յատակել (ջնջել հաւասար ընել), վասն զի եբեր նա փուշ և տատասկ ընդ

խաղողոյ, առ., Նաւոյց գաւառաւոր զարս Յուդայ և ըղբնակիչս Երուսաղեմի և առէ ցնոսա․ Դատ արարէք ընդ իս և ընդ այգի իմ։

ՆԿԱՐԱԳԻՐ ԱԳԱՀՈՒԹԵԱՆ

Խաւարեցան միտք մեր ագահութեամբ, և յաղթահարեաց զմեզ ափրատութիւն ժլատութեան (ժլատութիւն, [illegible])։ Ի ձեռն ագահութեան մտին մարդիկ յաշխարհ։ Եթող եկիք Աստուած առաջի Ադամայ զամենայն ծառս դրախտին որք բարձեալ ունէին պտուղս օրհնեալս ի ծայրս ոստոց իւրեանց, և ոչ եղեւ բաւական շուայտեալ ագահութեան Ադամայ (շուայտել, [illegible]) ամենայն դրախտն լաւ և անդորր քան զամենայն երկիր։ Վասն ագահութեան վաճառեաց Եսաւ զանդրանկութիւն իւր և անկաւ ([illegible]) յօրհնութենէ անտի։ Ջեղեւ շատ ([illegible]) ագահութեան Փարաւոնի ժողովուրդն ամենայն զոր վարէր ի հարկի ([illegible]) ծառայութեան, այլ և զիսրայէլ եւս կամեցաւ արկանել ի ծառայութիւն սարկութեան։ Եւ յորդիսն Իսրայելի, վասն զի ցանկացան նոքա կերակրոյ ժլատութեամբ, երբեմն երբեմն տիրեաց ցասումն բարկութեան, մարդ ւ մահք ([illegible]) և օձք և այլ հարուածք ազգի ազգիք։ Եւ Աքար վասն անյագ ցանկութեան ագահութեան քարկոծեցաւ և կորեաւ և ի ժողովրդենէ իւրմէ։ Եւ զամբարիշտ քահանայս, զորդիս Հեղեայ, ագահութիւն ափրատ կորոյս ի կենաց։ Եւ Սաւուղ, վասն զի ագահեաց ի ճզոմն ([illegible]) Ամաղեկայ, անկաւ, և թագաւորութիւն նորա պատառեցաւ։ Եւ Աքայաբ որդի Ամրեայ թագաւորն Իսրայելի որ ցանկացաւ և էառ յափշտակութեամբ զայգին Նաբովթայ, անկաւ ի պատերազմի։ Եւ ագահութիւնն Գէեզեայ աշակերտին Եղիսէի զգե-

ցոյց Նմա բորոտուԹիւն ։ Ցուղա մատնիչ գողանայր , և ոչ լցաւ ագահուԹիւն Նորա , մինչև եառ Նա զգինն պատուական , և Նովին ժլատուԹեամբ անճրպետեցաւ (ղըփօանցաա) յաշակերտաց անտի , յընկերաց իւրոց ։ Չէ չատ ագահուԹեան աշխարհ ամենայն , քանզի զԹագաւորս ամենայն ազգաց գրգռէ , և չլինի չատ միում միում ի Նոցանէ իշխանուԹիւն աշխարհի իւրոյ ։ Փողովեն գումարեն Նոքա զօրս և տան մարտ պատերազմի ընդ միմեանս . աւերեն հրձիգ առնեն զքաղաքս , և առնեն կոխան զգաւառս միմեանց . գերեն և սատանան , և ոչինչ բաւ է Նոցա . աշխատին վաստակին (յօքնէլ) և ուսանին պատերազմ , յատակել (նօրծանէլ) զքաղաքս ջանան զի Թերևս լցցի ագահուԹիւնն , և ոչ լնու ։ Ըստ բազմանալ մեծուԹեան յաճախէ (ատեընալ) ագահուԹիւն , և ըստ յորդել (լէցուէլ, Բաշմաք) մեծուԹեան՝ զօրանայ չարակնութիւն (Նախանձ , չէաչէլ) ։ Շատ է աղքատին ոճիկն աւուր , իսկ մեծատունն հոգայ զամաց բազմաց ։ Զգեստն պատառատուն չատ է աղքատաց , և զգեստ երփն երփն յամենայն զունակաց (ամէն տեսակէ) զգենու մեծատունն , և համարի կալ լոկ մերկանդամ ։ Անկողին աղքատին զետնախշտեայ (աաանց անկոշնէ փերբն ղաակէլու համար) և չատ է Նմա , և անկողինք մեծատանց՝ զանոյք երիզապատք , պաստառալիցք (Դէմը լէցուած , ֆաֆըլ , շէլՌէ) , և սակաւ է ագահուԹեան ։ Ըմպելի աղքատին ջուր , և Նա առլի (լէցուած , նշրացած) է . ըմպէ մեծատունն գինի բազմամեան , և պասքեալ ատոչեալ (ծարաած) կայ ։ Տքնի (Դնոյ ֆախչէլը) քուն ամենայն ագահողաց , և հանդարտ , դադարեալ և ապահով կայ քուն աղքատաց ։ Խորհի տառապեալն տալ ի հացէ անտի իւրմէ կարօտելոց , և կայ ի մեծ հոգս մեծատունն եԹէ զտցէ զոք Նկուն (տնօր , օփօրէն) քան զինքն զի կլանել մարԹասցէ ։ Նրանի առն զոր ոչ յաղԹահարեցին երկուՆք (ցաա) ագահուԹեան ։

ՆԿԱՐԱԳԻՐ ՉԱՐԱՑ ԵՒ ԲԱՐԵԱՑ

Ի պատճառս գրգռութեան և հակառակութեան ե-լին ոմանք ի ժողովրդենէ աստի մերմէ ծպիրճք (անէբէ), բասբողք (բոմբաաող, պոռաաող), քինախնդիրք, օգտա-ժողովք, հակառակասէրք, միաբանամրոխք, կապա-կուփուք (բուրեկամ կամ ուխտականէ հետ կռուող), կագազար-թոյցք, խաղաղամրոխք, անօրինածինք և ստածինք։ Ծրջաբանք (խօսք խառնող) այսր և անդր, խրատահեռա-ցոյցք, յանդիմանամերժք, լիացասունք, դժուարամիտք (յամառ), աղքատատեացք, վէսք (ճէճէշ) և հպարտք, մարդահաճոյք (շըշտօրբ), բանակրկիտք (բծախնդիր), կորստապատիրք, նենգաւորք, ոխապահք, քինաթա-գոյցք, ապականասէրք, քինահատոյցք չարեաց (փոխա-նակ չարի չար հատուցանող), յօժարափոյթք հակառակու-թեան, նենգալիցք, արծաթափոխատուք, վաշխավա-ճառք։ Աչալք նենգաւորք արծաթածրարք, դնկերա-հեղձոյցք (ընկերը նեղը դնող պորտը հատուցանելու), ջրխըն-դիրք, ջրմոյրք, շինողք ի վերայ յողդողդուն (անհաստատ) աւազոյ, կապարճադարձոյցք ի պատերազմէ, սատուա-ծապորտք և ամօթափառք։ Օձք հարամանիք, չարի-մաստք, չարախորհուրդք, հակառակորդորք, խառ-վարկուք, բաժանակամք և ոտնհարք գայթակղութեան։ Փնէածք ի բարիս, զուարթաչարք և մարտածնոյցք։ Հին խմորք, մաղ (մաղած) տիկք, զգեստ պատառատունք, աղ անհամ արտաքս ընկեցիկ, արծաթ պիղծ (կեղծ) և անօթ բեկ, այգի բշաբեր, անցեալ սեր (անցած, աւրուած սէր, [illegible]), խրատատեացք, զարդախօսք; գաղտնաշշունջք, ծածկախոցք, թշուառաբանք, բանսարկուք ի մէջ եղ-բարց, լեզուք սուտք, սիրտք մեղսախորհուրդք և ա-նօրինախորհուրդք, քաղցրաբանք և դառնալիք և սլա-քալեզուք։ Մարտիկք (պատերազմող) յաղթահարեալք,

պետք գլորակամք (գըլըրամ կալեմիյլէ), *պատկերազմազարթույցք, հրեշտակք ամբոխարարք, որդիք հակառակածնույցք*։

Դուք էք գաղտտոսք (օրմանդէր) *ճարտարք և հիմնափորք, մշակք պիտանիք, չտեմարանալիցք և արմատաժողովք*։ *Վաճառականք և իմաստունք, արծաթառք և օգտացույցք շահուց*։ *Վարձուորք վարձառուք*, աւելախնդիրք (ախըլըն փնտօղ), փակակալք (բանալը կէօլ), *հաւատարիմք, փողահարք, փողակարդացք*։ Արշաւահանդէսք (օրթանէ մէջ հանդէսըօղ, ժօրչ նըըլ), *վաստակեալք* ի ստադին (ասդարէդ) *և պ.ակառք* աչալրջութեամբ (օրընտանընեամբ), *ճրագալոյցք*. ճարպապարարտք (ճարպով պարարեալ), *ճանապարհագնացք ընդ նեղն և ընդ անձուկ*. *փեսահրաւէրք և նորազգեստք, արժանիք բազմականի*։ *Լծնբարձք, լռանիստք, որդեսնույցք, հօտաժողովք*։

Արծաթ ժանկալից և արատաւոր յամենայն տեղիս ուր երթայ՝ ոչ ընդունի (չընդունանէր), *և հին խմորն* ոչ հարկանի եւ թրի (չէ շաղաղուէր) *ընդ նոր ալերն*։ *Մաշ տիկք ոչ ունին զօյժ տանել զզօրութիւն գինւոյ, և կապերտ նոր ի վերայ պատառատուն ձորձոյ* ցաւատէ (կօրբը հանել) *զնա*։ *Այգի* քաշաղարման (ալէկ դօրմանած, նայուած) *տայ զպտուղ և ոչ* աւաղէ (փէշնալ), *և սիրտ որ խստացեալ է իբրեւ* զործաքար (կօրծր տօբ)՝ *չորացուցանէ զբոյսս սերման*։ *Զչինուած որ եդեալ է ի վերայ աւազոյ՝ հեղեղատէ անձրեւաջուրն, և անկեալ կործանի նա ի հողմոց յարուցելոց*։ *Որոմն միասակար ի պատշաճ ժամանակի խլի արմատաքի, և յարդ ի ցորենոյ ի վախճանի ընտրի և որոշի*։ *Կուսանք անմիտք և չարթունք ի թերանալ պակասել իւղոյն ընդ գալ փեսային* ոչ ժամանեն (չէն հասնէր, չէն կէնար) *գնել, և* դարապետն (դանագան) *քնասէր ի ժամ զուարթութեան* խուսեալ (ըլկէալ) *գտանի ի կենաց անտի*։

Զայսոսիկ սակաւս զոր գրեցաք, եթէ ոք այպանէ, ոչինչ եպերեսց զնա։ Ամենայն ծառ մրգաբեր յամարայնի բողբոջազարդ ծաղիկս արձակէ, իսկ որթն աւաղուկ (փէշ, խէշմ) արմատախիլ յայգւոյ անտի և լինի ի պէտս այրման, այլ զորթ պտղաբեր ողկուզալից ողկուզազարդ սրբէ տէր նորա։ Այգի աւաղաքոյս (փէշ, փէշի) և աւաղաբեր յայգւոյն Սոդոմայեցւոց է, խաղողադառն լեղահամ։ Ոչ քաղէ ոք խաղող ի փշոյ, և ոչ թուզ՝ ի տատասկէ․ և ի մթերանոյ անտի սրտին խօսին չըրթունք։

ԵՓՐԵՄ

ՀԱՄԱՌՕՏ ՆԿԱՐԱԳԻՐ ԱՐԱՐՉՈՒԹԵԱՆ

Իբրև ոչ ինչ էր ուրուք, խորհեցաւ Աստուած առնել զտունս զայս, զերկինս և զերկիր․ և ոչ եղև և ոչական թարթափել՝ սկիզբն արար պատուէր հրամանին, և յական թօթափել կատարեցաւ գործն։ Երկիր էր թոհ և բոհ, այսինքն անպատրաստ և ամայի, զի ջուրք տարածեալ էին ի վերայ նորա և չեւ էին ժողովեալ ի մի կողմն, և չեւ ևս էր ծագեալ ի վերայ լոյս, զի բազմութիւն ջուրց արգել և խափան էր սերմանեաց և տնկոց։

Կոչեաց, ասէ, Աստուած զլոյսն տիւ և զխաւարն գիշեր։ Ինքն իսկ օդն զգեստու (կ'առնէ) զամենայն գոյնս և զամենայն համ և զհոտ․ ի տուէ ի ձեռն լուսոյն սպիտականայ, և ի գիշերի ի ձեռն խաւարին թխանայ, որպէս բորբոքի հուրն ի շնչոյ և չիջանի, և որպէս դառնան ջուրք ի կարկուտ և ի ձիւն և ի սառն, և որթն դառնայ ի գինի և լսնանայ (ծերանալ)։

Ի բարձանց և ի միջոյ երկրի յորդեցան և հոսեցան իջին ջուրք ի ստորոտս լերանց ուր ծովքն էին։ Նոքին

իսկ ծովքն ընդարձակեցան անդորրեցան (լողացան) զի բաւական իցեն ընդունել զայլ ջուրս, կամ զօր օրինակ ոչ լնուն ծովք այսօր, նոյնպէս և յայնժամ։ Եւ զի մի Ցեխեսցին (հողել) ջուրքն և եղիցին արարածք տառապեալ, յաղեաց (աղեց) զնոսա Աստուած, և աղի են ծովք որ և ըմպեն և կլանեն զքաղցր ջուրսն որ իջանեն անդր։ Զնոյն զօրութիւն երեւեցոյց Աստուած և ի լճածովս, զի և նոքա արգելեալ կան, և ոչ նախին կամ զեռացուցանէն (բխել) չար ինչ։

Յետ կատարածի աստեղաց և զարդուն երկնից՝ լցան և ջուրքն շնչականօք (շնչական, շնչաւոր, կենդանի անասուն) և զարդարեցան, որպէս երկիր ծաղկօք և երկինք աստեղօք զարդարեցան։ Այսպէս և ոչ խոնաւութիւն ջուրցն ամուլ ինչ եղեւ յակնարկելոյ անտի հրամանին, այնու զի ամենայն զեռուն կայտառ և մժղուկ և ճանճիռն (ճանճ) ի նմանէ ծնան։ Յաւուրն վեցերորդի եղեւ Ադամ ըստ նմանութեան պատկերի կերպարանաց Աստուծոյ, զի որպէս իշխանութիւնն Աստուծոյ է ի վերայ ամենայնի, սոյնպէս և տէրութիւնն Ադամայ ի վերայ ամենայնի եղաւ։ Արարաւ նա գլուխ և առաջնորդ խօսուն ի վերայ այնոցիկ որ առանց բանից են, և իմաստութեամբ անձնիշխանութեան իւրոյ եղեւ վարիչ նոցա։

ՍՏԵՂԾՈՒՄՆ ԿՆՈՋՆ

Ոչ է, ասէ, բարւոք զի եղիցի Ադամ միայն. արասցուք նմա օգնական։ Ո՞չ արդեւք գիտէր եթէ կործանիչ լինի նմա (կինն) փոխանակ օգնականի. եթէ այդպէս իցէ, բարւոք էր լինել նմա (Ադամայ) միայն։ Եւ ոչ գտաւ, ասէ, օգնական նման նմա։ Ուստի՞ արդեօք խնդրեցաւ և ոչ գտաւ։ Իբրեւ անուանէր Ադամ անուանս ամենայն անասնոյ, ետես զնոսա արու և էգ,

և նա միայն յատուկ (առանձին, միակ) էր · խնդրեաց նա իւր օգնական և ոչ գտաւ ։ Եւ արկ, ասէ, Ցիրճ (օձն) ի վերայ Ադամայ, և առ ոսկր մի ի կողից նորա և շինեաց զայն ի պատկեր կնոջ ։ Ոչ ի գլխոյն Ադամայ առ զնա զի զճոխութիւՃ Ցախապետութեան (ճոխութեան իշխանութիւնը) թերևս իւր յափշտակէր, զի ամենայն բան գլխոյ է ։ Այլ թերևս տրտմեսցին կանայք, զի լսեն զհնազանդութիւն իւրեանց, այլ ուրախ լիցին, զի առաւելագոյՃ (գերազանցագոյն) է արարած (ստեղծուած) նոցա քան զԱդամայն · զի Ադամ յաՃխկիրտ (անշարժ, անշունչ) հողոյ ստեղծաւ և կազմեցաւ, բայց նոքա (կանայք) ի խօսուն կենդանւոյ առեալ են ։

ՕՁՆ ԵՒ ԵՒԱՑ

Եւ ասաց, ասէ, օձն ցկինն · Զի՞նչ է այս զի ասաց տէր Աստուած թէ յամենայն ծառոց որ իցեն ի ներքս ի դրախտի այդր մի ուտիցէք ։ Զի եթէ նա զնոսա զի ոչ հպէին նոքա բնաւ ընդ կողմն ծառոյն յորմէ պատուիրեաց նոցա Աստուած չուտել · այլ թէ ի քանի ծառոյ պատուիրեալ էր նոցա թէ մի ուտիցեն, ոչ գիտէր նա, և թէ որչափ ծառոյ համարձակութիւն տուեալ էր նոցա, բանսարկուն ոչ էր գիտակ, վասն այսորիկ եհարց ցնա ։ Այլ Եւայ անմեղ ետ զպատասխանին, ասէ · Վասն միոյ առաք մեք պատուէր հրամանի զի մի կերիցուք և մի մեռցուք ։ Եւ նա (օձն) իբրև հոգաբարձու և վերակացու · ասէ · Զի թէպէտ Աստուած հրամայեաց յամենայն ծառոց դրախտիդ ուտել, սակայն ահաւասիկ վասն նախանձու իւրոյ արգել զձեզ ի միոջէ անտի զի մի ուտիցէք և լինիցիք իբրև զնա ։ Նոյնժամայն իբրև լուաւ Եւայ, վառեցաւ բորբոքեցաւ, և այրեցին զնա կարծիք նենգաւոր թշնամւոյն ։ Եւ այն որ հեռացեալ էր ի ծառոյն զի մի մեռ-

ձեռացի ի նա ; ժպրհեցաւ համարձակեցաւ և անց զսահմանաւն · և ոչ նոյնժամայն վաղվաղակի մերձեցաւ ի ծառն , այլ յետ բազում խորհրդոց անցեալ կայր և հայէր ընդ նա ։ Փութացեալ ձեպեալ էր մեծանալ ըստ խրատու օձին , և ոչ արար պատուէր Ադամայ և նախ նմա ետ , այլ ինքն եկեր և ապա ետ Ադամայ ։ Բանզի (ոջով՛ չոռն) կերպարանս բանաւորի զգեցաւ օձն որ ոչ էր բնութեամբ բանաւոր , յայսմիկ առաւել գայթակղեցաւ Եւա ։ Տեսանէր նա զանխօս օձն խօսուն եղեալ · իբրեւ նոր իմն լուաւ ի նմանէ զբանն և զարմանալի , և վասն այնորիկ զխրատ նորա փութապէս ընկալաւ ։

Եթէ , ասեն , Աստուած ետ օձին բան , և սատանայ խօսեցաւ նովաւ , վասն է՞ր բարձ ի նմանէ Աստուած զոտս նորա , կամ ընդէ՞ր ետ նմա հող կերակուր, զի ոչ եթէ նա դարձոյց զԱդամ ի հող ։ Եւ արդ դու եկեալ զվրէ՞ժ օձին պահանջես եթէ ընդէր ընկալաւ պատիժս ։ Ասա մեզ , ընդէ՞ր քարկոծ լինէր անասունն յոր մտաբերիկ լինէր (շուֆուոռէլ) մարդ · և ընդէ՞ր սատակեցան գազանք և թռչունք ի ջրհեղեղէ անտի · և զի՞ մեղան ոչխարք և եզինք և թռչունք զի տուեալ են հանապազօր ի զենումն · զի՞ մեղան հօտքն Յովբայ զի տուան ի կիզումն հրոյ , և հազարքն ի խոզից զի շնորհեցան լեգէոնի · կամ վասն է՞ր մեռանէր զուարակն սուրբ փոխանակ յանցաւոր քահանային · և զի՞ մեղան աղաւնիքն և տատրակքն որ մատչէին (կը շըհաուէն) փոխանակ տղայոցն , և կամ զի՞ մեղաւ դառնն որ զենեալ լինէր փոխանակ փրկութեան ժողովրդեանն , կամ քօշն որ պատարագեալ լինէր վասն յանցանաց ժողովըրդեանն ։ Զոր օրինակ եղեն անասունքն փոխանակ փրկութեան ժողովրդեանն և վասն քաւութեան նորին , և ի սպաս պաշտաման (ծոռոյոնթէն) և ի կերակուր ազգաց , սոյնպէս օձն ընկալաւ զպատիժս պատուհասից վասն պատուոյ փառացն Ադամայ ։ Դարձեալ

զի՞նչ մեղաւ Մովսէս զի անարգեցաւ ի ժողովրդենէ անտի, և Եղիա՛ զի հալածեցաւ յԵզաբելայ, և Երեմիա՛ զի ընկղմեցաւ ի գուբ տղմոյն, և Եզեկիէլ՝ զի կապեցաւ շղթայիւք: Եթէ մարգարէքն թշնամանեցան և անարգեցան վասն ժողովրդեանն, և Տէր մեր եկն եւ ի խաչ վասն կենաց մերոց, ո՞վ իցէ որ տըրտընջիցէ և ցասնուցու վասն փոքր մի պատժոյ զոր ընկալաւ օձն: Կամ թէ կամէի՞ր դու զի Ադամ ընկալցի անէծս և օձն ազատեսցի՞ ի պատուհասից. Ադամ կորուսէ զփառս իւր, և օձն և ոչ զո՞տս իւր: Զարչարեցաւ տանջեցաւ սատանայ ի ծածուկ ի ձեռն պատժոցն որ եկին հասին ի վերայ օձին. բեկաւ խորտակեցաւ փշրեցաւ թշնամին, յորժամ ետես զանօթն իւր զի ի պորտ և յորովայն իւր սողայր:

Բացան, ասէ, աչք նոցա, և տեսին զի մերկ էին: Փոխանակ զի մերկացան զհանդերձ փառաց իւրեանց, մնացին մերկ ամօթալից խայտառակեալ: Իբրեւ անցին զպատուիրանաւն, բարձաւ անց ի նոցանէ հանդերձն փառաց, զի լեալ էր նա իբրեւ վարագոյր մերկութեան նոցա, և գիտացին և ի միտ առին թէ ուստի անկան: Արդ տեսէք զձախողանսն. ոչ եթէ աստուածք են որպէս և ասաց օձն, այլ մերկք են, որպէս և երկիր փշաբեր փշալից փոխանակ դրախտին փափկութեան:

ՅՈՎՍԷՓ ԵՒ ԵՂԲԱՐՔ ՆՈՐԱ

Եկն եբեր, ասէ, Յովսէփ համբաւ չար զեղբարց իւրոց առ հայր իւրեանց, և ամբաստան լինէր զնոցանէ: Եւ զի՞նչ էր համբաւն չար, բայց եթէ գործ չար կորստեան խաշինն: Քանզի նա տղայ էր, և իշխանութիւն հեռի էր ի նմանէ. տրտմէր և չար թուէր նմա զի չարաչար առաջնորդէին խաշանցն եղբարք իւր: Եւ զի ետես հայր նորա զճշմարտութիւն նորա և զհեզու-

թիւն և զգաստութիւն նորա , արար նմա առ սէր շապիկս բէզանեօք ([illegible]) , շապիկս նկարէնս ծաղկեայս, այսինքն պարեգօտս ։ Սոյն իսկ այս , թէպէտ և զՅովսէփ ուրախ առնէր , եղբարցն նախանձ արկանէր ։ Իբրև տեսին , ասէ , եղբարքն եթէ զնա սիրէր հայրն առաւել քան զամենայն եղբարսն , բազմացաւ ոխութիւն սրտից նոցա , և ոչ կարէին խօսել ընդ նմա բանս խաղաղութեան ․ զի եմուտ նախանձ ի միտս նոցա , և մերժեաց զհարազատութիւն ի միջոյ սրտէ որդւոց հօր նորա։

Երազ տեսանել սկսաւ Յովսէփ և պատմել զայն եղբարց իւրոց ․ Լուարուք , ասէ , երազոյս զոր տեսի ․ Թուէր ինձ թէ որայ կապէաք ի դաշտի ․ և ահա յարեաւ որայն իմ և կանգնեցաւ ․ և ահա դային պատէին որայքն ձեր ․ և խոնարհ երկիր պագանէին որայոյն իմում ․ Ըմբոստացան եղբարքն և ասեն ․ Արդ թագաւորե՞լ կամիս դու ի վերայ մեր ։ Ասէ Յովսէփ ցեղբարսն , Ոչ տէրութիւն քարոզեցի ձեզ և ոչ թագաւորութիւն ․ ես զայն ինչ զոր տեսի պատմեցի ձեզ , և դուք ըստ կամս ձեր արարէք պատասխանի մեկնութեան ։ Ես երազ միայն ասացի , և դուք թագաւոր արարէք զիս ․ երազ միայն պատմեցի , և դուք ստացարուք զհնազանդութիւն ձեր ․ կամ մի մեկնէք զերազն իմ , կամ մի տրտմիք ընդ մարգարէութիւնդ ձեր ։

Սկսաւ դարձեալ այլ երազ տեսանել Յովսէփ ։ Ո՜վ Յովսէփ , ո՞չ երկեար զարհուրեցար դու յերազոյ անտի յառաջնոյ , զի ոխացան ընդ քեզ ամենեքին ։ Յովսէփ առաջի հօրն պատմեաց զերազն իւր զերկրորդ , զի թերևս , ասէ , շրջեսցէ ([illegible]) հայր իմ զմեկնութիւնն ․ այլ ինչ ասասցէ , և հաշտեսցին եղբարքն իմ վասն առաջին ցասմանն ։ Զահի հարկեալ էր Յովսէփ յախկալ հայելոյ անտի եղբարց իւրոց ։ Թուէր ինձ , ասէ , զի արեգակնդ և լուսինդ և աստեղք մետասան դային

և ինձ երկիր պագանէին։ Իբրև ամենեքին սպասէին և այն ունէին լսել զոր ինչ հայր նոցա տանէր պատասխանի, սկսաւ նախ հայր նորա սաստիւ պատուհասել զնա, զի սաստել պատուհասելն նորա զնա՝ ցածուսցէ նախ զմպառնութիւն և զատելութիւն եղբարց նորա։

Եղբարքն Յովսեփու անցին գնացին արածել զխաշինսն ի Սիւքէմ, և զՅովսէփ ոչ առաքեաց ընդ նոսա հայր նորա, եթէ գուցէ յիշեսցեն նոքա զերազս նորա և տրտմեցուցանիցեն զնա։ Իբրև անց ժամանակ հարուստ մի, Յակոբու այնպէս թուեցաւ թէ յայսմ հետէ մոռացեալ է (մոռացուած է) ցասումն ի սրտէ եղբարց նորա։ Եւ ասէ Յակոբ ցՅովսէփ, Երթ տես զեղբարսն և զխաշինսն թէ ողջ կայցեն, և բեր ինձ զրոյց։ Թէպէտև տրտմեալ էր Յովսէփ և երկուցեալ յեղբարց անտի իւրոց, սակայն քանզի ոչ էր սովոր արհամարհել անցանել զհրամանաւ հօր իւրոյ, ետ զանձն իւր (յանձն առաւ) երթալ. և մինչդեռ երթայր ի ճանապարհի, մոլորեցաւ նա ըստ արտուղի, զի բազմացան հոգք խորհրդոց նորա։ Իբրև տեսին եղբարք նորա, սկսան կրճտել զատամունս իւրեանց և ասել. Ահա երազատեսն որ դիմեալ գայ առ մեզ։ Փոխեցաւ բնութիւն եղբայրութեան. բանք դառնութեան իբրև զնետս սլաքեալս ի լարեալ աղեղանէ թռանէին բարկութեամբ առ նա։ Յանժամ կալան զՅովսէփ եղբարքն և ասեն, Հը՛, հը՛, անկար ի ձեռս մեր, երազատես. ո՞ւր է մեկնութիւն երազոց քոց. արդ ընդ կառափն քո հանցուք զամենայն զոր և ասացեր դու, և երկիր պագցեն քեզ վէմք հարուածովք, և խաւարեսցի արեգակն ի սատակման քում, և լուսին և աստեղք ի վերայ քո մթասցին, զի կարծեցեր դու բարձրանալ թագաւորել ի վերայ մեր լուսով նոցա։

ԳՈՐԾՔ ԻՆՉ ՄՈՎՍԻՍԻ ԸՍՏ ԱՐՏԱՔԻՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ

Կին հնդիկ ունէր, ասեն, Մովսէս։ Վասն այսր ցուցանէ և Յովսեպոս ի մատեանս իւր։ Ի ժամանակի իբրև աճեաց, ասէ Մովսէս, առաքեցին զնա առնել մարտ պատերազմի ընդ Հնդիկս, ընդ թշնամիս Եգիպտացւոց։ Զի յուսացեալ յայս ապաստան էին Հնդիկք. եթէ ընդ ճանապարհս անապատի ոչ ոք կարէր գալ ի վերայ նոցա վասն թեւաւոր օձիցն խարամանեաց որ էին անդ, և զսահմանս իւրեանց որ յայլոց կողմանց էին՝ պահէին զգուշութեամբ։ Բայց Մովսէս այժմ խելամուտ և տեղեակ էր, և Իբս ([illegible]) *եգիտ նա գործոյն։ Չոքաւ նա ընդ անապատ կողմն, և ածին թռչունս, և արձակեցին առաջի զօրացն, զի ի ձայնէ թռչնոցն փախչէին օձքն թեւաւորք։ Իբրև լսէին ըզձայնս թռչնոց օձքն թեւաւորք, տեղի տային, մինչև եկն եհաս Մովսէս զօրօք ի վերայ թշնամւոյն, և փախըստեայ հալածականս արար զնոսա։ Եւ զի յանկարծակի եհաս ի վերայ նոցա և պաշարեաց զնոսա, լուծան լքան ձեռք նոցա, և փախստական անկան ի կղզի մի որոյ անուն էր Սաբա, և ապա յետոյ կոչեցաւ Մրիա ի Կամբիւսեայ ըստ անուան քեռ նորա։ Իբրև մերձեցոյց Մովսէս զզօրս իւր մարտնչել ընդ պարսպին, տես զնա Թերբաս դուստր թագաւորին Հնդկաց թէ զօրապէս մարտնչէր, և ընդ գիտս խորագիտութեան նորա զարմանայր, և ապա յետոյ անկաւ պարտեցաւ նա ի գութ սիրոյ նորա։ Իբրև պաշարեաց Մովսէս ըզկղզին և նեղեաց զնոսա, և* հուպ յառնուլ արար ([illegible]), *սկսաւ աղաչել զՄովսէս տիկինն Հնդկաց զի տացէ Մովսիսի զանձն իւր, և նա առցէ զնա ի կնութեան, բայց միայն զքաղաքն մի նեղեսցէ։ Եւ տես Մովսէս եթէ հնար ինչ դիւրին առ յաղթել*

ոչ գոյր բաց յայսմանէ, և նստել պաշտարել զնոսա ընդ երկայն ժամանակս ոչ կարէր, ձեռն եւ ճմա (ծաքանե-ցաւ, հաանեցաւ) Մովսէս և առ զնա իւր կնութեան, որպէս զի տացէ նա զզօրսն և զաշխարհն իւր ի ձեռս Եգիպտացւոց։

Մեւս եւս այլ մատենագիր Յունաց, որ անուանեալ կոչի Արտաբանոս, գրէ այսպէս։ Իբրեւ եղեն թագաւորք յԵգիպտոս, թագաւորեաց Փաղմոնթէ յԱրեգ քաղաքի, և էր նա թշնամի ազգին Հրէից։ Եւ եղեւ նորա դուստր մի որոյ անուն էր Մառի, և ետ զնա կնութեան Քանեփրայ թագաւորի քաղաքին Մեմփիսացւոց։ Այս Մառի է Հռադուսայն որ առ զՄովսէս յորդեգիրս։ Եւ զօրացաւ, ասէ, Մովսէս, շինեաց նա զՀերմոպոլիս քաղաք, և արար մարտ պատերազմի ընդ Հնդիկս և ընդ Թեբայեցիսն զտասն ամ։ Յետ մահուն այնորիկ որ առ զՄովսէս յորդեգիրս, Քանեփրա այր նորա սպառնայր Մովսիսի սպանանել զնա։ Եւ թաղեցաւ ինքն Մառի յԵգիպտոս, և ի նմանէ կոչեցաւ Մոռիա քաղաք։ Իբրեւ գիտաց Մովսէս զնենգութիւնն Քանեփրայ, սպան նա զՔաննոթէսս, այն որ կամէրն սպանանել զնա, և ինքն փախստեայ գնաց յԱրաբիա առ Հռագէլ; և առ զդուստր նորա իւր կնութեան։



ՆԿԱՐԱԳԻՐՔ

ԲԱՐՍՂԻ
ՎԵՑՕՐԵԱՅ ԱՐԱՐՉՈՒԹԵՆԷՆ

ԹԷ ԼՈՅՍՆ Է ՈՐ ԵՐԵՒԵՑՈՒՑԱՆԷ ԶԱՄԵՆԱՅՆ

«Երկիր, ասէ, աներեւոյթ էր և անպատրաստ»։ Գիտէք զի յորժամ ծովացեալ մօրացեալ *(լճճէ կամ ճախնէ պէս կեցած) կայցեն բազում ջուրք յանդաստանս, խափանիչ լինին* բուսոյ ծննդեան երկրի *(երկրէն բղխելուն յառաջ եկածն)։ Ապա յայտ է թէ ջուրքն էին պատճառք երկրին չերեւելոյ, և անպատրաստն լինելոյ նորա նոքին էին դարձեալ պատճառք։ Պատրաստութիւն կազմութեան երկրի են բոյսքն, ազգի ազգի բազմատոհմ բողբոջք խոտոց որովք զարդարին ձորք և հովիտք, և որ* ճեմին ճօճին *(Դնդէն Դնդալէն ծաէլ) ի վերայ երեսաց երկրի ի շնչել քաղցրաշունչ հողմոյ. մարգք ծաղկազարդք և դաշտք կանաչագեղք, արտք բուսարձակք և* վիճակք *(տունկ, դալարեղ) պտղալիցք, լերինք անտառախիտք և բլուրք* պրակազեղք *(պրակ, փոքր անտառ), ծառք վարսաւորք և տունկք հովանաւորք։ Այս ամենայն զարդք երկրիս չեւ էին երեւեալ, մանաւանդ զի խաւարն եւս* ունէր *(բռնած էր) զամենայն երեսս անդնդոց։ Զի ճառագայթք արեգական յորժամ անցանեն ի մէջ ջուրց,* յայտ յանդիման *(յայտնի) ցուցանեն զքարինս և զազգի ազգի գոյնս որ (են) ի ջուրս յատակս ի ծանծաղուտ տեղիս, յորժամ կայցէ ոք* գեր ի վերոյ *(վերը) և հայիցի ի ներքս. իսկ յորժամ խաւար մթին աղջամղջին իցէ, ոչ ինչ երեւի ի մէջ ջուրց։*

« *Եւ ասաց Աստուած , Եղիցի լոյս և եղեւ լոյս* »։ *Այսու բարբառով փարատեցաւ պարզեցաւ խաւարն որ մածեալ ունէր զերեսս երկրի , և յայտնեցան ազգի ազգի դեղք նորա ։ Ցայս յանդիման երեւէր և օդն իւրով ցանկալի վայելչութեամբն , լուսաւորեալ պայծառացեալ ամենեւին ի քաղցրահայեաց լուսոյ ճառագայթից ․ քանզի տարածեաց արկ լոյսն զիւր բոցաճաճանչ ճառագայթսն* զմեծածիգ երկայնատարած տարածիւք օդոյն (*օդին բուլըր մէջ և հեւաաւր տարածութեան մէջ*) , *մինչեւ ի վերին եթերն և* ի հաստատութիւն երկնից (*մինչեւ մթնոլորտէն վեր*) ձգեաց զտարածածս իւրոյ նշողազարդ լուսաւորութեանն (*իր լուսաւորութեան ընդարձակութիւնը*)։ *Քանզի* բնութիւն (*նիւթ , տարր*) *լուսոյ նուրբ և երագ է , յանկարծածագ և վաղահաս , և չիք ինչ այլ երագութիւն և ոչ* ական թօթափել (*ուրիշ գոյնել քանալը*) *որ* զուգեսցի (*հաւասարէ*) *երագածագ բնութեան նորա ։*

Տեսցուք թէ զինչ իցէ մեկնութիւն հաստատութեան ։ Անուն հաստատութեան , ըստ սովորութեան բանից գրոց , ինչ մի սերտ (*թանձր , գաթը*) *և հաստատուն որ չիցէ խիստ՝ յայտ առնէ ։ Իսկ արտաքինքն զլի ինչ և* սեղմ (*պինդ , կարծր*) *որ ունիցի լայնութիւն և խորութիւն և բարձրութիւն՝ անուանեն* հաստատութիւն (*խորանարդ*)։ *Բայց ունի հաստատութիւն և օդ , զի թէպէտ և լոյծ և* մեղկ (*թոյլ*) *բնութիւն է նա , և ոչ ունի* սեղմութիւն (*պնդութիւն , կարծրութիւն*) *և խլստութիւն , կարէ ի վեր ունել զամպս որ կուտակեալ դիզանան ի վերայ նորա ։ Ապա ըստ գրոց մտաց՝ ինչ մի հաստատուն է օդ , և ի վերայ նորա կայ լոյծ և* խաղաց (*շարժուն*) *բնութիւն ջուրց ․ ոչ թէ , որպէս ոմանք կարծեցին ,* պաղեցան (*սառեցան*) *ջուրքն փոխել ի խլստութիւն , որպէս* զվանականէ (*վանակն , պեղըր*) *ասեն թէ ի ջուրց որ պաղեալ խստանան մեծաւ հաստատուն* կցուածով (*պնդութեամբ*)՝ *դայ ի կերպարանս ականց պատ-*

ուականաց , ըստ նմանութեան պաղպաղակի *(պէլլօր հանէ) քանզի և նա* բնութիւն *(նէմլի , մօքրին) լուսաւոր է պայծառագեղ ըստ լուսաւորութեան և* սրբութեան *(մօէ-քօւլինան) օդոյ և ջրոյ ։ Վերջոյ ։*

ՊԻՑԱՆՈՒԹԻՒՆ ՀՐՈՑ ԵՒ ՋԵՐՄՈՒԹԵԱՆ

Ո՞վ ոչ գիտիցէ թէ հուր կարեւոր է բազում հարստարութեանց որովք լինուն պէտք կենաց մերոց , որպէս դարբնութեան և հիւսնութեան և մշակութեան և ոստայնանկութեան և այլ եւս բազում արուեստից . այլ և ոչ բոյսք սերմանց , և ոչ ծնունդք խոտոց , և ոչ ծաղիկք ծառոց , և ոչ հասանել եփել պտղոց , և ոչ անասունք և գազանք և սողունք երկրի , եւ ոչ զեռունք ջուրց , և կայտառք *(ծովային ճճիներ) ծովուց , և ոչ կերակուրք ամենայն որ պիտոյ են ի կեանս մարդկան և անասնոց կարեն լինել առանց հրոյ ջերմութեան ։ Այլ զի մի զօրութիւն ջերմութեանն սպառիցէ զամենայն , եհեղ արկ Աստուած գյորդութիւն ջուրց ընդ ամենայն կողմանս երկրի և յանդունդս ներքինս* սանդարամետաց *(սանդարամետք , երկրի ծոցը) ։ Զի անտի ակունք մշտնջենաբուխք յորդեալ ելանեն անդադար , անտի բղխեն և ջրհորք , և գետք որ ոչ սպառին և* հատանին *(ըմնալ , հազմնէլ) , և* ջրջեղջք *(ջօւրէ 'նօյը) բազումք ի ձորս և ի հովիտս , և* խոխոջանք խոռոջաց *(խօտօմընէրին ճաքըլ ջօւրէրը) նոյնպէս բղխեն ի ցամարանաց երկրի ։ Եւ զի՞նչ պիտոյ իցէ թուել զջուրս , մանաւանդ զգետս որ յամենայն կողմանց ելանեն , և բազումք ի նոցանէ են* յաղբաջուրք *(ջօւրը չօր) և* գնացք նաւուց *(օրտան ձըշ նա կընտը երթալ) ։ Այսպէս արժանաւոր չափով կշռեաց եդ Արարիչն զերկոսին , զջերմութիւն և զխոնաւութիւն ։ Ջերմութիւնն ծծէ և ծգէ զխոնաւութիւնն ըստ օրինակի* սրուակի *(չէշէ) բժշկաց որ ծծէ և ծգէ ջերմութեամբն զոր ունի զխոնաւու-*

թիւն արեան , և ժողովէ ածէ առ ինքն , և կամ ըստ օրինակի պատրուգի ճրագի կամ բուծնոյ (*թուծին , ֆի-թիլ*) *որ ծծեն քամեն զիւղն առ ի կերակուր հրոյ ։ Եւ իբրեւ սպառի որ ինչ ծծին և ձգի՝ շիջանի և* յափշի (*մաքէլ*) *ջերմութիւնն ։ Այսպէս տապ արեգական որ դայ ի վերայ ծովուց , ծովակաց , գետոց և աղբերականց , մորաց և ջրաշեղջաց , իբրեւ ծծէ զխոնաւութիւն նոցա , զովանայ և մեղմանայ բորբոքեալ* գոյ (*պատօսլթեան , պատ շօքի*) *ջերմութեանն ։ Զիցէ՞ տեսեալ ձեր ամարանի զբա-զում տեղիս մորացեալս ջրով ի տիղմն և ի կաւ , իբրև անցանէ ի վերայ նոցա բազում անգամ արեգակն ,* ի ցամաքութիւն երաշտութեան (*երաշտութեանն ամչրեալ պակ-սութիւն է*) *դառնան , և օտարացեալ դտանին ամենե-ւին* ի տամուկ (*Նաց*) *խոնաւութենէն ։ Արդ , յո՞ չոքան ջուրքն , ո՞չ ահա յայտնի է ամենեցուն թէ ջերմութիւն արեգական ծծեաց խմեաց զնոսա իւրով բոցաճաճանչն ճառագայթիւք ։ Բայց ոմանք յիմաստնոցն Յունաց ա-սեն թէ արեգական ոչ է ջերմութիւն , զի* բնութիւն (*Նէ-Բ*) *նորա , ասեն , չէ հրեղէն , և թէ ջերմութիւնն զոր ունի՝ ի շփելոյ երագ ընթացիցն և յանդադար գնացից իւրոց է . և գոյն նորա , ասեն , սպիտակ է և ոչ կարմիր ։ Այլք ասեն թէ գոյ ջերմութիւն արեգա-կան . և վասն այնորիկ , ասեն , ոչ լինու ծով ի գետոց որ մտանեն ի նա , զի* ըմպելի (*խմուելու*) *և յստակ ջուրքն քամին ելանեն ջերմութեամբն արեգական , իսկ դառինքն և աղի ջուրք մնան . այսինքն արեգակն , իբրեւ* պարզիչ (*զուտ*) *ջուրց ծովու , զթեթեւսն և զնուրբսն և զքաղցունսն ձգէ առնու տապով իւրով , զթանձունսն և զծանունսն , այն է* զմրրեալն (*մրուր*) *և զպղտորեալն* աճդեն (*հան*) *թողու , և որ անդէն* մեկնեալ (*զատուած*) *մնան՝ են աղիքն և դառինք . և այսպէս գտանի ծով* միակշիռ (*հաւասարակշիռ*) , *և ոչ լինու ի գետոց որ մտանեն ի նա ։*

Իսկ ժողովք խոնաւութեան ջուրց որ ի տապոյ արեգական ձգին՝ ելանեն ի հոծ (խէր) և ի թոյլ յօդն․ և յորժամ ճեպեն (ֆըրլար) հողմք շնչել, ի վերայ ամպոց գայ նստի խոնաւութիւնն, և սկսանի լինել յոլոռն յոլոռն (կըր կըր, հօփ հօփ)։ Այսպէս ջուրք զատանին և մեկնին (կը քաժնուին) լինել շիթս շիթս, և ցանին սրսկին ընդ երեսս երկրի։ Ձեպէ (օրնէկ) ծանրութիւնն զամպս, և հեղեալ զեղուն անձրևք ի բարձանց ի խորս (ի վայր) երագընթաց սլանալով։ Եւ յորժամ խոնաւութիւն ամպոց առցէ զնմանութիւն փրփրոյ ի սաստկութենէ սառնասառոյց ցրտութեան, առժամայն դառնան ջուրքն ի ձիւն, և լնուն հոծին (խտանալ) այնուհետև ամպքն ձեամբք, և լինին ձիւնաբերք (յէրն կէօ տօյ)։ Եւ զի և առանց ամպոյ ևս զխոնաւութիւն ունի օդն, ի ցօղոյ որ արկանի յերկիր ի պարզոյ (պարզ, տուտոց անդէ տօրեն՝) յայտ է։ Վեց։

ՆԿԱՐԱԳԻՐ ՋՈՒՐՑ ԵՒ ԾՈՎՈՒ

Տեսաք զերկինս ձգեալ խորանարդ (խօրանէ յէ-) զմրբեթաձև, և զերկիր՝ անբաւ եւ անյաւ (անվէրը և անօկէզ), լայնատարած և երկայնաձիգ մեծութեամբ։ Տեսաք և զօդ եթէ զիարդ իւրով լոյծ և տարած, ջերմ և խոնաւ բնութեամբ հանապազորդ դարմանիչ է ամենեցուն, և ամենեցուն ոգիքն կարօտեալ կախին զնմանէ (ադնատն կէօրէն անէ կախուած է)․ շարժի խաղայ յամենայն կողմանս վասն փափուկ և ցիր և ցան իւրոյ բնութեանն․ յետոյ կայ, եւ առաջոյ գտանի (թէ էտէ և թէ աղքէ է), և ոչինչ լինի նմա արգել և խափանիչ վասն նուրբ և պարզ և սփիռն (տօքածօտող) բնութեան նորա։ Տեսաք և զջուրս սփռեալս ընդ երեսս և ի խորս երկրի։ Տեսցուք այժմ և զայլ ևս բնութիւն ջուրց։ Ջուրք յորժամ ունիցին զառ զհարք (չէրսակ)

տեղի , ոչ ուրեք խոտորին յիւրեանց կայենիցն . իսկ յորժամ գտցեն տեղի զտռ ի բափ (ղումչայր) , *իսկ և իսկ սկսանին չարժել . բուռն հարեալ պինդ ունին զդարչապարս միմեանց և զմիմեանս մղեն : Առաջինքն ճեալեալ ընթանան , և վերջինքն* բուռն հարեալ (քըռ– նել) , վակծոյծ լեալ (ղէնտ քանել , օտըլմագ , ուէը նաղ– նադ) *չհաւանին զառաջինսն թողուլ , և ծանրութեամբ իւրեանց զմիմեանս ստիպեն իջանել ընդ զառ ի վայր տեղիս , գտանել* միւսնգամայն (մէկրէղ) *խորխորատս խառոչաց :* Խոնարհագնաց (տէօղ է վար ծօցօղ) *բնութիւն նոցա ստիպէ զնոսա երթալ հասանել* ի հարթ եւ ի միա– տարր (համուար) *տեղի :*

Եւ *ոչ միայն խաղան ջուրք յորժամ զառ ի թափ տեղիս գտանիցեն , այլ և* ի նեբքոյ ի վեր (վարէն վէր) *համբառնան ելանել* երկնապող (տէօղ է վէր , օղըղանէմ) , *որպէս աղբերակունք որ յորդեալ ելանեն ի ներքին սանդարամետաց դէպ ուղիղ , որպէս թէ* ի պնդան ար– կեալ նեղիցե որ (էճր բէ մէկը կը ծըղէ) *զնոսա ի ներքին կայենիցն այսր ի վեր ելանել . և ապա իջեալ զեղուն ընդ երեսս երկրի ,* զեռան (օղըլ) *խաղան* միահոյլ (մախրամք) *հասանել ,* առնուլ զետող (կէնալ) *ի հարթ տեղւոջ . ապա եթէ նեղ և անձուկ իցէ տեղին* մե– ծայարք (մէծ , շատ) *և յորդ բազմութեան նոցա , ելա– նեն յընդարձակ տեղիս զեղուլ ծաւալել ընդ երկիր և զետեղել ի խորս : Այսպէս ջուրք բազումք յամենայն տեղիս զեղեալ կան . խորք և ձորք և հովիտք և խո– ռոչք , լերանցամէջք և նեղուցք են նոքօք լցեալք ,* միապաղաղ (եէֆֆարէ) *ծածկեալք . և ամենայն վիհք և խորաձորք առհասարակ ալցեալք են ջրովք , և ոչ գոն փապարք կամ* ծերպք (ծէղտաւած) դարափորք (ֆօ– լաֆ) *որ չիցեն լցեալք ջրով : Ի սոցանէ են* մորք տըղ– մացեալք (ղարնաֆ) , *ճահիճք և* ջրշեղջք (չըրա տեղէր) *և ջուրք* սակաւանիստ (ֆէզ ընդարձակաբնխան անեցող) ծովակաց (լէճ)

և մեծատարած ծովուց։ Եթէ ոչ գոյր այսչափ բազմու- թիւն ջուրց ի վերայ երկրի , սարսատեր (ըւրցնել) *և ցա- մաքեցուցանէր արեգակն զերկիր։ Ծով է ակն մեծ խո- նաւութեան ջուրց որ գտանին ի խորս երկրի . զի ջուրք ծովու փորեն ծակոտեն զերկիր գնան ի նմա մանուա- ծապատ շրջանօք ընդ փորուածս և ընդ* ցնցղանձեւ (ցնցղկանման ձայն ձայն) *երակս որ են ի միջի նորա։ Բայց ոչ իշխէ ծով ելանել կոխել զսահմանս ցամաքի։ Հանա- պազ* ամբոխեալ (յողդեալ) *կայ նա ի սաստկութենէ հող- մոցն մրրկաց , և ելանեն վերանան ջուրք նորա ի բար- ձունս դիզադէզ կուտակեալ , և բաղխեն չուրջ վեզեր- քըն՝ փրփրեալք , այլ սանձակոծեալ ,* անդրէն ի ներքս առեալ շրջանս (դէղ էնէր դառնալով) նահանջին (ետ ետ երթալ) *լքեալք , մատնեալք ի պարտութիւն ի չնչին ա- ւազոյն որ* ճարկանի *նոյա* ի դիմի (դէմ դնել)։ *Բայց գեղեցիկ է ծով ի խաղաղ ժամանակի , յորժամ հան- դարտացեալ կայցէ յալեաց և ի մրրկաց . յորժամ միտ եդեալ նայիցիս ընդ* ծիծաղել (ծանր այլէնէր անէնալ) *ջուրց նորա որ* յազգի ազգի գոյնս ցուցանեն զերփն երփն նարօտուց (այլ և այլ գոյներով գոյնզգոյն ներկուածնե- րու կը նմանի) , *մերթ ծիրանւոյ , մերթ կապուտակի , մերթ սեւաներկ երանգաց . և յորժամ քաղցրաշունչ* սողոխ (Ճըղ՛ ձայն) վէտս վէտս (պալկա պալկա) զմկանունսն (ծովուն երեսը) *ճօճեալ ճեմեցուցանիցէ . յորժամ ոչ բըռ- նութեամբ յանդգնութեան ծփեալ կործիցէ զերկիր , զիւր դրացի , այլ խոր խաղաղութեամբ և ջերմեռանդ սիրով գիրկս արկեալ պատեալ կայցէ զցամաքաւ։*

Բարի և դեղեցիկ է դարձեալ ծով որ ասպնջական է հիւրամեծար գետոց բազմաց ոյ յամենայն տեղեաց մտանեն ի նա։ Առնու ամփոփէ նա զամենեսին , և ինքն կայ ի նմին սակի (*սակ , չափ*) *և ի նմին սահմանի առանց թերութեան և յաւելուածութեան։ Բարի և գեղեցիկ է դարձեալ ծով զի նա է ակն զկխաւոր*

ջուրցն օդոց։ Անձրեւք որ իջեալ թանան զերկիր և արբուցանեն զնա և առնին (կ'առնեն) ըմպելի ուրախարար ամենայն արարածոց որ են ի վերայ երկրի՝ ջուրք ծովու են որ ձգին ելանել ի վեր քաղցր ճաշակօք. զի որ ինչ աղին և դառն է ի նոսա՝ քամի պարզի ի ջերմութենէ անտի տապոյ արեգական. և ջերմ են յորժամ ելանեն, և ապա հովանան (կը շուքին) ի չնչել հողմոց ամպավարաց (ամպերը քշող)։ Եւ այս բազմաց հաւատալի է. և եթէ կամիք, ցուցից զօրինակ մի որով առաւել ստուգեսջիք թէ արդարեւ այսպէս է։ Ձիցէ՞ տեսեալ ձեր զկատսայս և զսանս (թէնճէրէ) լի ջրով, եռացուցեալս ի հրատի (կրակէ վրայ եփուած), և միտ եդեալ թէ զիարդ լինիցի թերութիւն ջրոյն ի գոլորշւոյն որ ելանէ։ Զի եթէ յերկարեսցի թողցի ի բորբոքեալ հրատին, բնաւ ամենեւին խսկ ունայն (պարապ) գտանին ամանքն ի ջրոյ անտի, և զջուրն զոր ունէ հուրն՝ առաքէ գոլովն (գոլորշիա) ի վեր։ Սոյնպէս ունիս նայել և ընդ ջուրս ծովու որ ելանեն ի վեր տապովն արեգական։ Եւ ունիմք օրինակ ի նաւավարաց, զի եթէ պակասիցի նոցա ջուր ի ծովու, առնուն զջուրս ծովուն զտղմին (տղմին, ցեխը) և զդառն, արկանեն (դնել, լեցնել) ի սանս կամ ի կատսայս, եռացուցանեն (գայնաթմագ), և դնեն սպունգս մեծամեծս խուփն (գափագ) կատսայիցն, և ի խոնաւութենէն զոր առնուն սպունգքն ի գոլորշւոյն՝ ջուրս քաղցունս ժողովեն. Վեցօր։

ԹԷ ԿԵԱՆՔ ՄԱՐԴՈՑ Է ՒԲՐԵՒ ԶԾԱՂԻԿ ԽՈՑՈՑ

Նկատեսցուք միշտ ի միտս մեր եթէ ըստ վայելչութեան վաղահասուկ 'և արագախամուր (շուտ խմորող) ծաղկանց են վայելք մարդկան, ունելով կիրք ի բերան (շրթունք կրկնել) զվկայութիւն Եսայեայ մարգարէի որ ասէր թէ Ամենայն մարմին խոտ է, և ամենայն վա–

յեղչութիւն մարդոյ իբրեւ զծաղիկ խոտոյ։ Արդարեւ սակաւօրեայ, կարճակեաց և նուազ ուրախութեամբ է ազգ մարդկան. զի ամենայն հանգիստք և ամենայն ուրախութիւնք նոցա ի սակաւ աւուրս և ընդ հուպ ժամանակս (քիչ օրերուան մէջ) սպառեալ պակասին. իբրեւ դալարի բուսեալ և իբրեւ զխոտ ծաղկեալ՝ թառամեալ խամրին (թառմիլ)։ Նայեսցուք ընդ մարդ ի ժամանակի ողջութեան (առողջութեան) զիարդ է առողջ մարմնով, զուարթ՝ երեսօք, գունեան՝ գունով, հզօր՝ զօրութեամբ, զուարճալից՝ բերկրութեամբ, կայտառ (առոյգ)՝ ի մանկութեան, շոյտ (դիւրաշարժ)՝ յերիտասարդութեան, գրգեալ, փափկասուն, փափկակեաց, բարեկեցիկ (հանգիստ կամ աղէկ ապրող), դիւրասնունդ, երանիկ, երջանիկ։ Եւ մինչդեռ զուարճացեալ վայելէր, յանկարծակի հասանէ ի թշուառութիւն, վատէ (տկարանայ) ի զօրութենէ, ծնկի ծիւրի (կը հիւծի), հիւանդութեամբ ջերանի (ախտաւոր կ'ըլլայ) և թերեւս սակաւակեաց վճարի (երիտասարդ կը մեռնի)։

Նայեաց ընդ մեւս եւս (ուրիշ մը), որ է մեծատուն. ընչաւէտ, խաշնաւէտ (շատ ինչք և խաշինք ունեցող), նշանաւոր, երեւելի, տէր ծառայից և աղախնեաց, որոց կէսքն շուքափեն (անոր հրամանները կատարելու կը փութան), կէսքն հպատակութիւն մատուցանեն, կէսքն սեղանակիցք լինին, ընթանան աստի և անտի, շուրջանակի բարեկամք և բարեասացք և բազում ազգատոհմք և թարաքոտք (Դրացուորք). խաղացեալ երթան զհետ նորա բազմամբոխ ժողովուրդք։ Յաւել ի վերայ այսր ամենայնի զիշխանութեանն մեծութիւն և զպատիւս, զյորինուածս հրապարակացն յարդարելոց, փողոցացն զարդարելոց, ճանապարհացն յատակելոց, գոեհացն (փողոց) մաքրեցելոց, և զկարգս սպասաւորացն որ տողեալ (կարգաւ շարուած) երթան զերկայնաձիգ հրապարակսն։ Քարոզքն աղաղակեն, մի մի (անձն մէկը) զգեղգեղ-

եալ բարբառսն նուագեն, աստի անտի Ցուիրակք (վարդապետ պաշտօնեայ) ստիպեն ճեպեն, զխառնաղանճ ամբոխն ի բաց պարզեն, արկանեն շտապ տագնապի ամենեցուն որ խառն ի խուռն նոցա ի դիմի հարկանիցին. և ժողովք ռամիկ մարդկան սրտաթափ սրտաբախ լինին յահէն, և նմա այսպէս թուի եթէ նորա է աշխարհս գոյիւ իւրով (քօռն, նոյն է.կ)։ Յետ այսր ամենայնի յանկարծակի ի միում գիշերի հասանէ ցաւ և ջերմ և տենդ տապախառն. սկսանի այնուհետեւ ամբարտաւանն մերթ յօրանջել յողն երբալ (ֆըլ.խըզ եսնե-տանէլ), մերթ ձգեալ պարպատել (պատռելու մօտ ըլլալ), և իջանէ լինի հող ի բարձրացեալ հպարտութենէն, և այն ամենայն մեծասպաս փառաւորութիւնքն իբրեւ զերազ թռանին։ Ապա յիրաւի և յարժանի նմանեցոյց մարգարէն զփառս մարդկան ծաղկի խոտոյ, որ ընդ ծաղկելն՝ անդէն վաղվաղակի խամրի։ Վեցօր։

ՆԿԱՐԱԳԻՐ ԲՈՒՍԱՆԵԼՈՑ ՍԵՐՄԱՆ

Ցորժամ անկանիցի սերմն յերկիր, և անդ հով (ըլ-վաքլըն, խոնաւութիւն) և ջերմութիւն հասարակակշիռ դտանիցին, սկսանի այնուհետեւ սերմն թուլանալ պատռել, խիղբս արկանել, վակժոյժ լինել (բանալ, պատռիլ) զերկրէն, զգեռեալ (սարըլմագ) ձգեալ զնա առ իւր։ Եւ սկսանի այնուհետեւ ի վերին կողմն ուղղել և ի խոնարհ գնալ, զի զբոյսն ի վեր երեւեցուսցէ, և զարմատն ի ներքս պնդեսցէ (հաստատէ), և ըստ թուոյ արմատոցն որ ի խոնարհ արձակին՝ և զջով (ծէօղ տէրե-ալէրը) բուսոյն տայ։ Զարմանալի է ցողուն (կօճ) ցորենոյն. զիարդ պնդեալ հաստատեալ վերանայ ծնկակապ կապօքն, զի հաստակապ հանգուցիւքն զօրասցի ժուժկալեսցէ առ ի բառնալ զծանրութիւն հասկացն որ պատկանին (յարմարիլ, վերաբերիլ) ի գլուխն, և մի գլխարկեալ

գտանիցի ծանրաբեկ յերկիր անկեալ․ Իսկ ցօղուն վարտակոյ ամենեւին փոր (Դէշը պուրպա) և սնամէջ է , քանզի չիք ծանրութիւն ի գլուխ նորա . իսկ ցօղունն ցորենոյ ծնկակապ կապօք հանգոյց առ հանգոյց հաստատեալ է. դարձեալ հատոյն փոճոկս (ճավուշ) դողաձեւս կազմեաց արարիչն ի հասկին , և շուրջ պատեաց և ամրացոյց քստով իբրեւ ամրածածուկ պատնիշօք , զի մի լիցի դիւրին սերմանաքաղ թռչնոց առնուլ ինչ ի նմանէ և վնաս առնել ։ Վեցօր ։

ԲՈՒԺԻՉ ԶՕՐՈՒԹԻՒՆՔ ՎՆԱՍԱԿԱՐ ԱՐՄԱՏՈՑ ԻՆՉ

Ի վնասակար արմատոց են որ մեզ ի պէտս բժշկութեան ծառայեն , զի լինին ցածուցիչք և յափրացուցիչք (Ումբեջուցեն) ցաւոց մերոց ։ Մանրագորաւ բազում անգամ բժիշկք քուն ածեն այնոցիկ որոց քուն հատեալ իցէ յաչաց , և կաթամբ մեկոնիոն արմատոյ զխիբս (ատնեը) կարեւորս զհիւանդաց ցածուցանեն , և կոնիոն արմատով զշրջեալ ուղեղս և զխելս ուղղեն , և եղեբորոս արմատով զհիճօրեայ (հէնցած) ցաւս բառնան ։ Եւ դարձեալ են բոյսք որ մեզ վնասակար են , բայց այլոց անասնոց լինին ի կերակուր ։ Զկոնիոն արմատ հաւբալք (վայրի աղաւնի) ուտեն , և քանզի նուրբ կոկորդս ունին և նեղ խածիս (ստամոքս հատուց) , զոր ինչ կլանեն՝ վաղվաղակի հալեն (մարսել) , և մինչչեւ ազդեալ վնասակարացն՝ ընկենուն զնոսա երագ երագ արտաքս ։ Վեցօր ։

ՆԿԱՐԱԳԻՐ ԾԱՌՈՑ

Տեսցուք որչափ ազգք (տեսակ) իցեն ծառոց ։ Արդարեւ բազմադիմի են ծառք և բիւրազգի · քանզի կէսք ի նոցանէ խորարմատք են և տարածատակք (արմատը տա-

չամձուամձ) և կէսքն սողկագնացք (ֆէրնէն էրէսէն մօր սօ-ղայող) և նօսրաբոյսք, կէսքն միաճետիկ (մէկ թօան սօ-նէյող), յատակաբուխք (տաշէն բօյա տօառղ), և կէսքն բազմոստք, խստոստայք, և կէսքն գետնատարածք, զի ըստ շաքլել (մեէլ, արմար տալ) արմատոցն ի ներքս՝ նոյնպէս գետնատարած ոստքն յամենայն կողմանս առ երկրաւ տարածանին, և կէսքն բարձրաբերձք ի բարձրաւանդակս վերանան ելանեն հասակագեղ երկայնաձիգ, և ըստ վերանալ հասկացն ի վեր՝ նոյնպէս և արմատքն ի խորս ներքինս ձգին հասանեն, զի մի գուցէ մեծաբերձ բարձրութիւնն յարմատոցն խլեսցէ զտակսն (արմար) յողդողդունս, և կամ հողմք բռնաշունչք տապալեսցեն զնոսա յիրկիր։ Նայեսցուք դարձեալ ի կեղեւս ծառոց, զիարդ ոչ նմանին միմեանց. զի կէսքն ողորկակեղեւք են, և կէսքն զկերպարանս քուոց (քիւ, էվ սաչաղը) ունին խոժոռն խոշորութեամբ, կէսքն միակեղեւք են, այլք խաւ ի խաւոյք (խամ խամ), կէսքն թանձունք և կէսքն անօսրունք։ Ի ծառս իբրու թէ մանկութիւն և ծերութիւն երեւի, զի մատաղատունկն դալարացեալ զուարճացեալ է, և կեղեւն անդրէն պինդ յինքեան հաստատեալ կայ, և հինօրեայքն կարկամեալ խորշանճկեալ քոսոտեալ (կըձկըձ, խօրչըլմաձ, բօրտաձ) երեւին։ Կէսքն իբրեւ կտրին, այլ ղառաւիղս (ծէօղ) արձակեն յարմատոյ, և կէսքն իբրև յապաւին (կօրսաէլ), կան մնան առանց շառաւիղաց։ Յորժամ մայրքն կտրին, կան մնան կտրածքն լինել բնակութիւն մեղուաց, քանզի մայրք ոչ եւս այլ արձակեն շառաւիղս ի կտրածէն։ Եւ դարձեալ կէսքն ի ծառոց որ ի բնէ արարածոց իւրեանց զթթուութիւն և զդաժանութիւն (ջառնառբէան) ունիցին, փոյթ յանձին ունելով մշակացն՝ առնուն փոփոխումն և յարդարին, իբրեւ զնռնենիս թթուենիս և զնշենիս դառնենիս, որոց յորժամ վարիցի (մէնել, խօնեւ) առ արմատովքն երիք (չէվէ) ուռն պարարտ ի բեւեկն փայ-

տէ , և մտանիցէ ուռն ի սիրտ ծառոյն , իսկ և իսկ դառնայ հիւթն ի քաղցրութիւն և յանուշութիւն , քանզի հալի և կորնչի դառնութիւնն և թթուութիւն ։ Վեցօր ։

ՆԿԱՐԱԳԻՐ ՊՏՂՈՑ

Դարձեալ , կէսք ի ծառոց ջրասէրք են , և կիսոցն յոստին ([illegible]) *տեղիս են ծնունդք և սնունդք , կէսքն* անգործք ([illegible]) , ընդվայրասնունդք ([illegible]) , առապարինք ([illegible]) , *և կէսքն՝ ծաղկաբերք , և կէսքն՝ անծաղիկք ։ Դարձեալ կէսք ի ծառոց միշտ դալարութիւն տերևոց ունին , և կէսք մերկացեալ կողոպտին ի տերևոց ի ժամանակս ձմերայնոյ . և որք միշտ զտերևսն ունին՝ յանզգայս փոխեն զտերևսն , և ոչ է մարթ եթէ ամենևին մերկ և կապուտ գտանիցին ։ Է և ծառ ինչ որ* ջրարբի *և* ոստին *է* ([illegible]) ։

Նաև՝ պտուղք բազումք են ազգօք եւ կերպարանօք ([illegible]) , *ճաշակօվք և համօվք ։* Կեսք ([illegible]) *ի նոցանէ մերկանդամ ի հանդերձից և* ի փոճոկաց ([illegible]) *ելին արեգակամբք . այլք ժողովեալ ամփոփեալ* ի պատեանս ([illegible]) *փոճոկօքն առնուն զկերպարանս ելելոյն ։ Ծառք որ* դալար ([illegible]) *ևփափուկ պտուղս ունին՝ թանձր տերևովք* սփածեալ ([illegible]) *են ըստ օրինակի թզենւոյ . իսկ որոց պտուղքն ի պատեանս փոճոկաց ամրացեալ են՝ ունին* անօսր ([illegible]) *տերևս ըստ օրինակի ընկուզենաց · զի փափուկ և տկար պտղոց եղիցի պաշտպան տերևն թանձրախիտ , և պինդ հաստատուն պտղոց անօսր տերևն եղիցի* հովանոց ([illegible]) ։

Աղէ , միտ եդեալ նայեսցուք թէ զիարդ ծակոտեալ դրօշեալ ([illegible]) *են իբրև զգործ քանդակագործի զարմանալի տերևք այգւոյ , զի* կշիռ ([illegible]) խառնուածով ([illegible]) *ընկալցին ողկոյզք որթոյն*

դքաղցրահայեաց նշոյլս արեգական, նոյնպէս նովին կշռով առցեն զօդս քաղցրաշունչս, զի մի վնասեալ գտանիցին ի խստաշունչ հողմոցն բռնութենէ։ Արդարեւ ընդ քանդակագործ տերեւոցն անօսրութիւնն մտանէ մեղմով արեւն և եփէ, և ողկոյզքն եւս ի տերեւոց անտի առնուն զհովանին և զովանան։ Այսպէս ամոքախառն խառնուածով առնուն պտուղք զկատարումն սնընդեան իւրեանց։

Զարմանք մեծամեծանք են, զի ջուր որոյ մի համ ճաշակաց է (որ մէկ համ ունի), զարմատն այլ ազգ (ուրիշ կերպ) սնուցանէ, զբողբոջն յայլ կերպարանս երեւեցուցանէ, զուռն (ոստ, ճիւղ) յայլ նմանութիւն զրջէ (կը փոխէ, կը դարձնէ), զտերեւն յայլ տիպ (ձեւ) յօրինէ, և զպտուղն այլով օրինակաւ նկարէ. այսպէս նոյն ջուր յամենայն երակս ծառոյն պէս պէս կերպարանօք (կերպով) բաժանի. կէսն (մէկ մասը)՝ ի կաթն, կէսն՝ ի կեղեւ և կէսն՝ ի հոյզ (հիւթ)։ Զելեկտրիոնէ (սաթ, քէհրիպար) ասեն թէ հոյզ է ծառոյ, և ի հոյզն կերպարանաց (հոյզի տեսակէն) ի կերպարանս ական (պատուական քար) փոփոխի և խստանայ, որում վկայեն չիղք և մանր զեռունք ինչ և թռչունք որ նովաւ ըմբռնին. բայց որ ոչ գիտէ զզօրութիւն այնր հուզոյ, և չիցէ տեղեկացեալ նմա փորձիւ, ոչ կարէ կալ ի վերայ (չէ կրնար հասկնալ) պէս պէս փոփոխմանց նորա։

Զարմանք մեծամեծանք են թէ զիարդ անդստին ի մի և ի նոյն խոնաւութենէ որթ զոր ըմպեն՝ (որթը խմածը) ի գինի դարձուցանէ, և ձիթենի՝ յիւղ։ Ի միում ծառ. (մէկ ծառի մէջ) ջուր շրջի ի քաղցրութիւն, և ի միւսումն դառնայ ի պարարտութիւն։ Եւ ի քաղցր պտուղս ծառոց ոչ մի համ քաղցրութեան է, այլ պէս պէս. այլ ազգ այն քաղցրութիւն է որ յորթոյն լինի, և այլ ազգ այն՝ որ ի խնձորոյն կամ յարմաւոյն։ Եւ ի սկըզբան անդ յերեւելն, պտուղք թթուք են, դաժանք և

փաթոթահամք ։ Ցաւչինդր և ի սակամունի փայտի ճաղակ դառնութեան (տուռու ճալըկ) գտանի , և կաղնեաց և զաւարսից (սարը տուրը) պտուղն ճաշակս զդտորահամս (չէյրէն ֆօնթօղ) ունի , իսկ ի բեւեկնւոջ (Պէյբէձէնթէ օլանը) և յընկուզւոյ՝ քաղցր ճաշակք պարարտութեան իւղոյ են ։ Ընդ երեւել և ընդ աճելն՝ թզենի դառնութեամբ լի է , և իբրեւ զայ հասանէ ի չափ (կը Պէծնոյ , լըֆահոս կ'ըլլայ), լինի ամենեւին քաղցրութիւն ։ Սոյնպիսի է խաղող · յերեւել խաղողոյն յորթոյ , ջուր թթու և աղտաղտ (օղէ , կծուս) և գղտորահամ ունի ազոխն · և իբրեւ հասանէ ի չափ խաղողն , առնի (վէնէ , կ'ըլլայ) ամենեւին անուշարար ։ Նոյնպէս ազգի ազգի են և գոյնք ի ծաղիկս · տեսանես ի միումն զոյն գլխաւոր ծիրանւոյ , և ի միւսումն՝ զգոյն կարմրութեան , յայլում՝ զգոյն կապուտակի , ի միւսումն՝ զգոյն սեւագոյն , և ի միւսումն՝ զգոյն սպիտակութեան · զի զունակ զունակ (տէլուկ տէլուկ) ծաղկովք զարդարեալ է առհասարակ ամենայն երկիր , և հարկանին (կ'նըլլէն , կը ծուգէն , կ'ներեւան) ի նոցանէ երփն երփն (գոյնըգօյն) գեղեցկութիւնք , որոց ոչ կարեն նմանեցուցանել (ներկարարք) իւրեանց ճարտարարուեստ գիտութեամբն ։

ԹԷ ԼՈՒՍԱՒՈՐՔ ԵՆ Ի ՆՇԱՆՍ

Վասն լուսաւորաց ասէ գիր (սալըք կէլըր) եթէ , Եղիցին ի նշանս և ի ժամանակս և յաւուրս և ի տարիս ։ Ցոյժ պատշաճ և պիտոյ են աշխարհի և մարդկան նշանք որ լինին ի լուսաւորաց ։ Արդարեւ լուսաւորքն բազում անգամ օդոյն խոնաւութեան և պղտորութեան , և դառնաշունչ հողմոց և սառնամանեաց լինին մեզ վարդապետք (սաւաշցէլ) , որպէս ասէ և Տէր մեր թէ , Յորժամ տեսանիցէք զի գայ ամպ յարեւմտից , ասէք թէ անձրեւ լինի , և լինի · և յորժամ հարաւ

չնչիցէ, առէք եթէ խորշակ ընթանայ, և լինի այնպէս. և յորժամ դարձեալ ընդ երեկս կարմրանայցեն երկինք, զպարզոյ (Քօյ օտ) յայտ առնեն, և յորժամ ընդ առաւօտն կարմրանան, զանձրևի նշան ցուցանեն։ Յորժամ ընդ ծագելն մթագոյն ելանիցէ արեգակն, և արեան և կայծական նշանակ (Էշէօյլի) ունիցի զճառագայթիւքն, զփոփոխմանց խստաշունչ օդոց յայտ առնէ. և եթէ ի նմին կերպարանս կայցէ, և օդն պղտորեալ և յուզեալ ոչ յստակեսցի, և գոյնն մթագոյն ոչ լրբասցի (Ֆէրմնալ ֆէն մը), և հողմք խստաշունչք եւս յաւելցին, և ամպքն եւս քան զեւս բազմասցին, զերկար լռնաւայուզից և զսաստիկ անձրևաց յայտ առնեն, յորժամ այս ամենայն կերպարանք միաժողով երևեսցին։ Եւ յորժամ բակ ունիցի լուսինն յամպոց (լուսնին բոլորտիքը ամպ ըլլայ), և ունիցի մռայլ զարեգակն ([illegible]), Ջուրք բազումք յոդոց յերկիր առաքին, կամ զարամուր փքոց եւ զդառնաշունչ բքոց ամբոխելոց յայտ առնի (սաստիկ հովերու և խէնտ փէօյ նշան է. զարամուր, սաստիկ. փուք, հով. բուք, Բէֆէ)։ Եւ դարձեալ յորժամ ամպոյ յամպ մտանիցէ և ելանիցէ արեգակն՝ զջերմակիծ շողն (լոյս ճառագայթն) յերկիր առաքելով, զխոնաւութիւն օդոյն յայտ առնէ։ Եւ յորժամ աղեղն յամպս երևեսցի՝ երփն երփն գունովք զգաւազանսն ձգելով, զսաստիկ անձրևաց և զդողացուցիչ յորդութեանց (հեղեղ) յայտ առնէ։ Դարձեալ բազում նշանս ունիմք ուսանել ի լուսնոյ, յաճելն նորա և ի մաշելն։ Զի յերեքօրեայ ժամանակի, յորժամ յստակ, պարզ և վճիտ (յստակ, անխառն. պարզ, Քօյ. վճիտ, անպղտոր) երևեսցի լուսինն, զյստակ պարզոյ յայտ առնէ (պարզ, գոյ. Քօյ օտ, առանց ամպի). և յորժամ ի մահիկ (կէս լուսնոյն) եղջիւրսն զնշանակ կարմրութեան կամ զմքարութիւն (պղտորութիւն) ունիցի, Ջուրք բազումք յամպոց յերկիր

առաքին, *և* ճարաւ (*հօրօզայըն հօճ, ըօրօս*) *յորդաշունչ բռնութեամբ յօդս* բարբառոյ (*կը քօսայ*)։ Ի *նշանաց աստի որ են գուշակք օդոցն փոփոխմանց՝ նաւավարն զգուշասցի և մի խառնեսցէ զնաւն ի ծովն, այլ անդէն զեօղ առեալ պահեսցի ի նաւահանգստին, զի մի պաշարեալ գտցի ի մէջ ծովուն ի շնչել հողմոցն ամբոխելոց*։ *Եւ ճանապարհորդն զգուշասցի, զի մի ելցէ ի տանէ երթալ աշխատել ի բքայոյզ և կամ յանձրեւաց ժամանակի*։ *Սոյնպէս և մշակն զգուշասցի յառաջագոյն սերմանել և տնկել ի պատշաճ ժամանակի*։

Իսկ կամակորքն (*խօդօրէօլ, չըր*) *ըստ* խոտորնակ (*ծօռա*) *մտաց իւրեանց* կամակորել (*Թէօրէլ*) *կամին* զուղղորդ (*չէօրակ*) բարբառ (*խօսդ*) *աստուածեղէն գրոց*, *և զաստեղսն դնեն վարիչս աշխարհի*, *և* վիճակք (*բախտ*) *իմն*, *ասեն*, *բաժանի ի նոցանէ*։ Այս անուն (*այս իւլ մօրդը*), *ասեն*, *գանգրահեր և* ծաւի (*էլը կէօշկէ*) *և* փարփառ (*ֆէրշէօհէ օշէօմ*) *է ի ծնէ*. *ի խոյի* աստեղատան (*աստեղատուն*, *համաստեղութիւն*) *կայր ժամ* (*ծնըն-դեան*) *նորա*, *քանզի այնպէս է անասունն այն*, *զուարթերես և մեծ*։ *Դարձեալ*, *ասեն*, *մեծատուն և* ճոխ (*հօշբ*, *էշխօր*) *լինելոց է և պարգեւատու և շահաւոր որ ծնանիցին՝ յորժամ արեգակն ի խոյի աստեղատունն մտանիցէ*, *քանզի և խոյն գլխաւոր է հօտին*, *առանց տրտմութեան մերկանայ* յասրոյ (*աար*, *քօսըր*) *անտի իւրմէ*, *և անդստին յիւրմէ բնութենէ զգենու հանդերձ*։ *Եւ որ*, *ասեն*, *ծնանիցի յորժամ յեզին աստեղատանն իցէ արեգակն*, *գործուն և հնազանդ լինելոց է ըստ օրինակի եզին*, *որ միշտ ընդ լծով է*, *հնազանդեալ կայ* ի վար (*ֆէօրէնը ճօրէլը*, *հէրիկէլը*)։ *Եւ որ*, *ասեն*, *ծնանիցի*, *յորժամ ի կարճի աստեղատանն իցէ արեգակն*, *մարդասպան դայ ըստ օրինակի կարճին որ ի հարկանել եւեթ* կազմ (*դօօրքօօր*) *կայ*։ Իսկ *որ ծնանիցի յորժամ ի կշռոց աստեղատանն իցէ արե-*

գակն, արդար լինի ըստ օրինակի կշռոց որ զարդարութիւն և զստուգութիւն ունին ։ Վեցօր ։

ՆԿԱՐԱԳԻՐ ՓՈՓՈԽՄԱՆՑ (ԵՂԱՆԱԿԱՑ) ՏԱՐՒՈՑ

Ի *գնացից անուի լուսաւորացն լինին և* փոփոխմունք (եղանակ) *տարւոյ, որպէս, երեւել սառնաստառոյց սառնամանեաց ձմերայնոյ, և քաղցրախառն շնչել օդոյն գարնայնոյ, և մեղմախառն ցրտութիւն ժամանակաց աշնայնոյ ։ Այս ամենայն փոփոխմունք տարւոյ գնացիւք լուսաւորացն շրջեալ անցանեն ի վերայ մեր* կարգ ըստ կարգէ (նօբէթա) ։ *Զի ձմեռն այսպէս լինի ․ յորժամ հեռանայ արեգակն իջանել ի հարաւ, յայնժամ յաճախեալ բազմանայ աստ ի մերում կողմանս երկայնութիւն ստուերաց գիշերոյ որ է խաւար ։ Այսպէս յիջանել արեգական ի հարաւակողմ* կոյս (չիյ, նէմ), *շնչեն ցրտաշունչ սառնամանիք ի մէջ օդոյն որ տարածեալ կայ զերկրաւ, և ի պատճառս շոգւոյն խոնաւութեան որ զարթնուն ի վերայ երկրի՝* առնին (ե-ղանէն, լէնէն) անձրեւայոյզք (յույէ անձրեւաց, յորդ անձրեւ) *և* թօնրընկէցք (տօղանաք) *և* բալածիզք (մէֆօղօր օր) *և* ձիւնաբերք (ձէռն, փարափ) ։

Յորժամ սկսանի արեգակն ելս առնել ի հարաւակողմն կողմանց գալ հասանել ի համարակած (կէօ) *հաստատութեան երկնից, հաւասարութիւն տուընջեան և գիշերոյ կատարի ։ Որչափ վերասցի ելցէ արեգակն ի հիւսիսակողմն, քաղցրախառն յօրինուածով յարդարի գարունն իւրով մեծագեղ վայելչութեամբն ․ զի ի նմա արձակեն արմատք զբոյսս, և մարգք զուարճանան, և ծաղիկք պայծառանան, և տունկք ցցուին, և ծառք արձակեն զբողբոջս իւրեանց, և անասունք երկրի հանդերձ թռչնովք և ծովային և ջրածնունդ զեռնովք գան ի ծնունդ և* ի սէր (սէրա-ն) *և ի սնունդ ։*

Յետ այսորիկ դարձեալ սկսանի մտել գալ արե–

գակն ի փոփոխմունս ամարայնւոյ․ երեւեցուցանէ զգնացս իւր ի կողմանս հիւսիսոյ, ձգել երկայնացուցանել զաւուրս։ Եւ քանզի յամիագնաց ժամուք անցանէ զօդովք, յերկարաձիգն գնացիւք ջեռուցանէ ի վերոյ զօդս, և ծծէ ի ներքոյ զխոնաւութիւն երկրի, առնի (լինի) *գործակից և վաստակակից սերմանեաց՝* պաշտել (տալ) *զպէտս նոցա․ պնդէ և պարարէ զնոսա․ նոյնպէս և զպտուղս ծառոց ճեպէ և աճեցուցանէ։ Եւ սկսանին փոքրկանալ ստուերք, և կարճել շուքն ի միջօրեայ ժամանակի, յորժամ ի վերին բարձանց ծագեսցէ զբոցաճաճանչ ճառագայթսն։ Եւ աւուրքն երկայն լինին, յորժամ ստուերք կարճ են․ և յորժամ երկայն իցեն ստուերքն, աւուրքն փոքունք լինին։ Իբրեւ հասուցանէ արեգակն ի կատարեալ չափ սննդեան զսերմանիս և զմիրգս, ապա սկսանի առ սակաւ սակաւ մեղմանալ ի բոցաճաճանչ տապոյն։ Սկսանի այնուհետեւ մերձենալ աշունն, ցուցանել զմեղմախառն գնացս իւր, և գայ հասանէ մեղմով սակաւերեւեաց նշանակ ցրտոյ, յետ այնորիկ գայ տակաւ սառնասառոյց ցուրտն ձմերայնոյ։*

ԹԷ ԻՐՔ ՄԵԾԱՄԵԾՔ ՓՈՔՐ ԵՐԵՒԻՆ Ի ՀԵՌԱՍՏԱՆԷ

Մի խաբեսցէ զքեզ սակաւ տեսիլն արեգական, և մի՛ վասն զի ի չափ կանգնոյ միոյ երեւի շրջան նորա, կարծեսցուք թէ այնչափ միայն իցէ։ Զի մեծամեծ իրք ի բացուստ փոքր երեւին, քանզի չէ հնար մարդոյ ի հեռի վայրաց ճշմարտիւ զիրսն նշմարել։ Զիցէ՞ արդեօք տեսեալ քո ի բարձրաւանդակաց զդաշտ ընդարձակ և մեծանիստ, յորում վարիցին հարկիք եզանց (եզանց լուծ) ի բացավայրի ուրեք (հեռաւոր տեղ մը)․ *զիա՞րդ թուիցին քեզ եզինքն և որ վարիցենն զնոսա, թերեւս իբրեւ զմրջիւնս գետնագնացս։ Եւ կամ չիցէ՞ տեսեալ քո ի գլխոց բարձրաբերձ լերանց զծով մեծ իւրով մեծանիստ*

լայնութեամբն, և հայեցեալ պչուցեալ ընդ նա և ընդ կղզիսն որ իցեն ի միջի նորա․ ո՞րչափ ինչ փոքր երեւեսցին քեզ մեծութիւնք նոցա․ և կամ յո՞րչափ սակաւութիւն իջեալ տեսանիցես զմեծութիւն նաւուց, որ բարձեալ բերիցէ աղխաղխեալ ուղերձեալ ([illegible], [illegible]) զբազմաչահ վաճառսն, հանդերձ սպիտակ առագաստիւն որոյ խորշ առեալ գոգ դործեալ տանի զնա յարշաւանի, ճեմեալ ճօճեալ ի վերայ վայելուչ ջուրցն մկանանց․ թերեւս իբրեւ զճագ մի աղաւնւոյ տեսանիցես զնաւն ակաղձուն ([illegible])։ Եւ զլերինս բարձունս և զմեծամեծս որ զատեալ և մեկնեալ են ի միմեանց խորաձորովք՝ ոչ կարէ ճշգրտել նշմարել ակն, և աչտարակքն չորեքկուսիք՝ բոլորակք երեւին ի հեռաստանէ։ Եւ զի բիւրապատիկ մեծ է արեգակն քան զայն որչափ երեւի, անտի յայտ է, զի մինչեւ երեւեալ ([illegible]) և ընդ երկիր ծագեալ իցէ քաղցրահայեաց ճառագայթիւքն, ցրուէ մաշէ զխաւարն, հետակորոյս առնէ զաղջամուղջն, բառնայ զտխուրն տրտմութիւն, զթանձրամած օդոյն զատուերն մերկանայ յերեսաց երկրէ, և զխաւարն մթապատ հալածական առնէ ի տիեզերաց։ Ուսիր և ի քաղաքաց որ ընդ ամենայն տիեզերս շինեալք են ակօսաձեւ հրապարակօքն և փողոցօք․ զիարդ լուսաւորէ արեգակն զամենայն նրբափողոցս և զամարաստունս ([illegible], [illegible]) նոցա․ բաւական է լայնատարած ծագումն նորա սփռել յամենայն կողմանս, և գրաւել ունել զաշխարհս ամենայն միով միատարած պայծառութեամբն զոր արկանէ ի վերայ ամենայնի։

ՆԿԱՐԱԳԻՐ ԾՈՎԱՑԻՆ ԱՆԱՍՆՈՑ

Ծնանի ծով պէս պէս ազգս և կերպարանս ([illegible]) լուղակաց ([illegible]), և ոչ մօրք ([illegible]) և ոչ ջրաշեղջք և ոչ սկախսառն խոնաւութիւնք ([illegible]

ջուրեր) լինէին դատարկք ի հրամանէն (Աստուծոյ)․ զի գործք և ճանճք և մժիղք յայտ է թէ ի սկախառն խառնաւութենէ բղխեցին։ Են գազանք որ ըստ իւրեանց կերպարանաց (էրկէնց տէօակէն պէօ) ծնանին, այլք ձուս արձակեն (հօօկէր կը ձգեն), և բազում ազգք ձկանց ունին այլ և այլ կերպարանս․ կէսք թեփամորթք են և կէսք լերկամորթք, կէսք խայտաբղետք (խայտօցող, ալաճալը) և կէսք միատարր (մէկ գոյն), կէսք թեւաւորք և կէսք անթեւք։ Կէսքն վտառ վտառ (խումբ, խումբ), երամ երամ շրջին, և կէսքն ցիր և ցան ի մէջ խորոց ծովուն, իբրեւ մոլեկանս յածեալ շրջին (խենդի պէս կը Բոփառին), հանդերձ այլ եւս խառնաղանձ բազմութեամբ ձկանց։ Որպէս զօդս զայս ձգեն առ մեզ թոյլ թոքքն որ ի մեզ հաստատեալ կան, և նոքօք տամք և առնումք զշունչն զոր ընդունիմք յօդոյ, զի ընդ փողս լանջաց առնի (լէնէ) մուտ և ել առ մեզ օդոյն դարմանչի, նոյնպէս ջուրք լնուն զպէտս օդոյ զեռունն կայտառաց (չէօացող, սողացող անասնոց)։ Եւ այս ամենայն խառնաղանձ (քօղմաԲէօ, տէօակ տէօակ) զեռնոց ոչ մի բարք (բնօԲէօն) են․ այլ կէսքն ձուս ծրտեն (հօօկէր կ'ածեն), և կէսքն կենդանիս ծնանին և ստեամբ սնուցանեն։ Եւ կերակուր ձկանց բազում անգամ ինքեանք ինքեանց լինին․ զի փոքրն կերակուր է աւազին (Քծին) թէպէտ և կիսոցն այլ կերակուր (է)․ քանզի կէսքն զմամուռս ջուրցն ուտեն, կէսքն զփիկն և զաւազն, և կէսքն զխոտ ինչ որ բուսանի ի մէջ ջուրցն՝ ճարակին (ուտեն)։ Խեցգետինն ցանկայ ուտել զմիս զեռնոյ միոջ որ անուանեալ կոչի ոստրէոս (օտրէօտէօ), և քանզի դժուարորս է ոստրէոսն, զի խեցեղէն (խեցի, ոսկրէ նման կենդանեաց կեղևը) պատեանս ունի շուրջ զիւրաւ, և իբրեւ ընդ ամրածածուկ պարսպով զգուշացեալ պահի փափուկ մարմին իւրոյ կակուղ բնութեանն, և մորթն ի վերայ սեպ և ողորկ (յղկուած, փայլուն) խեցանման է, և այսպէս կոչի

զեռունն այն խեցեմորթ, և քանզի պատեանս (գապուգ) զաղտակրի (դաղտակուր, խեցեմորթ) ունի ի միջնողունսն (կանակլին վերայ), և ուտք խեցգետոյն ոչ կարեն զամս գտանել (բուլել, կոււէլ) յողորկ և ի սեպ պատեանս զեռնոյն, ժամապահ, դարանակալ լինի (տուրան գուրծելով կըստաւէ) խեցգետին. և իբրև երթայ ոստրէոսն յանձրոյթ տեղի (ադահով տեղ), և սկսանի բանալ զպատեանսն, զոր ունի ի մկանունսն (մկանունք, կանալ) ըստ նմանութեան գաղտակրի ընդդէմ արեւուն զի ջեռցի, յայնժամ երթայ վաղվաղակի խեցգետինն, ընկենու քար ընդ անջրպետս (արալըգ) պատեանիցն, զի մի կարասցէ անդրէն զիւրեաւ ամփոփել զպատեանսն, և լինիցի նմա դիւրին ըմբռնել զոստրէոսն և ուտել:

Բազում են ազգք ձկանց, և զատեալ մեկնեալ են ի միմեանց բնակութիւնք նոցա. ի նոյին զեռան և ի նոյին ճարակին, և ոչ երբեք ժպրհին ելանել երթալ յայլոյ սահման: Բայց գոյ և ի ձկունս ազգ չւջող, որ իբրև միով խորհրդով գումարին ելանել յիւրեանց սահմանաց, ամենեքեան միագունդ միահամուռ խաղան, յամենայն կողմանց դղրդին (կըշարժին) անկեալ ի չուս ըստ ընդաբոյս (բնածին) օրինաց: Եւ արդ, ո՞վ իցէ որ զայնչափ բիւրազգի զվտառս ձկանց շարժեսցէ հանցէ չուել խաղալ միանգամայն, և ո՞ր թագաւոր պնդիցէ (ոփէղել) զնոսա յայն գործ յօժարել, և որպիսի՞ ինչ գիր գրեալ կայցէ ի ջրեղէն և ի խոնաւակերտ հրապարակս նոցա, և ո՛վ իցէ որ լինիցի նոցա առաջնորդ հեռաւոր և ընդերկար ճանապարհին: Տեսանե՞ս զհրաման իմաստութեան արարչին, որ մինչեւ յայնպիսի փոքըրկութիւն խոնարհի իւրով ամենավարն (ամէն բան վարող) առաջնորդութեամբ:

ՎԱՍՆ ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԾՈՎՈՒՆ

Չհիւսիսային ծովէն ասեն թէ մեծանիստ է, ան-

խորշ, անգոգ. բռնութիւնք ցրտաշունչ հողմոց անդադար շնչեն ի նմա, քանզի լայնանիստ մեծութեամբ տարածեալ կայ առաջի նոցա, և միշտ մրրկեալ ամբոխեն զնա ալիք, և իբրեւ զառ ի թափ իմն են գնացք այնր ծովուն։ Ի ներքին անդնդոց յատակացն դարձուցանեն հողմք զջուրս նորա, և զսիկ (կում, տէշմ) և զաւազ ծովուն ընդ կուտակեալ ալիսն խառնեն, և ի ժամանակս ձմերայնոյ սառնասառոյց սառնամանիք փչեն ի նմա, և բազում գետք յորդաջուրք մտանեն ի նա։ Եւ յորժամ ընդունին ի նմա երամք ձկանց սակաւ ինչ հանգիստ ի ժամանակս ամարայնոյ, դարձեալ իջանեն ի ձմեռն կոյս (դէզ էյնէսը) ի ձմերոց յայլ ծովս որ խորշիւք և գոգովք խորոցն անքոյթ (ապահով) պատսպարան լինին նոցա ի դառնաշունչ հողմոցն ամբոխելոց։

ԲԱՐՔ ՊԷՍ ՊԷՍ ԱՆԱՍՆՈՑ

Եթէ կամիս լուր մեւս եւս (ուրիշ) սքանչելի պատմութիւն։ Մեծամեծ նաւաց, որ գոգս առեալ ուռուցեալ առագաստիւք ասպատակին ի վերայ մկանանց (կանակ) ծովուն սլացեալ, ասեն է ձկնիկ մի փոքրիկ որոյ թարգմանի անուն իւր նաւակալ։ Սա ունի (կը բռնէ) զմի մի ի մեծամեծ նաւաց, և ոչ սակաւ ժամս բնաւ ամենեւին ոչ տայ նոցա շարժել ի տեղւոջէ անտի. և այնպէս տեսանես կապեալ կծկեալ զնաւն ակաղձուն (լեցուն) ի վերայ ջուրցն. իբրեւ զտակ առեալ (ուրմաք յէտոյ) հաստատեալ կայ նա անշարժ և անտատան։ Եւ նապաստակ ծովու որ սակաւ ինչ ահաւորութիւն ունի ածէ վաղվաղակի օրհասս (ժահ) ի վերայ մարդոյ, և ոչ տայ զանձամբ զառածանել (խօտօրէլ, տառանալ) և փախչել ուրեք։

Ջրային զեռունք և լուղակք ոչ ունին ուշ յիշատակի, ծանր լսեն և ընդ աղօտ տեսանեն. իսկ ցա-

մաքային անասունք իբրեւ իմացումն իմն ունին, զան-ցեալ իւրս յիշեն, լսեն արագ և տեսանեն։ Ձուկն ըղ-դարմանիչ իւր ոչ գիտէ, բայց էշ զբարբառ մարդ-կան անվրէպ ճանաչէ, և զճանապարհն ընդ որ միան-գամ անցանէ՝ այլ (այլ նու, ուլ) ոչ մոռանայ։ Դէպ լինի զի իշավարն մոռանայ, նա իբրեւ տեղեակ, զուղ-ղորդն տանի, և ոչ մի ինչ յանասնոց է այնպէս սուր լսելեօք։ Իսկ ոխակալութեան և չարաչուք բարոյից ուղտուց, որ միմռեալ լի դառնութեամբ պահեն ոխս, զիա՞րդ կարիցեն նմանել Ջրային զեռունք։ Յորժամ հարկանիցէ ոք զուղտ և զայրացուցանիցէ և բազում աւուրք ի վերայ դանիին անցեալ իցեն, պահէ ի մտի զոխսն և ոչ մոռանայ, և սպասէ այնմ որ եհար, թէ զիարդ կարասցէ անկանել ի վերայ, և եթէ դտանիցէ ժամանակ պատշաճ, հանէ զվրէժն։ Լուիցեն զայս ցասկոտք և ոխակալք որ զոխս ի սրտի բուննեալ պա-հեն։ Տեսցեն որում չարաբարոյ գազանի բերեն զօրի-նակ նմանութեան. չարիս առ մերձաւորս իւրեանց անուցանեն ի փորի. նման են կրակի որ ծածկեալ կայ յանբեղի (մոխէր)։ Վ. եցօր։

ՆԿԱՐԱԳԻՐ ԹՌՉՆՈՑ

Գիշակեր հաւուց որ յորսոյ կեան՝ ճիրանունք և սարկեաւառք (բէնէք) տուան. այլք խիստ ոտիւք և հաս-տամագիլք են։ Գիտունք զկէսս ի թռչնոց հերձաթեւս անուանեցին, այսինքն զարծուիս, զկէսս՝ մաշկաթեւս, այսինքն զՁղՁիկանս գիշերոյ, և զկէսսն՝ սրաթեւս, այսինքն զմեղու, զայլս՝ պատենաթեւս, այսինքն զխա-ղողեփեացս և զբզէզս, և որ սոցին նման են, որ իբ-րեւ ի պատեանս ունին զթեւսն։ Դարձեալ որ գիշա-կերքն են՝ մագիլս սուրս և հաստաբեստս (հօրօզ, օճեղ) ունին, և կտուցս՝ կոր և սուր և խիստ, որովք որ ինչ ի բուռն գայ (յեօւ կէչնոյ՝) դիւրաւ իմն յօշեն

(կոտր կոտր ընել) և պատառեն. և թեւս՝ երագունս։ Բազում ազգք թռչնոց են որ համագունդ երամ երամ շրջին։ Են որ յիւրաքանչիւր տեղիս կան զետեղեալք, այլք մօտ ի ձմեռն չուեն խաղան ի ձմերոցս յաշխարհ հեռաստան։ Կէսք գան ի ձեռն մարդոյ ի համբոյր (ըն–տանութեան) և ի սնունդ. այլք անհաբեկեալ զարհուրին և ոչ ժուժան (հանդուրժել) եթէ մերձեսցի ի նոսա ձեռն մարդոյ։ Են թռչունք որ առ մեզ կամին առնել բնակութիւն, և են որ լեռնասէրք են և անապատական բարոյս ունին։ Դարձեալ կէսք ի նոցանէ խորամանկք են, այլք՝ միամիտք. կէսքն բարբառող (երգող) են, կէսքն անբարբառք, կէսքն գեղեցկաձայն և քաղցրաբարբառ, այլք՝ խստաձայնք և ոգեղաբարբառք (անձով յոյն ունեցող)։ Աքաղաղ հպարտ է և սէգ, և սիրամարգ զարդասէր է և պայծառաթեւ. աղաւնի ցանկասէր է, հանապազ ամուսնանայ. կաքաւ նենգաւոր է և խորամանկ և նախանձոտ և հնարագէտ և որսորդախաբ։

Ճայր (Բուբոն) դրդեալ խաղան ի միում նկատեալ (որոշ) ժամանակի յաշխարհս հեռաւորս։ Որթան ի պատիւ նոցա առ նոքօք և որիք (ագռաւի տեսակ). և ինձ այսպէս թուի թէ իբրեւ ի թիկունս ինչ օգնականութեան երթայցեն ընդ նոսա ի մարտ պատերազմի։ Եւ յայտ անտի է, զի յայնմ ժամանակի բնաւ ամենեւին աստ ի մերում աշխարհիս որի ոչ գտանի. և ապա յետոյ որիք և խորդք (Բուբոն) դան այսրէն փետեալք, և ունին վէրս ի մարմինս։

Իբրեւ տեսանեն, ասեն, ձագք զթեւս հօր իւրեանց թուլացեալ ի ծերութենէ, աստի և անտի (երկու կողմէն) մտանեն և բառնան զնա ի վերայ թեւոց իւրեանց, և խաղան դնան մեղմով, և ջամբեն (տալ ուտելիք) նմա կերակուր ինչ զոր և գտանեն։ Մարդք բարեգործք որ առնեն բարիս ընկերաց՝ կոչին, Ճայից պէս պատուադիրք (ուրիշին պատիւ ընող)։

Նայեաց ընդ ծիծառն անջատ և միանձն (մէնաւորէկ)· զհարդ դայակիցի (դալակիմ, ոչխարէլ) տկար զօրու-թեամբն առնէ դադարս (բնակարան, որջ, բոյն) անձին։ Ցորժամ զտառապանաց բունիկն (խեղճ բոյնը) կամիցի շինել, բերանացի քաղէ անտի շիղս· և քանզի ոտիւքն ոչ կարէ կրել կաւ, զծայրս մագլացն ի ջուր թանայ, և ելանէ ընդ մանր փոշի գնայ (փոշւոյ վրայ կը թալէ), և այսպիսի ճնարիւք (ծիճղոյա) առ սակաւ սակաւ շինէ զվա-րանաց բունիկն։ Դնէ նախ զկաւն, և ապա զշիղն ի վե-րայ իբրեւ զպահանգս (գերան) կապէ, և այնպէս կա-տարէ զշինուած բունոյն, զի հանէ և սնուցանէ ի նմա ձագս։ Եւ եթէ դէպ տացէ (պատահի) ցաւել աչաց միոյ ուրուք ի ձագուց անտի և կամ հարցի ընդ իմիք և վնասեսցի, հնարս բժշկութեան գտանէ։

Զաղկիոնէ, որ դարձեալ թռչուն է, ասեն եթէ առ ծովեզերբ բնակէ, և անդէն առ ծովեզերբն դնէ բոյն յաւազոյն վերայ։ Մինչ բռնութիւնք հողմոց և դառ-նաշունչ սառնամանիք ամբոխեալ զծովն ալէկոծ առ-նիցեն, գիտէ թէ ընդ հուպ կակղանալոց է բռնու-թիւն հողմոյն, և ցածնլոց՝ ալիքն ամբոխեալք, և յայն-ժամ արկանէ ձուս ի մէջ ձմերայնոյն, և նստի ի ձուսն թխսել զեւթն օր, և ի կատարել եւթն աւուրն հանէ զձագս իւր և սնուցանէ, յառաջ քան զհասանել միւս-անգամ հողմոց և ալէկոծ ալէծուփ զծովն առնել։

Եւ զէգ տատրակէ ասեն թէ, յետ ամուսնութեան ընդ առաջնոյ ամուսնոյն, այլ օտար ամուսնութիւն ոչ խնդրէ, ոչ ի կեանս իւրոյ վարուժանին (ուրու փափ-րակ) և ոչ ի մահու նորա, այլ նորին յիշատակաւ անձ-կաբեկ (կորօտուլ) կեայ և մեռանի։ Սակայն վասն արծ-ւոյ ասեն թէ յոյժ տաղտուկ թուի նմա սնուցանել զձագս իւր· վասն որոյ երկուս ձագս միայն հանէ, զմին չարագանեալ, չարալլուկ տանջեալ մերժեալ ըն-կենու ի բաց վարազաքեւօքն (խոշոր ձեռներովը), և զմեւսն

միայն սնուցանէ ։ Արդ մի նմանիցեն հարք չարաբարոյ և հպարտ և անգութ կորակոուց Թռչնոյն , զի յորժամ տեսանէ զձագն եթէ սկսի զարգանալ , թեւ հանել *(Ընանըր բօտանիլ) ոչ եւս տանէ փոյթ զնմանէ ։*

Ջղջիկանք և բու և հաւալուսն խաւարասէրք են , խաւարակեացք , գիշերայինք ։ Յորժամ քեզ քուն ոչ գայցէ ի գիշերի , սասաջիր զարթնութիւնս *(հօկուօմ , ֆէ-ջէրուան ադօլ+) նմանեալ բուու ; գիշերային Թռչնոց . բայց զարմասջիր , յորժամ լսիցես զձայն սոխակի , և տես որպէս գեղգեղէ քաղցրաձայն ազգի ազգի նուագօք , մանաւանդ յորժամ ի ձուս և ի Թուխս նստիցի ։ Զարմացիր դարձեալ ընդ Ջղջիկան , որ իբրեւ զԹռչուն է և զչորքոտանեաց* արար *(կուշմուտ) ունի . յամենայն Թռչնոց նորա միայն գտանին ատամունք , և իբրեւ զչորքոտանիս ծնանի ։ Թռուցեալ 'ու գետնով չրջի ի վերայ օդոց , և ոչ եթէ երագ և հերձ է Թեւօք , այլ Թաղանթագեղ , մաշկաթեւ ։ Ջղջիկանք ունին* բնութեամբ *(է բնէ) սէր ընդ ընկերս , զի իբրեւ Թէ կապեալ ընդ միմեանս իցեն սիրով , միաբան երթան* ի թուչանի *(Ըլ-ջէլու տրէն) ։*

Զարմացիր և ընդ ննդակից Թռչունն (աքաղաղ) որ ընդ մեզ բնակէ . զիարդ զարթուցանէ զմեզ ի գործ իւրով սուր և սաստիկ բարբառովն *(յօյն) , և* բացէ ի բաց *(հէսսսէն) ազդ առնէ տուեալ ուետիս եթէ ահա այսուհետեւ եկեալ հասեալ իցեն քաղցրահայեաց ճառագայթք արեգական . հրամայէ իբրեւ հրամանատար յառնել* կազմել *(դօսրատօսէլ) ի գործ , և զմշակս յանդըս ի գործ յորդորէ ։ Զարմասցուք դարձեալ ընդ հսկեցող ազգն սագաց . զոր ինչ ի մտաց մարդկան վրիպէ նոքա զգան և կան* յայնր վերայ *(կալ`ի վերայ-հաւնուլ) ։ Երբեմն , ասեն , արքունական քաղաքին մեծանիստ Հռոմայ նոքա եղեն ապրեցուցիչք ի պատերազմէ ։ Զօր* ուստեմն *(տեղէ մը) օտար եկն , ասեն , և*

անյայտ ընդ գետնափորս (*ֆետնէ տալէն ծամբայ*) *մերձ էին ի քաղաքն մտանել, և սագք իբրեւ* զգացին (*խմացան*) *ի գիշերի, ի ձայն բարձր զաղաղակ բարձին, և այնպէս ի նոցա պատճառս ապրեցաւ քաղաքն*։

Ով *իցէ որ* ազդ տայցէ, լինիցի գուշակ (*խմացնել, լուր տալ*) *անգեղց զմահուանէ մարդկան. զի յորժամ զօրք դիմեալ երթայցեն ի մարտ պատերազմի, բազում անգեղք երամ երամ յուղի անկեալ երթան ընդ բանակս զօրաց ստիպաւ ի ճակատատեղին*։ Ի *պատրաստութենէ զինուցն և զարդուց, և ի նշանաց միշտ զրահս ընդ անձն արկանելոյ՝ իմանան թէ կռիւ լինելոց է, և թէ բազում դիակունք ի զօրացն անկանին*։ *Այս ընդարբոյս բարք անգեղց չեն ինչ ընդհատ ի մտաց մարդկան, որ* ի մօտաւորաց (*ներկայ*) *աստի* զհանդերձեալսն (*ապագայ*) իմանան (*հետեւցանել*)։

Կամ *զիարդ պատմեցից քեզ զահագին բազմութենէ մարախոյ միանգամայն ժողովելոյ, որ իբրեւ միով ժամադիր ժամու շարժեալ, միահոյլ ի չու անկեալ, և իբրեւ զգունդս զօրաց զմեծատարած դաշտօք* բազուկ առ բազուկ (*ֆօլ ֆօլ*) *իջեալ բանակին*։ Կամ *զիարդ տարմահաւն և* սարիկ (*ուղղըրդել*), *յորժամ առնուն հրաման զմեզ բժշկելոյ ի հարուածոցն և զնոսա սատակել կորուսանել, գան հասանեն յանկարծակի ի վերայ*։ Եւ *զիարդ Աստուած կազմեաց եդ փոքր թռչնոցն* երագահալ (*շատ մարդուղ*) խածիս (*Բուշնոց սպամոֆոր*) *և վազվաղընկէց անցս, և այնպէս արար զնոսա անյաղս ընդարբոյս բնութեամբ*։

Զարմանալ պարտիմք դարձեալ ընդ քաղցրանուագ բարբառ զոր գեղգեղեալ յօրինէ ճայիռն թռչուն. զիարդ ի միջօրեայ ժամանակի զխածեակն զոր ունի ի լանջսն՝ ձգեալ պրկէ առ ի հանգչել և թեթեւանալ յօդոյն ծանրութենէ, և այնպէս անդադար գեղգեղէ զբարբառն քաղցր և հեշտ նուագօք առաւել քա

զերգս արուեստականաց ։ Դարձեալ է մեւս եւս թռչուն ջրասէր որ ոտս ոչ հերձ իբրեւ որւոյ ունի, և ոչ կորակտուց է և խիստ մագիլս ունի, որպէս ունին գիշակեր թռչունքն, այլ ոտս լայնչիս մաշկեղէնս, զի լիցի նմա ի ջուրն ի նմանութիւն ղեկաց, յորժամ ընդխորսն խառնիցէ, հերձուլ մերժել զջուրցն թանձրութիւն ։ Դարձեալ գոյ մեւս եւս թռչուն, այսինքն փոր կամ ձկնաքաղ (գեռակ մը կորաղ), որ մխէ զերկայն պարանոցն ի ջուրն, զի ի խորոց անտի ի վեր ածիցէ ընդպէտս իւրոյ կերակրոյն ։

Զհնդիկ որդանէ ասեն որ տեղեակք են իրաց նորա, թէ եղջեւրս ունի ի գլուխն, և ի սկզբան, ասեն, ի կերպարանս թրթրոյ երեւի փոքրիկ, և յետոյ յայլ կերպարանս չրջի, և թեւք թոյլք և անօսրունք երկայնատարածք լինին նորա ։ Սա նիւթիչ է մետաքսին կերպասու, զի դուք, կանայք, յորժամ նստիցիք մանել կամ անկանել զմետաքս նորա. յիշեսջիք զյարութիւն և զնորոգումն մեռելոց ։ Այս այն զեռուն է որ կոչի չերաս, այսինքն կերպասաբեր ։ Վեցօր ։

'ՆԿԱՐԱԳԻՐ ԳՈՐԾՈՑ ՄԵՂՈՒԻ

Նմանեսցուք առանձնագործ մեղուի ։ Զմաղս մեղերն մոմակերտ գործով շինեալ յարդարէ, և զմոմ մաղուցն ի ծաղկաբեր մարդաց մեծաւ փութով անդադար ժողովէ, և զհիւթ մեղերն, որ նման ցօղոյ զքարամբք և զոստովք և զտերեւովք ծորեալ իջեալ կայ, քաղեալ առեալ ի բերանն ճեպով բերէ և ի խորս մոմակերտ գբոցն ունջս արկեալ (խուրը դնել) համբարեալ դնէ ։ Ի սկիզբն գործոյն անգայտ (քարակ) մաղովք անօսր կգործուած գբոցն յօրինէ, վասն զջրի և զլոյծ, զնորոգ մեղրն ժողովելոյ. իսկ յորժամ յաճախեալ բազմասցի մեղրն, խաւ ի խաւ, մբեր առ մբեր (խամ խամ) ժողովեալ կուտիցի, և իբրեւ բազմօրեայ ժամա-

նակք ի վերայ անցանիցեն , առաւել իմն եփեալ հասեալ գեղեցկանայ ։

Արդարեւ մեղու իմաստուն և հանճարեղ է ի գործ ։ Մեծաւ փութով և բազում պատրաստութեամբ առնէ անձամբ անձին ղաղարս (բնակոբան) ․ հնարագէտ իմաստութեամբ ի շտեմարանս մեղր կազմէ , և մեծաքանչ գործով առագաստաձեւ թաղանդազարդ (բօրակ մօշնէ դէօ) , խերեւեշս խերեւեշս (ֆօռւ ֆօռւ) զմոմն անօսրէ (բօրակցօռնել) , և անդէն խիտ առ խիտ , մի առ միոջ (օըէօ , էրօրօռ ֆօմ) դոյակաձեւ (խօմայէ յեռօմ) զծակս գրոցն բոլորէ (կըրցօռնել) , որմ յորմ կցեալ , ի մի շինուած կապեալ , զգործ շինուածոյն բովանդակէ (կը ըմնցօռնէ) , և այսպէս բազում գուբք մոմակերտք զմիմեամբք նոծ (էրօրօռ կէց և ղէնդ) հանդէպ միմեանց հային , և մի զմիով յարեալ են ։ Դարձեալ անդէն ի նմին շինուածի գտանես յարկս զյարկօք շինեալս , երեքզմրեթակիրս , և բերանք գրոցն ոչ դէպ ուղիղ (ղէղլէրօկ) միմեանց հանդիպին , այլ իւրաքանչիւր կարգ գրոցն ի վերայ կողմանց անկեանց միւսոյ կարգին արկեալ , և մոմակերտ ծեփովք անջրպետեալ և զատեալ են ի միմեանց , զի մի , յորժամ ծակք գրոցն բերան ի բերան զմիմեանս համբուրիցեն , ծանրութիւն մեղերն պարուտակատ , լաստակոտոր (տօկը , յօտօկը կօղմօղ մօշ-նը ղօտօռել) զգուբս մաղոցն առնիցէ , և մեղրն իւրով յետեւախաղաց (մօր մօղօղ) խոնաւութեամբն արտաքոյ ամբածածուկ շտեմարանացն ծորեալ ելեալ հեղուցու ։ Այսպէս , եթէ միտ եդեալ հայիցիս ընդ զարմանակերտ կազմութիւն շինուածոյ ճարտարութեանն , զգիւտս երկրաչափ ճարտարութեան տեսանես ։ Զի վեց անկեամբք առհասարակ ամենայն կողմանք մաղոյ գրոցն յօրինեալ են , ոչ ի միմեանս հայեցեալք , և ոչ ի վերայ միմեանց դիզեալք , զի մի յողդողդեալ խորտակեսցին մոմակերտ հիմունք մաղոցն , քանզի ոչ եթէ ի

վերայ հաստաբեստ (հաւպարան, ամուր) ինչ զօրութեան հիմունք մաղոցն հաստատեալ են, այլ ի վերայ յողդողդ և անզօր պատրաստութեան։ Այլ մեղուն հնարիւք զանկիւնս կողմանց գետնատանցն, իբրեւ սիւնս և մոյթս (տէօպէ), նեցուկս հաստատէ երկրորդն յարկաց, զի մի, յորժամ մեծաբերձ բարձրութեամբ շինուածն ի վեր համբառնայցէ, ծանրութիւն վերնատանցն ոյժ ի ներքնատունսն տայցէ, և վերին գուբքն կքեալ (չէօքմէ) իջեալ յերկիր կործանեսցին, այլ զիւրաքանչիւր յատակ գբոցն ի վերայ անկեանց ներքին գբոցն հաստատէ, զի յորժամ ծանրանայցէ խոնաւութիւն մեղերն, յատակ գբոյն բաւական լիցի հանդուրժել մեծաբեռն ծանրութեանն։ Վեցօր։

ԿԱՐԾԻՔ ԶՁԵՒՈՅ ԵՐԿՐԻ

Ոմանք ասացին զերկրէ թէ զգնտի կերպարանս ունի, և կէսք ղուղանի (օֆլամա) նմանեցուցին, և կէսքն սկտեղ, և կէսքն ասեն թէ հարթ հաւասար իսկ է յամենայն կողմանց, կէսքն Ծբուբի (նքոյր, մեծ մաղ) նմանեցուցին, և ոմանք խորամիջոց անուանեցին։ Եւ ասեն թէ յորժամ արեգակն կշիռ (ծէշէ, չէօշէօք) ի ներքոյ երկրի է դէպ ուղիղ լուսնոյ, բարձրութիւն ստուերին երկրի ելանէ ծածկէ զլուսին, և յայն սակս խաւարի լուսին։ Վեցօր։

ԲԱՐՔ ԵՒ ՆԿԱՐԱԳԻՐ ԱՆԱՍՆՈՑ

Բարս այլանմանս ունին իւրաքանչիւր ազգք անասնոց։ Եզն համանդամ և զօրաւոր է. էշ հեղգագնաց, և ձի ջերմանդամ և բուռն, և գայլ ապստամբ է ի շինոյ (ընտանութենէն) և ի հնազանդութենէ ձեռաց մարդկան. աղուէս նենգաւոր է, խուսափուկ (չէօփ չէնկօլ) և խաբող (խաբօղ). եզն վատասիրտ է և երկչոտ. մրջիւն գործօնեայ և վաստակաւոր (աշխատաւէր)

է, և չուն հպատակ որ անվրէպ եղեալ ի մտի պահէ զերախտիս և զսէր բարեկամի իւրոյ։ Առաւել ի բնէ ունի զգազանութիւն. ոչ ունի հաղորդութիւն ընդ տոհմակցի իւրում, այլ զվայրենամիտ յեղուզակութիւն և զմենակեցութիւն սիրէ, և ոչ առնէ արժանի զոք համարել երամակից իւր։ Բարձրացեալ հպարտացեալ ունի ի վեր զանձն քան զամենայն անասունս վասն ուժգնութեան զօրութեան իւրոյ, այնպէս զի և ի նշխարս անգամ զիշոյ ոչ մերձենայ. և թէ որպիսի զօրութիւն ունի՝ յաղթանդամ բնութեանն դոչիւնն յայտ առնէ, որպէս զի բազում գազանք որ ուժաւորք են և յաղթանդամք մեծութեամբ՝ զարհուրեալ սրտաբեկին ի ձայնէ ահագին բարբառոյ նորա։ Եւ ինձ թեթևանդամ է և արագոտն, և դիւրաւ շրջշրջի յամենայն կողմանս յոր և կամի։ Եւ արջ ծանրանդամ է մարմնով և անհեթեթ գնացս ունի, և փորել և որջամուտ եւեթ լինել յօժարի, և որպէս արտաքին կերպարանք նորա անհեթեթ և գարշելի են, նոյնպէս և ի բարսն ունի զնենգութիւն և զկամակորութիւն. տգեղ անդամօք, անյօդ և անպատշաճ, իբրու կաղալով իմն զոտսն շարժէ, և ի ժամանակս խստաշունչս սառնամանեաց ամփոփեալ յորջսն ամրածածուկ լինի։ Արջ յորժամ վէրս առնու, ինքն զանձն բժշկել գիտէ հնարիւ բնածին բարոյիւք զոր եգիտ իւրովի։ Երթայ խլէ զարմատ մի որ անուանեալ կոչի փղոմոս, բնութիւն արմատոյն այնորիկ ցամաքեցուցիչ զօրութիւն ունի ուր և դնիցի. վաղվաղակի դնէ զնա արջ ի վերայ վիրացն առ ի ցամաքեցուցանել զթարախ վիրին։ Դարձեալ և աղուէս ըստ նմին օրինակի բժշկէ զվէրս իւրոյ հարուածոյն ի ճուզոյ (Հէ–Բ) որ լինի ի ծառոյ միոջէ որ անուանեալ կոչի պիտոս։ Եւ ջրային կրայ եթէ ուտիցէ ի մսոյ իժի և տազճապ (վըրանգ) ինչ հասանիցէ նմա ի կերակրոյն, երթայ ուտէ դաղձն (նաղան նանէսի) և այնու

անցուցանէ զոտապ նեղութեան ի մարմնոյ, զի մի մնասեսցի ի գիշոյն (ճէշ) *զոր կերաւ։ Եւ օձի աչք յորժամ ցաւիցեն, երթայ ուտէ չումրա, այսինքն է սամիթ վայրենի, և ողջանայ։*

Այլ և զօդոց փոփոխմունս կանխաւ իմանան անվրէպ անասունք։ Ոչխարք վաղագոյն իմանան զմերձենալ ժամանակի ձմերայնոյ, և վասն այնորիկ աւելի կերակուրս ճեպին ամանել (ճէցաննէլ) *յորովայնս, վասն զի գիտեն եթէ նուազութիւն լինելոց է նոցա ի կերակրոց ի ժամանակս ձմերայնոյ։ Եւ արջառք յորժամ բազում ժամանակս* գոմամուտ լինիցին ([illegible]) *ի ձմերանի ի խստութենէ կարաձմեռն ձմերայնոյ, իսկ և իսկ իբրեւ սկսանին օդքն պարզել և կակղանալ, իմանան, և ի միասին միահոյլ խաղան ելանեն յիւրաքանչիւր կայենից և զուարթութիւն ցուցանեն յերեսս վասն դառնաշունչ սառնամանեացն կակղանալոյ։ Ոմն ի մտադիր մարդկանէ եգիտ զողնի մի ցամաքային, զի երկուս դուրս օդամուտս արարեալ էր ծակուն յորում կայր. յորժամ հիւսիսի սկսանէր շնչել՝ զհիւսիսային կողման զծակն խնոյր, և յորժամ հարաւ շնչէր՝ զհարաւային կողման զծակն խնոյր, և զառաջինն զոր եխից՝ բանայր։*

Նմանեսցուք գոնէ մրջեանն որ ամարայնոյն (ամառը) *պատրաստէ աշխատութեամբ զհամբարս ձմերայնոյ։ Թէպէտ և ոչ է մօտ նեղութիւն ձմերայնոյ, ոչ ծուլանայ և ոչ հեղգայ ի պատշաճից պիտոյիցն նեղութեան ժամանակին. այլ մեծաւ փութով անդադար տայ զանձն ի գործ և* ի վաստակ (աշխատութիւն)*, մինչեւ ժողովեսցէ գիցէ համբարս ի շտեմարանս՝ բաւական իւրոյ* դարմանիցն ([illegible])*։ Եւ զկերակուրն զոր ժողովէ՝ ոչ ծուլութեամբ համբարէ, այլ իմաստուն և խորագէտ հնարիւք զարժան իրացն կատարէ. զհատ կամ* զկորիզ (կուտ) *իրիք յորժամ տանիցի ի ծակն, ընդ մէջ կտրէ դնէ, զի մի բուսցի ի*

հիւթոցն խոնաւութենէ, և վրիպեալ ելանիցէ ի դե-րեւս: Եւ եթէ խոնաւացին հաւքն, հանէ առ եղերբ մրջիւնոցին, արկանէ տարածոց և ցամաքեցուցանէ. բայց ոչ թէ հանապազ հանէ, այլ յորժամ գիտէ թէ արեւ կայ և պարզ իցէ, և ոչ անձրեւ:

Զարմանք մեծաքանչ են ընդ ընտրողութիւնն զոր տնկեաց Աստուած ի բնածին բարս անասնոց: Զիարդ ի բազմահոյլ խաշանց միջի անհամար գառինք գռոյթ տուեալ ([illegible]) դրդեալ ելանեն յիւրա-քանչիւր որջոցն արգելանաց, և իւրաքանչիւր զձայն իւրոյ մօրն անվրէպ ճանաչէ, առ նա ընթանայ և այլ ուրեք ոչ խոտորի: Գուցէ կաթինն ստեանց իւրոյ մօրն իբրեւ ի հարկէ իմն վարէ տանի. թէպէտ և ցամաք ի-ցեն ստինք մօրն, նա զայն խնդրէ և ի նոյն փութայ, զի զիւրոյ զմօրն զկաթնն չահեկան և հանգիստ իմն համարի: Բազում անգամ առ այլոց ստինս հասանէ, և ոչ յօժարէ կալ մնալ անդ, զի զհոտ մօր իւրոյ ոչ ե-գիտ ի նոսա: Դարձեալ մաքիք բազումք ի մէջ գառանց զիւրաքանչիւր զծնունդսն յայլոց դիւրաւ իմն գիտեն որոշել: Եւ այս են զարմանք, զի ձայն՝ մի, թերեւս և գոյնն նոյնպէս դիպեցի, և մի հոտ ամենեցուն որպէս մեք կարծեմք: Ինձ թուի թէ սուր եւս զգայուն (դէ-յօրանէ) նոքա ունին առ ի հոտ քան զմեզ: Եւ ընդ այս է դարձեալ առաւել զարմանալ, զի չեւ եւս երեւեալ են բնաւ ամենեւին կորեան (չան) մատաղոյն ատա-մունք, և որ գրգռիցէ ոք զնա, այնու տեղեաւ ընդ որ ատամունքն գալոց են՝ յարձակի առնու զզայրա-ցուցիչ իւր: Սոյնպէս մինչչեւ բուսեալ իցեն բողկուկք (Նոր Եղջեր) եղջերուաց, որթուց կամ գառանց, գիտեն զտեղին ընդ որ գալոց են եղջեւրքն, և այնու վարին ի մարտ իբրեւ զինու:

Շուն որ անխօսուն (անքան) է՝ գիտէ քննել և կալ ի վերայ հետոց չար գազանի իւիք զեռնոյ: Յորժամ

խառնակեալ ստերիւրեալ գտանիցէ զայն հետ, և գիտէ թէ բազում հետ են աղամողեալք *(չէօլ-ոծ) յամենայն կողմանս, իսկ և իսկ իբրև հոտոտի ի հետսն, կայ վաղվաղակի ի վերայ ճշմարիտ հետոյն, երթայ ժամանել յափշտակող գազանին։ Զի՞նչ աւելի գործեն որ ի վերայ հողմամաղ մոխրացան գետնոյ ջանան գտանել զհաստարակ (կէս) երեքանկեան։ Նւ բազում անգամ յորժամ սպանանիցին տեարք շանց ի վայրի ուրեք յանապատի, շունք առ դուռն սիրոյ տերանցն մեռանին և զնոսա ոչ թողուն։ Նւ է զի առաջնորդ լինի* խնդրակաց *(փնտուղ) սպանողացն, և յայտ յանդիման ցուցանեն զվրիժագործսն։*

Գիշակեր գազանք որ միշտ շաղիղ *(տէօկ, լէշ) ուտեն՝* ժանիս *(ակտա) սուրս ունին առ ի կերակուր շաղղոյն։ Նն անասունք որ ոչ կարեն արագ մանրել զոր ուտենն, և յորժամ մեծամեծս ինչ կամ ողջ ողջ կլանիցեն, դարձուցանեն անդրէն զոր կերանն ի բերանս իւրեանց, և ապա միւսանգամ որոճալով մանրեն։ Ցա-* խոնդանս *(ֆօր)* սոյա գտանի խածին *(ստամօքն ստամօգու խօտալեր անասնոց) և* քաղիրդն *(ներկրորդ ստամօգը), զի մին ընդունի* զմեծ ի մեծոյն *(խօշւրը) որ միւսանգամ յորոճ դառնալոց իցէ, և միւսն ընդունի զմանրեալն և* զհալեալ *(մարստած)։*

Նայեաց դարձեալ ընդ յօրինեալ յօդուածս անասնոց։ Նրկայն պարանոց է ուղտու զի դիւրաւ լիցի նմա ձկտել ի բարձրաբերձ հասակէն ի հաւասարութիւն բարձրաքեաց *(ներկայնաւորանէ) ոտիցն և յորժամ խոնարհեսցի և հասցէ պարանոցն ի* քարքուլսն *(Բօբ), համարձակ լիցի նմա առնուլ զդարմանս իւրոց կենացն ի թըփոց և ի խոտոց։* Իսկ *արջ և առեւծ և վագր թիկնեղք և կարճապարանոցք են.* զի *(ւրովընէրն) ոչ ի խոտոց առնուն զդարմանս կերակրոյ իւրեանց, ոչինչ է նոցա պիտոյ երկայնաձիգ պարանոցաց յերկիր խոնարհելոյ,*

քանզի գիշակերք են նոքա, և յորսոյ այլոց երեոց (ոտրելու անասուն վայրէ) է կերակուր նոցա ։

Զի՞նչ մարթասցուք զմտաւ ածել ([illegible]) զշինուածաձեւ և ապարանազարդ կերպարանաց փղի, մեծ և ահագին գազանին . արդարեւ անհնարին մեծանդամ յաղթամարմին և վիթխարի (խոշոր) է յանասունս, մարմնեղէն շաղղայեղց ([illegible]) և անարի (խոշոր, [illegible]) ։ Բարւոք կազմեցաւ այնպիսի դործուած ահագին և յաղթ գազանին, որ իբրեւ զզէն և զարդ (զէնք) ունի մարմնոյն զմորթն հաստակաշի ։ Եթէ փիղ ունէր պարանոց երկայն որ գայր հասանէր յոտիցն հաւասարութիւն, ծանրադնաց և ծանրախաղաց լինէր ի պէտս իւրոյ դարմանոյն վասն մեծաքեան ծանրութեանն, և պարանոց նորա միշտ հանապազ յերկիր հակէր և կքէր ։ իսկ այժմ կարճ պարանոցաւ, սակաւ ողամբքն (ողն, քամակ, ծէռ) որ անդ ուրեմն մօտ ի մկանունսն (կոնակ) են, հաստատեալ կայ գլուխն ի բարձրաքերձ վայրի, և փոխանակ երկայն պարանոցի՝ ունի զերկայն պատիճն որ բաւական է լնուլ զտեղի երկայն պարանոցին առ ի դարման կերակրոյ և առ ի պէտս ջրոյ ըմպելոյ ։ Եւ ոտք փղաց անյօդք են, և հաստատեալ կան իբրեւ զսիւնս հաստատունս և իբրեւ զմոյթս հաստարեստս բառնալ զմեծաքեան ծանրութիւն բազմադէզ մարմնոյն . զի եթէ փոր ([illegible]) և լի ուղղովք էին սրունքն, և բազմակապ յօդիւք ոտքն, բ.ւ.զմայօղքն ([illegible]) կքեալք (կքել, [illegible]) անկանէին, և յօդակոտոր ի միմեանց յօդքն քակտէին ի մեծանիստ ծանրութենէն որ յենոյր ի նոսա և ճնշէր, քանզի ոչ կարէին ոտքն յօդակապք հանդուրժել ժոյժ ունել բազմակոյտ յաղթանդամ մարմնոյն թանձրութեան ։ Առ պճղամբքն (պճեղն, [illegible]) միայն ի խոնարհ կոյս կապին ([illegible]) ոտք փղի, քանզի ՚ոչ եթէ կրկնին ծունկք նորա ըստ օրինակի ուղտուց յօդից ։

Զիցէ՞ տեսեալ քո կամ լուեալ, զիարդ ըստ օրինակի գազանեղէն աշտարակաց խարակաձեւ (*Գէճ ժայռէ դէօ*) *կամ ճակատեալ միրզք ընդդէմ պատերազմողաց ի գլուխս բանակաց ըստ օրինակի մարմնեղէն բլրոց։ Եւ չիք ինչ որ կարող իցէ կալ առաջի սաստիկ զօրութեան նոցա, յորժամ յարձակեալ մխուցանիցեն զճակատս պատերազմողաց, և այսր անդր թափանցանց ընդ գունդս մարտիկ նահատակացն անկանիցին։ Եւ եթէ ոչ հաստահարուստ անդամս ունէին, ոչ այնչափ երկար ժամանակս կարէին կեալ, քանզի ասեն զփղաց եթէ աւելի քան զերեքհարեւր ամ ձգին կեանք նոցա, զի* սեղմ (*դէնդ, սըքը*) *են ոսկերք փղաց, և ի պատիճն նոցա իբրեւ օձի* քճրուճոց (*մօրը կօկէօ կօկէօ*) *երեւին յորժամ այսր անդր շրջշրջիցէ։*

Այլ ոչ կարի յոյժ զարմանամ ընդ մեծութիւն փղի, որպէս զարմանամ ընդ մկան և մժղոյ զօրութիւն, զի սոքա խռովիչք և դողացուցիչք են փղի. զարմանամ և ընդ նուրբ խայթոցն կարճի թէ զիարդ կարացեալ և կրկնեալ կազմի հարկանել ըստ օրինակի ման և կոր կերպարանաց փողի, և զիարդ արկանէ զթոյնսն յայ-նոսիկ զորս հարկանէ։ Վեցօր։

ԹԷ ՎԱՐՔ ՄԱՐԴԿԱՆ ՆՄԱՆ ԵՆ ՎԱՐՈՒՑ ՍԵՐՄԱՆԵԱՑ

Ամենայն վարք կենաց մարդկան նման են վարուց (*վարք, Եէկէր ճաւէւէ*) *մշակութեան երկրաբուղխ արմը-տեաց։ Որպէս մշակն նախ վարս վարեալ,* ցելեալ (*պատ-ռել*), *կակղեալ, հերձեալ, ակօսաձիգ պատառեալ զեր-կիրն սեւակոշտեալ, պարարտացուցանէ զնա քրտամբ և աշխատութեամբ, հատանէ* զըճղվայր (*անդէրան*) *ար-մատսն, առ ի կարճելոյ* զմոլեբոյս (*ճէկ նէրդ-ով բօստան*) *տարապարտ աճումն* կիզաբոյս (*քօյնէրը աչըղ*) *բանջարոց, և ապա սերմանէ զսերմանիս օգտակարին ցանից. Նոյնպէս եթէ ոչ նախ հատանիցէ ոք զպարտս պատժապարտու-*

թեան իւրոց ընդվայրաբոյս (*դուրաղ տեղը բուսած*) *սովո-րութեանց, կամասէր, կամագնաց, ինքնակամ մեղացն, ոչ կարէ ընդունել զսերմն որ ի նմա պտուղ տայցէ։ Սոյն օրինակ և այժմիկ առ ձեզ տեսանեմ։ Եթէ ոչ խլեսջիք դուք ի մտաց ձերոց զարմատս ընդվայրաբոյս վնասակար մեղացն, որ ի ձեզ արմատացեալ են և պատեալ զոստովք մտաց ձերոց առ ի խափանել զծաղիկս և առ ի չտալ բերել զպտուղն, նաև միանգամայն* ի զօսացուցանել (*չորցնել*), սերմն արկեալ ի ձեզ (*ձեր մէջ ինկած սերմը*) *անկանիցի յանհիւթ ապառաժ տեղի, և դուք անմասն եղեալ զրկիցիք ի պտղոյն։ Ագաթ։*

ՈՒՆԱՅՆՈՒԹԻՒՆ ԿՌՈՑ

Ապա պարտ է ձեզ կակղել զանդս մտաց ձերոց, և խլել յանձանց զմեղսն գայթակղեցուցիչս որ խափան առնեն (*օրթէյէ կ'ելլան*) *արդարութեանն ի ձեզ բուսանելոյ, այսինքն զկռապաշտութեան սովորութիւնսն, յորս ի նախնեաց հետէ մոլորեալ դանդաչէիք. իբրև* քուն ընդ արթունս (*կէս քուն կէս արթուն*) *եղեալ* ընդ վայր (*է ըրար*) թարթափէիք (*եօրեանէ ըլլալ, դժուզիլ*) *ոչ յօգտակարս ինչ, այլ յունայնութիւն սնոտի, ի կուռս որ չեն ինչ յօգուտ, զի անշունչք են,* անիմաստք (*խմացում չունեցող*), *անխաղացք, անշարժք. ոմանք* կոփածոյք (*մրճով կոփելով շինուած*) *են, ոմանք* կռածոյք (*կռանով ծեծելով շինուած*), *ոմանք* խարտածոյք (*խարտոցով փորձռանելով շինուած*), *և ոմանք* ձուլածոյք (*թափծոյ*), *եղեալ ի մտաց ճարտարաց։ Ոչ կարեն և զինքեանս ի վնասուց պահել, և ոչ լու մի կամ ճանճ, որ յանօգուտս ընդ մարդկան է բնակեալ, կարեն քշել տանել ի տանէ պաշտօնէից իւրեանց։ Եւ ոչ զսարդսն որ ելևէջս առնեն զնոցունց պատկերօք, և ձգեն զոստայնս իւրեանց զգլխովք նոցա, յանձանց ի բաց կարիցեն մաքրել, այլ ընդ վայր ի ներքոյ ժանգակեր փոշոտեալ հարեալ մաշին։*